ՍԵՐԳԵՅ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ԼԵՌԼԱՅԻՆ ՀԱՐՑԱԲԱՆԸ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶ

902.7
Ս-53

ՍԵՐԳԵՅ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ԱՐՈՒՆԱՅԻՆ ՎԱՐԱԳՈՒՅՐ

2432

ԵՐԵՎԱՆ „ԼՈՒՅՍ" 1990

ԳՄԴ 65.04
Մ 539

Գրախոս
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Յու. Մ. Սուվարյան

Մելքումյան Ս. Ա.

Մ 539 Լեռնային Ղարաբաղ: Պատմա-տնտեսաաշխարհագր. ուսումնասիր. — Եր.: Լույս, 1990. — 303 էջ: Նկ..

Գրքում քննարկվում և լուսաբանվում են Լեռնային Ղարաբաղի տնտեսաաշխարհագրական պրոբլեմներին՝ մասնավորապես մարզի բնական պայմաններին ու ռեսուրսներին, տնտեսության ճյուղերի ձևավորմանը, զարգացմանը, կառուցվածքային փոփոխություններին, դրանց արդի վիճակին ու հեռանկարային զարգացման հնարավորություններին վերաբերող հիմնական հարցերը: Զգալի տեղ է հատկացված Արցախ-Ղարաբաղի պատմական առանձնահատկություններին, դեմոգրաֆիական տեղաշարժերին, սովորույթներին, ինչպես նաև մարզի վարչական շրջանների ու բնակավայրերի արդի վիճակի բնութագրմանը, սոցիալ-տնտեսական զարգացման պրոբլեմներին:

Նախատեսվում է ընթերցող լայն շրջանների համար:

Մ 1602010000 ( ) 176.1990
702(01)1990

ԳՄԴ 65.04

Мелкумян Сергей Аванесович
НАГОРНЫЙ КАРАБАХ

(Историко-экономико-географическое исследование)
(на армянском языке)
Издательство «Луйс»
Ереван 1990

© Ս. Ա. Մելքումյան, 1990

ISBN 5 — 545 — 00522 — 6

ԱՌԱՋԱԲԱՆ

Մինչև 1988 թ. փետրվարը Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ստեղծման, նրա սոցիալ-տնտեսական զարգացման պրոբլեմների մասին յուրաքանչյուր խորհրդային քաղաքացի և նույնիսկ մենք՝ հայերս ունեինք խիստ աղքատիկ, հաճախ՝ գունազարդված ինֆորմացիա: Մի գլխավոր ճշմարտություն միայն հայերիս համար պարզ էր, որ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը պատմական Արցախի մի հատվածն է՝ Հայաստանի անվիճելի բաղադրամասը: Այդ ճշմարտությունը հայտնի է նաև քաղաքակիրթ աշխարհին: Յուրաքանչյուր հետաքրքրասեր մարդ Արցախ-Ղարաբաղի մասին տեղեկություններ ստանալու համար գրադարաններում կարող էր գտնել Լեոյի «Հայոց պատմություն», Մակար Բարխուդարյանցի «Արցախ», Րաֆֆու «Խամսայի մելիքությունները», Երվանդ Լալայանի «Վարանդա» շատ արժեքավոր ուսումնասիրությունները: Բայց դրանք գրվել են նախորդ դարի վերջերին:

Արցախ-Ղարաբաղի պատմությունը, մեր կյանքի շատ ուրիշ բնագավառների նման, դարձավ փակ գոտի: Յոթ փակի տակ էր դրված մարզի ստեղծման պատմությունը: Տարօրինակ է, թե ինչու հայկական հանրապետության կողքին, նույն Միության կազմում ստեղծվեց նույն հայազգով բնակեցված ինքնավար մարզ: Չէ որ դա չի համապատասխանում լենինյան ազգային քաղաքականությանը: Կատարվածի անտրամաբանական ու անարդարացի լինելը քողարկելու համար դրա հեղինակները մարզի անվանման մեջ գիտակցաբար բաց թողեցին «հայկական» արտահայտությունը: Մեր երկրի բոլոր հանրապետությունների, ինքնավար մարզերի, օկրուգների անվանումներում արտահայտված է յուրաքանչյուրի ազգային պատկանելությունը, բացառությամբ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի: Թույլ չէր տրվում, որ Խորհրդային Հայաստանում հրատարակվեն Արցախի վերաբերյալ ուսումնասիրություններ, իսկ Ղարաբաղ-Հայկ. ԽՍՀ բոլոր կարգի կապերն ընդհանրապես արգելվում էին. նրանց միջև ամբողջ դաժանությամբ կախվել էր ստալինյան-բաղիրովյան երկաթյա սև վարագույրը:

Արցախի վերաբերյալ մայրենի լեզվով պատմական գրականության սովի պայմաններում դատարկ գրական շուկան վերջին տարիներին Ադրբեջանը սկսել էր հեղեղել կեղծ, բացահայտ ազգայնամոլական բնույթի գրվածքներով, որոնց նպատակն էր հայտարարել, որ Արցախը հայկական չէ: Այդ բացահայտ կեղծիքի հիմնավորման համար շատ թուղթ է մրոտվել և այն էլ՝ ռուսերեն: Իսկ հայ պատմագրությունը Արցախի ազգային պատկանելության, նրա հայկական լինելու մասին լռում էր՝ հավանաբար առաջնորդվելով «աքսիոման ապացուցման կարիք չունի» սկզբունքով, մոռանալով՝ թե ում հետ գործ ունի:

Վերակառուցման ապրիլյան շնչով սկսել է խորտակվել երկաթյա վարագույրը, բացվել փակ գոտին: Այսօր արդեն յուրաքանչյուրին հայտնի է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ստեղծման տխուր պատմությունը:

Այժմյան Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տարածքը կազմում է պատմական Հայաստանի Արցախի նահանգի լեռնային հատվածի մի մասը: Այն ընդգրկում է հազարամյակների պատմություն ունեցող Արցախ աշխարհի հարավ-արևմտյան լեռնային մասում վաղուց ձևավորված հայկական հինգ իշխանությունների՝ Խամսայի մելիքությունների տարածքի հիմնական մասը: 9-րդ դարից հետո այստեղ ձևավորված այդ հինգ իշխանությունները՝ Խաչենի, Դիզակի, Ջրաբերդի, Վարանդայի ու Գյուլիստանի մելիքությունները համարյա ինքնուրույն քաղաքականություն էին վարում և հերոսաբար պայքարում ոչ միայն Արցախի այդ մասն օտար բռնակալների հարձակումներից պաշտպանելու, այլև առհասարակ ամբողջ Հայաստանի արևելյան շրջանների անվտանգությունը պահպանելու համար:

Արցախ-Ղարաբաղի հայության արտաքին թշնամիների դեմ մղած հերոսական պայքարը, ազգային ազատագրական շարժումները, Ղարաբաղը և ամբողջ Հայաստանը Ռուսաստանի հետ միավորելու գաղափարի ձևավորումն ու գործնական քայլերի իրականացումը շատ բանով կապված է Արցախի Խաչեն գավառի իշխանական տոհմի՝ Հասան-Ջալալյանների հայրենանվեր գործունեության հետ:

Այստեղ, Արցախի կրոնական, քաղաքական, մշակութային և պաշտպանական խոշոր կենտրոն՝ Գանձասար վանքում է շուրջ 300 տարի առաջ ձեվավորվել Հայաստանը Ռուսաստանի հետ միավորվելու գաղափարը:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Անդրկովկասում Ստալինի վարած հակահայկական քաղաքականության, ազգամիջյան, տարածական-վարչական հարցերի խիստ սուբյեկտիվ «լուծման» հետևանքով Արցախը դրվեց ծանր կացության մեջ:

1921 թ. հուլիսի 4-ին Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության Կենտկոմի Կովկասյան բյուրոն ձայների մեծամասնությամբ

որոշում է Լեռնային Ղարաբաղը միացնել Խորհրդային Հայաստանին: Սակայն հաջորդ օրը՝ 1921 թ. հուլիսի 5-ին, Ի. Ստալինի ու Ն. Նարիմանովի կամայականությամբ, ահաբեկումներով, առանց քվեարկության որոշվում է Լեռնային Ղարաբաղը մտցնել Ադրբեջանի կազմի մեջ: Այդպիսով, մայր երկրից պոկվեց նրա գրեթե 95 %-ով հայաբնակ մասը, որն ինչպես հայտնի է, խիստ բացասական ազդեցություն ունեցավ նրա հետագա ամբողջ ճակատագրի վրա:

Ղարաբաղի պատմության վրա իջավ թանձր խավար: Տասնամյակներ շարունակ նրա մասին թույլ չէին տալիս խոսել, առավել ևս՝ գրել: Այդպիսով Լեռնային Ղարաբաղը բզկտվում էր ու նոսրանում, իսկ բողոքելու, արտահայտվելու իրավունք չուներ: Ակտիվ լռության մեջ մնաց նաև մայր հայրենիքի մտավորականությունը, մոռանալով, որ «մեր անտարբերությունից օգուտ են քաղում օտարները» (Մ. Բարխուդարյանց, *«Արցախ»*, 1895 թ., էջ Ա.):

Այդպես շարունակվեց մինչև մեր օրերը, մինչև վերջին հայտնի իրադարձությունները...

Ընթերցողին ներկայացվող աույն աշխատությունը մեր՝ արդեն ավարտվող դարի ընթացքում, ցավոք դեռևս առաջին ծավալուն մենագրությունն է, որը բովանդակում է Լեռնային Ղարաբաղի պատմա-տնտեսաաշխարհագրական բնութագիրը, արժեքավոր տեղեկություններ է տալիս մարզի էկոնոմիկայի, մշակույթի, բնակավայրերի մասին:

Աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգեյ Մելքումյանը (ծննդով Լեռնային Ղարաբաղի Ճարտար գյուղից) տարիներ շարունակ ուսումնասիրել, հետազոտել է մարզի բնական պայմանները, ռեսուրսները, տնտեսության ճյուղերը, բնակավայրերին վերաբերող պատմական փաստերը, մարզի արդի վիճակը և այժմ ընթերցողին է ներկայացնում մի յուրահատուկ, հետաքրքիր ու ամբողջական մենագրություն:

Առաջին բաժնում հեղինակը բավականին հետաքրքիր ձևով ներկայացնում է մարզի բնական պայմաններն ու ռեսուրսները:

Երկրորդ բաժնում համառոտակի քննարկված են Արցախ-Ղարաբաղի պատմաաշխարհագրական ընդհանուր հարցերը: Հեղինակն այս բաժնում համառոտակի անդրադարձել է նաև 1920-ական թվականների սկզբներին Լեռնային Ղարաբաղը Ադրբ. ԽՍՀ կազմի մեջ արհեստականորեն մտցնելու հրեշավոր պատմությանը և հարակից այլ հարցերի:

Աշխատության մեջ քննարկված են նաև 1988—89 թ. հայտնի իրադարձությունների հետ կապված մի շարք հարցեր:

Երրորդ բաժնում տրված է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի վարչական կառուցվածքն ու քաղաքների բնութագիրը: Հեղինակը հատկապես հանգամանորեն է կանգ առել Շուշի և Ստեփանակերտ քաղաքների վրա:

Չորրորդ բաժինը նվիրված է մարզի բնակչությանը, նշանավոր մարդ-

կանց ու սովորույթներին: Փաստացի հարուստ տվյալներով քննարկվում և լուսաբանվում են Լեռնային Ղարաբաղի բնակչության ազգային կազմում կատարված տեղաշարժերը, հայ բնակչության արտահոսքի, տեսակարար կշռի կրճատման պատճառները:

Առավել մեծ տեղ է հատկացված 5-րդ բաժնին, որտեղ հեղինակը հանգամանորեն լուսաբանում է մարզի տնտեսության ճյուղերը, ցույց տալիս արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի արդի պատկերը:

Զգալի տեղ է հատկացված կուլտուր-լուսավորական, մշակութային և առողջապահական գործին (6-րդ բաժին):

Մեր համոզմամբ գրքի առավել մեծ հետաքրքրություն ներկայացնող մասերից են մարզի շրջաններին ու դրանց բոլոր բնակավայրերին վերաբերող բաժինները (7 — 11): Այստեղ հեղինակը շատ հակիրճ, բայց դիպուկ ու հետաքրքիր ձևով լուսաբանում է ինչպես մարզի վարչական շրջանների, այնպես էլ դրանց սահմաններում գտնվող բոլոր բնակավայրերի բնական, պատմական, դեմոգրաֆիական, սոցիալ-տնտեսական պատկերը: Արցախ-Ղարաբաղ հայկական աշխարհի բնակավայրերին վերաբերող այս բազմակողմանի տվյալների արժեքը մեր այժմյան ու հետագա պատմության համար դժվար է գնահատել:

Գրքի եզրափակիչ՝ 12-րդ բաժինը նվիրված է Լեռնային Ղարաբաղի սոցիալ-տնտեսական զարգացման պրոբլեմներին ու դրանց լուծման ուղիներին:

Բացի ճանաչողական, իմացաբանական արժեքից պրոֆ. Ս. Ա. Մելքումյանի աշխատությունն ունի նաև պատմական տեղեկատուի նշանակություն. այն ուղեցույց է Լեռնային Ղարաբաղի պատմության, էկոնոմիկայի, մշակույթի առանձին հարցերն ավելի խորը և բազմակողմանի ուսումնասիրողների համար:

Չենք կասկածում, որ գիտական բարեխղճությամբ գրված սույն աշխատությունը սիրով ու շնորհակալությամբ կընդունվի ընթերցողների կողմից:

Յու. Մ. Սուվարյան

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

1. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱ-ԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՈՒ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տերիտորիան կազմում է 4,4 հազ. կմ^2: Գտնվում է Փոքր Կովկաս լեռնաշղթայի հարավ-արևելյան մասում: Մարզի մակերևույթը տիպիկ լեռնային է, այն ընդգրկում է Ղարաբաղի բարձրավանդակի արևելյան հատվածը և արևմուտքից թեքությամբ իջնում է դեպի արևելք՝ ձուլվելով Կուր-Արաքսյան ընդարձակ հարթավայրի մեծ մասը կազմող Արցախի դաշտավայրին:

Մակերևույթի այդպիսի թեքության պատճառով էլ Լեռնային Ղարաբաղի համարյա բոլոր գետերը սկիզբ առնելով մարզի արևմտյան և հարավ-արևմըտյան ամբողջ երկարությամբ ձգվող բարձրաբերձ լեռներից, հոսում են դեպի արևելք ու հարավ-արևելք, դեպի նշված դաշտավայրը: Լեռնային արագահոս գետերը միլիոնավոր տարիների ընթացքում Ղարաբաղ լեռնաշխարհի մակերևույթը վեր են ածել անդնդախոր ձորերի ու գեղատեսիլ գետահովիտների: Դրանցից հատկապես նշանավոր են համեմատաբար ընդարձակ յոթ գետահովիտներ, որոնք արևելյան՝ հարթավայրային մասից լեզվակաձև մտնում են դեպի մարզի լեռնային տարածքի խորքերը: Դրանք Իշխանագետ, Վարանդա, Խոնաշեն, Կարկառ, Խաչեն, Կավարտ (Կուսապատ վտակով), Թարթառ գետերի հովիտներն են: Հյուսիսային մասում զգալի տարածք է զբաղեցնում Ինջա գետի գեղատեսիլ հովիտը: Դրանցից առավել ընդարձակը Թարթառ գետի հովիտն է (Մարտակերտի շրջան): Ի դեպ, այս գետահովիտը, հատկապես նրա միջին և վերին հոսանքներում, բնութագրվում է հազվադեպ ու անկրկնելի գեղեցկությամբ: Հենց այդ հատվածում է գտնվում Հաթերքի անդնդախոր ձորը իր ձեռակերտ և անձեռակերտ հուշարձաններով, ջրվեժներով: Համեմատաբար լայնաշերտ են նաև Վարանդայի ու Կարկառի հովիտները: Վերջինս անկրկնելի գեղեցիկ է հատկապես Շուշի քաղաքի մոտ: Նշված, ինչպես նաև Խաչենի, Խոնաշենի ու մյուս գետահովիտները, հատկապես մարզի արևելյան, համեմատաբար հարթավայրային մասում կարևոր դեր են խաղում երկրագործության համար: Սրանցից յուրաքանչյուրն էլ իր վտակներին համապատասխան բաժանված է ավելի փոքր գետահովիտների: Այսպիսով, մարզի տարածքն ունի խիստ կտրտված լեռնային մակերևույթ: Համեմատաբար հարթավայրային են Մարտունու և Մարտակերտի շրջանների ցածրադիր մասերը:

Մարզի տարածքի միջին բարձրությունը ծովի մակարդակից կազմում է 1100 մետր:



Տեսարան Լեռնային Ղարաբաղից

Հյուսիսից հարավ՝ Լեռնային Ղարաբաղի արևմտյան ամբողջ սահմանով ձգվում է Ղարաբաղի լեռնաշղթան: Իսկ սրանից էլ սկսվում են մարզի տարածքով արևմուտքից դեպի արևելք ձգվող մի շարք լեռնաճյուղեր: Հյուսիսային մասով ձգվում է Մռովի լեռնաշղթան, որտեղ էլ գտնվում են մարզի ամենաբարձր լեռնագագաթները՝ *Գյամիշը* (3740 մ.) և *Մռովը* (3343 մ.): Սրանք գտնվում են Մարտակերտի շրջանի հյուսիս-արևելյան հատվածում: Ղարաբաղի լեռնաշղթայի վրա է *Կըրխկըզ* լեռնագագաթը (2828 մ), որը գտնվում է Ասկերանի շրջանում, իսկ ավելի հարավ՝ *Մեծ Քիրս* (2725 մ) և *Դիզափայտ* (2480 մ) լեռնագագաթները: Մեծ Քիրսը գտնվում է Շուշիի և Հադրութի շրջանների սահմանագլխին, իսկ Դիզափայտը՝ Հադրութի շրջանում:

Ի տարբերություն Զանգեզուրի ու Հայկական ԽՍՀ տարածքի մյուս մասերում գտնվող լեռների (որոնք հիմնականում անտառազուրկ են), Ղարաբաղի լեռները անտառածածկ են:

Փոքր Կովկասի մյուս հատվածների նման, Ղարաբաղի բարձրավանդակը նույնպես բնութագրվում է սեյսմիկությամբ: Մեծ տեղ են գրավում հրաբխային ապարները, իսկ գետահովտային մասերում՝ նաև նստվածքային ապարները:

Լեռնային Ղարաբաղի կլիմայական պայմանները մեղմ ու չափավոր են: Տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է +10°C: Ամենատաք ամիսը հուլիսն է, որի միջին ջերմաստիճանը կազմում է +21°C: Ամենից տաք վայրերը Մարտակերտի ու Մարտունու շրջանների հարթավայրային մասերն են: Մարտունու շրջանում առավել տաք են Մարտունի-Կուրապատկինո-Գևորգավան, իսկ Մարտակերտի շրջանում՝ Մարտակերտ-Լենինավան գոտիները:

Հունվարյան միջին ջերմաստիճանը կազմում է —1,2°C, փետրվարյանը՝ —0,6°C: Ձմռան ամիսներին համեմատաբար ցուրտ գոտին ընդգրկում է բարձր լեռնային մասը, առավելապես հյուսիսային հատվածը՝ Մռովի լեռնաշղթան:

Գերակշռում են լեռնահովտային քամիները: Գարնան և ամռան ամիսներին (հատկապես մայիս-հունիսին) հաճախակի են ուժեղ ամպրոպները: Մթնոլորտային տեղումների քանակը տարեկան տատանվում է 250 — 830 մմ-ի սահմաններում: Ամենից քիչ տեղումներ թափվում են դաշտային գոտում (հատկապես Մարտակերտի ու Մարտունու շրջանների հարթավայրային մասերում), որտեղ դրանք տարեկան կազմում են 250 — 330 մմ: Տեղումների քանակը մեծ է բարձրալեռնային գոտում և կազմում է 560 — 830 մմ, նախալեռնային գոտում դրանց քանակը 330 — 430 մմ է: Տեղումների մեծ մասը թափվում է մայիս-հունիս ամիսներին: Այդ ամիսներին հաճախակի են նաև տեղատարափ անձրևներն ու կարկուտը, որոնք նախկինում խիստ վնաս էին հասցնում գյուղատնտեսությանը (այժմ մարզի բարձրալեռնային մասերում տեղադրված են կարկուտի դեմ պայքարի հրետանային հատուկ կետեր, որոնք

հիմնականում կանխում են դրանց վնասը): Կարկուտ տեղում է մարզի բոլոր շրջաններում: Բացառությամբ դաշտային գոտուց, որտեղ ձյան շերտը կայուն չի լինում, մարզի տարածքի մեծ մասում ձյան շերտը մեծ է լինում և կայուն, որը տևում է մի քանի ամիս, իսկ բարձրալեռնային գոտում մինչև հունիսի սկզբները: Ընդհանուր առմամբ բարձր լեռնային գոտում առաջին ձյունը տեղում է սեպտեմբերին և մնում է մինչև ամռան սկիզբը: Տեղումների նվազ քանակի պատճառով դաշտային մասում գյուղատնտեսական կուլտուրաները երբեմն խիստ տուժում են: Այդ հատվածում այգեգործությունն ու պտղաբուծությունը զարգանում է բացառապես ոռոգման միջոցով:

Մարզի տարածքի զգալի մասն ունի մերձարևադարձային կլիմայական պայմաններ, որտեղ լավ աճում են խաղողը, թուզը, նուռը, նուշը, թութը, արքայանարինջը (королёк), ինչպես նաև այդ պայմաններին յուրահատուկ մյուս պտուղները:

Տիպիկ լեռնային բնույթի հետևանքով, Լեռնային Ղարաբաղում լավ է արտահայտված բնական պայմանների ուղղաձիգ գոտիականությունը: Դրան համապատասխան էլ բնութագրվում են ոչ միայն կլիմայական պայմանները, այլև հողերի տիպերն ու բուսականության տեսակները: Ցածրադիր վայրերում, Մարտունու և Մարտակերտի շրջանների արևելյան տափաստանային մասերում հողերը կիսաանապատային, անապատատափաստանային, գորշ, բաց շագանակագույն են, որոնք աստիճանաբար, դեպի արևմուտք փոխվում են մուգ շագանակագույնի:

Նախալեռնային և լեռնային վայրերում զգալի տարածություններ են գրավում լեռնային սևահողերը, իսկ անտառային վայրերում՝ մուգ դարչնագույն, պոդզոլային հողատեսակները: Բարձր լեռնալանջային մասերում տարածված են ալպիական գոտուն համապատասխանող լեռնամարգագետնային, ճմամարգագետնային, որոշ դեպքերում՝ տորֆային հողերը:

Գետահովտային ցածրադիր մասերում բավականին հզոր շերտերով զգալի տարածություններ են գրավում ալյուվիալ հողերը, որոնք բնութագրվում են բարձր բերքատվությամբ:

Բազմազան է մարզի բուսական աշխարհը: Այստեղ աճող բուսատեսակները հասնում են երկու հազարի: Ինչպես արդեն նշվել է, Լեռնային Ղարաբաղում լերկ ժայռեր շատ քիչ կան, բացառությամբ բարձր լեռնագագաթային մասերի: Ղարաբաղի լեռները ծածկված են անտառներով, թփուտներով կամ խոտային բուսականությամբ:

Ծովի մակերևույթից մինչև 300 — 350 մ բարձրություն ունեցող տափաստանային մասերում գերակշռում են անապատային և կիսաանապատային տիպի բուսատեսակները: Այս վայրերում տարածված են հատկապես օշինդրը, ուղտափուշը, կապարը, ոզնախոտը, երնջակը, տերեփուկը: Այստեղ տարած-



Տեսարան Լեռնային Ղարաբաղից

ված են նաև կածուկ և ղլղլան կոչվող փշոտ բուսատեսակները, աճում են նաև որոշ խոտաբույսեր, բայց նոսր: Խոտային բուսականությունը հարուստ է նախալեռնային շրջաններում: Այստեղ խոտային բուսականության հետ միասին աճում են ցաքի ու դաշտային մոշի թփուտատեսակներ:

Շատ ավելի բազմազան են միջին լեռնային՝ մինչև 1500 մ բարձրություն ունեցող գոտու բուսատեսակները: Այստեղ հատկապես տարածված են թիթեռնազգի խոտաբույսերը, ավելուկը, շեպը, եղինջը, ծնեբեկը, թրթնջուկը, կնձմնձուկը, տտպաշարը, ճրճռուկը, սիբեխը, պտուտկունը, խնջլոզը, փիփերթը, շրիշը, ուրցը, կինազոխը, իշակաթնուկը, արջաթանթուլը, հազարատերևուկը, բյանգին և այլն: Նշված գոտում մեծ տարածություններ են զբաղեցնում թփուտները, հատկապես մոշուտներն ու ցաքուտները: Ձուլալ գետերի ու առվակների մեջ և դրանց ափերին աճում են ջրկոտեմ և դաղձ: Այս բարձրությունից էլ հիմնականում սկսվում է մարզի անտառային գոտին:

Անտառներ կան մարզի բոլոր շրջաններում, բայց առավել անտառաշատ են Մարտակերտի, (որին բաժին է ընկնում մարզի անտառների շուրջ 60%-ը) և Հադրութի շրջանները: Անտառներում աճում են կաղնու, բոխու, լորենու, հացենու, թեղու, թխկենու, կեչու, հաճարենու, ճապկու ծառատեսակները: Գետահովիտների երկարությամբ տարածված են ուռենիները: Ղարաբաղյան անտառները շատ հարուստ են պտղատու վայրի ծառատեսակներով՝ խնձորենի, տանձենի, ընկուզենի, սալորենի, հոնի, զկռենի, տկողնի, սզնենի: Առանձին վայրերում աճում է շագանակենին: Ամենուրեք տարածված են մոշի և մասրենու թփուտները:

Անտառները կազմում են մարզի տարածքի 34 — 35%-ը (Հայկ. ԽՍՀ-ում 10 — 12% է): Ղարաբաղի անտառներն ունեն արդյունաբերական, հողապաշտպան, ջրապաշտպան և կուրորտային նշանակություն: Արդյունաբերական տեսակետից հատկապես կարևոր են Մարտակերտի շրջանի անտառները: Անտառներում աճում է խազազ կոչվող բուսատեսակը, որը մոտավորապես սխտորի համ ու տեսք ունի և օգտագործվում է թարմ վիճակում: Կա նաև ծմակթափան, սունկ: Վայրի ծառատեսակների ու թփերի պտուղները, ինչպես նաև մարզի տարածքում աճող բույսերի շատ տեսակներ ունեն սննդարար բարձրորակ հատկություններ, և բնակչությունը շատ հնուց դրանք, թարմ, չորացված ու վերամշակված ձևով օգտագործում է որպես սննդամթերք, համեմունք, դեղամիջոց: Անտառների բացատներում առատորեն աճում են բազմատեսակ բուրումնավետ ծաղիկներ ունեցող բույսեր՝ մանուշակ, անտառավարդ, մասրենի (գրավարդ), կակաչ, շուշան, մեխակ, նունուֆար, երեքնուկ, անթառամ և այլն: Աճում է մոշի երեք տեսակ՝ սևամոշ, մռամոշ, գետամոշ: Արևադեմ լեռնալանջերին աճում է բռնչի ծառատեսակը, որը տալիս է բուժիչ պտուղ, իսկ փայտը շատ ամուր է և կարծր: Անտառային գոտուց վեր, հիմ-

նականում 2300 մետր բարձրությունների վրա տարածված են ալպիական, իսկ բարձր լեռնագագաթային մասերում՝ տունդրային յուրահատուկ բուսատեսակները:

Շատ բազմազան է նաև մարզի կենդանական աշխարհը: Դաշտային գոտում հանդիպում է ջեյրան (եղջերուի տեսակ), վայրի այծ, եղեգնուտներում՝ վայրի խոզ: Անտառներում կա գորշ արջ, գայլ, վայրի կատու, լուսան, աղվես, նապաստակ, քնամուկ, սկյուռ, խլուրդ, ինչպես նաև վայրի խոզ: Թռչուններից տարածված են վայրի սագը, բադը, թուրաջը (հատկապես դաշտային մասերում), կաքավը, սոխակը, արտույտը, սալամը, մոշահավը, կաչաղակը, ագռավը, ճնճղուկը, աղավնին, արծիվը, բազեն, ուրուրը (վերջին երեքը՝ հատկապես լեռնային մասերում), կկուն, չարդը, փայտփորիկը, հոպոպը, բուն և այլն: Դաշտավայրային մասերում և նախալեռնային քարքարոտ հատվածներում տարածված են օձերի շատ տեսակներ (այդ թվում թունավոր), մողեսներ, գետահովտային և անտառոտ վայրերում՝ լորտու, կրիա, ոզնի: Բազմազան են մորեխների, բզեզների, թիթեռների տեսակները: Համեմատաբար խոշոր գետերում կան ձկներ:

Լեռնային Ղարաբաղում կան բազմաթիվ ոչ խոշոր, բայց արագահոս, գուլալ ու քչքչան գետեր ու գետակներ: Դրանց մեծ մասը պատկանում է Կուր, իսկ փոքր մասը՝ Արաքս գետերի ավազաններին: Լեռնային Ղարաբաղի գետերը ջրառատ չեն, հատկապես ամռան ամիսներին խիստ սակավաջուր են դառնում: Սնման աղբյուրներն են ձնհալքը և անձրևները: Քանի որ բոլոր գետերն էլ լեռնային բնույթ ունեն, հոսում են մեծ թեքություններով, հետևաբար ունեն էներգետիկ նշանակություն: Մեծ է դրանց նշանակությունը նաև դաշտային և նախալեռնային վայրերի հողատարածությունների ոռոգման համար: Սակայն գետերի զգալի մասի ջրերը ջրամբարներում հավաքվում և հիմնականում ոռոգման համար օգտագործվում են մարզի սահմաններից դուրս:

Համեմատաբար խոշորը *Թարթառ* (պատմական անցյալում կոչվում էր Տրտու) գետն է: Այն սկիզբ է առնում Ղարաբաղի լեռնաշղթայի հյուսիսային մասերում գտնվող աղբյուրներից ու, հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք ուղղությամբ անցնելով Մարտակերտի, Միր Բաշիրի ու Բարդայի շրջաններով թափվում է Կուր գետը: Թարթառի վերին հոսանքի խոշոր վտակը *Թուրագայ* գետն է, որը սկիզբ է առնում Մռովի լեռնաշղթայից և Մաղավուզ գյուղից հինգ կիլոմետր դեպի արևմուտք ընկած վայրում միանում Թարթառին: Այս գետն իր վտակներով մարզի տարածքում հոսում է մեծ թեքություն ունեցող, բայց անտառապատ լեռնալանջերով: Թարթառի հովիտն իր անդնդախոր կիրճով, բազմաթիվ ջրվեժներով անկրկնելի գեղեցկություն ունի: Գետի երկարությունը հասնում է 200 կմ, գետավազանի տարածությունը՝ ավելի քան 2650 կմ²: Գարնան վերջերին ու ամռան սկզբներին առատ տեղումների և ձնհալքի

հետևանքով Թարթառը հաճախակի խիստ վարարում է և դուրս է գալիս իր ափերից: Վարարումները նախկինում հատկապես նրա ստորին հոսանքում մեծ վնասներ էին հասցնում գյուղատնտեսությանը: Սարսանգի հիդրոէլեկտրակայանի ջրամբարը կարգավորել է գետի ռեժիմը: Սարսանգի հիդրոէլեկտրակայանից բացի, որը շահագործման է հանձնվել 1970-ական թվականներին, Թարթառի վրա գործում է նաև Մադաղիսի ՀԷԿ-ը, որը շահագործման է հանձնվել 1940-ական թվականներին:

Իր մեծությամբ երկրորդը *Խաչեն* գետն է, որը նույնպես հոսում է Մարտակերտի շրջանի տարածքով, համարյա Թարթառին զուգահեռ ուղղությամբ: Խաչենը սկիզբ է առնում Ղարաբաղի լեռնաշղթայի հյուսիսային մասում գընվող Կարմրասար (Ալաղայա) լեռնազանգվածի լանջերից: Այն իր վտակներով հոսում է Վանք, Առաջաձոր, Քոլատակ, Ծմակահող, Շահմասուր գյուղերի տարածքով և դուրս է գալիս Աղդամի շրջան: Խաչեն գետի մեծ վտակը *Քոլատակն* է, որն սկզիբ առնելով Կաչաղակասարից, վերին հոսանքով հոսում է Ասկերանի շրջանի տարածքով: Խաչեն գետի երկարությունը 119 կմ է, ջրհավաք ավազանի տարածքը՝ շուրջ 660 կմ^2: Թարթառի նման, այս գետը նույնպես գարնան վերջերին հաճախակի հորդանում և դուրս է գալիս ափերից: Հարթավայրային մասում նրա ջրերը հավաքվում և հիմնականում օգտագործվում են Աղդամի շրջանի ոռոգման նպատակներով: Խաչենի հովիտը (վերին և միջին հոսանքում) նույնպես անտառապատ է, ունի գեղատեսիլ բնություն: Մարտակերտի շրջանի հյուսիսային մասով հոսում է Կուր գետի մյուս վտակը՝ *Ինջա* գետը, որը սկիզբ է առնում Մռովի լանջերից: Այն զգալի դեր է խաղում շրջանի հյուսիսային մասի հողերի ոռոգման համար:

Մյուսը *Կարկառ* գետն է, որը բազմաթիվ վտակներով սկիզբ է առնում Ղարաբաղի լեռնաշղթայի Շուշվա տարածքում գտնվող բարձրաբերձ լեռնալանջերից: Այդ վտակներից մեկը՝ *Քարին տակ* գետը անցնում է Շուշի քաղաքի արևմտյան և հարավային մասերով՝ անդնդախոր կիրճով, որտեղից այն դուրս գալով միանում է քաղաքի արևելյան մասով հոսող *Ղալբալու* գետին: Այս երկու վտակներից առաջացած *գետը* Ստեփանակերտի մոտ միանում է Կարկառին: Ասկերանի մոտերքում սրան են միանում նաև *Բալլուջա և Քադարա* վտակները: Հարթավայրային այս հատվածում Կարկառի հովիտը զգալիորեն լայն է: Ընդհանուր առմամբ նրա երկարությունը հասնում է 115 կմ, ավազանի տարածքը կազմում է 1490 քառ. կմ: Վերին հոսանքում Կարկառի վտակներն ունեն անկրկնելի գեղատեսիլ, անտառապատ ավազաններ, ջրվեժներ: Գետն ունի էներգետիկ և ոռոգման նշանակություն: Նրա վրա կառուցված են փոքր հիդրոէլեկտրակայաններ (Ստեփանակերտի, Ասկերանի): Հարթավայրային մասում նրա ջրերը մասամբ օգտագործվում են Ասկերանի, իսկ ավելի շատ Աղդամի շրջանների հողերի ոռոգման համար:



Տեսարան Լեռնային Ղարաբաղից

Մարզի մյուս գետերից նշանավոր են *Վարանդան* և *Իշխանագետը*, որոնք պատկանում են Արաքսի ավազանին: Իշխանագետն սկիզբ է առնում Քիրսի հարավահայաց լանջերից և հոսում է Հադրութի շրջանի տարածքով, ունի ավելի քան 80 կմ երկարություն: Վարանդա գետը սկիզբ է առնում Քիրսի արևելյան լանջերից, երկարությունը ավելի քան 100 կմ է, հոսում է Մարտունու շրջանի Թաղավարդ, Սխտորաշեն, Կարմիր Շուկա բնակավայրերի մոտով և Ֆիզուլի քաղաքի մոտ Իշխանագետի հետ թափվում այդտեղ կառուցված արհեստական ջրամբարը:

Վարանդա գետի վտակն է *Ամարաս* գետը, որը սկիզբ է առնում Բովուրխանի լեռների հարավային լանջերից, հոսում է Մարտունու շրջանի Մամնա, Կոլխոզաշեն, Խերխան, Մաճկալաշեն գյուղերի ու պատմական Ամարաս վանքի մոտով և Լեռնային Ղարաբաղի սահմանագլխին միանում Վարանդա գետին: Վերջինս Ֆիզուլու շրջանում անվանվում է *Քյոնդալան: Խոնաշեն* գետը սկիզբ է առնում Բովուրխանի լեռների հյուսիսային լանջերից և հոսելով Մարտունու շրջանի Ննգի, Սպիտակաշեն գյուղերի մոտով ու Մարտունի քաղաքի միջով, հասնում է Կուրապատկինո բնակավայրի մոտ գտնվող հարթավայրը: Սա սակավաջուր գետ է և չորային տարիներին Մարտունու շրջանի արևելյան մասի հարթավայրում էլ կորչում է:

Բացի դրանցից, մարզի բոլոր շրջաններում գարնանային ձնհալքերի ու անձրևների հետևանքով առաջանում են սելավային գետակներ, հեղեղատներ, որոնք հիմնականում ժամանակավոր բնույթ ունեն:

Մարզի տարածքը հարուստ է սառնորակ աղբյուրներով: Դրանց թիվը հատկապես մեծ է լեռնային, անտառոտ վայրերում: Սարալանջերին, անտառների փեշերին այսօր էլ կարելի է տեսնել առանձին անհատների կողմից կամ նախաձեռնությամբ դեռ շատ վաղուց կառուցված, սրբատաշ բազալտով ձևավորված աղբյուրներ, որոնց շրջակայքում շոգ օրերին իրենց հանգիստն են անցկացնում այցելուները: Շատերն են հիացել Մարտունու շրջանի Սխտորաշեն գյուղի մոտ գտնվող, ավելի քան 2010-ամյա հսկա ծառի ստվերում կառուցված երեքակն աղբյուրով: Դրանց թիվը շատ է Ղարաբաղում:

Շատ գյուղերում բնակիչներն ունեն իրենց ջրհորները: Հարթավայրային մասերում, հատկապես Մարտունու շրջանի՝ Ճարտարի, Մարտունու, Գիշու դաշտերում կառուցված են քյահրիզ կոչվող աղբյուրներ, իսկ ոռոգման համար օգտագործվում են արտեզյան աղբյուրները:

Լեռնային Ղարաբաղի տարածքում կան մետաղային և ոչ մետաղային մի շարք հանքատեսակներ, սակայն մարզի տարածքը երկրաբանական-հետախուզական առումով դեռևս լավ չի ուսումնասիրված: Մետաղային հանքային հանածոներից այստեղ դեռ հնուց հայտնաբերված են բազմամետաղների, հատկապես ցինկի, կապարի, պղնձի, ոսկու, ծծմբային կոլչեդանի, երկաթի



ԳՐԱԴԱՐԱՆ
Ե. ԲԻԲԼԻՈԹԵԿԱ
Ամառային արոտավայրում

հանքավայրեր ու երևակումներ: Գունավոր մետաղների հանքավայրերով ու երևակումներով հատկապես նշանավորը Մարտակերտի շրջանն է՝ Թարթառ և Խաչեն գետերի միջև ընկած տարածքը: Մասնավորապես հանրահայտ է Մեհմանա գյուղի մոտ գտնվող բազմամետաղների հանքավայրը, որը համեմատաբար լավ է ուսումնասիրված և որի օգտագործման համար «Հայգունմետնախագիծ» ինստիտուտի կողմից կազմված է տնտեսական հիմնավորում:

Պղնձի ու այլ գունավոր մետաղների հանքախմբերի երևակումներ կան Դրմբոն, Գյուլաթաղ գյուղերի մոտ, ինչպես նաև Հաթերքից դեպի հյուսիս՝ Մռով սարի լանջին:

Ծծմբային կոլչեդանի ու այլ մետաղների պաշարներ են հայտնաբերված Մարտակերտի շրջանի Հարությունագոմեր, Վանք, Գյուլաթաղ գյուղերի մոտ: Դրանցից առավել հետաքրքրություն ներկայացնողը Գյուլաթաղի հանքավայրն է: Երկաթահանքի երևակումներ կան Ցոր գյուղի մոտ:

Մարզի տարածքը համեմատաբար հարուստ է ոչ մետաղային ռեսուրսներով: Մասնավորապես, շատ են մարմարի ու մարմարեցված կրաքարի հանքավայրերը: Դրանցից խոշորագույնը Ստեփանակերտ քաղաքից ոչ մեծ հեռավորության վրա գտնվող Հարավ գյուղի հանքավայրն է: Այդ գյուղը գտնվում է մարմարի շերտերի վրա: Հարավ գյուղի մարմարի հանքավայրը պաշարներով ԽՍՀՄ-ի ամենախոշորներից է: Այստեղ մարմարի շերտի հզորությունը հասնում է 450 մետրի: Հանքավայրը հետազոտված է, ունի արդյունաբերական նշանակություն: Այս հանքավայրի մարմարը բաց վարդագույն է, օգտագործվում է հասարակական շենքերի ներսը հարդարելու, հուշարձաններ կառուցելու և այլ նպատակների համար:

Մարմարի հանքավայրեր կան նաև Շուշի քաղաքի, Ասկերանի շրջանի Քարագլուխ, Մարտունու շրջանի Նորշեն և Ճարտար, Ասկերանի շրջանի Խրամորթ և այլ գյուղերի մոտ: Դեկորատիվ նշանակության տեսակետից հատկապես բարձրորակ են Քարագլուխ գյուղի մոտ գտնվող հանքավայրի վարդագույն և սպիտակավուն, ինչպես նաև Նորշեն գյուղի մոտ գտնվող հանքավայրի վարդագույն և մոխրագույն մարմարները: Կան նաև գրանիտի մի շարք հանքավայրեր, որոնցից դեկորատիվ հատկություններ ունեն հատկապես Մարտունու շրջանի Ննգի գյուղի մոտ գտնվող հանքավայրի մուգ գորշ և սև գույնի, Մարտակերտի շրջանի Քոլատակ գյուղի մոտ գտնվող հանքավայրի սպիտակ և մոխրագույն բծերով շագանակագույն գրանիտները, ինչպես նաև Հադրութի մոտ գտնվող հանքավայրի կապտավուն գրանիտադիորիտները:

Մարտակերտի շրջանը հարուստ է տուֆի պաշարներով: Առավելապես հիշատակության արժանի է Վանք գյուղի մոտ գտնվող վարդագույն տուֆի հանքավայրը: Ի դեպ, 13-րդ դարում այս հանքավայրի տուֆով է կառուցվել



Թարթառ գետի հովտում

հանրահայտ Գանձասարի վանքը: Իսկ Չլդրան գյուղի մոտ կան ֆելզիտային տուֆի պաշարներ: Այստեղի տուֆը մուգ կաթնագույն է, բնական գեղեցիկ նախշերով և երեսապատման հիանալի նյութ է հանդիսանում: Երեսապատման համար կարող են օգտագործվել նաև Ասկերանի շրջանի Սեյիդիշեն գյուղի մոտ գտնվող դիաբազի պաշարները:

Մարզի բոլոր շրջանները հարուստ են բազալտի ու անդեզիտի պաշարներով, որոնք դեռ շատ հնուց ղարաբաղցիներն օգտագործել են շինարարական նպատակների համար: Ղարաբաղի գյուղերի տների մեծ մասը կառուցված են տեղական բազալտով: Մարտակերտի ու Մարտունու շրջաններում կան կրաքարի խոշոր պաշարներ, որոնք նույնպես լայնորեն օգտագործվում են շինարարության մեջ որպես որմնանյութ: Մարտակերտի մոտ գտնվող հանքավայրում կրաքարը արդյունահանվում է մեքենայական եղանակով: Որպես որմնանյութ օգտագործելուց բացի, կրաքարը Ղարաբաղում հնուց օգտագործվել է կիր ստանալու համար: Մինչև այժմ էլ կրի ստացման նախկին մեթոդն օգտագործվում է մարզի կոլտնտեսություններում:

Մարզի տարածքում կա նաև ցեմենտի արտադրության հումք, որով հատկապես նշանավոր են Ասկերանի ու Մյուրիշենի (Մարտունու շրջան) հանքավայրերը: Համարյա բոլոր շրջաններում կան գետավազի, լեռնային ավազի պաշարներ, որոնք օգտագործվում են շինարարության մեջ: Կան նաև կավերի, այդ թվում նաև բենտոնիտային կավերի պաշարներ, որոնք սակայն ուսումնասիրված չեն: Գրաֆիտի պաշարների երևակումներ կան Ջանյաթաղ (Մարտակերտի շրջան), իսկ վիմագրական քարի պաշարներ՝ Հացի և Մյուրիշեն (Մարտունու շրջան) գյուղերի մոտ: Գործնական նշանակություն ունեն գիպսահողի պաշարները Մարտակերտի շրջանում, ինչպես նաև բարձրորակ կավի պաշարները Մարտունու շրջանի՝ Ննգի, Ղավախան, Մարտակերտի շրջանի՝ Հաթերք, Մոխրաթաղ, Հադրութի շրջանի՝ Մեծ Թաղլար գյուղերի մոտ:

Լեռնային Ղարաբաղի տարածքում հայտնաբերվել են նաև հանքային ջրի ռեսուրսներ: Հանքային ջրի որոշ աղբյուրներ այստեղ հայտնի են եղել դեռ հնուց: Խորհրդային իշխանության տարիներին ուսումնասիրվել են այդպիսի աղբյուրների տասից ավելի խումբ, շուրջ երկու տասնյակ ելքերով: Դրանցից հատկապես գործնական նշանակություն ունեն Լիսագորի (Շուշիի շրջան) հանքային ջրի աղբյուրները: Դրանք ունեն երկաթի մեծ բաղադրություն և ամռան ամիսներին տարբեր վայրերից խմելու կամ լոգանք ընդունելու համար այստեղ են գալիս մեծ թվով հանգստացողներ: Գործում է նաև հանքային ջրի լցման փոքր արտադրամաս: Լիսագորի հանքային ջրի աղբյուրները գտնվում են Շուշի քաղաքից 16 — 18 կմ հեռավորության վրա, Շուշի-Գորիս ավտոճանապարհին անմիջապես մոտ:

Հանքային ջրի աղբյուրներ կան նաև Մարտակերտի (Թարթառի հովտում), Մարտունու և Հադրութի շրջաններում: Սակայն դրանք դեռևս չունեն գործնական նշանակություն:

2. ՊԱՏՄԱԾԱԲԱՐՇԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Այժմյան Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը զբաղեցնում է պատմական Հայաստանի նահանգներից մեկի՝ Արցախի հարավ-արևմտյան հատվածի մի մասը: Արցախը հին Հայաստանի ամենաընդարձակ նահանգներից մեկն էր, որը տարածվում էր Աղստևի ավազանից, Փոքր Կովկասյան լեռնաշղթայի արևելյան լեռնափեշերով, հարավ-արևելյան ուղղությամբ, մինչև Արաքս գետի հովիտը:

Առաջին անգամ Արցախը Ուրտեխե կամ Ուրտեխինի անվանումներով հիշատակվում է Հայաստանի ուրարտական ժամանակաշրջանի սեպագիր արձանագրություններում:

Հին հունական, հռոմեական, ինչպես նաև միջնադարյան հայ պատմիչների միահամուռ վկայությամբ հնուց ի վեր Արցախը և Ուտիքը կազմել են Մեծ Հայքի անքակտելի մասը: Այդ իրողությունը հավաստող փաստագրական հարուստ նյութեր և տեղեկություններ են պահպանվել Ստրաբոնի, Պլուտարքոսի, Պլինիուսի, Պտղոմեոսի, Մ. Խորենացու, Փ. Բյուզանդի, Ագաթանգեղոսի և հայ ու օտարազգի շատ այլ պատմիչների գործերում:

Ընդ որում պատմական Հայաստանի Արցախ և Ուտիք նահանգները ընդգրկում էին Կուր գետի միջին և ստորին հոսանքների աջափնյա ամբողջ տարածքը, հարավում հասնելով մինչև Արաքսի հովիտ: Ուտիքը՝ Մեծ Հայքի տասներկուերորդ նահանգը ձգվում էր Արցախի հյուսիսային, հյուսիս արևելյան ու արևելյան ամբողջ սահմանագծով և զբաղեցնում էր Կուր և Արաքս գետերի միջագետքի հիմնականում հարթավայրային մասը: Իսկ Արցախը՝ Մեծ Հայքի տասներորդ նահանգը, զբաղեցնում էր, ինչպես նշվել է, Կուր և Արաքս գետերի միջև ընկած հարթավայրի զգալի մասը ու դրանից դեպի արևմուտք ընկած Աղստև գետի ավազանից մինչև Արաքսի հովիտը ձգվող լեռնային ու նախալեռնային ամբողջ տարածքը: Այսպիսով Կուր և Արաքս գետերի միջև ընկած ամբողջ տարածությունը Սյունիքից արևելք զբաղեցնում էին Արցախ և Ուտիք հայկական նահանգները, որոնք Կուր գետով բաժանված էին Աղվանքից: Աղվանք երկիրն զբաղեցնում էր Կուր գետի ու Կովկասյան լեռների միջև ընկած տարածքը: Այստեղ մ. թ. ա. I դարում տասնյակ ցեղերի միավորման հիման վրա ստեղծվել է Աղվանքի ստրկատիրական պետություն, թագավորություն: Աղվանքը սերտ կապերի մեջ է եղել Հայաստանի հետ: Ընդ որում Հայաստանը մեծ ազդեցություն էր թողնում նրա քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքի վրա: Նրանց զորքերը, զենքերի տեսակները խիստ նման էին հայկականին: Հայտնի է, որ աղվանները Տիգրան Մեծի բանակում կռվել են հռոմեական զորքերի դեմ: 370-ական թվականներին նրանք ընդունել են քրիստոնեություն, և Մ. Մաշտոցը ստեղծել է աղվանական գրերը:



Արցախյան դարավոր կաղնի

Մեծ Հայքի տերիտորիան 387 թ. Հռոմեական կայսրության և Սասանյան Պարսկաստանի միջև բաժանվելուց հետո՝ Պարսկաստանը Արցախ և Ուտիք հայկական նահանգները միացրել էր Աղվանքին ու ստեղծել այսպես կոչված Աղվանք մարզպանությունը: Ընդ որում, մարզպանական Աղվանքի կազմի մեջ մտած հայկական նահանգներում ակտիվորեն ռայատևել են հայ իշխանները: Իսկ արաբական տիրապետության ժամանակաշրջանում Արցախը (ինչպես նաև Ուտիքը և Աղվանքը) մտցվեց խալիֆայության ստեղծած Արմենիա փոխարքայության մեջ:

Բագրատունիների թագավորության հիմնադրումից սկսած (885 թ.) Արցախը, ինչպես նաև Ուտիքը մտել են հայկական այդ թագավորության մեջ: Հայկական և օտար բոլոր աղբյուրները ցույց են տալիս, որ չնայած պատմական տարբեր ժամանակներում Արցախը տարբեր անվանումներ է ունեցել, սակայն միշտ եղել է Հայաստանի անբաժանելի մասը, մշտապես եղել է հայաբնակ: Եվ միայն 11-րդ դ. կեսերից սկսած արոտային անասնապահության համար հարմար Կուր-Արաքսյան դաշտավայր են թափանցել Միջին ու Կենտրոնական Ասիայից եկած քոչվոր անասնապահները՝ թուրք-սելջուկներն ու մոնղոլ-թաթարները:

Տարածքային որոշ տարբերություններով հայկական այդ նահանգը պատմական տարբեր ժամանակաշրջաններում կոչվել է Առան, Արցախ, Արդախ, Արձախ, Արձախա աշխարհ, Արցախամար աշխարհ, Խաչեն, Խաչենք, Փոքր Սյունիք, Ղարաբաղ:

9—13-րդ դարերում Արցախը կոչվել է իր ամենախոշոր գավառի անունով՝ Խաչեն կամ Խաչենք, իսկ հետագայում Ղարաբաղ: 9-րդ դարի երկրորդ կեսից, երբ Հայաստանը նորից նվաճեց իր անկախությունը, Արցախում արդեն կազմավորվել էին մի քանի անկախ իշխանություններ, որոնցից ամենաընդարձակն ու հզորը Խաչենի իշխանությունն էր: 16—17-րդ դարերում այստեղ պահպանվել էին հինգ իշխանություններ՝ Խաչենի, Ջրաբերդի, Դիզակի, Վարանդայի, Գյուլիստանի: Դրանք միասին կոչվում էին Խամսայի Մելիքություններ:

Հայ խոշոր պատմաբան Լեոն այսպես է բնութագրում Ղարաբաղի տարածքն ու դիրքը. «Հայկական բարձրավանդակի գրեթե ամբողջ հյուսիս-արևելյան ծայրը, որ սահման ունի Կուր գետի հովիտը հյուսիսում և Արաքսի հովիտը հարավում, ընդարձակ առումով այնպես, ինչպես հասկացվել է վերջին երեք դարերի ընթացքում, կարելի է ամփոփել մի ընդհանուր անվան տակ — Ղարաբաղ: Ամբողջ այդ տարածությունը, հյուսիսից հարավ և արևմուտքից արևելք, լցված է լեռնային զանգվածներով: Արևելյան կողմից լեռնակուտերի այս մեծ աշխարհն իջնում է այն ընդարձակ տափաստանի վրա, որը կոչվում է Միլի կամ Ղարաբաղի դաշտավայր, իսկ արևմուտքում նրա պայ-

մանական եզրագիծ կարելի է ընդունել այն ջրբաժան բարձրությունները, որոնք Սևանա լճի արևելյան կողմում ձգվում են հյուսիսից դեպի հարավ, միանալով Դարալագյազի լեռներին: Հարավում այս լեռներից բաժանվում է և դեպի արևելք գնում Բարգուշատի շղթան, որը՝ Ղարաբաղի հարավ-արևմտյան և հարավային սահմանագիծն է կազմում, բաժանելով նրան Նախիջևանի գավառից»[1]:

Արցախ նահանգի մակերևույթը խիստ կտրտված լինելով անդնդախոր ձորերով և գետահովիտներով, դեռևս հնուց բաժանված է եղել 13 գավառների: Չնայած այդ բաժանումներին և տեղական ներքին յուրահատկություններին, պատմական Հայաստանի այդ նահանգը ազգային, էթնիկական, տնտեսական գործունեության, կենցաղային սովորույթների ընդհանրության, արտաքին թշնամիների հարձակումներից միասնաբար պաշտպանվելու առումներով հիրավի խիստ ընդգծված և բնորոշ ամբողջություն է եղել: Այս ընդհանրությունների շնորհիվ Արցախ-Ղարաբաղի հայությունը իր լեռնաստանը դարեր շարունակ դարձրել էր մի միասնական կուռ ամրոց, որն անմատչելի էր հաճախակի հարձակվող արտաքին թշնամիների համար:

Ատրպատականի տափաստաններից՝ թաթար-մոնղոլների հաճախակի կրկնվող արշավանքների պատճառով, նահանգը երկար ժամանակ առևտրատնտեսական արտաքին կապեր համարյա չուներ, բայց ներքին համախմբվածությունը, ազգային-ազատագրական բուռն ձգտումը հայ ժողովրդի այս հատվածի համար միշտ հաղթանակող է եղել:

Եթե պատմական Հայաստանի մյուս նահանգներում պարսիկների, արաբների, թաթար-մոնղոլների և մյուս թշնամի ցեղերի արշավանքների հետեվանքով, ինչպես Լեոն է նշում, ջնջվում էին ազգային իշխանության վերջին մնացորդները, ապա Ղարաբաղի հայությունը շարունակում էր պահպանել իր անկախ իշխանությունը: Նույնիսկ շրջապատից կտրված լինելու դեպքերում էլ այստեղ ստեղծվել ու զարգացել է սեփական միջոցներով գոյատևող տնտեսությունը, լեռնային արդյունագործությունը: Ինքնապահպանման բնազդն, իրոք, այս լեռնաշխարհի բնակչության հաղթանակի ու գոյատևման վճռորոշ հատկանիշն է եղել: Տնտեսավարման և կենցաղավարման յուրահատկությունները դարավոր արմատներ ունեն այստեղ և մինչև այժմ էլ սրբությամբ կիրառվում ու հաշվի են առնվում:

Պահպանելով իր լեռնաստանի անկախությունը՝ Ղարաբաղի հայությունը որպես մայր հայրենիքի անբաժան մաս, միաժամանակ ամենաակտիվ մասնակցությունն է ունեցել օտար բռնակալներից ամբողջ Հայաստանը ազատագրելու պայքարում:

[1] Տես *Լեո*, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք երկրորդ, էջ 9, Երևան, 1973:

Ինչպես վկայում են պատմական փաստերը, ղարաբաղցիները բացառիկ քաջություն և անընկճելի հաստատակամություն են ցուցաբերել իրենց հայրենիքը արաբների, սելջուկների, թաթար-մոնղոլների, թուրքերի անդադար հարձակումներից պաշտպանելու գործում: Հայտնի է, որ 9-րդ դարում արաբական մեծաթիվ զորքերը, երկարատև պաշարման ընթացքում էլ չեն կարողացել գրավել Քթիշ (այժմյան Հադրութի շրջանում) ամրոցը: Հայերի ու նրանց իշխան Եսայի Երանշահիկի քաջություններից ապշած՝ արաբները ստիպված են եղել դադարեցնել ամրոցի պաշարումն ու ետ նահանջել:

Այդպիսի բազմաթիվ օրինակներից մեկն էլ Ղարաբաղի մելիքների ու նրանց ջոկատների ակտիվ մասնակցությունն է Դավիթ Բեկի ազատագրական պայքարին: Անհրաժեշտ է հիշատակել նաև Ղարաբաղի կամավոր ջոկատների անօրինակ հերոսությունները Սարդարապատի ճակատամարտում (1918 թ.), որտեղ վճռվեց հայ ժողովրդի բախտը, և նա ազատագրվեց թուրք բռնակալներից:

Ինչպես ամբողջ Հայաստանի, այնպես էլ Ղարաբաղի առաջադեմ մտավորականությունը մեր լեռնաշխարհի փրկությունը օտար բռնակալների հաճախակի ասպատակություններից միշտ կապել է ռուս ժողովրդի հետ: Եվ պատահական չէ, որ դեռ շատ հնուց զգալի թվով ղարաբաղցիներ բնակություն են հաստատել Ռուսաստանի ընդարձակ տարածության տարբեր մասերում, հատկապես Մոսկվայում, Հյուսիսային Կովկասում, Ստորին Պովոլժիեում, Հետագայում նաև Պետերբուրգում և այլուր: Այդ պրոցեսը հատկապես ակտիվացել է Պյոտր I թագավորի ու Եկատերինա II թագուհու ժամանակաշրջանում:

Ինչպես հայտնի է, հատկապես Պյոտր I-ը լայն արտոնություններ է տվել հայերին Ռուսական կայսրության բոլոր վայրերում առևտրի, արհեստագործության, երկրագործության զարգացման բնագավառներում: Կան պատմական բազմաթիվ փաստեր այն մասին, որ ղարաբաղցի հայերը Հյուսիսային Կովկասում կարևոր դեր են խաղացել խաղողագործության, շերամապահության, մետաքսագործության, գինեգործության հիմնադրման գործում: Նրանք մետաքսագործական ձեռնարկություններ են ստեղծել նաև Աստրախանում ու Պովոլժիեի մյուս վայրերում: Այդ նույն վայրերում, ինչպես նաև Մոսկվայում, Պետերբուրգում՝ ղարաբաղցի վաճառականներն ունեցել են իրենց առևտրական կենտրոնները: Նրանք զգալի դեր են խաղացել Ռուսաստանի ոչ միայն ներքին, այլև նրա միջազգային առևտրի զարգացման գործում: Նրանց դերը կարևոր է եղել, մի կողմից, Ռուսաստանի, մյուս կողմից, Հնդկաստանի, Չինաստանի, Պարսկաստանի միջև առևտրական կապեր հաստատելու և զարգացնելու գործում: Ղարաբաղցի վաճառականներն ակտիվորեն մասնակցել են Նովգորոդի ու Նիժնի Նովգորոդի (այժմ Գորկի) միջազգային տոնավաճառներին:

Հայտնի է, որ Ղարաբաղի մելիքները նամակագրական, դիվանագիտական հարաբերություններ են ունեցել Պյոտր I-ի ու Ռուսաստանի մյուս խոշոր գործիչների հետ: Նրանք ջանքեր են գործադրել Ռուսաստանի հետ ոչ միայն բարեկամական կապերի մեջ մտնելու, այլև միավորվելու Ռուսաստանին: Հայ ժողովրդի մեծ զավակ Իսրայել Օրին Գանձասարի հայտնի ժողովից հետո Ղարաբաղի մելիքների լիազորությամբ մեկնում է Գերմանիա, այնուհետև Ռուսաստան՝ նրանց օգնությամբ Հայաստանի ազատագրության վերաբերյալ իր ծրագիրը իրականացնելու նպատակով: Անուրանալի են այդ մեծ հայրենասերի դժվարին ճանապարհորդություններն ու ջանքերը իր հայրենիքը պարսկա-թուրքական լծից ազատագրելու գործում: Այդ ճանապարհին էլ նա անժամանակ մահանում է:

Իսրայել Օրու, Հովսեփ Էմինի հետ միասին, ինչպես նաև նրանցից հետո այդ լեռնաշխարհի ազատագրության, այն Ռուսաստանին միավորելու համար շատ ջանքեր են գործադրել Ղարաբաղի հայրենասեր մելիքները, առաջադեմ մտավորականությունը: Այդ նպատակով նամակագրական կապեր են հաստատել ցարական արքունիքի, պետական ու ռազմական խոշոր գործիչների հետ, բազմիցս պատվիրակություններ են ուղարկել բանակցությունների համար: Ի դեպ, Ղարաբաղի գործիչները այդպիսի կապեր էին ստեղծել նաև ռուս մեծ զորավար Ալեքսանդր Սուվորովի հետ:

Պյոտր I-ի ու, առհասարակ, Ռուսաստանի հետ բարեկամական հարաբերություններ ստեղծելու և ռուսական զորքերի օգնությամբ Ղարաբաղն ազատագրելու հարցում մեծ ջանքեր է գործադրել Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը: Նա ժամանակի ամենազարգացած հայ գործիչներից մեկն էր և ուներ ռուսահայաց քաղաքականություն: 1716 թվականին Պյոտր I-ին ուղարկված նամակում նա Ղարաբաղի բոլոր մելիքների անունից հավաստիացրել է, որ պատրաստ են իրենց ուժերի համեմատ ընդառաջ գնալ, երբ որ Պյոտրի հզոր թագավորությունը կցանկանա շարժվել դեպի այս կողմերը: Հիրավի, երբ 1722 թ. ռուսական զորքերը մոտեցան Գանձակ (այժմ՝ Կիրովաբադ) քաղաքին, նրանց միացան Լեռնային Ղարաբաղից այդտեղ ժամանած 12 հազար զինվորներ:

Սակայն այդ ժամանակահատվածում Ռուսաստանի արտաքին քաղաքականության և ռազմական իրավիճակի փոփոխման հետ կապված Պյոտր I-ը չի շարունակում Անդրկովկասը պարսկա-թուրքական լծից ազատագրելու գործողությունները: Օգտվելով այդ հանգամանքից թուրքերն ու պարսիկները նորից են սկսում իրենց ասպատակությունները: Այդ ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղում ստեղծվում են ամրակուռ հինգ բերդեր (սղնախներ), որտեղ և կենտրոնացվում են օտար նվաճողների դեմ պայքարի հիմնական ուժերը: Դրանց ռազմական գործողությունները ղեկավարել են Եսայի Հասան

Ջալալյանը և Ավան Յուզբաշին, որոնց հրամանատարությամբ ղարաբաղցիները 1720-ական թվականներին չորս անգամ թուրքերին ջարդել ու ետ են շպրտել: 1735 թ. պարսկական զորքերը նորից են հարձակվում Ղարաբաղի վրա, սակայն հանդիպելով Լեռնային Ղարաբաղի հինգ հայկական մելիքությունների զինված դիմադրությանը, ետ են շպրտվում: Պարսկաստանը ստիպված է լինում ճանաչել Ղարաբաղի՝ Խամսայի մելիքությունների անկախությունը:

1795 թ. պարսկական զորքը Աղաջար խանի գլխավորությամբ հարձակվում է Ղարաբաղի վրա, պաշարում է Շուշի քաղաք-ամրոցը: Սակայն ղարաբաղցիների համառ դիմադրության շնորհիվ պարսիկները նահանջում են: Որոշ ժամանակ անց ավելի խոշոր բանակով նա նորից է հարձակվում Ղարաբաղի վրա, մեծ դժվարությամբ զավթում Շուշին ու գազանաբար հաշվեհարդար տեսնում տեղի բնակչության հետ՝ ռուսական կողմնորոշման համար: Չնայած դրան, ղարաբաղցիները շարունակում են պայքարը, պարսիկ բռնակալին սպանում են Շուշիում, իսկ նրա զորքը փախչում է Ղարաբաղից:

18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին, հատկապես ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների ժամանակաշրջանում Անդրկովկասի ողջ հայությունը ռուսներին դիմավորում էր որպես ազատարարի ու բազմակողմանի աջակցում ռուս զորքերին: Ռուսական բարձրաստիճան դեկավարությունը մինչև Արևելյան Հայաստանի ազատագրումն էլ մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում Ղարաբաղի նկատմամբ, որի մեծ թվով զավակներ անձնվիրաբար գործում էին ռուսական պետական-տնտեսական, ռազմական պատասխանատու պաշտոններում:

19-րդ դարի սկզբին, 1804 թվականին, երբ ռուսական զորքերը Վրաստանում ամրապնդվելուց հետո շարժվում են դեպի Անդրկովկասի արևելյան մասն ու վերջնականապես գրավում Գանձակը՝ անկախությունը դեռևս պահպանած Ղարաբաղը կամավոր կերպով միանում է Ռուսաստանին: Իրականանում է Արցախ-Ղարաբաղ աշխարհի հայության երազանքը:

Այսպիսով, 1813 թ. Գյուլիստանի պայմանագրով, որով ավարտվում է 1804 — 1813 թթ. ռուս-պարսկական պատերազմը, Արևելյան Հայաստանի հյուսիս-արևելյան մի շարք գավառների հետ միասին Ռուսաստանին է միավորվում նաև Ղարաբաղի խանությունը: Դրանից հետո Ղարաբաղի (ինչպես նաև Բաքվի, Գյանջայի, Շիրվանի, Շաքիի, Թալիշի) խանությունը որպես վարչական միավոր վերացվում է: Ռուսաստանի կողմից Անդրկովկասում ստեղծած վարչական նոր կառուցվածքով (1867 թվականից) Լեռնային Ղարաբաղը մտցվում է Ելիզավետպոլի (նախկին Գանձակը) նահանգի մեջ, որպես առանձին գավառ (Շուշիի գավառ):

Ռուսաստանը Պարսկաստանի ու Թուրքիայի համեմատությամբ առա-

ջադեմ երկիր էր, հետևաբար Ղարաբաղի միացումը Ռուսաստանին շատ կարևոր դեր խաղաց այդ լեռնաշխարհի բնակչության քաղաքական, մշակութային, սոցիալ-տնտեսական զարգացման գործում: Համեմատաբար նպաստավոր և խաղաղ պայմաններ ստեղծվեցին տնտեսական կյանքի աշխուժացման համար: Շուշի քաղաքը դարձավ առևտրի ու մշակույթի նշանավոր կենտրոն:

Ղարաբաղի վաճառականները կապեր ստեղծեցին Ռուսաստանի ու եվրոպական երկրների նշանավոր քաղաքների հետ: Ղարաբաղում ձևավորվեցին արհեստագործական, մետաքսագործական, գորգագործական, գինու-սպիրտի արտադրության մանր ձեռնարկություններ:

Շուշին դառնում է Անդրկովկասի հայ մշակույթի նշանավոր կենտրոն: Այստեղ բացվում են դպրոցներ, թատրոն, հիմնվում է տպարան, տպագրվում են թերթեր: Ղարաբաղցի շատ երիտասարդներ կրթության են մեկնում Մոսկվա, Պետերբուրգ, Կիև, Խարկով, Բեռլին, Փարիզ, Լոնդոն, Քեմբրիջ և եվրոպական այլ քաղաքներ, որոնցից շատերը, շփվելով եվրոպական ու ռուսական հեղափոխական գործիչների հետ, ուսումնասիրելով մարքսիստական-լենինյան ուսմունքը, դառնում են պրոֆեսիոնալ հեղափոխականներ: Ղարաբաղը տվել է մարքսիստական գաղափարախոսության, ռուսական երեք հեղափոխությունների կազմակերպման շատ ականավոր հայ գործիչներ, որոնց զգալի մասը Լենինի մերձավորագույն զինակիցներն էին:

Ցարական Ռուսաստանը, ինչպես ծայրամասային մյուս շրջանների, այնպես էլ Անդրկովկասի նկատմամբ գաղութային քաղաքականություն էր վարում: Հատկապես 1880-ական թվականներից Ղարաբաղում ուժեղանում են գյուղացիների դժգոհությունները, պարբերաբար տեղի են ունենում հուզումներ ինքնակալության և տեղի կալվածատերերի դեմ: Այդ ժամանակվանից զգալի թվով ղարաբաղցի գյուղացիներ աշխատանք գտնելու նպատակով մեկնում էին Բաքու, Թիֆլիս, Միջին Ասիա, Հյուսիսային Կովկաս և այլ շրջաններ, որտեղ սկսել էր արդյունաբերությունը վերելք ապրել, ձևավորվում էր հեղափոխական պրոլետարիատը: Այդ հանգամանքը, ինչպես նաև Պետերբուրգում, Մոսկվայում, եվրոպական երկրներում գտնվող ղարաբաղցի, մարքսիստական հայացքներ ունեցող, ինտելիգենցիայի կապերը հայրենիքի հետ զգալի դեր են խաղում Ղարաբաղում հեղափոխական շարժումների զարգացման գործում: Արդեն 1905 թվականին Շուշի քաղաքում ստեղծվում է սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն:

Շուշի քաղաքում գործող կուսակցական կազմակերպությունն էլ համախմբում ու ղեկավարում էր Ղարաբաղի հեղափոխական շարժումները: Ի դեպ, Շուշվա հեղափոխական կազմակերպությունը կապերի մեջ էր Պետերբուգի, Մոսկվայի, Բաքվի և այն ժամանակ արտասահմանում գտնվող բոլշևիկյան

կուսակցության գործիչների ու կենտրոնների հետ:

Արդեն 1902 թվականից Շուշի էր հասնում «Իսկրա» լրագիրը: Այն արտասահմանից Ղարաբաղ էր ուղարկվում Վ. Ի. Լենինի հայ զինակիցների կողմից: Բացի դրանից, Վ. Ի. Լենինի ցուցումով 1905 թվականից Շուշի էր ուղարկվում բոլշևիկների «Պրոլետարի» լրագիրը: Այստեղ կազմակերպվում է ընդհատակյա տպարան, որտեղ տպագրվում էին հեղափոխական թռուցիկներ ու տարածվում ամբողջ Ղարաբաղում:

Ռուսական առաջին հեղափոխությունը մեծ ազդեցություն է թողնում Ղարաբաղի աշխատավորության վրա: 1905—1906 թվականներին Շուշի քաղաքի ու երկրամասի աշխատավորները կազմակերպված հեղափոխական ելույթներ են ունենում ցարական ինքնակալության և տեղական կալվածատերերի լուծը թոթափելու համար: Այս պայմաններում ադրբեջանցի ազգայնամոլները, ազգային բուրժուազիայի գործակալներն ազգամիջյան երկպառակություններ էին ստեղծում: Այս բոլորից մեծ չափով տուժում է Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը: Հեղափոխության պարտությունից հետո երկրամասի հեղափոխականորեն տրամադրված աշխատավորներն ու գործիչները դաժանորեն պատժվում են, սակայն առաջին համաշխարհային պատերազմի տարիներին այդ շարժումները նոր վերելք են ապրում:

1917 թվականի փետրվարյան հեղափոխությունից անմիջապես հետո Շուշի քաղաքում ստեղծվում է բանվորների, զինվորների ու գյուղացիների խորհուրդ: Այդ նույն թվականի ամռանը լայն չափեր են ընդունում աշխատավորների հուզումները, գործադուլները՝ ժամանակավոր կառավարության դեմ:

1917 թվականի օգոստոսից սկսում է հրատարակվել բոլշևիկյան «Նեցուկ» հայերեն լրագիրը: Հեղափոխական շարժումներն այստեղ լայն չափեր են ընդունում Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության ազդեցությամբ, հատկապես Բաքվում 1918 թվականին Ստեփան Շահումյանի գլխավորությամբ խորհրդային իշխանության հաստատումից հետո: Այդ օրերին Ղարաբաղի տարբեր վայրերում տեղի են ունենում հեղափոխական ժողովներ և գյուղերի զգալի մասում հաստատվում են խորհրդային կարգեր: Միևնույն ժամանակ Բաքվում 1918 թ. մայիսին ստեղծվում է մուսավաթական կառավարություն: Ադրբեջանի պատմության մեջ ստեղծված այդ առաջին պետությունը հենց առաջին օրերից վարում է խիստ ազգայնամոլական, հակահայկական քաղաքականություն՝ ձգտելով իր ազդեցությունը տարածել նաև Արցախ-Ղարաբաղի ամբողջ տարածքի վրա: Սակայն Ղարաբաղի հայությունը բոլոր ջանքերը գործադրում է իր անկախությունը պահպանելու համար՝ ստեղծելով իր սեփական կառավարման տեղական մարմինները: Հակահեղափոխական մուսավաթական տարրերի՝ ազգամիջյան կռիվներ հրահրելու քաղաքականության հետևանքով 1918 թ. գարնանը Ղարաբաղում իրադրությունը բար-

դանում է, սկսվում են հալածանքները հայերի նկատմամբ: Իսկ մի քանի ամիս հետո դրանց կանխամտածված քաղաքականության հետևանքով Ղարաբաղ են մտնում թուրքական զորքերը: Ղարաբաղի հայ աշխատավորությունը կազմակերպում է աշխարհազորային ջոկատներ, որոնք Ասկերանի մոտերքում ջախջախում են թուրքական մեծաթիվ զորքին: Սակայն մուսավաթականների աջակցությամբ թուրքերին հաջողվում է զավթել Շուշի քաղաքը, որը և նրանց կողմից բարբարոսաբար ավերվում ու կողոպտվում է: Ղարաբաղի կամավորների ջոկատները շարունակում են պայքարը իրենց երկրամասը թուրքական բռնակալներից ազատագրելու և խորհրդային կարգեր հաստատելու համար: Այդ պայքարի ընթացքում նրանք մի քանի ճակատամարտ են տալիս, որոնցից հանրահայտ է Մարտունու շրջանի Մսմնա գյուղի մոտ տեղի ունեցած մարտը: Այստեղ Ճարտար, Քերթ, Քարահունջ և շրջակա մյուս գյուղերի կամավորների միացյալ ուժերով ջախջախվում է թուրքական բանակի մի խոշոր ջոկատ, որի մնացորդները ետ են փախչում:

Շուտով թուրքերը ստիպված են լինում հեռանալ առհասարակ Անդրկովկասից: Իսկ դրանից հետո, 1918 թ. աշնանը Անդրկովկաս են մտնում անգլիական զորքերը: Մուսավաթականները անգլիացիների օգնությամբ դաժան հաշվեհարդար են տեսնում Բաքվի ու ամբողջ Ադրբեջանի բոլշևիկների հետ: Նորից դաժան ու բռնակալական վիճակ է ստեղծվում նաև Լեռնային Ղարաբաղում: Այդ ժամանակ անգլիացիները Շուշի քաղաքում ստեղծում են իրենց ռազմական ծառայության կենտրոնը: Անգլիական օկուպանտների ու մուսավաթական բանդաների կողոպտիչ քաղաքականության հետևանքով Ղարաբաղի գյուղերը տնտեսական ծանր դրության մեջ են ընկնում. սովը, հիվանդությունները ահավոր չափեր են ընդունում:

Սակայն Լեռնային Ղարաբաղի հայ աշխատավորությունը բոլշևիկների ղեկավարությամբ (Հակոբ Կամարի, Սաքո Համբարձումյան, Արմենակ Ղարագյոզյան, Շմավոն Դավթյան, Կոլյա Դանիելյան, Թադևոս Միրզաբեկյան և ուրիշներ) ակտիվորեն շարունակում է պայքարը խորհրդային կարգեր հաստատելու համար: Նրանք մեծ աշխատանք են ծավալում նաև մուսավաթականների կողմից հրահրվող ազգամիջյան ընդհարումները կանխելու համար: Հեղափոխական շարժումներն այստեղ լայն թափ են ստանում հատկապես 1920 թ. սկզբներին: Հենց այդ ամիսներին էլ հակահեղափոխական բանդաները (մուսավաթականները) կատարում են բազմաթիվ ոճրագործություններ: Նրանք բարբարոսաբար հրդեհում են Շուշի քաղաքի հայկական թաղամասերը, որի հետևանքով ոչ միայն ավերվում է այդ գեղատեսիլ քաղաքը, այլև զոհվում են տասնյակ հազարավոր հայեր: Քաղաքի հայ ազգաբնակչության կենդանի մնացած մասն էլ ստիպված է լինում հեռանալ այդտեղից: Մուսավաթականների այդպիսի ավերումներ և կոտորածներ են կազմակերպվում նաև Լեռնային Ղարաբաղի մյուս վայրերում:

Սակայն հեղափոխությունն արդեն հասունացել էր: 1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանում հաղթանակում է խորհրդային իշխանությունը: Դրա հետ կապված բոլշևիկների ղեկավարությամբ Ղարաբաղի բոլոր գյուղերում կազմակերպվում են հեղկոմներ, ստեղծվում են խորհրդային իշխանության մարմիններ:

Լեռնային Ղարաբաղում խորհրդային կարգերի հաստատման գործում վճռական դեր է խաղացել Ադրբեջանում գործող 11-րդ կարմիր բանակի զորամասերից մեկը, որը 1920 թ. մայիսի 12-ին մտել էր Շուշի:

Կարմիր բանակի ու տեղի աշխատավորական-կամավորական զինված ջոկատների համատեղ ջանքերով 1920 թվականի ամռան և աշնան ամիսներին վերջնականապես ջախջախվում են մուսավաթական հակահեղափոխական բանդաները, ճնշվում են նրանց կողմից կազմակերպած խռովությունները և դուրս շպրտվում Ղարաբաղից:

Լեռնային Ղարաբաղում մեծ մասշտաբի միջոցառումներ են սկսվում խորհրդային կարգերն ամրապնդելու, տնտեսությունը վերականգնելու, վերակառուցելու ուղղությամբ: Քանի որ 11-րդ կարմիր բանակը Ս. Կիրովի ու Ս. Օրջոնիկիձեի ղեկավարությամբ սկզբից մտնում է այժմյան Ադրբեջանի տարածքը ու այստեղից էլ Ղարաբաղ, ապա Ադրբեջանի հետ միասին խորհրդային կարգեր են ստեղծվում նաև Լեռնային Ղարաբաղում: Իսկ այդ ժամանակ բուն Հայաստանը դեռ չէր խորհրդայնացվել: Հենց այդ պատճառով էլ ստեղծվում են Ղարաբաղի վարչական ենթակայության հետ կապված վիճելի հարցերն ու բարդ իրավիճակը:

Ի դեպ, Վ. Ի. Լենինը և Կուսակցության Կենտկոմի Քաղբյուրոն գտնում էին, որ Ղարաբաղի վարչական ստատուսի հարցը պետք է լուծվի տեղի բնակչության կամքով: Սակայն այդ հարցը այդպես էլ մնում է չլուծված մինչև Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը:

Միայն Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո (1920 թ. նոյեմբերի 29) կուսակցական կենտրոնական և անդրկովկասյան մարմիններում Ղարաբաղի վարչատարածքային ենթակայության հարցը քննարկման առարկա է դառնում:

Կարևոր է նշել, որ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից անմիջապես հետո, 1920 թ. դեկտեմբերի 1-ին Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովը և արտաքին գործերի ժողկոմ Հուսեյնովը դեկլարացիա են հղում Հայաստանի հեղկոմին, որտեղ նշվում է, որ Ադրբեջանի բանվորա-գյուղացիական կառավարությունը ողջունում է եղբայրական հայ ժողովրդի հաղթանակը և, որ այսօրվանից Հայաստանի ու Ադրբեջանի միջև եղած նախկին սահմանները համարվում են վերացված: Նշվում է նաև, որ Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը համարվում են Հայաստանի Սո-

ցիալիստական Հանրապետության բաղկացուցիչ մասերը:

Ն. Նարիմանովի հղած դեկլարացիայի, ինչպես նաև ՌՍԴ(բ)Կ Կովկասյան բյուրոյի 1921 թ. հունիսի 3-ին տեղի ունեցած նիստի որոշման հիման վրա հռչակվում է Հայաստանի ժողկոմխորհի դեկրետն այն մասին, որ Լեռնային Ղարաբաղը հանդիսանում է Հայաստանի Սոցիալիստական Հանրապետության անբաժանելի մասը:

Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ այս կարևոր փաստաթղթերը ցնծությամբ է դիմավորում ամբողջ հայ ժողովուրդը: Դրանք ողջունել են նաև Վ. Ի. Լենինը, Ս. Օրջոնիկիձեն, Ս. Կիրովը, ինչպես նաև Ի. Ստալինն ու կուսակցական մյուս ղեկավար գործիչներ:

Սակայն շատ շուտով Ն. Նարիմանովը, Ի. Ստալինը և ուրիշներ փոխում են իրենց դիրքը և պահանջում, որ Լեռնային Ղարաբաղը մնա Ադրբեջանի կազմում: Այդ կապակցությամբ նորից է սկսվում Ղարաբաղի հարցի քննարկումը: Մասնավորապես 1921 թ. հուլիսի 4-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի նիստում ձայների մեծամասնությամբ որոշվում է Լեռնային Ղարաբաղը թողնել Խորհրդային Հայաստանի կազմում: Ի դեպ, այդ որոշման կողմն են քվեարկում Ս. Օրջոնիկիձեն, Ս. Կիրովը, Ալ. Մյասնիկյանը և Յու. Ֆիգատները: Սակայն Ն. Նարիմանովը բողոքում է այս որոշման դեմ: Այդ նույն օրը Թիֆլիս է ժամանում Ի. Ստալինը, որի պահանջով հուլիսի 5-ին նորից հրավիրվում է Կովկասյան բյուրոյի նիստ, որտեղ և առանց քննարկման ու քվեարկության, Ստալինի կամայականությամբ որոշվում է Լեռնային Ղարաբաղը մտցնել Ադրբեջանի կազմի մեջ: Այսպիսով, ժողովուրդների դահիճ Ստալինի կամայականությամբ և Ն. Նարիմանովի ահաբեկումներով պատմական Հայաստանի անբաժանելի մասերը՝ Ղարաբաղն ու Նախիջևանը, բռնի կերպով մտցվում են Ադրբեջանի կազմի մեջ: Սրանով ոտնահարվում են ազգերի ինքնորոշման լենինյան սկզբունքները:

Լեռնային Ղարաբաղը բռնի կերպով, տեղի՝ շուրջ 95 % կազմող հայ բնակչության կամքին հակառակ Ադրբեջանի կազմի մեջ մտցնելը (հայկական այդ երկրամասի առանձին հատվածներ վարչական առումով կտրված էին մեկը մյուսից) խիստ բացասական ազդեցություն է թողնում տնտեսական ու ազգային կյանքի զարգացման վրա և բողոքի ալիք բարձրացնում բնակչության մեջ: Այդ բողոքների արդյունքը եղավ այն, որ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի խորհուրդների կենտգործկոմի 1923 թ. հուլիսի 7-ի որոշմամբ հռչակվեց որպես ինքնավար մարզ:

Սակայն չգիտես ինչու այս մարզի անվան մեջ ազգային պատկանելությունը չի նշվում: ԽՍՀՄ կազմի մեջ մտնող ինքնավար 8 մարզերից 7-ի անվանումներում ընդգծվում է ազգային պատկանելությունը՝ (Հարավ-Օսեթական, Խակասական, Ադղեական, Կարաչայ-Չերքեզական, Հրեական, Լեռնային-Ալթայի,

Լեռնային Բադախշանի): Ի դեպ, այդպես է արված նաև Նախիջևանի Ինքնավար Հանրապետության հետ, որում չի զգացվում, թե որ ազգի համար է այն ստեղծված: Մինչդեռ ԽՍՀՄ կազմի մեջ մտնող 20 ինքնավար հանրապետություններից 19-ի անվանումներում նշվում է ազգային պատկանելությունը՝ Բաշկիրական, Թաթարական, Կարելական և այլն:

Այսպիսով, հայկական Արցախ-Ղարաբաղ աշխարհի տնօրինությունը սկսում են կամայական կերպով իրականացնել ադրբեջանցիները: Ահա թե ինչու հայկական այդ ինքնավար մարզի սահմանները որոշելիս նրանք կանխամտածված ձևով մարզի կազմի մեջ չեն մտցնում Արցախ-Ղարաբաղի լեռնային մասի զգալի հատվածը: Դուրս է թողնվում նույնիսկ Խամսայի մելիքություններից Գյուլիստանի մելիքության ամբողջ տարածքը՝ այժմյան Շահումյանի շրջանն ու Խանլարի շրջանի մեծ մասը, ինչպես նաև Դիզակի մելիքության զգալի մասը: Բացի դրանից, կանխամտածված կերպով Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի իրենց կազմած տարածքը արհեստականորեն, նեղ շերտով (ընդամենը 6 կմ լայնությամբ) կտրում են Հայկական ԽՍՀ-ի հետ ընդհանուր սահման ունենալու հնարավորությունից: Լեռնային Ղարաբաղի ու Հայկական ԽՍՀ-ի միջև եղած արցախյան հայկական տարածություններում ստեղծում են Լաչինի, Քյալբաջարի, Զանգելանի շրջանները, որտեղի հայ բնակչությունը տարբեր պատճառներով ստիպված է լինում հեռանալ:

Այսպիսով, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը, որն ընդգրկում է Արցախի տարածքի մի փոքր հատվածը, չորս կողմից շրջափակվում է Ադրբեջանի կազմի մեջ մտցված վարչական շրջաններով և մեկուսացվում Հայկական ԽՍՀ-ից: Ադրբեջանի կառավարող շրջանների կողմից տարվող մեկուսացման այդ քաղաքականության հետևանքով անցած յոթանասուն տարիների ընթացքում Լեռնային Ղարաբաղի հայությունը կտրված է եղել մայր հայրենիքից՝ Հայկական ԽՍՀ-ից: Այդ հանգամանքը խիստ բացասաբար է անդրադարձել Ղարաբաղի Հայկական մշակույթի, լեզվի զարգացման վրա: Բացառիկ անուշադրության են մատնվել այդ երկրամասի հայկական պատմաճարտարապետական հազարավոր հուշարձանները, որոնցից համարյա ոչ մեկը 70 տարվա ընթացքում չի վերանորոգվել: Իսկ դա այն դեպքում, երբ Ադրբեջանի ամբողջ տարածքում գտնվող բոլոր մզկիթները վերականգնվել և շքեղ զարդարվել են:

Արցախը պատմական Հայաստանի ինչպես գիտության, մշակույթի մյուս բոլոր բնագավառներում, այնպես էլ ճարտարապետության բնագավառում բացառիկ կարևոր տեղ է գրավում: Հայտնի է, որ Հայկական ԽՍՀ տարածքում պահպանվում են քարե չորս հազար պատմաճարտարապետական մեծարժեք հուշարձան: Իսկ միայն Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տարածքում այդպիսի հուշարձանների թիվը ոչ լրիվ տվյալներով անցնում է 2765-ից:

Դրանք բնութագրում են Արցախի հայ բնակչության հազարամյակների պատմություն ունեցող հոգևոր մշակույթը, տնտեսական գործունեության բնույթը:

Արցախի պատմաճարտարապետական հնագույն կոթողներից մեծ հետաքրքրություն ներկայացնողներից մեկը Ամարասի վանքն է: Այն Էջմիածնի վանքի հասակակիցն է, կառուցվել է 4-րդ դարի սկզբին Գրիգոր Լուսավորիչի կողմից: Ի դեպ, Ամարասում Մեսրոպ Մաշտոցը Հայկական գրերի տարածման համար կազմակերպել է Արցախի առաջին դպրոցը: Այսպիսով Ամարասը եղել է Հայաստանի արևելյան մասի հոգևոր ու մշակութային խոշոր կենտրոնը: Այն գտնվում է այժմյան Մարտունու շրջանի Մաճկալաշեն գյուղի մոտ: Ամարասում է գործել Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիս եպիսկոպոսը, որն էլ այդտեղ թաղված է: Վանքի շենքը կանգուն վիճակում է, սակայն արմատական վերակառուցման կարիք ունի: Կիսափլված կամ լրիվ փլված վիճակում են վանքի օժանդակ բոլոր շինությունները:

Հանրահայտ են Եղիշե առաքյալի և Հոռեկա վանքերը (V դար), Օխտը դռնի վանքը և Վաչագանի եկեղեցին (VI — VII դդ.), Դադիվանքը, Գտչավանքը, Հակոբավանքը, Մայրաբերդը (XII — XIII դդ.):

Սակայն Արցախի պատմաճարտարապետական հուշարձանների կանգուն *զարդը Գանձասարի վանքն է*, որը ռուս արվեստաբան Ա. Յակոբսոնը շատ դիպուկ կերպով անվանել է XIII դարի հայ ճարտարապետության հանրագիտարան:

Հայ քաջ իշխան Հասան Ջալալ Դոլայի կառուցած եկեղեցական այս անզուգական համալիրը խոշոր դեր է խաղացել Արցախի ու ամբողջ հայ ժողովրդի պատմության մեջ: Այն ոչ միայն Արցախ աշխարհի հոգևոր կենտրոնը, կաթողիկոսական աթոռատեղին է եղել, այլև մշակութային, ազգային ազատագրական շարժումների կազմակերպման կենտրոնն էր:

Լեռնային Ղարաբաղի հայ պատմաճարտարապետական անզուգական կոթողներով եզակի տեղ ունի Շուշի քաղաքը: Այստեղ նախկինում կար 7 եկեղեցի, որոնցից կանգուն են 2-ը: Դրանցից հանրահայտ «Կանաչ ժամը» վերափոխվել ու դարձել է հանքային ջրի ըմպասրահ, ըստ որում վերափոխումը շատ անհաջող է կատարվել: 1920 թվականից հետո բարբարոսաբար ավերվել է Շուշիի Ղազանչեցոց եկեղեցին: Վերջինս Վազգեն Առաջին կաթողիկոսի մեծ ջանքերով վերականգնվում է:

Լեռնային Ղարաբաղը բացի եկեղեցական շինություններից հարուստ է նաև հայկական հնագույն ճարտարապետության այլ կոթողներով, կամուրջներով, բերդերով, պարիսպներով, ապարանքներով, քարվանատներով, ձիթհանքերով, ջրաղացներով: Դրանք բոլորն էլ տիպիկ հայկական են, ինչը անհերքելի փաստերով ապացուցում են այդ կոթողների վրա եղած մեսրոպատառ արձանագրությունները, օտարազգի և հայ պատմիչների հավաստի աղբյուրները:

Սակայն Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը հնարավորություն չուներ լսելու և դիտելու հայերեն հեռուստահաղորդումները, դպրոցներում չէր դասավանդվում հայ ժողովրդի պատմություն, հազվադեպ երևույթ էին հայկական թեմաներով կինոնկարների ցուցադրումը և թատերական բեմականացումները: Մարզի բնակավայրերում սոցիալ-տնտեսական, մշակութային տարրական պայմանների բացակայության պատճառով հայ բնակչությունը, հատկապես երիտասարդությունը, ստիպված էր հեռանալ իր հայրենի երկրամասից: Այսինքն, կանխամտածված ձևով Լեռնային Ղարաբաղի հայկական ինքնավար մարզի նկատմամբ տարվում էր այն քաղաքականությունը, ինչ վիճակվել էր Նախիջևանի Ինքնավար Հանրապետությանը, որի երբեմնի կատարելապես հայաբնակ հայկական հողերում այժմ գրեթե հայ չկա:

Բնականաբար այսպիսի քաղաքականությունը չէր կարող դժգոհություն չառաջացնել բնակչության մեջ: Այդպիսի լայն մասշտաբի բողոքներ ու Հայկական ԽՍՀ-ին վերամիավորվելու պահանջներ են ներկայացվել 1950 — 1960-ական թվականներին: Սակայն դրանք առավել մեծ ընդգրկում ունեցան 1987 — 1988 թթ..

1985 թվականից հետո, մեր կուսակցության կողմից իրականացվող դեմոկրատացման, հրապարակայնության քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի բնակչությանը հնարավորություն ընձեռեց հանդես գալու իրենց ոտնահարված իրավունքները վերականգնելու, 1920—30-ական թվականներին թույլ տրված սխալները շտկելու պահանջով:

1987 թ. մարզի բոլոր գյուղերում, ձեռնարկություններում, կազմակերպություններում տեղի են ունեցել կոլեկտիվների ժողովներ, որոնց ընթացքում որոշումներ են կայացվել ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ի հետ վերամիավորելու վերաբերյալ:

Դրանց հիման վրա 1988 թ. սկզբներին մարզի շրջանների ժողովրդական դեպուտատների խորհուրդները որոշումներ են կայացրել ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից դուրս գալու և Հայկական ԽՍՀ-ին վերամիավորվելու վերաբերյալ:

Ընդառաջելով մարզի հայ բնակչության ցանկություններին՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական դեպուտատների խորհուրդը 1988 թ. փետրվարի 20-ին իր արտահերթ նստաշրջանում որոշում կայացրեց ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից դուրս գալու և Հայկական ԽՍՀ-ին վերամիավորվելու վերաբերյալ: Միաժամանակ որոշվեց դիմել ԽՍՀՄ Գերագույն խորհրդին այդ հարցը դրական լուծելու համար: Այդ որոշմամբ նստաշրջանը դիմեց Հայկ. ԽՍՀ Գերագույն խորհրդին՝ համաձայնություն տալու ԼՂԻՄ-ը Հայկ. ԽՍՀ-ին վերամիավորելու հարցին:

Դրանից հետո, սկսած փետրվարի 21-ից Հայաստանի ամբողջ աշխա-

տավորությունը, որը երբեք անտարբեր չի եղել իր անբաժանելի հատվածի՝ Ղարաբաղի հայության ճակատագրի նկատմամբ, միահամուռ կերպով պաշտպանում է հայկական այդ մարզի բնակչության օրինական պահանջը: Հանրապետության ձեռնարկություններում, ուսումնական հաստատություններում տեղի են ունենում կոլեկտիվների ժողովներ, իսկ Երևանում ու մյուս քաղաքներում նաև հզոր ցույցեր, միտինգներ ի պաշտպանություն Ղարաբաղի բնակչության արդար պահանջի:

Թե Լեռնային Ղարաբաղում և թե Հայկական ԽՍՀ-ում այդ նպատակով կազմակերպված ցույցերն ու միտինգներն իրականացվում էին լենինյան ազգային քաղաքականության, դեմոկրատիայի, հրապարակայնության կոմունիստական կոչերով, Վ. Ի. Լենինի, Մ. Ս. Գորբաչովի դիմանկարներով: Հանրապետության բոլոր շրջաններից և քաղաքներից ոտքով ցուցարարները հասնում էին Երևան իրենց համերաշխությունը հայտնելու Ղարաբաղին: Այդ օրերին Երևանի թատերական հրապարակը դարձել էր մեր կուսակցության արդի քաղաքականության, վերակառուցման պահանջների դրսևորման կենտրոնական վայր:

Երևանի թատերական հրապարկում տեղի ունեցած միտինգների ժամանակ ԼՂԻՄ-ի բնակչության արդարացի պահանջի ջերմ պաշտպանությամբ բազմիցս հանդես են եկել գիտության, մշակույթի ականավոր գործիչներ, բանվորներ, կոլտնտեսականներ, ուսանողներ:

1988 թ. փետրվարի 26-ին հրապարակվում է ԽՍՀՄ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովի դիմումը՝ ուղղված Ադրբեջանի ու Հայաստանի աշխատավորությանը, որը լիակատար ըմբռնումով ընկալվեց հայ ժողովրդի կողմից:

Երևանի աշխատավորությունը փետրվարի 27-ին տեղի ունեցած միտինգում որոշում է դադարեցնել գործադուլը, դուրս գալ աշխատանքի, աշխատել նաև հանգստյան օրերին՝ բաց թողնվածը լրացնելու համար: Ադրբեջանական կողմը այլ պատասխան տվեց: Այնտեղի ծայրահեղականներն ու ազգայնամոլները Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության՝ ինքնորոշման վերաբերյալ ընդունած սահմանադրական պահանջները դիմավորում են սվիններով՝ անթույլատրելի միջոցներով բռնություն են կիրառում Ադրբեջանում ապրող շուրջ 500 հազ. հայության նկատմամբ: Մասնավորապես 1988 թ. փետրվարի 27 — 29-ին հայ բնակչության նկատմամբ Սումգայիթ քաղաքում կազմակերպում են արյունոտ դատաստան ամենաանմարդկային ու բարբարոս ձևերով: Դրա հետևանքով զոհվում և վիրավորվում են բազմաթիվ հայեր: Հայ բնակչության մյուս մասն էլ թողնելով տուն-տեղ, ունեցվածք ու աշխատանք, մեծ դժվարությամբ հեռանում և ապաստան է փնտրում Հայկական ԽՍՀ-ում, Ստեփանակերտում, Հյուսիսային Կովկասում և այլուր: 20-րդ դարի վերջին կազ-

մակերպված հայ բնակչության այս նոր ցեղասպանությունը բողոքի հզոր ալիք առաջացրեց ինչպես մեզ մոտ, այնպես էլ ամբողջ աշխարհի հայության մեջ:

Խորհրդային Միության բոլոր ժողովուրդները խիստ կերպով դատապարտել են Սումգայիթի ոճրագործությունը: Սակայն Ադրբեջանի ղեկավարությունը և մասսայական ինֆորմացիայի աղբյուրները մինչև այժմ էլ չեն տվել սոցիալիստական իրավակարգի պայմաններում կատարված այդ ջարդարարության քաղաքական գնահատականը, ավելին, նրանք այդ գործողությունները որակում են որպես մի քանի խուլիգանների կողմից կազմակերպած անկարգություն:

Լեռնային Ղարաբաղում և առհասարակ Ադրբեջանի հայաբնակ վայրերում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ բնականաբար անտարբեր չի եղել արտասահմանի հայությունը: Լեռնային Ղարաբաղի հայության արդարացի պահանջի կապակցությամբ 1988 թ. փետրվար-մայիս ամիսներին բազմաթիվ միտինգներ ու ցույցեր են տեղի ունեցել Լոս-Անջելեսում, Նյու Յորքում, Վաշինգտոնում, Փարիզում, Մոնրեալում, Տորոնտոյում, Աթենքում, Բուենոս Այրեսում, Բեյրութում, Սիդնեյում և արտասահմանյան շատ այլ քաղաքներում: Ի դեպ, ինչպես Հայկական ԽՍՀ-ում և Ղարաբաղում, այնպես էլ արտասահմանյան նշված քաղաքներում ցույցերն արվել են «Հավատում ենք Գորբաչովին», «Հավատում ենք վերակառուցմանը» լոզունգներով, պահանջելով հրապարակայնության և դեմոկրատիայի պայմաններում Ղարաբաղի հարցում ստալինիզմի թույլ տված «սխալը» շտկել:

1988 թ. մարտի 17-ին տեղի ունեցավ կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզային կոմիտեի պլենումը, որը նույնպես որոշեց խնդրել ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյին, հաշվի առնելով մարզի հայ բնակչության արդարացի պահանջը, քննարկել և դրականորեն լուծել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու հարցը. դրանով իսկ շտկել Լեռնային Ղարաբաղի ստատուսի հարցում թույլ տրված պատմական սխալը[1]:

Ի դեպ, այդ օրերին ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովը, որը պաշտոնական այցով գտնվում էր Հարավսլավիայում, այնտեղ ժուռնալիստների հետ ունեցած զրույցում միանգամայն ճշմարտացի գնահատելով Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձությունները նշել է. «Նրանցից ոչ ոք չի դրել ոչ խորհրդային իշխանության, ոչ խորհրդային պետությունից դուրս գալու, ոչ էլ սոցիալիզմի հարցը, ոչ: Խոսքը գնացել է այն մասին, որ կան

[1] Տես «Սովետական Ղարաբաղ» օրաթերթ, 18 մարտի, 1988 թ.:

մշակութային, էթնիկական բնույթի հարցեր, որոնք վերջին ժամանակներում մնացել են տեսողությունից դուրս: Կուտակվել են պրոբլեմներ[1] »:

1988 թ. մարտի 24-ին ԽՄԿԿ Կենտկոմը և ԽՍՀՄ Մինիստրների Խորհուրդը հատուկ որոշում ընդունեցին՝ 1988 — 1995 թթ. Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սոցիալ-տնտեսական զարգացման միջոցառումների վերաբերյալ: Այս որոշումն, անկասկած, շատ մեծ կարևորություն ներկայացնող փաստաթուղթ է մարզի սոցիալ-տնտեսական վերելքի համար:

Սակայն Լեռնային Ղարաբաղի հայության ազգային և սոցիալական հարցերը հնարավոր էր լուծել մարզը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու ճանապարհով միայն:

1988 թ. հունիսի 15-ին տեղի ունեցավ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը, որը հատուկ քննարկեց և համաձայնություն տվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորվելու վերաբերյալ մարզային խորհրդի որոշմանը: Միաժամանակ հանրապետության Գերագույն խորհրդի նստաշրջանը դիմեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ քննարկել և դրականորեն լուծել այդ հարցը[2]:

1988 թ. հունիսի 21-ին Մարզի իշխանության բարձրագույն մարմինը, ելնելով մեր երկրի բոլոր ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի մասին լենինյան սկզբունքի հետևողական իրականացման անհրաժեշտությունից, մեկ անգամ ևս անմիջականորեն դիմեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ խնդրելով ամենայն ուշադրությամբ քննարկել ժողովրդական դեպուտատների մարզային խորհրդի 1988 թ. փետրվարի 20-ի նստաշրջանի որոշումը և դրականորեն լուծել հարցը[3]:

Նման մի որոշում ևս ընդունեց ժողովրդական դեպուտատների ԼՂԻՄ-ի խորհրդի XX գումարման VIII նստաշրջանը 1988 թ. հուլիսի 12-ին: Այստեղ որոշվեց նաև սահմանված կարգով միջնորդություն հարուցել մարզի անունը փոխելու, այն Արցախի Ինքնավար Մարզ անվանելու մասին:

1988 թ. հունիսի վերջերին տեղի ունեցած ԽՄԿԿ 19-րդ համամիութենական կոնֆերանսի բանաձևում արդարացիորեն նշվում է, որ անձի պաշտամունքի շրջանում ազգային քաղաքականության բնագավառում օրինականության խախտումների, իսկ հետագայում՝ լճացման գաղափարախոսության հետևանքով հաշվի չէին առնվում ինչպես առանձին հանրապետությունների ու ինքնավար կազմավորումների, այնպես էլ ազգային խմբերի սոցիալ-տնտեսական, մշակութային զարգացման պահանջները: Ազգերի ու ազգությունների

1 Տես Нагорный Карабах, АН Арм. ССР, Ереван, 1988, стр. 64.

2 «Коммунист», Ереван, 16 июня, 1988.

3 «Սովետական Ղարաբաղ», 24 հունիսի 1988 թ.:

զարգացման բուն ընթացքով առաջ քաշված ոչ քիչ սուր հարցերը լուծում չէին ստանում: Դա հասցնում էր հասարակական անբավարարվածության, որը երբեմն կոնֆլիկտային բնույթ էր ստանում:

ԽՄԿԿ լենինյան ազգային քաղաքականության պահանջներից մեկը ազգային անարդարության՝ սոցիալիստական համերաշխության ամրապնդման ճանապարհի ամենախոչոր խոչնդոտի դեմ վճռական և անհաշտ պայքարն է:

Այս բնագավառում վաղուց հասունացած խնդիրների շարքում հատուկ տեղ է գրավում Լեռնային Ղարաբաղի պրոբլեմը: Այդ պրոբլեմը սրվել և խորացվել է հետագա տասնամյակներում, երբ Ադրբեջանի նախկին ղեկավարության կանխամտածված գործողությունների հետևանքով հանրապետության քաղաքներում (Բաքվում, Կիրովաբադում, Շաքիում, Ղազախում և այլուր) և շրջաններում փակվում էին հայկական ուսումնական հաստատությունները, մշակույթի օջախները, ավերվում պատմական հուշարձանները, խեղաթյուրվում հայ ժողովրդի պատմությունը: Այս քաղաքականությունը իրականացվում էր ամբողջ Ադրբեջանում ապրող հայության, այդ թվում նաև՝ Լեռնային Ղարաբաղի նկատմամբ: Գոյատևման նպատակով հայերը հարկադրված թողնում էին իրենց նախնիների օջախը և ապաստան փնտրում ԽՍՀՄ տարբեր շրջաններում: Ազգային փոքրամասնության նկատմամբ նման քաղաքականությունը բնականաբար անհամատեղելի է լենինյան ազգային քաղաքականության սկզբունքներին: Այդ աղավաղումները հսկայական վնաս են հասցրել հայազգի բնակչության քաղաքական, բարոյական, սոցիալ-տնտեսական և հոգևոր կյանքին:

Հաշվի առնելով ստեղծված ծանր վիճակը, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը 1988 թ. հուլիսի 18-ին Ղարաբաղի հարցը դրեց հատուկ քննարկման, որին հրավիրվեցին Լեռնային Ղարաբաղի, Հայկական ԽՍՀ-ի ու Ադրբեջանական ԽՍՀ-ի ներկայացուցիչները: Հիմնավորվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու խիստ անհրաժեշտությունը: Սակայն, չնայած ստեղծված խիստ լարվածությանը, կուտակված պրոբլեմներին, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը դեռևս դրականորեն չլուծեց հարցը:

Լեռնային Ղարաբաղում ստեղծված դրությունը շտկելու և լուրջ թերությունները վերացնելու համար ԽՄԿԿ Կենտկոմի, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումներով խոշոր միջոցառումներ են նախատեսված Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տնտեսության, մշակույթի հետագա զարգացումն ապահովելու, աշխատավորների բարեկեցությունը բարձրացնելու, սոցիալիստական օրինականությունն ամրապնդելու և այլ բնագավառներում: Անհրաժեշտ նախադրյալներ են ստեղծված Հայկական ԽՍՀ-ի հետ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի կապերն

ընդլայնելու նպատակով: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը նպատակահարմար է համարում Լեռնային Ղարաբաղ ուղարկել իր ներկայացուցիչներին, որոնք Ադրբեջանական ԽՍՀ-ի և Հայկական ԽՍՀ-ի ներկայացուցիչների հետ սերտ համագործակցելով, կգործեն ընդունված որոշումների պարտադիր կատարումն ապահովելու համար:

Միաժամանակ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը նպատակահարմար համարեց Լեռնային Ղարաբաղի հետ կապված հարցերի ուսումնասիրությունը հանձնարարել Ազգությունների խորհրդի հատուկ ստեղծած հանձնաժողովին, որն իր առաջարկությունները պատրաստ լինելուն պես կներկայացնի ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության քննարկմանը: Նշվում է նաև, որ ազգամիջյան հարաբերությունների ծագող հարցերը պետք է լուծել ժամանակին, առավելագույնս հաշվի առնելով ինչպես յուրաքանչյուր ազգի և ազգության, այնպես էլ մեր ամբողջ սոցիալիստական հայրենիքի շահերը:

Քանի որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1988 թ. հուլիսի 18-ի որոշումից հետո էլ Լեռնային Ղարաբաղի ու նրա շուրջ տեղի ունեցած հարաբերությունները մնում էին լարված, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության ստեղծած հեղինակավոր հանձնաժողովի՝ Լեռնային Ղարաբաղում, Երևանում և Բաքվում կատարած ուսումնասիրությունների հիման վրա այն նորից է դրվում քննարկման: Նիստը, որին մասնակցում էին նաև Լեռնային Ղարաբաղի, Հայկական ԽՍՀ-ի և Ադրբեջանական ԽՍՀ-ի մեծ խումբ ներկայացուցիչներ, տեղի ունեցավ 1989 թ. հունվարի 11-ին:

Քննարկման արդյունքների հիման վրա, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը որոշեց.

ազգամիջյան հարաբերությունների շարունակվող լարվածությունը կանխելու, իրադրությունը կայունացնելու նպատակով Ադրբեջանական ԽՍՀ-ի և Հայկական ԽՍՀ-ի կուսակցական ու պետական մարմինների, ինչպես նաև Ազգությունների խորհրդի հանձնաժողովի առաջարկությունների համաձայն Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում ժամանակավորապես սահմանել կառավարման հատուկ ձև՝ պահպանելով Լեռնային Ղարաբաղի՝ որպես Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմում ինքնավար մարզի, ստատուսը: Կազմել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հատուկ կառավարման կոմիտե՝ Ա. Ի. Վոլսկու նախագահությամբ:

Դադարեցնել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական դեպուտատների խորհրդի լիազորությունները մինչև խորհրդի նոր կազմի ընտրությունների անցկացումը: Մարզգործկոմի բոլոր լիազորություններն անցնում են Ինքնավար Մարզի հատուկ կառավարման կոմիտեին, որը ենթարկվում է անմիջականորեն ԽՍՀ Միության պետական իշխանության և կառավարման բարձրագույն մարմիններին, լրիվ ծավալով օժտված է ինքնավար

մարզի ժողովրդական դեպուտատների խորհրդի և նրա գործադիր կոմիտեի լիազորություններով, իսկ Կոմիտեի նախագահը՝ ժողովրդական դեպուտատների մարզային խորհրդի գործադիր կոմիտեի նախագահի իրավունքներով ու պարտականություններով:

Սահմանել, որ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տարածքում գտնվող միութենական և հանրապետական ենթակայության ձեռնարկությունները, հիմնարկություններն ու կազմակերպությունները, ինչպես նաև նրանց մասնաճյուղերը, արտադրամասերն ու մյուս կառուցվածքային ստորաբաժանումները, սույն հրամանագրի գործողության ժամանակաշրջանում ենթարկվելու են Կոմիտեին:

Մամուլի, ռադիոյի և հեռուստատեսության, մասսայական ինֆորմացիայի մյուս միջոցների օրգանները, հրատարակչությունները, պոլիգրաֆիական ձեռնարկությունները, ներքին գործերի մարմինները, ինչպես նաև մշակույթի, ժողովրդական կրթության, առողջապահության հիմնարկություններն ու ոչ արտադրական ոլորտի մյուս կազմակերպությունները, անկախ իրենց ենթակայությունից ու գերատեսչական պատկանելությունից, իրենց գործունեությունը իրականացնում են կոմիտեի կամ նրա լիազորած անձանց անմիջական ղեկավարությամբ:

Լեռնային Ղարբաղի Ինքնավար Մարզի հատուկ կառավարման կոմիտեին իրավունք տալ.

անհրաժեշտության դեպքում պետական, տնտեսական և սոցիալ-կուլտուրական շինարարության հարցերի առթիվ առաջարկություններ ներկայացնել անմիջականորեն ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահություն, ԽՍՀՄ Մինիստրների խորհուրդ, ԽՍՀՄ Մինիստրություններ, պետական կոմիտեներ ու գերատեսչություններ:

Չնայած տերիտորիալ առումով Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը դեռևս մնում է Ադրբեջանի կազմում, սակայն այս որոշումը հնարավորություն է տալիս մարզին փաստորեն ինքնուրույն կերպով տնօրինել իր տնտեսության պլանավորումը, նյութատեխնիկական ապահովումը, կադրային ու մյուս հարցերի լուծումը:

Այս որոշմամբ համեմատաբար լայն հնարավորություններ է ստեղծվում նաև ընդլայնելու մարզի տնտեսական ու հատկապես կուլտուր-լուսավորական, արվեստի, կադրերի պատրաստման բնագավառների կապերը:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1989 թ. հունվարի 12-ի որոշումը խորհրդային իշխանության ամբողջ ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սոցիալ-տնտեսական զարգացման վերաբերյալ եզակի երևույթ է անկասկած:

Մինչև մարզի վարչաքաղաքական ենթակայության պրոբլեմի վերջնա-

կան լուծումը, այս որոշման կատարումը 1989 թ. հունվարի 20-ից սկսել է իրականացնել այստեղ ստեղծված հատուկ կառավարման Կոմիտեն:

Սակայն այդ ժամանակաշրջանի ընթացքում մարզի հայ բնակչությունը համոզվեց, որ հատուկ կառավարման ձև մտցնելու մասին որոշումը անկենսունակ է գտնվել: ԼՂԻՄ հատուկ կառավարման կոմիտեն իրավական անորոշ կարգավիճակով, զրկվել է բնակչության վստահությունից և ի վիճակի չէ կառավարել մարզը: Ինքնավար մարզում փաստորեն անօրեն կերպով դադարեցվել է ժողովրդական դեպուտատների մարզային խորհրդի և կուսակցության մարզային կոմիտեի գործունեությունը: Միևնույն ժամանակ հատուկ կառավարման կոմիտեն գործում էր միայն Ադրբեջանի ղեկավարության հետ ամեն ինչ համաձայնեցնելով, այսինքն փաստորեն ինքնավար մարզի նկատմամբ վարվում էր նախկին քաղաքականությունը: Այսպիսով, հատուկ կառավարման կոմիտեն, ինչպես նաև հատուկ շրջանի պարետը բարձիթող են արել մարզի հայ բնակչության բախտը, որից էլ օգտվելով Ադրբեջանի ղեկավարությունը շրջափակել է մարզը, կտրելով Հայաստանի հետ ունեցած նրա բոլոր կապերը: Դեռ ավելին, ադրբեջանցիները շրջափակել են նաև մարզի շրջանները, կտրելով դրանք մարզկենտրոնից ու մեկը մյուսից: Ճանապարհներին բարբարոսաբար քարկոծվում են հայկական բոլոր ավտոմեքենաները: Մարզում այդ պատճառով լարվածությունը գնալով սրվում է, ադրբեջանցիները բազմապատկում են վայրագությունները, զոհվում են անմեղ հայեր: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշմամբ ստեղծվել է նոր հատուկ հանձնաժողով՝ մարզի իրավիճակը ուսումնասիրելու համար: Նույնիսկ այդ հանձնաժողովի Լեռնային Ղարաբաղ ժամանելու նախօրյակին Շուշի քաղաքում ադրբեջանցիները ոչնչացրին Խորհրդային Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի, պետական ականավոր գործիչ Իվան Թևոսյանի, Բաքվի Կոմունայի երկու կոմիսարների՝ Ալեքսանդր Կոստանդյանի և Բաղդասար Ավագյանի հուշարձանները: Շուշիում անարգվում է հայ ճարտարապետության առավել խոշոր ու եզակի կոթողներից մեկը՝ Ղազանչեցոց եկեղեցին: Ադրբեջանի հեռուստատեսությամբ և մամուլում հաճախակի են դարձել մարզի հայ բնակչության հետ հաշվեհարդար տեսնելու բացահայտ ահաբեկումներն ու սպառնալիքները:

Այս անտանելի վիճակից դուրս գալու նպատակով մարզի աշխատավորությունը ստիպված էր 1989 թ. մայիսից սկսել գործադուլ, որը տևեց չորս ամիս: Ինքնավար մարզի հայ բնակչության համար այդ ծանր վիճակում, նրա բախտը տնօրինելու նպատակով՝ 1989 թ. օգոստոսի 16-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի բնակչության լիազոր ներկայացուցիչների համագումար:

Քանի որ իրավիճակը ԼՂԻՄ-ում ծայրահեղորեն բարդացել էր, իսկ իշխա-

նության կենտրոնական մարմինների կողմից այն համապատասխան գնահատականի և պատշաճ վերաբերմունքի չէր արժանանում, ապա մինչև ժողովրդական դեպուտատների մարզխորհրդի և կուսակցության մարզկոմի գործունեության վերականգնումը համագումարը արձանագրում է Ազգային խորհրդի՝ մարզային ինքնակառավարման ժողովրդական, ընտրովի մարմին ստեղծելու անհրաժեշտությունը:

Մարզում տիրող իրավիճակը բազմակողմանի քննարկելուց հետո բնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարը հենվելով ԽՍՀՄ սահմանադրության, համամիութենական 19-րդ կուսկոնֆերանսի և ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների համագումարի՝ հասարակության հետագա դեմոկրատացման և ժողովրդական պետության սկզբունքն ամրապնդելու հիմնադրույթների վրա, որոշում է.

1. Ելնելով բնակչության կամքից, ռեգիոնում դրությունը կայունացնելու նպատակով մինչև ժողովրդական դեպուտատների մարզխորհրդի և կուսակցության մարզկոմի գործունեության վերականգնումը, համագումարն ընտրում է Ազգային խորհուրդ և ժողովրդի անունից համագումարների միջև ընկած ժամանակամիջոցում նրան մարզի կառավարման բոլոր ոլորտներում տալիս է ղեկավար մարմնի դեր կատարելու լիազորություն:
2. Ազգային խորհուրդը, ընթացիկ աշխատանքը ղեկավարելու համար, իր կողմից ընտրում է նախագահություն:

   Ազգային խորհրդի և նրա նախագահության առաջնահերթ նպատակը իրավիճակի կայունացումն է, ազգամիջյան ընդհարումների կասեցումը, վերակառուցման ընթացքին ակտիվ աջակցումը, դեմոկրատիայի համակողմանի զարգացումը, Լեռնային Ղարաբաղի հարցի լուծումը:

   Ազգային խորհուրդն ու նրա նախագահությունը կոմունիստների և անկուսակցականների ժողովրդական միաձույլ մարմին են:
3. Համագումարը հայտարարում է ԼՂԻՄ-ը հետևողականորեն Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության հետ վերամիավորվելուն հասնելու իր վճռականության մասին:
4. Համագումարը խստագույն կերպով մերժում է մարզի ներքին գործերին Ադրբեջանի կառավարության կողմից միջամտություն ցույց տալու յուրաքանչյուր փորձ և ինքնավար մարզի հանդեպ անընդունելի է համարում թելադրանքի քաղաքականությունը:
5. Համագումարի պատգամավորները ողջունում են ժողովրդական դեպուտատների Շահումյանի (գյուղական) շրջխորհրդի նստաշրջանի՝ շրջանը ԼՂԻՄ-ի հետ վերամիավորելու մասին որոշումը և հավաստում են այդ հարցի լուծմանն աջակցելու պատրաստակամությունը (այդ լրիվ հայաբնակ շրջանը ընդգրկում է Արցախի նահանգի Գյուլիստանի մելիքության մեծ մասը,

որը Ադրբեջանի ազգայնամոլ ղեկավարությունը կանխակալ կերպով, հայկական այդ նահանգի միասնությունը ջլատելու նպատակով, այլ շրջանների հետ միասին 20-ական թվականներին անջատել է ԼՂԻՄ-ից: Ս. Մ.):

6. Համագումարը մարզի բնակչությանը կոչ է անում դադարեցնել գործադուլները և Ազգային խորհրդին պարտավորեցնում է անհրաժեշտ բոլոր միջոցները ձեռնարկել մարզի ամբողջ տարածքում աշխատանքային նորմալ ռիթմը վերականգնելու համար:
7. Համագումարը հանձնարարում է Ազգային խորհրդին՝ առաջադրված խնդիրների իրականացման համար մշակել համապատասխան ծրագիր:
8. Որպես պետական իշխանության խորհդանիշ, մարզի տերիտորիայում ընդունել ԽՍՀՄ պետական դրոշը:

Բացի դրանից, համագումարն ընդունել է դեկլարացիա, որում նշվում է նաև, որ մարզի տարածքում դադարեցվում է Ադրբեջանական ԽՍՀ սահմանադրության, ԼՂԻՄ-ի մասին Ադրբեջանական ԽՍՀ օրենքի և հանրապետական մյուս օրենքների գործողությունը: Նշվում է նաև, որ ինքնավար մարզի գործերին Ադրբեջանական ԽՍՀ-ի միջամտությունը գնահատվելու է որպես ագրեսիայի ակտ և կստանա համարժեք պատասխան: Համագումարը ԽՍՀՄ Գերագույն խորհրդին, Միութենական հանրապետությունների գերագույն խորհուրդներին է դիմում Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը որպես ԼՂԻՄ-ում միակ օրինական իշխանություն ճանաչելու, ինքնավար մարզի կառավարման՝ Ադրբեջանից անկախ սահմանադրական ձևերի շուտափույթ վերականգնման գործում օժանդակություն ցույց տալու խնդրանքով:

Դեկլարացիայում նշվում է նաև, որ համագումարն աշխարհի դեմոկրատական պետությունների կառավարություններին, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին է դիմում՝ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության ինքնորոշման և անկախության ձգտումներին օժանդակելու խնդրանքով:

Այսպիսով, Արցախ-Ղարաբաղի բնակչությունը ստեղծված ծանր կացությունում, մինչև ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների համագումարի կողմից մարզի քաղաքական-վարչական ենթակայության հարցի լուծումը, Ազգային խորհրդի ընտրությամբ փաստորեն որոշում է իր քաղաքական վիճակի միակ ճիշտ ու ժամանակավոր ուղին:

3. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը բաժանված է հինգ վարչական շրջանների՝ *Ասկերանի, Հադրութի, Մարտակերտի, Մարտունու, Շուշիի:*

Տարածքի տեսակետից ամենից ընդարձակը Մարտակերտի շրջանն է, որը զբաղեցնում է 1700 կմ² տարածություն: Այնուհետև հաջորդ տեղերը համապատասխանաբար զբաղեցնում են Ասկերանի (900 կմ²), Մարտունու (800 կմ²), Հադրութի (700 կմ²), Շուշիի (300 կմ²) շրջանները:

1988 թ. տվյալներով Լեռնային Ղարաբաղում հաշվվում էր 215 բնակավայր: Մարզն ունի չորս քաղաք և չորս քաղաքատիպ ավան: Քաղաքներն են՝ *Ստեփանակերտը, Շուշին, Մարտակերտը* և *Մարտունին:*

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ: Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի խոշոր քաղաքը և վարչական կենտրոնն է: Ունի շուրջ 60 հազ. բնակիչ (1988 թ.): Որպես քաղաքատիպ բնակավայր, հիմնվել է 1847 թ.: Իսկ մինչ այդ հին հայկական գյուղ էր՝ *Վարարակն* անվամբ: Հենց այս գյուղում 1840-ական թվականներին ստեղծվել է ռուսական բանակի զորակայան՝ ռազմական, վարչական, բնակելի շինություններով, որոնք էլ հիմք են հանդիսացել այժմյան քաղաքի ձևավորման համար: Որոշ ժամանակ այս բնակավայրը կոչվել է *Խանքենդ:* Լեռնային Ղարաբաղում Խորհրդային կարգեր հաստատվելուց և

Ստեփանակերտի կենտրոնական փողոցներից մեկը

երկրամասը ինքնավար մարզ հռչակվելուց հետո 1923 թ. հայ ժողովրդի մեծ զավակ, 26 կոմիսարների առաջնորդ Ստեփան Շահումյանի հիշատակը հավերժացնելու համար Ղարաբաղի հայության պահանջով այս բնակավայրն անվանվում է Ստեփանակերտ:

Մինչև 1978 թ. Ստեփանակերտը մարզային վարչական կենտրոն լինելուց բացի, նաև համանուն շրջանի կենտրոնն էր: 1978 թ-ից հետո Ստեփանակերտի շրջանը վերանվանվում է Ասկերանի շրջան, իսկ շրջանային կենտրոնն էլ դառնում է Ասկերան ավանը:

Ստեփանակերտը գտնվում է Ղարաբաղի լեռնաշղթայի արևելյան նախալեռնային մասի ոչ մեծ հարթության վրա, Կարկառ գետի ձախափնյա գեղատեսիլ մասում: Շրջապատված է անտառներով, այգիներով, ունի մեղմ կլիմայական պայմաններ. հունվարի միջին ջերմաստիճանը 0 — 5°C է, իսկ օգոստոսինը՝ + 23°C: Մթնոլորտային տեղումները տարեկան միջին հաշվով կազմում են 560 մմ:

Ստեփանակերտը ավտոճանապարհների խոշոր հանգույց է: Այստեղից դուրս են գալիս Ստեփանակերտ-Շուշի-Լաչին-Գորիս-Ջերմուկ-Երևան, Ստեփանակերտ-Աղդամ-Եվլախ-Բաքու, Ստեփանակերտ-Ննգի-Մարտունի, Ստեփանակերտ-Կարմիր Շուկա-Մարտունի ավտոխճուղիները: Ստեփանակերտը երկաթգծով կապված է Բաքու-Թբիլիսի երկաթուղային մայրուղու հետ: Ունի



Կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզկոմի շենքը

օդանավակայան և օդային գծերով կապված է Երևանի, Բաքվի, Կիրովաբադի և այլ քաղաքների հետ:

Ստեփանակերտը Լեռնային Ղարաբաղի արդյունաբերական խոշոր կենտրոն է: Այստեղ գործում են շուրջ 20 մեծ ու փոքր ձեռնարկություններ:

Արդյունաբերության ճյուղերից համախառն արտադրանքով առաջատարը թեթև արդյունաբերությունն է: Այս ճյուղի խոշորագույն ձեռնարկությունը 26 կոմիսարների անվան մետաքսի կոմբինատն է, որն իր մասնաճյուղերն ունի Քարին տակ, Խնձրիստան գյուղերում և Շուշի ու Մարտակերտ քաղաքներում: Գործում է մարզի կոլտնտեսություններում արտադրվող բոժոժի ու երկրի այլ շրջաններից ստացվող հումքի բազայի վրա, և բնական մետաքսաթելի ու գործվածքների արտադրությամբ երկրում խոշորագույններից մեկն է: Վերջին տվյալներով այս կոմբինատը տարեկան թողարկում է ավելի քան 15 մլն գծամետր մետաքսի գործվածք:

Ստեփանակերտի թեթև արդյունաբերության մյուս խոշոր ձեռնարկությունը կոշիկի ֆաբրիկան է, որը տարեկան թողարկում է 4,5 — 5 մլն զույգ կաշվե կոշիկ:

Նշանավոր են նաև գորգագործական կոմբինատն ու կարի ֆաբրիկան:

Մյուս ճյուղերի ձեռնարկություններից հիշարժան են էլեկտրատեխնիկական, կոնդենսատորների գործարաններն ու շինանյութերի կոմբինատը, ինչ-

«Ղարաբաղ» հյուրանոցի շենքը Ստեփանակերտում

պես նաև կահույքի ֆաբրիկան, կաթնամթերքների, մսի, հացաբուլկեղենի, հրուշակեղենի, խմիչքների արտադրության ձեռնարկությունները:

Ստեփանակերտը Լեռնային Ղարաբաղի մշակութային խոշոր կենտրոնն է: 1920-ական թվականներին այստեղ բացվել է գյուղատնտեսական տեխնիկում, իսկ 1940-ական թվականներին՝ երկամյա ուսուցչական ինստիտուտ, որը կարճ ժամանակից հետո փակվել է: 1970-ական թվականներին այստեղ բացվել է մանկավարժական ինստիտուտ՝ հայկական, ռուսական և ադրբեջանական բաժանմունքներով: Այժմ այն ունի հայկական և ռուսական բաժիններ: Կան նաև բժշկական, երաժշտական, գեղարվեստական ուսումնարաններ, ինչպես նաև հանրակրթական 11 դպրոց և 15 մանկապարտեզ: 1924 թ. բացվել է մարզի ամենախոշոր՝ Ստեփանակերտի Մ. Գորկու անվան գրադարանը: Բացի դրանից, մասսայական մի շարք գրադարաններ են գործում քաղաքի տարբեր մասերում: Մարզային կենտրոնի մշակութային օջախների շարքում իր կարևոր դերն ունի երկրագիտական թանգարանը, որտեղ ցուցադրված են Արցախ-Ղարաբաղ աշխարհի հնագույն հայկական տնտեսական, մշակութային կյանքին, պատմությանը վերաբերող ու մեծ հետաքրքրություն ներկայացնող բազմաթիվ ցուցանմուշներ:

Լեռնային Ղարաբաղի մշակութային կյանքում անգնահատելի դեր է խաղում Ստեփանակերտի Մ. Գորկու անվան պետական հայկական դրամատիկական թատրոնը (հիմնադրվել է 1932 թվականին): Ավելորդ չենք համարում նշել, որ նախկին ղեկավարության տարիներին հայկական մարզի միակ պետական դրամատիկական թատրոնի խաղացանկից գրեթե լրիվ հանվել էին հայ ժողովրդի պատմությանը, նրա կյանքին վերաբերող գործերի բեմադրությունները: Նույնիսկ թատրոնի ցուցանակից հանվել էր «հայկական» բառը: Այժմ Ստեփանակերտի հայկական դրամատիկական թատրոնը նոր վերելք է ապրում, ամուր կապեր է ստեղծել Երևանի թատերական օջախների հետ:

Քաղաքի ու ամբողջ մարզի կյանքում 1959 թվականից յուրահատուկ դեր է խաղում հայկական երգի ու պարի մարզային պետական անսամբլը, որը մեծ հաջողությամբ ելույթներ է ունեցել նաև Երևանում և Հայկական ԽՍՀ շատ այլ բնակավայրերում:

Ստեփանակերտում կան հիվանդանոցներ, պոլիկլինիկաներ, մանկական առողջարան, փոստ-հեռագրատուն, ավտոմատ միջքաղաքային հեռախոսակայան, կապի 6 բաժանմունք:

Այժմ Ստեփանակերտի ռադիոհանգույցը ամեն օր հայերեն լեզվով հաղորդումներ է տալիս քաղաքի ու մարզի բնակչության համար: 1960-ական թվականներից այստեղ ընդունվել են նաև հեռուստահաղորդումներ, բայց ցավոք մինչև վերջերս միայն ադրբեջաներեն և ռուսերեն լեզուներով: Ոչ միայն Ղարաբաղի հայկական բոլոր գյուղական բնակավայրերը, այլև մարզային

Ստեփանակերտի Մ. Գորկու անվան հայկական դրամատիկական թատրոնի շենքը

կենտրոն Ստեփանակերտը հնարավորություն չունեին դիտելու և լսելու հայկական հեռուստատեսության հաղորդումները: Ղարաբաղ-88-ի հայտնի դեպքերի հետ կապված, մարզի հայության միահամուռ պահանջով, 1988 թ. մայիսի սկզբից Ստեփանակերտը ոչ միայն ընդունում է հայկական հեռուստահաղորդումները, այլև հայ մասնագետների աջակցությամբ այստեղ արդեն կազմակերպվում են տեղական հեռուստահաղորդումներ:

Քաղաքն ունի մարզադաշտ, որտեղ «Արցախ» ֆուտբոլային թիմն անց է կացնում իր խաղերը:

Արցախի հայկական այս քաղաքի առաջին հատակագիծը կազմել է ճարտարապետ, ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանը 1926 թվականին: Հետագայում, քաղաքի զարգացման հետ կապված, երկու անգամ վերանայվել է նրա հատակագիծը: Մինչև 1980-ական թվականները Ստեփանակերտը կառուցապատվել է քարաշեն, հիմնականում 4 — 5 հարկանի շենքերով: Այժմ արդեն կառուցվում են նաև բազմահարկ բնակելի շենքեր: Հասարակական և բնակելի շենքերի զգալի մասը կառուցվում է հայկական վարդագույն (Արթիկի) տուֆից, ձևավորվում՝ հայկական կամարներով, խոյակներով, զարդանախշերով: Քաղաքի ծայրամասերում պահպանվում են զգալի թվով (հիմնականում՝ երկհարկանի) մասնավոր տներ: Քաղաքին առանձին շուք են տալիս գողտրիկ զբոսայգիներն ու պուրակները:

Ստեփանակերտը տարածվում է Կարկառի ափի սարալանջն ի վեր: Քաղաքին միացել ու այժմ նրա թաղամասերն են դարձել ոչ վաղ անցյալում առանձին բնակավայրեր հանդիսացող Արմենավան և Կրկժան գյուղերը:

Սումգայիթում տեղի ունեցած ոճրագործությունների հետ կապված՝ այդ քաղաքից, Բաքվից ու Ադրբեջանի մյուս հայաբնակ բնակավայրերից փախած 8,5 հազ. (1989 թ. սկզբի դրությամբ) հայեր հանգրվան են գտել Ստեփանակերտում: Քանի որ քաղաքի բնակելի ֆոնդը անբավարար է, սպասվում է բնակարանային շինարարության ընդլայնում: Բայց Ստեփանակերտի ընդարձակման հնարավորությունները տարածական առումով սուղ են: Եվ առհասարակ, ոչ մի առումով նպատակահարմար չէ Ստեփանակերտը ժամանակակից հասկացողությամբ խոշոր քաղաք դարձնելը: Նրա բնակչության թվի առավելագույն սահմանը հեռանկարում չպետք է անցնի 100 հազարից: Այլ վայրերից վերադարձող հայերին նպատակահարմար է բնակեցնել մարզի մյուս բնակավայրերում:

Ստեփանակերտի հրապարակներն ու փողոցները զարդարում են հայ և ռուս պետական գործիչների հուշարձաններն ու դիմաքանդակները:

Ստեփանակերտ մտնողների վրա անջնջելի տպավորություն է թողնում նրա մուտքի մոտ, բլրի վրա կանգնեցված «Մենք ենք, մեր սարերը» տուֆակերտ յուրատիպ քանդակը, որը բնութագրում է ղարաբաղցու հոգու վեհու-

Ստեփան Շահումյանի հուշարձանը Ստեփանակերտում

թյունը, նրա հավատարմությունն ու անսասանությունը (քանդակագործ՝ Ս. Բաղդասարյան):

Շուշի: Արցախի նախահեղափոխական ժամանակաշրջանի միակ քաղաքը և կուլտուր-լուսավորական, արհեստագործական, առևտրական խոշոր կենտրոնն է եղել: 1752 թվականից բերդ-ամրոց էր, իսկ 1840 թվականից՝ քաղաք: 1916 թ. Շուշին ուներ շուրջ 43,5 հազ. բնակիչ, որի գերակշիռ մասը հայեր էին: Այժմ Շուշիի բնակչությունը 13,5 հազ. մարդ է (1987 թ.): Այն գտնվում է Ղարաբաղի լեռնաշղթայի արևելյան նախալեռնային փոքր սարահարթի վրա: Քաղաքի բարձրությունը ծովի մակերևույթից շուրջ 1700 մ է:

Սարահարթը, որի վրա տեղադրված է Շուշին, երեք կողմից շրջափակված է խիստ զառիթափ, անդնդախոր, բայց անզուգական գեղեցկություն ունեցող կիրճով, որտեղով հոսում է երկրամասի կարևոր գետերից մեկը՝ Կարկառը:

Չնայած բարձր լեռնային դիրքին, այս քաղաքի կլիմայական պայմանները մեղմ են, հուլիսյան միջին ջերմաստիճանը կազմում է + 19°C, հունվարյանը՝ — 2°C: Գերակշռում են ամպամած, մառախլապատ օրերը: Սակայն մեղմ կլիմայի, լեռնային մաքուր օդի, անզուգական դիրքի, շրջապատի գեղեցկության ու հանքային ջրի շնորհիվ Շուշին առողջարանային, հանգստյան ու տուրիստական կարևոր կենտրոն է դարձել: Ինչպես նշվեց, Շուշին հիմնադրվել է 18-րդ դարի սկզբներին, որպես ամրոց: Երեք կողմից շրջափակված լինելով անդնդախոր կիրճով, մի կողմից էլ՝ ամրակուռ բարձր պարսպով՝



Կարկառ գետի կիրճը Շուշիի մոտ



Շուշի ամրոց-քաղաքի պարիսպը

Շուշին դարձել էր անմատչելի բերդ-ամրոց: Առաջին բերդապարիսպներն այստեղ սկսվել են կառուցվել 1724 թ.: Ի դեպ, մինչև այժմ էլ այդ պարիսպները հիմնականում պահպանվում են:

Թշնամիների հարձակումներից հատկապես մեծ վտանգի դեպքերում շրջակա գյուղերի հայությունը պաշտպանվում էր այս բերդ-ամրոցում: Որպես հենակետ խոշոր դեր է խաղացել թուրքական և պարսկական բռնակալների դեմ հայերի մղած պայքարի ժամանակ:

Թուրքական, պարսկական մեծաթիվ զորքերը բազմիցս հարձակվել, երկար ժամանակ պաշարել են Շուշին, սակայն այնտեղ ու նրա շրջակայքում պատսպարված հայերն արիաբար պաշտպանվել, ջարդել ու հետ են շպրտել թշնամիներին: Այդպիսի հերոսական պաշտպանություն Շուշին կատարել է 1795 թ.՝ արնախում պարսիկ Աղա-Մահմեդ Ղազարի և 1826 թ.՝ Աբբաս Միրզայի զորքերի դեմ:

Շուշին քաղաք է 1840 թվականից: Այդ ժամանակվանից սկսած այն արագ զարգացել ու դարձել է ոչ միայն Արցախի մշակութային, արհեստագործական խոշոր կենտրոնը, այլև Անդրկովկասի ամենաաշխույժ նշանավոր քաղաքներից մեկը:

Ղարաբաղը Ռուսաստանին միացվելուց հետո Շուշիում հիմնվել են մետաքսագործական, գորգագործական ֆաբրիկաներ, կոշկակարական, մետաղագործական, դարբնոցային, կարի արհեստանոցներ: Զարգացել են առևտրատնտեսական կապերը Ռուսաստանի և եվրոպական մյուս երկրների շատ քաղաքների հետ: Դրա հետ միասին Շուշիում ծավալվել է կուլտուր-լուսավորական գործը: 1820-ական թվականներից սկսած այստեղ բացվում են դպրոցներ, տպարան, հրատարակվում են թերթեր, գրքեր: Այդ տեսակետից հատկապես խոշոր դեր խաղացին Շուշիում 1838 թ. բացված թեմական և 1881 թ. բացված ռեալական դպրոցները: Ընդհանուր առմամբ մինչև հեղափոխությունն այս քաղաքում գործել է տարբեր տիպի 12 դպրոց: Սակայն դրանցից հայ ժողովրդի հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքում անգնահատելի դեր է խաղացել թեմական դպրոցը: Ի դեպ, հիմնականում ձեռք բերելով աշխարհիկ բովանդակություն, նա եղել է թեմի միակ ազգային միջնակարգ դպրոցը, որտեղ բեղմնավոր աշխատանքներ են կատարել ականավոր մանկավարժներ, գրողներ, հասարակական գործիչներ: Մասնավորապես անգնահատելի են եղել Պետրոս Շանշյանի, Պերճ Պռոշյանի, Խորեն Ստեփանյանի ու մյուսների աշխատանքները: Անուրանալի է ղարաբաղցի խիզախ կանանցից մեկի՝ Մարիամ Հախումյանի ծառայությունը, որը Շանշյանի ու Պռոշյանի հետ միասին մեծ դեր է խաղացել Շուշու Ս. Մարիամյան օրիորդաց դպրոցի բացման գործում:

Պ. Պռոշյանից բացի, Շուշիում տարբեր ժամանակներում մանկավար-



Շուշիի Ղազանչեցոց Ամենափրկիչ եկեղեցին

ժությամբ են զբաղվել Հր. Աճառյանը, Ղ. Աղայանը, Վ. Փափազյանը, Լեոն և հայ մշակույթի այլ խոշոր դեմքեր:

Շուշիում հիմնադրված տպարաններում տպագրվում էին հայ և այլազգի գրողների գրքեր, ինչպես նաև մեկ տասնյակից ավելի թերթեր ու հանդեսներ: Մասնավորապես, այստեղ լույս էին տեսնում «Հայկական աշխարհ», «Ծիածան», «Փայլակ», «Ղարաբաղ», «Քնար խոսնակ» ամսագրերը, «Նեցուկ» թերթը և այլ հանդեսներ ու լրագրեր: Կարևոր է հիշատակել, որ Րաֆֆու, Պ. Պռոշյանի, Ղ. Աղայանի, Լեոյի և մյուսների շատ գրքեր առաջին անգամ տպագրվել են Շուշիում: Առհասարակ նախահեղափոխական շրջանում Շուշին հայ մշակութային կյանքի ծաղկման տեսակետից Անդրկովկասում նշանավոր դեր է խաղացել:

1860-ական թվականներից այստեղ արագորեն զարգանում է նաև թատերական ու երաժշտական արվեստը: Կազմակերպվում են թատերախմբեր: Հատկապես նշանավոր էր «Խանդամիրյան թատրոնը»: Շուշիի թատերախմբերում տարբեր ժամանակներում հանդես են եկել Գ. Չմշկյանը, Պ. Ադամյանը, Հ. Աբելյանը, Հ. Զարիֆյանը, Սիրանույշը, Օ. Գուլազյանը և հայ բեմի մյուս նշանավոր գործիչները:

Շուշին հանրահայտ է եղել նաև ժողովրդական երաժշտության զարգացման գործում:

1911 թվականին թեմական և հայկական օրիորդաց (սուրբ Մարիամի) դպրոցների սաներից նշանավոր կոմպոզիտոր Ստեփան Դեմուրյանը կազմակերպել է 60 հոգուց բաղկացած քառաձայն երգեցիկ խումբ: Հայ երաժշտական կյանքում այդ ժամանակ եզակի երևույթ հանդիսացող այս խումբը շատ կարևոր դեր է խաղացել ու հիացմունք պատճառել ամբողջ Արցախում: Շուշիում տարբեր ժամանակներում ելույթ են ունեցել Կոմիտասը, Կարա Մուրզան և շատ ուրիշ նշանավոր երաժշտագետներ:

Դպրոցական, տպագրական գործի, արվեստի, արհեստագործության, առևտրի զարգացումը կարևոր դեր է խաղացել Շուշի քաղաքի լայն ճանաչման գործում, որը սերտ կապերի մեջ է եղել ժամանակի խոշոր քաղաքների հետ: Այդպիսի կապեր ունեցել է ոչ միայն Թիֆլիսի, Բաքվի, Կիևի, Մոսկվայի, Պետերբուրգի, Օդեսայի, այլև Բեռլինի, Փարիզի, Ցյուրիխի, Լոնդոնի, Վարշավայի ու եվրոպական ուրիշ քաղաքների հետ, որտեղ կրթություն են ստացել արցախցի շատ երիտասարդներ:

Պատահական չէ, որ Շուշին տվել է մշակույթի, գիտության, արվեստի բոլոր բնագավառների խոշոր գործիչներ, պրոֆեսիոնալ հեղափոխականներ: Շուշիում է ծնվել կուսակցական, պետական ականավոր գործիչ ԽՍՀՄ սև մետալուրգիայի ժողկոմ, հետագայում ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ, այնուհետև Ճապոնիայում ԽՍՀՄ արտակարգ ու լիազոր դես-



Տեսարան Շուշի քաղաքից

պան *Իվան Թևոսյանը:* Հայ ժողովրդի այս մեծ զավակի՝ սոցիալիստական աշխատանքի հերոս Ի. Թևոսյանի կիսանդրին կանգնեցված էր իր հայրենի Շուշի քաղաքում: Այստեղ են ծնվել նաև Վ. Ի. Լենինի հավատարիմ զինակից, պրոֆեսիոնալ հեղափոխական, դիվանագետ Ալեքսանդր Բեկզադյանը, ականավոր հեղափոխականներ, կուսակցական-պետական գործիչներ Սարգիս Կասյանը, Սահակ Տեր-Գաբրիելյանը, Աշոտ Հովհաննիսյանը, Հայկ Գյուլիքևխյանը, արվեստի գործիչներ Ա. Մելիք-Փաշայանը (որը երկար տարիներ եղել է ԽՍՀՄ մեծ թատրոնի գլխավոր դիրիժորը), Դ. Ղազարյանը, Ա. Ալեքսանդրյանը և շատ ուրիշներ: Շուշին տվել է նաև ականավոր շատ հայագետներ, գրողներ, որոնցից հանրահայտ են *Մուրացանը* և *Լեոն:* Այստեղ է ծնվել նաև Խորհրդային Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանը, որի կիսանդրին կանգնեցված էր քաղաքի մուտքի մոտ:

Ճարտարապետական առումով Շուշին մեծ հետաքրքրություն ներկայացնող և հիմնականում հայաբնակ քաղաք է եղել մինչև 1920 թվականի ողբերգությունը՝ հայերի զանգվածային կոտորածը: Քաղաքի հայաբնակ թաղամասերը զբաղեցնում էին նրա բարձրադիր մասը և կոչվում էին Ղազանչեցոց, Մեղրեցոց, Ագուլեցոց և այլ թաղամասեր: Հայկական թաղամասերը կառուցապատված էին բնակելի ու հասարակական ճարտարապետական հետաքրքրքիր շենքերով, ունեցել են իրենց կենտրոնները, դպրոցները, ակումբ-գրադարանները, խանութները, հյուրանոցներն ու եկեղեցիները:

Ճարտարապետական տեսանկյունից մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ղազանչեցոց Ամենափրկիչ մայր տաճարը, որը 1920 թ. մուսավաթականները բարբարոսաբար ավերել են: Վերջին տարիներին Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի նախաձեռնությամբ, Երևանից գործուղված հայ քարագործ վարպետները սկսել են վերակառուցել հայկական ճարտարապետական այդ գլուխգործոցներից մեկը: Այդ գործը 1988 թ. պետք է ավարտվեր, սակայն Շուշիում ստեղծված հայտնի իրադարձությունների պատճառով ձգձգվում է:

Կարևոր ճարտարապետական կոթողներ էին նաև «Կանաչ ժամ», Ագուլեցոց Ս. Աստվածածին, Մեղրեցոց Ս. Աստվածածին եկեղեցիների, «Խանդամիրյան թատրոնի», թեմական դպրոցի ու շատ այլ քարակերտ շենքերը: Դրանցից այժմ հիմնականում պահպանվել է «Կանաչ ժամ» եկեղեցու շենքը, սակայն այն ոչ հայկական ոճով ձևափոխվել և դարձել է հանքային ջրի ըմպասրահ:

Ինչպես նշվել է, 1920 թ. թուրքական բանդաները, մուսավաթականները բարբարոսաբար հրդեհել ու ավերել են այս գեղատեսիլ քաղաքի հայկական թաղամասերը, ճարտարապետական կոթողները, ամենագազանային ձևերով սպանել են տասնյակ հազար հայերի: Իսկ մազապուրծ եղած փոքր թվով

հայերն էլ թողել հեռացել են: Հայկական թաղամասերի ավերակները մնում էին մինչև 1960-ական թվականները: Հետագայում դրանց տեղը կառուցվել են բազմահարկ բնակելի շենքեր, առողջարանային և հանգստյան տներ ու նպատակային ձևով բնակեցվել ադրբեջանցիներով: Շուշին Լեռնային Ղարաբաղի առողջարանային, հանգստյան, տուրիստական գլխավոր կենտրոնն է և միաժամանակ Շուշիի շրջանի վարչական կենտրոնը: Քաղաքին արտաքին շուք են տալիս հայկական ճարտարապետական պահպանված հուշարձանները: Շուշին գտնվում է Ստեփանակերտից 11 կմ հեռավորության վրա: Ավտոխճուղիներով կապված է Ստեփանակերտի, մյուս կողմից Լաչինով՝ Գորիսի, Ջերմուկի հետ, իսկ Աղդամով՝ Եվլախի ու Բաքվի հետ:

Շուշիում գործում են տեղարդ կոմբինատ, գորգագործական, արևելյան երաժշտական գործիքների ֆաբրիկաներ, Ստեփանակերտի մետաքսի կոմբինատի մասնաճյուղ: Ունի մանկավարժական և երաժշտական ուսումնարաններ, երաժշտական դպրոց, կուլտուրայի պալատ, կինոթատրոններ, կապի հանգույց, հիվանդանոց, պատմության թանգարան: Շուշի քաղաքի արևմտյան մասի սարահարթի պռնկից անջնջելի գեղեցիկ տեսարան է բացվում դեպի Կարկառ գետի անդնդախոր կիրճն ու մոտակա անտառածածկ լեռները: Քաղաքի հյուսիսային մասում է հայտնի Իսայու հանրահայտ աղբյուրը, որը գեղատեսիլ անտառի մեջ է և որը եղել է շուշեցի հայերի հանգստավայրը: Այստեղ կա նաև հանքային ջրի աղբյուր, որի ջուրը հասցված է Շուշի և օգտագործվում է բուժիչ նպատակներով: Այստեղ պահպանվող հայկական ճարտարապետական շինությունների հետ միասին, քաղաքի երբեմնի հայ կյանքի մասին շատ կարևոր պատկերացում են տալիս հայկական գերեզմանոցի խաչաղարդ, մեսրոպատառ բազմաթիվ հետաքրքիր հուշարձանները: Ի դեպ, վերջիններիս զգալի մասը տեղի ադրբեջանցիների կողմից չարամտորեն ոչնչացվել, իսկ մի մասն էլ օգտագործվել է որպես շինանյութ:

ԽՄԿԿ Կենտկոմի, ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի ու ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1988 թ. Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սոցիալ-տնտեսական զարգացման վերաբերյալ ընդունած որոշումները ռեալ հնարավորություններ են ստեղծել Շուշի քաղաքի հայկական պատմաճարտարապետական պահպանված բոլոր կոթողների, հուշարձանների վերակառուցման և դրանց հարատևության համար:

1985 թվականից քաղաքային ստատուս է տրված նաև *Մարտակերտին* և *Մարտունուն:*

Մարտակերտի բնակչությունը կազմում է ավելի քան 8,5 հազ. մարդ (1987 թ.): Նույնանուն շրջանի վարչական կենտրոնն է:

Մարտունու բնակչությունը շուրջ 6,5 հազ. մարդ է (1987 թ.): Նույնանուն շրջանի վարչական կենտրոնն է:

Մարգում կա նաև չորս քաղաքատիպ ավան: Բնակչության թվի տեսակետից խոշորը Մարտակերտի շրջանի *Լենինավան* բնակավայրն է, որը նախկինում կոչվում էր Մարգուշավան: Լենինավանի բնակչությունը 4,7 հազ. մարդ է (1987 թ.):

Մյուսը *Հադրութ* ավանն է, որը նույնանուն շրջանի վարչական կենտրոնն է: Հադրութի բնակչությունը շուրջ 2,5 հազ. մարդ է (1987 թ.):

Ասկերան ավանի բնակչությունը շուրջ 2 հազ. մարդ է (1987 թ.), նա համանուն շրջանի վարչական կենտրոնն է:

Հաջորդը *Կարմիր Շուկա* ավանն է, որը գտնվում է Մարտունու շրջանում: Այս ավանը ստեղծվել է 1920-ական թվականներին բոլորովին ամայի վայրում, բնակչությունը ընդամենը 1100 մարդ է:

Բնակավայրերի թվի տեսակետից առաջին տեղը պատկանում է Մարտակերտի շրջանին, որտեղ այն հասնում է 61-ի: 1987 թվականի տվյալներով Մարտակերտի շրջանի բնակավայրերն ընդգրկված են 24 գյուղական և մեկ ավանային խորհուրդների մեջ:

Այդ ցուցանիշի տեսակետից մարզում հաջորդը Ասկերանի շրջանն է, որտեղ կա 51 բնակավայր: Ասկերանի շրջանի բնակավայրերը միավորված են 16 գյուղական և մեկ ավանային խորհուրդներում:

Հադրութի շրջանում կա 42 բնակավայր, որոնք միավորված են 13 գյուղական և մեկ ավանային խորհուրդներում:

Մարտունու շրջանում բնակավայրերի թիվը հասնում է 40-ի, որոնք միավորված են 19 գյուղական և մեկ ավանային խորհուրդներում:

Շուշիի շրջանում կա 27 գյուղական բնակավայր, որոնք միավորված են 7 գյուղխորհուրդներում:

Լեռնային Ղարաբաղի գյուղական բնակավայրերից տների քանակով և բնակչությամբ խոշորագույնը *Ձարտար* գյուղն է: Հաջորդը *Չապլուն* է, *Հաթերքը*, *Թալիշը* և այլն:

4. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ՆՇԱՆԱՎՈՐ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ, ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես պերճախոս կերպով վկայում են պատմական, ճարտարապետական, հնագիտական, աշխարհագրական, երկրագործական հարուստ ու բազմազան տվյալները, իրեղեն ապացույցները և գրավոր փաստերը, պատմական Հայաստանի Արցախ-Ղարաբաղ ընդարձակ նահանգի տարածքը անհիշելի ժամանակներից ամբողջապես հայաբնակ է եղել: Խոսելով Ղարաբաղի բնակչության մասին, Լեոն իր «Հայոց պատմություն» աշխատության մեջ գրում է. «Լեռնաստանը միշտ անաղարտ է պահել ազգագրական կերպարանքը: Այստեղ միշտ ապրում էր հոծ և միապաղաղ հայ ազգաբնակչություն, որ բնիկ էր, չուներ բոլորովին կամ շատ քիչ ուներ իր մեջ եկվոր այլատարրություն: Մի ժողովուրդ, որ անհիշելի ժամանակներից կառչում է իր հողին ու բնությանը, նրանց աշխատակցությամբ իր համար բնավորություն և խառնվածք է մշակում, իր ինքնուրույն հոգեբանությունն է ուժեղացնում և տիրական դարձնում»[1]:

Հետագայում, թաթար-մոնղոլների երկարատև արշավանքներից հետո, Արցախ-Ղարաբաղ նահանգի արևելյան տափաստանային որոշ հատվածներում բնակություն են հաստատել քոչվոր անասնապահ թաթարներ: Վերջիններիս բնակության հաստատման վայրը հիմնականում Կուր-Արաքսյան դաշտավայրի չոր տափաստանային հատվածն է, որը հարմար էր որպես ձմեռային արոտավայր ոչխարաբուծության համար:

Այժմյան Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը, ինչպես ամբողջ Արցախը, իր կազմավորման սկզբից էլ (ինչպես նշվել է) ամբողջապես հայաբնակ է եղել: Թաթար-մոնղոլների, պարսիկների, արաբների, թուրքերի պարբերաբար կրկնվող ավերիչ հարձակումների հետևանքով նախախորհրդային ժամանակաշրջանում ինչպես ամբողջ Արցախի, այնպես էլ այժմյան Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի բնակչության տեղաբաշխման մեջ զգալի տեղաշարժեր են կատարվել, բազմիցս ավերվել են բնակավայրերը, կառուցվել են նորերը: Հատկապես հարթավայրային մասերում բնակավայրերի հետ միասին ավերվել ու ոչնչացվել են նյութական, ճարտարապետական մշակութային հազարավոր հուշարձաններ: Այդ հարձակումների հետևանքով բնակչության մեծ մասը. հարթավայրային մասերից տեղաշարժվել է դեպի նախալեռնային ու լեռնային համեմատաբար դժվարամատչելի տեղերը և անտառները: Այս վայրերում էլ ղարաբաղցիները նորից են հիմնել բնակավայրեր, կառուցել ամրոցներ, եկեղեցիներ:

[1] Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք երկրորդ, էջ 12, Երևան, 1973:

Ղարաբաղի բնակլիմայական պայմաններն այնպիսին են, որ նախկինում անբարենպաստ բնական այս կամ այն պայմանից խիստ տուժում էր բնակչությունը: Մասնավորապես, ժամանակ առ ժամանակ դաշտերն ու այգիները ուժեղ կարկտահարվում էին, երաշտից էին տուժում կամ մկներն ու մորեխներն էին ուտում հացահատիկի արտերը:

Տարբեր պատճառներով նախկինում այստեղի բնակչության որոշ մասն արտագաղթել է Իրան, Մերձավոր Արևելքի տարբեր երկրներ, Միջին Ասիա, Հյուսիսային Կովկաս, Մոսկվա, Պետերբուրգ և Ռուսաստանի այլ վայրեր: Մեծ թվով ղարաբաղցիներ վաղուց բնակություն են հաստատել Բաքվում, Թիֆլիսիում և Անդրկովկասի մյուս քաղաքներում: Միաժամանակ տարբեր վայրերից զգալի թվով հայեր են ներգաղթել և մշտական բնակություն հաստատել այստեղ: Մասնավորապես դրանք ներգաղթել են Պարսկաստանի տարբեր բնակավայրերից (հատկապես Մարաղայից, Ղարադաղից, Խոյից), Զանգեզուրից, Միլի տափաստանի հայաբնակ գյուղերից: Այս մեխանիկական տեղաշարժերի հետևանքով բնականաբար Ղարաբաղի բնակչությունը քանակական փոփոխման է ենթարկվել: Նախկինում շատ քիչ, բայց նկատելի փոխվել է նաև ազգային կազմը: 18—19-րդ դարերում Միլի տափաստանից տեղափոխվել և Շուշի քաղաքում բնակեցվել են թաթարներ, ներկայիս Մարտակերտի ու Մարտունու շրջանում բնակեցվել են Ռուսաստանից աքսորված ռուս աղանդավորներ, իսկ Մարտակերտի Մեհմանա գյուղում մշտական բնակություն են հաստատել հույներ, որոնք հնուց հրավիրվել են այստեղ որպես հանքարդյունահանման մասնագետներ:

1921 թվականի տվյալներով, մարզի այժմյան տարածքի բնակչության 94,4 %-ը եղել են հայերը, մնացած 5,6 %-ը՝ մյուս ազգությունները[1]:

Մինչև 70-ական թվականների վերջերը մարզի հայ բնակչության թիվը ոչ միայն չի աճել, այլ նվազել է: Եթե նախախորհրդային ժամանակաշրջանում Ղարաբաղի բնակչության զգալի մասը (հատկապես աշխատունակ ընտանիքավոր երիտասարդ տղամարդիկ) մեկնում էր հեռավոր վայրեր աշխատանքի, նյութական միջոցներ հայթայթելու նպատակով, ապա խորհրդային իշխանության տարիներին մարզից մեկնում էր հիմնականում չամուսնացած երիտասարդությունը՝ սոցիալ-տնտեսական տարրական պայմաններ չունենալու պատճառով: Երևանում, Բաքվում, Մոսկվայում, Կիևում և մյուս քաղաքների ուսումնական հաստատություններում կրթություն ստանալուց հետո, հատկապես տեխնիկական, տնտեսագիտական մասնագիտություն ստացածները հայրենի մարզում աշխատանքի տեղեր չլինելու պատճառով չէին վերադառնում: Վիճակը աննշան չափով փոխվեց 1970-ական թվականներից հետո, երբ Ստեփանակերտում կառուցվեցին արդյունաբերական որոշ ձեռնարկություններ, գյուղատնտեսության մեջ համեմատաբար նկատելի չափով ընդգրկվեցին բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթությամբ մասնագետներ: Սակայն մարզում աշխատունակ բնակչության, հատկապես 18 — 40 տարեկան երիտասարդների արտահոսքը մինչև վերջերս էլ շարունակվում էր, պատճառը համապատասխան ուսումնական հաստատություններ և աշխատանքի բնագավառներ, կուլտուր-կենցաղային և տրանսպորտային պայմաններ չունենալն էր:

[1] Нагорный Карабах за годы Советской власти, Степанакерт, 1968, стр. 7.

Թե ինչպես է փոխվել խորհրդային իշխանության տարիներին մարզի բնակչության թվային կազմը, երևում է ստորև զետեղված № 1 աղյուսակից:

Աղյուսակ 1

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի բնակչության շարժը

Տարիները	Բնակչության թիվը (հազ. մարդ)
1921 թ. մարդահամար	131,5
1926 թ. մարդահամար	125,3
1939 թ. մարդահամար	150,8
1959 թ. մարդահամար	130,4
1970 թ. մարդահամար	150,3
1975 թ. գնահատական	155,0
1979 թ. մարդահամար	162,2
1987 թ. գնահատական	180,2
1989 թ. մարդահամար	188,0

Ինչպես երևում է աղյուսակից, 1939 — 1970 թվականներին մարզի բնակչությունը չի աճել: Դա բացատրվում է Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում մեծ թվով ղարաբաղցիների զոհվելու և մարզում սոցիալ-տնտեսական տարրական պայմանների բացակայության պատճառով, որի հետևանքով երիտասարդությունը հեռանում էր իր բնօրրանից:

Ի դեպ, այդ ժամանակաշրջանում մարզի բնակչության բնական աճը վական բարձր է եղել: Այսպես, 1955 թ. հազար մարդուն ընկնող բնական աճը կազմել է 25,1, 1956 թ.՝ 28,8, 1957 թ.՝ 29,8, իսկ 1959 և 1961 թվականներին՝ 32 մարդ[1]: Այս ցուցանիշները Խորհրդային Միության չափանիշով առա-

[1] Տես Достижения Советского Нагорного Карабаха за 40 лет в цифрах, стат. сборник, Степанакерт, 1963 г., стр. 39.

վել բարձրությից էին: Չնայած դրան, 1959 թ. մարզի բնակչության թիվը 1939 թ. համեմատությամբ պակասել էր 20,4 հազարով: Հետագա ժամանակաշրջանում բնակչության բնական աճի ցուցանիշը մեծ չափով իջել է: Մասնավորապես 1971 թ. 1000 մարդու հաշվով այն կազմել է 17,8, իսկ 1975 թ.՝ 15,5 մարդ:

Սոցիալ-տնտեսական, կուլտուրական համապատասխան պայմանների բացակայության պատճառով երիտասարդության հարկադրված արտահոսքի հետևանքով 1939 — 1979 թթ. մարզի հայ բնակչության թիվը ոչ միայն չի աճել, այլև շուրջ 10 հազ. մարդով պակասել է: Եվ դա այն դեպքում, երբ նույն թվականներին ադրբեջանցիների թիվն աճել է 23,2 հազարով:

Աղյուսակ 2

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի բնակչության ազգային կազմը (հազ. մարդ)

	Մարդահամարի տվյալներով			
	1939 թ.	1959 թ.	1970 թ.	1979 թ.
Ամբողջ բնակչությունը	150,8	130,4	150,3	162,3
այդ թվում՝				
Հայեր	132,8	110,1	121,1	123,1
Ադրբեջանցիներ	14,1	18,0	27,2	37,3
Ռուսներ	3,2	1,8	1,3	1,3
Այլ ազգեր	0,7	0,5	0,7	0,6

Վիճակագրական փաստացի տվյալները ցույց են տալիս, որ Լեռնային Ղարաբաղում արագորեն աճում է ադրբեջանցիների թիվը: Այսպես, օրինակ, եթե 1939 թ. մինչև 1970 թ. մարզի բնակչության թիվը 150,8 հազարից դարձել է 150,3 հազ., այսինքն քսան տարվա ընթացքում ոչ միայն չի աճել, այլ 500-ով նվազել է, ապա նույն ժամանակաշրջանում ադրբեջանցիների թիվը 14,1 հազարից հասել է 27,2 հազ., այսինքն՝ ավելացել է 13,1 հազարով[1]:

Ի դեպ, նշված ժամանակաշրջանում զգալի չափով նվազել է նաև մարզում ապրող ռուսների թիվը:

[1] Տես Достижения Нагорного Карабаха в девятой пятилетке, Степанакерт, 1976, стр. 9.

Հայերից բացի, մարզում ապրում են տասից ավելի ազգերի ներկայացուցիչներ՝ ռուսներ, ադրբեջանցիներ, ուկրաինացիներ, բելոռուսներ, հույներ, թաթարներ, հրեաներ, լեզգիներ, վրացիներ, աբխազներ, որոնք բոլորը միասին 1970 թ. կազմել են 19 — 20 %: Հայերը 1970 թ. կազմել են մարզի բնակչության ավելի քան 80 %-ը: 1979 թ. տվյալներով մարզի բնակչությունը կազմել է 162,2 հազ. մարդ, որից հայեր՝ 123,1 հազ. (75,9 %), ադրբեջանցիներ՝ 37,2 հազ. (23 %), ռուսներ՝ 1,3 հազ. (0,8 %), այլ ազգություններ՝ 0,6 հազ. (0,3 %): Մարզի հիմնական բնակչության՝ հայերի թիվը, նշված ամբողջ ժամանակաշրջանում գրեթե չի աճել: Մինչդեռ ադրբեջանցիների թիվն այդ ընթացքում աճել է ավելի քան 2,6 անգամ:

Ինչպես նշվել է աղյուսակ 1-ում 1989 թ. հունվարի մարդահամարի տվյալներով մարզի բնակչությունը կազմել է 188 հազ. մարդ: Սումգայիթյան ոճրագործությունների հետևանքով Ադրբեջանի հայաբնակ վայրերից փախած ավելի քան 22 հազ. հայ (1989 թ. վերջի դրությամբ) հանգրվան են գտել Լեռնային Ղարաբաղում, այդ պատճառով մարզի բնակչությունը զգալի չափով ավելացել է, հայերի տեսակարար կշիռն այժմ կազմում է շուրջ 80 %: Նշենք նաև, որ նույն պատճառով Ադրբեջանից փախել և Հայկ. ԽՍՀ-ում հանգրվանել են ավելի քան 230 հազ. հայ:

1950-ական թվականներից զգալի չափով աճել է մարզի քաղաքային բնակչության տեսակարար կշիռը: 1926 թ. այստեղ քաղաքային բնակչության թիվը կազմում էր 8,3 հազ. մարդ (այսինքն մարզի բնակչության ընդամենը 6 %-ը), 1989 թ. հունվարի մարդահամարի տվյալներով այն հասել էր 97 հազ. մարդու, որը կազմում է մարզի ամբողջ բնակչության ավելի քան 50 %-ը:

Բնակչության խտությունը մեկ քառ. կմ-ի վրա կազմում է շուրջ 43 մարդ: Համեմատաբար խիտ է բնակեցված նախալեռնային գոտին, որտեղ խտությունը՝ հասնում է 65 մարդու:

1987 թ. տվյալներով Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզն ունի 215 բնակավայր, այդ թվում, ինչպես արդեն նշվել է, 4 քաղաք, 4 քաղաքատիպ ավան և 207 գյուղական բնակավայր:

Գյուղական բնակավայրերի թիվը հասնում է 207-ի, որի 85 %-ից ավելին հայկական գյուղեր են: Գյուղական բնակավայրերից բնակչության թվով առավել խոշորներն են Մարտունու շրջանում՝ *Ճարտար* (շուրջ 4 հազ. բնակիչ), Բերդաշեն (ավելի քան 1700 բնակիչ), *Գիշի* (ավելի քան 1300 բնակիչ), *Սոս* (շուրջ 1000 բնակիչ), *Թաղավարդ* (ավելի քան 600 բնակիչ), *Մաճկալաշեն* (շուրջ 700 բնակիչ), *Խնուշինակ* (ավելի քան 600 բնակիչ), Ասկերանի շրջանում՝ *Ավետարանոց* (շուրջ 900 բնակիչ), *Դաշբուլաղ* (ավելի քան 700 բնակիչ), *Խրամորթ* (շուրջ 700 բնակիչ), *Բադարա* (650 բնակիչ), *Խընձիրստան* (660 բնակիչ), Մարտակերտի շրջանում՝ *Չայլու* (շուրջ 2700 բնա-

կիչ), *Հաթերք* (2700 բնակիչ), *Վաղուհաս* (շուրջ 1500 բնակիչ), *Վանք* (շուրջ 1400 բնակիչ), *Ներքին Հոռաթաղ* (շուրջ 1300 բնակիչ), *Մաղավուզ* (ավելի քան 1200 բնակիչ), *Առաջաձոր* (1100 բնակիչ), Հադրութի շրջանում՝ *Մեծ Թաղլար* (շուրջ 1600 բնակիչ), *Տոմի* (900 բնակիչ), *Ազոխ* (ավելի քան 700 բնակիչ) գյուղերը:

Լեռնային Ղարաբաղի բնակավայրերը հիմնականում տեղադրված են լեռնային ու լեռնալանջային, բայց հարմարավետ վայրերում: Բնակավայրերի նման տեղադրումը, բացատրվում է նախ օտար բռնակալների հարձակումներից պաշտպանվելու, և երկրորդ՝ հարթ հողատարածությունները չզբաղեցնելու հանգամանքով:

Սակայն ղարաբաղցին ինչպիսի դժվարին, անմատչելի վայրում էլ բնակատեղի ընտրելիս լիներ, հաշվի էր առնում խմելու ջրով ապահովվածության, բնական աղետներից պաշտպանվելու, տրանսպորտային կապի հարմարության հարցերը: Լեռնային Ղարաբաղի բոլոր հին բնակավայրերը թիկունքով հենված են լեռնալանջերին, գյուղերը հայացքով հիմնականում նայում են դեպի արևելք և հարավ:

Խորհրդային իշխանության տարիներին, հատկապես կոլտնտեսային սիստեմի ստեղծումից հետո, բնակավայրեր են հիմնադրվել մարզի հարթավայրային մասերում: Այս հանգամանքը մի կողմից ունեցել է դրական, մյուս կողմից՝ բացասական նշանակություն: Հարթավայրային բնակավայրերի բարեկարգման, տրանսպորտային, աշխատանքների մեքենայացման, էլեկտրիֆիկացման հարցերի լուծումը արագ ու հեշտ է իրականացվում: Սակայն հարթավայրային մասերում կառուցվող բնակավայրերը զբաղեցնում են զգալի արժեքավոր հողատարածություններ: Մյուս կողմից էլ այդպիսի վայրերում բնակավայրերի կառուցման հետևանքով մարզի լեռնային գյուղերի բնակիչների զգալի մասը տեղափոխվում են իրենց հին բնակավայրերից: Մարզի բոլոր շրջաններում կան լքված, դատարկված զգալի թվով բնակավայրեր, որոնց բնակիչները տեղափոխվել են հարթավայրային գյուղերը կամ, համապատասխան սոցիալ-տնտեսական պայմանների բացակայության պատճառով, առհասարակ մեկնել են Ղարաբաղից: 1988 թ. տվյալներով մարզի հայկական գյուղերում կար 6000 դատարկ տուն: Մինչդեռ բոլոր այդ բնակավայրերի բնական պայմանները շատ նպաստավոր են բնակության համար և սոցիալ-տնտեսական համապատասխան միջոցառումներ իրականացնելու, աշխատանքի պրոբլեմը լուծելու դեպքում բնակչությունը ոչ միայն կամրապնդվի տեղում, այլև մեկնածներն էլ հետ կվերադառնան:

Ղարաբաղի բոլոր գյուղերի տները երկհարկանի են, համարյա ամբողջապես թիթեղածածկ, առանձին դեպքերում դրանք ծածկված են կղմինդրով և շիֆերով: Հին գյուղերը, չնայած պլանով չեն կառուցված, սակայն գյուղա-

միջյան փողոցներն ու ճանապարհները բարեկարգ են, շատ դեպքերում՝ սալահատակ: Սովորաբար, յուրաքանչյուր բնակիչ կարգավորում է իր տանը կից փողոցը կամ ճանապարհը:

Յուրաքանչյուր գյուղի մոտ կամ գյուղամիջում կա մեկ կամ մի քանի աղբյուր: Խոշոր գյուղերում յուրաքանչյուր թաղամաս ունի իր աղբյուրը: Աղբյուրների կառուցմանը և պահպանմանը ղարաբաղցին վերաբերվում է սրբությամբ: Դրանք սովորաբար ձևավորվում են սրբատաշ բազալտով, ճակատային քարի վրա նշելով կառուցման տարին, կառուցողի անուն ազգանունը (եթե դրա կառուցումն իրականացրել է առանձին անհատ): Աղբյուրների մեծ մասը կառուցվում, ձևավորվում է այնպես, որպեսզի հնարավոր լինի ջրել նաև անասուններին: Ղարաբաղի շատ գյուղերի աղբյուրներ տանիքապատված և թիթեղածածկ են, որը կարևոր դեր է խաղում դրանց մաքրության պահպանման համար: Ի դեպ, այսպիսի աղբյուրներ կարելի է տեսնել միայն Ղարաբաղում: Շատ հնուց այստեղ աղբյուր կառուցելը համարվել է մարդու ամենամեծ հիշատակներից մեկը: Ղարաբաղի ճանապարհների եզրերին, այգիներում, անտառներում կարելի է հանդիպել այդպիսի շատ աղբյուրների: Այդպիսի նշանավոր աղբյուրներից մեկը գտնվում է Մարտունու շրջանի Սխտորաշեն գյուղի մոտ: Դա սրբատաշ բազալտով ձևավորված երեքակն սառնորակ աղբյուր է՝ կառուցված մի հսկա, գեղատեսիլ սոսու ծառի շվաքի տակ: Ի դեպ, մասնագետների գնահատմամբ Սխտորաշենի սոսի ծառը ԽՍՀՄ տարածքում ամենատարեցն է և արդեն 2010 տարեկան է: Մինչև այժմ էլ Ղարաբաղի տարբեր վայրերից ամռանը շատերը հասնում են Սխտորաշեն՝ հիանալու այդ ծառի շլացուցիչ գեղեցկությամբ, հանգստանալու նրա շվաքում և խմելու այդ աղբյուրի սառնորակ ջուրը:

Մարտունու շրջանում հայտնի է նաև Նորշեն գյուղի մոտ գտնվող Անահիտի աղբյուրը: Սա այն հանրահայտ ավանդապատման աղբյուրն է, որի մոտ Պարտավի երիտասարդ թագավոր Վաչագանը որսից վերադառնալուց իբր հանդիպել է մոտակա գյուղի հովվի աղջիկ Անահիտին: Այս ավանդապատումը մշակել է Ղ. Աղայանն իր «Անահիտ» հանրահայտ հեքիաթում:

Ղարաբաղցի անհայտ ու հայտնի հայրենասերների ձեռքով շատ հնուց կառուցված աղբյուրներ են Ոսկե Խաչը, Բջջամալը (Գիշի գյուղում), Ծրվաձուրը, Չըղալաղբյուրը, Մոտեճուրը, Խութինճուրը (Ճարտարում), Իսայու աղբյուրը (Իսաբուլաղ) Շուշի քաղաքի մոտ գտնվող անտառում, Դերին աղբյուրը, Թաս աղբյուրը, Ռուսեն աղբյուրը (Թաղավարդ գյուղի մոտ) և այլն:

Ինչպես պատմական Հայաստանի մյուս նահանգների, այնպես էլ Արցախ-Ղարաբաղի հայերը հայտնի են իրենց խոսակցական, կենցաղային, վարվելակերպի յուրահատկություններով:

Արցախ-Ղարաբաղի կանայք պատմական Հայաստանի մյուս նահանգնե-

րի կանանցից արտաքուստ տարբերվել են իրենց յուրահատուկ գեղեցիկ տարազով (ղարաբաղցիներն այն անվանում են խլեղ): Ափսոսանքով պետք է նշել,, որ այդպիսի տարազով կանայք Արցախում շատ քիչ են մնացել:

Ղարաբաղցին արտաքինից աչքի է ընկնում միջինից բարձր հասակով, գեղեցիկ ու սլացիկ, առնական և զուսպ տեսքով: Ղարաբաղցիներն իրար հետ, ընտանիքում խոսում են ղարաբաղյան բարբառով: Բայց դա երբեք չի խանգարել, որպեսզի նրանք խոսեն մաքուր, անաղարտ գրական հայերենով: Ղարաբաղը տվել է հայոց լեզվի ու գրականության ականավոր շատ գործիչներ:

Ի դեպ, ղարաբաղյան բարբառն իր հարստությամբ ու կայունությամբ հայ բարբառների շարքում առաջնակարգ տեղ ունի: Որտեղ էլ ապրելիս լինի ղարաբաղցին, երբեք չի մոռանում և գործածությունից չի հանում իր բարբառը, ջանքեր է գործադրում այն փոխանցելու իր որդուն և թոռանը:

Սիլվա Կապուտիկյանն այսպես է բնութագրել Ղարաբաղի բարբառը.

Ժայռի նման է այս հին բարբառը,
Ժայռի պես կոշտ է, չըհղկված.
Ու ժայռի պես էլ կարծր է, համառ է,
Չի պոկի նրան ոչ մի հարված,
Շուրթերի վրա այնպես է բառը,
Ինչպես որ ժայռն է հողում խրված...

Դեռևս շատ հնուց Ղարաբաղը տնտեսական ու մշակութային կապերի մեջ էր Ռուսաստանի, եվրոպական ու ասիական բազմաթիվ երկրների հետ: Հաճախակի ու երկարատև շփումները տարբեր ժողովուրդների հետ որոշ դեր են խաղացել ղարաբաղյան բարբառում օտար բառերի արմատավորման գործում: Հատկապես շատ են ռուսական, պարսկական, արաբական ծագում ունեցող բառերի ձևափոխված տեսակները: Ղարաբաղյան բարբառում կան նաև շուրջ երկու տասնյակ բառեր, որոնք համապատասխանում են անգլիական համապատասխան բառերի բովանդակությանը, օրինակ, «բոթլ» բառը ղարաբաղյան բարբառով նշանակում է շիշ, այն նույն նշանակությունն ունի նաև անգլերեն լեզվում: «Դոնքի» բառը ղարաբաղյան բարբառով ունի էշ կամ բթամիտ իմաստը, անգլերենում այն նշանակում է էշ: «Հու» (ով) և «կարպետ» բառերը նույնպես նույն նշանակությամբ են օգտագործում ղարաբաղցիներն ու անգլիացիները և այլն:

Որոշ տարբերություններ կան Ղարաբաղի տարբեր շրջանների և նույնիսկ նույն շրջանի տարբեր գյուղերի բարբառների միջև: Այսպես, օրինակ «շուտ արա» իմաստը մի տեղ արտահայտվում է «ճելլի ըրա», մյուս վայրում՝ «բեջիդ ըրա» ձևերով, «գալիս ես» իմաստը մի տեղ արտահայտվում է «կյամըս», մյուս վայրում՝ «կյալիսըս» ձևերով և այլն: Ընդհանուր առմամբ ղարաբաղյան բարբառը փափուկ ու քաղցրահունչ է:

Ղարաբաղցին աչքի է ընկնում իր աշխատասիրությամբ, համառությամբ, քաջությամբ, հպարտությամբ, վեհանձնությամբ, ինքնասիրությամբ, ճշմարտախոսությամբ, հաստատակամությամբ: Նա հավատարիմ և անդավաճան ընկեր է, բնութագրվում է հայրենասիրական բարձր զգացումներով: Ղարաբաղցի հայի կերպարը շատ դիպուկ է բնութագրված այս լեռնաշխարհի բանաստեղծ զավակի՝ Հր. Բեգլարյանի բառերով ու նույն լեռնաշխարհի մեկ այլ զավակի՝ Ալեքսեյ Հեքիմյանի երաժշտությամբ ստեղծված հետևյալ երգում.

Պատվել գիտի միշտ իր հյուրին,
Գիտի գինը աղ ու հացի.
Միշտ հյուրասեր ու միշտ բարի —
Մի՛շտ սրտաբաց ղարաբաղցին:

Ո՛ւր էլ լինես, իմ բարեկամ,
Դու նրա հետ ընկերացի՛ր,
Լավ ընկերոջ համար՝ անգամ —
Կյանքը կտա ղարաբաղցին:

Կռվում լինի, աշխատանքո՛ւմ՝
Խիզախում է ինչպես արծիվ,
Վաստակն արդար, խի՛ղճը մաքուր,
Արդարադատ ղարաբաղցին:

Մշակ է նա ու շինարար.
Բայց... հասարակ մարդ մի կարծի՛ր —
Գիտնական է ու զորավար
Բազմավաստակ ղարաբաղցին:

Խաղաղ է նա, համբերատար...
Բայց դու հոգով թե դառնացրի՛ր —
Ամպի նման կը որոտա
Շանթ ու կրակ՝ ղարաբաղցին...

Ղարաբաղցու բնութագիրը, կերպարի առանձնահատկությունները դիպուկ կերպով բնութագրված է նաև օտարազգի շատ հեղինակների կողմից: Այդպիսի հեղինակներից հատկապես հիշատակության արժանի է *Մագդա Նեյմանը*, որն իր 1899 թ. ս. Պետերբուրգում հրատարակած «Հայեր» գրքում ջերմորեն է խոսում ղարաբաղցի հայերի մասին:

Մասնավորապես նա նշում է «Ղարաբաղի հերոսական որդիները վաղուց փառաբանված են խիզախությամբ, քաջությամբ և վճռականությամբ[1]»:

Նույն գրքում նա մի այլ առիթով գրում է.

[1] Магда Нейман, «Армяне», с. Петербург, 1899, стр. 144.

«Ղարաբաղի հայերը ընդհանուր առմամբ պարթևահասակ, վայելչակազմ և գեղեցիկ ժողովուրդ են, հանգիստ, բայց որոշ չափով դեմքի խիստ արտահայտությամբ: Նրանց աչքերում չկան այն չարաճճիությունն ու խորամանկությունը, որոնք շատ հաճախ նկատվում են այլ վայրերի հայերի մոտ: Նրանք շատ եռանդուն, ձեռներեց ու խելամիտ են...

Ռազմական գործում ղարաբաղցիներն արդեն փառք են ձեռք բերել: *Մադաթովը, Բեհբութովը, Լորիս-Մելիքովը, Լազարևը, Տեր-Ղուկասովը* և *Շելկովնիկովը* եղել են կամ Ղարաբաղում ծնվածներ կամ ղարաբաղցիների սերունդներ»[1]:

Ղարաբաղցիների լիարժեք բնութագիրը տվել է նաև ռուս նշանավոր բանաստեղծ *Սերգեյ Գորոդեցկին* 1919 թ. գրած իր «Ղարաբաղ» հոդվածում:

«Յուրաքանչյուր երկիր, յուրաքանչյուր ազգ ունի իր նվիրական հենարանը, — գրում է բանաստեղծը, երբ ժողովրդի պատմությունը երջանիկ է դասավորվում, այն դառնում է մշակութային ու քաղաքական կյանքի կենտրոնը: Երբ ճակատագիրը հալածում է ազգին, այն լինում է ազգային կյանքի պատվարը, հույսերի կղզին, վերածննդի գրավականը: Հայաստանի համար հենց այս վերջին դերն էլ խաղացել և խաղում է Ղարաբաղ լեռնային մարզը:

Բնությունն ինքը նրան տվել է վիթխարի նշանակություն: Այնտեղ Ղարաբաղի անառիկ բարձունքներում, ավելի քան երկու հազար տարիների ընթացքում հայ ժողովուրդը դիմացել է քոչվոր ցեղերի գրոհներին՝ պահպանելով իր մշակույթը, պահպանելով իր ազգային դեմքը:

Միաձույլ լինելով ազգագրորեն, տնտեսապես և լեզվական տեսակետից՝ Ղարաբաղը դարձել է Հայաստանի միջնաբերդը, նրա արևելյան թևը: Այդպիսին եղել է անցյալում, այդպիսին է այժմ, այդպիսին կմնա հավերժորեն, քանի որ Հայաստանի սիրտը՝ դաշտն Արարատյան, անհնար է պաշտպանել, առանց տերը լինելու Ղարաբաղի: Պատմության երկար ընթացքին բազմիցս հարձակման ալիքները բախվել են Ղարաբաղի ամրությանը՝ նրա խորքը թափանցելով լոկ գետերի հովիտներով, այստեղ էլ չկարողանալով երկար մնալ: Հին ժամանակներում Սյունիք կոչված այս երկրամասի իշխանության ժառանգ մելիքությունները սեփական ուժերով վանել են թշնամուն: Պատմությունը կրկնվում է, և վերջին անգամ էլ տեղի ունեցավ մեր աչքերի առաջ:

Բնությունն ու պատմությունը Ղարաբաղում ստեղծել են ցայտուն արտահայտված մի տիպ: Սփռված ամբողջ աշխարհում՝ ղարաբաղցիները հեշտությամբ կարող են ճանաչվել: Գործունեության լայն թափ, անձնազոհ քաջություն, վտանգալից խիզախության հակում, ինքնավստահություն, ինքնահատուկ համառություն, ուղղամիտ հաստատակամություն, նահապետականություն ընտանեկան կյանքում, — ահա ղարաբաղցու համակրելի գծերը, որոնք ասես խտացումն են հին հայկական առաքինությունների՝ խամրած պատմության դաժանություններից և մաքուր տեսքով պահպանված Ղարաբաղում: Վեհ, ամրապինդ այս ժողովուրդը, կյանքը փրկելու համար լեռները բարձրացած, պնդացել է լեռնային օդից և իրեն պաշտպանել այն վարակներից, որոնց ենթակա են դաշտաբնակները:

Հայաստանի ազգային հիշողությունը պետք է չմոռանա ղարաբաղցիների ոչ քիչ զնգուն անուններ: Չկա մի բնագավառ, ուր նրանք դրսևորած չլինեն իրենց ձեռներեցությունն ու տաղանդը: Քաղաքականությունը, գրականությունը, հասարակական գործունեությունը, առևտուրը,— սրանք բոլորն ասպարեզ են եղել նրանց աշխատանքի համար...

...Այսքան ականավոր տղամարդ գործիչներ տված Ղարաբաղն ստեղծել է, ավելի ճիշտ՝ մաքուր վիճակում պահպանել է նաև հին հայ կնոջ տիպը, որի հոգեբանության մեջ ու կենցաղում շատ բան է պահպանվել մայրատիրության դարաշրջանից: Ամրակապված սեփական մշակույթին ու կենցաղին՝ Ղարաբաղը մեր օրերում էլ չի դավաճանում իր հին փառքին: Ի մի հավաքելով իրենց ռազմաջոկատները, ինչպես Թամերլանի ժամանակներում, մելիքները պաշտպանեցին Ղա-

[1] Նույն տեղում, стр. 150.

ղարաբաղի անկախությունը: Շուշվա միջադեպը չփոխեց Սուրբ փաշայի պարտության ընդհանուր պատկերը, և պաշտպանության գիծն ըստ էության մնաց անառիկ, ինչպես նախորդ արշավանքների օրերում:

Այսպիսին է Ղարաբաղի նշանակությունը Հայաստանի համար: Անկասկած եթե նա (Հայաստանը) կորցնի այն, ազգի ինքնորոշման գաղափարը կտուժի մեծապես: Եվ, հակառակը, տեր մնալով Ղարաբաղին, Հայաստանը կստանա եռանդուն մշակութային ուժի հզոր ներհոսք, որը ոգեղելով Հայաստանի ավեր տարածքները, կարգասավորի դրանք մշակույթով և դրանով էլ կավարտի Ղարաբաղի բազմադարյան փառավոր պատմությունը:

Ամեն մի ժողովուրդ իրենն է փնտրում: Վերածնված ազգերի ամբողջ ապագան կախված է նրանից, թե իրենք իրենց մեջ կգտնեն արդյոք բավականաչափ սեփական ազգային մշակույթի, այսպես կոչված թթխմորներ: Նման պայմաններում բոլոր այն կենտրոնները, որոնց մեջ այս կամ այն պատճառներով խտացվել է մշակութային կյանքը, ձեռք են բերում բացառիկ նշանակություն: Այդպիսին է նաև Ղարաբաղի դերը Հայաստանի համար:

Ճիշտ է՝ պատմությունը Հայաստանին քաշել է դեպի հարավ և գուցե թե, այնտեղից կծայթքեն այնպիսի ուժեր, որոնք Ղարաբաղը կդարձնեն նոր Հայաստանի հյուսիսային ծայրամասը»[1]:

Դեռևս շատ հնուց ղարաբաղցիները հայտնի են ոչ միայն Արցախ-Ղարաբաղ նահանգը, այլև ամբողջ Հայաստանը օտար բռնակալներից պաշտպանելու գործում կատարած քաջագործություններով: 13-րդ դարում Արցախի ու հարակից հայկական շրջանների գահերեց *Հասան-Ջալալ Դոլա* իշխանը, որին անվանում էին նաև Հասան-Ջալալ մեծ իշխան, կազմակերպել և թաթար-մոնղոլների հաճախակի հարձակումներից պաշտպանել է ոչ միայն Արցախը, այլև Հայաստանի ամբողջ արևելյան մասը:

Հասան-Ջալալ Դոլա իշխանը ոչ միայն քաջ զորավար էր, այլև հմուտ դիվանագետ, շինարար, հայկական մշակութային գործի զարգացման ջատագով: Ի դեպ, նա Գանձասարի վանքի կառուցողն է: Լեռն նշում է, որ Գանձասարն իր գեղեցկությամբ այս կողմերում իր նմանը չունեցող վանք է, այն դարձավ լեռնաշխարհի մտավոր կենտրոն, տեղական սրբության և հոգևոր իշխանության կայան, որովհետև այդտեղ տեղափոխվեց Աղվանից հին կաթողիկոսության աթոռը:

Հասան-Ջալալյանների տոհմը Արցախ աշխարհին դարեր շարունակ տալիս էր թե հմուտ կառավարիչ իշխաններ և թե կաթողիկոսներ: Հետագայում Արցախի այս քաջ իշխանի հետնորդները՝ *Հասան-Ջալալյանները* վճռորոշ դեր են խաղացել Արևելյան Հայաստանի ազգային ազատագրական շարժումների կազմակերպման գործում: 18-րդ դարում Հասան-Ջալալյանները ղեկավարել են Ղարաբաղը պարսկական և թուրքական բռնակալներից պաշտպանելու գործը: Նրանք են Անդրկովկասում առաջինը ջանքեր գործադրել, գործնական քայլեր կատարել Ռուսաստանի օգնությունը ստանալու և ամբողջ Անդրկովկասը թուրքերից ու պարսիկներից ազատագրելու համար:

[1] Տես «Սովետական Ղարաբաղ», 6 հոկտեմբերի, 1988 թ:

Պատահական չէ, որ ռուս-պարսկական, ռուս-թուրքական պատերազմների ժամանակ ամբողջ Ղարաբաղի հայությունը ամեն ինչում աջակցում էր ռուսական բանակին, իսկ բազմաթիվ ղարաբաղցիներ ռուսական զորքերում մեծ համբավ են ձեռք բերել իրենց անօրինակ սխրագործություններով: Այս առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում ռազմական պատմաբան Վ. *Պոտտոյի* «Ղարաբաղի առաջին կամավորները» աշխատությունը, որը հրատարակվել է 1902 թ. Թիֆլիսում և որտեղ նա փայլուն կերպով բնութագրում է Ղարաբաղի հայ կամավորների դերը Կովկասը պարսկական լծից ազատագրելու և Ռուսաստանին միացնելու գործում:

Պատմական այս մեծ առաքելության իրականացման գործում ղարաբաղցիների անձնուրաց պայքարի բնութագիրը հեղինակը տալիս է հատկապես երկու հերոս եղբայրների՝ Ջրաբերդի (այժմ Մարտակերտի շրջան) մելիքության Կուսապատ գյուղացի *Հարություն Աթաբեկյանի* (Յուզբաշի Աթաբեկովի) որդիներ *Վանի* և *Հակոբ* յուզբաշիների (հարյուրապետներ) օրինակով: Նրանք 1805 — 1811 թվականների ռուս-պարսկական պատերազմի ժամանակ բազմակողմանի ու անձնազոհ օգնություն են ցույց տվել գեներալ Ցիցիանովի ու Կարյագինի զորախմբերին: Ղարաբաղցի երկու հերոսների օգնությունը անգնահատելի է եղել հատկապես Շուշի ամրոցի ազատագրման համար մղված կռիվներում: Իրենց նվիրվածության և հերոսության համար *Վանի (Հովհաննես)* և *Հակոբ Աթաբեկյանները* պարգևատրվել են ցարական բարձր պարգևներով, այդ թվում արծաթե մեդալով:

Իսկ դրանից ավելի առաջ իր քաջագործություններով հայտնի էր դարձել Ղարաբաղի հերոս *Ավան* յուզբաշին, որը ութ տարի թուրքերից պաշտպանել է հայրենի լեռները: Նրան, որպես մարտական սխրագործություններով փառաբանված հերոսի, թագուհի Աննա Իվանովնան 1734 թ. շնորհեց ռուսական գեներալի աստիճան:

Կարևոր է հիշատակել, որ ղարաբաղցիների հետ արյունակցական կապեր ուներ ռուս մեծ զորավար *Ա. Սուվորովը:* Պարսիկների հաճախակի ասպատակությունների պատճառով 1722 թ. Ղարաբաղից Հյուսիսային Կովկասի Մոզդոկ քաղաք է տեղափոխվում նաև Մանուկյանների ընտանիքը: Այս ընտանիքի դուստր Հռիփսիմե (Ռոզա) Մանուկյանը հետագայում տեղափոխվում է Մոսկվա, որտեղ էլ ամուսնանում է Վասիլի Իվանովիչ Սուվորովի՝ ապագա մեծ զորավարի հոր հետ: Մոր՝ Հռիփսիմեի պատմությունները Ղարաբաղի, հայերի ու դրանց դժվարին ճակատագրի մասին, մեծ հետաքրքրություն են առաջացնում Ա. Սուվորովի մեջ: Պատահական չէ, որ նա ոչ միայն նամակագրական կապեր է հաստատում Ղարաբաղի մելիքների հետ, այլև գործնական մի շարք քայլեր է կատարում թուրք-պարսկական լծից փախած հայերին Ռուսաստանի հարավային շրջաններում բնակեցնելու գործում:

18 — 19-րդ դարերում հայրենիքին անսահման նվիրված, ռուսահայաց քաղաքականություն վարող Ղարաբաղցի հերոսների թիվը շատ է: Դրանց մեջ հանրահայտ է գեներալ-մայոր *Մադաթովը:*

Վալերիան (Ռոստոմ) *Մադաթովը* (Մադաթյան) ծնվել է 1782 թ. Ղարաբաղի Ավետարանոց (Ասկերանի շրջան) գյուղում: Ռուսական բանակի հայազգի այդ զորավարը, մեծ համբավ է ձեռք բերել հատկապես ռուս-թուրքական, Նապոլեոնի զորքերի դեմ մղած Հայրենական, ինչպես նաև ռուս-պարսկական պատերազմներում: Մադաթովի գլխավորած զորքերը 1826 թ. Ղարաբաղը լիովին մաքրել են պարսիկներից, իսկ դրանից առաջ Շամխորի մոտ նա գլխովին ջախջախել է պարսկական 10 հազարանոց զորքը: Մեծ համբավ են ձեռք բերել նաև ռուսական բանակի ղարաբաղցի հայ գեներալներ *Լազարևը, Լորիս Մելիքովը, Տեր-Ղուկասովը, Բեհբութովը:*

Արցախ-Ղարաբաղ աշխարհին օտար նվաճողներից պաշտպանելու գործում բազմաթիվ տղամարդ կտրիճների հետ միասին քիչ դեր չեն խաղացել նաև այդ երկրամասի կանայք: Դրանց փայլուն օրինակներից են՝ Հասան Ջալալ Դոլա մեծ իշխանի դուստր *Ռուզանը*, որն անօրինակ սխրագործություն է կատարել իր հայրենիքը թաթար-մոնղոլներից փրկելու գործում, Վարանդայի մելիքի դուստր Գայանեն, որը կազմակերպել է ապստամբություն թուրքերի դեմ, ինչպես նաև Պարտավի Վաչագան թագավորի կին *Անահիտը*, որի սխրագործությունները նկարագրված են Ղ. Աղայանի «Անահիտ» հեքիաթում և այլն:

1918 թ. Սարդարապատի հերոսամարտում գլխավոր հրամանատարն էր Լեռնային Ղարաբաղի Ասկերանի շրջանի Նախիջևանիկ գյուղից *Դանիելբեկ Փիրումյանը (Փիրումովը):* Ի դեպ, այդ բախտորոշ ճակատամարտին, որտեղ հայ ժողովուրդը դժվարին հաղթանակ տարավ թուրքերի դեմ, մասնակցում էր Ղարաբաղից եկած գունդը, որը բացառապես կազմված էր Արցախի հայերից և գործում էր քաջարի գնդապետ *Դավելբեկ Փիրումովի* (Դանիելբեկ Փիրումովի ազգակիցը) հրամանատարությամբ:

Լեռնային Ղարաբաղը բազմաթիվ փառաբանված զորահրամանատարներ և հերոսներ է տվել Առաջին համաշխարհային, Քաղաքացիական և Երկրորդ համաշխարհային պատերազմների տարիներին:

Շատ խոշոր են Խորհրդային Միության նավատորմի ծովակալ, ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, Խորհրդային Միության հերոս *Հովհաննես (Իվան) Ստեփանի Իսակովի* ծառայությունները մեր միության ռազմական նավատորմի հզորացման և գերմանական ֆաշիստների ջախջախման գործում: Հ. Իսակովի նախնիները ղարաբաղցիներ են եղել: Նա 8 տարի եղել է ԽՍՀՄ ռազմածովային նավատորմի ժողկոմի տեղակալ, պատերազմի տարիներին ղեկավարել է Բալթյան նավատորմի մարտերը:

Արցախ-Ղարաբաղի Չարդախլու գյուղի ծնունդ են Խորհրդային Միության մարշալ, Խորհրդային Միության կրկնակի հերոս *Հովհաննես Բաղրամյանն* ու զրահատանկային զորքերի մարշալ *Համազասպ Բաբաջանյանը:*

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին իր սխրագործություններով փայլեց Հադրութի շրջանի Մեծ Թաղլար գյուղի ծնունդ, ավիացիայի մարշալ *Արմենակ Խանփերյանցը* (Խուդյակով): Դեռևս մինչև ֆաշիստական Գերմանիայի հարձակումը մեր երկրի վրա, 1939 թ. ֆինների դեմ մղված մարտերում կատարած սխրանքների համար Խորհրդային Միության հերոսի կոչում է ստանում Մարտունու շրջանի Մաշադիշեն (այժմ Կոլխոզաշեն) գյուղի ծնունդ *Միքայել Բարսեղովը:* Գեներալ-գնդապետ Բարսեղովը Հայրենական մեծ պատերազմի տարիներին Հարավ-արևմտյան ռազմաճակատի, իսկ Ճապոնիայի դեմ մղված մարտերի ժամանակ (1945 թ.) Հեռավոր Արևելքի երկրորդ ռազմաճակատի հրետանային զորքերի հրամանատարն էր: Կոլխոզաշեն գյուղում ստեղծված է տաղանդավոր զորավարի թանգարանը:

Լեռնային Ղարաբաղի Խերխան գյուղում (Մարտունու շրջան) է ծնվել քաղաքացիական պատերազմի լեգենդար հերոսներից մեկը՝ գեներալ-լեյտենանտ *Հակոբ Մելքումյանը* (Մելքումով): Հեծյալ բրիգադի հրամանատար Հակոբ Մելքումյանը հատկապես անգնահատելի դեր է խաղացել 1920 — 1932 թվականներին Միջին Ասիայում բասմաչների, ինչպես նաև հայ ժողովրդի դահիճ Էնվեր փաշայի հրամանատարությամբ գործող «Իսլամի բանակի» հրոսակների ջախջախման գործում: Էնվեր փաշան, չնայած իր բոլոր ջանքերին, այս անգամ չի կարողանում ճողոպրել և ղարաբաղցի քաջահմուտ զորավար Մելքումյանի գնդերը շրջապատում են նրան ու ոչնչացնում: 1926 թ. Հակոբ Մելքումյանի գլխավորությամբ ջախջախվում է նաև Բուխարայում հիմնավորված Իբրահիմ բեկի մեծաքանակ զորքը: Հայազգի զորավարի համբավն այն աստիճանի տարածված էր, որ Իբրահիմ բեկը դատարանում վերջին խոսքն ասելիս խնդրում է իրեն հնարավորություն տալ տեսնելու Հակոբ Զորավարին, նրան որ ջախջախել է Էմիրի, Էնվերի ու իր զորքերը: Մինչև 1937 թ. նա Միջին Ասիայի զինվորական օկրուգի հրամանատարի տեղակալը, ապա հրամանատարն էր:

Շուշիի շրջանում է ծնվել աննկուն հեղափոխական, երկրորդ կարգի բանակային կոմիսար *Վլադիմիր Քրիստափորի Թախրովը* (Տեր-Գրիգորյան): Հեղափոխական ընդհատակում և քաղաքացիական պատերազմում կատարած զորահրամանատարական հմուտ աշխատանքներից բացի, նա երկար տարիներ դիվանագիտական աշխատանք է կատարել Չինաստանում և Ֆրանսիայում, 1935 թ. նշանակվել է Մոնղոլական ժողովրդական Հանրապետությունում ԽՍՀՄ դեսպան:

Հադրութի շրջանի Ազոխ գյուղում է ծնվել ավիացիայի գեներալ-լեյտենանտ *Սերգեյ Արշակի Սարդարյանը* (Սարդարովը), որը որպես ավիացիոն գնդի հրամանատար Հյուսիսային ծովային ճանապարհը պաշտպանում էր ֆաշիստներից: Մասնակցել է նաև Հյուսիսային Կովկասի, Օդեսայի ազատագրման մարտերին:

Շուշեցի դերձակի ընտանիքում է ծնվել գեներալ-մայոր *Անդրանիկ Ղազարյանը,* որի գլխավորած զորքերը մասնակցել են Օրյոլի, Բելգորոդի, Բելոռուսիայի, Նովգորոդի, Վիլնյուսի, Կաունասի, Քյոնիգսբերգի ազատագրմանը:

Հայրենական մեծ պատերազմի պատմության էջերում Ղարաբաղի փառքը ոսկե տառերով են գրել Խորհրդային Միության կրկնակի հերոս *Նելսոն Ստեփանյանը* (Շուշի քաղաքից), գվարդիայի գեներալ-մայոր *Գրիգոր Բաղյանը,* կապի զորքերի գեներալ-մայոր *Ռուբեն Գաբրիելյանը* (Խնուշինակ գյուղից) կապի զորքերի գեներալ-մայոր *Ռուբեն Տեր-Սահակովը* (Շուշիից), ինժեներա-տեխնիկական ծառայության գեներալ-մայորներ *Հովհաննես Կնունյանցը* (Շուշիից) և *Սուրեն Աղաջանյանը* (Ազոխ գյուղից), գվարդիայի գեներալ-մայոր *Արսեն Ավթանդիլյանը* (Գիշի գյուղից), արդարադատության գեներալ-մայոր *Վալենտին Իսրայելյանը* (Կարմիր գյուղից), հրետանային զորքերի գեներալ-մայոր *Ալեքսանդր Նազարովը,* Խորհրդային Միության հերոսներ *Գեորգի Հակոբյանը, Գրիգոր Հայրապետյանը, Արմեն Հայրյանը, Սուրեն Պետրոսյանը, Ռուբեն Բաղրյանը, Արամ Սաֆարյանը, Հովհաննես (Իվան) Շահումյանը, Սուրեն Գասպարյանը (Գասպարով), Կոնստանտին Նազարյանը, Իսահակ Մանասյանը, Աշոտ Գասպարյանը, Երեմ Դանիելյանը, Թեմիկ Ավթանդիլյանը, Վլադիմիր Հովհաննիսյանը* և շատ ուրիշներ:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Լեռնային Ղարաբաղի 21 զավակներ արժանացել են Խորհրդային Միության հերոսի կոչման: Առհասարակ Արցախ-Ղարաբաղ աշխարհն այդ պատերազմում տվել է ԽՍՀՄ նավատորմի մեկ ծովակալ, երեք մարշալ, քսան գեներալ և շատ այլ զորահրամանատարներ: Միայն Լեռնային Ղարաբաղից այդ պատերազմին մասնակցել է 45 հազար հայ, որից 22,5 հազարը զոհվել է: Բնակչության յուրաքանչյուր հազար մարդուն ընկնող բաձրաստիճան զինվորական գործիչների, գիտնականների թվով Լեռնային Ղարաբաղի հայկական ինքնավար մարզը ԽՍՀՄ-ում հավասարը չունի:

Լենինի ղարաբաղցի զինակիցներից հանրահայտ են հատկապես *Բոգդան Կնունյանցը* (Մարտունու շրջանի Ննգի գյուղից), *Վլադիսլավ Կասպարյանցը* (Ստեփանակերտից), *Ալեքսանդր Բեկզադյանը* (Մարտակերտի շրջանի Կուսապատ գյուղից), շուշեցիներ *Սահակ Տեր-Գաբրիելյանը, Սարգիս Կասյանը,* հայտնի հրապարակախոսներ *Սպանդար Սպանդարյանը* և նրա որդի *Սուրեն Սպանդարյանը, Երվանդ Պողոսյանը* (Դահիրավ գյուղից). *Թևոս Մանուչարյանը* (Ներքին Հոռաթաղ գյուղից): Հայ հեղափոխականներից առա-

ջինը Բոգդան Կնունյանցն էր, որ սերտ կապեր հաստատեց Լենինի հետ և ամբողջապես նվիրվեց լենինիզմի գործին:

Ի դեպ, նա Բաքվի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունից որպես պատգամավոր երկու ձայնի իրավունքով 1903 թ. մասնակցել է ՌՍԴԲԿ II համագումարին: Նրա հեղափոխական կեղծանունը Ռուսով էր և այդ համագումարում ավելի քան 50 անգամ ելույթ է ունենում ի պաշտպանություն Լենինի:

Խոսելով II համագումարում կուսակցության պառակտման հարցերի մասին և բարձր գնահատելով Կնունյանցի մարքսիստական գաղափարները, Լենինը նշել է. «Մենք խորհուրդ կտայինք բոլորին, ովքեր ուզում են ինքնուրույն վերլուծել կուսակցության պառակտման պատճառները և գտնել նրա արմատները համագումարում, կարդալ և վերստին կարդալ ընկ. Ռուսովի ճառը»[1]: Ննգի գյուղում ստեղծված է աննկուն հեղափոխական Բոգդան Կնունյանցի թանգարանը: Բոգդան Կնունյանցից բացի պրոֆեսիոնալ հեղափոխականներ են եղել նաև նրա եղբայրը՝ *Լյուդվիգ Կնունյանցը* և քույրը՝ *Փառանձեմ (Փառո) Կնունյանցը:* Լյուդվիգի ընտանիքում է ծնվել ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս, քիմիկոս, սոցիալիստական աշխատանքի հերոս, գեներալ-մայոր *Իվան Կնունյանցը:*

Էմիգրացիայի տարիներին Լենինը շատ մտերիմ և ամենօրյա բարեկամական կապերի մեջ է եղել Ալեքսանդր Բեկզադյանի հետ: Նա հեղափոխությունից հետո աշխատել է Անդրֆեդերացիայի ժողկոմխորհի նախագահի տեղակալի, առևտրի ժողկոմի պաշտոններում, 1930 — 1934 թթ. եղել է ԽՍՀՄ դեսպանը Նորվեգիայում, իսկ 1934 — 1937 թթ.՝ Հունգարիայում:

Հիրավի, ջերմ էր Լենինի բարեկամությունը Սարգիս Կասյանի հետ: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման կապակցությամբ, Լենինը Կասյանի անունով՝ որը Խորհրդային Հայաստանի հեղկոմի նախագահն էր, հղել է այսպիսի հեռագիր. «Հանձին Ձեզ ողջունում եմ իմպերիալիզմի ճնշումից ազատագրված աշխատավորական Խորհրդային Հայաստանին»:

Կասյանը վարել է նաև Անդրֆեդերացիայի ու Հայկական ԽՍՀ Կենտգործկոմի նախագահի պաշտոնները:

Լենինի և Կրուպսկայայի հետ ջերմ բարեկամական կապեր ուներ Վլադիսլավ Կասպարյանցը, որը նրանց հետ հեղափոխական եռանդուն աշխատանք էր կատարում Պետերբուրգում, ինչպես նաև Բեռլինում, Ժնևում, Ցյուրիխում, Բեռնում եղած տարիներին:

Իր ամբողջ կյանքը հեղափոխության գործին է նվիրել նաև *Սահակ Տեր-Գաբրիելյանը*, որը եղել է Խորհրդային Հայաստանի ժողկոմխորհի նա-

[1] *Վ. Ի. Լենին*, ԵԼԺ, հ. 8, էջ 376:

խագահը: Շուշիում են ծնվել նաև ականավոր պատմաբաններ *Լեոն, ՀԽՍՀ Գա ակադեմիկոսներ Աշոտ Հովհաննիսյանն ու Արտաշես Կարինյանը:* Աշոտ Հովհաննիսյանը 1922 — 1927 թթ. եղել է Հայաստանի Կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար, իսկ Արտաշես Կարինյանը Բաքվի Կոմունայի արդարադատության ժողկոմն է եղել, հեղափոխական աշխատանք է կատարել Բաքվի 26 կոմիսարների հետ:

26 կոմիսարներից են եղել նաև Շուշվա գավառի Թաղուտ գյուղից *Բաղդասար Ավագյանը* (կոմունայի օրերին եղել է Բաքվի կայազորի պետը) և Շուշի քաղաքի ծնունդ *Արամ Կոստանյանը* (որը եղել է պարենի գծով կոմունայի կոմիսարը):

Բաքվի կոմունայի աշխատանքներին ակտիվորեն մասնակցել է նաև պրոֆեսիոնալ հեղափոխական, բժիշկ, հասարակական գործիչ, Ստ. Շահումյանի հավատարիմ զինակից *Լևոն Աթաբեկյանը* (Մարտակերտի շրջանի Կուսապատ գյուղից):

Շուշի քաղաքը տվել է, ինչպես արդեն նշել ենք, այնպիսի կուսակցական և պետական խոշոր գործիչ, ինչպիսին *Իվան (Հովհաննես) Թևոսյանն է:*

Լեռնային Ղարաբաղի Աշան գյուղում է (այժմ Մարտունու շրջանում) ծնվել մարքսիստ-հեղափոխական *Լևոն Միրզոյանը*, որը 1920-ական թվականներին եղել է Ադրբեջանի Կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար, իսկ հետագայում 1930-ական թվականներին ղեկավարել է Ղազախստանի Կոմկուսի կենտկոմի աշխատանքները: Շատերի նման նա էլ զոհ է գնացել ստալինյան տեռորին:

Արցախ-Ղարաբաղի ծնունդ է նաև կուսակցական գործիչ *Սուրեն Շադունցը*, որը մինչև ստալինիզմի կամայականության զոհ դառնալը եղել է Նախիջևանի Կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար: Այս լեռնաշխարհի ծնունդ են նաև հեղափոխական նշանավոր գործիչներ Ալեքսանդր Ռուբենին (Մատուրյան), որը ծնվել է Շուշիում և Հակոբ Կամարին (Մարտակերտի շրջանի Լուլասազ գյուղից): Երկուսն էլ կուսակցական ղեկավար աշխատանք են կատարել Արցախում:

Խորհրդային Հայաստանի կուսակցական, պետական, խորհրդային, տնտեսական օրգաններում նշվածներից բացի բարձր պաշտոններ են վարել Լեռնային Ղարաբաղի բազմաթիվ զավակներ: Ս. Բաղդասյանը և Ա. Դադայանը վարել են ՀԽՍՀ արդարադատության, Ս. Արզումանյանը՝ ներքին գործերի մինիստրի պաշտոնները:

Այժմ հանրապետության սոցիալական ապահովագրության մինիստրն է Ն. Բալայանը (Ճարտարից):

ՀԽՍՀ կուսակցական, պետական, տնտեսական մարմիններում երկար տարիների բարձր պաշտոններ է վարել Եղիշե Ասծատրյանը: Նա վարել է

Երևանի օկրուգկոմի քարտուղարի, ՀԿԿ Կոմկուսի Կենտկոմի քարտուղարի, մինիստրների խորհրդի նախագահի տեղակալի, կուսակցական պետական վերահսկողության կոմիտեի նախագահի, ժողվերահսկողության կոմիտեի նախագահի, Պետմատի նախագահի պաշտոնները: Երկար տարիներ եղել է ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի անդամ (նա ծնունդով Ճարտար գյուղից է):

Լեռնային Ղարաբաղը տվել է նաև գիտության բոլոր բնագավառների շատ գործիչներ, այդ թվում համաշխարհային լայն ճանաչում ստացած ականավոր գիտնականներ:

Մենք արդեն նշել ենք պրոֆեսիոնալ հեղափոխական, Նոգի գյուղի զավակ *Լյուդվիգ Կնունյանցի* որդի *Իվան (Հովհաննես) Կնունյանցի* մասին: Նա աշխարհահռչակ քիմիկոս է, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս, պետական մրցանակի դափնեկիր: Լայն ճանաչում ունի ակադեմիկոս *Նիկոլայ Ենիկոլոպյանը*, (Ստեփանակերտից), որի գիտական հետազոտությունները վերաբերում են պոլիմերների ստացման պրոցեսներին:

Շուշի քաղաքում է ծնվել Հայկ. ԽՍՀ ԳԱ ակադեմիկոս *Վաչե Խագուլյանցը*, որի աշխատությունները հատկապես վերաբերում են նավթաքիմիական արդյունաբերության տեխնոլոգիայի կատարելագործմանը: Քանի որ քիմիկոս գիտնականների մասին է խոսքը, ապա անհրաժեշտ է նշել, որ Լեռնային Ղարաբաղում՝ Շուշի քաղաքում է ծնվել նաև ռուս խոշոր քիմիկոս *Ն. Ն. Զինինը* (1812 — 1880 թթ.): Զինինի դերը անգնահատելի է հատկապես Ռուսաստանում օրգանական քիմիայի զարգացման գործում:

Խորհրդային Միությունում և նրա սահմաններից դուրս մեծ ճանաչում ունի կենսաբան, ԽՍՀՄ և Հայկ. ԽՍՀ ԳԱ-երի ակադեմիկոս *Արմեն Թախտաջյանը:*

Մարտակերտի շրջանի Ծմակահող գյուղում է ծնվել Հայկ. ԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, պետական մրցանակի դափնեկիր, Սոցիալիստական աշխատանքի հերոս Անդրանիկ Իոսիֆյանը: Նրա գիտական աշխատությունները վերաբերում են էլեկտրատեխնիկական մեքենաշինության պրոբլեմներին: Նա հսկայական դեր է խաղացել Հայաստանի էլեկտրատեխնիկական արդյունաբերության զարգացման գործում: Ա. Իոսիֆյանը երկար տարիներ վարել է Հայկ. ԽՍՀ ԳԱ փոխպրեզիդենտի պաշտոնը:

Այս լեռնաշխարհը տվել է նաև գիտական-օվկիանոսագետ: Մարտունու շրջանի Ճարտար գյուղում է ծնվել ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ *Ա. Սարգսյանը*, որի օվկիանոսագիտության բնագավառում կատարած հետազոտությունները արժանացել են պետական մրցանակի:

Գյուղատնտեսական գիտության բնագավառում մեծ են ԽՍՀՄ գյուղատնտեսական գիտությունների ակադեմիայի իսկական անդամներ *Սերգեյ Վարոնցյանի* (Շուշիից), *Ռուբեն Դավիդովի* (Հադրութի շրջանի Կեմրակուչ գյուղից) և *Երվանդ Արզումանյանի* (Մարտունու շրջանի Թաղավարդ գյուղից), պրոֆեսորներ *Գուրգեն Շաքարյանի* (Խնուշինակ գյուղից) *Գուրգեն Քամալյանի* (Գիշի գյուղից) ծառայությունները:

Շուշի քաղաքի զավակներ են տեխնիկական գիտությունների դոկտոր-պրոֆեսորներ *Միքայել Շահնազարովը, Գրիգոր Գրիգորյանը, Հայկ Սարգսյանը*, մաթեմատիկական գիտությունների դոկտոր *Ալեքսանդր Ստեփանյանցը*, որոնց գիտական աշխատանքները վերաբերում են նավթագազային արդյունաբերությանը: Երկրաբանական-հանքաբանական գիտությունների դոկտոր պրոֆեսորներ են՝ *Սամսոն Ապրեսովը* (Շուշիից) և *Սերգեյ Բալասանյանը* (Ասկերանի շրջանի Քյաթուկ գյուղից):

Հիրավի անգնահատելի է Ղարաբաղի տաղանդավոր զավակներից մեկի՝ *Իոսիֆ Տեր-Աստվածատրյանի* (Շուշի քաղաքից) դերը Հայաստանի էլեկտրաէներգետիկ տնտեսության զարգացման գործում: Խորհրդային Հայաստանի հիդրոէներգաշինարարության նվաճումները մինչև 1937 թվականը ամբողջապես կապված են նրա անվան հետ:

Երևանի, Մոսկվայի, Թբիլիսիի, Բաքվի և մյուս քաղաքների բարձրագույն ուսումնական հաստատություններում բեղմնավոր աշխատանքներ են կատարել մաթեմատիկոսներ *Ալեքսանդր Մելիքյանը*, պրոֆեսորներ *Արտեմ Տեր-Խաչատրյանը* (Շուշիի շրջանից), *Աշոտ Մոիսեևիչ Տեր-Մկրտչյանը* (Մարտունու շրջանի Աշան գյուղից), *Արտաշ Սողոմոնյանը* (այժմ Մարտունու շրջանի Բերդաշեն գյուղից), *Ֆոֆբերգ Բախշյանը* (Ճարտար գյուղից), *Սեմյոն Ռուզբաշյանը* և ուրիշներ:

Լեռնային Ղարաբաղը տվել է բժշկական գիտության բազում գործիչներ: Դրանցից հանրահայտ են դոկտոր-պրոֆեսորներ, շուշեցիներ *Մարգար Մաստամյանը* (1854 — 1904), որը ավարտել է Պետերբուրգի ռազմաբժշկական ակադեմիան, *Հովհան Գաբրիելյանը* (1875 — 1946), *Արշակ Հակոբյանը* (Հադրութի շրջանից), շուշեցի պրոֆեսոր *Վլադիմիր Խաչատրյանը*, պրոֆեսոր *Հայկ Միրզաբեկյանը* (Ստեփանակերտից), *Լևոն Մայիլյանը* (Մարտակերտի շրջանի Մեծ Շեն գյուղից), *Քրիստափոր Պետրոսյանը* (Ասկերանի շրջանի Կարմիր գյուղից), որը հիմնադրել է Երևանի օրթոպեդիկ հիվանդանոցը, *Հիգրան Մնացականյանը, Սերգեյ Թադևոսյանը* (Մարտակերտի շրջանի Մաքաղա գյուղից), շուշեցի *Անդրեյ Ղահրամանյանը*, հայտնի գինեկոլոգ *Երվանդ Հակոբյանը* (Ճարտարից), շուշեցի *Գրիգոր Սարկիսովը*, սրտաբան *Անդրանիկ Ճաղարյանը* (Ասկերանի շրջանի Դաշբուլաղ գյուղից) և շատ ուրիշներ: Անգնահատելի է Հայկ. ԽՍՀ ԳԱ ակադեմիկոս *Լևոն Հովհաննիսյանի* (Շուշիի շրջանի Քարին տակ գյուղից) գիտական վաստակը, որը ծավալուն աշխատություններ ունի հայ բժշկագիտության պատմության վերաբերյալ:

Փիլիսոփայության բնագավառի ժամանակակից մասնագետներից գի-

տական զգալի նվաճումների են հասել դոկտոր, պրոֆեսորներ *Հրաչիկ Շաքարյանը* (Ասկերանի շրջանի Ուլուբաբ գյուղից), *Ալեքսանդր Մանասյանը* (Ավետարանոց գյուղից):

Տնտեսագիտության բնագավառում ճանաչված են հատկապես Հայկ. ԽՍՀ ԳԱ ակադեմիկոս *Արտաշես Առաքելյանը* (Շուշի քաղաքից), պրոֆեսորներ *Ղևոնդ Շաքարյանը* (Շուշի քաղաքից), Յուրի Թադևոսյանը (Ստեփանակերտից):

Լեռնային Ղարաբաղը հատկապես շատ է տվել պատմության և գրականության ականավոր գործիչներ, գրողներ: Ականավոր հայագետ Ստ. Մալխասյանի վկայությամբ (տես «Խորենացու առեղծվածի շուրջը», 1940 թ., էջ 147) մեր պատմահայրը՝ *Մովսես Խորենացին* (5-րդ դար) ծննդով Ղարաբաղից է եղել: Ղարաբաղում (Հաթերք գյուղում) է ծնվել և գործել մի այլ խոշոր պատմաբան՝ *Մովսես Կաղանկատվացին* (7-րդ դար):

Հայ խոշորագույն վիպասան Րաֆֆու հայրը՝ *Մելիք Միրզաբեկովը* Ղարաբաղի Մելիքների տոհմից է, որն ընտանիքով տեղափոխվել է Պարսկաստան մշտական բնակության: Պատահական չէ, որ Րաֆֆու ստեղծագործությունների զգալի մասը վերաբերում է Ղարաբաղի կյանքին:

Շուշի քաղաքում է ծնվել խոշոր վիպասան *Մուրացանը*, որի «Ռուզան» և «Խորհրդավոր միանձնուհի» գրքերի թեմաները վերցված են Ղարաբաղի կյանքից: Այս լեռնաշխարհի ծնունդ են նաև հեղափոխական բանաստեղծ *Հակոբ Հակոբյանը* (Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղից), երգիծաբան *Կոնստանտին Մելիք Շահնազարյանը* (Տմբլաչի Խաչան), *Սողոմոն Մելիք Շահնազարյանը*, *Գրիգոր Ներսիսյանը*, *Գուրգեն Բորյանը* (շուշեցի), *Աշոտ Գրաշին* (Մարտունու շրջանի Թաղավարդ գյուղից), *Լեոնիդ Հուրունցը* (Նորշեն գյուղից), *Սամվել Գրիգորյանը*, *Միքայել Հարությունյանը*, *Սարգիս Աբրահամյանը*, *Բագրատ Ուլուբաբյանը*, *Բոգդան Ջանյանը* և շատ ուրիշներ: Ստեփանակերտի ծնունդ է գրող, ճանապարհորդ, բժիշկ, հրապարակախոս *Զորի Բալայանը:*

Ղարաբաղցի պատմաբաններից առավել ականավորները՝ *Լեոն* (Առաքել Բաբախանյանը) և *Աշոտ Հովհաննիսյանն* են (երկուսն էլ Շուշի քաղաքից): Լեոն ավելի շատ գիտական արժեք է ստեղծել, քան որևէ այլ հայագետ: Նրա գրչին են պատկանում հայ ժողովրդի պատմության 10 ստվարածավալ հատորները, որտեղ հանգամանորեն լուսաբանված է նաև Ղարաբաղի պատմությունը (հատոր 3-րդ, գիրք երկրորդ):

Ղարաբաղցի գրականագետներից առավել հանրահայտը Հայկ. ԽՍՀ ԳԱ ակադեմիկոս *Արսեն Տերտերյանն* է (Ասկերանի շրջանի Շոշ գյուղից): Խոշոր է պրոֆեսոր *Հայկ Գյուլիքևխյանի* դերն այդ գործում (Ասկերանի շրջանի Խնձիրստան գյուղից): Նա կրթություն է ստացել Վիեննայի, Լայպցիգի, Հայ-

դելբերգի համալսարաններում, կատարել է հեղափոխական աշխատանքներ, Կարլ Լիբկնեխտի ու Ռոզա Լյուքսեմբուրգի հետ մասնակցել է գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության հիմնադրմանը: Երկար տարիներ աշխատել է Երևանի համալսարանում, վարել է նաև Հայաստանի Կոմկուսի կենտկոմի քարտուղարի և այլ պաշտոններ:

Հայ գրականության զարգացման գործում զգալի ներդրում ունեն ղարաբաղցիներ, բանասիրական գիտությունների դոկտորներ, պրոֆեսորներ *Գուրգեն Հովնանը*, *Առաքել Առաքելյանը*, *Գուրգեն Անտոնյանը*, *Սևակ Արզումանյանը* և *Սերգեյ Սարինյանը* (վերջին երկուսն էլ Սեյիդիշեն գյուղից), *Սերգեյ Աբրահամյանը* (Տումի գյուղից), հայ մամուլի պատմության լուսաբանման հարցերին նվիրված զգալի աշխատանք է կատարել բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր *Սմբատ Ավագյանը:*

Մենք նշեցինք գիտության և գրականության բնագավառում խոշոր դեր խաղացած ղարաբաղյան ծագում ունեցող գործիչների մի մասը միայն: Լեռնային Ղարաբաղից գիտության և տեխնիկայի ամենատարբեր բնագավառների մեծ թվով գործիչներ են աշխատում Անդրկովկասի, Միջին Ասիայի, Սիբիրի, Ուրալի, Մոսկվայի, Լենինգրադի, Կիևի ու մյուս վայրերի գիտահետազոտական կենտրոններում, ուսումնական հաստատություններում:

Լեռնային Ղարաբաղը տվել է հայ մշակույթի՝ թատրոնի, երաժշտության, նկարչության բազում ականավոր գործիչներ: Այս առումով շատ խոշոր է Շուշի քաղաքի դերը, որը առհասարակ հայ մշակույթի առավել նշանավոր կենտրոններից մեկն է եղել:

Շուշի քաղաքում է ծնվել ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, հայ բեմի ականավոր գործիչներից մեկը՝ *Վաղարշ Վաղարշյանը:* Վաղարշյանը ոչ միայն տաղանդավոր դերասան էր, այլև գրող:

Ծագումով Մարտակերտից է ԽՍՀՄ ժողովրդական արտիստ *Թամարա Խանումը* (Պետրոսյանը): Նա Ուզբեկստանի ժողովրդական պարարվեստի հիմնադիրն է: Թամարա Խանումը վարպետորեն կատարում է աշխարհի շատ ժողովուրդների պարերն ու երգերը:

Շուշի քաղաքում են ծնվել Հայկ. ԽՍՀ ժողովրդական արտիստներ *Գուրգեն Գաբրիելյանը*, որը երկար տարիներ աշխատել է Սունդուկյանի անվան թատրոնում, *Ալեքսանդր Ալեքսանդրյանը*, որը երկար տարիներ ղեկավարել է Հայաստանի երգի-պարի անսամբլի գործիքային մասը: Ծագումով Մարտակերտի շրջանից է Հայկ. ԽՍՀ ժողովրդական արտիստուհի *Արև Բաղդասարյանը* Մարտակերտի շրջանի Կուսապատ գյուղում է ծնվել և սկզբնական կրթությունն ստացել Հայկ ԽՍՀ ժողովրդական արտիստուհի, քանոնահար *Անժելա Աթաբեկյանը*: Մեծ ճանաչում ունեն կոմպոզիտորներ *Անդրեյ Բաբայանը*, (Բաբաև), որը ծնվել է Մարտունու շրջանի Մսմնա գյուղում, ինչպես

նաև *Դանիել Ղազարյանը* (Շուշի քաղաքից), որի հայկական ազգային երգերը սրտամոտ են ամեն մի հայի: Մարտունու շրջանի Նորշեն գյուղի ծնունդ է Հայկ. ԽՍՀ ժող. արտիստ, թառահար *Սողոմոն Սեյրանյանը:*

Ղարաբաղ լեռնաշխարհը տվել է նաև հանրահայտ քանդակագործներ ու նկարիչներ: Դրանցից առավել հայտնի են քանդակագործ *Հակոբ Գյուրջյանը*, Հայկ. ԽՍՀ ժողովրդական նկարիչներ *Ստեփան Աղաջանյանը, Ստեփան Արուտչյանը, Միքայել Արուտչյանը* և *Սերգեյ Արուտչյանը:* Ի դեպ, Հակոբ Գյուրջյանը Փարիզից հատուկ հրավիրվել է Մոսկվա Լենինի կիսանդրին քանդակելու համար: Այդ պատճառով նա բազմիցս հանդիպել է Լենինի հետ և նրա կիսանդրու առաջին քանդակողն է:

Ժամանակակից ղարաբաղցի քանդակագործներից նշանավորը Հայկ. ԽՍՀ ժողովրդական նկարիչ *Սարգիս Բաղդասարյանն է*, որի ստեղծագործությունները (արձանները) զարդարում են Երևանի (Ավ. Իսահակյան, Ստ. Շահումյան), Ղափանի (Դավիթ Բեկ), Դյոր-Շոպրոնի (Հունգարիա) ու այլ քաղաքների փողոցները: Նա է ստեղծել Ստեփանակերտի մուտքը զարդարող «Մենք ենք, մեր սարերը» յուրատիպ տուֆակերտ քանդակը:

Արցախյան ծագում ունի ԽՍՀՄ ժողովրդական ճարտարապետ *Ռաֆայել Իսրաելյանը*, որի տաղանդով են ստեղծվել Սարդարապատի հուշահամալիրը, մայր Հայաստան կոթողը, Երևանի գինու կոմբինատի շենքը և Հայաստանի տարբեր մասերում կանգնեցված բազմաթիվ հրաշագեղ հուշակամարներ՝ հուշարձաններ, աղբյուր-հուշարձաններ, ուղեցույց-կոթողներ:

Շուշի քաղաքում է ծնվել հանրահայտ ճարտարապետ *Սամվել Սաֆարյանը:*

19-րդ դարի վերջին ու 20-րդ դարի սկզբներին Արևմտյան Հայաստանում թուրք բարբարոսներից հայ ժողովրդի պաշտպանության գործում անգնահատելի դեր են խաղացել առասպելական հերոսություններով հայտնի հայդուկապետ, Արցախի Խաչեն գավառի զավակ *Նիկոլ Դումանը* (Նիկողայոս Տեր-Հովհաննիսյանը), քաջ Վարդանը (Սարգիս Մեհրաբյանը):

Ինչպես արդեն նշվել է, Լեռնային Ղարաբաղը տվել է հեղափոխական, կուսակցական, պետական, տնտեսական, ռազմական, գիտական ավելի մեծ թվով գործիչներ, արվեստագետներ, գրողներ, քան վերը նշվեց: Նրանք աշխատել և աշխատում են Խորհրդային Միության ամենատարբեր շրջաններում: Առանձնահատուկ ուշադրության են արժանի այն գործիչները, որոնք ծնվել և ապրել են Լեռնային Ղարաբաղում և ամբողջ գործնեությունը նվիրել են իրենց լեռնաստանի բարգավաճմանը: Դրանց թիվը շատ մեծ է, սակայն չենք կարող չհիշատակել կուսակցական-տնտեսական գործիչ *Հենրիկ Պողոսյանի*, գյուղատնտեսական արտադրության տաղանդավոր կազմակերպիչ, սոցիալիստական աշխատանքի հերոս *Սուրեն Ադամյանի*, ԽՍՀՄ ժողովրդական դերասանուհի *Վաչագան Գրիգորյանի*, գրողներ՝ *Սոկրատ Խանյանի, Վարդան Բա-*

Ղարաբաղյան տարազով կանայք

լայանի, Գուրգեն Գաբրիելյանի, Վազգեն Օվյանի և շատերի անունները:

Ղարաբաղյան ծագում ունի նաև ամերիկահայ տիեզերագնաց Ջեյմս Բաղյանը, հոր կողմից նրա պապը՝ Գևորգը ծնվել ու մեծացել է Ղարաբաղում:

Ղարաբաղցիները երաժշտասեր են, գրեթե բոլորն էլ գիտեն նվագել այս կամ այն գործիքի վրա, պարել, երգել: Այս լեռնաշխարհի բնակչությունը բնութագրվում է հումորի բարձր զգացումով և սրամտությամբ: Յուրաքանչյուր մի անզգույշ արտահայտություն կարող է դիմացինի կողմից հումորով պարուրված պատասխանի տեղիք տալ: Ահա թե ինչու այստեղ շատ տարածված են մականունները:

Կենցաղավարության մեջ, չնայած նկատելի սահմանափակություններին, դեռևս պահպանվում, կիրառվում են հնագույն ժամանակներից եկող ձևեր, մեթոդներ, որոնք դրական դեր են խաղում մեծին հարգելու, տնտեսավարություն, աշխատասիրություն սովորեցնելու և այլ բնագավառներում:

Չնայած մարզի շատ գյուղերում կան հացի փռեր, սակայն ղարաբաղցին դեռևս գերադասում է հաց թխել նախկին ձևով, թոնիրներում: Նախկինում ամեն մի տուն ունեցել է իր թոնրատունը, այժմ գյուղի յուրաքանչյուր թաղամաս ունի թոնրատուն: Ի տարբերություն Արարատյան դաշտի գյուղերի, որտեղ գյուղացիները թխում և օգտագործում են լավաշ հաց, Ղարաբաղի գյուղերում թխում և օգտագործում են պուրիանման կլոր հացեր:

Ճաշատեսակներից առավել օգտագործվում են տոլմա, սոուս, բոզբաշ, խորոված, կուրկուտ (հարիսայի տարատեսակ, բայց խոզի մսով), հեռածած (թանավ), քլնգոշ, ճլնբոր, խաշիլ, կճեխաշ: Կանաչ բուսատեսակներից եփած վիճակում լայնորեն օգտագործվում են փիփերթը (փուրփուտ), խնջըլոզը, ավելուկը, շեպը, ճակնդեղի մատղաշ թևերը: Ղարաբաղցու կենցաղում շատ հարգի է ու լայնորեն օգտագործվում է «ժենգյալով հացը»: Այն հիմնականում թխում են գարնանը, օգտագործելով յոթ և ավելի տեսակի մատղաշ բուսատեսակներ՝ ճրճռոկ, կձմնձուկ, թրթնջուկ, «պռավու պորտ», պտուտկուն, կինձ (համեմ), սոխ, դաղձ և այլն:

Տարբեր տեսակի հիվանդություններ բուժելու նպատակով դեռ շատ հնուց Ղարաբաղում օգտագործում են շատ բուսատեսակներ, պտուղներ: Մասնավորապես մրսածությունը բուժելու համար օգտագործվում է հունութթո (չորացված հոնի թուրմ), մոշաթթո (չորացված մոշի թուրմ), զկռթթո և այլն: Ի դեպ, չորացված հոնը (ախտա) և չորացված մոշը ղարաբաղցիներն օգտագործում են նաև հավը ամբողջությամբ եփելու դեպքում (դրանք բրնձի հետ միասին լցնում են եփելու համար պատրաստված հավի փորի մեջ որպես համեմունք): Թխվածքներից շատ հնուց ընդունված է ղարաբաղյան գաթան, կաթնահունցը, բաղարջը: Ղարաբաղցին հյուրասեր է, նույնիսկ միանգամայն օտար մարդը գյուղամիջյան ճանապարհով անցնելիս հրավիրվում է տուն,

հյուրասիրվում: Վաղուց սովորություն է Ղարաբաղի գյուղերում թոնրատան մոտով անցնողներին, ինչպես նաև թոնրատնից թարմ, բուրումնավետ հացը տուն տանելու ճանապարհին հանդիպողներին հյուրասիրելը:

5. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Նախախորհրդային շրջանում Լեռնային Ղարաբաղում խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ չկային: Բայց գյուղական տարբեր բնակավայրերում կային մետաքսագործական մի քանի տասնյակ (30 — 40) այսպես կոչված ֆաբրիկաներ, որտեղ սկզբնական վերամշակման էր ենթարկվում մետաքսի բոժոժը: Ընդ որում, արտադրված կիսաֆաբրիկատը (մետաքսահումքը և մետաքսաթելը) հիմնականում արտահանվում էր Պարսկաստան, Ռուսաստան և եվրոպական երկրներ:

Դեռևս շատ հնուց Ղարաբաղի բոլոր այն գյուղերում, որտեղ կային թթի այգիներ, գործում էին թթից օղու թորման գործարանատիպ կետեր: Դրանց թիվը շատ էր և հասկանալի է, որ գործում էին սեզոնային ձևով: Թթից արտադրվող ղարաբաղյան օղու որակը շատ բարձր է, ունի մեծ համբավ և որ շատ կարևոր է՝ բուժիչ նշանակություն:

Ղարաբաղի խաղողագործական վայրերում էլ կային գինի ստանալու այդպիսի կետեր: Ըստ որում, խաղողից գինի արտադրելուց հետո առաջացած մնացորդից (Ղարաբաղում դրան անվանում են ջեջ) ևս արտադրում էին օղի: Այսպիսով, այստեղ արտադրվում էր երկու տեսակի օղի՝ թթի և խաղողի: Անտարակույս, թթի օղու որակը շատ բարձր է:

Առանձին գյուղերում, որտեղ կային անհրաժեշտ հումքատեսակներ, գործում էին կղմինդրի արտադրության և բրուտագործական կետեր: Հատկապես խոշոր գյուղերում գործում էին ֆուրգոնների, սայլերի արտադրության արհեստանոցներ, պայտանոցներ, գերանդիների, մանգաղների, կացիններին, ցակատների արտադրության դարբնոցներ: Մետաղագործական, հագուստեղենի, կոշկեղենի, համեմատաբար կատարելագործված արհեստանոցներ կային Շուշի քաղաքում: Ամենուրեք տնայնագործական եղանակով արտադրվում էին գորգեր, կարպետներ, խուրջիններ, կոշտ գործվածքներ: Ղարաբաղյան գորգերն իրենց որակական հատկանիշներով հանրահայտ էին և ար-

տահանվում էին շատ երկրներ: Բացի դրանցից, Ղարաբաղի շատ գյուղերում կային ձիթհան կետեր, որտեղ յուղատու վուշից (կտավատ) արտադրվում էր վուշի բարձրորակ ձեթ: Վերջինս լայնորեն օգտագործվում էր ճաշատեսակների, թխվածքների ու բուժիչ նպատակների համար:

Համարյա թե բոլոր գյուղերում ջրաղաց կար: Իսկ 20-րդ դարի սկզբներին որոշ գյուղերում ալրաղացները մեքենայացվել էին: Մասնավորապես Գյունե Ճարտար և Գյունե Կալեր գյուղերում կային մեքենաղացներ, որոնց արտադրողականությունն անհամեմատ շատ բարձր էր:

Մինչև հեղափոխությունը Լեռնային Ղարաբաղում արտասահմանցիները (ֆրանսիացիները) կազմակերպել են մետաղային հանքանյութի արդյունահանում: Դա եղել է այժմյան Մարտակերտի շրջանի Մեհմանա գյուղի մոտ գտնվող բազմամետաղների հանքավայրում: Այդ ժամանակ էլ այստեղ են բերվել հույն հանքափորներ, լեռնագործ մասնագետներ, որոնց սերունդներն էլ մինչև այժմ ապրում են Մեհմանա գյուղում:

Նախախորհրդային Ղարաբաղի միակ էլեկտրակայանը գտնվում է Շուշի քաղաքում, որն ուներ ընդամենը 30 կվտ կարողություն:

Գյուղատնտեսության ճյուղերից կարևոր դեր խաղացողները հացահատիկային տնտեսությունը, այգեգործությունն ու անասնապահությունն էին: Դաշտային վայրերում աճեցվում էին աշնանացան ցորեն, գարի, կորեկ, վարսակ, որոշ վայրերում նաև բրինձ, յուղատու վուշ, սիսեռ և այլն, իսկ նախալեռնային վայրերում՝ գարնանացան ցորեն և գարի: Խաղողագործությունը հիմնականում զարգացած էր այժմյան Մարտունու շրջանի նախալեռնային գյուղերում, պտղաբուծությունը՝ լեռնային բոլոր վայրերում:

Լեռնային Ղարաբաղում լայն տարածում ունեին թթի այգիները (թթի սպիտակ և սև տեսակներ): Թթի օղին, մեղրահամ դոշաբն ու չիրը և հատկապես թարմ թութը բուժիչ հատկություն ունեն ու օգտագործվում են որպես դեղամիջոց:

ա) Արդյունաբերությունը

Արդյունաբերական ժամանակակից ձեռնարկություններ Լեռնային Ղարաբաղում ստեղծվել են Խորհրդային իշխանության տարիներին:

Լեռնային Ղարաբաղի ժամանակակից արդյունաբերությունը ներկայացվում է էլեկտրատեխնիկական, թեթև, սննդի, շինանյութերի արդյունաբերության ճյուղերով և էլեկտրաէներգետիկ տնտեսությամբ:

Արդյունաբերությունը մարզում համեմատաբար արագ զարգացել է 1950-ական թվականներից հետո: Արդեն 1980 թ. դրա համախառն արտա-

դրանքի ծավալը 1940 թ. համեմատությամբ աճել է շուրջ 20 անգամ: Մարզում գործող փոքր հզորություն ունեցող թեթև ու սննդի արդյունաբերության ձեռնարկությունները վերակառուցվել են: Ստեղծվել են նաև ժամանակակից համեմատաբար խոշոր գործարաններ:

Մարզի տարածքում կա երեք հիդրոէլեկտրակայան: Դրանցից համեմատաբար հինը Ստեփանակերտի ՀԷԿ-ն է, որը գործում է 1930-ական թվականներից, ունի շատ փոքր հզորություն և երկար ժամանակ բավարարում էր միայն Ստեփանակերտի համեստ պահանջները: 1940-ական թվականներին կառուցվել է մի փոքր հիդրոէլեկտրակայան Մարտակերտի շրջանի Մադաղիս բնակավայրի մոտ:

Համեմատաբար խոշորը Սարսանգի հիդրոէլեկտրակայանն է, որը կառուցվել է Մարտակերտի շրջանում՝ Թարթառ գետի վրա, շահագործման է հանձնվել 1970-ական թվականներին:

1940 թ. մարզում արտադրվել է ընդամենը 1,51 մլն կվտ. ժամ էլեկտրաէներգիա, իսկ 1986 թ.՝ 57,8 մլն կվտ. ժամ:

Մարզի մեքենաշինական արդյունաբերության միակ ձեռնարկությունը մինչև վերջերս Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանն էր, որը գործում է 1970-ական թվականների սկզբներից: Գործարանը թողարկում է լյումինեսցենտային էլեկտրալամպերի համար անհրաժեշտ արմատուրաներ, լուսավորման համար անհրաժեշտ պարագաներ, ինչպես նաև կուլտուր-կենցաղային նշանակություն ունեցող արտադրանք: Այժմ այստեղ կա նաև կոնդենսատորների ոչ մեծ մեկ գործարան:

Արդյունաբերության ճյուղերի մեջ թողարկվող արտադրանքի ծավալի տեսակետից առաջատարը թեթև արդյունաբերությունն է, որը հիմնականում զարգանում է տեղի հումքի բազայի վրա:

Այժմ մարզում աճեցվող շերամի բոժոժի հիման վրա գործում է մետաքսի գործվածքների խոշոր ձեռնարկություն՝ Բաքվի 26 կոմիսարների անվան «Ղարմետաքսկոմբինատը»: Սա Միության՝ նման ձեռնարկություններից առավել խոշորներից մեկն է:

1940 թ. այս կոմբինատում արտադրվում էր 120 հազ. գծամետր մետաքսյա գործվածք, 1970 թ. այն հասել էր 9,77 մլն գծամետրի, իսկ 1987 թ.՝ 15 մլն. գծամետրի: Ինչպես արդեն նշվել է, մետաքսագործությունը Ղարաբաղում շատ հին պատմություն ունի, սակայն մինչև հեղափոխությունը տնայնագործական բնույթ ուներ: 1926 թ. Ստեփանակերտում գործարկվել է բոժոժը կարժելու առաջին արտադրամասը, որը փաստորեն այսօրվա «Ղարմետաքսկոմբինատի» հիմքն էր: Հետագայում ստեղծվել են նոր արտադրամասեր՝ հագեցված ջուլիակագործական այն ժամանակվա համար կատարելագործված մեքենաներով ու սարքավորումներով: Կոմբինատի վերակառուցումն

իրականացվել է 1980-ական թվականներին, երբ շահագործման են հանձնվել բազմահարկ ընդարձակ արտադրամասերը, որտեղ արտադրական պրոցեսները մեքենայացված և ավտոմատացված են: Սակայն այժմ արտադրական շենքերը և սարքավորումներն արդեն չեն համապատասխանում ժամանակակից պահանջներին: Այստեղ իրականացվում են սկզբնական հումքից՝ բոժոժից մետաքսյա գործվածքների արտադրության բոլոր պրոցեսները, բացառությամբ գործվածքի ներկումից, այսինքն արտադրանքի թողարկման վերջնական պրոցեսից, որը կատարվում էր Ադրբեջանի Շաքի քաղաքի նույնանման ձեռնարկությունում, և փաստորեն ամբողջ արտադրանքը թողարկվում էր վերջինիս անունով: Կոմբինատը հումքն ստանում է մարզից, ինչպես նաև մյուս հանրապետություններից: 1960-ական թվականների սկզբներից բնական հումքի օգտագործմանը զուգահեռ, կոմբինատը մետաքսյա գործվածքներ է արտադրում նաև արհեստական մետաքսաթելից: Դրա շնորհիվ թողարկվող արտադրանքի ծավալը արագ աճել է:

Մետաքսյա գործվածքներից բացի մարզում արտադրվում է նաև զգալի քանակությամբ բամբակյա գործվածք (տարեկան 700 — 720 հազ. մ²): Այդպիսի արտադրանք թողարկող խոշոր ձեռնարկությունը Շուշիի տեղարդկոմբինատն է: Այս կոմբինատը թողարկում է նաև գուլպեղեն (տարեկան 300—350 հազ. զույգ):

Թեթև արդյունաբերության համախառն արտադրանքի ընդհանուր ծավալում զգալի տեղ է գրավում կարի արտադրանքը: Ստեփանակերտի, Շուշի քաղաքի ու շրջկենտրոնների կարի ֆաբրիկաներն ու արհեստանոցները 1980 — 1987 թվականների տվյալներով տարեկան միջին հաշվով տալիս են 10 — 11 մլն ռուբլու արտադրանք:

Վաղուց ի վեր մեծ համբավ ունեն ղարաբաղյան գորգերը: Ստեփանակերտի գորգագործական «Ղարաբաղ» ֆաբրիկան տարեկան թողարկում է հազարավոր քառակուսի մետր գորգ: Գորգագործությունը դեռ շատ հնուց Ղարաբաղի աղջիկների կարևորագույն զբաղմունքներից մեկն է եղել: Նախկինում, չնայած տնայնագործական եղանակով, բայց վարպետորեն այստեղ գործել են գեղեցիկ գորգեր, կարպետներ, ջվալներ, խուրջիններ, որոնք իրենց որակով, դիմացկունությամբ լայն ճանաչում ունեին: Դրանք թանկարժեք իրեր էին համարվում, կտակվում էին զավակներին, տրվում էին որպես օժիտ: Այսօր էլ յուրաքանչյուր ղարաբաղցու տանը, անկախ նրանից, թե որտեղ է ապրում, կարելի է տեսնել նախնիներից կտակված գորգ կամ կարպետ, որոնցից շատերի վրա նաև գործված են գործողի անունը և թվականը:

«Ղարաբաղ» ֆաբրիկայում այժմ գորգեր են արտադրվում մեքենայացված եղանակով, սակայն կարևոր տեղ ունեն նաև ձեռքով գործվող գորգերն ու կարպետները: Դրանք արտահանվում են նաև Միության շատ այլ շրջան-

ներ, արտասահմանյան երկրներ, ցուցադրվում են միջազգային տոնավաճառներում և ցուցահանդեսներում:

Լեռնային Ղարաբաղի թեթև արդյունաբերության համեմատաբար նոր ենթաճյուղը կաշվե կոշկեղենի արտադրությունն է: 1970-ական թվականների սկզբներին Ստեփանակերտում շահագործման է հանձնվել կոշիկի արտադրության խոշոր ֆաբրիկա, որի արտադրանքը հետագա տարիներին արագ թափով մեծացել է: 1971 թվականին մարզում արտադրվել է ընդամենը 72 հազ. զույգ, 1975 թվականին՝ մեկ միլիոն 869 հազ. զույգ, իսկ 1987 թվականին՝ չորս միլիոն 527 հազ. զույգ կոշիկ: Կոշիկի ֆաբրիկայի կառուցումը որոշ դեր է խաղացել Ստեփանակերտ քաղաքի և մոտակա գյուղերի աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման գործում: Շուշի քաղաքում գործում է կաշվի վերամշակման ձեռնարկությունը, որը մատակարարում է տարեկան ավելի քան մեկ միլիոն քառակուսի դեցիմետր կոշտ կաշվեղեն:

Թեթև արդյունաբերությունից հետո թողարկվող արտադրանքի ծավալով հաջորդ խոշոր ճյուղը սննդի արդյունաբերությունն է, որն ունի հացաբուլկեղենի, ոչ ալկոհոլային խմիչքների, գինու-կոնյակի, գարեջրի, պանրի, կաթիլուղի, մսի ձեռնարկություններ: Գործարանային եղանակով հաց է արտադրվում Ստեփանակերտում, Շուշիում, Մարտակերտում, Մարտունիում, Հադրութում: Համարյա բոլոր գյուղական բնակավայրերում հաց են թխում թոնիրներում:

Խմիչքների ձեռնարկությունները (բացառությամբ գարեջրի) միավորված են Ղարաբաղի գինեգործական տրեստի համակարգում, որը հիմնադրվել է 1926 թվականին, Ստեփանակերտում: Տրեստն ունի գինու, սպիրտի, օղու, կոնյակի, ոչ ալկոհոլային խմիչքների արտադրություն: Նրա կազմի մեջ մտնող ձեռնարկությունները տեղաբաշխված են Ստեփանակերտում, Ասկերանում (կառուցվել է 1926 թ.) Կարմիր Շուկայում (կառուցվել է 1927 թ.), Կուրապատկինոյում (Մարտունու շրջան), Գևորգավանում (Մարտունու շրջան), Լեռնինավանում (Մարտակերտի շրջան): «Ղարգինտրեստը» մասնաճյուղ ուներ նաև Բաքվում: 1985 թվականից հետո տրեստի ձեռնարկությունները՝ գինու, օղու, կոնյակի արտադրության ծավալները զգալի չափով կրճատել են, դրա փոխարեն այժմ մեծ չափով ավելացել է ոչ ալկոհոլային խմիչքների և հյութերի արտադրությունը:

1980 թ. մարզում գինու արտադրությունը կազմել է մեկ մլն. 946 հազ. դեկալիտր, կոնյակի արտադրությունը 53,8 հազ. դեկալիտր: 1986 թ. գինու արտադրությունը կազմել է ընդամենը 118 հազ. դեկալիտր, իսկ կոնյակի արտադրությունը՝ 57,5 հազ. դեկալիտր[1]:

[1] Народное хозяйство Азерб. ССР к 70-летию Великого октября, Баку, 1987, стр. 272.

Ստեփանակերտում գործում է սննդի խոշոր կոմբինատ, որը տարբեր տեսակի պտուղներից, հատապտուղներից արտադրում է մեծ քանակությամբ պահածոներ, մուրաբաներ, հյութեր: Մասնավորապես այստեղ պատրաստում են մոշի, հոնի, ընկույզի, կեռասի, սալորի մուրաբաներ, պովիդլո, ջեմ, հյութեր, չիր:

Ասկերանում գործում է գարեջրի գործարան, որը տարեկան թողարկում է ավելի քան 170 հազ. դեկալիտր գարեջուր: Այստեղ արտադրվում է նաև տարեկան 100 — 110 հազ. դեկալիտր ոչ ալկոհոլային խմիչք:

Թողարկվող արտադրանքի ծավալի տեսակետից կարևոր տեղ են գրավում նաև կենդանական յուղի, պանրի, կաթնամթերքների արտադրատեսակները: Այժմ մարզում տարեկան թողարկվում է 6500 — 6600 տոննա կաթնամթերք, 900 — 960 տոննա կենդանական յուղ, 900 — 1000 տոննա պանիր: Ընդհանուր առմամբ Լեռնային Ղարաբաղում գործում են կաթի ընդունման, նախնական վերամշակման, կաթնամթերքների արտադրության շուրջ մեկ տասնյակ օբյեկտներ:

Վերջին տասնամյակում նկատելիորեն բարձրացել է մսի արդյունաբերության տեսակարար կշիռը: 1985 — 1988 թվականներին Ստեփանակերտի մսի կոմբինատը տարեկան թողարկել է 3500 — 4000 տոննա միս ու մսամթերք:

Մարզի արդյունաբերության համեմատաբար հին ճյուղերից է փայտամշակման արդյունաբերությունը: Փայտից երկրագործության ու առօրյա պայմաններում օգտագործվող ամենատարբեր գործիքների ու կենցաղային իրերի արտադրությունը Ղարաբաղի բնակչի կյանքում արմատավորվել է անհիշելի ժամանակներից: Առավելապես Լեռնային Ղարաբաղում փայտագործությունը դարձել է կարևոր արհեստներից մեկը: Լեռնաստանի տարբեր վայրերում կային արհեստանոցներ, որտեղ փայտից պատրաստվում էին գութան, արոր, բահ, եղան, սայլ, ֆուրգոն և այլն: Փայտից այստեղ արտադրվում են նաև երաժշտական գործիքներ՝ թառ, քյամանչա, դհոլ, դափ, զուռնա, դուդուկ, սրինգ: Առավել բազմազան էր կենցաղային պայմաններում օգտագործվող փայտե իրերի արտադրությունը: Մասնավորապես, արտադրվում էին գորգագործական դազգահներ, պահարաններ, սնդուկներ, տակառներ, դույլեր, ճախարակներ, իլիկներ, խմորի ու լվացքի տաշտեր, խոնչա, շերեփ, գդալ և այլն: Մինչև այժմ էլ դրանց զգալի մասը ղարաբաղցու կենցաղում պահպանվում ու օգտագործվում է:

Խորհրդային իշխանության տարիներին փայտամշակությունը դրվեց արդյունաբերական հիմքերի վրա, ստեղծվեցին այդպիսի ձեռնարկություններ մեքենայական աշխատանքի կիրառմամբ: Այս ճյուղն առավել կատարելագործվեց 1950-ական թվականներից հետո: Արտադրությունը հիմնված է մասամբ տեղում մթերվող փայտանյութի, իսկ հիմնականում բերովի հումքի վրա: Մար-

Ղարաբաղյան գինու տեսակներ

զում վերամշակման նպատակով փայտանյութ մթերվում է հիմնականում Մարտակերտի, քիչ չափով նաև Ասկերանի, Հադրութի շրջաններում: Ընդհանուր առմամբ, վերջին տվյալներով (1985 — 1988 թթ.) տարեկան մթերվում է 2000 — 2500 մ³ փայտանյութ: Անհասկանալի է, թե ինչ տրամաբանությամբ մթերված փայտը մատակարարվում էր Ադրբեջանի ձեռնարկություններին, իսկ տեղի կահույքի արտադրության հիմնական հումքը բերվում է երկրի մյուս շրջաններից: Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Ղարաբաղի անտառներում մթերվող փայտանյութի որակն անհամեմատ բարձր է, քան երկրի հեռավոր շրջաններից բերվածինը:

Մարզում (Մարտակերտի շրջանում) արտադրվում է տարեկան 150—170 հազ. մ² մանրատախտակ: Կահույքի արտադրության խոշոր կենտրոնը, ինչպես նշվեց, Ստեփանակերտն է: Այստեղ տարեկան թողարկվում է ավելի քան 6 մլն (1985 — 1988 թթ.) ռուբլու կահույք:

Փայտամշակման արհեստանոցներ և սղոցարաններ կան Մարտակերտում, Մադաղիսում, Վաղուհասում, Քոլատակում, Վանքում, Կարմիր Շուկայում, Ասկերանում, Բադարայում: Նշված վայրերում մշակվում են տեղում մթերվող փայտատեսակները (կաղնի, հաճարենի, լորենի, ընկուզենի), իսկ Ստեփանակերտի կահույքի ֆաբրիկան հիմնականում մշակում է բերովի փայտանյութը:

Մարզի փայտամշակման ձեռնարկություններն արտադրում են կահույքի զանազան տեսակներ, շինարարական իրեր, մանրատախտակ, տակառներ, տեքստիլ արդյունաբերության համար անհրաժեշտ թելակոճեր, մաստրներ և այլ իրեր:

Արդյունաբերության ճյուղերից նշանավոր է նաև շինանյութերի արդյունաբերությունը: Արդյունահանվում է կրաքար, մարմար, ավազ, արտադրվում է քիչ քանակությամբ գաջ, կղմինդր: Ընդհանուր առմամբ, չնայած մարզի տարածքում կան շինանյութերի արտադրության համար անհրաժեշտ հումքային խոշոր ռեսուրսներ, տեղում թողարկվող արտադրանքը շատ հեռու է պահանջարկը բավարարելու մակարդակից:

Տեղական նշանակություն ունեցող շինանյութերի արտադրությամբ զբաղվում են հիմնականում շրջկենտրոններում տեղադրված տեղարդկոմբինատները: Շինանյութերի արդյունաբերության նշանավոր ձեռնարկությունը Ստեփանակերտի շինանյութերի կոմբինատն է: Վերջինս մարմար է արդյունահանում Ասկերանի շրջանի *Հարավ* գյուղի մոտ գտնվող հանքավայրում: Վերջին տվյալներով, այստեղ տարեկան արդյունահանվում է շուրջ 8 հազ. մ³ մարմարի բլոկ, որի որոշ մասը մշակվում և օգտագործվում էր մարզում, իսկ մեծ մասը մատակարարում էր Բաքվի քարամշակման գործարանին:

Մարմարից և կրաքարից մարզում տարեկան արտադրվում են 120—145 հազ. մ² երեսապատման սալեր:

Մարտակերտի շրջանի (շրջկենտրոնի մոտ գտնվող) կրաքարի մեքենայացված հանքավայրում տարեկան արդյունահանվում է 2,5—2,7 մլն. հատ կանոնավոր ձևի շինաքար, որն օգտագործվում է որպես հիմնական որմնանյութ բնակելի ու հասարակական շենքերի կառուցման համար:

Շրջանային տեղարդկոմբինատներում կրաքարից արտադրվում է կիր: 1985 — 1988 թվականներին այս կապակցող նյութի արտադրությունը կազմել է տարեկան 7,5—8,0 հազ. տոննա:

Ընդհանուր առմամբ, տարեկան արտադրվում են նաև 13 — 15 հազ. մ³ երկաթբետոնե տարբեր տեսակի կոնստրուկցիաներ: Փայտից արտադրվող շինանյութերը տարեկան կազմում են 9 — 10 հազ. մ²:

Մարզի համարյա բոլոր շրջաններում արդյունահանվում է լեռնային ու գետի ավազ: Որոշ քանակությամբ շինարարական աղյուս է արտադրվում (1,3—1,5 մլն. հատ.) Ստեփանակերտի աղյուսի գործարանում, կղմինդր արտադրվում է Մարտունիում, Մեծ Թաղլարում և Մոխրաթաղում:

Տեղի կավից որոշ քանակությամբ բրուտագործական իրեր են արտադրվում Մարտունու շրջանի Նոգի գյուղի բրուտանոցում: Սակայն, ինչպես նշվել է, արտադրվող շինանյութերի քանակը բավարարում է մարզի առանց այն էլ շինարարական աշխատանքների ոչ մեծ ծավալի պահանջի փոքր մասը: Հսկայական քանակությամբ շինանյութեր մեծ ծախսերով ու դժվարությամբ բերվում էին Աղդամի, Բարդայի, Ֆիզուլու և Ադրբեջանի մյուս շրջաններից, Բաքվից, Կիրովաբադից և հեռավոր մյուս վայրերից: Սակայն, Ադրբեջանը մեծ խզումներով էր մատակարարում շինանյութը, իսկ վերջին տարիներին այն միտումնավոր կերպով դադարեցրել է:

Մեծ քանակությամբ տարբեր տեսակի շինանյութեր մատակարարվում են Հայկական ԽՍՀ-ից: Ստեփանակերտում, Մարտունիում, Ճարտարում և մարզի մյուս բնակավայրերում բնակելի ու հասարակական շատ շենքեր կառուցվել են Հայկական ԽՍՀ-ից բերված վարդագույն տուֆով: Հայկական ԽՍՀ-ից մատակարարվող շինանյութերի քանակը հատկապես ավելացվել է 1985 թվականից հետո:

բ) Գյուղատնտեսությունը

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հողային ֆոնդը շուրջ 440 հազ. հա է, որից գյուղատնտեսական հողահանդակները կազմում են 215,5 հազ. հա: Քանի որ ինքնավար մարզի սահմաններից դուրս Միլի տափաստանում զգալի արոտավայրեր առհավետ հատկացված են ԼՂԻՄ-ին, ապա դրանք ևս հաշ-

վի առնելով, մարզի հողային ֆոնդը կազմում է 497,9 հազ. հա: Վերջին տվյալներով մարզի ջրովի հողատարածությունները կազմում են ընդամենը 24,5 հազ. հա: Վարելահողերը զբաղեցնում են շուրջ 80,6 հազ. հա տարածություն: Ընդ որում, վարելահողերի տարածությամբ առաջին տեղը մարզում զբաղեցնում են Մարտունու (ավելի քան 23,1 հազ. հա), այնուհետև Մարտակերտի (22,5 հազ. հա), Ասկերանի (20,1 հազ. հա), Հադրութի (11,1 հազ. հա), Շուշիի (3,75 հազ. հա) շրջանները:

Չնայած Մարտակերտի շրջանի տարածությունը ավելի քան երկու անգամ մեծ է Մարտունու շրջանից, սակայն քանի որ առաջինի տարածքի մեծ մասը բարձրալեռնային է ու անտառոտ, ապա նրա վարելահողերի տարածքը մոտավորապես հավասար է Մարտունու շրջանին:

Լեռնային Ղարաբաղի գյուղատնտեսությունն ընդգրկում է բուսաբուծության և անասնապահության բոլոր հիմնական ճյուղերը՝ հացահատիկի մշակություն, այգեգործություն և պտղաբուծություն, բանջարաբոստանային կուլտուրաների աճեցում, խոշոր եղջերավոր անասնապահություն, մանր եղջերավոր անասնապահություն, խոզաբուծություն, թռչնաբուծություն, շերամապահություն:

Բուսաբուծության առաջատար ենթաճյուղը հացահատիկի մշակությունն է: Դեռևս շատ հնուց Արցախ-Ղարաբաղում արմատավորվել է հացահատիկի հիմնական տեսակների՝ ցորենի, գարու, տարեկանի, վարսակի, կորեկի, հաճարի մշակությունը:

Լեռնային Ղարաբաղի համարյա բոլոր գյուղերում առաջնակարգ տեղը զբաղեցնում են հացահատիկային կուլտուրաների ցանքատարածությունները: Ընդհանուր առմամբ մարզի ցանքատարածությունների 36—38 %-ը բաժին է ընկնում հացահատիկային կուլտուրաներին: 1940 թ. մարզի գյուղատնտեսական բոլոր ցանքատարածությունները զբաղեցրել են 82 հազ. հա, 1987 թ.՝ 60,5 հազ. հա: Իսկ հացահատիկային կուլտուրաների ցանքերը 1940 թ. կազմել են 70,6 հազ. հա, 1987 թ.՝ 22,7 հազ. հա: Հացահատիկի ցանքերի կրճատման փոխարեն ավելացվել են հիմնականում կերակուլտուրաների ցանքերը: Հացահատիկի ցանքատարածությունները հիմնականում տեղադրված են դաշտային և նախալեռնային վայրերում: Այդ տեսակետից պայմանները նպաստավոր են հատկապես Մարտունու, Մարտակերտի ու Ասկերանի շրջանների հարթավայրային հողատարածություններում:

Այստեղ աճեցվող հացահատիկային գլխավոր կուլտուրան աշնանացան ցորենն է, որը զբաղեցնում է հացահատիկային բոլոր կուլտուրաների ցանքատարածությունների մինչև 60 %-ը: Զգալի տեղ է զբաղեցնում աշնանացան գարին, որը նույնպես հիմնականում աճեցվում է դաշտային վայրերում: Նախալեռնային և լեռնային մասերում աճեցվում են գարնանացան ցորեն, տարեկան, հաճար:

Ղարաբաղում աճեցվող ցորենը որակական բարձր հատկանիշներ ունի, կարծր է, սպիտակուցի պարունակությունը շատ է: Ղարաբաղի հացահատիկից թխված հացը նուրբ է, փափուկ, բուրումնավետ և համեղ:

Բարձրորակ հացահատիկ աճեցնելու գործում հնուց ի վեր հայտնի են Ճարտար, Հերհեր, Բերդաշեն, Նորշեն, Գիշի, Շեխեր, Մեծ Թաղլար գյուղերը: Բերքատվությունը միջին հաշվով 25 — 27 ց, իսկ վերջին տարիներին՝ ավելի քան 30 ցենտներ է մեկ հա-ից: Հացահատիկի համախառն բերքը 1985—1988 թթ. կազմել է տարեկան մոտ 100 հազ. տոննա:

Մինչև 1960-ական թվականները Լեռնային Ղարաբաղում (Մարտակերտի շրջանում) Ադրբեջանի պահանջով զգալի հողատարածություն զբաղեցված էր բամբակի աճեցման համար: Տեխնիկական այս կուլտուրայի պլանտացիաները կազմում էին մինչև 4000 հա: Հետագայում նպատակահարմար գտնվեց մարզի ցանքաշրջանառությունից հանել բամբակը և դրա փոխարեն ընդլայնել խաղողագործությունն ու պտղաբուծությունը: Տեխնիկական կուլտուրաների ցանքերը զբաղեցնում են ընդամենը 411 հա, որից ծխախոտ՝ 225 հա (1987 թ.):

Տեխնիկականն կուլտուրաներից համարյա թե բոլոր շրջանների նախալեռնային մասերում աճեցվում է միայն ծխախոտ, որի ցանքատարածությունների մեծ մասը բաժին է ընկնում Մարտակերտի շրջանին:

Շատ հնուց Արցախ-Ղարաբաղի բոլոր վայրերում մեծ ուշադրություն էր դարձվում յուղատու վուշի՝ կտավատի աճեցմանը: Դրանից արտադրվում էր մեծ քանակությամբ բարձրորակ ձեթ, որը ղարաբաղցու ընտանիքի գլխավոր սննդամթերքներից մեկն էր: Կտավատի ձեթը օգտագործվում էր համարյա բոլոր ճաշատեսակները պատրաստելիս, դրանով թխում էին Ղարաբաղի գաթա, պատրաստում հացով ճմուռ, ինչպես նաև օգտագործվում էր որպես կարևոր դեղամիջոց: Ընդհուպ մինչև 1950-ական թվականները, մարզի կոլտնտեսությունների մեծ մասը աճեցնում էին յուղատու այդ կուլտուրան: Սակայն հետագայում անհայտ պատճառով ամբողջապես հանվել է գյուղատնտեսության շրջանառությունից: Լեռնային Ղարաբաղի պայմանները նպաստավոր են յուղատու վուշի աճեցման համար: Հաշվի առնելով նրա բուժիչ մեծ նշանակությունը, նպատակահարմար է այդ կուլտուրայի աճեցումը վերականգնել: Ի դեպ, նույն ձևով 50-ական թվականներից մարզի գյուղատնտեսության շրջանառությունից համարյա ամբողջապես հանվել են նաև սիսեռը և ոլոռը, որոնք բարձր սննդարար կուլտուրաներ են:

Լեռնային Ղարաբաղի բուսաբուծության համակարգում զգալի տեղ են գրավում բանջարաբոստանային կուլտուրաները: Հիմնականում դաշտային մասերում աճեցվում են ձմերուկ և սեխ: Սոխ, վարունգ, տաքդեղ, բադրիջան, կաղամբ աճեցվում են դաշտային և նախալեռնային մասերում: Կարտոֆիլ և

լոբի աճեցվում է նախալեռնային հողատարածություններում: Ընդ որում, եթե ձմերուկը, սեխը և բանջարեղենի բոլոր տեսակները դաշտային մասերում աճեցվում է բացառապես ոռոգման միջոցով, ապա կարտոֆիլը աճեցվում է նախալեռնային վայրերում անջրդի պայմաններում: Բարձրորակ կարտոֆիլ աճեցվում է հատկապես Ասկերանի ու Մարտունու շրջաններում: Առավել հռչակված է Չանախչի (այժմ Ավետարանոց), Սարուշեն, Սղնախ, Ննգի, Ղավուխան գյուղերի կարտոֆիլը:

1987 թ. կարտոֆիլի ու բանջարեղենի ցանքերը մարզում կազմել են ընդամենը 1,99 հազ. հա, որից կարտոֆիլ՝ 1,24 հազ. հա:

Մարզի բուսաբուծության գլխավոր ճյուղերից են խաղողագործությունն ու պտղաբուծությունը:

1985 — 1988 թթ. տվյալներով խաղողի ու պտղատու այգիների ընդհանուր տարածությունը շուրջ 15 հազ. հա է: Ընդ որում, միայն խաղողի այգիները զբաղեցնում են ավելի քան 11,9 հազ. հա (1987 թ.), իսկ 1975 թ. դրանք կազմել են 14,5 հազ. հա: Խաղողագործությունը զարգացած է Մարտունու, Մարտակերտի, Ասկերանի ու Հադրութի դաշտային ու նախալեռնային շրջաններում:

Մինչև 1950-ական թվականները Ղարաբաղում խաղողագործությամբ զբաղվում էին հին, պապենական մեթոդներով (քուլիսարի հենակավորման այգիներով), այդ պատճառով բերքատվությունը ցածր էր: 1950-ական թվականների սկզբներից Մարտունու շրջանի Ճարտար գյուղի կոլտնտեսությունում, գյուղատնտեսական արտադրության տաղանդավոր կազմակերպիչ Սուրեն Ադամյանի նախաձեռնությամբ սկսվում են խաղողագործության ինտենսիվ զարգացման աշխատանքները: Կարճ ժամանակամիջոցում Ճարտարի կոլտնտեսության դաշտային և նախալեռնային հողատարածություններում հիմնվում են շպալերային հենասյուներով, ուղիղ շարքերով խաղողի այգիներ, որտեղ հիմնական աշխատանքները մեքենայացվում են:

Սոցիալիստական աշխատանքի հերոս Ս. Ադամյանի նախաձեռնությամբ հիմնադրված խաղողի այսպիսի այգիների հսկայական արդյունավետությունն արագ կերպով ի հայտ է գալիս: Մեքենայացման, ոռոգման համակարգի, ագրոտեխնիկական գիտական մեթոդների արմատավորման շնորհիվ այստեղ խաղողի բերքատվությունը կտրուկ բարձրանում է և առանձին բրիգադներում մեկ հա-ից հասնում է նույնիսկ 300 — 350 ցենտների: Խաղողի այսպիսի բերքատվություն ոչ միայն Ղարաբաղում, այլև Անդրկովկասում առհասարակ երբևիցե չի եղել: Միայն Ճարտարի կոլտնտեսությունը տարեկան տալիս էր 15 — 20 հազ. տոննա խաղող: Խաղողագործության նման եղանակն արագորեն տարածվում է Լեռնային Ղարաբաղի մյուս բոլոր տնտեսություններում: Ճարտարի օրինակով խաղողագործությունը հատկապես արագորեն ընդլայնվում է Մարտակերտի շրջանի դաշտային մասում:

Խաղողի այգի Լեռնային Ղարաբաղում

Այժմ խաղողի այգիների տարածությամբ մարզում առաջին տեղը գրավում է Մարտակերտի շրջանը (ավելի քան 5,1 հազ. հա), հաջորդ տեղերը համապատասխանաբար պատկանում են Մարտունու (ավելի քան 3,8 հազ. հա), Հադրութի (1,34 հազ. հա) և Ասկերանի (0,83 հազ. հա) շրջաններին: Խաղողագործության համար պայմանները նպաստավոր չեն Շուշիի շրջանում:

Սակայն Լեռնային Ղարաբաղում խաղողագործության առավել հին պատմություն և արմատավորված սովորություններ ունեն Մարտունու շրջանի գյուղերը: Այդ տեսակետից առավել հայտնի են Ճարտար, Գիշի, Խնուշինակ, Բերդաշեն, Նորշեն գյուղերը: Հադրութի շրջանում նշանավոր են Էդիլլուի, Հադրութի, Բանազուրի, Ասկերանի շրջանում՝ Խանաբադի, Նախիջևանիկի կոլտնտեսությունները: Իսկ Մարտակերտի շրջանում առավել նշանավորը շրջկենտրոնի տնտեսությունն է:

Խաղողագործությունն այժմ մարզում զարգանում է հիմնականում ոռոգման միջոցով, այգիների շուրջ 70 %-ը ոռոգվում է: Սակայն նախալեռնային վայրերում այն զարգանում է անջրդի պայմաններում: Այդ պատճառով շաքարայնությունն զգալիորեն բարձր է:

Վերջին 15 տարիների տվյալներով մարզում խաղողի համախառն բերքը կազմել է տարեկան 90 — 150 հազ. տոննա:

Լեռնային Ղարաբաղում խաղողագործության համեմատությամբ ավելի

լայն տարածում ունի պտղաբուծությունը: Այս ճյուղը զարգացած է բոլոր շրջաններում և համարյա բոլոր գյուղերում, չնայած պտղատու այգիների տարածությունը զգալիորեն քիչ է խաղողի այգիներից:

Վերջին տվյալներով (1987 թ.) մարզում պտղատու այգիներն զբաղեցնում են շուրջ 1600 հա տարածություն, որից 800 հա-ն բաժին է ընկնում Մարտունու շրջանին: Աճեցվող հիմնական պտուղները խնձորն ու տանձն են: Զգալի են նաև դեղձի, ծիրանի, թզի, նռան, սերկևիլի այգիները: Սակայն Ղարաբաղի պտղատու ծառերի «ադամանդը», անկասկած, *շահ* թթենին է:

Թթի այգիները Ղարաբաղի գյուղացու եկամտի հիմնական աղբյուրներից մեկն են եղել: Թթենին բազմակողմանի տնտեսական և բուժիչ նշանակություն ունի ղարաբաղցու համար: Շահ թութը թարմ վիճակում մեկ-երկու ամիս օգտագործելու դեպքում անգնահատելի դեր է խաղում առողջության համար: Պատահական չէ, որ յուրաքանչյուր ղարաբաղցի, անկախ նրանից թե որտեղ է բնակվում, ամռան ամիսներին (հիմնականում՝ հունիս-հուլիս) աշխատում է լինել իր հայրենիքում թեկուզ մի քանի անգամ թարմ թութ ուտելու համար: Հատկապես շատ օգտակար է, երբ թութը ուտում են առավոտյան, մինչև նախաճաշելը: Ստամոքսաաղիքային տրակտի հիվանդությունների բուժման համար հատկապես շատ կարևոր է ղարաբաղյան սև թութը: Ղարաբաղում թութը հնուց օգտագործվում է նաև դոշաբ պատրաստելու համար, որը նույնպես շատ կարևոր բուժիչ նշանակություն ունի, օգտակար է մրսածության, հազի դեպքում, բուժում է ստամոքսաաղիքային տրակտի հիվանդությունները: Ղարաբաղցին թեյը խմում է թթի դոշաբով: Ղարաբաղում հնուց ընդունված է թթից պատրաստել նաև չիր:

Սակայն թթի ամենակարևոր արժանիքներից մեկը, դրանից օղի ստանալն է: Թթի օղին անգերազանցելի է մյուս բոլոր տեսակի պտուղներից ստացած օղու համեմատությամբ: Այն հիրավի բուժիչ դեղ է, բայց պետք է օգտագործել խիստ չափավոր: Բնիկ ղարաբաղցին դրանից օրական 25 — 50 գրամից ավելի չի օգտագործում: Մրսածության դեպքում էլ թթի օղին օգտակար է, երբ դրանով շփումներ են կատարում: Եվ վերջապես թթի լոգանքների ընդունումը շատ օգտակար է հոդացավերի բուժման համար (թարմ թութը լցնում են որևէ խոր տարողության, օրինակ տակառի մեջ, մի քանի օր մնալուց հետո, երբ սկսվում է նրա ինքնաեփումը, օրական մեկ անգամ 10 — 15 րոպե տևողությամբ կարելի է «լոգանք» ընդունել):

Ինչպես հայտնի է, Լեռնային Ղարաբաղը երկարակեցությամբ աշխարհում առաջնակարգ տեղ է գրավում: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ այդ գործում ոչ պակաս դեր է խաղում ղարաբաղյան անուշահամ շահ թութը:

Այժմ մարզում բոլոր տեսակի թթենու այգիները զբաղեցնում են ավելի քան 2000 հա տարածություն, որից ավելի քան 960 հա-ն շահ թթենու այ-

Խաղողի բերքահավաք

գին է: Դրանից շուրջ 900 հա-ն բաժին է ընկնում Մարտունու, 530-ը՝ Ասկերանի, մնացածը՝ մյուս շրջաններին: Թթի այգիներով վաղուց հանրահայտ են Ճարտար, Գիշի, Խնուշինակ, Մուշկապատ, Նորշեն, Թաղավարդ, Քերթ, Քարահունջ, Մաճկալաշեն և այլ գյուղեր: Լեռնային Ղարաբաղի տարածքում թթենու ամենաընդարձակ այգին գտնվում է Ամարասի հովտում: Այդ այգին ձգվում է 10 կմ երկարությամբ և նախկինում պատկանում էր Ամարասի վանքին:

Բացի շահ թթենուց, Ղարաբաղի կոլտնտեսությունների զգալի մասն ունի *ջեռ* թթենու պլանտացիաներ (թոխմաչար): Դրանք շերամապահության համար են աճեցվում և հիմնականում տարածված են դաշտային մասերում:

Անասնապահությունը. Լեռնային Ղարաբաղն ունի լավ հնարավորություններ անասնապահության զարգացման համար: Դրանք առաջին հերթին շուրջ 117 հազ. հա տարածություն գրավող արոտավայրերն ու շուրջ՝ 3500 հա բնական խոտհարքներն են: Բացի դրանցից մարզում շուրջ 36 հազ. հա տարածություն զբաղեցնում են (1988 թ.) կերակուլտուրաների ցանքերը:

Երկար տարիների միջին տվյալներով մարզի գյուղատնտեսական արտադրության համախառն արտադրանքի մեջ անասնապահության տեսակարար կշիռը կազմել է 40 — 45 %: Իսկ անասնապահության ճյուղերից առաջատարը *խոշոր եղջերավոր անասնապահությունն է*, որին բաժին է ընկնում ամբողջ ճյուղի համախառն արտադրանքի կեսից ավելին:

Արոտային անասնապահության զարգացման համար մարզի բոլոր շրջաններն էլ ունեն ամառային արոտավայրեր: Դրանք հատկապես ընդարձակ են Մարտակերտի, Հադրութի ու Ասկերանի շրջաններում: Որպես ալպյան խոտառատ ամառային արոտավայրեր Մարտակերտի շրջանում հայտնի են Մռով սարի լանջերը, Կարմրասարը (Ալա-Ղայան), Արմենի յայլաղը, Ասկերանի շրջանում Կըրխ կըզի, Կաթրխանայի, Մեծ Քիրսի յայլան, իսկ Հադրութի շրջանում՝ Դիզափայտի լանջերը:

Նախկինում խոշոր եղջերավոր անասունները նույնպես ամռան ամիսներին տեղափոխվում էին ամառային արոտավայրեր: Սակայն այդ հանգամանքը զգալիորեն ազդում էր մթերատվության վրա: Այժմ տավարաբուծությունը (հատկապես կաթնատու) զարգանում է մսուրային եղանակով:

Խոշոր եղջերավոր անասուններ պահում են Լեռնային Ղարաբաղի բոլոր կոլտնտեսություններում, առավելապես դաշտային և նախալեռնային վայրերում գտնվող տնտեսություններում: Ընդ որում, խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակի 35 — 36 %-ը կազմում են կովերը: Զարգացած է նաև գոմշաբուծությունը, որը նկատելի տեղ է գրավում դաշտային վայրերի կոլտնտեսություններում: 1960 — 1987 թթ. մարզի խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կազմել է 84 — 99 հազ. գլուխ (այդ թվում կովեր՝ 30—32

հազ. գլուխ): Առհասարակ խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակով, ինչպես նաև այդ ճյուղի զարգացման հնարավորություններով մարզում առաջին տեղը պատկանում է Մարտակերտի շրջանին: Սակայն մեկ կովի տարեկան միջին կաթնատվությամբ առաջին տեղը պատկանում է Մարտունու շրջանին:

Մեկ կովի միջին կաթնատվությունը Լեռնային Ղարաբաղում միշտ բարձր էր Ադրբեջանի միջին ցուցանիշից: 1975 — 1987 թթ. տվյալներով դա եղել է 1750 — 2420 կգ: Իսկ Մարտունու շրջանում միջին հաշվով նշված ժամանակաշրջանում կազմել է 2000 — 2500 կգ: Այս շրջանում կան կոլտնտեսություններ, որոնք այս ցուցանիշի տեսակետից Անդրկովկասում ռեկորդային տեղ են գրավում և Միության մեջ՝ առաջնակարգ տեղերից մեկը: Օրինակ, Գիշի գյուղի կոլտնտեսությունում վերջին տարիների տվյալներով մեկ կովի տարեկան միջին կաթնատվությունը եղել է 3100 — 3120 կգ, Ճարտարի կոլտնտեսությունում՝ 2780 — 2970 կգ, Բերդաշենի կոլտնտեսությունում՝ 2830 — 2980 կգ և այլն:

Այս ցուցանիշները զգալիորեն բարձր են միութենական միջին ցուցանիշներից:

Ի դեպ, Ճարտար գյուղի կոլտնտեսությունում, որի նախկին ղեկավարի՝ Սուրեն Ադամյանի ղեկավարությամբ ստեղծվել էր ժամանակակից անասնապահական համալիր, կովերի միջին կաթնատվությունը հասել էր շուրջ 4000 կգ-ի: Նրա ողբերգական մահից հետո այդ հանրահայտ կոլտնտեսության ցուցանիշները մեծ չափով իջել են:

Մարտակերտի շրջանում մեկ կովի կաթնատվությունը տարեկան կազմում է 1600 — 1690 կգ, իսկ առանձին կոլտնտեսություններում որոշ չափով բարձր է: Այս շրջանում այդ տեսակետից առաջին տեղը պատկանում է Մարտակերտի շրջկենտրոնի տնտեսությանը (3400 — 3470 կգ), ապա հաջորդում են Թալիշ գյուղի (2130—2220 կգ) և Հոռաթաղի կոլտնտեսությունները (1830 — 1840 կգ):

Ասկերանի շրջանում տարեկան միջին կաթնատվությունը վերջին տարիներին կազմել է 1740 — 1800 կգ, իսկ առանձին տնտեսություններում ավելի բարձր է: Օրինակ, Ղարաբուլաղի տնտեսությունում այն կազմել է 2100 — 2200, Ավետարանոցի տնտեսությունում՝ 2200 — 2260 կգ և այլն:

Մարզում այդ ցուցանիշով վերջին տեղում Շուշվա շրջանն է, որտեղ միջին կաթնատվությունը 1300 — 1380 կգ էր: Այս շրջանի միայն Լիսագորի տնտեսությունում է, որտեղ մեկ կովի տարեկան կաթնատվությունը մարզի միջինից բարձր է՝ 2000 — 2100 կգ:

1975 — 1986 թվականների տվյալներով Լեռնային Ղարաբաղում տա-

րեկան արտադրվում էր 40 — 56 հազ. տ կաթ, 1987 թ.՝ արտադրվել է 39,4 հազ. տոննա:

Անասնապահության մյուս կարևոր ճյուղը *ոչխարաբուծությունն է:* Մինչև 1950-ական թվականները Լեռնային Ղարաբաղում, հատկապես մասնավոր տնտեսություններում զգալի էր այծերի գլխաքանակը: Այժմ դրանց գլխաքանակը մեծ չափով նվազել է: Ոչխարաբուծությամբ զբաղվում են մարզի բոլոր տնտեսությունները: Մանր եղջերավոր անասունների գլխաքանակը 1960 — 86 թթ. կազմել է միջին հաշվով 275 — 300 հազ. գլուխ: Դրանց գլխաքանակը 1987 թ. մի փոքր իջել՝ և կազմել է 264,3 հազ. գլուխ: Անասնապահության այս ենթաճյուղի համար այստեղ կան տափաստանային նպաստավոր պայմաններ: Դաշտային մասում ընդարձակ տարածություններ զբաղեցնում են ձմեռային, իսկ լեռնային վայրերում՝ ամառային, ալպյան հյութառատ խոտածածկով հարուստ արոտավայրերը: Սակայն, վերջիններս նպատակահարմար է օգտագործել ոչ թե մանր, այլ խոշոր եղջերավոր անասնապահության նպատակների համար:

Այստեղ դեռ հին ժամանակներից աճեցվել է ոչխարի «Ղարաբաղ» դմակավոր ցեղը, որը հայտնի է հատկապես համեղ մսով: Չնայած ոչխարի այս ցեղը կարճ և կոշտ բուրդ ունի, այնուհանդերձ ղարաբաղցին գերադասել է բուծել այդ տեսակը, հաշվի առնելով բարձրորակ, համեղ միսը: Հետագայում, կոլտնտեսային սիստեմի արմատավորումից հետո, այստեղ «Ղարաբաղ» ցեղին զուգահեռ արմատավորվել է նաև նուրբ բրդատու մերինոս ցեղի բուծումը: Ի դեպ, այժմ մարզի ոչխարաբուծության մեջ գերակշռում է այս ցեղը: «Ղարաբաղ» դմակավոր ցեղի ոչխարներ հիմնականում աճեցնում են մասնավոր տնտեսությունները: Միջին հաշվով մեկ ոչխարը տարեկան տալիս է մոտ 3 կգ բուրդ: Ոչխարաբուծությամբ Ղարաբաղում հատկապես հայտնի են Ճարտարի, Մարտակերտի, Նորշենի, Գիշու, Թալիշի, Տողի, Խանաբադի, Բերդաշենի և մյուս գյուղերի կոլտնտեսությունները:

Լեռնային Ղարաբաղի անասնապահության համալիրում այժմ բարձր արդյունավետ ճյուղ է դարձել *խոզաբուծությունը:* Նախկինում խոզաբուծությունը համեմատաբար զարգացած է եղել այս լեռնաշխարհի հաճարենու և կաղնու անտառներով հարուստ գյուղերում: Այդ առումով վաղուց հայտնի էին Մեծ Թաղլար, Տումի, Հաթերք, Վաղուհաս, Չլդրան, Վանք, Սեյիդիշեն, Ավետարանոց, Ննգի, Ղավախան, Քռասնի ու այլ գյուղեր: Նախկինում խոզաբուծությունը զարգացած էր նաև այն գյուղերում, որոնք ունեին թթի ընդարձակ այգիներ: Դրանցից նշանավոր էին Թաղավարդ, Մաճկալաշեն, Հերհեր, Խերխան, Մսմնա, Կոլխոզաշեն և այլ գյուղերը:

Մինչև 1930-ական թվականներն այս լեռնաստանում աճեցվում էին հիմնականում սևամազ, մսատու խոզեր: Հետագայում այստեղի տնտեսությու-

ներում արմատավորվում է մսաճարպատու սպիտակ ցեղի խոշոր խոզերի բուծումը: Տոհմային խոզաբուծությամբ մարզում նշանավոր են դառնում Ճարտարի, Մարտակերտի, Լենինավանի, Չայլուի, Հաթերքի, Տողի, Ավետարանոցի, Վանքի և այլ տնտեսություններ: Խոզերի գլխաքանակը 1980-ական թվականներին հասցվել է 75 — 94,5 հազ. գլխի[1]: 1987 թ. դրանց գլխաքանակը կազմել է 85,2 հազ.: Այժմ խոզաբուծությունը մարզի մսի արտադրության գլխավոր ճյուղն է: Այստեղ արտադրվող մսի շուրջ 50 %-ը բաժին է ընկնում այս ճյուղին: Իսկ ընդհանուր առմամբ Ադրբեջանում արտադրվող խոզի մսի ավելի քան 40 %-ը տալիս էր Լեռնային Ղարաբաղը:

Անասնապահության մյուս ճյուղերից այստեղ զգալի դեր են խաղում թռչնաբուծությունը, շերամապահությունը, մեղվաբուծությունը: Թռչնաբուծությունը զարգացած է բոլոր գյուղերում: Կոլտնտեսություններից բացի, որոնք ունեն հիմնականում ձվատու թռչնաբուծական ֆերմաներ, հավեր, բադեր և հնդկահավեր պահում են համարյա բոլոր մասնավոր տնտեսությունները:

Թռչնաբուծությունը արդյունաբերական հիմքերի վրա դնելու նպատակով, Ստեփանակերտում, Մարտակերտում և այլուր ստեղծվել են ինկուբատորային կայաններ, որտեղ աճեցվում են ձվատու հավաճտեր ու մատակարարվում ոչ միայն կոլտնտեսություններին, այլև քաղաքի ու գյուղի մասնավոր տնտեսություններին: Թռչնաբուծությունը հատկապես զարգացած է դաշտային և նախալեռնային տնտեսություններում: Ձվատու թռչնաբուծական խոշոր ֆերմաներ ունեն Ճարտարի, Մարտակերտի, Լենինավանի, Քերթի, Բերդաշենի, Նորագյուղի, Խանաբադի, Թաղավարդի, Մաճկալաշենի տնտեսությունները:

1960 — 1986 թթ. մարզում մսի արտադրությունը եղել է տարեկան 6 — 11,2 հազ. տ, ձվինը՝ 19 — 32 մլն. հատ, բրդինը՝ 561 — 612 տ: 1987 թ. արտադրվել է 10,4 հազ. տ միս, 12,5 մլն. հատ ձու, 395 տ բուրդ:

Ընուց Ղարաբաղում արմատավորվել է նաև *շերամապահությունը:* Շերամի որդի կերային բազան թթենու տերևն է, իսկ թթենու պլանտացիաները տեղաբաշխված են հարթավայրային և նախալեռնային վայրերում: Այդ գոտիների տնտեսությունները զբաղվում են շերամապահությամբ, այդ պատճառով դրանք բոլորն էլ ստեղծել են իրենց սեփական կերային բազան: Այսինքն աճեցնում են լայնատերև թթենու պլանտացիաներ: Շատ կոլտնտեսություններում շերամապահությունը եկամտի գլխավոր աղբյուրներից մեկն է: Մարտունիում, Հադրութում, Լենինավանում և մարզի այլ վայրերում գործում են բոժոժի մթերման կետեր, որտեղ հանձնվում և նախնական մշակման է ենթարկվում կոլտնտեսություններում աճեցվող բոժոժը: Բնական մետաքսի այդ հումքը մատակարա-

[1] Народное хозяйство Азерб. ССР к 70-летию Великого Октября, стр. 275, Баку, 1987.

րում է Ստեփանակերտի մետաքսի կոմբինատին, որտեղ այն վերջնական մշակման է ենթարկվում:

Լեռնային Ղարաբաղում շատ հին պատմություն ունի *մեղվաբուծությունը:* Այս լեռնաստանի նախալեռնային և լեռնային վայրերի ալպյան փարթամ, ծաղկառատ արոտավայրերը շատ նպաստավոր են մեղվաբուծության համար:

Մինչև 1930-ական թվականները Ղարաբաղում մեղուները պահում և բուծում էին քթոցներում: Արտադրված մեղրը դեղին և շատ անուշահոտ ու բուժիչ էր: Գյուղացիների մեծ մասն ուներ սեփական մեղվաքթոցներ: Կոլտնտեսությունների կազմավորումից հետո մեղվաբուծությունն արմատավորվել է նաև կոլտնտեսություններում: Նախալեռնային գոտու շատ կոլտնտեսությունների եկամտի զգալի աղբյուրներից մեկն էր մեղվաբուծությունը:

Հետագա տարիներին անհիմն կերպով այս կարևոր բնագավառին լուրջ ուշադրություն չի դարձվել և շատ կոլտնտեսություններ բոլորովին չեն զբաղվում մեղվաբուծությամբ: Սակայն համարյա թե բոլոր գյուղերում զգալի թվով անհատ գյուղացիներ ունեն իրենց սեփական մեղվաընտանիքները: Մեղվաբուծության զարգացման համար պայմանները հատկապես նպաստավոր են Մարտակերտի, Ասկերանի, Հադրութի շրջաններում, որտեղ լեռնալանջային ծաղկառատ տարածությունները ավելի ընդարձակ են:

Շատ հնուց Ղարաբաղը հանրահայտ է եղել *ձիաբուծությամբ:* Ղարաբաղյան նժույգներն իրենց արտաքին գեղեցկությամբ, դիմացկունությամբ և արագավազությամբ հանրահայտ են: Այդպիսի նժույգները պատմական Արցախ-Ղարաբաղի միջազգային առևտրի գլխավոր ապրանքների թվին էին պատկանում: Ընդհուպ մինչև 1950-ական թվականները ղարաբաղցիների համար տրանսպորտի գլխավոր միջոցը ձին էր: Իսկ նախկինում այն նաև հողագործության մեջ օգտագործվող գլխավոր ուժն էր: Գյուղացու ունևորության աստիճանը բնութագրող կարևոր չափանիշ էր ձի ունենալը:

Մինչև 1950-ական թվականների վերջերը մարզի կոլտնտեսություններում ձիաբուծությունը դեռ կարևոր դեր ուներ: Ձիու ֆուրգոնները օգտագործվում էին գյուղատնտեսական մթերքները տեղափոխելու համար և բոլոր կոլտնտեսություններն ունեին իրենց ձիաբուծական տնտեսությունը:

Գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացումը, տրանսպորտային մեքենաների լայն կիրառումը խիստ բացասաբար ազդեցին անասնապահության այս օգտակար ճյուղի վրա: Այժմ հազվադեպ կոլտնտեսություններ կան, որ պահպանում են ձիաբուծությունը: Մինչդեռ հատկապես լեռնային վայրերում գտնվող կոլտնտեսությունների համար փոքր տարածությունների վրա գյուղատնտեսական մթերքների, սերմի, գոմաղբի ու հանքային պարարտանյութերի տեղափոխությունը, ինչպես նաև այլ աշխատանքներ նպատակահարմար է իրականացնել ձիաուժի օգտագործմամբ:

գ) Տրանսպորտը

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ներշրջանային տրանսպորտային կապերն իրականացվում են *ավտոտրանսպորտով:* Ավտոճանապարհներով մարզի վարչական կենտրոն Ստեփանակերտը կապված է շրջկենտրոնների հետ: Շրջկենտրոնները գյուղերի հետ նույնպես կապված են ավտոճանապարհներով, սակայն դրանց մեծ մասը բարեկարգ չեն և չեն համապատասխանում նորմալ պահանջներին: Առավել կարևոր դեր խաղացող ավտոխճուղիներն են՝ Ստեփանակերտ-Ասկերան-Աղդամ-Մարտակերտ, Ստեփանակերտ-Աղդամ-Մարտունի-Ֆիզուլի-Հադրութ, Ստեփանակերտ-Շուշի, Ստեփանակերտ-Ննգի-Մարտունի, Ստեփանակերտ-Կարմիր Շուկա-Ճարտար-Մարտունի ճանապարհները: Մարզի միջշրջանային տրանսպորտային կապերը նույնպես հիմնականում իրականացվում են ավտոտրանսպորտով: Այս տեսակետից հատկապես խոշոր դեր խաղացողները Ստեփանակերտ-Աղդամ-Եվլախ-Բաքու, Ստեփանակերտ-Աղդամ-Եվլախ-Կիրովաբադ-Երևան, Ստեփանակերտ-Շուշի-Գորիս-Ջերմուկ-Երևան ավտոճանապարհներն են: Ավտոտրանսպորտի բեռնաշրջանառությունը առավել արագորեն աճել է 1950-ական թվականներից հետո: Եթե 1953 թ. տրանսպորտի այդ ձևով տեղափոխվել է 48,1 հազ. տ բեռ, ապա 1960 թ. այն հասել է 368,7 հազ. տ-ի, 1970 թ.՝ 719 հազ. տ-ի, իսկ 1975 թ.՝ 1467 հազ. տոննայի: Հետագա տարիներին այն մեծ չափերով աճել է: Տրանսպորտի այդ ճյուղը վճռական դեր է խաղում նաև ուղևորների տեղափոխման բնագավառում: Եթե 1953 թ. տեղափոխվել է 70,8 հազ. ուղևոր, ապա 1975 թ. այն հասել էր արդեն 8 մլն. 373 հազարի:

Մարզի տնտեսական կյանքում 1970-ական թվականներից զգալի դեր է խաղում երկաթուղային տրանսպորտը: Աղդամ-Ստեփանակերտ երկաթուղու (25 կմ) շահագործումից հետո մասսայական բեռների (որմնանյութ, փայտանյութ, սև մետաղներ, քիմիկատներ, կահույք, թեթև ու սննդի արդյունաբերության արտադրանք և այլն) մեծ մասը, որը նախկինում ավտոմեքենաներով տեղափոխվում էր հիմնականում Եվլախ կայարանից, այժմ Ստեփանակերտ է հասցվում երկաթուղով:

Բացի բեռնափոխադրումներից երկաթուղով իրականացվում է նաև ուղևորների միջմարզային փոխադրումների զգալի մասը: Այդպիսի փոխադրումներ կատարվում են Ստեփանակերտից Բաքու, Կիրովաբադ, Թբիլիսի, Մոսկվա և Սև ծովի առափնյա քաղաքներ և հակառակ ուղղությամբ:

Մարզի տնտեսական կյանքում կարևոր երևույթ էր նաև *օդային ուղիների* բացումը: Բավականին ժամանակ է, ինչ Ստեփանակերտի օդանավակայանից ՅԱԿ-40 հարմարավետ օդանավերը թռիչքներ են կատարում դեպի Երևան, Բաքու, Կիրովաբադ: 1988 թ. օգոստոսի 21-ին Ստեփանակերտի օդանավա-

կայանում առաջին անգամ վայրէջք կատարեց ՅԱԿ-40 ինքնաթիռը Լենինականից: Տարեց-տարի մեծ չափերով ավելանում է ուղևորների տեղափոխությունը օդային տրանսպորտով: Սակայն Ստեփանակերտի օդանավակայանն իր հնարավորություններով, սպասարկման մակարդակով ու ձևերով չի համապատասխանում ժամանակակից պահանջներին: Թռիչքադաշտը վերակառուցելու, օդանավակայանի համապատասխան շենք կառուցելու, ուղևորների սպասարկման համապատասխան պայմաններ ստեղծելու դեպքում հնարավորություն կլինի տրանսպորտի այդ շատ արդյունավետ ձևը առավել մատչելի դարձնել Ղարաբաղի բնակչության աճող պահանջներին, գործողության մեջ դնել ավելի հզոր ինքնաթիռներ, օդային կապեր ստեղծել երկրի մյուս քաղաքների հետ:

Մարզի տրանսպորտային կապերի մեջ ուրույն տեղ ունի *խողովակաշարային տրանսպորտը*: Եվլախ-Աղդամ-Ստեփանակերտ-Գորիս-Նախիջևան գազամուղի կառուցումից հետո (1980-ական թվականների սկզբներին) մարզի բնակավայրերի զգալի մասը բնական գազ է ստանում տրանսպորտի այդ ձևով: Դա նկատելի չափով բարելավել է բնակչության մի մասի (Մարտակերտի, Ասկերանի շրջանների, Ստեփանակերտ, Շուշի քաղաքների) կենցաղային պայմաններում, ձեռնարկություններում օգտագործվող վառելիքի մատակարարման վիճակը:

Էլեկտրոնային տրանսպորտի միջոցով մարզի բոլոր գյուղերին մատակարարվում է էլեկտրաէներգիա: Անդրկովկասյան միասնական էներգահամակարգից բարձրավոլտ էլեկտրահաղորդիչ գծերը հասնում են բոլոր շրջանների բնակավայրերը: Սակայն, ընդհանուր առմամբ, մարզի տրանսպորտի այժմյան վիճակը շատ հեռու է պահանջվող մակարդակից: Առավել անմխիթար վիճակում են մարզի ներքին ճանապարհները:

Մարզի սոցիալ-տնտեսական կյանքի վրա բացասաբար է անդրադառնում այն հանգամանքը, որ մինչև այժմ Հայկ. ԽՍՀ-ի հետ ուղիղ, կարճ, հարմար ու հուսալի ճանապարհ չկա: Դա հնարավոր է ստեղծել Գորիս-Լաչին-Ստեփանակերտ անհամեմատ կարճ ուղիով, ինչպես նաև Ջոդ-Մարտակերտ ուղղությամբ:

6. ԿՈՒԼՏՈՒՐ-ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Արցախ-Ղարաբաղը հայ հնագույն մշակույթի զարգացման գործում ունի շատ կարևոր դեր: Դեռևս 5-րդ դարի սկզբներին, երբ Մ. Մաշտոցը հայ գրերի գյուտից հետո Հայաստանի տարբեր վայրերում դպրոցներ էր բացում, նա, ինչպես նշվել է, մի դպրոց էլ բացեց Արցախի հանրահայտ Ամարաս վանքում: Հետագայում, հատկապես 10 — 13 դարերում ուսումնարաններ են գործել Գանձասարի, Երեքմանկուք, Գտչա և Արցախի շատ այլ վանքերին կից: Ավելի ուշ 18 — 19-րդ դարերում շատ գյուղերում կազմակերպվել են ծխական դպրոցներ: Սակայն Ղարաբաղի կրթական կյանքում հատկապես կարևոր դեր սկսեցին խաղալ Շուշի քաղաքում 1820-ական թվականներից հետո բացված դպրոցները: Նշենք, որ Շուշի քաղաքում գրատպագրությունն ավելի շուտ է սկսվել, քան Երևանում, Բաքվում և Անդրկովկասի մյուս քաղաքներում: Սա հիմնականում պետք է բացատրել Արևմտյան Եվրոպայի շատ խոշոր մշակութային կենտրոնների հետ ղարաբաղցիների ստեղծած կապերով ու գիտության, կրթության նկատմամբ նրանց ունեցած մեծ հետաքրքրությամբ, մտահոգությամբ:

1827 թ. Շվեյցարիայի Բազել քաղաքի Ավետարանական միսիոներների ընկերության անդամներ Ա. Դիտրիխն ու Ֆ. Զարեմբան Շուշի քաղաքում կազմակերպում են դպրոց, ինչպես նաև տպարան: Այս դպրոցը հիմնականում կրոնական նշանակություն ուներ, բայց խոշոր դեր է խաղացել մի շարք գիտելիքների դասավանդման բնագավառում: Մասնավորապես դասավանդվում էին կրոն, գրաբար, աշխարհաբար, թվաբանություն, աշխարհագրություն: Հիմնադրվում է նաև տպագրական գործը: 1828 թ. Շուշիում լույս է տեսնում առաջին գիրքը՝ «Պատմութին սուրբ գրոց»[1]:

Դրանից հետո արագորեն տպագրվում է նաև հայոց լեզուն, գրականությունը, պատմությունը ուսումնասիրելու համար անհրաժեշտ դասագրքեր, ձեռնարկներ, ուղեցույցներ: Կարևոր է հիշատակել, որ Շվեյցարական նշված ընկերությունը Շուշիում իրենց ստեղծած դպրոցի գոյության տարիներին (8 — 9 տարի) հայերեն հրատարակել են 11679 օրինակ գիրք: Սակայն ցարական կառավարությունը այդ ընկերության գործունեությունը դադարեցնում է, նրանց դպրոցը փակվում է: Դրանից հետո Ղարաբաղում կրթական գործով ակտիվորեն զբաղվում է տեղի հայ լուսավորչական եկեղեցու թեմը՝ Բաղդասար Հասան Ջալալյանի ղեկավարությամբ:

---

[1] *Մ. Դ. Ավագյան*, Էջեր Լեռնային Ղարաբաղի կուլտուր-կրթական կյանքի պատմությունից, Երևան, 1982, էջ 6:

Լեռնաշխարհի կրթական կյանքում անգնահատելի դեր են խաղում գավառական, թեմական և ռեալական դպրոցները: Առավել հանրահայտը Շուշվա թեմական դպրոցն էր, որը բացվել է 1838 թ. հունիսի 22-ին: Շուշվա թեմական դպրոցը միջնակարգ կրթություն տվող դպրոց էր: Ի դեպ, այս դպրոցի շատ սաներ հետագայում դարձել են հայագիտության ու այլ բնագավառների խոշոր դեմքեր: 1857 — 58 թվականներին այդպիսի դպրոցներ են բացվել նաև Գանձասարում և Ամարասում: Իսկ առհասարակ 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին Ղարաբաղի շատ գյուղերում գործում էին հինգ տարվա ուսուցմամբ դպրոցներ: Իսկ Շուշի քաղաքում թեմական դպրոցից բացի կային նաև յոթնամյա և միջնակարգ արական դպրոցներ, ինչպես նաև ռուսական յոթնամյա օրիորդաց դպրոց:

Խոշոր երևույթ էր նաև 1864 թ. Շուշիում Մարիամ Հախումյանի ջանքերով «Ղարաբաղի տիրամայր սուրբ Մարիամ օրիորդաց հայկական միջնակարգ դպրոցի» բացումը: Մինչ այդ այս լեռնաշխարհում առհասարակ չկային դպրոցներ, որտեղ կարող էին սովորել աղջիկները: Մարիամ Հախումյանի ջանքերով բացված դպրոցում աղջիկներին սովորեցնում էին մայրենի լեզու, գրականություն, վայելչագրություն, նկարչություն, ձեռագործություն:

Շուշի քաղաքի դպրոցներում, ինչպես նշվել է, տարբեր ժամանակներում դասավանդել են Պ. Շամշյանը, Պ. Պռոշյանը, Ղ. Աղայանը, Վ. Փափազյանը, Լեոն, Հր. Աճառյանը և հայ մշակույթի այլ խոշոր դեմքեր: Դրանք բոլորն էլ մեծ գովեստով են խոսել Շուշի քաղաքի, Ղարաբաղի ու ղարաբաղցիների մասին:

Պերճ Պռոշյանը Շուշիում դասավանդել է հայ գրականություն, հայոց լեզու և պատմություն: Թեմական դպրոցում երկար ժամանակ (1878 թվականից) աշխատել է Ղազարոս Աղայանը: Այստեղ է նա գրել իր ստեղծագործությունների զգալի մասը: Աղայանը իր հուշերում նշում է, որ Ղարաբաղում ինքը որպես ուսուցիչ նման էր ձագեր պահող թխսկան հավի... Այսպիսով պարզ է դառնում հումանիստ գրողի անսահման սերն իր աշակերտների նկատմամբ:

Վ. Փափազյանը Շուշիի դպրոցներում սկսել է դասավանդել 1910 թվականից: Նա միաժամանակ այստեղ հրատարակվող «Ղարաբաղ» թերթի խմբագիրն էր:

Ընդհանուր առմամբ 1914 — 15 ուս. տարում Լեռնային Ղարաբաղի այժմյան տարածքում գործում էին 49 դպրոց, ուր սովորում էին 4010 աշակերտ, ուսուցիչների թիվը հասնում էր ընդամենը 79-ի[1]: Բարձրագույն կրթություն ստանալու նպատակով ղարաբաղցի երիտասարդները մեկնում էին արտասահմանյան երկրներ, հատկապես Գերմանիա, Անգլիա, Ֆրանսիա, Բելգիա, Շվեյցարիա, Ռուսաստանի քաղաքներից՝ Պետերբուրգ, Մոսկվա, Կիև, Խարկով, Օդեսա և այլուր: Այդտեղ էլ նրանք շփվելով, ծանոթանալով մարքսիստական-հեղափոխական մտքին, խորանալով գիտության տարբեր բնագավառներում, հետագայում դարձել են խոշոր գործիչներ:

Մինչև խորհրդային կարգերի հաստատումը Լեռնային Ղարաբաղում, առավելապես Շուշի քաղաքում, մեծ աշխատանքներ էին կատարվում տպագրական, թատերական, երաժշտական գործի և այլ բնագավառներում: Այդ մասին նպատակահարմար ենք համարել նշել Շուշի քաղաքին վերաբերող հատվածում:

Տպագրական գործի զարգացմանը մեծապես նպաստեց Ղարաբաղի հայոց թեմական դպրոցի տպարանը, որտեղ տպագրվում էին դասագրքեր, գիտական ուսումնասիրություններ, օտար լեզուներից արված թարգմանություններ:

1870-ական թվականներից աշխուժանում են սեփական պարբերական մամուլի ստեղծման աշխատանքները: Մասնավորապես 1874 թ. ապրիլին լույս է տեսնում «Հայկական աշխարհ» ամսագրի առաջին համարը, 1882 թվականից՝ «Գործ» հանդեսը, հետագայում «Ծիածան», «Քնար խոսնակ», «Ղարաբաղ», «Շուշինսկի լիստոկ», «Շուշինսկայա ժիզն», «Նեցուկ» ու այլ հանդեսներ, թերթեր: Հրատարակչական գործը Շուշիում ավելի է աշխուժանում 1881 թվականից, երբ այստեղ բացվում է Միրզաջան Մահտեսի-Հակոբյանի տպարանը:

Դրանց զուգահեռ Ղարաբաղում այդ ժամանակներից սկսվում են ընթերցարանների, գրադարանների, ակումբների կազմակերպման աշխատանքներ: 1865 թ. Շուշիում բացվում է առաջին հասարակական ընթերցարանը, 1878, 1888, 1889 թվականներին այստեղ բացվում են ավելի հարուստ գրադարան-ընթերցարաններ:

1882 թ. Շուշիում բացվում է մի մասնավոր ակումբ, որն ուներ հարմարավետ թատերական դահլիճ, տարբեր խաղերի մի քանի սենյակ: Այստեղ տրվում էին ներկայացումներ, համերգներ:

Խանքենդում (այժմ Ստեփանակերտ) կար մշտական մի թատրոն, որտեղ ներկայացումներ էին տրվում ռուսերեն, գործում էր մեկ գրադարան:

Սակայն Ղարաբաղի թատերական կյանքի աշխուժացումը կապված էր Շուշիի Խանդամիրյան թատրոնի հետ:

19-րդ դարի վերջերին ու 20-րդ դարի սկզբներին Շուշին դարձել էր Անդրկովկասի առավել հանրահայտ մշակութային կենտրոններից մեկը, որտեղ աշխատում կամ ելույթներ էին ունենում հայ գրականության, մանկա-

[1] Достижение Нагорного Карабаха в девятой пятилетке, Степанакерт, 1976 г., стр. 131.

վարժության, երաժշտության և այլ բնագավառների խոշոր գործիչներ:

Առողջապահության բնագավառում նախկինում միայն մեկ փոքր հիվանդանոց էր գործում Շուշիում (45 մահճակալով) և երկու բուժկետ Ճարտար և Նորշեն գյուղերում: Կային աննշան քանակությամբ բժիշկներ (ընդամենը չորս բժիշկ և այդքան էլ բուժակ): Գյուղական վայրերում լայնորեն կիրառվում էին ժողովրդական բժշկության մեթոդները, համարյա բոլոր գյուղերում կային հեքիմներ, սնախչիներ: Սակայն, ղարաբաղցի բարձրագույն կրթություն ունեցող նշանավոր բժիշկներ էին աշխատում Բաքվում, Թիֆլիսում, Մոսկվայում, Պետերբուրգում, Կիևում և մյուս քաղաքներում:

Ղարաբաղի կուլտուր-լուսավորական կյանքում արմատական փոփոխություններ սկսվեցին 1920-ական թվականների սկզբներից, խորհրդային կարգեր հաստատվելուց հետո: Այս բնագավառում իրականացված առաջին հույժ կարևոր աշխատանքներից մեկը ժողովրդական կրթության լայն ցանց ստեղծելն էր: Արդեն 1922 — 1923 ուսումնական տարում Լեռնային Ղարաբաղում գործում էին 79 դպրոց, ուր սովորում էին 4375 աշակերտ, իսկ ուսուցիչների թիվը հասնում էր 140-ի: Այդ նույն ուսումնական տարում Շուշիում բացվում է մանկավարժական ուսումնարան և բանֆակ, Ստեփանակերտում՝ գյուղատնտեսական տեխնիկում, Հադրութում՝ մանկավարժական տեխնիկում, որոնք կարևոր դեր խաղացին մանկավարժական և գյուղատնտեսական կադրեր պատրաստելու բնագավառում:

Շուշի քաղաքի մանկավարժական բանֆակը և Հադրութի մանկավարժական տեխնիկումը մի քանի տարի գործելուց հետո փակվել են: Հետագայում 1939—1953 թվականներին, սկզբում Շուշիում, այնուհետև Ստեփանակերտում գործել է երկամյա ուսուցչական ինստիտուտ, որը կարևոր դեր է խաղացել հայոց լեզվի ու գրականության, ռուսաց լեզվի, մաթեմատիկայի, պատմության, քիմիայի, կենսաբանության ուսուցիչներ պատրաստելու գործում:

1970-ական թվականներին Ստեփանակերտում բացվում է մանկավարժական ինստիտուտ՝ հայկական, ռուսական և ադրբեջանական բաժիններով:

Կրթական գործի արագ զարգացման մասին պատկերացում կազմելու համար նշենք, որ 1923—1924 ուս. տարում մարզում դպրոցների թիվը հասել էր 104-ի, աշակերտների թիվը շուրջ 7687-ի, իսկ ուսուցիչների թիվը 222-ի: Իսկ 1930 թվականին այստեղ աշխատում էր ավելի քան 2 հազար ուսուցիչ: 1940—1941 թթ. ուս. տարում մարզում գործում էր 196 դպրոց, իսկ 1970—1971 թթ. ուս. տարում կար 216 դպրոց 40,3 հազ. աշակերտով:

Վերջին տվյալներով (1987 թ.) Լեռնային Ղարաբաղի դպրոցների թիվը հասնում էր 195-ի, որտեղ սովորում է շուրջ 32 հազար աշակերտ: Ուսուցիչների թիվը հասնում է 4364-ի, որոնց բացարձակ գերակշռող մասն ունեն բարձրագույն կրթություն: Մարզի ուսուցիչներից մեկը (Ասկերանի շրջանի

Ավետարանոց գյուղի միջնակարգ դպրոցի դիրեկտոր, ֆիզիկայի մասնագետ Ի. Աթայանը) արժանացել է ԽՍՀՄ ժողովրդական ուսուցչի կոչման, իսկ 50 ուսուցիչներ ունեն հանրապետության վաստակավոր ուսուցչի կոչում: Դպրոցների որոշ մասը տեղավորված է նորակառույց հարմարավետ շենքերում, ունեն լաբորատորիաներ, աշխատում են կաբինետային սիստեմով: Միջնակարգ բոլոր դպրոցները (դրանց թիվը հասնում է 81-ի) ունեն բազային ձեռնարկություններ, որտեղ աշակերտների հետ անց են կացվում պրակտիկ աշխատանքներ: Սակայն, դպրոցների մեծ մասն էլ դեռևս տեղավորված է հին և հարմարություններից զուրկ շենքերում: Սոցիալ-տնտեսական անհրաժեշտ պայմանների բացակայության պատճառով լեռնային գյուղերի դպրոցների աշակերտների թիվը խիստ կրճատվել է, զգալի թվով դպրոցներ փակվել են:

Ինչպես ցույց են տալիս փաստերը, 1970 թվականից հետո ընկած ժամանակաշրջանում մարզի դպրոցների թիվը կրճատվել է 21-ով, իսկ աշակերտների թիվը՝ շուրջ 8 հազարով, որը մտահոգվելու տեղիք է տալիս:

Մարզում գործում է, մեկ բարձրագույն ուսումնական հաստատություն՝ *Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը*, որտեղ ուսանողների թիվը հասնում է 2100-ի (1987 թ.):

Գործում են միջնակարգ մասնագիտական 6 հաստատություններ՝ բժշկական, երաժշտական, մշակույթի, մանկավարժական ուսումնարաններ և երկու գյուղատնտեսական տեխնիկում: Դրանց սովորողների թիվը հասնում է 2,4 հազարի (1987):

1920-ական թվականների սկզբներից արագորեն ընդլայնվում է գրադարանների, ակումբների, ընթերցարանների, հետագայում նաև մշակույթի պալատների ցանցը:

1924 թ. բացվել է մարզի ամենախոշոր՝ Ստեփանակերտի Մ. Գորկու անվան մարզային գրադարանը: Նույն թվականին խրճիթ-ընթերցարաններ, ակումբներ են բացվել նաև Ճարտար, Տումի, Բալլուջա և մյուս գյուղերում:

1940 թվականին մարզում գործում էր մասսայական 66 գրադարան իսկ 1985 թվականին դրանց թիվը հասել է 231-ի, որոնք ունեին 1,6 մլն գիրք:

Այժմ բոլոր գյուղերը անխտիր ունեն ակումբ, որոշ գյուղերում երկու և ավելի են դրանց թիվը: Այսպես, Ճարտար գյուղում գործում են երեք ակումբներ և մեկ հիասքանչ մշակույթի պալատ: Վերջին տվյալներով մարզի ակումբների թիվը հասնում է 265: Մշտական գործող կինոտեղակայումների թիվը հասնում է 206-ի: Լեռնային Ղարաբաղի խորհրդային ժամանակաշրջանի կուլտուրական կյանքի վերելքի գործում նշանակալից դեր խաղացին թատրոնի, ինքնագործ, սիրողական խմբերի կազմակերպումն ու զարգացումը:

1932 թվականին Ստեփանակերտում բացվում է Մ. Գորկու անվան պե-

տական հայկական թատրոնը, որի կազմակերպիչներն ու առաջին դերասաններն էին Կարո Ալվարյանը, Աննա Մելիքը, Արշակ Արշակունին, Լևոն Սարգսյանը, Թամարա Մելքումյանը, Արմեն Միրզոյանը, Նինա Հովսեփյանն ու ուրիշներ:

Ստեփանակերտի պետական թատրոնը ոչ միայն հաճախակի հյուրախաղերով հանդես է գալիս մարզի գյուղերում, այլև կարևոր դեր է խաղում բոլոր շրջաններում թատերական ինքնագործ խմբերի կազմակերպման գործում: Նրա զարգացմանը մեծապես օժանդակել են Հայաստանի թատերական գործիչները, որոնց զգալի մասը հանդես են եկել ոչ միայն Ստեփանակերտում, այլև մարզի գյուղերում: Տարբեր ժամանակներում հյուրախաղերով մարզում հանդես են եկել Վահրամ Փափազյանը, Ժասմենը, Իսահակ Ալիխանյանը, Արուս Ոսկանյանը, Բաբկեն Ներսիսյանը, Մետաքսյա Սիմոնյանը, Թաթուլ Դիլաքյանը և շատ ուրիշներ:

Լեռնային Ղարաբաղի մշակութային կյանքում շատ կարևոր երևույթ էր 1958 թվականին կազմակերպած երգի ու պարի պետական անսամբլը, որը մեծ համբավ է ձեռք բերել ոչ միայն մարզում, այլև Հայաստանում ու Միության հայաբնակ մյուս վայրերում: Նրա օրրանի մոտ կանգնած էին կոմպոզիտոր Տելեմակ Տեր-Ավետիսյանը և բալետմեյստեր Ազատ Ղարիբյանը, իսկ անփոփոխ ղեկավարը՝ վաստակավոր արտիստ Յուրի Դավիդյանն է:

1928 թվականից Լեռնային Ղարաբաղի մշակութային կյանքում անգնահատելի դեր է խաղում ռադիոն, իսկ 1960-ական թվականներից՝ նաև հեռուստատեսությունը: Մարզային ռադիոհանգույցը ամեն օր հաղորդումներ է տալիս կյանքի բոլոր բնագավառների վերաբերյալ: Իսկ հեռուստատեսային հաղորդումները մինչև 1988 թ. մայիս ամիսը կատարվում էին միայն կենտրոնական (Մոսկվայի) և Բաքվի հեռուստակենտրոններից, ռուսերեն և ադրբեջաներեն:

Ինչպես վերը նշվել է, Արցախ-Ղարաբաղը տվել է հայագիտության բազում ականավոր գործիչներ, հանրահայտ գրողներ, բանաստեղծներ, լրագրողներ: Սակայն նրանք հիմնականում գործել են իրենց լեռնաստանի սահմաններից դուրս, այլ վայրերում: Միայն 1940 թվականին Ստեփանակերտում կազմակերպվել է Ադրբեջանի գրողների միության Լեռնային Ղարաբաղի մասնաճյուղը, որը կարևոր դեր խաղաց մարզի երիտասարդ ստեղծագործողների համախմբման, աճեցման ու լայն ասպարեզ դուրս բերելու գործում: Մարզում ապրող գրողների, բանաստեղծների զգալի մասը նաև Հայաստանի գրողների միության անդամ են: Այժմ գործում է մարզի ինքնուրույն գրողների միությունը:

Հատկապես 1950-ական թվականներից հետո զգալիորեն ընդլայնվել է բժշկական հիմնարկների ցանցը: Այժմ մարզում գործում են 32 հիվանդանոց, 1865 մահճակալով: Բարձրագույն կրթություն ունեցող բուժաշխատողների թիվը հասնում է 521-ի, իսկ միջնակարգ բժշկական կրթությամբ մասնագետներինը՝ 2199-ի: Խոշոր հիվանդանոցներ են գործում ոչ միայն Ստեփանակերտ, Շուշի, Մարտունի, Մարտակերտ քաղաքներում, այլև մի շարք գյուղերում: Սակայն, դրանց մեծ մասը տարրական հարմարություններ չունի:

Լեռնային Ղարաբաղը, ինչպես նշվել է, տվել է գիտության բոլոր բնագավառների աշխարհահռչակ գիտնականներ: Սակայն, նրանք նույնպես իրենց գործունեությունը հանգամանքների բերումով, ծավալել են հայրենի լեռնաշխարհի սահմաններից դուրս:

Միայն 1945 թվականին Ստեփանակերտում կազմակերպվել է Ադրբեջանի գիտությունների ակադեմիայի համակարգին պատկանող մի բազա, որը գիտահետազոտական աշխատանք էր ծավալում միայն գյուղատնտեսության բնագավառում:

1988 թվականից Ղարաբաղի գիտահետազոտական այդ բազան վերապրոֆիլավորվում ու դառնում է Ադրբեջանի անասնաբուծական-անասնաբուժական գիտահետազոտական ինստիտուտի փորձակայան: Այսինքն խիստ սահմանափակվում է առանց այն էլ միակողմանի ստեղծված այդ բազայի գործունեությունը: Ավելի ուշ հացահատիկային կուլտուրաների սերմնաբուծության բնագավառի փորձակայան է կազմակերպվում Մարտակերտի շրջանի Լենինավան բնակավայրում, որն այժմ գործում է լրիվ ինքնուրույն:

Այսպիսով, գիտահետազոտական աշխատանքների դրվածքը մարզում խիստ սահմանափակ ու միակողմանի է: Այն չի բխում մարզի տնտեսության համալիր զարգացման ուղղություններից, չի արտացոլում նրա հեռանկարները: Իսկ տնտեսագիտության, դեմոգրաֆիայի, սոցիոլոգիայի ու մյուս բոլոր բնագավառներում առհասարակ ուսումնասիրություններ տեղում չեն կատարվում:

Ահա թե ինչու երիտասարդությունն ստիպված է այս կամ այն բնագավառում ուսումնասիրություններ կատարելու նպատակով մեկնել Երևան, Մոսկվա, Լենինգրադ և մյուս քաղաքներ:

Մարզային «Խորհրդային Ղարաբաղ» թերթը մինչև 1967 թվականը լույս էր տեսնում փոքր ծավալով և ոչ ամեն օր: Այդ թվականից սկսած և աշխատավորության պահանջներից ելնելով, այն սկսեց լույս տեսնել հանրապետական թերթերի ծավալով ու ամեն օր: 1980 թվականից լույս է տեսնում նաև թերթի ռուսերեն կրկնօրինակը: Սակայն մարզում երիտասարդական թերթ լույս չի տեսնում: Մարզի յուրաքանչյուր շրջան ունի իր տպագիր թերթը. Մարտունիում՝ «Աշխատանք», Մարտակերտում՝ «Բարեկամություն», Ասկերանում՝ «Կարմիր դրոշ», Հադրութում՝ «Կոլտնտեսական», Շուշիում՝ «Շուշա» (վերջինս՝ ադրբեջաներեն):

Բացի դրանից Ղարաբաղի մետաքսի կոմբինատում լույս է տեսնում «Մետաքսագործ» բազմատպաքանակ թերթը:

Լեռնային Ղարաբաղում կա վեց թանգարան: Ստեփանակերտում գործում է Լեռնային Ղարաբաղի պատմաերկրագիտական թանգարանը, որի ավելի քան 11 հազար ցուցանմուշները բնութագրում են ղարաբաղցիների անցյալի, ներկայի տարբեր բնագավառներ: Բացի դրանից, Մարտունու շրջանի Նոգի գյուղում գործում է Բոգդան Կնունյանցի, Կոլխոզաշեն գյուղում՝ գեներալ Միքայել Պարսեղովի, Հադրութի շրջանի Մեծ Թաղլար գյուղում՝ մարշալ Արմենակ Խանփերյանցի (Խուդյակով) և Մարտակերտի շրջանի Կուսապատ գյուղում՝ Լենինի զինակից Ալեքսանդր Բեկզադյանի տուն-թանգարանները:

Ինչպես տեսնում ենք, մարզի կուլտուր-լուսավորական և բժշկական օբյեկտների թիվը կարծես թե քիչ չէ: Սակայն դրանց մեծ մասը, ինչպես ասվել է, տեղավորված են տարրական հարմարություններից զուրկ շենքերում, չեն կահավորված ժամանակակից սարքավորումներով ու գործիքներով:

7. ԱՍԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆ

Մինչև 1978 թ. կոչվում էր Ստեփանակերտի շրջան: Զբաղեցնում է մարզի տարածքի կենտրոնական հատվածը, ընդգրկում է հիմնականում Կարկառ գետի ու դրա վտակների ավազանը: Տարածքը 0,9 հազ. կմ² է, բնակչությունը՝ ավելի քան 19,1 հազ. մարդ (1987 թ.): Ասկերանի շրջանի այժմյան տարածքի մի մասը (Կարկառի աջափնյա հատվածը) մտնում էր Արցախի Վարանդա գավառի, իսկ մյուս մասը՝ (Կարկառի ձախափնյա հատվածը) Խաչենի գավառի մեջ: Այս առումով այն Արցախ-Ղարաբաղ աշխարհի պատմության, մշակույթի ու տնտեսական կյանքի զարգացման մեջ առանձնահատուկ տեղ ունի:

Շրջանի մակերևույթը տիպիկ լեռնային է, խիստ կտրտված գետահովիտներով և անդնդախոր կիրճերով: Համարյա ամբողջապես անտառապատ է, ցածրադիր մասերում՝ թփուտածածկ: Համեմատաբար բարձրադիր է շրջանի արևմտյան հատվածը, որտեղով անցնում է Ղարաբաղի լեռնաշղթան, որի առանձին գագաթներ ունեն ավելի քան 2750 մ բարձրություն: Այստեղից էլ սկիզբ են առնում շրջանի տարածքով հոսող գետերը՝ Կարկառ, Բալլուջա, Բադարա, իսկ ավելի հյուսիսում՝ Քոլատակ: Շրջանը հարավային մասում սահմանակից է Հադրութի, արևելյան մասում՝ Մարտունու և Ադրբ. ԽՍՀ Աղ-



Տեսարան Կարկառ գետի հովտից

դամի, արևմտյան մասում՝ Շուշիի ու Ադրբ. ԽՍՀ Լաչինի, իսկ հյուսիսային մասում՝ Մարտակերտի շրջաններին:

Ասկերանի շրջանի տարածքում պահպանվել է հայ պատմաճարտարապետական 674 հուշարձան: Դրանցից առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում հատկապես Ավետարանոց գյուղի՝ Վարանդայի մելիքության Բերդավանի բազմաթիվ հուշարձանները, ինչպես նաև Ասկերանի պաշտպանական պարիսպը:

Մասնավորապես, Ավետարանոց գյուղի նշանավոր հուշարձաններից են Ս. Աստվածածին եկեղեցին, Կուսանաց անապատ կոչվող հուշարձանների խումբը, որի եկեղեցու գավիթը հանդիսացել է որպես Վարանդա գավառի իշխանների՝ Մելիք Շահնազարյանների տոհմական դամբարան, ինչպես նաև շրջակայքի պարիսպները, տարբեր նշանակության հին շինություններն ու աղբյուրները: Շրջանի առավել կարևոր հուշարձաններից են Շոշկա վանքը (Խաչմաչ գյուղում), Սարուշեն գյուղի մոտ գտնվող Փիրումաշենի եկեղեցին, Շիկաքար բերդը, Րաֆֆու աղբյուր-հուշարձանը (Դահրավ գյուղի մոտ), Կարկառ գետի վրա 18-րդ դարի սկզբներին կառուցված «Մազի կամուրջը», ինչ-

պես նաև Ստեփանակերտի մուտքի մոտ դրված «Մենք ենք, մեր սարերը» տուֆակերտ հիասքանչ հուշարձանը: Հայկական ԽՍՀ ժողովրդական քանդակագործ, պրոֆեսոր Սարգիս Բաղդասարյանը այդ տուֆակերտ հուշարձանով շատ դիպուկ կերպով մարմնավորել է ղարաբաղցու հպարտությունը, անպարտելիությունը, հաստատակամությունը:

Ասկերանի շրջանի հողահանդակները 1987 թ. տվյալներով կազմում են շուրջ 50 հազ. հա, ցանքատարածությունները՝ 18,5 հազ. հա, այգիները՝ 3,2 հազ. հա (այդ թվում խաղողի այգի՝ 2039 հա, թթի այգի՝ 670 հա), արոտավայրեր՝ 26,6 հազ. հա, անտառներ՝ 38,6 հազ. հա: Շրջանի գյուղատնտեսությունը մասնագիտացված է այգեգործության, պտղաբուծության, հացահատիկի մշակության և անասնապահության ուղղությամբ:

1980-ական թվականների վերջին տվյալներով Ասկերանի շրջանում կար 51 բնակավայր, որից 46-ը՝ հայկական: Շրջանի բնակավայրերը միավորված են գյուղական 16 խորհրդի ու 1 ավանային խորհրդի մեջ: Ստորև տրվում է շրջանի բնակավայրերի համառոտ բնութագիրը:

Ասկերան

1967 թվականից քաղաքատիպ բնակավայր է, անվանումն առաջացել է զորանոց հասկացությունից: Որպես զորանոց հայտնի էր 18-րդ դարի կեսերից: Երկար ժամանակ եղել է ռուսական զորքի նստավայրը:

Պատմական մեծ կարևորություն ներկայացնող հուշարձանը *Ասկերանի հանրահայտ բերդապարիսպն* է, որը կառուցվել է 1760 թվականին: Այդ ամրակուռ, կրաքարով և կրով, դիտաշտարակներով կառուցված բերդապարիսպը կարևոր դեր է խաղացել Շուշի քաղաքը և ամբողջ Կարկառ գետի հովտի բնակավայրերը թշնամիների հարձակումներից պաշտպանելու գործում: Բերդապարիսպը ձգվում է Ասկերանի մոտով՝ փակելով Կարկառ գետի հովտի Ղլիջբաղ և Քյաթուկ գյուղերի միջև ընկած հատվածը:

Որպես բնակավայր հիմնականում ձևավորվել է 1920 թվականից հետո, իսկ 1982 թ. դրան է միացել Ներքին Ղլիջբաղ գյուղը: 1978 թվականից նորաստեղծ Ասկերանի շրջանի շրջկենտրոնն է: Գտնվում է Կարկառ գետի ձախ ափին, բարձրությունը ծովի մակերևույթից 600 մ է: Կլիման չոր մերձարևադարձային է: Հեռավորությունը Ստեփանակերտից 18 կմ է: 1920 թ. այստեղ կար ընդամենը 7 տուն, 35 բնակիչ, իսկ 1987 թ.՝ 480 տուն, շուրջ 1800 բնակիչ:

Այժմյան դպրոցը հիմնադրվել է 1938 թ. հետագայում շենքը վերակառուցվել է և ունի լավ հարմարություններ, միջնակարգ է, ունի 295 աշակերտ,



Տեսարան Ասկերանի բերդապարսպից

30 ուսուցիչ[1]: Գործում է կինոթատրոն, ակումբ, գրադարան, պոլիկլինիկա, կապի հանգույց, կենցաղ-սպասարկման 15 կետ, մարզային հոգեբուժական դիսպանսեր, հակահամաճարակային կայան: Էլեկտրիֆիկացվել է 1955 թ.: Տները երկհարկանի ու թիթեղածածկ են, կառուցվում են բազմահարկ պետական շենքեր, ապահովված է ջրով, գազիֆիկացված է: Փողոցները բարեկարգ են, մարզկենտրոնի հետ կապվում է բարեկարգ մայրուղով: Կան գինու, գարեջրի, լիմոնադի, հացի գործարաններ: Բնակիչներն աչքի են ընկնում աշխատասիրությամբ և հյուրասիրությամբ: Կյանքի միջին տևողությունը 70—75 տարի է, 100-ից ավելի տարիք ունեն Թագուհի Ավագյանը (ծնվ. 1876 թ.) և Սոնա Ասրյանը (ծնվ. 1883 թ.):

Համարյա ամբողջապես հայաբնակ է (կա 25 ադրբեջանցի և 5 ռուս):

Ներքին Ղլիջբաղ

Ղլիջբաղ անվանումն առաջացել է «Բերդի այգի» հասկացությունից: Այս բնակավայրն առաջացել է 1929 — 30 թթ.՝ Վերին Ղլիջբաղից այստեղ տեղափոխված ընտանիքներից: Այժմ այն միավորված է Ասկերան ավանին և կազմում է նրա բարձրադիր թաղամասը: Այս գյուղից Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 123 մարդ, զոհվել է 75-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Այս գյուղի ծնունդ է Խորհրդային Միության հերոս Սուրեն Գասպարյանը: Ժամանակի ընթացքում Վերին Ղլիջբաղից (որը գտնվում էր Ասկերանից դեպի հյուսիս, բարձր սարալանջին) բնակիչներն ամբողջապես տեղափոխվել են Ներքին Ղլիջբաղ և Վերին Ղլիջբաղն ամայացել է, իսկ Ներքին Ղլիջբաղն էլ միավորվել է Ասկերանին: Վերին Ղլիջբաղի բնակատեղում և շրջակայքում կան պատմական բազմաթիվ հուշարձաններ: Մասնավորապես կարևոր է եկեղեցին (XVIII դ.):

Ավետարանոց (Չանախչի)

Գյուղի անվանումն առաջացել է «Ավետարան հոս» բառակապակցությունից: Այն եղել է Վարանդա գավառի վարչական կենտրոնը՝ մելիքների նստավայրը: Գտնվում է Ասկերանից՝ 38 կմ, իսկ Ստեփանակերտից՝ 21 կմ հեռավորության վրա: Տեղադրված է Քիրսի լեռնաճյուղերից մեկի ստորո-

[1] Այստեղ և այսուհետև բնակավայրերի (գյուղերի) աշակերտների և ուսուցիչների վերջին թիվը տրվում է 1987 թ. տվյալներով:



Քարե հին կամուրջ (XVII դ.) Ավետարանոց գյուղի մոտ

տում, ունի չքնաղ բնություն, շրջապատված է այգիներով ու անտառներով, ջուրը և օդը պատվական են: Արցախի առավել հնագույն բնակավայրերից է: Գյուղում և շրջակայքում կան պատմական մեծ հետաքրքրություն ներկայացնող բազմաթիվ հուշարձաններ: Դրանցից հատկապես հիշատակության արժանի են գյուղում գտնվող Ս. Աստվածածին եկեղեցին (1651 թ.), Կուսանաց անապատը, որի եկեղեցին կառուցվել է 1616 թ. և միաժամանակ եղել է Մելիք Շահնազարյանների տոհմական դամբարանը: Այստեղ են Վարանդայի բոլոր մելիքների, այդ թվում նաև մեծ հայրենասեր Մելիք Հուսեինի ու նրա հերոս աղջկա՝ *Գայանեի, կնոջ՝ Աննա Խաթունի գերեզմանները:* Գյուղի տարբեր հատվածներում պահպանվում են մելիքների ապարանքների կանգուն, կիսականգուն շինություններն ու դրանց փլատակները: Գյուղի մոտակայքում նշանավոր են Հղոտեք, Ս. Ավանես եկեղեցիները, Խաչխութ սրբավայրը, Պուտքար, Ծկոռե, Բլեն Խութ բնակատեղիները, մի շարք գերեզմանատներ՝ բազմաթիվ խաչքարերով: Նշանավոր են նաև Բախշունց, Ստեփանանց, Թթու ջուր, Սալքարի, Վանեսի, Շահգալդունց աղբյուրները, 1640 թ. կառուցված կամուրջը, այդ նույն ժամանակաշրջանում կառուցված պաշտպանական պարիսպների փլատակները և բազմաթիվ այլ հուշարձաններ: Ավետարանոցը, հիրավի, Արցախի պատմական հուշարձանների մի հետաքրքիր ու եզակի թանգարան է, որն ուշադրության խիստ կարիք ունի:

Ավետարանոցը ժամանակին իր ճարտարապետական գեղեցիկ, քարաշեն շինություններով, տների քանակով ու բնակչությամբ ավելի շատ գյուղաքաղաքի էր նման: 19-րդ դարի վերջերին այստեղ կար 257 տուն և 1740 բնակիչ[1], 1987 թ.՝ 259 տուն, 958 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ.: Տնտեսության հիմնական ուղղություններն են հացահատիկի մշակությունը, այգեգործությունն ու անասնապահությունը: Գյուղը հայտնի է իր բարձրորակ կարտոֆիլով:

1873 թ. այստեղի կրթարանում սովորում էր 20 աշակերտ, 1874 թ. բացվում է եկեղեցական ծխական դպրոց 25 աշակերտով, որը 1906 թ. դառնում է երկսեռ: Այժմ ունի միջնակարգ դպրոց, որտեղ սովորում է 206 աշակերտ, աշխատում է 31 ուսուցիչ, կրում է Մեսրոպ Մաշտոցի անունը:

Գյուղն ունի մշակույթի տուն, գրադարան, հիվանդանոց, կապի բաժանմունք, վարսավիրանոց, կահույքի արհեստանոց: Էլեկտրիֆիկացվել է 1963 թ.,

---

[1] *Մակար եպիս. Բարխուդարյանց,* Արցախ, Բաքու, 1895, էջ 94: Բնակավայրերի պատմական առանձին փաստերի համար օգտագործված են այս և Շ. *Մկրտչյանի* «Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները» (Երևան, 1985) գրքի տվյալները: Մյուս բոլոր փաստերը հեղինակի կողմից հատուկ հարցաթերթիկով տեղերում անցկացրած ուսումնասիրության և հետազոտության արդյունք են:



Մադաթյանների հուշակոթող-խաչքարը Ավետարանոց գյուղում

գործում է Ստեփանակերտի մետաքսի կոմբինատի մասնաճյուղը: Տները երկհարկանի, բարեկարգ, թիթեղածածկ են: Ճանապարհները խճապատ են: Բնակիչներն աշխատասեր, հյուրասեր, հպարտ և սրամիտ են: Հպարտությունը գալիս է մելիքանիստ բնակավայրում ապրելուց, իսկ սրամտությունը՝ մելիքների պալատի հանրահայտ զվարճախոս, առակասաց Պըլը Պուղուց:

Այս գյուղի ծնունդ են ռուսական բանակի քաջարի գեներալ Վալերիան Մադաթովը, գրող-երգիծաբան Կոնստանտին Շահնազարյանը (Տմբլաչի Խաչանը), տեխն. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Մ. Խ. Շահնազարյանը, փիլիսոփայական գիտ. դոկտ. Ա. Ս. Մանասյանը: Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 254 մարդ, զոհվել է 125-ը, որոնց հիշատակին կանգնեցված է բազալտակերտ հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Նորագյուղ

Գտնվում է Ասկերանից 5 կմ, Ստեփանակերտից 18 կմ հեռավորության վրա: Դիրքը նախալեռնային է, բարձրությունը ծովի մակերևույթից 750 մ է, կլիմայական պայմանները մեղմ են:

Հին բնակավայրի պատմությունն սկսվում է 19-րդ դարի սկզբից: Այժմյան Նորագյուղը ձևավորվել է 1966 թ. (բարձրադիր լեռնային վայրերից բնակիչները իջել և բնակություն են հաստատել հարթավայրում): Հին գյուղատեղում 1870 թ. կառուցված եկեղեցին պահպանվում է: 1920 թ. հին Նորագյուղում կար 180 տուն, 1500 բնակիչ: 1987 թ. այս գյուղում կար 249 տուն, 1043 բնակիչ (որից 943-ը հայ, 100-ը ադրբեջանցի):

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1929 թ.: Տնտեսության հիմնական ուղղություններն են հացահատիկի մշակությունը, խաղողագործությունն ու անասնապահությունը:

Դպրոց հիմնադրվել է 1907 թ. (հին գյուղում): 1967 թ.-ից դպրոցը միջնակարգ է. ունի 200 աշակերտ, 30 ուսուցիչ: Գյուղում կա ակումբ, բուժկետ, կապի բաժանմունք, կարի արհեստանոց: Էլեկտրիֆիկացվել է 1961 թ.: Տները երկհարկանի, թիթեղածածկ են, գազիֆիկացված է: Ճանապարհները բարեկարգ են: Բնակիչները աշխատասեր և հյուրասեր են: 100-ից ավելի տարիք ունեն Հայրապետ և Հեղինե Հայրապետյանները, Սոֆյա Աղաբեկյանը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 256 մարդ, զոհվել է 91-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան:

Խանաբադ

Գտնվում է Ասկերանից 4,5 կմ դեպի հյուսիս-արևելք, հեռավորությունը Ստեփանակերտից 20 կմ է: Այժմյան գյուղի պատմությունն սկսվում է 17-րդ դարի սկզբներից: Տեղադրված է երեք բլուրների վրա, բարձրությունը ծովի մակերևույթից 600 մ է, ունի մերձչորևադարձային կլիմա:

Գյուղի 18-րդ դարում կառուցված եկեղեցին անխնամ վիճակում է, խիստ կարիք ունի վերանորոգման:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ., տնտեսության հիմնական ուղղություններն են հացատիկի արտադրությունը, այգեգործությունը և անասնապահությունը:

1987 թ. այստեղ կար 282 տուն, 1023 բնակիչ: Դպրոց բացվել է 1887 թ., որը 1940 թվականից՝ միջնակարգ է, տեղավորված է տիպային շենքում, ունի բոլոր հարմարությունները, այժմ սովորում է 158 աշակերտ, աշխատում է 26 ուսուցիչ: Ունի մշակույթի տուն, բուժկետ, կապի բաժանմունք, կենցաղսպասարկման տաղավար, բաղնիք: Էլեկտրիֆիկացվել է 1958 թ.: Տները երկհարկանի, քարաշեն ու թիթեղածածկ են: Յուրաքանչյուր տուն ունի իր ջրի ծորանը: Գազիֆիկացված է: Գյուղամիջյան ճանապարհները խճապատ են: Բնակիչներն աշխատասեր և հյուրասեր են: Նրանց կյանքի միջին տևողությունը 80 տարի է, 100-ից ավելի տարիք ունի Սանամ Ավանեսյանը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 220 մարդ, զոհվել է 104-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղի շրջակայքում կան պատմական նշանակություն ունեցող գերեզմանատներ, խաչքարեր (X — XIII դդ.), հին գյուղատեղի, Ս. Աստվածածին եկեղեցին (XVII դ.), սրբավայրեր:

Այգեստան (Բալլուջա)

Գտնվում է Ասկերանից 14 կմ, իսկ Ստեփանակերտից 7 կմ հեռավորության վրա: Անվանումն առաջացել է բալ և չայ օտար բառերից, որը նշանակում է «մեղրագետ»: Այժմյան գյուղի պատմությունն սկսվում է 17-րդ դարից: Կանգուն է 1860 թ. կառուցված եկեղեցին, որը օգտագործվում է որպես պահեստ: 1987 թ. այստեղ կար 245 տուն, 851 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ., այժմ սովխոզ-տեխնիկում է: Հիմնական ուղղություններն են սերմնաբուծությունն ու անասնապահությունը: 1903 թ. բացվել է ծխական դպրոց: Այժմ ունի միջնակարգ դպրոց, մշակույթի տուն, գրադարան, բուժկետ, կապի բաժանմունք, կար ու ձևի ար-

հեստանոց, կոշիկի վերանորոգման կետ, ճաշարան, խանութ: Էլեկտրիֆիկացվել է 1961 թ.: Տները երկհարկանի, քարաշեն ու թիթեղածածկ են, ապահովված է ջրով: Փողոցները բարեկարգ են: Բնակիչներն աշխատասեր են և հյուրասեր: Կյանքի միջին տևողությունը 75 — 80 տարի է: Գյուղի մոտակայքում կա մարմարի հանքավայր:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 310 մարդ, զոհվել է 151-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան:

Արցախաշեն (Դաշբուլաղ)

Գտնվում է Ասկերանից 12 կմ, Ստեփանակերտից 20 կմ հեռավորության վրա: Գյուղը շատ հին պատմություն ունի: Մինչև թուրք սելջուկների հարձակումները կոչվում էր Քարաղբյուր: Հետագայում կոչվել է Դաշբուլաղ, իսկ 1988 թվականից կոչվում է Արցախաշեն: Այս պատմական գյուղում եղել է Խրիմյան Հայրիկը (1898 թվականի օգոստոսի 25 — 26-ին):

Գյուղի դիրքը նախալեռնային է, բարձրությունը ծովի մակերևույթից 800 մ է, կլիմայական պայմանները մեղմ ու նպաստավոր են:

Գյուղի պատմական կառույցներից նշանավոր են 368—371 թթ. կառուցված եկեղեցին և Ֆրանգյուլի վանքը: Վերջինս կառուցվել է Մելիք Ֆրանգյուլի այս գյուղ այցելելու պատվին:

1920 թ. գյուղում կար 450 տուն, 1600 բնակիչ, 1987 թ.՝ 208 տուն, 703 բնակիչ: Գյուղը միշտ հայկական է եղել, այժմ հայերի հետ այստեղ ապրում են նաև ադրբեջանցիներ ու մի քանի ռուսներ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1929 — 33 թթ., հիմնական ուղղություններն են հացահատիկի մշակությունը, բանջարաբուծությունը, այգեգործությունն ու անասնապահությունը: Էլեկտրիֆիկացվել է 1961 թ.: Այստեղ դպրոց (հայկական) բացվել է 1874 թ.: Այժմյան ութնամյա դպրոցում սովորում է 127 աշակերտ (հայեր և ադրբեջանցիներ), աշխատում է 27 ուսուցիչ: Կա տեղամասային հիվանդանոց, մշակույթի տուն, գրադարան, կենցաղսպասարկման կետեր, խանութ: Տները երկհարկանի են, թիթեղածածկ: Ապահովված է ջրով: Ճանապարհներն ու փողոցները բարեկարգ են: Բնակիչներն աշխատասեր և հյուրասեր են: Կյանքի միջին տևողությունը 75 — 80 տարի է, իսկ Ազիզգյուլ Հովսեփյանն ու Շախի Ավանեսյանը ավելի քան 100 տարեկան են: Այդ գյուղի ծնունդ է բժշկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր, սրտաբան Անդրանիկ Ճաղարյանը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 400 մարդ, զոհվել է 126-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հիմնականում հայաբնակ է:

Բադարա (Պատարա)

Գտնվում է Ասկերանից 14 կմ, Ստեփանակերտից 30 կմ հեռավորության վրա: Մակերևույթը նախալեռնային է, շրջապատված է ոչ բարձր բլուրներով: Կլիմայական պայմանները մեղմ ու բարենպաստ են:

Գյուղի պատմությունն սկսվում է XVIII դարի սկզբից: Այստեղ նույն դարում կառուցված եկեղեցին այժմ փլված է:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ.: Տնտեսության հիմնական ուղղություններն են հացահատիկի մշակությունը, բանջարաբուծությունը և անասնապահությունը:

1987 թ. այս գյուղում կար 204 տուն, 644 բնակիչ: 1881 թ. այստեղ բացվել է ծխական դպրոց, 12 աշակերտով: Այժմյան դպրոցը միջնակարգ է, որտեղ սովորում են 172 աշակերտ, աշխատում են 23 ուսուցիչ: Գործում է ակումբ, մշակույթի տուն, բուժկետ, կապի բաժանմունք, կենցաղսպասարկման կետեր: Էլեկտրիֆիկացվել է 1961 թ.: Տները երկհարկանի են, թիթեղածածկ: Ապահովված է ջրով: Գյուղամիջյան ճանապարհները բարեկարգ են: Բնակիչներն աշխատասեր և հյուրասեր են: Կյանքի միջին տևողությունը 75 տարի է. Հերիք Հակոբյանը 106 տարեկան է:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 230 մարդ, զոհվել է 112-ը: Գյուղը հայաբնակ է:

Խնձրիստան

Գտնվում է Ասկերանից 20 կմ դեպի արևելք, հեռավորությունը Ստեփանակերտից 25 կմ է: Դիրքը նախալեռնային է, բարձրությունը ծովի մակերևույթից 800 մ է, կլիմայական պայմանները մեղմ ու նպաստավոր են: 1987 թ. այս գյուղում կար 220 տուն, 659 բնակիչ: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1932 թ.: Տնտեսությունը հիմնականում մասնագիտացված է անասնապահության ուղղությամբ:

Գյուղում առաջին դպրոցը բացվել է 1912 թ.: Այժմ ունի միջնակարգ դպրոց (121 աշակերտ, 20 ուսուցիչ): Գործում է մշակույթի տուն, հիվանդանոց, կապի բաժանմունք, կենցաղ սպասարկման կետեր (վարսավիրանոց, կար ու ձևի արհեստանոց, կոշիկի վերանորոգման կետ): Գործում է նաև Ստեփանակերտի մետաքսի կոմբինատի մասնաճյուղը (մետաքսակարժական արտադրամաս):

Տները երկհարկանի, քարակերտ, թիթեղածածկ են: Ապահովված է ջրով: Ճանապարհները բարեկարգ չեն: Գյուղի եկեղեցին վաղուց փլված է: Բնակիչներն աշխատասեր և հյուրասեր են: Այս գյուղի ծնունդ են հեղափոխական,

կուսակցական գործիչ, գիտնական Հայկ Գյուլիքեխվյանը և Խորհրդային Միության հերոս Կոնստանտին Նազարյանը:

Գյուղի շրջակայքում նշանավոր են, Վարար, Հճարա, Լաչինի աղբյուրները, Խնձրիստան գետը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 400 մարդ, զոհվել է 136-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Շուշ

Գտնվում է Ասկերանից 27 կմ դեպի հարավ (Շուշի քաղաքից ոչ մեծ հեռավորության վրա), հեռավորությունը Ստեփանակերտից 8 կմ է: Գյուղի պատմությունը սկսվում է XIV — XV դարերից: Տեղադրված է լեռնալանջի գոգավորությունում, բարձրությունը ծովի մակերևույթից 1600 — 1700 մ է, կլիմայական պայմանները նպաստավոր են, օդը մաքուր է, ջուրը՝ զուլալ, շրջապատը՝ գեղատեսիլ ու անտառապատ:

Գյուղի երկու եկեղեցիներից մեկը կառուցվել է 1454 թ. (այժմ այն օգտագործվում է որպես կոլտնտեսության աղաց), մյուսը կառուցվել է 1655 թ., կիսավեր վիճակում է:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ., մասնագիտացվել է անասնապահության, բանջարաբուծության և հացահատիկի մշակության ուղղությամբ: Ունի խոշոր եղջերավոր անասունների բտման կետ: 1987 թ. այստեղ կար 173 տուն, 556 բնակիչ:

Դպրոց բացվել է 1894 թ., այժմյան միջնակարգ դպրոցում սովորում է 119 աշակերտ, աշխատում է 21 ուսուցիչ: Ունի մշակույթի տուն, կապի բաժանմունք, բուժկետ, վարսավիրանոց, կարի արտադրամաս, թիթեղագործական արհեստանոց, հացի փուռ, խանութ: Էլեկտրիֆիկացվել է 1931 թ.: Տները երկհարկանի են, թիթեղածածկ, ապահովված է ջրով, գազիֆիկացված է:

Բնակիչներն աչքի են ընկնում սրամտությամբ և հպարտությամբ, ինչպես նաև երկարակեցությամբ: 100-ից ավելի տարիք ունեն Նիկոլայ Փարամազյանը, Ջառի Բաղդասարյանը, Նուբար Սիմոնյանը, Մինաս Հովսեփյանը: Գյուղը տվել է շատ նշանավոր մարդիկ, դրանցից են գրականագետ-ակադեմիկոս Արսեն Տերտերյանը, գրողներ Սամվել Գրիգորյանը, Սարգիս Աբրահամյանը, Գերասիմ Հովսեփյանը: Այս գյուղի ծնունդ է նաև Արցախի հանրահայտ զվարճախոս, կատակաբան Պըլը Պուղին: Գյուղի շրջակայքի նշանավոր վայրերից են Մխիթար սպարապետի քարանձավը, Պըլը Պուղու գերեզմանը: Կան բազմաթիվ աղբյուրներ՝ Պրպտան, Շաղասարի, Թեղուն: Ունի կրաքարի հանքավայր (արդյունահանվում է): Հայրենական մեծ պատերազմին մասնակցել

է 350 մարդ, զոհվել է 216-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Խրամորթ

Գտնվում է Ասկերանից 8 կմ դեպի հյուսիս, Ստեփանակերտից հեռավորությունը 25 կմ է: Դիրքը նախալեռնային է, բարձրությունը ծովի մակերևույթից 700—750 մ է, կլիմայական պայմանները չոր մերձարևադարձային են: Գյուղի նախկին բնակատեղում (Վերին շեն) XIX դարում կառուցված եկեղեցին այժմ էլ կանգուն է: 1959 թ. այստեղ կար 210 տուն, 576 բնակիչ, իսկ 1985 թ.՝ 185 տուն, 691 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1932 թ.: Տնտեսության հիմնական ճյուղերն են հացահատիկի մշակությունը, խաղողագործությունը և անասնապահությունը: 1914 թվականից գործել է տարրական դպրոց, որը 1935 թվականից յոթնամյա է, 1963 թվականից՝ ութամյա 1969 թ.-ից՝ միջնակարգ, ուր սովորում են 138 աշակերտ, աշխատում են 17 ուսուցիչ:

Գործում են մշակույթի տուն, բուժկետ, կապի բաժանմունք, վարսավիրանոց, հեռախոսացանց: Էլեկտրիֆիկացվել է 1958 թ.: Տները հիմնականում երկհարկանի, թիթեղածածկ են: Ջրով ապահովված է: Ճանապարհները բարեկարգ են: Բնակիչներն աշխատասեր, հյուրասեր են: Կյանքի միջին տևողությունը 75 — 80 տարի է: Գյուղի հյուսիս-արևմտյան մասում է Շիկաքարի վանքը: Մոտակայքում նշանավոր են Տանձի, Անձեն ջուր աղբյուրները:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 132 մարդ, զոհվել է 75-ը, որոնց հիշատակին հուշարձան է կանգնեցված: Գյուղը հայաբնակ է:

Ղարաբուլաղ

Անվանումն առաջացել է գյուղի մոտ գտնվող մեծ աղբյուրից, որը չգիտես ինչու անվանվել է Սև աղբյուր: Այստեղից էլ առաջացել է «Ղարաբուլաղ» օտարալեզու անունը:

Գտնվում է Ասկերանից 42 կմ դեպի հարավ, Վարանդա գետի ափին, այդ շրջանի ծայր հարավում, հեռավորությունը Ստեփանակերտից 25 կմ է: Դիրքը նախալեռնային է, բարձրությունը ծովի մակերևույթից 950 մ է: 1890-ական թվականների սկզբներին այստեղ կար 35 տուն, 295 բնակիչ, 1920 թ.՝ 127 տուն, 545 բնակիչ, 1987 թ.՝ 137 տուն, 544 բնակիչ: Գյուղի եկեղեցին (Ս. Աստվածածին) ավերված է:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1928 թ.: Հիմնական ուղղություններն են հացահատիկի մշակությունը, բանջարաբուծությունը, խաղողագործությունը և անասնապահությունը:

Դպրոցը միջնակարգ է: Ունի 166 աշակերտ, 28 ուսուցիչ:

Գործում են ակումբ, մշակույթի տուն, բուժկետ, կապի բաժանմունք, վարսավիրանոց, կար ու ձևի արհեստանոց, գրադարան, խանութ: Էլեկտրիֆիկացվել է 1963 թ.: Տները երկհարկանի են, թիթեղածածկ, ապահովված է ջրով, ճանապարհները բարեկարգ են: Բնակիչներն աշխատասեր և հյուրասեր են: Կյանքի միջին տևողությունը 75 տարի է:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 128 մարդ, զոհվել է 61-ը, որոնց հիշատակին կառուցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Փրջամալ

Նախկինում այն կոչվում էր «Վարդեր»: Գտնվում է Ասկերանից 9 կմ դեպի հարավ-արևելք, Ստեփանակերտից 27 կմ հեռավորության վրա: Գյուղի պատմությունն սկսվում է 12-րդ դարից: 1905 թ. թուրքերը գյուղը հրդեհել ու ավերել են, վերականգնվել է 1918 թ.: Գյուղի եկեղեցին կառուցվել է 1837 թ.: Բարվոք վիճակում չէ: 1987 թ. այստեղ կար 139 տուն, 443 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1932 թ.: Այժմ պետական տնտեսություն է, մասնագիտացված է այգեգործության և անասնապահության ուղղությամբ:

Այստեղ 1874 թ. բացվել է ծխական դպրոց (15 աշակերտով), այժմյան դպրոցը միջնակարգ է: Գործում է մշակույթի տուն, հիվանդանոց, կապի բաժանմունք, կենցաղսպասարկման կետեր, հանդիսությունների տուն: Էլեկտրիֆիկացվել է 1959 թ.: Ունի գինու գործարան: Տները երկհարկանի են ու թիթեղածածկ: Ջրով լավ չի ապահովված: Ճանապարհներն ու գյուղամիջյան փողոցները բարեկարգ չեն: Բնակիչներն աշխատասեր, սրամիտ ու հյուրասեր են: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Շրջակայքում նշանավոր են Եխծուն ջուր, Ղազան աղբյուր, Ծարավաջուր, Սև աղբյուր, Բլասեն աղբյուր, Տնջրե, Թեղուն, Ցկանեն աղբյուրները:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 211 մարդ, զոհվել է 116-ը, որոնց հիշատակին կառուցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Նախիջևանիկ

Գտնվում է Ասկերանից 8 կմ դեպի հարավ-արևելք, Ստեփանակերտից հեռավորությունը 25 կմ է: Գյուղի պատմությունն սկսվում է 15-րդ դարից: 1987 թ. այստեղ կար 142 տուն, 453 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1931 թ.: Այժմ պետական տնտեսություն է: Մասնագիտացված է խաղողագործության և անասնապահության ուղղությամբ:

1876 թ. բացվել է ծխական դպրոց: Այժմյան դպրոցը միջնակարգ է: Սովորում է 167 աշակերտ, աշխատում է 28 ուսուցիչ: Էլեկտրիֆիկացվել է 1959 թ.: Տները երկհարկանի են, թիթեղածածկ, ջրով լավ չի ապահովված, ճանապարհները բարվոք չեն: Բնակիչներն աշխատասեր և հյուրասեր են, կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Այս գյուղից են սերված նշանավոր ռազմական գործիչներ, Սարդարապատի ճակատամարտի հերոսներ Դանիելբեկ և Պավելբեկ Փիրումովները, փոխծովակալ Վլադիմիր Փիրումովը, հեղափոխական Վարսենիկ Փիրումյանը:

Հայրենական մեծ պատերազմում զոհվել են 106 նախիջևանիկցի, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Խաչեն (Սեյդիշեն)

Գտնվում է Ասկերանից 25 կմ դեպի հյուսիս-արևմուտք: Հեռավորությունը Ստեփանակերտից 28 կմ է: Արցախի հին բնակավայրերից է: Բարձրությունը ծովի մակերևույթից 720 մ է: Կլիմայական պայմանները բարենպաստ են, դիրքը՝ գեղատեսիլ: Գյուղի եկեղեցին կառուցվել է 1890 թ.: Այժմ օգտագործվում է, որպես կոլտնտեսության պահեստ: 1987 թ. այստեղ կար 117 տուն, 343 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1932 թ.: Տնտեսությունը հիմնականում մասնագիտացված է անասնապահության ուղղությամբ:

Դպրոցը միջնակարգ է, ունի 56 աշակերտ, 15 ուսուցիչ: Գործում է ակումբ, բուժկետ, գրադարան, վարսավիրանոց, խանութ: Էլեկտրիֆիկացվել է 1961 թ.: Տները երկհարկանի են, թիթեղածածկ: Ապահովված է ջրով: Ճանապարհները բարվոք են: Բնակիչները սրամիտ և զվարճախոս են: Կյանքի միջին տևողությունը 80—85 տարի է: Այս գյուղի ծնունդ են՝ հեղափոխականներ Ներսես և Ելիզավետա Սարամյանները, բանասիրական գիտությունների դոկտորներ Սերգեյ Սարինյանը, Սևակ Արզումանյանը, տնտեսագիտության դոկտոր Ռոբերտ Սարինյանը:

Շրջապատում հայտնի են Դերին, Բաղեն, Կարմիր աղբյուրները: Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 250 մարդ, զոհվել է 75-ը, որոնց հիշատակին նանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Կարմիր գյուղ

Գտնվում է Ասկերանից 43 կմ դեպի հարավ, Ստեփանակերտից հեռավորությունը 23 կմ է: Նախկինում գյուղը կոչվում էր Տռնավարգ, այն առաջացել է «Տեր Ավեզ» անունից, որն այս բնակավայրի հիմնադիրն է եղել: Հին պատմություն ունեցող գյուղ է: Նախկին բնակավայրը գտնվում էր 1,5 կմ հեռավորության վրա՝ «Կալերահող» տեղամասում: Այժմյան գյուղի պատմությունն սկսվում է 15-րդ դարից:

1920 թ., ինչպես և Շուշիում, թուրքական մուսավաթական բանդաները համատարած արյունահեղություն են կազմակերպում նաև այստեղ: Գյուղը ավերելուց, թալանելուց, կանանց, երեխաների նկատմամբ վայրագություններ կատարելուց հետո, նրանք 80 տղամարդու ծեծելով հասցնում են Շուշի, որտեղ դրանցից 73-ին գազանաբար սպանում են, իսկ 7-ին հրաշքով հաջողվում է կենդանի մնալ: Վերջիններից մեկը՝ Լևոն Շահնազարյանը (1889 թ. ծնված) այժմ էլ կենդանի է: 1921 թ. գյուղը վերանվանվել է Կարմիր գյուղ:

Լեռնային գյուղ է, տեղադրված է Բովուրխան լեռան հարավային լանջին, բարձրությունը ծովի մակերևույթից 1400 մ է: Կլիմայական պայմանները համեմատաբար ցամաքային են:

1920 թ. այստեղ եղել է 1800 բնակիչ: 1987 թ. կար 72 տուն, 198 բնակիչ: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1929 թ.: Բնակչության հիմնական զբաղմունքը անասնապահությունը, հացահատիկի մշակությունն ու այգեգործությունն է: Էլեկտրիֆիկացվել է 1963 թ.: 1840-ական թվականներից գործել է ծխական դպրոց: 1894 թ. այստեղի դպրոցում սովորում էր 65 աշակերտ: Այժմյան դպրոցը միջնակարգ է: Ունի 62 աշակերտ, 19 ուսուցիչ (1987 թ.):

Գործում են ակումբ, գրադարան, կար ու ձևի արհեստանոց, բուժկետ: Գյուղամիջյան ճանապարհներն անբարեկարգ են: Տները երկհարկանի են, քարաշեն, թիթեղածածկ. ապահովված է ջրով:

Գյուղում նշանավոր են Վալադանց, Մեծ ջուր, Թղկե աղբյուրները: Նշանավոր են նաև «Սուրբ Աղին» նահատակը, «Բովուրխանա վանքը»: Վերջինս մեծ հետաքրքրություն ներկայացնող ճարտարապետական համալիր է, բաղկացած եկեղեցական, բնակելի, օժանդակ շենքերից, պարիսպներից: Կառուցված է խիտ անտառապատ, գեղատեսիլ լեռան վրա:

Գյուղի եկեղեցին կառուցվել է 1841 թ· Անխնամ վիճակում է:

Բնակիչներն աշխատասեր և հյուրասեր են, կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Այս գյուղի ծնունդ են բժշկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր Քրիստափոր Պետրոսյանը, դիվանագետ Վալենտին Իսրայելյանը (գեներալ-մայոր), մարքսիստ-փիլիսոփա Արմեն Տեր-Մանվելյանը (Մանվելով):

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 160 մարդ, զոհվել է 102-ը, որոնց հիշատակին կառուցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Դահրավ

Գտնվում է Ասկերանից 16 կմ դեպի հարավ-արևմուտք, հեռավորությունը Ստեփանակերտից 25 կմ է: Տեղադրված է Շենաքար լեռան լանջին, բարձրությունը ծովի մակերևույթից 800 մ է: Շրջակայքը անտառապատ է, մոտակայքով հոսում է Բադարա գետը:

Արցախի հնագույն բնակավայրերից է, որի ապացույցները նրա շրջակայքում գտնվող երեք գերեզմանատներն ու դրանցում եղած հուշարձանները, խաչքարերը և շրջակայքի սրբավայրերն են: Գյուղում եղած եկեղեցին անխղճորեն քանդվել է և 1967 թ. նրա տեղը ակումբ է կառուցվել:

1970 թ. այստեղ կար 137 տուն, 450 բնակիչ, իսկ 1987 թ.՝ 115 տուն, 287 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ.: Տնտեսության հիմնական ուղղություններն են անասնապահությունը, հացահատիկի արտադրությունը, բանջարաբուծությունն ու այգեգործությունը: Գյուղում դպրոց է բացվել 1907 թ., 1909 թ. երկսեռ դպրոց էր և ուներ 35 աշակերտ: Այժմյան դպրոցն ութամյա է: Ունի 21 աշակերտ: Գործում է մշակույթի տուն, գրադարան, բուժկետ: Էլեկտրիֆիկացվել է 1967 թ.: Տները երկհարկանի են, թիթեղածածկ, ապահովված է ջրով: Ճանապարհները բարվոք են: Բնակիչներն աշխատասեր և հյուրասեր են: Կյանքի միջին տևողությունը 80—90 տարի է: Իսկ Ուսուբ Հովակիմյանը 104 տարեկան է: Այս գյուղում է ծնվել գրող Հայկ Խաչատրյանը:

Հայրենական մեծ պատերազմում զոհվել է 123 մարդ, որոնց հիշատակին կառուցված է հուշարձան: Հայ մեծ վիպասան Րաֆֆին Արցախում ճանապարհորդելիս եղել է այս գյուղում, ջուր խմել տեղի աղբյուրից և նշել, որ այն աննման ջուր է: Գյուղը հայաբնակ է:

Խանածախ (Խնածախ)

Գտնվում է Ասկերանից 12 կմ դեպի հարավ, հեռավորությունը Ստեփանակերտից 5 կմ է: Այժմյան գյուղի պատմությունը սկսվում է 1770 թվակա-

նից, բնակիչները եկել են Ջանգեզուրի Խնածախ գյուղից, հիմնադրել այս գյուղը և պահպանել իրենց հայրենի գյուղի անվանումը:

Բարձրությունը ծովի մակերևույթից 840 մ է, կլիման չոր մերձարևադարձային է: 1987 թ. այստեղ կար 133 տուն, 385 բնակիչ: Գյուղի եկեղեցին կանգուն է, սակայն այն օգտագործվում է որպես կոլտնտեսության պահեստ: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ., այժմ պետական տնտեսություն է, հիմնական ուղղությունը անասնապահությունն է:

Դպրոցն ութամյա է: Ունի 51 աշակերտ, 14 ուսուցիչ: Գործում է մշակույթի տուն, գրադարան, կապի բաժանմունք, վարսավիրանոց, կոշկակարանոց, խանութ: Էլեկտրիֆիկացվել է 1959 թ., տները երկհարկանի են, թիթեղածածկ: Ջրով լավ չի ապահովված: Ճանապարհները բարեկարգ են: Բնակիչներն աշխատասեր են և հյուրասեր: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Այս գյուղի ծնունդ են բանասիրական գիտ. դոկտորներ Առաքել Առաքելյանը և Սմբատ Ավագյանը: Գյուղում և շրջակայքում նշանավոր են Մեծ, Պիծի, Աբալին աղբյուրները:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 136 մարդ, զոհվել է 66-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Ներքին Սզնեք

Գտնվում է Ասկերանից 35 կմ դեպի հարավ, հեռավորությունը Ստեփանակերտից 20 կմ է: Անվանումն առաջացել է շրջապատում գտնվող մեծ քանակությամբ սզնի ծառատեսակից: Գյուղի շրջակայքում պահպանվող Պառավ Խաչ սրբավայրը, գերեզմանատան հին հուշարձանները վկայում են, որ սա Արցախի հնագույն բնակավայրերից է: Գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 18-րդ դարում (այն այժմ օգտագործվում է որպես կոլտնտեսության պահեստ):

Դիրքը նախալեռնային է, տեղադրված է Քիրսի լեռնաճյուղի փեշին, բարձրությունը ծովի մակերևույթից 950—1000 մ է, օդը, ջուրը զուլալ են, շրջապատված է գեղատեսիլ անտառներով:

1890-ական թվականների սկզբներին այստեղ կար 92 տուն, 727 բնակիչ, իսկ 1987 թ.՝ 32 տուն, 95 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ., հիմնական ուղղություններն են հացահատիկի, բանջարեղենի արտադրությունը և անասնապահությունը: Դպրոցը գործել է մինչև 1982 թ., այնուհետև դպրոցահասակ երեխաներ չլինելու պատճառով փակվել է: Գործում է ակումբ, գրադարան, բուժկետ: Էլեկտրիֆիկացվել է 1961 թ.: Տները երկհարկանի են, քարակերտ.

թիթեղածածկ: Ջրով ապահովված է: Ճանապարհները բարեկարգ են, գյուղամիջյանն՝ անբարեկարգ: Բնակիչները հյուրասեր, մաքրասեր են: Նշանավոր է որպես դերձակների գյուղ: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Գյուղում և շրջակայքում կան 13 աղբյուրներ, դիմացի անտառը հարուստ է պտուղներով: Այս գյուղի ծնունդ են գեներալ Սերգեյ Արզումանյանը, փառքի երեք աստիճանի շքանշանների ասպետ Գևորգ Իսրայելյանը, մաթ. գիտ. դոկտոր Հայկ Արզումանյանը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 50 մարդ, զոհվել է 25-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Վերին Սզնեք

Գտնվում է Ասկերանից 35 կմ դեպի հարավ, հեռավորությունը Ստեփանակերտից 20 կմ է: Տեղադրված է Ներքին Սզնեքից 500—600 մ ավելի բարձրադիր լանջին: Բնական պայմանները լավ են, ջուրը, օդը զուլալ են, դիրքը գեղատեսիլ: Հին բնակավայր է, գյուղից դուրս կանգուն է հինավուրց եկեղեցին: Գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 19-րդ դարում: Երկուսն էլ անուշադրության են մատնված:

19-րդ դարի 90-ական թվականների սկզբներին այստեղ կար 46 տուն, 323 բնակիչ, 1987 թ.՝ 35 տուն, 150 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ.: Տնտեսության ուղղություններն են հացահատիկի մշակությունն ու անասնապահությունը (մինչև 1950 թ. ուներ նաև գոմշաբուծական ֆերմա): Դպրոցն այժմ չի գործում, երեխաները (ինչպես նաև Ն. Սզնեքի) սովորում են Կարմիր գյուղում: Սոցիալ-մշակութային օբյեկտներ չկան: Էլեկտրիֆիկացվել է 1981 թ., տները երկհարկանի են, թիթեղածածկ, լավ ապահովված է ջրով: Գյուղամիջյան և հարակից ճանապարհները անբարեկարգ են: Բնակիչներն աշխատասեր են: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Շրջապատում կան գեղատեսիլ անտառներ և արոտավայրեր:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 29 մարդ, զոհվել է 17-ը: Նրանց հիշատակին կանգնեցված է հուշարձան՝ Ներքին Սզնեքում: Գյուղը հայաբնակ է:

Մղնախ

Գտնվում է Ասկերանից 33 կմ դեպի հարավ, հեռավորությունը Ստեփանակերտից 18 կմ է: Արցախի հնագույն ամրոցային բնակավայրերից է, անվա-

նումն էլ առաջացել է դրանից (սղնախ նշանակում է ամրոց, ամրություն): Նախկին բնակավայրը հիմնադրվել է 1495 թ., իսկ 1795 թ. տեղափոխվել է այժմյան գյուղի տեղը: Դիրքը լեռնային է, բարձրությունը ծովի մակերևույթից 1100 մ է, կլիման համեմատաբար մեղմ է, ամառը՝ զով: Ունի գեղատեսիլ բնություն, անտառներ: Օդն ու ջուրը մաքուր և առողջարար են: Գյուղն ուներ եկեղեցի (Ս. Աստվածածին), որն անուշադրության է մատնվել ու քանդվել:

1890-ական թվականների սկզբներին այստեղ կար 55 տուն, 324 բնակիչ, իսկ 1987 թ.՝ 64 տուն, 250 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ.: Տնտեսության հիմնական ուղղություններն են հացահատիկային կուլտուրաների մշակությունը, բանջարաբուծությունը և անասնապահությունը: Այժմյան դպրոցն ութամյա է, ունի 38 աշակերտ, 10 ուսուցիչ: Գործում է ակումբ, գրադարան, բուժկետ: Էլեկտրիֆիկացվել է 1961 թ.: Տները երկհարկանի ու քարաշեն են: Ճանապարհները բարեկարգ են, իսկ գյուղամիջյան փողոցներն՝ անբարեկարգ: Բնակիչներն աշխատասեր և հյուրասեր են: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է, իսկ Սանդուխտ Աղաբեկյանն ավելի քան 100 տարեկան էր: Այս գյուղում են ծնվել տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Յուրի Սուվարյանը և նրա եղբայրը՝ տնտեսագիտության թեկնածու Արզիկ Սուվարյանը: Գյուղում և շրջակայքում են Մկրտիչի, Մարանդի, Պտրուսանց, Ձոթի, Ռուսեն և այլ աղբյուրները:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 102 մարդ, զոհվել է 48-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Սարդարաշեն

Գտնվում է Ասկերանից 10 կմ դեպի հյուսիս-արևմուտք, հեռավորությունը Ստեփանակերտից 25 կմ է: Այժմյան գյուղի պատմությունն սկսվում է 17-րդ դարի 60-ական թվականներից: Դիրքը նախալեռնային է, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1100 մ, կլիման բարենպաստ է:

1987 թ. այս գյուղում կար 62 տուն, 195 բնակիչ: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1933 թ., մասնագիտացված է հացահատիկի մշակության, այգեգործության, բանջարաբուծության և անասնապահության բնագավառներում: Միավորված է Նորագյուղի տնտեսությանը: Այժմյան դպրոցն ութամյա է: Ունի 40 աշակերտ, 9 ուսուցիչ: Գործում է ակումբ, բուժկետ, մանկապարտեզ, վարսավիրանոց: Էլեկտրիֆիկացվել է 1962 թ.: Տները հիմնականում երկհարկանի են, թիթեղածածկ: Գյուղն ապահովված է ջրով, ճանապարհները բարվոք են: Բնակիչներն աշխատասեր, հյուրասեր են: Կյանքի միջին

տևողությունը 75—80 տարի է: Այս գյուղից է անասնաբուժական գիտ. դոկտոր Վերդի Հակոբյանը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 104 մարդ, զոհվել է 46-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Խաչմաչ

Գտնվում է Ասկերանից 45 կմ դեպի հարավ-արևելք (Ասկերանի ու Մարտունու սահմանամերձ հատվածում), հեռավորությունը Ստեփանակերտից 25 կմ է: Արցախի հնագույն բնակավայրերից է: Անվանումն առաջացել է եկեղեցական խաչարձանների առկայությունից: Տեղադրված է ավելի քան 1400 մ բարձրություն ունեցող լեռնաճյուղի հարավահայաց, անտառածածկ լանջին: Կլիմայական պայմանները շատ բարենպաստ են, օդը՝ մաքուր, ջուրը՝ զուլալ: Գյուղի Ս. Ստեփանոս եկեղեցին կառուցվել է 1651 թ.: Այժմ շատ անմխիթար վիճակում է:

1890-ական թվականների սկզբներին այստեղ կար 62 տուն, 510 բնակիչ, 1920 թ.՝ 485 բնակիչ, իսկ 1987 թ.՝ 56 տուն, 185 բնակիչ: Բազմաթիվ երկհարկանի տներ (ավելի քան 40) դատարկ են:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ.: Գյուղատնտեսության հիմնական ուղղություններից են հացահատիկի մշակությունը, բանջարաբուծությունը, այգեգործությունն ու անասնապահությունը:

1873 թ. այստեղ գործել է ծխական դպրոց՝ 27 աշակերտով, 1903 թ. 33 աշակերտով: Այժմյան դպրոցն ութամյա է, ունի 26 աշակերտ, 8 ուսուցիչ:

Գործում է ակումբ, բուժկետ, էլեկտրիֆիկացվել է 1963 թ.: Տները երկհարկանի, թիթեղածածկ են, քարաշեն: Ճանապարհները խիստ անբարեկարգ են: Բնակիչներն աշխատասեր և միաբան են: Կյանքի միջին տևողությունը 70—75 տարի է: Այս գյուղի ծնունդ է հողագիտության դոկտոր, պրոֆեսոր Էդուարդ Հայրապետյանը: Գյուղը լավ ապահովված է ջրով, շրջակայքում կա 25 աղբյուր:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 105 մարդ, զոհվել է 66-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Դաշուշեն (Քարաշեն)

Գտնվում է Ասկերանից 28 կմ դեպի հարավ, հեռավորությունը Ստեփանակերտից 9 կմ է: Տեղադրված է Կարկառ գետի անտառածածկ հովտալան-

ջին, բարձրությունը ծովի մակերևույթից շուրջ 1000 մ է: Կլիմայական պայմանները մեղմ են, օդն ու ջուրը՝ մաքուր:

1987 թ. այստեղ կար 33 տուն, 69 բնակիչ: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ., զբաղվում են դաշտավարությամբ և անասնապահությամբ: Այժմ դպրոց չունի, երեխաները քիչ են՝ սովորում են հարևան գյուղում: Գործում է ակումբ, գրադարան, բուժկետ: Էլեկտրիֆիկացվել է 1961 թ.: Տները երկհարկանի, թիթեղածածկ են: Ջրով լավ չի ապահովված, ճանապարհները բարեկարգ են, բնակիչներն՝ աշխատասեր: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Այդ գյուղի ծնունդ են գրողներ Վազգեն Օվյանը և Գերասիմ Հովսեփյանը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 71 մարդ, զոհվել է 28-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան:

Հարավ

Գտնվում է Ասկերանից 33 կմ դեպի հարավ, հեռավորությունը Ստեփանակերտից 18 կմ է: Ըստ տեղեկությունների, այս գյուղի առաջին բնակիչները եկել են Գորիսի շրջանի Հարար բնակավայրից, որի անվանումը՝ պահպանվել, իսկ հետագայում էլ ձևափոխվել դարձել է Հարավ:

Տեղի հուշարձանների վրա եղած գրառումները թույլ են տալիս ենթադրելու, որ այժմյան Հարավ գյուղի պատմությունն սկսվում է 17-րդ դարի առաջին կեսից: Գյուղը տեղադրված է տեղանքի նկատմամբ բարձրադիր անտառածածկ սարահարթի վրա, որը և բնական ամրոցի դեր է խաղացել թուրքերի ու այլ թշնամիների դեմ պայքարի օրերին: Դիրքը լեռնային է, ունի մեղմ կլիմայական պայմաններ. ամառը զով է: Բարձրությունը ծովի մակերևույթից 1180 մ է:

Գյուղում պահպանվող եկեղեցին կառուցվել է 18-րդ դարի 80-ական թվականներին: Մինչև այսօր կանգուն է, ցավոք օգտագործվում է որպես կոլտնտեսության պահեստ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1933 թ., հիմնական ուղղությունները հացահատիկի մշակությունն ու անասնապահությունն են, հայտնի է նաև կարտոֆիլի մշակությամբ:

1987 թ. այստեղ կար 96 տուն, 281 բնակիչ: Տարրական դպրոց բացվել է 1933 թ., 1934 թ. դարձել է յոթնամյա, իսկ այժմ ութնամյա է և ունի 33 աշակերտ, 11 ուսուցիչ: Գործում է մշակույթի տուն, բուժկետ, կար ու ձևի արհեստանոց, վարսավիրանոց: Էլեկտրիֆիկացվել է 1958 թ., գյուղի մոտ կա մարմարի խոշոր հանքավայր, որտեղից արդյունահանվող մարմարի

հումքը տեղափոխվում և մշակվում է Ստեփանակերտում, Բաքվում և այլուր:

Տները երկհարկանի, քարաշեն, թիթեղածածկ են: Ճանապարհները բարեկարգ չեն: Բնակիչներն աշխատասեր, սրամիտ, հյուրասեր են: Կյանքի միջին տևողությունը 70—75 տարի է: Այս գյուղում են ծնվել Փառքի երեք աստիճանների շքանշանակիր Շահեն Սարգսյանը, երկրաբանական գիտ. դոկտոր Հրանտ Ղազարյանը, տեխնիկական գիտ. թեկնածու Արմեն Դանիելյանը:

Հայրենական մեծ պատերազմին այս գյուղից մասնակցել է 122 մարդ, զոհվել է 69-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Ռև

Գտնվում է Ասկերանից 20 կմ դեպի հյուսիս-արևմուտք, հեռավորությունը Ստեփանակերտից 27 կմ է: Տեղադրված է բլրի վրա, բարձրությունը ծովի մակերևույթից 1100 մ է: Այժմյան գյուղի պատմությունն սկսվում է 17-րդ դարի 80-ական թվականներից: 1884 թ. կառուցված եկեղեցին կասգուն է և օգտագործվում է որպես կենցաղի տուն:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1931 թ., մասնագիտացված է հացահատիկային տնտեսության, այգեգործության և անասնապահության բնագավառներում: 1920 թ. այստեղ կար 120 տուն, 450 բնակիչ, 1970 թ.՝ 90 տուն, 250 բնակիչ, 1987 թ.՝ 52 տուն, 112 բնակիչ: Դպրոց բացվել է 1906 թ.: Մինչև 1970-ական թվականները եղել է յոթնամյա դպրոց: Այժմ այն փակված է: Երեխաները սովորում են Ղշլաղի ութնամյա դպրոցում:

Գործում է ակումբ, գրադարան, բուժկետ, վարսավիրանոց, խանութ: Էլեկտրիֆիկացվել է 1961 թ.: Տները երկհարկանի են՝ քարակերտ, թիթեղածածկ: Ճանապարհներն անբարեկարգ են: Բնակիչներն աշխատասեր են: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Նշանավոր են Միրզախանանց, Փադի, Անջրհողեն աղբյուրները, Դերունց սար, Օհանանց սար վայրերը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 86 մարդ, զոհվել է 47-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Խանցք

Գտնվում է Ասկերանից 20 կմ դեպի հարավ-արևմուտք, հեռավորությունը Ստեփանակերտից 35 կմ է: Անվանումը նշանակում է խաների նստատեղ: Արցախի հին բնակավայրերից է: Պահպանվում է 1230 թ. կառուցված եկեղեցին:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ., հիմնական ուղղություններն են հացահատիկի, բանջարեղենի մշակությունը և անասնապահությունը:

1920 թ. այստեղ կար 508 բնակիչ, 1987 թ.՝ 67 տուն, 248 բնակիչ: Ունի տարրական դպրոց, որտեղ սովորում է 15 աշակերտ, աշխատում է 2 ուսուցիչ: Գործում է ակումբ, գրադարան, մանկապարտեզ, բուժկետ: Էլեկտրիֆիկացվել է 1962 թ., տները երկհարկանի, թիթեղածածկ են: Ճանապարհները խճապատ են: Բնակիչներն աշխատասեր և հյուրասեր են: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Այս գյուղում է ծնվել տնտեսագիտության թեկնածու Սամվել Կարապետյանը, բանաստեղծ Գուրգեն Գաբրիելյանը:

Հայրենական մեծ պատերազմում զոհվել է 60 խանգքեցի, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան:

Ղշլաղ

Գտնվում է Ասկերանից 25 կմ դեպի հյուսիս-արևմուտք. հեռավորությունը Ստեփանակերտից 18 կմ է: Դիրքը նախալեռնային է, բլրապատ. բարձրությունը ծովի մակերևույթից շուրջ 1000 մ է: Այժմյան գյուղի պատմությունն սկսվում է 17-րդ դարի 70-ական թվականներից: Գյուղի՝ 1750 թ. կառուցված եկեղեցին փլված է: 1920 թ. այստեղ կար 150 տուն, 750 բնակիչ, 1970 թ.՝ 70 տուն, 150 բնակիչ, 1987 թ.՝ 70 տուն, 171 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ.: Հիմնական ուղղությունն են հացահատիկի մշակությունը, բանջարաբուծությունը, խաղողագործությունը, անասնապահությունը, ինչպես նաև թթաստանների մշակությունը:

Դպրոցն այժմ ութամյա է, ունի ընդամենը 17 աշակերտ, 2 ուսուցիչ:

Գործում է ակումբ, գրադարան, բուժկետ, կապի բաժանմունք, խնայդրամարկղ, խանութ: Էլեկտրիֆիկացվել է 1961 թ., տները երկհարկանի են, թիթեղածածկ: Ապահովված է ջրով: Բնակիչներն աշխատասեր և հյուրասեր են: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Իսկ Սոնա Առուշանամյանը ավելի քան 100 տարեկան է:

Շրջակայքում նշանավոր են շատ աղբյուրներ՝ Հոռաղբյուր, Զարգարի, Կարմիր, Լուսավերջ, Ծետ, Վետշած աղբյուրները:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 162 մարդ, զոհվել է 87-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Մադաթքենդ (Մադաթաշեն)

Նախկինում կոչվել է Իլամանց գոմեր: Եղել է գեներալ, ռուսական բանակի փառաբանված զորավար Վալերիան Մադաթովին պատկանող անասնագոմերի տեղը: Այստեղից էլ առաջացել է այժմյան անվանումը: Այժմյան

բնակավայրի պատմությունն սկսվում է 17-րդ դարի կեսերից: Գյուղը գտնվում է Ասկերանից 42 կմ դեպի հարավ (Ավետարանոց Ղյուղի մոտ), հեռավորությունը Ստեփանակերտից 25 կմ է: Ունի սառնորակ աղբյուրներ, մարգագետնային արոտավայրեր, գեղատեսիլ անտառներ: Կան պատմական հուշարձաններ՝ Ղոնդիլը, Ճլնթռմ խաչը, Ըխտիլիազը:

Գյուղի եկեղեցին կառուցվել է 1904 թ.: Այժմ այն, ցավոք, օգտագործվում է որպես պահեստ: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1928—29 թթ.: Զարգացած է հացահատիկի արտադրությունը և անասնապահությունը:

1987 թ. այստեղ կար 29 տուն, 101 բնակիչ: Գյուղն ունի դպրոցական նոր շենք, որտեղ սովորում է (1—3-րդ դասարան) 8 աշակերտ (այն հարևան Ղարաբուլաղ գյուղի դպրոցի մասնաճյուղն է), աշխատում է 2 ուսուցիչ: Գործում է ակումբ, գրադարան: Էլեկտրիֆիկացվել է 1961 թ.: Տները երկհարկանի են, թիթեղածածկ: Ճանապարհները բարվոք չեն: Բնակիչներն աշխատասեր, հյուրասեր և սրամիտ են, կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 62 մարդ, զոհվել է 26-ը, որոնց հիշատակին կառուցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Քռասնի

Գտնվում է Ասկերանից 26 կմ դեպի հարավ, հեռավորությունը Ստեփանակերտից 12 կմ է: Դիրքը նախալեռնային է, տեղադրված է Բովուրխան լեռան լանջին, բարձրությունը ծովի մակերևույթից 950 մ է, ունի մեղմ կլիմա:

Այժմյան գյուղի պատմությունն սկսվում է 1630-ական թվականներից: Գյուղի եկեղեցին, որը կառուցվել է 1630 թ., փլված է:

1987 թ. տվյալներով այստեղ կար 69 տուն, 217 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ., մասնագիտացված է հացահատիկի մշակման, սերմնաբուծության և խաղողագործության ուղղությամբ: Դպրոցը ութամյա է, ունի 37 աշակերտ, 12 ուսուցիչ: Գործում են գրադարան, ակումբ, բուժկետ, կապի բաժանմունք: Էլեկտրիֆիկացվել է 1927 թ., ունի էլեկտրաղաց: Տները երկհարկանի, քարաշեն ու թիթեղածածկ են: Ջրով ապահովված է: Ճանապարհները բարվոք են: Բնակիչներն աշխատասեր, հյուրասեր են: Այս գյուղի ծնունդ է փիլիսոփայական գիտ. դոկտոր Մարգարիտա Պետրոսյանը: Կյանքի միջին տևողությունն այստեղ 80—85 տարի է: Նշանավոր են Քռասնի, Նվեր աղբյուրները, Ճնջաքարի լեռ, Շղասար, Պուլուր սար վայրերը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 132 մարդ, զոհվել է 59-ը, որոնց հիշատակին հուշարձան է կանգնեցված: Գյուղը հայաբնակ է:

Սարուշեն

Գտնվում է Ասկերանի շրջանի հարավ-արևելյան ծայրում: Հեռավորությունը Ասկերանից 45 կմ է, Ստեփանակերտից՝ 30 կմ: Լեռնային, գեղատեսիլ, անտառածածկ բնության ունի: Բարձրությունը ծովի մակերևույթից 1200 մ է: Կլիմայական պայմանները բարենպաստ են: Այժմյան գյուղի պատմությունն սկսվում է 17-րդ դարի սկզբներից: Գյուղի Ամենափրկիչ եկեղեցին կառուցվել է 1670 թ., վերանորոգվել է 1890 թ. Գրիգոր Այվազյանի միջոցներով:

1979 թ. այստեղ կար 125 տուն, 510 բնակիչ, 1987 թ.՝ 108 տուն, 395 բնակիչ: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1929—30 թթ., մասնագիտացված է հացահատիկային կուլտուրաների մշակման, այգեգործության (հատկապես խաղողի ու թթի) և անասնապահության բնագավառներում: Դպրոց բացվել է 1890 թ. Գրիգոր Այվազյանի միջոցներով: Այժմյան դպրոցը միջնակարգ է, ունի 58 աշակերտ, 18 ուսուցիչ: Գործում են մշակույթի տուն, բուժկետ, գրադարան, կապի բաժանմունք, կար ու ձևի արհեստանոց, հանդիսությունների տուն: Էլեկտրիֆիկացվել է 1952 թ.: Տները երկհարկանի, թիթեղածածկ են: Ջրով վատ է ապահովված: Ճանապարհները բարվոք են, գյուղամիջյան փողոցները՝ խճապատ: Բնակիչներն աշխատասեր, հյուրասեր և սրամիտ են: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Նշանավոր են Կյանչ և Խավար ջուր աղբյուրները:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 175 մարդ, զոհվել է 92-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Ջրաղացներ

Հայկական այս գյուղն անվանվել է նաև Դեմուրչիլար: Այն գտնվում է Ասկերանից 50 կմ դեպի հարավ, Ավետարանոց գյուղից ոչ մեծ հեռավորության վրա: Հիմնադրվել է 19-րդ դարի սկզբներին Ավետարանոցից այստեղ վերաբնակվածների կողմից: Տեղադրված է Քիրսի լեռնաճյուղերից մեկի ստորոտում, դիրքը գեղատեսիլ է, կլիման բարենպաստ է, օդը, ջուրը մաքուր: Գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1882 թ., կանգուն է, բայց օգտագործվում է որպես կոլտնտեսության պահեստ: 1890-ական թվականների սկզբներին այստեղ կար 65 տուն, 429 բնակիչ, իսկ 1987 թ.՝ 47 տուն, 182 բնակիչ: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1927—29 թթ., զբաղվում է հացահատիկի աճեցմամբ և անասնապահությամբ:

Այժմյան դպրոցը տարրական է, ունի 13 աշակերտ, մեկ ուսուցիչ: Ունի

ակումբ, գրադարան: Օգտվում են հարևան Ղարաբուլաղ գյուղի սպասարկման օբյեկտներից: Էլեկտրիֆիկացվել է 1951 թ.: Տները երկհարկանի, թիթեղածածկ են, ճանապարհները՝ բարեկարգ: Բնակիչներն աշխատասեր են: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Այս գյուղում են ծնվել ֆիզիկամաթեմատիկական գիտ. դոկտոր Շաբո Մուսայելյանը, ԽՍՀՄ ժողովրդական ուսուցիչ Իվան Աթայանը:

Հայտնի են Բաբունց, Մուսանց, Վանունց աղբյուրները:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 36 մարդ, զոհվել է 26-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Աղբուլաղ

Գտնվում է Ասկերանից 42 կմ դեպի հարավ-արևելք, հեռավորությունը Ստեփանակերտից 15 կմ է: Անվանումը (ադրբեջաներեն) կապված է Սպիտակ աղբյուրի հետ: Գյուղի պատմությունն սկսվում է 16-րդ դարի սկզբներից: Կա եկեղեցի, 19-րդ դարի կառույց է: Ունի բարենպաստ կլիմայական պայմաններ: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1933 թ.: 1971 թվականից միավորվել է Նախիջևանիկի պետական տնտեսությանը:

1987 թ. այստեղ կար 48 տուն, 129 բնակիչ: Դպրոց բացվել է 1887 թ.: Այժմյան դպրոցը ութամյա է, ունի 12 աշակերտ, 5 ուսուցիչ: Գործում են ակումբ, բուժկետ, կապի բաժանմունք: Էլեկտրիֆիկացվել է 1961 թ.: Տները երկհարկանի են, թիթեղածածկ: Ապահովված է ջրով: Ճանապարհները բարեկարգ չեն:

Բնակիչներն աշխատասեր են ու սրամիտ: Կյանքի միջին տևողությունը 70—75 տարի է: Աղբյուրներից նշանավոր են Վերին և Ներքին քյահրիզները:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 67 մարդ, զոհվել է 42-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան:

Մխիթարաշեն

Գտնվում է Ասկերանից 29 կմ դեպի հարավ, Ստեփանակերտից՝ 10 կմ հարավ-արևելք: Անվանումը կապված է Մխիթար Սպարապետի հետ: Մի ժամանակ կոչվել է նաև Ըրկթալի: Արցախի հին բնակավայրերից է: Այս գյուղի մոտակայքում Մխիթար Սպարապետի գլխավորած հայկական զորքը ջախջախել է պարսիկների մեծաքանակ զորքին:

Գյուղը տեղադրված է հովտում: Բարձրությունը ծովի մակերևույթից 900—950 մ է. կլիմայական պայմանները մեղմ են:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ.: Այժմ միավորված է Շոշի տնտեսությանը. մասնագիտացված է անասնապահության, հացահատիկային կուլտուրաների մշակման, բանջարաբուծության ուղղությամբ:

1987 թ. այստեղ կար 17 տուն, 59 բնակիչ: Դպրոց չկա, գործում է ակումբ: Էլեկտրիֆիկացվել է 1931 թ.: Տները երկհարկանի են, թիթեղածածկ: Ապահովված է ջրով: Ճանապարհներն անբարեկարգ են: Բնակիչներն աշխատասեր են, կյանքի միջին տևողությունը 80—90 տարի է: Կան պատմական հետաքրքիր վայրեր, այդ թվում Մխիթար Սպարապետի քարանձավը:

Հայրենական մեծ պատերազմում զոհվել է 30 մարդ, նրանց հիշատակին կանգնեցված է հուշարձանը: Գյուղը հայաբնակ է:

Մեհտիշեն

Գտնվում է Ասկերանից շուրջ 15 կմ դեպի հարավ-արևմուտք, հեռավորությունը Ստեփանակերտից 10 կմ է: 1824 թ. այստեղ բնակություն են հաստատել Իրանի Խոյ գավառից գաղթած 10 հայ ընտանիք, որոնք էլ հիմնադրել են այժմյան բնակավայրը:

Տեղադրված է ձորահովտում, բարձրությունը ծովի մակերևույթից 850—900 մետր է, կլիմայական պայմանները մեղմ են: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ.: 1954 թ. միավորվել է Բալլուջայի տնտեսությանը:

1905 թ. բացվել է դպրոց, որը 1985 թվականին փակվել է աշակերտ չլինելու պատճառով: Գործում են ակումբ, գրադարան, բուժկետ, խանութ: Էլեկտրիֆիկացվել է 1962 թ.: Տները երկհարկանի են, թիթեղածածկ: Ջրով լավ չի ապահովված: Ճանապարհները բարեկարգ են: Գյուղի եկեղեցին կառուցվել է 1828 թ., այժմ կանգուն է, ցավոք, օգտագործվում է որպես պահեստ:

Բնակիչներն աչքի են ընկնում աշխատասիրությամբ, հյուրասիրությամբ, կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 116 մարդ, զոհվել է 61-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Ուլուբաբ (Ուլուպապ)

Անվանումն առաջացել է Հասան Ջալալյանների տոհմից սերված խոշոր հողատեր Ուլի պապի անունից, որի նստավայրն այս բնակավայրն է եղել: Գտնվում է Ասկերանից 30 կմ դեպի հյուսիս-արևմուտք, Ասկերանի ու

Մարտակերտի շրջանների սահմանագլխին: Արցախի հին բնակավայրերից է, 1263 թ. կառուցված եկեղեցին այժմ անմխիթար վիճակում է: 1920 թ. այստեղ կար 60 տուն, 300 բնակիչ: Այժմ գյուղը ամայացել է: Այս գյուղում է ծնվել փիլիսոփ. գիտ. դոկտ., պրոֆ. Հրաչիկ Շաքարյանը:

Հայրենական մեծ պատերազմին այս գյուղից մասնակցել է 55 մարդ, զոհվել է 22-ը:

Վարազաբուն (Արանզամին)

Գտնվում է Ասկերանից 11 կմ դեպի հարավ-արևելք, հեռավորությունը Ստեփանակերտից 29 կմ է: 1864 թ. կառուցված եկեղեցին այժմ անմխիթար վիճակում է: 1987 թ. այստեղ կար 45 տուն, 150 բնակիչ: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1932 թ.: 1969 թվականից պետական տնտեսություն է: Հիմնական ուղղությունը խաղողագործությունն ու հացահատիկի մշակությունն է: Դպրոց հիմնադրվել է 1875 թ.: Այժմ դպրոցը փակվել է դպրոցահասակ երեխաներ չունենալու պատճառով: Ունի ակումբ, գրադարան, թանգարան (Խորհրդային Միության հերոս Երեմ Դանիելյանի անվան): Էլեկտրիֆիկացվել է 1959 թ.: Տները երկհարկանի են, թիթեղածածկ: Ճանապարհները բարեկարգ են: Բնակիչներն աշխատասեր են և հյուրասեր: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Իսկ Թամամ Սարգսյանը 110 տարեկան է: Այս գյուղում են ծնվել Խորհրդային Միության հերոսներ Երեմ Դանիելյանը և Գևորգ Հակոբյանը:

Հայտնի են Գյոզալին, Շոր, Շենին աղբյուրները:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 97 մարդ, զոհվել է 59-ը: Գյուղը հայաբնակ է:

Դահրազ

Գտնվում է Ասկերանից 18 կմ դեպի հարավ: Հեռավորությունը Ստեփանակերտից 36 կմ է: Դահրազի պատմությունն սկսվում է 17-րդ դարի սկզբներից: Դիրքը նախալեռնային է, կլիման՝ նպաստավոր: 1987 թ. այստեղ կար 21 տուն, 55 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1931 թ., 1971 թվականից դարձել է պետական տնտեսություն, զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի մշակությամբ: Միավորված է Նախիջևանիկի տնտեսությանը: Դպրոց հիմնադրվել է 1892 թ.: Այժմ այն փակվել է: Ունի միայն ակումբ: Էլեկտրիֆի-

կացվել է 1961 թ.: Ապահովված է ջրով: Բնակիչներն աշխատասեր և հյուրասեր են: Կյանքի միջին տևողությունը 70—75 տարի է: Հայտնի են Կոթ, Ուսումանց աղբյուրները: Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 37 մարդ, զոհվել է 20-ը:

Քյաթուկ

Գտնվում է Ասկերանից 4 կմ, իսկ Ստեփանակերտից՝ 22 կմ հեռավորության վրա: Նախալեռնային դիրք ունի, բարձրությունը ծովի մակերևույթից 700 մ է: Հին հայկական բնակավայրերից է, գյուղում կանգուն է Ս. Աստվածածին եկեղեցին:

1987 թ. այստեղ կար 30 տուն, 73 բնակիչ: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930—32 թթ., այժմ միավորված է Խանաբադի տնտեսությանը: Զբաղվում է հացահատիկի մշակությամբ, այգեգործությամբ և անասնապահությամբ: 1987 թ. փակվել է տեղի տարրական դպրոցը: Գործում է ակումբ, էլեկտրիֆիկացվել է 1960 թ.: Տները հիմնականում երկհարկանի ու թիթեղածածկ են: Բնակիչներն աշխատասեր են: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Այս գյուղում է ծնվել երկրաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգեյ Բալասանյանը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 121 մարդ, զոհվել է 68-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Քարագլուխ

Գտնվում է Ասկերանից 20 կմ դեպի հյուսիս. հեռավորությունը Ստեփանակերտից 37 կմ է: Անվանումն առաջացել է բարձր, լեռնային դիրքից, բնակիչներն եկել են Գորիսի շրջանի Քարագլուխ գյուղից: Գյուղի պատմությունն սկսվում է XIII դարից: Գյուղի Շիկաքար բերդը պատմական կարևոր վայրերից է և նշանակալից դեր է խաղացել Արցախի պաշտպանության գործում: Բարձրությունը ծովի մակերևույթից ավելի քան 1100 մ է, կլիման զով է, օդը մաքուր: Գեղատեսիլ, անտառածածկ բնություն ունի: Կա երկու եկեղեցի՝ կառուցված XIII դարում: Մեկը կանգուն է, մյուսը՝ փլված: Մինչև 1977 թ. գործել է թերի միջնակարգ դպրոց: Այժմ գյուղը համարյա դատարկ է: Այս և հարևան Փառուխ գյուղերից Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 96 մարդ, զոհվել է 56-ը: Խրամորթում կանգնեցված է միացյալ հուշարձան: Գյուղը հայաբնակ էր:

Մոշխմհատ

Գտնվում է Ասկերանից 46 կմ դեպի հարավ-արևմուտք, շրջանի հարավային ծայրում, հեռավորությունը Ստեփանակերտից 28 կմ է: Անվանումն առաջացել է շրջապատում մոշի թփերի առատությունից:

Գյուղի պատմությունը հիմնականում սկսվում է 17-րդ դարի սկզբներից: Լեռնային գեղատեսիլ դիրք ունի. շրջապատված է անտառներով. բարձրությունը ծովի մակերևույթից 1500 մ է: 19-րդ դարի 90-ական թվականների սկզբին այստեղ կար 50 տուն, 277 բնակիչ: 1920 թ. ուներ 64 տուն, 300 բնակիչ, 1959 թ.՝ 51 տուն, 250 բնակիչ, 1970 թ.՝ 17 տուն, 40 բնակիչ, իսկ 1987 թ.՝ 11 տուն, 26 բնակիչ: Գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին կանգուն է, ցավոք օգտագործվում է որպես պահեստ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1929 թ.: Հիմնականում զբաղվում են հացահատիկի մշակմամբ, այգեգործությամբ և անասնապահությամբ: Մինչև 1970-ական թվականները գործում էր դպրոց, հետագայում փակվել է՝ դպրոցահասակ երեխաներ չլինելու պատճառով: Սպասարկման ոչ մի օբյեկտ չունի: Էլեկտրիֆիկացվել է 1962 թ.: Տները երկհարկանի են, թիթեղածածկ: Ճանապարհներն անբարեկարգ են: Բնակիչներն աշխատասեր և հյուրասեր են: Կյանքի միջին տևողությունը 85—90 տարի է, իսկ Մոշխմհատցի Կատյա Սարգսյանն այժմ 110 տարեկան է: Շրջապատում կան պատմական հետաքրքիր հուշարձաններ, մոտակա բարձրադիր լեռան վրա է Ղևոնդիկ վանքը, կան շատ սառնորակ աղբյուրներ:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 48 մարդ, զոհվել է 31-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Փառուխ

Գտնվում է Ասկերանից 24 կմ դեպի հյուսիս, հեռավորությունը Ստեփանակերտից 31 կմ է: Արցախի հայկական հնագույն բնակավայրերից է, պատմությունն սկսվում է IX դարից: Գյուղի IX—X դդ. եկեղեցին ավերակ է դարձել: Գյուղը տեղադրված է Շիկաքար լեռան լանջին, բարձրությունը ծովի մակերևույթից ավելի քան 800 մ է, ունի գեղատեսիլ, անտառածածկ բնություն, սառնորակ աղբյուրներ, մոտակա հովտում հոսում է Խաչեն գետը:

1987 թ. այստեղ կար 24 տուն, 81 բնակիչ: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1932 թ., որն այժմ միացվել է Խրամորթի տնտեսությանը: Զբաղվում են հացահատիկի մշակությամբ և անասնապահությամբ: Մինչև 1984 թ. գյուղում գործում էր տարրական դպրոց: Ունի ակումբ, բուժկետ: Էլեկտրիֆի-

կացվել է 1958 թ.: Տները հիմնականում երկհարկանի ու թիթեղածածկ են: Ճանապարհները համեմատաբար բարվոք են: Բնակիչներն աշխատասեր և հյուրասեր են: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Շրջակայքում հայտնաբերվել են մարմարի պաշարներ:

Հիլիս

Գտնվում է Ասկերանից 15 կմ դեպի արևմուտք, հեռավորությունը Ստեփանակերտից 25 կմ է: Դիրքը նախալեռնային է, բարձրությունը ծովի մակերևույթից՝ ավելի քան 800 մ: Արցախի հին բնակավայրերից է: Գյուղի եկեղեցին ավերված է: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1932 թ.: Այժմ միավորված է Խնձրիստանի տնտեսությանը: Հիմնական զբաղմունքը անասնապահությունն է: 1987 թ. այստեղ կար 47 տուն, 163 բնակիչ: Այժմյան դպրոցը տարրական է, ունի 10 աշակերտ, 3 ուսուցիչ: Ունի ակումբ, գրադարան, էլեկտրիֆիկացվել է 1961 թ.: Տները քարաշեն են, երկհարկանի ու թիթեղածածկ: Ապահովված է ջրով: Բնակիչներն աշխատասեր են: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Նշանավոր են Վանի ապոր, Ջալալ ապոր, Պապիի աղբյուրները:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 60 մարդ, զոհվել է 33-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

*
* *

Բացի նշվածներից, Ասկերանի շրջանում են *Քյոսալար, Լեսնոյ, Ջամիլլու, Բաշքանդ, Ջանհասան, Ջավադլար, Գարագյավ, Դալադարասի, Յալոբա, Խոջալլու, Հասանաբադ, Դարալագյազ* գյուղերը, որոնց մի մասը խառը բնակչություն ունի, մյուսները բնակեցված են ադրբեջանցիներով:

8. ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆ

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի վարչական հինգ շրջաններից ամենաընդարձակը Մարտակերտի շրջանն է: Նրա տարածքը կազմում է 1,7 հազ. կմ^2: Համեմատության համար ասենք, որ տարածքով այն հավասար է Հայկական ԽՍՀ-ի ամենաընդարձակ՝ Սիսիանի շրջանին:

Մարտակերտի շրջանն զբաղեցնում է մարզի հյուսիսային մասը, Խաչեն և Քոլատակ գետերի ավազաններից դեպի հյուսիս ընկած ամբողջ հատվածը: Ընդգրկում է պատմական Արցախի Ջրաբերդ գավառը և Խաչեն ու Գյուլիստան գավառների զգալի մասը:

Արցախի պատմության մեջ ունեցած դերով, այստեղ առկա հայկական հնագույն պատմաճարտարապետական եզակի կոթողների քանակով, ինչպես նաև անզուգական բնությամբ Մարտակերտի շրջանն առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում: Բավական է նշել, որ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տարածքում մինչև այժմ հաշվարկված 2765 հայկական հուշարձաններից 1100-ը գտնվում են Մարտակերտի շրջանում: Դրանցից հատկապես պատմական մեծ արժեք են ներկայացնում Գանձասարի վանքը, Դադի կամ Խութավանքը, Կարմիր, Երիցմանկանց, Եղիշե առաքյալի, Ամենափրկիչ, Հոռեկա, Հավապտուկ վանքերը, Խոխանաբերդը, Պառավաձորի եկեղեցին, Կաչաղակաբերդը, Ջրաբերդը, Մելիք Բեգլարյանների ապարանքը, Վանքասարը և ճարտարապետական այլ համալիրներ:

Առանձնահատուկ է հատկապես Գանձասարի վանքը: «13-րդ դարի հայկական ճարտարապետական հանրագիտարան». այսպես է գնահատել ռուս անվանի արվեստաբան Անատոլի Յակոբսոնը Արցախի պատմաճարտարապետական կանգուն հուշարձանների գոհարը՝ *Գանձասարի վանքը:* Այն գտնվում է Մարտակերտի շրջանի Վանք գյուղի մոտ: Իսկ Վանք գյուղն էլ, որը Արցախի ամենահին, պատմական հարուստ անցյալ ունեցող և խոշոր բնակավայրերից է, գտնվում է Մարտակերտից 50 կմ դեպի հարավ-արևմուտք՝ Խաչեն գետի ձախ ափին: Ի դեպ, գյուղի անվանումն էլ հենց առաջացել է Գանձասարի վանքից, քանի որ նախկինում բնակավայրը տեղադրված է եղել անմիջապես նրա շուրջը: Հետագայում բնակավայրը տեղաշարժվել է վանքից մոտ մեկ կիլոմետր դեպի հյուսիս, որտեղ էլ այժմ այն փռված է: Տեղանքը, ուր գտնվում է վանքը, ծովի մակերևույթից մոտ 1300 մ բարձրություն ունի, շրջապատված է անտառներով ու այգիներով:

Մարտակերտի շրջանի այն մասը, որտեղ Գանձասարի վանքն է, նախկինում մտել է Խամսայի հինգ մելիքություններից ամենահզորի՝ Խաչենի մելիքության տարածքի մեջ:

Պատմական բազմազան փաստերը, առկա խաչքարերը, կրոնական և



Գանձասարի վանքը (XIII դ.)

բնակելի կիսավեր ու ավերված շինությունների հիմնագիր արձանագրությունները ցույց են տալիս, որ մինչև Գանձասարի այժմյան կանգուն վանքի կառուցումը այստեղ եղել են բնակելի և եկեղեցական շինություններ: Սակայն եկեղեցական այդ նոր հմայիչ համալիրի կառուցումը Խաչենի իշխանության այս հատվածում, որը տափաստանային վայրերից (որտեղից թաթար-մոնղոլական, այնուհետև թուրքական բարբարոս ցեղերը հաճախակի հարձակվում էին) դեպի Արցախի լեռնաշխարհը տանող գլխավոր մատույցն էր, մտահղացված էր խելացի կերպով ու հեռանկարով: Այն պետք է դառնար Արցախի ոչ միայն կրոնական խոշոր կենտրոնը, այլև նրա պաշտպանական, քաղաքական, տնտեսական հզոր պատվարը:

Գանձասարի վանքի կառուցումը սկսվել է 1216 թվականին և ավարտվել 1238-ին: Այն կառուցել է Խաչենի մեծ իշխան Հասան Ջալալյանը (Հասան-Ջալալ-Դոլան): Հենց Հասան Ջալալյան իշխանական տոհմի շնորհիվ էլ Գանձասարը մինչև 19-րդ դարի սկզբները եղել է Արցախի կրոնական, քա-



Գանձասարի վանքը (XIII դ.)

ղաքական, մշակութային, տնտեսական, պաշտպանական խոշոր կենտրոնը: Գանձասարը երկար ժամանակ եղել է Աղվանից կաթողիկոսության աթոռանիստը:

Անգնահատելի է Գանձասարի և նրա տերերի՝ Հասան Ջալալյանների դերը թշնամիներից ամբողջ Արցախի պաշտպանության, ազգային-ազատագրական շարժումների կազմակերպման և, որ շատ կարևոր է, Արցախը, հետևաբար նաև ամբողջ Հայաստանը, Ռուսաստանի հետ միացնելու գաղափարի ձևավորման գործում: Շուրջ 300 տարի առաջ հենց այստեղ՝ Գանձասարի վանքում են Արցախի մելիքները կազմել նամակներ, խնդրագրեր և հատուկ պատվիրակներով ուղարկել Ռուսաստանի ցարին՝ պարսկա-թուրքական լծից երկրամասը ազատագրելու և Ռուսաստանին միացնելու նպատակով:

Այսպիսով, ինչպես նշվել է, Արցախի հայությունը Անդրկովկասում առաջինն էր իր հայացքը ուղղել դեպի հյուսիսային՝ մեծ հարևան Ռուսաստանը և ամբողջ հայ ժողովրդի հետ 300 տարի անդավաճան համագործակցել ռուս ժողովրդի հետ:



Հատված Գանձասարի վանքից



Հատված Գանձասարի վանքից

Մարտակերտի շրջանի տարածքով են հոսում Լեռնային Ղարաբաղի երկու համեմատաբար խոշոր՝ Թարթառ (նախկինում Տրտու) և Խաչեն գետերը՝ իրենց բազմաթիվ վտակներով: Այդ լեռնային գետերի անդնդախոր կիրճերը, ջրվեժները, զուլալ ջրերը աշխարհի բնական ամենահետաքրքիր հրաշալիքների թվին կարելի է դասել:

Շրջանի տարածքի մեծ մասը անտառածածկ է: Անտառներում ամենուրեք տարածված են վայրի պտղատու ծառատեսակներ: Մարտակերտի շրջանը արևելքից սահմանակից է Ադրբ. ԽՍՀ-ի Աղդամի, Միր-Բաշիրի, Բարդայի շրջաններին, հյուսիսային մասում՝ Շահումյանի, արևմտյան մասում՝ Քալբաջարի ու Լաչինի շրջաններին, իսկ հարավային մասում՝ Լեռնային Ղարաբաղի Ասկերանի շրջանին:

Շրջանի հողային ֆոնդը կազմում է ավելի քան 170 հազ. հա, որից վարելահողերը կազմում են շուրջ 23 հազ. հա, այգիները՝ 6 հազ. հա: Ընդարձակ տարածություններ են զբաղեցնում արոտավայրերը՝ շուրջ 34 հազ. հա և անտառները՝ 75 հազ. հա:

Գյուղատնտեսության ճյուղերից առաջատարները խաղողագործությունը և անասնապահությունն են: Վերջին տվյալներով՝ խաղողի այգիների տարածությունը շրջանում կազմում է ավելի քան 5 հազ. հա: Խաղողագործությունը առավելապես տարածվում է Թարթառ գետի ավազանի հարթավայրային ու նախալեռնային հատվածներում: Անասնապահությունը զարգացած է շրջանի բոլոր գյուղերում, սակայն այն առավել մասնագիտացված ուղղություն ունի բարձրադիր վայրերում գտնվող գյուղերի տնտեսություններում:

Այս խոշոր շրջանում արդյունաբերությունը դեռևս աննշան տեղ ու դեր ունի: Արդյունաբերական օբյեկտներից համեմատաբար նշանավորը Թարթառ գետի վրա կառուցված Սարսանգի հիդրոէլեկտրակայանն է, որի անունը, թերևս ճիշտ կլինի փոխել ու դարձնել Թարթառի ՀԷԿ: Մարտակերտում գործում է Ստեփանակերտի մետաքսի կոմբինատի մասնաճյուղը, փայտասղոցման կետ, շինանյութերի կոմբինատ, լիմոնադի արտադրամաս, հացի կոմբինատ, իսկ Լենինավանում՝ խաղողի նախնական մշակման ձեռնարկություն: Ահա հիմնականում սրանք են շրջանի այն ձեռնարկությունները, որոնք կարելի է անվանել արդյունաբերական: Մինչդեռ Մարտակերտի շրջանն ունի բոլոր հնարավորությունները գյուղատնտեսական հումքի վերամշակման հզոր ձեռնարկությունների, ինչպես նաև թեթև արդյունաբերության և ճշգրիտ մեքենաշինության, սարքաշինության գործարանների մասնաճյուղեր հիմնադրելու համար:

Մարտակերտի շրջանում կա 61 բնակավայր, որից 54-ը՝ հայկական են, 7-ը՝ խառը և ադրբեջանական: Շրջանի բնակչությունը 1987 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 45,3 հազար մարդ, որի ավելի քան 98 %-ը հա-



Քարաշեն հին կամուրջ Թարթառ գետի վրա



Վանքասար (Վաչագան Բարեպաշտի եկեղեցին IV դ.)

յեր են: Այստեղ կա մեկ քաղաք և մեկ քաղաքատիպ ավան: Մարտակերտ քաղաքը, որը շրջանի վարչական կենտրոնն է, ունի 8,5 հազար բնակիչ: Քաղաքատիպ ավանը՝ Լենինավանն է (նախկինում՝ Մարգուշավան), որն ունի 4,7 հազար բնակիչ:

Գյուղական բնակավայրերից խոշորները Չայլու և Հաթերք գյուղերն են, որոնցից յուրաքանչյուրն ունի 2660 բնակիչ (1987 թ.):

Շրջանի գյուղերի մեծ մասը պատմական հարուստ անցյալ ունեցող հայկական բնակավայրեր են, որոնցից յուրաքանչյուրն իր անուրանալի ներդրումն ունի արտաքին բարբարոս ցեղերի դեմ պայքարելու, ամբողջ Արցախի ազատագրական և հեղափոխական շարժումների բնագավառներում: Այդ շրջանում են ծնվել ազգային-ազատագրական շարժումների բազմաթիվ ղեկավարներ, հերոսներ, պրոֆեսիոնալ հեղափոխականներ, Խորհրդային Միության և Սոցիալիստական աշխատանքի հերոսներ, ականավոր գիտնականներ, արվեստագետներ:



Դադիվանքի համալիրը (X—XIII դդ.)

Արցախի պատմության մեջ փառավոր էջեր են թողել Խաչենի իշխանական տոհմի բոլոր մեծերը՝ Հասան Ջալալյանները: Դրանցից ամենահռչակավորը, ինչպես ասվել է, Գանձասարի հիմնադիր, Խաչենի մեծ իշխան Ջալալ Դոլան է: Նա ոչ միայն կրոնական բարձրաստիճան գործիչ էր, այլ հմուտ շինարար, տաղանդավոր ու քաջ զորավար, խելացի քաղաքագետ: Խաչենը տվել է նաև Ռուզանի նման քաջարի բազմաթիվ դուստրեր, որոնք մեծ դեր են խաղացել վայրագ ցեղերից Արցախի ազատագրության գործում: Մարտակերտի շրջանի Կուսապատ գյուղի ծնունդ են 1805—1811 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ իրենց հերոսություններով հայտնի դարձած Վանի և Հակոբ Յուզբաշյանները: Այստեղ են ծնվել նաև Վ. Ի. Լենինի զինակից, հեղափոխական և դիվանագետ Ալեքսանդր Բեկզադյանը, Բաքվի կոմունայի ակտիվ գործիչ Լևոն Աթաբեկյանը և շատ ուրիշներ:

Ցավով պետք է նշել, որ երբեմնի հարուստ բնակավայրերի զգալի մասը նախկին ղեկավարների ջանքերով ոչ միայն անցած 70 տարիների



Դադիվանքի համալիրը (X—XIII դդ.)

ընթացքում սոցիալ-տնտեսական զարգացում չի ապրել, այլ քայքայվել է, դատարկվել: Շրջանի գյուղերի զգալի մասը, հատկապես լեռնային գյուղերը չունեն սոցիալ-տնտեսական ամենատարրական պայմաններ: Չեն գործում կամ չկան գրադարաններ, ակումբներ, կենցաղսպասարկման օբյեկտներ:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ շրջանի (ինչպես ամբողջ Արցախի) համարյա բոլոր գյուղերի ճանապարհներն անբարեկարգ են, անտանելի են գյուղամիջյան փողոցները: Աշխատանքի բնագավառ չունենալու և նշված պայմանների պատճառով է, որ տասնամյակներ շարունակ շրջանի երիտասարդությունը ստիպված է եղել հեռանալ իր հայրենի լեռնաշխարհից: Պատահական չէ, որ գյուղերի մեծ մասում կարելի է տեսնել երկհարկանի, բարեկարգ, թիթեղածածկ տներ, որոնք կամ դատարկ են, կամ էլ դրանցում ապրում են միայն ծեր մարդիկ, իսկ որոշ գյուղերում էլ դպրոց-

Խաչքար Դադիվանքում (XII դ.)

Խաչքար Դադիվանքում (XII դ.)

ները, աշակերտներ չլինելու պատճառով փակված են: Արդյոք սա մտածված և ծրագրված «քաղաքականություն» չէր ալիևյան և կևորկովյան տիպի վայ-կոմունիստների կողմից:

Ինչպես Մարտակերտի, այնպես էլ ամբողջ Արցախ-Ղարբաղի գյուղերի սոցիալ-տնտեսական վերակենդանացումը, զարգացումը միայն կարող են իրականացվել Հայկական ԽՍՀ-ի հետ Լեռնային Ղարաբաղի սոցիալ-տնտեսական բազմակողմանի ինտեգրացման և դրա հիման վրա մարզը մայր հայրենիքին վերամիավորելու ճանապարհով:

Շրջանի բնակավայրերը միավորված են 22 գյուղական և 1 ավանային խորհուրդների մեջ:

Ստորև տրվում է շրջանի բնակավայրերի համառոտ բնութագիրը:

Մարտակերտ

Գտնվում է շրջանի հյուսիս-արևելյան հարթավայրային հատվածում, հեռավորությունը Ստեփանակերտից 55 կմ է: Տեղադրված է Կուսապատի լեռնահովտից դեպի Արցախի հարթավայր դուրս գալու սահմանագլխին: Հարթավայրից դեպի Արցախի լեռներն անցնող այս հատվածում հայերը հաճախակի կատաղի մարտեր են մղել տարացեղ հրոսակների մեծաքանակ զորքերի դեմ: Հենց այս վայրում հիմնադրված հայկական բնակավայրն էլ անվանվել է Մարտակերտ, այսինքն մարտերում կերտված: Որոշ ժամանակ այս բնակավայրը կոչվել է օտար անվանումով՝ Աղդարա, այսինքն Սպիտակ հովիտ: Օտարները այդպես են անվանել այն, հովտում սփռված սպիտակ ապարների (կրաքարի) պատճառով:

Մինչև 1985 թ. Մարտակերտը քաղաքատիպ ավան էր, այնուհետև քաղաքի ստատուս է ստացել: Որպես նշանավոր բնակավայր հայտնի է 19-րդ դարի սկզբներից:

Կլիմայական պայմանները չոր մերձարևադարձային են, ամռանը շոգ է լինում, միջին բարձրությունը ծովի մակերևույթից 460 մ է:

19-րդ դարի 90-ական թվականների սկզբներին այստեղ կար 355 տուն, 3049 բնակիչ, 1959 թ.՝ 1191 տուն, 4492 բնակիչ, 1979 թ.՝ 1594 տուն, 6690 բնակիչ: 1987 թ. Մարտակերտի բնակչությունը կազմել է 8500 մարդ: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ., որը 1964 թվականից դարձել է խաղողագործական պետական տնտեսություն: Խաղողագործությունից բացի, զարգացած է անասնապահությունն ու հացահատիկի մշակությունը: Խաղողի բերքատվությունը հասնում է մեկ հա-ից 280—300 ց, հացահատիկինը՝ 40—50 ց, մեկ կովի կաթնատվությունը տարեկան կազմում է 4600 լիտր:

1901 թ. այստեղ բացվել է երկդասյան դպրոց: Այժմ ունի 2 միջնակարգ դպրոց՝ 1617 աշակերտ, 153 ուսուցիչ: Կան մեկական գիշերօթիկ, երեկոյան և երաժշտական դպրոցներ: Ունի նաև մեկ պրոֆտեխուսումնարան և 2 մանկապարտեզ: Քաղաքն ունի շրջանային հիվանդանոց, կապի հանգույց, փոստ, մշակույթի տուն, գրադարաններ, կենցաղսպասարկման բոլոր տեսակի օբյեկտներ, խանութներ: Էլեկտրիֆիկացվել է 1947 թ.: Ունի հացի կոմբինատ, սղոցարան, լիմոնադի արտադրամաս, շինանյութերի կոմբինատ, թռչնաբուծական կայան: Այստեղ գործում է Ստեփանակերտի մետաքսի կոմբինատի մասնաճյուղը: Տների մեծ մասը քարաշեն, երկհարկանի են: Այժմ մեծ թիվ են կազմում պետական բազմահարկ շենքերը: Ջրով հիմնականում ապահովված է: Փողոցները և ճանապարհները բարեկարգ են:

1883 թ. կառուցված Ս. Կարապետ եկեղեցին օգտագործվում է որպես կինոթատրոնի շենք:

Այստեղ են ծնվել Խորհրդային Միության հերոս Թեմիկ Ավթանդիլյանը, Սոցիալիստական աշխատանքի հերոս Սամվել Մամունցը, հեղափոխական Նիկոլայ Ավթանդիլյանը, բժշկական գիտ. դոկտորներ, պրոֆեսորներ Սերգեյ Ավագյանը և Գեորգի Տեր-Եղիազարյանը: Բնակիչներն աշխատասեր են և հյուրասեր: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է, իսկ Ազիզգյուլ Իզմաիլյանը, Համբարձում Գասպարյանը 100-ից ավելի տարիք ունեն: Նշանավոր են Վերին քյահրիզ, Ներքին քյահրիզ, Մակառի աղբյուրները, Թազա խաչ, Օհանանց քերծ, Սուլթանեն տափ, Արևմոր վայրերը: Շրջապատը անտառազուրկ է, մոտակայքով ձգվում է Մռովի լեռնաճյուղը: Շրջակայքը հարուստ է կրաքարի պաշարներով:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 600 մարդ, զոհվել է 293-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Քաղաքը հայաբնակ է:

Լենինավան

Գտնվում է Մարտակերտից 16 կմ դեպի հյուսիս-արևելք, հեռավորությունը Ստեփանակերտից 71 կմ է: Տեղադրված է Թարթառի աջ ափին, տեղանքը հարթավայրային է: Մինչև 1952 թ. կոչվել է Մարգուշավան: Հիմնադրվել է 1906 թ. և կոչվել տեղի հողատեր Ավան Յուզբաշովի աղջկա անունով: Սա շատ մոտ էր 1829 թ. հիմնադրված Մարաղա գյուղին, որի բնակիչները տեղափոխվել են Պարսկաստանի համանուն բնակավայրից:

1960 թ. Լենինավանի և Մարաղայի կոլտնտեսությունները միավորվել են: Լենինավանը քաղաքատիպ ավան է, ունի բարեկարգ, ուղիղ փողոցներ: Բարձրությունը ծովի մակերևույթից 430 մ է, կլիման՝ չոր մերձարևադարձային: 1987 թ. տվյալներով ունի 4700 բնակիչ: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ., իսկ 1964 թվականից դարձել է խաղողագործական պետական տնտեսություն: Զբաղվում է նաև անասնապահությամբ և բանջարաբուծությամբ: Ունի միջնակարգ դպրոց հայկական և ռուսական բաժանմունքներով, ուր աշակերտների թիվն անցնում է 460-ից: Լենինավանը Մարաղայի հետ միասին ունի 5 ակումբ, 3 կինոտեղակայում, 6 ճաշարան, 1 ռեստորան, 3 մանկապարտեզ (որից 2-ը՝ հայկական, 1-ը՝ ռուսական), կենցաղսպասարկման բազմաթիվ կետեր, հիվանդանոց, կապի բաժանմունք: Էլեկտրիֆիկացվել է 1951 թ., գործում են գյուղատնտեսական գիտափորձնական, սերմնաբուծական բազան, կենցաղսպասարկման կոմբինատը: Տները երկհարկանի ու թիթեղածածկ են: Գազիֆիկացված է: Ջրով լավ չի ապահովված: Ավանի ճանապարհները բարեկարգ չեն: Բնակիչներն աչքի են ընկնում աշխատասիրությամբ, հյուրասիրությամբ: Կյանքի միջին տևողությունը 70—75 տարի է:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 129 մարդ (միայն նախկին Մարգուշավանից), զոհվել է 42-ը: Ավանը հիմնականում հայաբնակ է, կան որոշ թվով ռուսներ:

Մարաղա

Ինչպես նշվել է, անվանումն առաջացել է Պարսկաստանի Մարաղա հայկական բնակավայրից, որտեղից 1829 թ. տեղափոխվել և այստեղ համանուն բնակավայրն են հիմնել մի քանի տասնյակ հայ ընտանիքներ: Գտնվում է Լենինավանին անմիջապես մոտ և նրա հետ մեկ տնտեսություն է: Այստեղ 1901 թ. բացվել է մեկդասյան դպրոց: Այժմյան միջնակարգ դպրոցն ունի 300 աշակերտ, 34 ուսուցիչ: Մյուս տվյալները նշվել է Լենինավանի հետ միասին: Այս գյուղում է ծնվել տեխն. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վաչագան Գրիգորյանը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 255 մարդ, (միայն Մարաղայից), զոհվել է 148-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան:

Կարմրավան

Հիմնադրվել է 1920 թ. մայիսին (այստեղից էլ նրա անվանումը): Գտնվում է Մարտակերտից 16 կմ հեռավորության վրա, դիրքը հարթավայրային է, կլիման մերձարևադարձային, տոթ ամառով, բարձրությունը ծովի մակերևույթից 380 մ է:

1970 թ. այստեղ կար 132 տուն, 605 բնակիչ, 1987 թ.՝ 148 տուն, 518 բնակիչ: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ., 1950 թ. միավորվել էր Սեյսուլանի կոլտնտեսությանը, իսկ 1964 թվականից միավորվել է Մարտակերտի պետական տնտեսությանը: Մասնագիտացված է խաղողագործության և անասնապահության ուղղությամբ:

1931 թ. բացվել է տարրական դպրոց, այժմյան դպրոցն ութամյա է, ունի 77 աշակերտ, 16 ուսուցիչ: Կա մշակույթի պալատ, գրադարան, կինոտեղակայում, վարսավիրանոց, կապի բաժանմունք, խանութ, բուժկետ: Տները երկհարկանի են, թիթեղածածկ: Ճանապարհները բարեկարգ չեն: Բնակիչներն աշխատասեր են: Կյանքի միջին տևողությունը 70—75 տարի է: Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 63 մարդ, զոհվել է 24-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Մարալյան Սարով

Գտնվում է Թարթառ գետի աջ ափին, Մարտակերտից 22 կմ, իսկ Ստեփանակերտից 77 կմ հեռավորության վրա: Անվանումը կապված է «գեղեցիկ սարով» հասկացության հետ: Հայաբնակ այս գյուղը հիմնադրվել է 1917—18 թթ.: Դիրքը հարթավայրային է, բարձրությունը ծովի մակերևույթից 400 մ է, կլիմայական պայմանները չոր մերձարևադարձային են: 1970 թ. այստեղ կար 27 տուն, 133 բնակիչ, իսկ 1987 թ.՝ 29 տուն, 87 բնակիչ: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1932 թ., որը միավորվել է Լենինավանի տնտեսությանը, հետագայում՝ 1987 թ. Հասանղայա և Լևոնարխ գյուղերի հետ միասին կազմել է Սլավա Կասպարովի անվան պետական տնտեսությունը: Մասնագիտացված է խաղողագործության և անասնապահության ուղղությամբ:

1923 թ. այստեղ բացվել է տարրական դպրոց, այժմ դպրոց չկա: Ունի ակումբ, կենցաղսպասարկման կետ: Էլեկտրիֆիկացվել է 1951 թ.: Տները մեկ և երկու հարկանի են: Խմելու ջրով վատ է ապահովված: Բնակիչները հյուրասեր և աշխատասեր են: Կյանքի միջին տևողությունը 65—70 տարի է: Այս գյուղում են ծնվել ֆիզիկա-մաթեմատիկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Խաչատրյանը և գեներալ-մայոր Ռաֆայել Հարությունյանը: Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 25 մարդ, զոհվել է 12-ը: Գյուղը հայաբնակ է:

Լևոնարխ

Գտնվում է Մարտակերտից 23 կմ դեպի հյուսիս: Անվանումը կապված է Լևոն անունով հողագործի անվան հետ, որն այդ տոթակեզ վայրում անց է կացրել ջրատար (արխ) հողերի ոռոգման համար: 1870 թ. այս ջրատարի մոտ հիմնադրված հայկական բնակավայրն էլ կոչվել է Լևոնարխ: Բնակիչներն այստեղ են տեղափոխվել հարևան՝ այժմյան Շահումյանի շրջանից: Հայերի հետ այստեղ ապրում են նաև ռուսներ: Դիրքը հարթավայրային է, կլիման շոգ, բարձրությունը ծովի մակերևույթից 445 մ է: 1987 թ. այստեղ կար 64 տուն, 220 բնակիչ: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ.: 1950 թ. միավորվել է Լենինավանի տնտեսությանը, 1978 թ.՝ Մարալյան Սարով և Հասան-Ղայա գյուղերի հետ կազմել են առանձին պետական տնտեսություն: Մասնագիտացված է հիմնականում խաղողագործության ուղղությամբ: Այժմյան դպրոցը 8-ամյա է, ունի 63 աշակերտ, 11 ուսուցիչ: Կա ակումբ, գրադարան, խանութ, կենցաղսպասարկման երկու օբյեկտ: Էլեկտրիֆիկացվել է 1951 թ.: Տները հիմնականում մեկ հարկանի են. ջրով ապահովված է, ճանապարհները խճապատ են: 1920 թ. Մարիետա Շահինյանը այցելել է այս գյուղը, հյուր է եղել Նիկոլայ Ավթանդիլյանի տանը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 95 մարդ, զոհվել է 39-ը:

Թալիշ (Թարինջ)

Գտնվում է Մարտակերտի շրջանի ծայր հյուսիսում, տեղադրված է շրջկենտրոնից 35 կմ դեպի հյուսիս-արևմուտք: Անվանումն առաջացել է Մելիք Ֆրեյդունի որդի Թարինջ իշխանի անունից: Գյուղի պատմությունն սկսվում է XIV դարից, իսկ այժմյան բնակավայրը հիմնադրվել է 1808 թ.: Նրա շրջակայքում նախկինում եղել են մի քանի բնակավայրեր, որոնք տարբեր պատճառներով վերացել են: Այժմյան գյուղի կայունացման, ամրապնդման գործում վճռական դեր է խաղացել Թարինջ իշխանը, որի անունով էլ այն կոչվում է:

Գյուղը սարալանջի վրա է, դիրքը՝ գեղատեսիլ, շրջակայքը՝ անտառածածկ, օդը, ջուրը՝ մաքուր, կլիման՝ մեղմ: Բարձրությունը ծովի մակերևույթից 950 մ է: Արցախի հայկական խոշոր բնակավայրերից է: 19-րդ դարի վերջերին այստեղ կար 130 տուն, 1022 բնակիչ, 1987 թ.՝ 548 տուն, 1995 բնակիչ:

Գյուղի եկեղեցին կանգուն է և 1925 թվականից օգտագործվում է որպես ակումբ (կառուցվել է 1894—95 թթ.): Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ., մասնագիտացված է այգեգործության և անասնապահության ուղղությամբ:

Դպրոց բացվել է 1900 թվականին, 1934 թվականից դարձել է միջնակարգ, այժմ ունի 285 աշակերտ, 30 ուսուցիչ: Գյուղում կա մշակույթի պալատ, գրադարան, բուժկետ, հանդիսության տուն, մանկապարտեզ, երեք խանութ, կար ու ձևի արհեստանոց, կոշկակարանոց, վարսավիրանոց, լուսանկարչատուն: Էլեկտրիֆիկացվել է 1958 թ., տները երկհարկանի են, թիթեղածածկ, ջրով ապահովված է: Ճանապարհները բարեկարգ չեն: Բնակիչներն աշխատասեր, հյուրասեր և սրամիտ են: Կյանքի միջին տևողությունը 70—75 տարի է, իսկ թալիշաբնակներ Հոռոմ Սեդրակյանը, Լևոն Խախանյանը, Նախշուն Պետրոսյանը, Գրիգոր Սարգսյանը ավելի քան 100 տարեկան են: Այս գյուղում են ծնվել բանաստեղծ Հակոբ Հակոբյանը, որի կիսանդրին կանգնեցված է գյուղում, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Դանիելյանը, գրողներ Զորայր Խալափյանը, Աբրահամ Բախշունին:

Շրջապատում հայտնի են Հոռեկա վանքը (V դ.), Մելիք Բեգլարյանների

ապարանքը և այլ պատմական հուշարձաններ, խաչքարեր: Կան բազմաթիվ աղբյուրներ՝ Բարակ աղբյուր, Միջնաշենի, Քռնովի, Հոռի, Մալականների, Նիկոլայի, Բժշկի, Համամի, Սպիտակ, ինչպես նաև լճեր՝ Բյուլբյուլթա, Երկար, Աղի:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 489 մարդ, զոհվել է 222-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Չայլու

Գտնվում է Մարտակերտից 28 կմ դեպի հյուսիս, Թարթառ գետի ձախ ափին, հեռավորությունը Ստեփանակերտից 83 կմ է: Հիմնադրվել է 1828—32 թթ. Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո, Պարսկաստանից այստեղ տեղափոխված հայերի կողմից: Քանի որ գյուղը ձգվում է գետափով ու այն երկու մասի է բաժանված, ապա նրա թաղամասերից մեկը միշտ կոչվել է Վերին Չայլու, մյուսը՝ Ներքին Չայլու: Ըստ Մակար Բարխուդարյանցի, 1890-ական թվականների սկզբներին Ներքին Չայլուն ուներ 45 տուն, 257 բնակիչ, իսկ Վերին Չայլուն՝ 55 տուն, 489 բնակիչ: Այժմյան միացյալ Չայլուն Արցախի խոշորագույն բնակավայրերից է, ունի 692 տուն, 2661 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ.: 1974 թ. վերակազմվել ու դարձել է խաղողագործական պետական տնտեսություն: Զբաղվում է նաև անասնապահությամբ: 1910 թ. գործել է մեկդասյան դպրոց: Այժմ ունի միջնակարգ դպրոց՝ 471 աշակերտ, 57 ուսուցիչ: Ունի տեղամասային հիվանդանոց, 2 մանկապարտեզ, կապի բաժանմունք, մշակույթի տուն, գրադարան, ակումբ, կենցաղսպասարկման 6 օբյեկտ, խանութ, հանդիսության տուն: Էլեկտրիֆիկացվել է 1954 թ., տները երկհարկանի ու թիթեղածածկ են, խմելու ջրով լավ չի ապահովված: Բնակիչների կյանքի միջին տևողությունը 70—75 տարի է:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 650 մարդ, զոհվել է 194-ը, գյուղը հայաբնակ է:

Մադաղիս (Մատաղիս)

Անվանումը կապված է «մատաղ անել» հասկացության հետ: Գտնվում է Մարտակերտից 30 կմ, Ստեփանակերտից՝ 91 կմ հեռավորության վրա: Տեղադրված է Թարթառի ձախ գետահովտում, Պառավի կամրջից որոշ հեռավորության վրա: Գյուղը շրջապատված է գեղատեսիլ անտառածածկ սարերով, առանձնահատուկ հմայք ունի այստեղ Թարթառը:

1890-ական թվականներին կառուցված եկեղեցին կանգուն է: 19-րդ դարի վերջերին այստեղ կար 35 տուն, 165 բնակիչ, 1970 թ.՝ 172 տուն, 745 բնակիչ, 1987 թ.՝ 208 տուն, 697 բնակիչ: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ.: 1975 թ.-ից Չայլու և Տոնաշեն գյուղերի հետ դարձել է պետական տնտեսություն: Հիմնական ուղղությունը խաղողագործությունն է:

1910 թ. բացվել է դպրոց: Այժմյան դպրոցը միջնակարգ է, ունի 119 աշակերտ, 25 ուսուցիչ: Ունի գրադարան, ակումբ, մանկապարտեզ, կենցաղսպասարկման 3 օբյեկտ: Էլեկտրիֆիկացվել է 1954 թ.: Տները երկհարկանի են, թիթեղածածկ: Ջրով ապահովված է: Ճանապարհները բարեկարգ չեն:

Բնակիչներն աշխատասեր են: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Այս գյուղում է ծնվել ֆիզ. մաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ռադիկ Մարտիրոսյանը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 100 մարդ, զոհվել է 46-ը: Գյուղը հայաբնակ է:

Տոնաշեն

Գտնվում է Մարտակերտից 41 կմ դեպի հյուսիս-արևմուտք, Թարթառի ձախափնյա գեղատեսիլ վայրում: Շրջապատված է անտառներով: Բարձրությունը ծովի մակերևույթից շուրջ 1000 մ է: Կլիման շատ բարենպաստ է, օդը և ջուրը մաքուր են: Մինչև այժմյան գյուղի հիմնադրումը (1861 թ.) այստեղ եղել է հայկական բնակավայր:

Հին Տոնաշենի պատմությունը դարերի խորքից է գալիս, այդ են վկայում տեղի գերեզմանոցի հուշարձանները: Ըստ ավանդության, գյուղը հիմնադրել է Վաչագան թագավորի տոհմակից Տոնին (կամ Դոնին), որի անունով էլ այն կոչվել է: Գյուղի Ս. Գևորգ եկեղեցին մինչև 1930 թ. կանգուն է եղել, որից հետո նրա տեղում պահեստ է կառուցվել: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ., որը 1950 թ. միավորվել է Մադաղիսի, հետո Չայլուի հետ: 1976 թ. դարձել է խաղողագործական պետական տնտեսություն: Զբաղվում է նաև դաշտավարությամբ և անասնապահությամբ:

1890-ական թվականներին այստեղ կար 35 տուն, 247 բնակիչ, իսկ 1987 թ.՝ 65 տուն, 140 բնակիչ: Գյուղի դպրոցն այժմ փակված է: Ունի գրադարան, բուժկետ, խանութ: Էլեկտրիֆիկացվել է 1954 թ.: Ճանապարհները բարեկարգ չեն: Այս գյուղում է ծնվել բժշկական գիտ. դոկտոր, պրոֆ. Սարգիս Սարգսյանը և լրագրող Բակուր Կարապետյանը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 93 մարդ, զոհվել է 41-ը: Գյուղը հայաբնակ է:

Սեյսուլան

Գտնվում է Մարտակերտից 19 կմ դեպի հյուսիս-արևելք, շրջանի սահմանագլխին: Անվանումն առաջացել է «սեյսուլան» օտար բառից, որը նշանակում է «հեղեղի տարածք»: Այժմյան գյուղի պատմությունն սկսվում է 18-րդ դարի սկզբներից: Եկեղեցին կառուցվել է 1811 թ.: Դիրքը հարթավայրային է, կլիման՝ չոր մերձարևադարձային: Ամառը տոթ է: Բարձրությունը ծովի մակերևույթից 360 մ է: 1920 թ. այստեղ կար 89 տուն, 489 բնակիչ, 1970 թ.՝ 179 տուն, 782 բնակիչ, իսկ 1987 թ.՝ 178 տուն, 650 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1932 թ., որը 1975 թ. դարձել է պետական տնտեսություն: Մասնագիտացված է խաղողագործության, բանջարաբուծության և անասնապահության ուղղությամբ:

1911 թ. բացվել է տարրական դպրոց: Այժմ գործող դպրոցը միջնակարգ է, ունի 163 աշակերտ, 23 ուսուցիչ: Ունի մշակույթի պալատ, գրադարան, կապի բաժանմունք, խանութ, վարսավիրանոց, մանկապարտեզ: Տները երկհարկանի են: Ճանապարհները բարեկարգ չեն: Բնակիչներն աշխատասեր են, կյանքի միջին տևողությունը 70—75 տարի է:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 93 մարդ, զոհվել է 48-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Յարմջա

Գտնվում է Մարտակերտից 20 կմ դեպի հյուսիս-արևելք, Սեյսուլանի մոտ: Գյուղի պատմությունն սկսվում է XII դարից: Դիրքը հարթավայրային է: Բարձրությունը ծովի մակերևույթից 360 մ է. կլիման չոր մերձարևադարձային է, ամառը՝ տոթ:

1920 թ. այստեղ կար 22 տուն, 111 բնակիչ, 1970 թ.՝ 47 տուն, 242 բնակիչ, իսկ 1987 թ.՝ 54 տուն, 236 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ., իսկ 1950 թ. միավորվել է Սեյսուլանի հետ և 1977 թ. ստեղծվել է խաղողագործական, շերամապահական պետական տնտեսություն:

1931 թ. հիմնադրվել է տարրական դպրոց, այժմ էլ նույն տիպի է և ունի 13 աշակերտ, 2 ուսուցիչ: Կա ակումբ, գրադարան, խանութ, բուժկետ, մանկապարտեզ: Էլեկտրիֆիկացվել է 1967 թ.: Տները մեկ կամ երկու հարկանի են: Ջրով լավ չի ապահովված: Ճանապարհները բարեկարգ չեն: Բնակիչներն աշխատասեր են, կյանքի միջին տևողությունը 70—75 տարի է:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 27 մարդ, զոհվել է 15-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան:

Ներքին Հոռաթաղ

Գտնվում է Մարտակերտից 4 կմ դեպի հարավ, Ստեփանակերտից հեռավորությունը 65 կմ է: Անվանումը երկու ձևով է ստուգաբանվում: Քանի որ սա Կուսապատից անջատված մի թաղամաս է եղել՝ բնակիչներն անվանել են «Հեռու թաղ», որը ձևափոխվել և դարձել է Հոռաթաղ: Եվ քանի որ կար նաև մեկ այլ՝ Վերին Հոռաթաղ, ապա վերջինից տարբերելու համար սրան անվանել են Ներքին Հոռաթաղ: Մյուս բացատրությունը կապված է ուռենիների (ղարաբաղցիները ուռենուն հոռի են անվանում) հետ, այդ վայրում աճում են մեծ քանակությամբ ուռենիներ, որից էլ կոչվել է Հոռի թաղ:

Առանձին բնակավայր է դարձել 19-րդ դարի 30-ական թվականներին: Դիրքը գեղատեսիլ է, բարձրությունը ծովի մակերևույթից 500 մ է, կլիման մեղմ է, մերձարևադարձային: 1970 թ. այստեղ կար 280 տուն, 1127 բնակիչ, 1979 թ.՝ 321 տուն, 1357 բնակիչ, 1987 թ.՝ 310 տուն, 1263 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ., որը 1975 թ. դարձել է պետական տնտեսություն, մասնագիտացված է խաղողագործության և անասնապահության բնագավառներում:

1921 թ. բացվել է դպրոց, որը 1966 թվականից միջնակարգ է, ունի 237 աշակերտ, 37 ուսուցիչ: Գյուղն ունի ակումբ, գրադարան, կապի բաժանմունք, խանութ, կոշկակարանոց, վարսավիրանոց, բուժկետ, կար ու ձևի արհեստանոց: Էլեկտրիֆիկացվել է 1948 թ.: Տները երկհարկանի են, թիթեղածածկ: Ապահովված է ջրով: Ճանապարհները բարեկարգ են: Գյուղի եկեղեցին կառուցվել է 1905 թ., կանգուն է և պահպանվում է: Բնակիչներն աշխատասեր, հյուրասեր և սրամիտ են, կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Շրջակայքը գեղատեսիլ է, կան պտղատու այգիներ, անտառներ:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 337 մարդ, զոհվել է 127-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Կուսապատ

Գտնվում է Մարտակերտից 11 կմ դեպի հարավ-արևմուտք: Հեռավորությունը Ստեփանակերտից 66 կմ է: Անվանումն առաջացել է «կիսատ պատ» կամ «կուսի պատ» (որը նշանակում է կողմի պատ) արտահայտություններից: Գյուղը Կուսապատ գետի հովտում է, Ջրակն ձորի ձախափնյա լանջին: Դիրքը գեղատեսիլ է՝ մի կողմից թավ անտառներ ու մարգագետիններ են, մյուս կողմից՝ մացառներ ու լերկ լանջեր:

Արցախի հնագույն բնակավայրերից է, գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 13-րդ դարի առաջին կեսին:

1970 թ. այստեղ կար 175 տուն, 721 բնակիչ, 1987 թ.՝ 160 տուն, 687 բնակիչ: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1928 թ., 1952 թ. միավորվել է Ն. Հոռաթաղի տնտեսության հետ, որոնք միասին 1975 թ. դարձել են պետական տնտեսություն: Մասնագիտացված է դաշտավարության, անասնապահության, խաղողագործության ուղղությամբ:

1873 թ. գործել է ծխական դպրոց 18 աշակերտով, 1883 թվականին դարձել է պետական դպրոց: Հետագայում նորից ծխական դպրոց է դարձել, որը 1908 թ. ունեցել է 53 աշակերտ: Այժմ դպրոցը միջնակարգ է, ունի 107 աշակերտ, 20 ուսուցիչ: Ունի ակումբ, գրադարան, Ալ. Բեկզադյանի անվան տուն թանգարան, խանութ, կապի բաժանմունք, բուժկետ, կենցաղ սպասարկման օբյեկտներ, հանդիսության տուն: Էլեկտրիֆիկացվել է 1949 թ.: Տները հիմնականում երկհարկանի են: Ճանապարհները անբարեկարգ են: Բնակիչներն աշխատասեր, հյուրասեր են: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Այս գյուղում են ծնվել 1805—11 թթ. ռուս-պարսկական պատերազմում իրենց հերոսություններով հայտնի Վանի և Հակոբ Յուզբաշիները, Վ. Ի. Լենինի զինակից, հեղափոխական Ալ. Բեկզադյանը, Բաքվի կոմունայի ակտիվ մասնակից Լևոն Աթաբեկյանը, բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գուրգեն Անտոնյանը, գյուղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Հովակիմ Խոնդկարյանը, Հայկ. ԽՍՀ ժող. արտիստուհի Անժելա Աթաբեկյանը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 251 մարդ, զոհվել է 97-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Ջանյաթաղ (Ճանկաթաղ)

Ժամանակի ընթացքում բնակավայրի անվանումը ձևափոխվել դարձել է Ջանյաթաղ, որը նշանակում է ուրախության թաղ, ցնծության թաղ կամ լավ թաղ: Հիմնադրվել է 19-րդ դարի սկզբներին, բնակիչները եկել են Պարսկաստանի Ղարադաղի նահանգի Ամրագյուլ և Քյանի հայկական գյուղերից: Գտնվում է Մարտակերտից 17 կմ դեպի հարավ-արևմուտք. հեռավորությունը Ստեփանակերտից 72 կմ է: Դիրքը գեղատեսիլ է, կլիմայական պայմանները լավ: 1890-ական թվականների սկզբներին այստեղ կար 85 տուն, 628 բնակիչ, 1979 թ.՝ 228 տուն, 778 բնակիչ, 1987 թ.՝ 251 տուն, 828 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1927 թ., որը 1964 թ. միավորվել է Գյուլաթաղի հետ և ստեղծվել է խաղողագործական ու անասնապահական միասնական պետական տնտեսություն:

1903 թ. բացվել է դպրոց: Այժմ ունի միջնակարգ դպրոց՝ 149 աշակերտ,

24 ուսուցիչ: Կա կապի բաժանմունք, գրադարան, ակումբ, խնայդրամարկղ, բուժկետ, մանկապարտեզ, խանութ, կենցաղսպասարկման 4 կետ: Տները հիմնականում երկհարկանի են: Ջրով ապահովված է: Ճանապարհներն անբարեկարգ են:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 270 մարդ, զոհվել է 164-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Գյուլաթաղ

Անվանումն առաջացել է վարդաբլուր կամ վարդաթաղ բառերից: Գտնվում է Մարտակերտից 18 կմ դեպի հարավ-արևմուտք: Հեռավորությունը Ստեփանակերտից 73 կմ է: Դիրքը գեղատեսիլ է, անտառապատ, երեք կողմից շրջապատված լեռներով: Տեղադրված է ձորահովտի լանջին: Բարձրությունը ծովի մակերևույթից 510 մ է: Արցախի հնագույն բնակավայրերից է: Պատմությունն սկսվում է 13-րդ դարից:

Գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1870 թ., այժմ կանգուն է: Շրջակայքում կան պատմական հուշարձաններ, հին բնակատեղիներ, գերեզմաններ:

Կոլտնտեսությունը կազմակերպվել է 1932 թ., որը 1950 թ. միավորվել է Ջանյաթաղի հետ, իսկ 1974 թ. միավորվել են խաղողագործական, անասնապահական մեկ պետական տնտեսության մեջ: Հիմնական ուղղությունը խաղողագործությունն է: Այժմյան դպրոցն 8-ամյա է, ունի 75 աշակերտ, 35 ուսուցիչ: Կա գրադարան, կապի բաժանմունք, մանկապարտեզ, խանութ: Էլեկտրիֆիկացվել է 1966 թ.: Տները երկհարկանի են:

Ջրով ապահովված է: Ճանապարհներն անբարեկարգ են: Բնակիչները հյուրասեր են: Կյանքի միջին տևողությունը 70—75 տարի է: Շրջապատում հայտնաբերված են պղնձի ու ցինկի պաշարներ:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 250 մարդ, զոհվել է 111-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Մոխրաթաղ

Գտնվում է Մարտակերտից 8 կմ դեպի արևմուտք: Դիրքը նախալեռնային է, ունի գեղատեսիլ բնություն, մաքուր օդ, զուլալ ջրեր, բարենպաստ կլիմա: Բարձրությունը ծովի մակերևույթից 540 մ է: Արցախի պատմական գյուղերից է, հիմնադրվել է 19-րդ դարի սկզբներին: Բազմիցս ենթարկվել

է թշնամիների հարձակումներին և բազմիցս էլ՝ ավերվել ու նորից վերականգնվել:

1890-ական թվականների սկզբներին այստեղ կար 85 տուն, 743 բնակիչ, 1979 թ.՝ 236 տուն, 969 բնակիչ, 1987 թ.՝ 246 տուն, 934 բնակիչ: Գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, որը կառուցվել է 1883 թ., կանգուն է:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ., իսկ 1975 թ. Մեծ Շենի ու Աղաբեկալինջի հետ կազմել են պտղաբանջարաբուծական տնտեսություն: 1978 թ. բաժանվել է Մեծ Շենից և Աղաբեկալինջի հետ կազմում է խաղողագործական պետական տնտեսություն:

1907 թ. բացվել է տարրական դպրոց: Այժմ դպրոցը միջնակարգ է. ունի 122 աշակերտ, 28 ուսուցիչ: Գործում են՝ մշակույթի պալատ, գրադարան, կինոտեղակայում, խանութ, կապի բաժանմունք, կենցաղսպասարկման չորս կետ: Էլեկտրիֆիկացվել է 1956 թ.: Տները երկհարկանի են: Ջրով ապահովված է: Ճանապարհներն անբարեկարգ են: Բնակիչներն սրամիտ և աշխատասեր են: Կյանքի միջին տևողությունը 70—75 տարի է: Այս գյուղում են ծնվել սոցիալիստական աշխատանքի հերոս Սոնյա Բալայանը, անասնաբ. գիտ. դոկտ., պրոֆ. Պետիկ Հարությունյանը, բժշկական գիտ. դոկտ., պրոֆ. Ֆեոդոր Յաղուբյանը:

Շրջապատում կան պատմական հուշարձաններ, այդ թվում Մելիք Իսրայելյանների պալատ-ամրոցը, Խաչ-Խոռհատ գյուղատեղին:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 382 մարդ, զոհվել է 154-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Աղաբեկալինջ

Գտնվում է Մարտակերտից 3 կմ դեպի հարավ-արևմուտք: Հիմնադրվել է 20-րդ դարի սկզբներին (1910 թ.): Ունի չոր մերձարևադարձային կլիմա: Բարձրությունը ծովի մակերևույթից 475 մ է:

1970 թ. այստեղ կար 69 տուն, 326 բնակիչ, 1987 թ.՝ 99 տուն, 392 բնակիչ: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ., որը 1950 թ. միավորվել է Մոխրաթաղի տնտեսությանը, իսկ 1975 թ. ստեղծվել է միացյալ պետական խաղողագործական տնտեսություն:

Գյուղի տարրական դպրոցն ունի 18 աշակերտ, 4 ուսուցիչ: Գործում են՝ գրադարան, ակումբ, ծիսակատարությունների տուն, կենցաղսպասարկման 4 կետ: Էլեկտրիֆիկացվել է 1957 թ., տները երկհարկանի են, քարաշեն: Ջրով լավ չի ապահովված: Բնակիչներն աշխատասեր են: Կյանքի միջին տևողությունը 70—75 տարի է:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 45 մարդ, զոհվել է 24-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան Մոխրաթաղում: Գյուղը հայաբնակ է:

Մաղավուզ

Գտնվում է Մարտակերտից 18 կմ հյուսիս-արևմուտք, Թարթառի աջափնյա բարձրության վրա: Կլիման չոր մերձարևադարձային է: Օդն ու ջուրը մաքուր են: Այժմյան գյուղը հիմնադրվել է 17-րդ դարում, բնակիչները եկել են Մեծ Սյունիքի Մաղավուզ գյուղից: Սակայն այստեղ հայկական բնակավայր է եղել դեռ շատ հնուց, 11-րդ դարից: Գյուղի՝ 1902 թ. կառուցված, եկեղեցին կանգուն է: 19-րդ դարի 90-ական թվականների սկզբներին այստեղ կար 66 տուն, 553 բնակիչ, 1987 թ.՝ 300 տուն, 1202 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1929 թ., հետագայում հարևան Մինգրելսկ գյուղի հետ մտել է Ծովակալ Իսակովի անվան խաղողագործական պետական տնտեսության մեջ:

1909 թ. բացված դպրոցն ուներ 30 աշակերտ: Այժմ դպրոցը միջնակարգ է, ունի 278 աշակերտ, 40 ուսուցիչ: Գործում են՝ մշակույթի պալատ, կինոտեղակայում, կապի բաժանմունք, գրադարան, խանութ, բուժկետ, մանկապարտեզ, կենցաղսպասարկման 4 կետ, ծիսակատարությունների տուն: Էլեկտրիֆիկացվել է 1950 թ.: Տները երկհարկանի են: Ջրով լավ չի ապահովված: Ճանապարհները բարեկարգ չեն: Բնակիչներն աշխատասեր են: Կյանքի միջին տևողությունը 70—75 տարի է: Շրջակայքում նշանավոր են Քմքաձորի շեն, Ջուխտան շինատեղ, Կաթողիկոսարան, Ջրաբերդ քաղաքատեղ, Ցից քար, Լաչինա ձոր պատմական վայրերը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 287 մարդ, զոհվել է 100-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Հակոբ Կամարի (Լուլասազ)

Գտնվում է Մարտակերտից 24 կմ դեպի հյուսիս-արևմուտք: Հեռավորությունը Ստեփանակերտից 79 կմ է: Ընում այդ հայկական գյուղը կոչվել է Վարանգաթաղ: Հետագայում, երբ Շամշադինից այստեղ են վերաբնակվում հրացանի փողեր (լուլա) պատրաստող երկու արհեստավոր՝ Թունի ու Բաբա եղբայրները, այս գյուղն ամենուրեք հայտնի է դառնում Լուլասազ օտարահունչ անվանումով: 1984 թ. գյուղը վերանվանվում է այդ գյուղի զավակ, հեղափոխական Հակոբ Կամարու անունով:

Այժմյան գյուղը հիմնադրվել է 1790-ական թվականներին, սակայն այդտեղ հայկական բնակավայր է եղել դեռևս շատ հնուց:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ., որն այժմ Մաղավուզի ու Մինգրելսկի հետ կազմում է խաղողագործական պետական տնտեսություն: 1970 թ. այստեղ կար 88 տուն, 356 բնակիչ, 1987 թ.՝ 84 տուն, 342 բնակիչ: 1914 թ. բացվել է մեկդասյան դպրոց. 1920 թ.՝ տարրական, 1938 թ.՝ յոթնամյա, 1980 թ. ութամյա դպրոց, որն այժմ ունի 30 աշակերտ, 9 ուսուցիչ: Ունի գրադարան, ակումբ, խանութ, բուժկետ, ծիսակատարությունների տուն: Էլեկտրիֆիկացվել է 1947 թ.: Տները հիմնականում երկհարկանի են: Ջրով լավ չի ապահովված: Ճանապարհները անբարեկարգ են: Այստեղ են ծնվել հեղափոխականներ Հակոբ Կամարին, Թևատրոս, Բեյբուդ և Լազր Միրզաբեկյանները, պրոֆեսոր Փարավոն Միրզոյանը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 154 մարդ, զոհվել է 64-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Մինգրելսկ

Գտնվում է Մարտակերտից 18 կմ դեպի հյուսիս-արևմուտք: Հեռավորությունը Ստեփանակերտից 71 կմ է: Դիրքը նախալեռնային է, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 500 մ:

1970 թ. այստեղ կար 45 տուն, 184 բնակիչ, 1987 թ.՝ 60 տուն, 247 բնակիչ: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1929 թ., իսկ 1964 թ. Մաղավուզի հետ միավորվելով ստեղծվել է խաղողագործական պետական տնտեսություն: Մինչև վերջերս ունեցել է տարրական դպրոց, այժմ փակվել է: Ունի գրադարան, մանկապարտեզ, խանութ, ծիսակատարությունների տուն, կենցաղսպասարկման երկու կետ: Էլեկտրիֆիկացվել է 1948 թ., տները հիմնականում երկհարկանի են: Ջրով լավ չի ապահովված: Ճանապարհներն անբարեկարգ են: Բնակիչներն աշխատասեր և հյուրասեր են: Կյանքի միջին տևողությունը 70—75 տարի է: Այստեղ է ծնվել Խորհրդային Միության հերոս Գուրգեն Հայրապետյանը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 78 մարդ, զոհվել է 34-ը: Գյուղը հայաբնակ է:

Ջրաբերդ

Գտնվում է Մարտակերտից 6 կմ դեպի հյուսիս-արևելք, ամայի տոթ վայրում: Նոր ստեղծված (1958 թ.) բնակավայր է: Սկզբնական շրջանում կոչվել է Չիման (այսինքն օձերի ու կարիճների բնակվելու տեղ), իսկ 1965 թ.

կոչվել է Ջրաբերդ (պատմական Ջրաբերդ գավառի անունով, որի տարածքն այժմ զբաղեցնում է Մարտակերտի շրջանի զգալի մասը): Այժմյան Ջրաբերդ գյուղը չպետք է շփոթել պատմական Ջրաբերդ անմատչելի ամրոցի հետ: Վերջինս գտնվում է Թարթառի գեղատեսիլ կիրճի ձախ ափին, շրջափակված Թարթառի ու նրա վտակ Թրղի գետի ջրերով: Այս նոր գյուղի դիրքը հարթավայրային է, ունի չոր կլիմա, բարձրությունը ծովի մակերևույթից 450 մ է: 1970 թ. այստեղ կար 62 տուն, 306 բնակիչ, 1987 թ. 98 տուն, 342 բնակիչ: Այժմ Մաղավուզ և Հ. Կամարի գյուղերի հետ մտնում է նույն պետական տնտեսության մեջ, զարգացած է խաղողագործությունը: 1962 թ. բացվել է տարրական դպրոց, որն այժմ 8-ամյա է, ունի 63 աշակերտ, 16 ուսուցիչ: Կա գրադարան, մանկապարտեզ, խանութ, կապի բաժանմունք, բուժկետ, խնայդրամարկղ, կենցաղսպասարկման կետ: Էլեկտրիֆիկացվել է 1958 թ.: Տները երկհարկանի են: Օգտագործվում է արտեզյան ջուրը: Գյուղամիջյան ճանապարհներն անբարեկարգ են: Բնակիչներն աշխատասեր են: Գյուղը հայաբնակ է:

Մեծ Շեն

Գտնվում է Մարտակերտից 20 կմ դեպի արևմուտք, հեռավորությունը Ստեփանակերտից 75 կմ է: Արցախի հնագույն բնակավայրերից է: Հնում այն կոչվել է Բերդակուռ, եղել է Մելիք Ադամի նստավայրը: Դեռ 12—13-րդ դարերում այս գյուղն ունեցել է մի քանի հազար ծուխ, այդ պատճառով կոչվել է Մեծ Շեն: Գյուղի պատմությունն սկսվում է 7-րդ դարից: Մինչև 1920-ական թվականները կանգուն է եղել հնում կառուցված եկեղեցին, որը անխիղճ կերպով քանդվել է: Հայտնի է որպես հեղափոխական շարժումների կենտրոն: Այստեղ են տեղի ունեցել Ջրաբերդի կուսկազմակերպության ընդհատակյա նիստերը Հ. Կամարու և Թևատրոս Միրզաբեկյանի ղեկավարությամբ:

Դիրքը լեռնային է, ունի գեղատեսիլ բնություն, պտղատուներով հարուստ անտառներ: Բարձրությունը ծովի մակերևույթից 750 մ է: 1970 թ. այստեղ կար 215 տուն, 777 բնակիչ, 1979 թ.՝ 220 տուն, 699 բնակիչ, 1987 թ.՝ 227 տուն, 668 բնակիչ: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1929 թ., այժմ խաղողի հակաֆիլոքսերային տնկարանային տնտեսություն է:

Դպրոց բացվել է 1909 թ. (մեկդասյան): 1933 թ. դարձել է յոթնամյա, իսկ 1939 թ.՝ միջնակարգ, որն ունի 85 աշակերտ, 23 ուսուցիչ: Կա ակումբ, գրադարան, կապի բաժանմունք, կինոտեղակայանք, կարի արհեստանոց, բուժկետ, մանկապարտեզ: Էլեկտրիֆիկացվել է 1949 թ.: Տները երկհարկանի են: Ջրով լավ չի ապահովված: Բնակիչներն աշխատասեր են, ունեն հեղափոխական ավանդույթներ: Կյանքի միջին տևողությունը 70—75 տարի է: Այս

գյուղում են ծնվել բժշկ. գիտ. դոկտ., պրոֆ. Լևոն Մայիլյանը, ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ Սերգեյ Սովսիսյանը, տեխն. գիտ. դոկտ., պրոֆ. Սերգեյ Մայիլյանը, բժշկ. գիտ. դոկտ., պրոֆ. Ռաֆայել Մայիլյանը, քիմ. գիտ. դոկտ. Ջալալ Աբրահամյանը: Շրջակայքում հայտնի են Տնջրեն, Պըլպըլան, Տամբուլ ձորի, Նվավոր, Ցուրտ աղբյուրները, Հարթապտուկ տեղամասը, Ղուզե անտառը և այլ վայրեր:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 237 մարդ, զոհվել է 97-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Չլդրան

Գտնվում է Մարտակերտից 34 կմ դեպի հարավ-արևմուտք, հեռավորությունը Ստեփանակերտից 64 կմ է:

Ըստ ավանդության անվանումն առաջացել է Չալի եղբայրների անունից, որոնք իրենց կյանքն ամբողջապես նվիրել են հայրենիքին ու անվեհեր պայքարել թշնամիների դեմ: Բաղկացած է վեց թաղամասից՝ Վրցկալեր, Քյուրքորեգ, Փերին գոմեր, Խոր ձոր, Փոքր Չլդրան, Ղալունց թաղ, որոնք իրարից 0,5—1,5 կմ հեռավորության վրա են: Շրջապատի և տեղի պատմական հուշարձանները (Ամենափրկիչ վանք, Կարմիր եկեղեցի, Հնձախութ գյուղատեղի, Սառնատուն քարայր, Հացուտ, Կենեն պատ գերեզմանատներ և ուրիշն.) վկայում են, որ գյուղը հին պատմություն ունի: Այժմյան Չլդրանը հիմնադրվել է 1905 թ.: Բնակիչները եկել են Առաջաձորից: Դիրքը բարձրադիր է, սարահարթային, գեղատեսիլ: Անտառաշատ է, կլիման՝ մեղմ, բարձրությունը ծովի մակերևույթից 800 մ է:

1970 թ. այստեղ կար 87 տուն, 366 բնակիչ, 1987 թ.՝ 173 տուն, 476 բնակիչ: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1931 թ., որը 1977 թ. դարձել է պետական տնտեսություն, հիմնական ուղղությունն անասնապահությունն է և կարտոֆիլի մշակությունը:

1928 թ. բացվել է յոթնամյա դպրոց, 1955 թվականից միջնակարգ է, որն այդ թվականին ուներ 212 աշակերտ, 1957 թ.՝ 225 աշակերտ, իսկ 1986 թ.՝ 62 աշակերտ, 1987 թ.՝ 60 աշակերտ, 18 ուսուցիչ:

Գործում են մշակույթի տուն, գրադարան, կապի բաժանմունք, բժշկական տեղամաս, կինոտեղակայանք, կար ու ձևի արհեստանոց, կոշկակարանոց, փայտամշակման արհեստանոց, ծիսակատարությունների տուն: Էլեկտրիֆիկացվել է 1964 թ.: Տները երկհարկանի, քարակերտ են: Ապահովված է ջրով: Դուրս գնացող ճանապարհները բարեկարգ են, գյուղամիջյանն՝ անբարեկարգ: Բնակիչներն աշխատասեր և հյուրասեր են, կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է, իսկ Գյուլխաս Սարգսյանն ավելի քան 100 տարեկան է: Այս գյուղում են ծնվել քիմ. գիտ. թեկնածուներ Լենուր Ոսկանյանը և Արկադյա Սամվելյանը, գրող Լևոն Ադյանը: Հայտնի են Չարդանց, Աթալին, Ղըրմեն, Մակեն, Թալիշին, Մանասեն աղբյուրները: Մոտակայքում կա մարմարի հանքավայր: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Չլդրանի մոտ գտնվող քարայրների խումբը, որտեղ նույնիսկ ամռան շոգին կախված են սառցե հսկա զանգվածներ: Այն հնուց կոչվել է սառցատուն, որտեղից դեռ հնում Խաչենի բնակիչները պաղ են բերել հնձվորի կամ հիվանդի համար: Ըստ ավանդության, այդ սառույցների ջուրը բուժիչ է:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել են 153 մարդ, զոհվել են 85-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Ղազարահող

Գտնվում է Մարտակերտից 38 կմ դեպի հարավ-արևմուտք. ունի նախալեռնային դիրք, գեղատեսիլ, անտառապատ բնություն: Բնակիչները 1700 թ. տեղափոխվել են Առաջաձորից և իրենց ղեկավար Ղազարի անունով էլ կոչել են այդ բնակավայրը: Բարձրությունը ծովի մակերևույթից 700 մ է: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1932 թ., իսկ 1977 թ. միավորվել է Չլդրան, Պողոսագոմեր, Դրմբոն գյուղերի տնտեսություններին, որոնց բազայի վրա 1977 թվականին կազմակերպվել է պետական տնտեսություն: Հիմնական ուղղությունը կարտոֆիլաբուծությունը և անասնապահությունն է: 1987 թ. այստեղ կար 35 տուն, 70 բնակիչ: Դպրոցը փակված է: Ունի ակումբ, խանութ, գրադարան: Էլեկտրիֆիկացվել է 1967 թ., տները մեկ կամ երկու հարկանի են, քարաշեն: Ճանապարհներն անբարեկարգ են: Գյուղի Ս. Ամենափրկիչ եկեղեցին կանգուն վիճակում է: Բնակիչներն աշխատասեր են, կյանքի միջին տևողությունը 70—75 տարի է:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 31 մարդ, զոհվել է 16-ը: Գյուղը հայաբնակ է:

Պողոսագոմեր

Գտնվում է Մարտակերտից 42 կմ դեպի հարավ-արևմուտք: 18-րդ դարի սկզբներին Առաջաձորի բնակիչ Պողոսն այստեղ կառուցում է անասնագոմեր ու զբաղվում անասնապահությամբ, որից հետո այստեղ հիմնադրվում է նոր բնակավայր Պողոսի անունով: Դիրքը նախալեռնային է, գեղատեսիլ, բարձրությունը ծովի մակերևույթից 700 մ է: 1970 թ. այստեղ կար 99 տուն,

419 բնակիչ, 1979 թ.՝ 93 տուն, 332 բնակիչ, 1987 թ.՝ 92 տուն, 334 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1932 թ., իսկ 1977 թ. Չլդրանի, Դրմբոնի հետ մտնում է նոր կազմակերպված պետական տնտեսության մեջ: Հիմնական զբաղմունքը կարտոֆիլի մշակությունն է:

Դպրոցն 8-ամյա է: Ունի 36 աշակերտ, 11 ուսուցիչ: Գործում են ակումբ, գրադարան, խանութ, բուժկետ, ծիսակատարությունների տուն: Էլեկտրիֆիկացվել է 1964 թ.: Տները մեկ հարկանի են: Ճանապարհներն անբարեկարգ են: Գյուղում և շրջակայքում հայտնի են Ս. Ամենափրկիչ եկեղեցին (կանգուն է), «Մատուռը», «Հուրուստանը», «Պեմեն» եկեղեցին:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 42 մարդ, զոհվել է 19-ը: Գյուղը հայաբնակ է:

Մեհմանա

Գտնվում է Մարտակերտից 20 կմ դեպի հարավ-արևմուտք: Արցախի հին բնակավայրերից է. պատմությունն սկսվում է 13-րդ դարի սկզբներից: Գյուղում և շրջակայքում պահպանվում են հին բնակատեղիի մնացորդներ, պատմական հուշարձանների փլատակներ: Մինչև վերջերս կանգուն են եղել 1248 թ. կառուցված եկեղեցու պատերը, որոնց վրա հայերեն արժեքավոր արձանագրություններ են եղել: Դրանք այժմ էլ երևում են փլված շինության պահպանվող քարերի վրա:

Գյուղի մոտ հայտնաբերված բազմամետաղների (ցինկ, կապար, պղինձ, արծաթ) հանքավայրի շահագործման նպատակով 1850-ական թվականներին այստեղ բնակեցվում են հույն լեռնագործ վարպետներ իրենց ընտանիքներով: Այսպիսով, Մեհմանան դառնում է հայերով և հույներով բնակեցված բնակավայր: Այս հանքավայրը ժամանակին շահագործվել է անգլիացիների ու ֆրանսիացիների կողմից: Հետագայում շահագործողները գնացել են, իսկ հույն մասնագետները մշտական բնակություն են հաստատել Արցախի այդ հրաշագեղ վայրում: Նրանք մերվել, եղբայրացել են հայերի հետ, դարձել ղարաբաղցու նման առնական, ազնիվ ու շիտակ:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին այստեղից զգալի քանակությամբ ցինկ ու կապար է արդյունահանվել ռազմաճակատի համար:

Գյուղի դիրքը լեռնային է, գեղատեսիլ, անտառապատ: Իր ճանապարհորդությունների ժամանակ Րաֆֆին եղել է նաև այստեղ ու գովեստով է խոսել գյուղի ու բնության մասին: Բարձրությունը ծովի մակերևույթից 1180 մ է: 1970 թ. այստեղ կար 30 տուն, 104 բնակիչ, 1987 թ.՝ 22 տուն, 51 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1931 թ., որը միավորվել է Չլդրանի

կոլտնտեսությանը, իսկ 1977 թ. միացյալ պետական տնտեսություն է ստեղծվել: Հիմնական ուղղությունները կարտոֆիլի մշակությունն է ու անասնապահությունը:

1920 թ. բացվել է հուհական դպրոց, որը գործել է մինչև 1945 թ.: Գյուղն այժմ դպրոց չունի: Ունի գրադարան, բուժկետ, ակումբ, խանութ: Այստեղ տեղադրված է կարկուտը կանխելու կետ: Էլեկտրիֆիկացվել է 1964 թ.: Տները երկհարկանի են: Ջրով լավ չի ապահովված: Ճանապարհներն անբարեկարգ են: Բնակիչներն աշխատասեր և հյուրասեր են: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 11 մարդ, զոհվել է 5-ը:

Մեհմանա բառը նշանակում է հանքի հիմնական երակ: Անվանումը կապված է տեղի բազմամետաղային հանքավայրի հետ, որի հիմնական երակը ձգվում է գյուղի մոտով:

Ղազանչի

Գտնվում է Մարտակերտից 26 կմ դեպի հարավ, շրջանի սահմանագլխին: Անվանումն առաջացել է տեղի արհեստավորների մասնագիտությունից, որոնք հիմնականում հայտնի են եղել կենցաղային մետաղե ամանեղեն պատրաստելու գործում:

Գյուղը տեղադրված է Խաչենի ձախափնյա Վանքասարի ստորոտում, երեք կողմից շրջափակված է լեռներով, բաց է արևելյան կողմը: Ունի գեղատեսիլ դիրք, շրջապատված է պտղատու այգիներով: Այժմյան գյուղը հիմնադրվել է 17-րդ դարում, սակայն շրջակայքի հնությունները ցույց են տալիս, որ այստեղ բնակավայր է եղել դեռևս 12-րդ դարից սկսած:

Գյուղի Ս. Գևորգ եկեղեցին, որը կառուցվել է 19-րդ դարում, ավերված վիճակում է: 19-րդ դարի 90-ական թվականների սկզբներին այստեղ կար 35 տուն, 325 բնակիչ, 1970 թ.՝ 89 տուն, 455 բնակիչ, 1987 թ.՝ 75 տուն, 260 բնակիչ: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1931 թ., որը 1967 թ. միավորվել է Սրխավենդի տնտեսությանը, այժմ մարզային ագրոարդի օժանդակ տնտեսություն է: 1924 թ. բացվել է տարրական դպրոց: Այժմ կա 8-ամյա դպրոց, ունի 25 աշակերտ, 12 ուսուցիչ: Գործում են՝ ակումբ, գրադարան, կապի բաժանմունք, բուժկետ, վարսավիրանոց, խանութ: Էլեկտրիֆիկացվել է 1963 թ.: Տները երկհարկանի են: Ջրով լավ չի ապահովված: Ճանապարհներն անբարեկարգ են: Բնակիչներն աշխատասեր, հյուրասեր են: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Շրջապատում նշանավոր են Կարմիր եղցի, Մեղրակերտ սրբավայրերը, Թունունց բաղը, Առստամանց բաղը, Ջա-

լալանց բաղը և այլ վայրեր, կան բազմաթիվ խաչքարեր, հնագույն գերեզմանաքարեր:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 167 մարդ, զոհվել է 65-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Կիչան

Գտնվում է Մարտակերտից 28 կմ դեպի հարավ-արևմուտք, նախկինում կոչվել է Կեչուտ: Անվանումն առաջացել է շրջապատի կեչու անտառներից: Դիրքը նախալեռնային է, տեղադրված է Մեղրաքերծ սարի ստորոտում. գեղատեսիլ է, անատառաշատ: Բարձրությունը ծովի մակերևույթից 750 մ է: Այստեղ բնակավայր հիմնադրվել է 12-րդ դարում, նորից այն վերածաղկել է 19-րդ դարում: Եկեղեցին կառուցվել է 1873 թ., այժմ կիսախարխուլ վիճակում է:

1970 թ. այստեղ կար 53 տուն, 193 բնակիչ, 1979 թ.՝ 48 տուն, 172 բնակիչ, 1987 թ.՝ 46 տուն, 150 բնակիչ: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1931 թ., այն դարձել է մարզային ագրոարդի օժանդակ տնտեսություն: 1924 թ.-ից գործում է տարրական դպրոց, որն այժմ ունի 14 աշակերտ, 5 ուսուցիչ: Կա ակումբ, գրադարան, խանութ, կապի բաժանմունք: Էլեկտրիֆիկացվել է 1963 թ.: Տները հիմնականում երկհարկանի են, քարաշեն: Ջրով լավ է ապահովված:

Այս գյուղում է ծնվել բժշկական գիտ. դոկտ., պրոֆ. Սուրեն Հովհաննիսյանը: Շրջապատում հայտնի են Անահիտ աղբյուրը, Անապատ վանքը (11-րդ դ.), Մեղրաքերծը, Դոլին կլոխ, Թեղեն պատ վայրերը, Երեշեն բնակատեղին և այլն:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 75 մարդ, զոհվել է 45-ը: Գյուղը հայաբնակ է:

Առաջաձոր

Գտնվում է Մարտակերտից 45 կմ դեպի հարավ-արևմուտք: Հեռավորությունը Ստեփանակերտից 54 կմ է: Տեղադրված է Խաչեն գետի վերին ավազանի ձախափնյա լեռնալանջին: Դիրքը անզուգական, գեղատեսիլ է՝ շրջապատված անտառներով: Ունի սառնորակ աղբյուրներ: Ընդհանուր առմամբ այժմյան գյուղի պատմությունն սկսվում է 10-րդ դարից: Սկզբնական շրջանում բնակավայրը, ինչպես Արցախի շատ գյուղեր, տեղադրված է եղել լեռների բարձրադիր մասում (հաճախակի հարձակվող թշնամիներից պաշտպանվելու համար): Մասնավորապես, առաջաձորցիների նախնիները նախկինում բնակվել են Տակաթազ և Փլուսանց շեն լեռնային բնակատեղիներում: Հետագայում բնակիչներն այդ վայրերից իջել և բնակություն են հաստատել ցածրադիր մասում, որի դիմաց ձգվում է մի անդնդախոր ձոր: Այստեղից էլ առաջացել է Առաջաձորի անվանումը, այսինքն գյուղ, որի առջևում ձոր է: Հենց այդ ձորը, Խաչենի զուլալ ջրերը, շրջապատի անտառածածկ և լերկ ժայռերը Արցախի անկրկնելի գեղատեսիլ անկյուններից են: Գյուղը փռված է Խաչենի վտակներից մեկի երկու ափին: 1950 թվականից հետո բնակիչների զգալի մասն իջել է համեմատաբար հարթավայրային մասը և այնտեղ կառուցել տներ: Փաստորեն նոր բնակավայր է ստեղծվել:

Առաջաձորը Արցախի հին ու հարուստ պատմություն ունեցող գյուղերից է: Թշնամիները բազմիցս բախվել են այս լեռնաստանի քաջ բնակիչների դիմադրությանը, պարտվել ու ետ են շպրտվել: Հենց այստեղ, Առաջաձորի մատույցներում է, որ Արցախի հերոսուհի Ռուզանը ծուղակի մեջ է առել թաթար-մոնղոլների զորքերը, որոնք գլխովին ջախջախվել են:

Այժմյան Առաջաձորի պատմությունն սկսվում է 10-րդ դարի սկզբներից: Գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1668 թ. և կանգուն է, բայց վերանորոգման խիստ կարիք ունի: Գյուղի մոտ գտնվող Անապատ եկեղեցին կառուցվել է 1249 թ.: Սա նույնպես վերականգնման խիստ կարիք ունի: 19-րդ դարի 90-ական թվականների սկզբներին այստեղ կար 197 տուն, 1501 բնակիչ, 1970 թ.՝ 282 տուն, 1245 բնակիչ, 1979 թ.՝ 288 տուն, 1105 բնակիչ, 1987 թ.՝ 297 տուն, 1087 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1929 թ., որը 1977 թ. վերակազմվել է անասնապահական պետական տնտեսության: Զբաղվում է նաև ծխախոտագործությամբ:

1902 թ. բացվել է մեկդասյան դպրոց: Այժմ դպրոցը միջնակարգ է, ունի 219 աշակերտ, 27 ուսուցիչ: Կա մշակույթի տուն, տեղամասային հիվանդանոց, կապի բաժանմունք, վարսավիրանոց, կար ու ձևի արհեստանոց, հացի փուռ, գրադարան, կոշկակարանոց, կինոտեղակայանք: 1963 թվականից գործում են կենցաղսպասարկման կոմբինատը, շինվերանորոգման տեղամասը, կաթի ընդունման ու նախնական մշակման կետը:

Տները երկհարկանի են, քարաշեն: Ջրով անբավարար է ապահովված: Ճանապարհները բարեկարգ չեն: Բնակիչներն աշխատասեր և հյուրասեր են: Կյանքի միջին տևողությունը 70—75 տարի է, իսկ Շուշանիկ Հայրյանը 102 տարեկան է: Այս գյուղում են ծնվել կենսաբ. գիտ. դոկտ., պրոֆ. Արեգ Գրիգորյանը, բժշկ. գիտ. դոկտ., պրոֆ. Արամայիս Գրիգորյանը, տեխն. գիտ. դոկտ., պրոֆ. Լավրենտ Մովսիսյանը, տեխն. գիտ. դոկտ. Աշոտ Բաղյանը:

Շրջակայքը հարուստ է բազալտի պաշարներով:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 450 մարդ, զոհվել է 210-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Ծմակահող

Գտնվում է Մարտակերտից 47 կմ դեպի հարավ-արևմուտք: Տեղադրված է Խաչենի գեղատեսիլ հովտի ձախափնյա մասում: Օդը մաքուր է, ջուրը՝ զուլալ, անտառները շատ են, կլիման մեղմ է: Բարձրությունը ծովի մակերևույթից 850 մ է: Նախկինում կոչվել է Վաճառաշեն, այդտեղով հոսող համանուն գետակի անունով: Հետագայում բնակիչները հողեր են յուրացրել տեղի անտառի (ծմակի) խորքում, որտեղ էլ հետագայում կառուցել են տներ: Այստեղից էլ առաջացել է այժմյան անվանումը: Հին բնակավայրի պատմությունն սկսվում է 10-րդ դարից, այժմյանը՝ 13-րդ դարից: Եկեղեցին (Ս. Ստեփանոս) կառուցվել է 12-րդ դարում: Այժմ խարխուլ վիճակում է: 1890-ական թվականներին այստեղ կար 40 տուն, 423 բնակիչ, 1970 թ.՝ 68 տուն, 320 բնակիչ, 1979 թ.՝ 71 տուն, 282 բնակիչ, 1987 թ.՝ 72 տուն, 256 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1929 թ., 1950 թ. միավորվել է Առաջաձորի տնտեսությանը, իսկ 1977 թ.՝ Վանքի պետական տնտեսությանը: Մասնագիտացված է անասնապահության ուղղությամբ: 1923 թ. բացվել է տարրական դպրոց, որը 1963 թ. դարձել է 8-ամյա, ունի 63 աշակերտ, 13 ուսուցիչ: Գործում են՝ բուժկետ, գրադարան, ակումբ, կենցաղսպասարկման կետ: Էլեկտրիֆիկացվել է 1963 թ.: Տները երկհարկանի են: Ջրով ապահովված է: Ճանապարհներն անբարեկարգ են: Բնակիչներն աշխատասեր են: Կյանքի միջին տևողությունը 70—75 տարի է: Այստեղ է ծնվել ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Անդրանիկ Իոսիֆյանը:

Շրջապատում հայտնի են Կուսաղբյուրը, Մանքա եկեղեցին (XIII դ.) Խնաթուր բլուր, Բեմեն պատ վայրերը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 100 մարդ, զոհվել է 53-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Քոլատակ

Գտնվում է Մարտակերտից 45 կմ դեպի հարավ-արևմուտք: Հեռավորությունը Ստեփանակերտից 52 կմ է: Տեղադրված է Խաչենի վտակ Քոլատակ կամ Քլքլան գետի միջին հոսանքի գեղատեսիլ հովտում, անտառի բացատում: Շրջապատված է անտառներով և թփուտներով՝ քոլերով (այստեղից էլ առաջացել է անվանումը՝ Քոլատակ, այսինքն անտառի կամ քոլի տակ գտնվող գյուղ): Գյուղի պատմությունն սկսվում է 9-րդ դարից: Սա թշնամիների կողմից ավերվել է 12—13-րդ դարերում: Այժմյան բնակավայրը հիմնադրվել է 14-րդ դարում: Բարձրությունը ծովի մակերևույթից 1300 մ է, օդը

մաքուր է, ջուրը՝ զուլալ: 1970 թ. այստեղ կար 131 տուն, 534 բնակիչ, 1979 թ.՝ 131 տուն, 461 բնակիչ, 1987 թ.՝ 117 տուն, 341 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ., միավորվել է Առաջաձորի տնտեսությանը և ստեղծվել է միացյալ պետական տնտեսություն, իսկ 1988 թ. նորից առանձնացել է:

1923 թ. այստեղ բացվել է տարրական դպրոց, 1936 թ.՝ յոթնամյա, 1968 թ.՝ միջնակարգ, որն այժմ ունի 80 աշակերտ և 17 ուսուցիչ:

Գյուղում կա բուժկետ, գրադարան, ակումբ, խանութ, կապի բաժանմունք, խնայդրամարկղ, վարսավիրանոց: Էլեկտրիֆիկացվել է 1963 թ.: Տները երկհարկանի են, քարաշեն: Ջրով չի ապահովված: Այս գյուղում է ծնվել տեխն. գիտ. դոկտոր, պրոֆ. Լենսեր Աղալովյանը:

Գյուղը և շրջակայքը հարուստ են պատմական հուշարձաններով, որոնք վերաբերում են 9—18-րդ դարերին: Գյուղն ունի կիսավեր մատուռ, բազմաթիվ խաչքարեր, հին գերեզմանոց, որտեղ կան վիմափոր արձանագրություններ: Գյուղի շրջակայքում, հատկապես անտառներում, բարձրադիր բլուրների վրա կան բազմաթիվ պատմական հուշարձաններ՝ Եղցուն խութը, Հնձանի եկեղեցին, Մատուռի եկեղեցին, Զառունց տափեն եկեղեցին, որոնք լավ են պահպանվել, իսկ Ս. Հակոբավանքը, Կոշիկ անապատը, Հավապտուկ վանքը, Կաչաղակաբերդը և մյուսները, հիմնականում ավերված կամ կիսավեր են:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 155 մարդ, զոհվել է 74-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Թբլղու

Գտնվում է Մարտակերտից 42 կմ դեպի հարավ-արևմուտք: Հեռավորությունը Ստեփանակերտից 50 կմ է: Բնակավայրի անվանումը կապված է շրջակայքի թբլղու ծառատեսակի հետ, որն այստեղ շատ է տարածված: Այժմյան գյուղը հիմնադրվել է 17-րդ դարի սկզբներին Իսրայել անունով հայ երախտավորի կողմից: Սակայն այստեղ բնակավայր է եղել դեռևս 7-րդ դարում: Տեղադրված է Խաչեն գետի վերին հոսանքի աջափնյա հովտում, կեռաքար բլրաշարի վրա: Դիրքը գեղատեսիլ ու լեռնային է, բարձրությունը ծովի մակերևույթից 1220 մ է: Գյուղի հնագույն (VII դ.) եկեղեցին այժմ էլ կանգուն է:

1970 թ. այստեղ կար 60 տուն, 318 բնակիչ, 1979 թ.՝ 65 տուն, 275 բնակիչ, 1987 թ.՝ 63 տուն, 211 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1931 թ., որը 1950 թ. միավորվել է Քոլատակի, իսկ 1977 թ. Առաջաձորի տնտեսություններին ու ստեղծվել է միասնական անասնապահական պետական տնտեսություն:

Գործում է տարրական դպրոց, որն ունի 9 աշակերտ և մեկ ուսուցիչ: Կա գրադարան, խանութ, բուժկետ, ակումբ: Էլեկտրիֆիկացվել է 1963 թ.: Տները երկհարկանի են: Ջրով լավ չի ապահովված: Ճանապարհները բարեկարգ չեն:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 76 մարդ, որից 42-ը զոհվել է:

Վանք

Գտնվում է Մարտակերտից 53 կմ դեպի հարավ-արևմուտք: Հեռավորությունը Ստեփանակերտից 62 կմ է: Տեղադրված է Խաչեն գետի վերին հոսանքի ձախ ափին: Ունի գեղատեսիլ բնություն: Բարձրությունը ծովի մակերևույթից 1300 մ է:

Արցախի առավել հանրահայտ և հնագույն բնակավայրերից է: Անվանումն առաջացել է գյուղի մոտ գտնվող Գանձասարի վանքից: Մինչև 19-րդ դարի կեսերը բնակավայրը հիմնականում այս վանքի շրջակայքում է եղել, հետագայում այն տեղաշարժվել է վանքից 1 կմ դեպի հյուսիս: Գանձասարի վանքը, ինչպես նաև Վանք գյուղը հայ ժողովրդի պատմության մեջ անգնահատելի դեր է խաղացել: Այստեղ բնակավայր հիմնադրվել է 9-րդ դարում, բայց այն վերելք է ապրել վանքի կառուցումից հետո: Գանձասարի վանքը, ինչպես արդեն ասվել է կառուցել է Խաչենի Հասան Ջալալյան (Ջալալ Դոլա) մեծ իշխանը 1216—1238 թթ.: Վանքի օծումը և բացումը մեծ շուքով տեղի է ունեցել 1240 թ.: Այն տեղադրված է գյուղի մոտ գտնվող բարձրադիր սարահարթի (Գանձասարի) վրա: Վանքը հայ ճարտարապետության առավել եզակի կոթողներից է և մինչև այժմ գերազանց դիմացել է Արցախի բարդ պատմության իրադարձություններին, ինչպես նաև բնության արհավիրքներին: Վանքի ներսի ու արտաքին պատերին քանդակված զարդանախշերը, մեսրոպատառ ու բովանդակալից արձանագրությունները, խաչերը, պատկերները հայկական հոգևոր մշակույթի անզուգական արժեքներից են: Վանքը կառուցված է տեղի սրբատաշ ծանր տուֆաքարից: Ճարտարապետական այս կոթողի ճոխությունը և վեհությունը շատ դիպուկ կերպով արտահայտում է Արցախի ժողովրդի անսասան կամքը, հպարտությունը, գեղեցկությունը, ազատ ու անկախ ապրելու ձգտումը:

Գանձասարի եկեղեցական համալիրը երկար ժամանակ եղել է պատմական Հայաստանի արևելյան հատվածի ոչ միայն կրոնական, այլև մշակութային, տնտեսական, ռազմական-պաշտպանական խոշորագույն կենտրոնը: 17-րդ դարի վերջերից Գանձասարի եսայի Հասան Ջալալյան կաթողիկոսը

այն դարձրել էր ամբողջ Արցախի ազգային ազատագրական շարժման հզոր կենտրոն: Հենց այստեղ է, որ 1701 թ. հայ մելիքները նամակ են գրել Ռուսաստանի կայսր Պյոտր I-ին և խնդրել, որ Ռուսաստանը օգնի Ղարաբաղը ազատագրելու արևելքի բարբարոսներից, ինչպես նաև հայ ժողովրդի պատմության մեջ առաջին անգամ Գանձասարում է մտահղացվել Ռուսաստանին միավորվելու գաղափարը: Այստեղից էլ Իսրայել Օրին հայ մելիքների պատվիրաններով մեկնում է ռուսական կայսրի հետ բանակցություններ վարելու:

Վանքի շրջակայքում եղած հին գերեզմանաքարերի, խաչքարերի, հուշարձանների վրա եղած արձանագրությունները ցույց են տալիս, որ այստեղ, մինչև այժմյան կանգուն համալիրի կառուցումը, հայկական եկեղեցական շինություններ են եղել: Այստեղ պահպանվում են Խաչենի իշխանական տոհմի Հասան-Ջալալյանների բոլոր նշանավոր գործիչների շիրմաքարերը, որոնցից յուրաքանչյուրը մեծ հետաքրքրություն ներկայացնող հուշարձան է: Գյուղից ոչ մեծ հեռավորության վրա են Նահատակ և Եղցուն խութ սրբավայրերը:

Ըստ Մակար եպիս. Բարխուդարյանցի (Արցախ, Բաքու, 1895, էջ 172) տվյալների 19-րդ դարի 90-ական թվականների սկզբներին Վանք և մոտակա Շահմասուր գյուղերում միասին կար 167 տուն, 1536 բնակիչ: 1959 թ. միայն Վանք գյուղում կար 372 տուն, 1662 բնակիչ, 1979 թ.՝ 396 տուն, 1370 բնակիչ, 1987 թ.՝ 372 տուն, 1396 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1929 թ., որը 1977 թ. միավորվել է Ծմակահող և Նարեշտար գյուղերի հետ ու դարձել պետական տնտեսություն: 1987 թ. վերջինից բաժանվել է և Ծմակահողի, Շահմասուրի ու Գառնաքարի հետ միասին դարձել անասնապահական, ծխախոտագործական պետական տնտեսություն:

Վանքում եկեղեցական դպրոց գործել է հնուց, Գանձասարի վանքի կառուցման առաջին տարիներից: Ավելի ուշ, այս գյուղում եռդասյան դպրոց է բացվել 1850-ական թվականներին, 1920 թ. բացվել է տարրական դպրոց, 1930 թ.՝ 7-ամյա, 1938 թ.՝ միջնակարգ: Միջնակարգ դպրոցն այժմ ունի 320 աշակերտ, 33 ուսուցիչ:

Գործում են՝ մշակույթի պալատ, գրադարան, կապի բաժանմունք, մսուր-մանկապարտեզ, խնայդրամարկղ, խանութ, հիվանդանոց, վարսավիրանոց, ծիսակատարությունների տուն, հացի փուռ, կենցաղսպասարկման 6 տարբեր կետեր, կահույքի արտադրամաս:

Էլեկտրիֆիկացվել է 1963 թ., տները քարաշեն են, երկհարկանի ու թիթեղածածկ, ջրով լավ չի ապահովված: Այս գյուղում են ծնվել հեղափոխական Լազր Գալստյանը և քիմ. գիտ. դոկտ., պրոֆ. Սամսոն Թևոսյանը: Այս գյուղի ծնունդ է նաև Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի կուսակցական ամենանշանավոր գործիչներից մեկը՝ կուսակցության մարզկոմի նախկին

առաջին քարտուղար, աննկուն հայրենասեր Հենրիխ Պողոսյանը: 1988 թ. իրադարձությունների ժամանակ նա հիրավի ապացուցեց, որ Հասան Ջալալյանների քաջ ու հայրենասեր տոհմի արժանավոր ժառանգորդն է:

Գյուղի մոտ կան տուֆաքարի ու բազալտաքարի պաշարներ, այստեղ են նաև ջրաղացքարերի պատրաստման համար օգտագործվող՝ Արցախում վաղուց հայտնի հանքավայրերը:

Շրջակայքում հայտնի են Խոխանաբերդ, Դարպասներ, Հավապտուկ վանք, Համամի ձոր, Պառավաձոր գյուղատեղի, Թարխանա դալար, Հիկեղեն քարհանք, Դերին յալը, Կպանա հողը, Կարմիր քարը պատմական հուշարձանախմբերն ու վանքերը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 313 մարդ, զոհվել է 174-ը, որոնց հիշատակին հուշարձան է կանգնեցված: Գյուղը հայաբնակ է:

Գառնաքար

Գտնվում է Մարտակերտից 49 կմ դեպի հարավ-արևմուտք: Հեռավորությունը Ստեփանակերտից 60 կմ է: Տեղադրված է Խաչեն գետի վերին հոսանքի աջափնյա բարձրության վրա, Վանքից ոչ հեռու:

Այստեղ բնակավայր հիմնվել է 11-րդ դարում և որոշ ժամանակ եղել է Խաչեն գավառի իշխանանիստը: Այժմյան Գառնաքարը հիմնադրվել է 1751 թ. Մանգին, Ջաքար, Մելքում և Բաղդասար եղբայրների կողմից: Դիրքը լեռնային է, բարձրությունը ծովի մակերևույթից շուրջ 1000 մ է: 1959 թ. այստեղ կար 64 տուն, 190 բնակիչ, 1979 թ.՝ 51 տուն, 154 բնակիչ, 1987 թ.՝ 45 տուն, 150 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1929 թ., այժմ դարձել է անասնապահական պետական տնտեսություն (Վանքի հետ):

1924 թ. բացվել է տարրական դպրոց: Այժմ նույնպես տարրական է և ունի 9 աշակերտ, 1 ուսուցիչ: Կա ակումբ, գրադարան, կինոտեղակայում, բուժկետ, խանութ: Էլեկտրիֆիկացվել է 1963 թ.: Տները մեկ կամ երկու հարկանի են: Բնակիչներն աշխատասեր են: Կյանքի միջին տևողությունը 70—75 տարի է: Այս գյուղում է ծնվել Փառքի երեք աստիճանի շքանշանակիր Աշոտ Մելքումյանը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 56 մարդ, զոհվել է 24-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Շահմասուր

Գտնվում է Մարտակերտից 61 կմ դեպի հարավ-արևմուտք, տեղադրված է Խաչեն գետի վերին հոսանքի ձախափնյա բարձունքին, Վանք գյուղից փոքր հեռավորության վրա: Դիրքը գեղատեսիլ է, անտառաշատ, բարձրությունը ծովի մակերևույթից 1000 մ է: Բնակիչները եկել են Դիզակի գավառի Առաքյուլ գյուղից: Անվանումը ստուգաբանվում է երկու ձևով. 1) առաջացել է «շահի մահը սրով» կապակցությունից. իբր տեղացիները շահին սպանում են նրա անվայել արարքի համար և բնակավայրը դրանից հետո կոչվում է այդպես, 2) այդ տարածքի հողերը պատկանում էին Հասան Ջալալյան իշխանի մոտիկ ազգական Շահ-Մանսուրին, որից էլ առաջացել է Շահմասուր անվանումը:

1959 թ. այստեղ կար 38 տուն, 160 բնակիչ, 1979 թ.՝ 44 տուն, 153 բնակիչ, 1987 թ.՝ 54 տուն, 151 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1929 թ., այժմ Վանքի հետ մտնում է նույն պետական տնտեսության մեջ: Հիմնական զբաղմունքն անասնապահությունն է: 1925 թ. բացվել է տարրական դպրոց: Այժմ նույնպես տարրական է: Ունի 14 աշակերտ, 1 ուսուցիչ: Գյուղում կա գրադարան, բուժկետ, խանութ: Էլեկտրիֆիկացվել է 1963 թ.: Տները երկհարկանի են: Ջրով չի ապահովված: Բնակիչներն աշխատասեր և հյուրասեր են, կյանքի միջին տևողությունը 70—75 տարի է: Շրջապատում հայտնի են Խանաթոռի և Նահատակի լեռնապատ, Ծաղկի խաչ վայրերը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 50 մարդ, զոհվել է 17-ը, որոնց հիշատակին հուշարձան է կանգնեցված: Գյուղը հայաբնակ է:

Վաղուհաս

Գտնվում է Մարտակերտից 52 կմ դեպի հարավ-արևմուտք: Հեռավորությունը Ստեփանակերտից 86 կմ է: Անվանումն առաջացել է «վաղուց հիմնադրված», «այդտեղ վաղուց հասած» իմաստներից: Արցախի հին բնակավայրերից է, որը սակայն ավերվել է թաթար-մոնղոլների արշավանքներից: Այժմյան Վաղուհասը հիմնադրվել է 1775 թ.: Դիրքը լեռնային է, գեղատեսիլ: Տեղադրված է Թարթառ գետի վերին հոսանքի աջափնյա բարձության վրա, ծովի մակերևույթից բարձրությունը շուրջ 900 մ է: Օդը մաքուր է, ջուրը՝ զուլալ, կլիման՝ նպաստավոր:

Գյուղը և շրջակայքը հարուստ են պատմական վայրերով: Դրանցից հանրահայտը Մայրաքաղաք կամ Տիրամայր եկեղեցական հուշարձանահա-

մալիրն է: Եկեղեցու մեծությունը, օժանդակ կառույցները, շրջակա գերեզմանատան ծավալը ցույց են տալիս, որ սա ժամանակին հզոր, շքեղ կառույց է եղել, ունեցել է նաև գրադարան, իսկ գյուղը եղել է մեծ բնակավայր, որն այժմ ավերված է: Գյուղից մի փոքր հեռու, անտառի մեջ է Կարմիր վանքը, որը նույնպես օժանդակ շատ կառույցներ է ունեցել: Այժմ ավերված է: Կան արձանագրություններ, խաչքարեր, գերեզմանաքարեր: Կարմիր վանքը կառուցվել է 13-րդ դարում:

19-րդ դարի 90-ական թվականների սկզբներին այստեղ կար 40 տուն, 322 բնակիչ, 1970 թ.՝ 266 տուն, 1562 բնակիչ, 1979 թ.՝ 288 տուն, 322 բնակիչ, 1970 թ.՝ 266 տուն, 1562 բնակիչ, 1979 թ.՝ 288 տուն, 1340 բնակիչ, 1987 թ.՝ 320 տուն, 1492 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1929 թ.: 1977 թ. Հարությունագոմերի հետ ստեղծվել է պետ. տնտեսություն: Այժմ առանձին անասնապահական պետական տնտեսություն է:

1910 թ. բացվել է մեկդասյան դպրոց, 1912 թ.՝ դարձել է երկդասյան, 1921 թ.՝ տարրական, 1933 թ.՝ յոթնամյա, իսկ 1941 թ.՝ միջնակարգ դպրոց: Այժմ միջնակարգ դպրոցն ունի 182 աշակերտ, 33 ուսուցիչ: Գործում են՝ ակումբ, գրադարան, խնայդրամարկղ, կապի բաժանմունք, բուժկետ, խանութ, կենցաղսպասարկման կետ: Էլեկտրիֆիկացվել է 1967 թ.: Տները երկհարկանի են, ճանապարհները՝ անբարեկարգ: Բնակիչներն աշխատասեր են: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 203 մարդ, զոհվել է 90-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Խունգութալա

Գտնվում է Մարտակերտից 51 կմ դեպի հարավ-արևմուտք, Վաղուհասից փոքր հեռավորության վրա: Տեղադրված է Թարթառի վերին հոսանքի աջափնյա մասում: Անվանումը կապված է «խունկ և թալա» (բացատ) բառերի հետ: Դիրքը նախալեռնային է, գեղատեսիլ՝ ալպյան ծաղկառատ բուսականությամբ (այստեղից էլ նրա անվանումը): Բարձրությունը ծովի մակերևույթից 800 մ է: Հիմնադրվել է 19-րդ դարի վերջերին, Վաղուհասից այստեղ տեղափոխված ընտանիքներից:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1929 թ. Վաղուհասի հետ միասին և միշտ եղել է նրա կազմում: Մասնագիտացված է անասնապահության ուղղությամբ: 1934 թ. հիմնադրվել է տարրական դպրոց, որը 1970 թ. դարձել է 8-ամյա, այժմ ունի 64 աշակերտ, 17 ուսուցիչ: Գործում են՝ ակումբ, գրա-

դարան, խանութ: Էլեկտրիֆիկացվել է 1967 թ.: Տները հիմնականում երկհարկանի են, քարաշեն: Ճանապարհները բարեկարգ չեն: Բնակիչներն աշխատասեր են: Կյանքի միջին տևողությունը 70—75 տարի է:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 56 մարդ, զոհվել է 25-ը: Գյուղը հայաբնակ է:

Հարությունագոմեր (Կարմիր Քար)

Գտնվում է Մարտակերտից 46 կմ դեպի հարավ-արևմուտք (Վաղուհասից մի փոքր դեպի արևելք): Հեռավորությունը Ստեփանակերտից 82 կմ է: Բնակիչները Վանք գյուղից են այդտեղ տեղափոխվել և ի պատիվ նրանցից ամենահեղինակավորի՝ Հարությունի, այն կոչվել է Հարությունագոմեր կամ Հարությունաշեն: Գյուղի պատմությունն սկսվում է 16-րդ դարի 60-ական թվականներից: Օդը շատ մաքուր է, ջուրը՝ զուլալ, դիրքը՝ նախալեռնային ու գեղատեսիլ: Տեղադրված է Թարթառի աջափնյա բարձրադիր ափին. ծովի մակերևույթից ունի 800 մ բարձրություն: Եկեղեցին կառուցվել է 1760 թ., շրջապատում կան հին գյուղատեղիներ, գերեզմանատներ, ավերակ եկեղեցիներ, Եղեգնուտ լիճ կոչվող վայրը և այլն:

1920 թ. այստեղ կար 50 տուն, 318 բնակիչ, 1970 թ.՝ 123 տուն, 601 բնակիչ, 1979 թ.՝ 140 տուն, 580 բնակիչ, 1987 թ.՝ 141 տուն, 498 բնակիչ: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1929 թ., մասնագիտացվել անասնապահության և ծխախոտագործության ուղղությամբ:

1911 թ. բացվել է մեկդասյան դպրոց, որից հետո՝ տարրական, որը 1937 թ. դարձել է 7-ամյա, 1948 թ.՝ միջնակարգ. այժմ միջնակարգ դպրոցն ունի 108 աշակերտ, 18 ուսուցիչ: Կա ակումբ, գրադարան, հիվանդանոց, կապի բաժանմունք, խանութ, հացի փուռ, անասնաբուժական կետ: Էլեկտրիֆիկացվել է 1965 թ.: Տները հիմնականում երկհարկանի են, քարաշեն: Ճանապարհներն անբարեկարգ են: Բնակիչներն աշխատասեր և հյուրասեր են: Կյանքի միջին տևողությունը 70—75 տարի է: Այս գյուղում է ծնվել փիլ. գիտ. դոկտ., պրոֆ. Գարեգին Սիմոնյանը, ֆիզ. մաթ. գիտ. դոկտ., պրոֆ. Սելման Անանյանը, գեներալ Գրիգոր Բաղյանը:

Շրջապատում հայտնի են Կարմրաքար գյուղատեղին, «Միջի խութ», «Հունոտ», «Յողցատեղ» վայրերը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 135 մարդ, զոհվել է 53-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Վերին Հոռաթաղ

Գտնվում է Մարտակերտից 44 կմ դեպի հարավ-արևմուտք (Հարությունագոմերից 2 կմ հեռավորության վրա): Հեռավորությունը Ստեփանակերտից 76 կմ է: Գյուղը հիմնադրել են 19-րդ դարի 50-ական թվականներին, Վանքից այստեղ տեղափոխված ընտանիքները: Այդ պատճառով էլ Վանքից հեռու, վանքեցիների ստեղծած այս նոր բնակավայրը անվանվել է «Հեռու թաղ», որը հետագայում ձևափոխվել և կոչվել է Հոռաթաղ, իսկ Ներքին Հոռաթաղից տարբերելու համար անվանվել է Վերին Հոռաթաղ: Նույնանուն բնակավայրերի առաջացման մյուս տարբերակն էլ կապված է հոռի (ուռենի) ծառատեսակի հետ: Այդ երկու վայրերում էլ աճում են շատ ուռենիներ: Ղարաբաղցիները դրանք կոչում են հոռե ծառեր, որից էլ ծագել է «Հոռե թաղ» կամ «Հոռաթաղ» անվանումը:

Դիրքը գեղատեսիլ է, տեղադրված է Թարթառի աջափնյա բարձունքին, ծովի մակերևույթից ունի 780 մ բարձրություն:

1970 թ. այստեղ կար 89 տուն, 432 բնակիչ, 1987 թ.՝ 125 տուն, 480 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1929 թ., իսկ 1955 թ. միավորվել է Հարությունագոմերի կոլտնտեսությանը, որոնք միասին 1977 թ. կազմել են անասնապահական պետական տնտեսություն:

1925 թ. ունեցել է տարրական դպրոց: 1969 թ. դարձել է ութնամյա, որն այժմ ունի 106 աշակերտ, 15 ուսուցիչ: Կա գրադարան, ակումբ, հիվանդանոց (22 մահճակալով), խանութ, կենցաղասպասարկման երկու կետ: Էլեկտրիֆիկացվել է 1964 թ.: Տները երկհարկանի են, քարաշեն: Բնակիչներն աշխատասեր և հյուրասեր են: Կյանքի միջին տևողությունը 70—75 տարի է: Այս գյուղում է ծնվել քիմ. գիտ. դոկտ., պրոֆ. Սամսոն Թևոսյանը:

Շրջապատում հայտնի են Ուզուն Թալա, Խաթունա ջուր, Խաչերին սեռ, Պիծի ջուր, Ղամշոտ ծով (եղեգնուտ լիճ) վայրերը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել են 36 մարդ, զոհվել են 18-ը: Գյուղը հայաբնակ է:

Կոճողոտ (Կճղոտ)

Գտնվում է Մարտակերտից 40 կմ դեպի հարավ-արևմուտք: Հեռավորությունը Ստեփանակերտից 76 կմ է: Բնակիչները տեղափոխվել են Վանք գյուղից, որոնք այս անտառապատ վայրում տներ կառուցելու համար կտրատել են դարավոր անտառի հաստաբուն ծառերն ու արմատախիլ արել դրանց

կոճղերը: Այստեղից էլ առաջացել է նորաստեղծ գյուղի անվանումը՝ Կոճղոտ (այսինքն կոճղաշատ վայր): Մինչև այս բնակավայրի հիմնադրումը այստեղ հնում եղել է բնակավայր, որի մասին վկայում են դեռևս պահպանվող գերեզմանատները, խաչքարերն ու եկեղեցիները: Այժմյան Կոճողոտը հիմնադրվել է 18-րդ դարի սկզբներին: Դիրքը լեռնային է, գեղատեսիլ, անտառապատ է, տեղադրված է Թարթառի աջափնյա հովտում, ծովի մակերևույթից ավելի քան 1500 մ բարձրության վրա: Օդը, ջուրը, կլիման պատվական են: 1970 թ. այստեղ կար 150 տուն, 733 բնակիչ, 1979 թ.՝ 151 տուն, 685 բնակիչ, 1987 թ.՝ 161 տուն, 626 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ., 1950 թ. միավորվել է Դրմբոնի կոլտնտեսությանը, որոնք 1977 թ. միասին ստեղծել են անասնապահական պետական տնտեսություն: Զարգացած է նաև ծխախոտագործությունը: 1921 թ. բացվել է տարրական դպրոց, որը 1934 թ. դարձել է յոթնամյա, 1965 թ.՝ ութամյա, 1965 թ.՝ միջնակարգ: Այժմ միջնակարգ դպրոցն ունի 90 աշակերտ, 19 ուսուցիչ: Կա գրադարան, մշակույթի պալատ, կապի բաժանմունք, կինոտեղակայում: Էլեկտրիֆիկացվել է 1964 թ.: Տները հիմնականում երկհարկանի են: Գյուղամիջյան ճանապարհներն ու փողոցները բարեկարգ չեն: Բնակիչներն աշխատասեր են: Կյանքի միջին տևողությունը 70—75 տարի է: Այս գյուղում են ծնվել տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ Մելիք Աթաջանյանը, վաստակավոր ռացիոնալիզատոր Հրայր Վանյանը:

Շրջապատում հայտնի են Խաչերին սեռը, Բղրամա խաչը, Էլչին խաչը, երկու ջրի արանքին խաչը, Մռամանց հարթի խաչը, Ամենափրկիչ վանքը, Մատուռը, Ս. Աստվածածին եկեղեցին, Վերին սեռ հանդամասը, Թխախոռն, երի Հոռաթաղ բնակատեղիները և այլն:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 144 մարդ, զոհվել է 78-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Դրմբոն

Գտնվում է Մարտակերտից 35 կմ դեպի հարավ-արևմուտք: Հեռավորությունը Ստեփանակերտից 71 կմ է: Գյուղի մոտակայքի, և հատկապես, ձորտակ խաչ տեղամասի քարածայռերին հարվածելիս առաջանում է բարձր ու ղողանջող, դնգդնգող ձայներ, որից էլ առաջացել է բնակավայրի անվանումը՝ Դրմբոն: Այս գյուղի հիմնադիր բնակիչները տեղափոխվել են Վանքից 18-րդ դարի 50-ական թվականներին: Սակայն մինչ այդ այստեղ եղել է հին հայկական բնակավայր, որի ապացույցները մինչև այժմ էլ պահպանվող քարե հուշարձանները, ճարտարապետական կոթողների մնացորդներն են: Օրի-

նակ, Մանդուռի եկեղեցին կառուցվել է 1187 թ.: Դիրքը լեռնային է, գեղատեսիլ: Շրջապատված է անտառներով, տեղադրված է Թարթառի աջափնյա բարձունքին, ծովի մակերևույթից 1100 մ բարձրության վրա:

1970 թ. այստեղ կար 119 տուն, 512 բնակիչ, 1979 թ.՝ 137 տուն, 455 բնակիչ, 1987 թ.՝ 121 տուն, 428 բնակիչ: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1931 թ., իսկ 1977 թ. Չլդրանի կոլտնտեսության հետ կազմակերպվել է պետական տնտեսություն:

1924 թ. բացվել է տարրական դպրոց: Այժմ գործում է 8-ամյա դպրոց, որն ունի 64 աշակերտ, 11 ուսուցիչ: Գյուղն ունի ակումբ, գրադարան, կինոտեղակայում, բուժկետ, կապի բաժանմունք, կարի արհեստանոց: Էլեկտրիֆիկացվել է 1964 թ.: Տները քարաշեն ու երկհարկանի են: Ջրով լավ չի ապահովված: Գյուղամիջյան ճանապարհներն ու փողոցները բարեկարգ չեն:

Բնակիչներն աշխատասեր են: Կյանքի միջին տևողությունը 70—75 տարի է: Այս գյուղում է ծնվել սոցիալիստական աշխատանքի հերոս Հեղուշ Լալայանը:

Մեհմանայի բազմամետաղների հանքաշերտերը ձգվում են մինչև այս գյուղի մոտերքը, որտեղ կան նաև ոսկու հանքաշերտեր: Շրջակայքում հայտնի են Մախաչ շինատեղը, Թխկոտ գոմերը, Շահբազ բնակավայրը, Ճոխտակ խաչը, Սհարանց խաչ, Ղլբեին խաչ խաչքարերը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 105 մարդ, զոհվել է 49-ը, որոնց հիշատակին կանգնեցվել է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Ջագլիկ

Գտնվում է Մարտակերտից 40 կմ դեպի հարավ-արևմուտք, հեռավորությունը Ստեփանակերտից 97 կմ է: Գյուղը հիմնադրվել է 1920 թ.: Բնակիչներն այստեղ են տեղափոխվել այժմյան Քարհատի (Դաշքեսանի շրջանի) Ջագլիկ հայաբնակ գյուղից:

Տեղադրված է Թարթառ գետի ձախափնյա մասում: Ունի գեղատեսիլ դիրք: Բարձրությունը ծովի մակերևույթից 800 մ է:

1970 թ. այստեղ կար 44 տուն, 227 բնակիչ, 1979 թ.՝ 44 տուն, 222 բնակիչ, 1987 թ.՝ 39 տուն, 186 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1931 թ., որը 1987 թ. դարձել է Մարտակերտի № 120 մեքենայացված շարժական շինարարական վարչության օժանդակ տնտեսություն: Տնտեսությունը մասնագիտացված է դաշտավարության մեջ:

1923 թ. բացվել է տարրական դպրոց, այժմ էլ այն տարրական է, ունի

21 աշակերտ, 6 ուսուցիչ: Կա ակումբ, գրադարան, բուժկետ, խանութ, մանկապարտեզ:

Էլեկտրիֆիկացվել է 1967 թ.: Տները հիմնականում երկհարկանի են: Բնակիչներն աշխատասեր են և հյուրասեր:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 15 մարդ, զոհվել է 5-ը: Գյուղը հայաբնակ է:

Հաթերք

Գտնվում է Մարտակերտից 45 կմ դեպի հարավ-արևմուտք: Հեռավորությունը Ստեփանակերտից 100 կմ է: Տեղադրված է Թարթառ գետի ձախափնյա բարձրադիր սարահարթում: Ունի գեղատեսիլ և իշխող դիրք: Գյուղը մի զգալի մասով շրջափակված է անդնդախոր կիրճով: Բարձրությունը ծովի մակերևույթից ավելի քան 1000 մ է:

Բարձրադիր դիրքը, շրջակա գեղատեսիլ անտառները, Թարթառի անզուգական կիրճը, նրա ջրվեժները, բազալտե բնական սյուները, պատմական բազմազան արժեքավոր հուշարձանները և նպաստավոր կլիմայական պայմանները Հաթերքն ու նրա շրջակայքը դարձնում են Արցախի նշանավոր վայրերից մեկը: Սա Արցախի հնագույն և պատմական մեծ կարևորություն ունեցող բնակավայրերից է: Հին Հաթերքի պատմությունն սկսվում է IV դարից: Տարբեր աղբյուրներում այն հիշատակվում է որպես առևտրական և տնտեսական հանգուցակետ Պարտավ-Դվին մայրուղու վրա, որպես Հաթերքի իշխանության կենտրոն (XII—XIII դդ.)[1]:

Հին Հաթերքի կյանքի տարբեր բնագավառներին վերաբերող բազմաթիվ վիմափոր արձանագրություններ կան գյուղում և շրջակայքում առկա երեսունից ավելի կանգուն, կիսավեր ու ավերված հուշարձանների վրա:

Նոր Հաթերքը հիմնադրվել է 16-րդ դարի սկզբներին: Բնակչության մեծ մասը, ինչպես վկայում է Մակար եպիս. Բարխուդարյանցը («Արցախ», Բաքու, 1895, էջ 200), այստեղ են տեղափոխվել Փառուխ, Կղարծի, Ճարտար, Խանածախ (Խաչենի) գյուղերից և Վանից:

19-րդ դարի 90-ական թվականների սկզբներին այստեղ կար 70 տուն, 694 բնակիչ, 1970 թ.՝ 537 տուն, 2679 բնակիչ, 1979 թ.՝ 604 տուն, 2504 բնակիչ, 1987 թ.՝ 682 տուն, 2660 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1929 թ.: 1977 թ. վերակազմվել է և դարձել անասնապահական, եգիպտացորենի, ծխախոտի մշակության պե-

---

[1] *Շահեն Մկրտչյան*, Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, 1985, էջ 48—49:

տական տնտեսություն: Կան փաստեր, որ այստեղ դպրոց է բացվել շատ վաղուց: Հետագայում՝ 1907 թ. բացվել է մեկդասյան դպրոց: 1929 թվականից գործել է ոչ լրիվ միջնակարգ, իսկ 1936 թ.՝ միջնակարգ դպրոց: Այժմյան միջնակարգ դպրոցում, որն ունի տիպային նոր հարմարավետ շենք, սովորում է 489 աշակերտ, աշխատում է 71 ուսուցիչ: Գործում են՝ ակումբ, գրադարան, հիվանդանոց, կապի բաժանմունք, կենցաղսպասարկման 6 կետ, 4 խանութ: Այստեղ գործում է Ստեփանակերտի կոնդենսատորների գործարանի մասնաճյուղը, որտեղ աշխատում է 80 մարդ:

Էլեկտրիֆիկացվել է 1965 թ., տները երկհարկանի են: Ճանապարհները բարեկարգ չեն:

Գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, որը կառուցվել է 12-րդ դարում, կիսավեր վիճակում է: Հայտնի են նաև Նշան եկեղեցին, Ականա բերդը, Մուղդուսու գերեզմանոցը, Աստղաբլուր, Մթնաձոր, Սրաշեն բնակատեղիները, Սուրբ Սարգիս բերդաքարը, Սուրբ Վանես, Սռին շինատեղ, Սարու խաչ և շատ այլ պատմական վայրեր:

Բնակիչներն աշխատասեր են: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է, իսկ Խանի Առուստամյանը, Մարալ Աղաբեկյանը ավելի քան 105, Ապրես Սաոգսյանը 100 տարեկան է: Այս գյուղում են ծնվել բանասիրական գիտ. դոկտ., պրոֆ. Հրանտ Պետրոսյանը, անասնաբուժ. գիտ. դոկտ., պրոֆ. Ռուբեն Ոսկանյանը, աշխ. գիտ. թեկնածու, դոց. Զիվան Աթայանը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել են 350 մարդ, զոհվել են 195-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Զարդախաչ

Գտնվում է Մարտակերտից 56 կմ դեպի հարավ-արևմուտք: Հեռավորությունը Ստեփանակերտից 93 կմ է: Գյուղը հիմնադրվել է 1918 թ.: Բնակիչները եկել են Գորիսի շրջանից: Նոր բնակավայրի մոտակայքի հողատարածությունում վար անելիս հողի տակից դուրս է գալիս մի մեծ խաչքար: Նույն տարում այդ տեղամասի «զարդա» կոչվող ցորենի արտը տալիս է առաջին ու առատ բերքը: Այստեղից էլ առաջանում է բնակավայրի անվանումը՝ Զարդախաչ:

Տեղադրված է Թարթառի վերին հոսանքի աջափնյա բարձրադիր լեռնալանջին, շրջապատված է գեղատեսիլ անտառներով, բարձրությունը ծովի մակերևույթից 900 մ է:

1970 թ. այստեղ կար 61 տուն, 252 բնակիչ, 1979 թ.՝ 58 տուն, 137 բնակիչ, 1987 թ.՝ 53 տուն, 165 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1931 թ., որը 1979 թ. միավորվել է Չափարի տնտեսությանը և ստեղծվել է միացյալ անասնապահական ու ծխախոտագործական պետական տնտեսություն:

1940 թ.-ից գործել է տարրական, 1969 թ.-ից՝ 8-ամյա դպրոց: Այժմ դպրոցը տարրական է, ունի 8 աշակերտ, 2 ուսուցիչ:

Գործում են՝ ակումբ, գրադարան, խանութ, բուժկետ: Էլեկտրիֆիկացվել է 1964 թ.: Տները երկհարկանի են: Ջրով լավ չի ապահովված: Ճանապարհները բարեկարգ չեն: Բնակիչները հյուրասեր են: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Շրջապատում հայտնի են Լազգուն չափար, Նոթանց կաղնուտ, Վկանանց կալեր վայրերը: Գյուղը հայաբնակ է:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 65 մարդ:

Չափար

Գտնվում է Մարտակերտից 59 կմ դեպի հարավ-արևմուտք, Հաթերքից՝ արևմուտք: Հեռավորությունը Ստեփանակերտից 92 կմ է: Տեղադրված է Թարթառի վերին հոսանքի ձախափնյա բարձրադիր ու անտառածածկ գոգավորությունում: Դիրքը գեղատեսիլ է, բարձրությունը ծովի մակերևույթից շուրջ 1000 մ է: Այստեղ բնակավայր հիմնադրվել է 13-րդ դարում, որի վկաներն են՝ շրջակայքում՝ մինչև Դադի վանք ձգվող տարածքում գտնվող բնակատեղիները, պատմական բազմաթիվ հուշարձանները: Այժմյան Չափարը հիմնադրվել է 19-րդ դարի 70-ական թվականներին:

19-րդ դարի 90-ական թվականների սկզբներին այստեղ կար 12 տուն, 65 բնակիչ, 1970 թ.՝ 177 տուն, 686 բնակիչ, 1987 թ.՝ 188 տուն, 587 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ., որը 1977 թ. վերակազմվել ու դարձել է պետական տնտեսություն: Մասնագիտացված է ծխախոտագործության և անասնապահության ուղղությամբ: 1913 թ. բացվել է մեկդասյան, 1934 թ. տարրական, հետագայում՝ յոթնամյա դպրոց: Այժմ դպրոցը միջնակարգ է: Ունի 86 աշակերտ, 26 ուսուցիչ: Կա գրադարան, ակումբ, խանութ, խնայդրամարկղ, բուժկետ: Էլեկտրիֆիկացվել է 1964 թ., տները երկհարկանի են: Ճանապարհները բարեկարգ չեն:

Շրջակայքում նշանավոր են Ս. Մինաս եկեղեցին, Կարմիր քարի վանքը, Օջախ սրբավայրը, Ղալա բերդապարիսպը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 82 մարդ, զոհվել է 43-ը, որոնց հիշատակին կանգնեցվել է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Գետավան

Գտնվում է Մարտակերտից 50 կմ դեպի հարավ-արևմուտք: Հեռավորությունը Ստեփանակերտից 87 կմ է: Գտնվում է Թարթառի վերին հոսանքի ավազանում: Հիմնադրվել է 1930-ական թվականներին: Սկզբնական շրջանում կոչվել է Վաղուհասի կամուրջ: Դիրքը նախալեռնային է, բարձրությունը ծովի մակերևույթից 650 մ է:

1970 թ. այստեղ կար 27 տուն, 157 բնակիչ, 1979 թ.՝ 60 տուն, 233 բնակիչ, 1987 թ.՝ 80 տուն, 312 բնակիչ:

Դպրոցը միջնակարգ է, ունի 83 աշակերտ, 24 ուսուցիչ: Գյուղն ունի ակումբ, կապի բաժանմունք, վարսավիրանոց, խանութ, փայտամշակման կոմբինատ (1967 թվականից):

Էլեկտրիֆիկացվել է 1967 թ., տները երկհարկանի են, քարաշեն: Գյուղը հայաբնակ է:

Չարեքտար

Գտնվում է Մարտակերտի շրջանի ծայր արևմտյան մասում, հեռավորությունը Մարտակերտից 66 կմ է, Ստեփանակերտից՝ 103 կմ: Պատմությունն սկսվում է 1770-ական թվականներից: Բնակիչները տեղափոխվել են Դարալագյազից: 1970 թ. այստեղ կար 106 տուն, 556 բնակիչ, 1987 թ.՝ 125 տուն, 538 բնակիչ: Այստեղ բնակվում են հայեր և ադրբեջանցիներ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1932 թ., որը 1977 թ. միավորվել է Չափարի կոլտնտեսությանը և ստեղծվել է անասնապահական միացյալ տնտեսություն:

Դպրոցը միջնակարգ է, ունի 105 աշակերտ, 17 ուսուցիչ: Գործում են՝ ակումբ, բուժկետ, գրադարան, խանութ:

Էլեկտրիֆիկացվել է 1964 թ.: Տները երկհարկանի են, քարաշեն: Գյուղում կա հին հայկական եկեղեցի, որը կիսավեր վիճակում է:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 23 մարդ, զոհվել է 10-ը:

Հայադ

Գտնվում է Մարտակերտից 42 կմ դեպի հարավ-արևմուտք, Առաջաձորից 7—8 կմ դեպի արևմուտք: Անվանումն առաջացել է հայ Ադիի անունից (որը գյուղի հիմնադիրն է եղել): Հիմնադրվել է XI դարում: Ունի գեղատեսիլ, անտառածածկ դիրք:

1930 թ. կազմակերպվել է կոլտնտեսություն, որը 1950 թ. միավորվել է Առաջաձորի հետ, որից հետո բնակիչները տեղափոխվել են Առաջաձոր և Հայադում այժմ ոչ ոք չի բնակվում: Այս գյուղում է ծնվել անասնաբուժ. անասնաբուծ. գիտ. դոկտ., պրոֆ. Արմեն Աղաբաբյանը: Գյուղի շրջակայքում հայտնի են Անապատի վանքային համալիրը, Անահիտ աղբյուրը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 78 մարդ, զոհվել է 33-ը:

*

* *

Բացի նշված հայաբնակ բնակավայրերից, Մարտակերտի շրջանում կան նաև մի քանի գյուղեր, որոնք բնակեցված են ադրբեջանցիներով կամ ունեն խառը բնակչություն: Դրանք են.

Դամիրլու — գտնվում է Մարտակերտից 7 կմ դեպի հարավ-արևմուտք: 1952 թ. այս գյուղի տնտեսությունը միավորվել է Ն. Հոռաթաղի տնտեսությանը: 1987 թ. այստեղ կար 52 տուն, 198 բնակիչ:

Մանիքլու — Գտնվում է Մարտակերտից 20 կմ դեպի հարավ: 1977 թ. այս գյուղի տնտեսությունը միավորվել է Ջանյաթաղի պետական տնտեսությանը: 1987 թ. այստեղ կար 153 տուն, 654 բնակիչ:

Խաթուն-Բեյլու — Գտնվում է Մարտակերտից 21 կմ դեպի հարավ-արևմուտք: 1950 թ. այս գյուղի տնտեսությունը միավորվել է Ջանյաթաղի պետական տնտեսությանը:

1987 թ. այստեղ կար 45 տուն, 224 բնակիչ:

Բաշ-Գյունեփայա — Գտնվում է Մարտակերտից 30 կմ դեպի հարավ-արևմուտք: 1957 թ. այս գյուղի տնտեսությունը միավորվել է Չլդրանի պետական տնտեսությանը:

Օրթա-Փայա — Գտնվում է Մարտակերտից 26 կմ դեպի հարավ: 1957 թ. այս գյուղի տնտեսությունը միավորվել է Չլդրանի պետական տնտեսությանը:

1987 թ. այստեղ կար 35 տուն, 256 բնակիչ:

Սրխավենդ — Գտնվում է Մարտակերտից 30 կմ դեպի հարավ-արևմուտք: 1987 թ. այստեղ կար 225 տուն, 986 բնակիչ:

Նարեշտար — Գտնվում է Մարտակերտից 68 կմ դեպի հարավ-արևմուտք: 1977 թ. այս գյուղի տնտեսությունը միավորվել է Վանքի պետական տնտեսությանը, իսկ 1988 թ. առանձնացել է: 1987 թ. այստեղ կար 70 տուն, 382 բնակիչ:

9. ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆ

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Մարտունու շրջանը զբաղեցնում է մարզի տարածքի հարավ-արևելյան մասը: Մյուս չորս վարչական շրջանների համեմատությամբ այս շրջանը համեմատաբար հարթավայրային է:

Տարածքով (0,8 հազ. կմ^2) Մարտունու շրջանը զիջում է Մարտակերտի ու Ասկերանի շրջաններին, սակայն զգալի չափով գերազանցում Հադրութի և Շուշիի շրջաններին: Գրավում է պատմական Հայաստանի Արցախ նահանգի Վարանդա գավառի մի մասը, գավառ, որը ոչ միայն Արցախի, այլև առհասարակ հայ ժողովրդի պատմության, մշակույթի, տնտեսական կյանքի զարգացման, արտաքին թշնամիների դեմ պայքարի ասպարեզներում յուրահատուկ, կարևոր դեր է խաղացել:

Ինչպես նշվեց, մարզի մյուս շրջանների համեմատությամբ Մարտունու շրջանի տարածքի զգալի մասը հարթավայրային է և ծովի մակերևույթից ունի մինչև 400 մ բարձրություն: Շրջանի հարթավայրային մասում, հատկապես Մարտունի քաղաքի, Կուրապատկինոյի, Գևորգավանի, Աղբուռունի, Ալաբալու հատվածներում կլիմայական պայմանները չոր մերձարևադարձային են, մթնոլորտային տեղումներ շատ քիչ են լինում, ձյան կայուն շերտ համարյա չի լինում:

Շրջանի արևմտյան կեսը նախալեռնային մակերևույթ ունի, այստեղ կլիմայական պայմաններն առավել նպաստավոր են: Համեմատաբար բարձր են Ննգի, Կաղարծի, Աշան, Գյունե Ճարտար, Խերխան, Թաղավարդ գյուղերի մոտակայքով ձգվող լեռնաճյուղերի գագաթները, որոնք ծովի մակերևույթից ունեն 1200—1500 մ բարձրություն:

Մարտունու շրջանի տարածքով հոսող գետերից ջրառատը Վարանդան է՝ իր Ամարաս վտակով: Այն թափվում է Արաքս գետը: Մյուս գետերից համեմատաբար նշանավորը Խոնաշենն է, որը, սկիզբ առնելով Բովուրխանի լեռնալանջերից, անցնում է Մարտունի քաղաքով ու կորչում Արցախի հարթավայրում:

Ի տարբերություն անտառազուրկ, խիստ սակավաջուր, չոր կլիմայով արևելյան մասի, շրջանի արևմտյան նախալեռնային ու լեռնային հատվածը գեղատեսիլ է, հարուստ պտղատու ծառատեսակներով, անտառներով, զուլալ գետակներով ու սառնորակ աղբյուրներով: Այս տեսակետից հատկապես անզուգական են Թաղավարդ, Ջարդանաշեն, Սխտորաշեն, Ղավախան, Ննգի գյուղերին հարակից վայրերը: Արցախի ու մասնավորապես Մարտունու շրջանի բնության հրաշալիքների մասին խոսելիս անհնար է չնշել Սխտորաշենի գյուղի մոտ գտնվող հանրահայտ սոսենու (ղարաբաղցիներն անվանում են «տնջրե») մասին: Դա, հիրավի, բնական մի եզակի հրաշալիք է և մասնագետ-



Ամարասի վանքը (IV դ.)

ների գնահատմամբ՝ ԽՍՀՄ տարածքում գտնվող ամենատարեց ծառը (տարիքը՝ 2010 տարեկան): Անհիշելի ժամանակներում կայծակի հարվածից սոսու բունը ճեղքվել է, ու առաջացել է 44 քառ. մետր մակերեսով փչակ, որտեղ կարող են տեղավորվել շուրջ 100 մարդ: Հիմքում ծառի բնի շրջագիծը ավելի քան 27 մետր է, բարձրությունը՝ 54 մետր:

Մարտունու շրջանի ընդերքը հարուստ է կրաքարի, բազալտի, մարմարի, գրանիտի, կավի պաշարներով: Մարմարի պաշարներով հարուստ է, օրինակ, Նորշենը, գրանիտի պաշարներով՝ Ննգին, կավի պաշարներով՝ Ննգին ու Ղավախանը:

Արևմտյան մասում շրջանը սահմանակից է Լեռնային Ղարաբաղի Ասկերանի շրջանին, հարավային մասում՝ Հադրութի շրջանին, արևելյան ու հարավ-արևելյան մասում՝ Ադրբ. ԽՍՀ Ֆիզուլու, իսկ հյուսիսային մասում՝ Աղդամի շրջաններին:

Շրջանի տարածքում պահպանվել են հայկական պատմաճարտարապետական 353 հուշարձան, որոնցից առավել հնագույնը *Ամարասի* վանքն է: Այն

Ամարասի վանքը (IV դ.)

գտնվում է Մարտունի քաղաքից ավելի քան 20 կմ դեպի հարավ-արևմուտք, Մաճկալաշեն գյուղի մոտ, Ամարաս գետի ձախ ափին: Ամարասի վանքը Էջմիածնի վանքի հասակակիցն է, կառուցվել է 4-րդ դարում, Գրիգոր Լուսավորչի, այնուհետև նրա թոռ Գրիգորիս եպիսկոպոսի կողմից: Վերջինս թաղված է Ամարասում: Վանքը եղել է ոչ միայն Արցախի կրոնական խոշոր կենտրոնը, այլև մշակութային, պաշտպանական, տնտեսական հզոր պատվար: Մեսրոպ Մաշտոցը հայոց գրերի տարածումն Արցախում սկսել է Ամարասից, որտեղ նա բացել է Հայաստանի այս ընդարձակ նահանգի առաջին դպրոցը:

Շրջանի պատմաճարտարապետական մյուս հուշարձաններից նշանավոր են՝ Ճարտար գյուղի Եղիշեի, Հերհեր գյուղի Ս. Գրիգորիս, Մավաս գյուղի վանքերը, Բերդաշենի (Ղզղալա) ամրոցները, Մեծ Նահատակ, Ս. Աստվածածին եկեղեցիները, Հացի գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին ու դպրոցի հին շենքը, Թաղավարդ գյուղի անտառածածկ սարի վրա գտնվող Ղևոնդանց անապատի հուշարձանները, Կաղարծի գյուղի Թարգմանչաց եկեղեցին ու այլ հնություններ:

Վերջին տվյալներով (1987) Մարտունու շրջանի բնակչությունը կազմում է 25,4 հազ. մարդ, որի շուրջ 90 %-ը հայեր են: Վարչական կենտրոնը Մարտունի քաղաքն է, որն ունի 6,5 հազ. բնակիչ: Մինչև 1925 թ. կոչվում էր Խոնաշեն:

Շրջանում կա 40 բնակավայր, որից 36-ը՝ հայկական են: Գյուղերից առավել խոշորներն են Ճարտարը, Բերդաշենը, Գիշին, Սոսը, Թաղավարդը, Մաճկալաշենը, Խնուշինակը:

Շրջանը տվել է հայ ականավոր բազմաթիվ հեղափոխական, պետական, ռազմական գործիչներ, գիտնականներ: Դրանց թիվը շատ է: Սակայն չենք կարող այստեղ չհիշատակել Լենինի հավատարիմ զինակից, բոցաշունչ հեղափոխական Բոգդան Կնունյանցի, նրա եղբոր՝ Լյուդվիգ Կնունյանցի, քրոջ՝ Փառանձեմ Կնունյանցի մասին, որոնք նույնպես հանրահայտ հեղափոխականներ էին: Նշենք նաև Բոգդանի եղբոր որդու՝ Իվան Կնունյանցի մասին, որը ականավոր գիտնական է: Կնունյանցները Մարտունու շրջանի Ննգի գյուղից են: Այստեղ բացված է Բոգդան Կնունյանցի տուն-թանգարանը:

Մարտունու շրջանի Խերխան գյուղից է քաղաքացիական պատերազմի լեգենդար հերոս Հակոբ Մելքումյանը (Մելքումով), որի հրամանատարությամբ գործող զորքերը, ինչպես արդեն նշել ենք, Միջին Ասիայում գլխովին ջախջախել են հայ ժողովրդի դահիճ Էնվեր փաշայի մեծաքանակ հրոսակախմբերին և որի ջանքերով Միջին Ասիայում շանսատակ է արվել այդ արնախում դահիճը:

Աշան գյուղում է ծնվել հանրահայտ հեղափոխական, կուսակցական գործիչ ԵՒառն Միրզոյանը, որն աշխատել է Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի ու Ղազախստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոններում և որը զոհ է դարձել ստալինյան կամայականություններին:

Շրջանի հողային ֆոնդը կազմում է ավելի քան 80 հազ. հա, որից վարելահողերը՝ 23 հազ. հա, այգիները՝ 5,5 հազ. հա, արոտավայրերը՝ 25 հազ. հա: Մարտունու շրջանը Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի գյուղատնտեսության զարգացման համար առավել նպաստավոր պայմաններ ունեցող շրջաններից է: Ունի բազմաճյուղ գյուղատնտեսություն՝ հացահատիկի մշակություն, այգեգործություն և պտղաբուծություն, անասնապահություն՝ իր բոլոր ենթաճյուղերով: Խաղողի, հացահատիկի բերքատվությամբ, կովերի կաթնատվությամբ այս շրջանը մարզում միշտ առաջատար տեղ է զբաղեցրել: Միայն Ճարտար գյուղի «Կոմունիզմ» կոլտնտեսությունը վերջին տասը տարիներին միջին հաշվով տարեկան 15—20 հազ. տոննա խաղող է արտադրել: Խաղողագործությամբ հանրահայտ են նաև № 1 պետական տնտեսությունը, Գիշի, Բերդաշեն գյուղերը:

Արդյունաբերական արտադրությունը շատ աննշան տեղ ունի շրջանի

էկոնոմիկայում: Բաղիրով-ալին-կևորկով կամայականության ամբողջ ժամանակաշրջանում ինչպես ամբողջ մարզը, Մարտունու շրջանը նույնպես վեր էր ածվել գյուղատնտեսական հումք մատակարարող շրջանի: Արտադրված ամբողջ հումքը կամ կիսաֆաբիկատը հանձնվում էր Ադրբեջանում գտնվող ձեռնարկություններին: Այս շրջանը մասնավորապես հացահատիկի, խաղողի, մրգի, բոժոժի, բրդի, մսի, կաթի արտադրությամբ Ադրբեջանի ձեռնարկությունների խոշոր մատակարարն էր: Տեղում այդ ամենի վերամշակման ոչ մի ձեռնարկություն չի ստեղծվել: Միայն Մարտունիում և Ճարտարում կան խաղողի նախնական մշակման փոքր ձեռնարկություններ, որոնց կիսաֆաբրիկատը նույնպես մատակարարվում էր Ադրբեջանին: Մինչդեռ շրջանի գյուղատնտեսական արտադրությունը լայն հնարավորություններ է տալիս տեղում կազմակերպելու գինու, կոնյակի բարձրորակ սպիրտի, օղու, պահածոների, հյութերի խոշոր արտադրություն:

Լեռնային Ղարաբաղի, այդ թվում նաև Մարտունու շրջանի սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթ պրոբլեմների շարքում, գյուղատնտեսական հումքի վերամշակման ձեռնարկությունների, ճշգրիտ մեքենաշինության մասնաճյուղերի ստեղծման հետ միասին, պետք է ամենալուրջ ուշադրություն դարձնել թթի այգիների խնամքի վերականգնման գործին:

Ինչպես մարզի մյուս շրջաններում, Մարտունու շրջանի գյուղերի սոցիալ-տնտեսական պրոբլեմներն էլ տասնամյակներ շարունակ բարձիթողի վիճակում են եղել: Այդ պատճառով գյուղերի մեծ մասը երիտասարդներից դատարկվել է: Գյուղի զգալի մասը չունի կենցաղսպասարկման տարրական պայմաններ.գրադարանները, ակումբները հին ու անբարեկարգ շենքերում են և նորմալ չեն գործում: Նույնիսկ Ճարտարի մշակույթի տուֆակերտ հոյակապ պալատն անգործության էր մատնված, քանի որ հայկական կյանքը մարզում տասնամյակներ շարունակ մեռցվել էր:

Մարտունի

Համանուն շրջանի վարչական կենտրոնն է 1924 թվականից (մինչ այդ շրջկենտրոնը Ճարտար գյուղն էր): Մինչև 19-րդ դարի սկիզբը այս բնակավայրը կոչվել է Խոնաշեն, որից հետո վերանվանվել և կոչվել է Նիկոլաևկա, կարճ ժամանակ հետո նորից է վերանվանվել Խոնաշեն, իսկ 1925 թվականից, Ալեքսանդր Մյասնիկյանի ողբերգական մահից հետո (որի հեղափոխական ծածկանունը Մարտունի էր), նրա հիշատակը հավերժացնելու նպատակով այն կոչվում է Մարտունի: Մինչև 1985 թվականը քաղաքատիպ ավան էր, այնուհետև քաղաք է դարձել: Հեռավորությունը Ստեփանակերտից 60 կմ է:

«Մայաթ-Նովա» կինոթատրոնի շենքը Մարտունի քաղաքում

Ստեփանակերտի հետ կապված է երկու ճանապարհով՝ Մարտունի-Աղդամ-Ստեփանակերտ (որը համեմատաբար բարեկարգ է) և Մարտունի-Ննգի-Ստեփանակերտ: Վերջինս չնայած բարեկարգ չէ, սակայն ամբողջապես անցնում է մարզի տարածքով և գեղատեսիլ է:

Մարտունին գտնվում է շրջանի արևելյան հարթավայրային մասում, Խոնաշեն սակավաջուր գետի ափին: Կլիմայական պայմանները չորային են: Ամառը տոթ է, երկարատև, ձմեռը համեմատաբար մեղմ է: Տարվա հաճելի եղանակներն այստեղ գարունն ու աշունն են: Մթնոլորտային տեղումները շատ սակավ են տարեկան 350—400 մմ, ձյան ծածկոց հազվադեպ է լինում: Շրջապատը անտառազուրկ է, խոտային բուսականությունը տիպիկ կիսաանապատային է: Բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է 300 մետր:

Մարտունին ջրասակավ բնակավայր է, խմելու և կենցաղային նպատակով օգտագործվող ջուրը բերվում է խողովակաշարով, 10—15 կմ հեռավորության վրա գտնվող սարալանջային աղբյուրներից: Այստեղ գերակշռում են երկհարկանի, բարեկարգ տները, որոնք բոլորն էլ ունեն կից պտղատու այգիներ: 1960-ական թվականներից քաղաքի կենտրոնական մասում կառուցվում են 4—5 հարկանի պետական բնակելի շենքեր: Էլեկտրիֆիկացվել է 1958 թվականին: 1987 թվականից սկսել է գազիֆիկացվել:

Մարտունու բնակչությունը 1987 թ. հունվարի 1-ի տվյալներով կազմել է 6,5 հազ. մարդ: Հայերից բացի, որոնք կազմում են բացարձակ գերակշռող մասը, այստեղ կան նաև ռուսներ, քիչ թվով ադրբեջանցիներ: Արդյունաբերական ձեռնարկություններից կան կաթի-յուղի, հացի գործարաններ, սղոցարան, էլեկտրաղաց, բոժոժի նախնական մշակման, ծխախոտի ֆերմենտացիայի կետեր:

Ունի մշակույթի գեղատեսիլ պալատ (հայկական վարդագույն տուֆից կառուցված), ակումբ, կինոթատրոն, հիվանդանոց, կենցաղի տուն իր բաժանմունքներով, հանրախանութ: Կա երեք դպրոց, երկուսը՝ միջնակարգ, մեկը՝ ութամյա: Դպրոցում սովորող հայ երեխաների թիվը 1986 թ. եղել է 832: Միջնակարգ դպրոցները հիմնադրվել են 1924 և 1927 թվականներին, իսկ ութամյան՝ 1961 թվականին:

Մարտունու կոլտնտեսությունը մասնագիտացված է հիմնականում խաղողագործության և անասնապահության ուղղությամբ:

Քաղաքի կենտրոնական մասի փողոցներն ուղիղ և ասֆալտապատ են:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 216 մարդ, որից 80-ը զոհվել է: Սակայն մինչև այժմ դրանց հիշատակին հուշարձան չի կանգնեցվել:

Ճարտար

Ոչ միայն Մարտունու շրջանի, այլև ամբողջ Լեռնային Ղարաբաղի ամենախոշոր գյուղն է: Անվանումն առաջացել է բնակիչների հմտության, ձեռներեցության, ճարտարախոսության առանձնահատկություններից: Ճարտար գյուղը գտնվում է Մարտունու շրջանի արևմտյան, նախալեռնային հատվածում: Հեռավորությունը Մարտունուց 16 կմ է, Ստեփանակերտից՝ 78 կմ: Երեք կողմից շրջափակված է համեմատաբար բարձր լեռնապարով (Եղիշեի սարով, Բերդասարով, Կարմիր քար և Ղլեն խութ սարերով): Միայն հարավային մասով հարմար ելք ունի դեպի բաց հարթավայր: Գյուղի շրջակայքում բարձրադիր կետերը Եղիշեի, Կարմիր քար սարերն ու Ալանբոթ լեռն է: Առաջինն ու երրորդը խոտածածկ բարձրունքներ են, երկրորդը լերկ ու կարմիր քարածայռ է: Դրանց բարձրությունը 1100—1300 մ է:

Պատմական փաստերը ցույց են տալիս, որ գյուղը գոյություն է ունեցել դեռևս 4-րդ դարում: Շինարարական աշխատանքների ժամանակ այստեղ հայտնաբերվել է այդ դարին պատկանող և շատ լավ պահպանված խոյակ:

Ներկայիս Ճարտար գյուղը բաղկացած է չորս խոշոր թաղամասերից, որոնցից յուրաքանչյուրը փաստորեն առանձին գյուղ է: Մինչև 19-րդ դարի



Տեսարան Ճարտար գյուղից

վերջը գյուղը բաղկացած էր ձորակով հոսող գետով բաժանված երկու թաղամասից, որոնցից մեկը կոչվում էր Գյունե (հարավահայաց) Ճարտար, մյուսը՝ Ղուզե (հյուսիսահայաց) Ճարտար: Հիրավի, Գյունե Ճարտարը տեղադրված է աղեղնաձև լեռնապարի հարավահայաց, լերկ ու քարքարոտ լանջին, իսկ Ղուզե Ճարտարը՝ նույն լեռնապարի շարունակության հյուսիսահայաց և անտառածածկ լանջին, իրար դիմաց: Պատմական վաղ ժամանակաշրջանում այս երկու գյուղերի բնակիչները երկար ժամանակ բնակվել են այդ լեռնապարի բարձրադիր մասերում, որտեղ բնակավայրերի հետքերը մինչև այժմ էլ պահպանվում են: Մասնավորապես, Գյունե Ճարտարի նախնական բնակատեղին եղել է Կարմիր քարի կամ Քմալա խութի և Ղլեն խութի միջև գտնվող բարձրադիր սարահարթը, որը երեք կողմից շրջապատված է զառիթափ լանջերով, իսկ հյուսիսային կողմը պարսպապատ է եղել (այժմ էլ այդ պարիսպը պահպանվում է): Իսկ Ղուզե Ճարտարի նախնական բնակատեղին Եղիշեի սարի վրա գտնվող համանուն վանքի մոտ է եղել (որը մինչև այժմ էլ կոչվում է Շինատեղ): Երկու գյուղերի վաղնջական տեղերն էլ անմատչելի են եղել: Հետագայում դրանց բնակիչներն իջել և բնակավայրեր են հիմնել համեմատաբար մատչելի, լեռնալանջային հարավահայաց և հյուսիսահայաց մասերում: Ըստ որում, երկու գյուղերի հացահատիկային կուլտուրաների համար մշակվող հողահանդակներն էլ գտնվում էին ցածրադիր, հարթավայրային մասերում, բնակատեղերից զգալի հեռու, հետևաբար գնալ-գալը դժվարությունների հետ էր կապված:

Հետագայում 19-րդ դարի վերջերից սկսած երկու գյուղերի, ցածրադիր մասերում հողատարածություններ ունեցող բնակիչներն էլ՝ հացահատիկի համար մշակվող հողատարածություններին մոտ ստեղծում են իրենց կալերը: Ավելի ուշ այստեղ շատերը կառուցում են մշտական բնակության համար տներ: Այսպիսով, ժամանակի ընթացքում Գյունե և Ղուզե Ճարտարներից բացի, դրանցից համեմատաբար ցածրադիր մասերում (յուրաքանչյուրից համապատասխանաբար 2—4 կմ հեռավորության վրա) ստեղծվում են ևս երկու բնակավայրեր՝ Գյունե Կալեր և Ղուզե Կալեր անվանումներով:

Այսպիսով, Ճարտար գյուղը բաղկացած է Գյունե Ճարտար, Գյունե Կալեր և Ղուզե Ճարտար, Ղուզե Կալեր բնակավայրերից (կամ թաղամասերից):

Գյունե Ճարտարն ու Գյունե Կալերը, երկրորդի դեպի բարձրադիր վայրը ընդարձակվելու հետևանքով, համարյա միացած են իրար, իսկ Ղուզե Ճարտարի ու Ղուզե Կալերի միջև եղած տարածությունը անտառածածկ է, զգալի չափով կտրված միմյանցից:

Ընդհանուր առմամբ գյուղի կլիմայական պայմանները մեղմ են, սակայն ամառը շոգ է: Առավել շոգ է լինում Գյունե Ճարտարի, Գյունե Կալերի հատվածներում, որոնք արևահայաց են, ինչպես նաև Ղուզե Կալերում, որի դիրքը



Ճարտարի Նահատակ բերդասարը

համեմատաբար հարթ է: Իսկ Ղուզե Ճարտարը խիստ տարբերվում է մյուս երեք հատվածներից, քանի որ գտնվում է անտառածածկ սարի հյուսիսահայաց լանջին: Վերջինս մի տեսակ ամառանոցային վայրի դեր է խաղում ամբողջ Ճարտարի համար, ունի սառնորակ աղբյուրներ և ստվերախիտ այգիներ: Աղբյուրներից այստեղ նշանավոր են Մոտեճուրը, Խաչուն Ճուրը, Շրշռանը, Վետած աղբյուրը:

Գյունե Ճարտարի պայմանները, ինչպես նշվեց, չորային են, գյուղի այս մասը լերկ սարալանջ է: Սակայն կան սակավաջուր մի շարք աղբյուրներ, որոնցից են Նավերը (Նվերը), Խութին ճուրը, Երե ճուրը, Չաղալ աղբյուրը, Գովուն աղբյուրը, Ծարավաճուրը, Քմալ աղբյուրը, Ծլլոկը և այլն: Գյունե Ճարտարի աղբյուրներից մեկը շատ նշանավոր է, նրա հյուսիսային սարալանջի վրա եղած աղբյուրը, որը տեղացիներն անվանում են «Դուրդուրչակ», սրբություն է համարվում, իսկ նրա ջուրը՝ բուժիչ: Շատ վաղուց այդ աղբյուրի ջուրը, որը դուրս է գալիս քարաժայռից, օգտագործվում էր ալերգիկ ու կարմրուկ հիվանդությունների բուժման համար: Նույնիսկ հեռավոր վայրերից գալիս էին լվացվում այդ ջրով կամ շշերով իրենց հետ տանում այդպիսի հիվանդների համար: Որպես երախտագիտություն՝ այդ աղբյուրի մոտ, բուժիչ ջուր օգտագործելուց կամ շշերով այն վերցնելուց հետ, թողնում էին դրամ կամ այլ նվերներ: Իսկ աղբյուրի մոտ գտնվող սալորենի ծառը դիտվում էր որպես սուրբ ծառ, որի ճյուղերից յուրաքանչյուր այցելու կապում ու թողնում էր իր հագուստից պոկած կամ անձնական որևէ գործվածքակտոր, թաշկինակ և այլն: Մինչև այժմ էլ «Դուրդուրչակի» (սա «վավեչիչեք» բառի ձևափոխված տարբերակն է, որը նշանակում է ծաղիկ հիվանդություն) նկատմամբ հավատը պահպանվում է:

Մակար Բարխուդարյանցի 1895 թ. հրատարակած «Արցախ» գրքում նշվում է, որ Ղուզե Ճարտարի բնակչությունը բնիկ է, հողը՝ բերրի: Նշանավոր են ցորենն ու գարին, գերազանց են օդը, կլիման և ջուրը: Կյանքի տևողությունը՝ 110 տարի: Գյունե Ճարտարի մասին նշում է, որ բնակչությունը բնիկ է, հողն՝ անջրդի, նշանավոր է այգիներով, գովելի թթենիներով, հռչակված է ցորենով, գերազանց են օդը, կլիման, ջուրը:

Ճարտարի պատմական հուշարձաններից առավել հանրահայտը Եղիշեի վանքն է, պատմական աղբյուրներում այն կոչվում է «Եղիշե կուսի անապատ», իսկ ճարտարցիները անվանում են Ղշա վանք: Վանքը գտնվում է Ղուզե Ճարտարի թիկունքում գտնվող սարի (Եղիշեի սարի) գագաթին, որտեղից բացվում է մի գեղեցիկ տեսարան դեպի շրջակա գյուղերն ու Արաքս գետը:

Քարակերտ այս վանքը հիմնականում լավ է պահպանվել: Ինչպես ցույց են տալիս վիմափոր արձանագրությունները, հիմնադրվել է 12-րդ դարում: Հետագայում բարբարոս ցեղերի հարձակումների ժամանակ ավերվել է, իսկ

Թթի այգի Ճարտար գյուղում

այժմյան տեսքով այն վերականգնվել է 1655 թվականին: Վանքի շրջակայքի հնադարյան ծառերով պատած տարածությունը զբաղեցնում է Ղուզե Ճարտարի գերեզմանոցը: Անզուգական դիրք ու լայն ճանաչում ունեցող եղիշեի վանքը հատուկ ծառայող և խնամող չունի, բայց մոտակա ու հեռու բնակավայրերից այստեղ այցելուների թիվը մեծ է: Հայ ճարտարապետական այս մեծ հետաքրքրություն ներկայացնող կոթողը զգալի չափով տուժել է տեղումներից, այն շատ երկար ժամանակ չի վերանորոգվել: Քայքայվում է նրա թաղակապ կտուրը:

Ճարտարի հին հուշարձաններից համեմատաբար լավ է պահպանվել նաև Գյունե Ճարտարի «Ամենափրկիչ» եկեղեցին, որը կառուցել է վարպետ Հարությունը 1787 թ.: Ղուզե Ճարտարի Սուրբ Գևորգ եկեղեցին խարխուլ վիճակում է, նրա հիմնական ճակատային քարերը չեն պահպանվել և կառուցման տարին դժվար է որոշել:

Գյունե և Ղուզե Ճարտարների միջև կողք-կողքի վեր են խոյանում Սպիտակ և Սև բերդասարերը, որոնք հրաբխային դայկաներ են, ամբողջապես լերկ բազալտե ապարներից: Դրանք բնական հետաքրքիր հուշարձաններ են, որոնցից մեկի՝ Սպիտակ բերդասարի վրա մինչև այժմ էլ պահպանվում են քար ու կրից կառուցված մատուռի հիմնապատերը և փլված պատերի քա-



Ճարտար գյուղի մշակույթի պալատը (կառուցված Արթիկի տուֆից)

րերը: Ժողովուրդն այն անվանում է Բերդի նահատակ և սրբությամբ է վերաբերվում դրան:

Գյունե Ճարտարի հանդամասի ցածրադիր վայրերից մեկի բլրի վրա կա մեկ այլ ուխտատեղի, որը կոչվում է «Կոհակ ուխտատեղի»: Այստեղ պահպանվում են մատուռի մնացորդները, որոնք այժմ ծածկված են ճապկի ծառի թփերով:

Պատմական հետաքրքրություն ներկայացնող մյուս օբյեկտները Եղիշեի վանքի մոտ գտնվող «Շինատեղ» բնակատեղին է, որտեղ մինչև այժմ պահպանվում է աղբյուրը և Գյունե Ճարտարի բարձունքի վրա գտնվող Կարմիր քարի կամ «Քմալա խութի» ու «Ղլեն խութի» բնակատեղիները:

19-րդ դարի 90-ական թվականների սկզբներին Գյունե Ճարտարի ծխերի թիվը եղել է 260, 1950 բնակչով: Համեմատության համար նշենք, որ այժմյան միացյալ Ճարտարի Գյունե Ճարտար մասում կա ընդամենը 92 տուն՝ 348 բնակիչ: Ղուզե Ճարտարի ծխերի թիվը 19-րդ դարի վերջերին եղել է 145, բնակչության թիվը՝ 1045: Այժմ Ճարտարի այս հատվածում կա ընդամենը 23 տուն, 76 բնակիչ: Միացյալ Ճարտարի չորս մասերում կա 1048 տուն, ընդհանուր բնակչությունը կազմում է 3895 մարդ: Տների քանակով և բնակչությամբ խոշորը Գյունե Կալերն է (1851 բնակիչ), Ղուզե Կալերի բնակչությունը 1620 մարդ է:

Մինչև 1948 թ. Գյունե և Ղուզե Ճարտարները առանձին կոլտնտեսություններ էին: 1948 թվականից միավորվել են:

1989 թ. սկզբին դրանք բաժանվել են և նորից ստեղծվել է երկու առանձին կոլտնտեսություն:

Ճարտարում կոլտնտեսություն կազմակերպվել է 1931 թ.: Սկսած 1945 թվականից, երբ սկզբում Գյունե Ճարտարի, այնուհետև (1948 թ.) ամբողջ Ճարտարի կոլտնտեսության վարչության նախագահ է նշանակվում տեղի դպրոցի երիտասարդ դիրեկտոր Սուրեն Ադամյանը, գյուղի փառքն արագորեն մեծանում ու լայն ճանաչում է ստանում:

Ճարտարում ինտենսիվորեն զարգանում են հացահատիկային տնտեսությունը, այգեգործությունը և անասնապահությունը:

Հացահատիկային ցանքատարածությունները տարածված են գյուղի հարթավայրային հողատարածություններում՝ Աղբուռուն, Քավթառլու, Ալաբալի կոչվող տարածություններում: Գերազանցապես աճեցվում են աշնանացան ցորեն և գարի: Ցորենի բերքատվությունը մեկ հա-ից 30—35 ց է: Խաղողագործությունը նախկինում տարածված էր գյուղին հարակից նախալեռնային վայրերում, հետագայում ինդուստրիալ մեթոդներով այգիներ են հիմնվել նաև հարթավայրային (Ալաբալի, Կլազին ձոր) մասերուս, որտեղ մեկ հա-ից ստացվում է մինչև 300—350 ց խաղող: 1950-ական թվականներից սկսած զգալիորեն ընդլայնվել են նաև պտղատու (խնձոր, տանձ, դեղձ, նուռ) այգիները: Գյուղի շրջակայքում, հիմնականում նախալեռնային թեքությունների վրա դեռ շատ հնուց հիմնվել են թթի այգիներ:

Ճարտարի կոլտնտեսության հացահատիկի ցանքատարածությունները 1988 թ. կազմել են 1360 հա, պտղատու այգիներինը՝ 400 հա, խաղողի այգիներինը՝ 700 հա: Հողային ֆոնդը կազմում է 11,1 հազ. հա, վարելահողերը՝ 2,9 հազ. հա:

Անասնապահության ճյուղերից զարգացած է կաթնային անասնապահությունը, խոզաբուծությունը, ոչխարաբուծությունը, թռչնաբուծությունը և շերամապահությունը: Գյուղը հայտնի է ժամանակակից բարեկարգ, մեքենայացված կաթնային անասնապահական և խոզաբուծական համալիրներով: Մեկ կովի միջին կաթնատվությունը տարեկան կազմում է 2780—2970 կգ: Կոլտնտեսության նախկին նախագահ Սուրեն Ադամյանի ղեկավարության տարիներին տնտեսությունը բազմիցս նվաճել է ԽՄԿԿ Կենտկոմի ու ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի մրցանակները, արժանացել շքանշանների: Կան անասնապահներ, որոնք մեկ կովի կաթնատվությունը հասցրել են ավելի քան 4000 կգ-ի: Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 1989 թ. սկզբին

Վարչական շենք Ճարտար գյուղում (կառուցված Արթիկի տուֆից)

կազմել է 1634 գլուխ, մանր եղջերավորներինը՝ 7800 գլուխ, թռչուններինը՝ շուրջ 20 հազ. թև:

Ճարտարում (Գյուղնե Ճարտար) մեկդասյան դպրոց գործել է 19-րդ դարի 70-ական թվականներից: 1884 թ. այդտեղի դպրոցում եղել է 66 աշակերտ և մեկ ուսուցիչ: 1890-ական թվականների սկզբներին այդ դպրոցում սովորել է 50 աշակերտ: Ինչպես նշում է Մ. Բարխուդարյանցը, 50 աշակերտից 38-ը ուսման վարձ էին վճարում, իսկ մնացածները սովորում էին առանց վարձի: 1908 թ. այն երկսեռ դպրոց էր և ուներ 80 աշակերտ (որից՝ 12 աղջիկ): Այժմ Ճարտարում գործում են երկու միջնակարգ և երկու ութնամյա դպրոցներ: Աշակերտների թիվը հասնում է 850-ի:

Գյուղնե Ճարտարի միջնակարգ դպրոցում աշակերտների թիվը հասնում է մոտ 300-ի, Ղուզե Կալերի միջնակարգ դպրոցում՝ 289-ի: Մնացածները սովորում են երկու ութնամյա դպրոցներում: Ուսուցիչների թիվը հասնում է 100-ի: Գյուղում գործում է վարդագույն տուֆից կառուցված հիասքանչ մշակույթի պալատը: Գործում են նաև երեք ակումբ, հինգ գրադարան, հյուրանոց, պատերազմում զոհվածների հուշարձան-թանգարան, կենցաղ-սպասարկման տարբեր օբյեկտներ՝ վարսավիրանոցներ, կարի արհեստանոց, կոշկակարանոց, բաղնիք, կապի բաժանմունք, խնայդրամարկղ, ճաշարան: Ճարտարը էլեկտրիֆիկացվել է 1959 թվականին: Ունի էլեկտրաղաց: Արտադրական ձեռնարկություններից են Ստեփանակերտի մետաքսի կոմբինատի մասնաճյուղը, գինու գործարանը, մետաղյա իրերի պատրաստման արհեստանոցը:

Գյուղի տները բարեկարգ են, երկհարկանի ու քարակերտ: Ճարտարցիները հայտնի են աշխատասիրությամբ, համառությամբ, ուղղամտությամբ, սրամտությամբ:

Գյուղը տվել է սոցիալիստական աշխատանքի հինգ հերոս՝ Սուրեն Ադամյան, Թևոս Սարգսյան, Ղուկաս Ավանեսյան, Մադաթ Առուստամյան, Դանիել Բաղդասարյան: Այստեղ է ծնվել կուսակցական, պետական գործիչ Եղիշե Ասծատրյանը: Ճարտարից է ՀԽՍՀ Սոցիալական ապահովության մինիստր Նաիրա Բալայանը: Այստեղ են ծնվել ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ Արտյոմ Սարգսյանը, բժշկական գիտ. դոկտ., պրոֆեսոր Երվանդ Հակոբյանը, ֆիզ. մաթ. գիտ. դոկտ., պրոֆեսոր Ֆոմբերգ Բախշյանը, քիմ. գիտ. դոկտ., պրոֆեսոր Շուրա Գևորգյանը, կենս. գիտ. դոկտոր Սենրիկ Հայրապետյանը և սույն գրքի հեղինակը: Գյուղը տվել է նաև տարբեր բնագավառների գիտության բազմաթիվ թեկնածուներ, դոցենտներ:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 1000 ճարտարցի, որոնցից 500-ը զոհվել է: Նրանց հիշատակին գյուղի հյուսիս-արևմտյան անտառոտ լանջին կառուցված է հուշարձան-թանգարան: Զոհված բոլոր ճարտարցիների անունները փորագրված են թանգարանի ներսի տուֆակերտ պատին:



Հայրենական մեծ պատերազմում զոհված ճարտարցիների տուֆակերտ հուշարձանը

Գյուղից դուրս մեծ թվով ճարտարցիներ են ապրում Երևանում (շուրջ 450 ընտանիք), Գրոզնիում (շուրջ 350 ընտանիք), Ստեփանակերտում, Մարտունիում, Միջին Ասիայի շատ քաղաքներում և այլուր: Ճարտարը ամբողջապես հայաբնակ է:

Բերդաշեն (Ղզղալա)

Կոչվում էր նաև «Կարաքենդ», բոլորն էլ նույն ծագումն ունեն, առաջացել են «ղալա» կամ «կալա» բառից, որը նշանակում է բերդ: «Ղզղալա» կամ «Կըզղալա» նշանակում է «Աղջկաբերդ»: Իսկ «Կարաքենդը» «Կալաքենդի» ձևափոխված տարբերակն է, որը նշանակում է «Բերդաշեն»:

Գյուղից երեք կիլոմետր հեռավորության վրա, հյուսիսային մասում է գտնվում այն բարձրադիր սարը (լերկ ժայռազանգվածը), որը տեղացիները մինչև այժմ էլ անվանում են բերդ, կուսաբերդ, աղջկաբերդ, և որի հետ է կապված գյուղի այժմյան անվանումը: Ղզղալայի կամ Աղջկաբերդի առաջացման վերաբերյալ ժողովուրդը պահպանում է մի ավանդություն: Անհիշելի ժամանակներում այստեղ ապրում էր իր հայրենի լեռների պես հպարտ, Ղարաբաղի կուսական անտառների եղնիկի պես չքնաղ, բայց նաև քաջ ու համարձակ մի աղջիկ: Նա սիրում էր իր հայրենակից քաջ կտրիճներից մեկին, որը նույնպես անսահման նվիրված էր աղջկան: Սակայն թշնամու դեմ մղված մարտում զոհվում է աղջկա սիրած երիտասարդը: Աղջիկը երկար սգում, ողբում է այդ կորուստը և երդվում՝ սրբորեն պահել սիրած տղայի նկատմամբ ունեցած սերը: Երդվում է ու մնում իր երդմանը հավատարիմ: Անցնում են տարիներ: Աղջկա գեղեցկության համբավը տարածվում է ամենուրեք: Բազմաթիվ երիտասարդ իշխաններ, կտրիճներ են գալիս ու խնդրում նրա ձեռքը: Սակայն ոչ հարստությունը, ոչ պերճաշուք դղյակները և ոչ էլ սպառնալիքները չեն կոտրում նրա կամքը:

Եվ ահա նրա օտար երկրպագուներից մեկը որոշում է զորքով, ուժով, տիրանալ նրան: Աղջիկը բարձրանում է բերդի գագաթը, այնտեղ դղյակ կառուցում և պատսպարվում: Հայ կտրիճները պաշտպանում են քաջ աղջկան: Սակայն թշնամին նոր ու մեծ ուժով է պաշարում բերդը, զրկում ջրից, հույս ունենալով, որ ծարավից կհանձնվի: Սակայն մոտակա ձորի աղբյուրից հայրենակիցները ջուր են հասցնում նրան: Թշնամին համառում և գրավում է բերդը, ավերում դղյակը, որ տիրի նրան: Քաջարի գեղեցկուհին, հավատարիմ մնալով իր երդմանը, ժայռի կատարից եղնիկի պես ցատկում է դեպի անդունդախոր ձորը: Ասում են, որ այդ բերդասարի ստորոտում մինչև այժմ էլ բխող զուլալ աղբյուրը ժայթքել է Աղջկա ընկած տեղում: Ահա այդ ժամանակ-

վանից նշված ժայռասարը կոչվում է «Աղջկաբերդ» կամ «Կըզկալա», «Ղըզղալա»: Այդ բերդ կոչվող սարի գագաթին, հարթության վրա պահպանվում են հնում այդտեղ կառուցված ամրոցի շինությունների, պարսպի, ջրավազանների հետքերը: Կատարված ուսումնասիրությունների շնորհիվ, այստեղ հայտնաբերվել են տարբեր տեսակի աշխատանքային գործիքներ, զենքի տեսակներ, կենցաղային իրեր, դրամատեսակներ, զարդաքանդակներ, խաչքարեր, որոնք ապացուցում են, որ այն երկար ժամանակ եղել է հայկական ամրակուռ բերդավան:

Գյուղի մոտակայքում, շրջակա լեռների վրա պահպանվում են հայկական հնագույն հուշարձաններ, եկեղեցիներ, սրբավայրեր: Դրանցից են Ս. Աստվածածին եկեղեցին, Մեծ Նահատակ, Փոքր Նահատակ, Սօրփ և այլ հուշարձաններ: Գյուղի դիրքը ամրակուռ է, այն տեղադրված է բարձրադիր լեռնապարով շրջապատված գոգավորության արևելահայաց լանջին և միայն հարավային մասով ելք ունի դեպի Ղարաբաղի հարթավայրը: Հեռավորությունը կենտրոնից՝ Մարտունուց 22 կմ է, իսկ Ստեփանակերտից՝ 52 կմ:

Քանի որ շրջապատված է լեռներով, գյուղի կլիմայական պայմանները մեղմ են, մերձարևադարձային: Հողերը անջրդի են, սակայն բերքառատ: Լավ աճում է խաղողը, դեղձը, նուռը, թութը, թուզը: Գյուղը գեղատեսիլ դիրք ունի, օդը մաքուր է, ջուրը՝ սառնորակ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թվականին: Տնտեսության գլխավոր ճյուղերը հացահատիկային կուլտուրաների մշակությունը, այգեգործությունը (հատկապես խաղողագործությունը) և անասնապահությունն է: Շըրջանում և մարզում առավել հայտնի է խաղողագործությամբ և անասնապահությամբ (կաթնային):

1890-ական թվականների սկզբին այստեղ եղել է 103 տուն, 808 բնակիչ: Այժմ գյուղում կա 462 ընտանիք, 1711 բնակիչ: Գյուղն ամբողջապես հայաբնակ է:

Գյուղում ծխական դպրոց հիմնվել է 1873 թ., որը հետագայում փակվել է: Նորից դպրոց է բացվել 1905 թ., որը 1908 թ. դարձել է մեկդասյան երկսեռ դպրոց, որտեղ սովորում էին 50 աշակերտ (այդ թվում 10 աղջիկ): Այժմյան դպրոցը միջնակարգ է, աշակերտների թիվը 200-ից անցնում է: Գործում են մշակույթի տուն, գրադարան, բուժկետ, կապի բաժանմունք, կենցաղսպասարկման օբյեկտներ: Արդյունաբերական ձեռնարկություն չկա: Էլեկտրիֆիկացվել է 1961 թվականին: Բոլոր տները բարեկարգ են, երկհարկանի: Գյուղը լավ ապահովված է խմելու ջրով: Գյուղամիջյան փողոցները, ինչպես նաև շրջկենտրոնի ու մարզկենտրոնի հետ կապող ճանապարհներն անբարեկարգ են: Գյուղի բնակիչներն աչքի են ընկնում աշխատասիրությամբ, սրամտությամբ և հյուրասիրությամբ: Բնակիչների կյանքի միջին տևողությու-



Աղջկաբերդը (Բերդաշեն գյուղի մոտ)

նը 70—75 տարի է: 1988 թ. այստեղ կազմակերպվել է գյուղի պատմության թանգարան:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 450 մարդ, որից 180-ը զոհվել է: Նրանց հիշատակին կանգնեցված է հուշարձան կոթող:

Գիշի

Տեղադրված է Ճարտարի հյուսիսային մասը երիզող լեռնապարի հակադիր թեք լանջին: Ինչպես Լեռնային Ղարաբաղի մյուս գյուղերը, Գիշին նույնպես թիկունքով հենված է երեք կողմից շրջափակված բարձրադիր լեռներին և միայն հարավային ուղղությամբ ելք ունի դեպի Խոնաշեն գետի հովիտը:

Գյուղի դիրքը գեղատեսիլ է: Դեռ շատ հնուց տները կառուցվել են գյուղը երիզող սարի հարավահայաց, քարքարոտ, ավազոտ լանջին, բերրի հողատարածությունները այգեգործության համար օգտագործելու նպատակով: Հարակից ու դիմացի լանջերը անտառածածկ են: Կլիմայական պայմանները մեղմ են, լավ աճում են խաղողը, թութը, խնձորը, տանձը, սալորը, մոշը: Որպես բնորոշ առանձնահատկություն, ամռան սկզբներին հաճախակի են կարկտահարությունն ու սելավները: Գյուղի շրջակայքում լայնորեն տարածված են թթի այգիները:

Հեռավորությունը շրջկենտրոնից 11 կմ է, մարզային կենտրոնից՝ 71 կմ: Գյուղում և նրա շրջակայքում կան պատմական նշանակություն ունեցող վայրեր, հուշարձաններ: Գիշի և Ճարտար գյուղերի միջև գտնվող բարձունքի վրա մինչև այժմ էլ պահպանվում են հին բնակատեղիների հետքեր, պարիսպների մնացորդներ: Դրանցից մեկի՝ Ղլեն խութ կոչվող բնակատեղի մասին արդեն նշվել է: Այստեղից հայտնաբերված կարասները, կճուճները, ափսեները, ուլունքներն ու շատ այլ իրեր պահվում են Գիշու դպրոցի թանգարանում: Պատմական այդ փաստերը և պահպանվող քարակիր ամրակուռ պարսպի մնացորդները ապացուցում են, որ Ղլեն խութը երկար ժամանակ եղել է բնակավայր-ամրոց: Ի դեպ, այդպիսի հնավայրեր են նաև Բըբջամալը, Բագուն քարը, Կալին խութը: Գյուղի պատմական վայրերից է նաև Ոսկե խաչ սրբավայրը, նույնանուն աղբյուրի մոտ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1929 թվականին: Տնտեսության զարգացման հիմնական ուղղությունները հացահատիկային կուլտուրաների մշակությունն է, խաղողագործությունն ու անասնապահությունը: Այս երեք ճյուղերով էլ հայտնի է մարզում: Էլեկտրիֆիկացվել է 1960 թվականին: Գործում են մշակույթի տուն, գրադարան, կինոթատրոն, բուժկետ, կապի բաժանմունք, կենցաղսպասարկման արհեստանոցներ, մանկապարտեզ: Ունի նաև հանդիսությունների սրահ: 1890-ական թվականների սկզբի տվյալներով Գիշի գյուղում եղել է 127 տուն, 1065 բնակիչ: Այժմ գյուղում կա 305 տուն, 1313 բնակիչ: Անցած շուրջ հարյուր տարվա ընթացքում տների թիվը բավականին ավելացել է, սակայն արտագաղթի պատճառով բնակչության թիվը քիչ է աճել: 1888 թ. Գիշի գյուղում հիմնվել է ծխական դպրոց (որտեղ սովորում էին նաև Մուշկապատ և Հաղորտի գյուղերից եկած մի քանի աշակերտներ), որը փակվել է, հետո նորից բացվել՝ 1907 թ. որպես երկսեռ դպրոց: Գիշու այժմյան միջնակարգ դպրոցը գործում է 1932 թվականից, սակայն շենքը հարմարություններ չունի: Աշակերտների թիվը հասնում է 266-ի, ուսուցիչներինը՝ 35-ի:

Տները հարմարավետ, երկհարկանի ու թիթեղածածկ են: Գյուղը լավ ապահովված է խմելու ջրով: Շրջկենտրոնի հետ կապող ճանապարհը բարեկարգ է, գյուղամիջյան փողոցների մի մասը ասֆալտապատ է:

Գիշեցիներն աչքի են ընկնում աշխատասիրությամբ, հյուրասիրությամբ, հպարտությամբ: Բնակիչների կյանքի միջին տևողությունը 70—75 տարի է:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 370 մարդ, որոնցից 183-ը զոհվել է: Նրանց հիշատակին գյուղի մուտքի մոտ կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Սոս

Գտնվում է Մարտունու շրջանի հարավային մասում: Այժմյան գյուղն ունի 250—300 տարվա պատմություն: Ի տարբերություն Լեռնային Ղարաբաղի շատ գյուղերի, որոնց հայացքը դեպի արևելք կամ հարավ է ուղղված, Սոս գյուղը հայացքով դեպի արևմուտք է նայում: Այն տեղադրված է անտառածածկ մի լեռան (Լուսավորչի սար) արևմտյան լանջի ստորոտին: Հեռավորությունը շրջկենտրոնից 21 կմ է, մարզկենտրոնից՝ 81 կմ: Քանի որ գյուղը թիկունքով հենված է Լուսավորչի բարձր սարի ստորոտին, ապա արևի շողերը նրա վրա են ընկնում միայն առավոտյան ժամը 12-ից հետո: Գյուղի անվանումը ոմանք կապում են սոսի ծառի հետ, չնայած այսպիսի ծառատեսակ այստեղ չկա: Կա նաև այսպիսի պատմություն. Սոս գյուղի նախնիները սկզբնական շրջանում ապրում էին այժմյան գյուղատեղից դեպի հարավ գտնվող վայրում, որն այժմ էլ կոչվում է Շենատեղ: Վերջինիս պատմությունն սկսվում է V դարից: Ավանդությունը պատմում է, որ 18-րդ դարի սկզբներին թուրքական զավթիչների հարձակումներից պաշտպանվելու համար բնակիչները փախչում են գյուղից դեպի բարձունքը: Այդ գյուղի կանանցից մեկն իր երեխայի հետ չի հասցնում ժամանակին հեռանալ և թաքնվում է կածանի մոտ

գտնվող թփուտներում: Կածանով անցնող թուրք զավթիչների աղմուկ-աղաղակից վախենալով երեխան լաց է լինում: Որպեսզի երեխայի ձայնը թշնամին չլսի՝ մայրը սաստել է երեխային, ասելով՝ սուս: Թուրքերը լսել են այդ բառը և աղավաղված ձևով արտաբերել «Սոս»: Իբր այդտեղ հիմնված գյուղն իր անունն էլ ստացել է այդ առիթով:

Գյուղի պատմական առավել կարևոր վայրը Սուրբ Գրիգոր Լուսավորչի անվամբ կոչվող սարն է, որի վրա մինչև այժմ էլ մնում են եկեղեցու և բնակելի տների փլատակները: Ավանդության համաձայն Գրիգոր Լուսավորիչը Արցախում եկեղեցիներ հիմնադրելու նպատակով այստեղ այցելած ժամանակ գիշերը բարձրացել է այս գեղատեսիլ, անտառածածկ սարը և աղոթքներով ամբողջ գիշերը լուսացրել սարի վրա: Հայտնի է նաև, որ Գրիգոր Լուսավորիչը IV դ. սկզբին հիմնադրել է Ամարասի վանքը, որը գտնվում է Սոս գյուղից հարավ, Ամարաս գետի ափին: Կան փաստեր նաև, որ Մեսրոպ Մաշտոցը հայոց գրերի տարածումն Արցախում սկսել է Ամարասից, որտեղ նա բացել է առաջին դպրոցը:

Հայ եկեղեցական ու մշակութային այս եզակի կենտրոնը՝ Ամարասի համալիրը բազմիցս ավերվել, թալանվել է թաթար-մոնղոլների, պարսիկների, թուրքերի հարձակումների ժամանակ: Մենք արդեն նշել ենք, որ Ամարասը ողջ պատմական Հայաստանի արևելյան մասի ոչ միայն եկեղեցական ու մշակութային խոշոր կենտրոն էր, այլև օտար թշնամիների դեմ պայքարի կազմակերպման ամրակուռ ամրոց: Ի դեպ, այն ամբողջապես կառուցված է եղել մոտակա Խազազի սարի կրաքարի հանքից բերված սրբատաշ քարով: Պատմում են, որ Լենկթեմուրը մեծ դժվարությամբ ամրոցը գրավելուց հետո գազազած Ամարասի անկոտրում դիմադրությունից, իր զորաբանակը շարքով կանգնեցրել է Ամարասից մինչև Արաքս գետը ու հրամայել վանքը քանդել ու նրա քարերը միմյանց փոխանցելով թափել գետի մեջ: Սակայն Հայաստանից վայրագ այդ ցեղերի հեռանալուց հետո Արցախի հայերը վերակառուցում են իրենց վանք ամրոցը: Վերջին անգամ վերանորոգվել է 18-րդ դարում, Վարանդայի մելիք Շահնազարի կողմից:

Երբեմնի եկեղեցական այդ խոշոր համալիրը, որը ժամանակին բարեշեն էր, ուներ դպրոց, ննջասենյակներ, սեղանատուն, խուցեր, օժանդակ շինություններ, ամրակուռ պարիսպ, այժմ անշուք վիճակում է: Այն գտնվում է Սոս գյուղի հողատարածությունում, պահպանվում է որպես պատմական հուշարձան: Սակայն, Էջմիածնի տարիքն ունեցող, հայ ժողովրդի այս եզակի կոթողը կարիք ունի արմատական վերակառուցման: Դրա վերակառուցումը և բարեկարգ ճանապարհի կառուցումը Ամարասը կդարձնի տուրիզմի միջազգային նշանակություն ունեցող օբյեկտ:

1890-ական թվականների սկզբներին Սոս գյուղում եղել է 107 տուն,

687 բնակիչ: Այժմ գյուղում կա 270 տուն, 979 բնակիչ: Գյուղի բարձրությունը ծովի մակերևույթից 1100 մ է, կլիման չոր-մերձարևադարձային է, միջին տարեկան տեղումների քանակը՝ 350 մմ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1929 թ.: Տնտեսության հիմնական ճյուղերն են անասնապահությունը (կաթնային), հացահատիկային տնտեսությունը և խաղողագործությունը: Հացահատիկի բերքատվությունը մեկ հա-ից 25 ց է, մեկ կովի կաթնատվությունը 3400 կգ: Նշանավոր է թթի այգիներով, որոնք տարածվում են Ամարասի ձորում: Գյուղը էլեկտրիֆիկացվել է 1960-ական թվականներից: Տները բարեկարգ են հիմնականում երկհարկանի, թիթեղածածկ: Շրջկենտրոնի ու մարզկենտրոնի հետ կապող ճանապարհները բարվոք չեն: Գյուղում գործում են մշակույթի տուն, գրադարան, վարսավիրանոց, կապի բաժանմունք, հիվանդանոց, մսուր-մանկապարտեզ:

Սոսում դպրոց հիմնվել է 1908 թվականին: Այժմ միջնակարգ դպրոց է, 240 աշակերտով, որտեղ աշխատում է 26 ուսուցիչ: Սակայն դպրոցի շենքը չունի ժամանակակից հարմարություններ: Բնակիչների կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցած զինվորներից 138-ը զոհվել է, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Ամբողջապես հայաբնակ է:

Հերհեր

Գտնվում է Մարտունու շրջանի նախալեռնային մասում, Բովուրխանի լեռնազանգվածից դեպի Ամարաս գետի հովիտը ձգվող լեռնապարի արևելահայաց լանջին: Բարձրությունը ծովի մակերևույթից 1150 մ է, կլիման՝ մեղմ-ցամաքային, միջին տարեկան տեղումների քանակը 400 մմ է: Հերհերը հին գյուղ է, նրա պատմությունը սկսվում է IV—V դարերից: Այս գյուղի պատմությունը կապված է Ամարասի հետ: Կառուցվել է որպես Ամարասի միաբանների ամառանոց: Ունի պատմական նշանավոր հուշարձաններ, որոնցից մեծ արժեք է ներկայացնում Ս. Գրիգորիսի եկեղեցին, որը կառուցել է Պետրոս կաթողիկոսը 1667—1676 թթ.: Համեմատաբար լավ պահպանված և սրբատաշ քարով կառուցված սյունազարդ այս եկեղեցին հայ ճարտարապետական նշանավոր կառույցներից է: Հետաքրքրություն ներկայացնող պատմական հուշարձան է նաև կիսախարխուլ վիճակում գտնվող Ս. Աստվածածին մատուռը:

Գյուղի հեռավորությունը շրջկենտրոնից 31 կմ է, մարզկենտրոնից՝ 91 կմ:

1890-ական թվականների սկզբներին Հերհերում եղել է 80 տուն, 577 բնակիչ: Այժմ գյուղն ունի 164 տուն, 610 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ.: Տնտեսության հիմնական ուղղություններն են հացահատիկային կուլտուրաների մշակությունը, այգեգործությունը, պտղաբուծությունը և անասնապահությունը: Հացահատիկի բերքատվությունը մեկ հա-ից 25 ց է, մեկ հովի կաթնատվությունը՝ տարեկան 2700 կգ: Նշանավոր է թթի այգիներով:

Գյուղում դպրոց է հիմնվել 1910 թ.: Այժմյան միջնակարգ դպրոցում սովորում է 125 աշակերտ, աշխատում է 19 ուսուցիչ: Դպրոցը չունի հարմարություններ: Ի դեպ, 1950—60 թթ. այս դպրոցում սովորում էր 265 աշակերտ: Գյուղն ունի մշակույթի տուն, բուժկետ, կապի բաժանմունք, վարսավիրանոց, կար ու ձևի արհեստանոց, կոշկակարանոց: Էլեկտրիֆիկացվել է 1963 թ.: Տները հիմնականում երկհարկանի են: Ջրով ապահովված է: Շրջկենտրոնի և մարզկենտրոնի հետ կապող ճանապարհներն անբարեկարգ են: Բնակիչներն աչքի են ընկնում սրամտությամբ, հյուրասիրությամբ, հպարտությամբ: Բնակիչների կյանքի միջին տևողությունը 70—75 տարի է: Շրջապատում կան շատ աղբյուրներ՝ Ծլլոկը, Չալունց աղբյուրը, Հոռեն քոլը, Փաշին ձորը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 200 մարդ, որից 89-ը զոհվել է: Նրանց հիշատակին կանգնեցվել է հուշարձան: Ամբողջապես հայաբնակ է:

Քերթ

Տեղադրված է Ռսկհան, Ալանբոթ, Ծակ քար և Եղիշեի սարերի միջև ընկած հովտում: Անվանումը կապված է Քերծ բառի հետ (Քերծ նշանակում է ժայռ): Գյուղը գտնվում է լերկ ժայռի (քերծի) արևելահայաց լանջին: Նրա պատմությունն սկսվում է 17-րդ դարի սկզբներից: Կլիմայական պայմանները բարեխառն են: Վերը նշված սարերի գոգավորությունում գտնվելով՝ պաշտպանված է քամիներից: Բարձրությունը ծովի մակերևույթից 1100—1150 մ է:

Հեռավորությունը շրջկենտրոնից 29 կմ է, մարզային կենտրոնից՝ 89 կմ: 1890-ական թվականների սկզբին Քերթ գյուղում եղել է 56 տուն, 344 բնակիչ: Այժմ գյուղում կա 155 տուն, 608 բնակիչ:

Գյուղի Ս. Գևորգ եկեղեցին կառուցվել է 19-րդ դարի վերջին, պահպանվում է բարվոք վիճակում, նրա վրա 1935—36 թթ. կառուցվել է երկրորդ հարկը, որն օգտագործվում է որպես մշակույթի տուն:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1929—30 թթ., հիմնական ուղղությունները հացահատիկային կուլտուրաների աճեցումը, այգեգործությունն ու անասնապահությունն են: Հացահատիկի բերքը մեկ հա-ից 28—30 ց է, խաղողինը՝ 150—165 ց, մեկ կովի կաթնատվությունը տարեկան 2700—2800 կգ: Գյուղի շրջակայքում ամենուրեք տարածված են թթի այգիներ, այստեղի թութը քաղցր ու անուշահամ է: Դպրոցը հիմնադրվել է 1924 թ.: Միջնակարգ է. ունի բոլոր հարմարությունները, աշակերտների թիվը հասնում է 206-ի, աշխատում է 18 ուսուցիչ: Գյուղում գործում է մշակույթի տուն, մանկապարտեզ, բուժկետ, վարսավիրանոց, կար ու ձևի արհեստանոց, խնայդրամարկղ, ավտոմատ հեռախոսակայան, կապի բաժանմունք: Տները երկհարկանի են, բարեկարգ: Ջրով ապահովված է:

Էլեկտրիֆիկացվել է 1961 թ.: Բնակիչների կյանքի միջին տևողությունը 80—85 տարի է: Ճանապարհները բարեկարգ չեն: Շրջակայքում քիչ չեն աղբյուրները՝ Տիզկեն, Ղևուն, Շրշռան, Փշանց և այլն: Բնակիչներն աչքի են ընկնում աշխատասիրությամբ և հյուրասիրությամբ:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 270 մարդ, զոհվել է 115-ը, որոնց հիշատակին կառուցված է հուշարձան: Ամբողջապես հայաբնակ է:

Քարահունջ

Դեռևս 6—7-րդ դարերում այս գյուղի բնակատեղին եղել է այժմյան Կոլխոզաշեն գյուղի մոտերքում, քարքարոտ լեռնալանջին: Տեղանքի ու շրջակայքի քարքարոտ բնույթից էլ առաջացել է «Քարահունչ» անվանումը, որը ձևափոխվել ու դարձել է «Քարահունջ»: Հետագայում, 17-րդ դարի վերջին այս գյուղի բնակիչները տեղափոխվել և նոր բնակավայր են հիմնել ավելի հարմար բնական պայմաններ ունեցող վայրում: Այժմյան Քարահունջ գյուղը գտնվում է Քերթից մի փոքր (2—3 կմ) հարավ, Եղիշեի սարի հարավ-արևմըտյան լանջի ստորոտին: Քարահունջի նոր բնակատեղին հիմնադրել է Զանգեզուրից (Գորիսից) եկած Տեր Խաչատուրը: Կա ենթադրություն, որ հայ մեծ երգահան Արամ Խաչատրյանի նախնիներն այս գյուղից են, որոնք տեղափոխվել են Թիֆլիս:

Քարահունջի բարձրությունը ծովի մակերևույթից 1100 մ է, կլիման մեղմ է, միջին տարեկան տեղումները 350 մմ է: Գյուղի շրջակայքը թփուտածածկ լեռնալանջ է, բերրի սևահողերով:

1890-ական թվականների սկզբներին այստեղ կար 36 տուն, 210 բնակիչ: Այժմ Քարահունջում կա 55 տուն և 221 բնակիչ: Շրջկենտրոնից հեռավորությունը 30 կմ է, մարզային կենտրոնից՝ 90 կմ: Կոլտնտեսություն ստեղծվել է 1930 թ., 1950 թ. միավորվել է Քերթի տնտեսությանը, իսկ 1989 թ. նորից առանձնացել է: Զարգացած է հացահատիկի մշակությունը և խաղողագործությունը: Ունի թթի այգիներ: Մինչև խորհրդային կարգերի հաստա-

տումը գյուղում եղել է մասնավոր դպրոց (հիմնել է Հերսիկ վարժուհին), 1929—74 թթ.՝ տարրական դպրոց, որից հետո միավորվել է Քերթ գյուղի միջնակարգ դպրոցին: Գյուղում գործում է մանկապարտեզ, ակումբ, գրադարան, բուժկետ, վարսավիրանոց, կար ու ձևի արհեստանոց: Էլեկտրիֆիկացվել է 1961 թ.: Տները երկհարկանի ու բարեկարգ են, շատերը նորակառույց՝ բոլոր օժանդակ հարմարություններով: Սակայն ջրով չի բավարարված: Ճանապարհները չնայած բանուկ են, բայց բարեկարգ չեն: Քարահունջեցիներն աշխատասեր, շատ համեստ, հյուրասեր և հպարտ ժողովուրդ են: Բնակիչների կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Իսկ Սառա Լալայանն արդեն ավելի քան 100 տարեկան է:

Գյուղի շրջակայքի միակ աղբյուրը «Պրկակերն» է, որը գտնվում է համանուն գետակի ափին: Գյուղից վեր, լեռան լանջին կա բնական անտառ, պտղատու այգիներ: Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 57 մարդ, որից 30-ը զոհվել է, նրանց հիշատակին կառուցվել է հուշարձան: Ամբողջապես հայաբնակ է:

Մաճկալաշեն

Հին անվանումը Մաշադիշեն է եղել (այժմյան Կոլխոզաշեն գյուղի կալերի վայրը): Տեղի բնակչության հիմնական զբաղմունքից՝ հողագործությունից ելնելով գյուղը անվանվել է Մաճկալաշեն (մաճկալների շեն): Գտնվում է Ամարաս վանքից 2,5 կմ դեպի հյուսիս, նույնանուն գետի աջ ափին: Այժմյան Մաճկալաշենը հիմնադրվել է 1923 թ.: Հեռավորությունը շրջկենտրոնից 23 կմ է, մարզային կենտրոնից՝ 83 կմ: Գյուղի դիրքը հիմնականում հարթավայրային է, կլիմայական պայմանները մեղմ են, բարձրությունը ծովի մակերևույթից շուրջ 1000 մ է, տեղումների միջին տարեկան քանակը՝ 350 մմ:

Վերջին տվյալներով գյուղում կա 176 տուն, բնակչության թիվը՝ 671 մարդ է: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ: Հիմնական ուղղությունները հացահատիկային կուլտուրաների մշակությունն ու բանջարաբուծությունն է (Սոս գյուղի հետ նույն կոլտնտեսության մեջ էր 1950 թվականից, իսկ 1988 թ. առանձնացել է): Գյուղի շրջակայքում կան հին թթաստանների ընդարձակ տարածություններ, որի հիման վրա զբաղվում են նաև խոզաբուծությամբ:

Այստեղ դպրոց հիմնադրվել է 1923 թ.: Այժմ ունի ութամյա դպրոց: Աշակերտների թիվը հասնում է 96-ի (1951 թ. եղել է 165 աշակերտ), աշխատում է 17 ուսուցիչ: Միջնակարգ կրթություն ստանալու համար աշակերտները հաճախում են Սոսի դպրոցը: Տեղի դպրոցի շենքը չունի ժամանակակից հարմարություններ: Գործում է մսուր-մանկապարտեզ, ակումբ, բուժկետ, վարսավիրանոց, կար ու ձևի արհեստանոց, կոշկակարանոց:

Գյուղը էլեկտրիֆիկացվել է 1961 թ.: Տները երկհարկանի են: Ճանապարհներն անբարեկարգ են: Բնակիչներն աչքի են ընկնում աշխատասիրությամբ, սրամտությամբ: Կյանքի միջին տևողությունը 70—75 տարի է, իսկ Մարիանգյուլ Բարսեղյանն ավելի քան 100 տարեկան է: Խմելու և ոռոգման ջրով ապահովված է: Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 132 մարդ, որոնցից 51-ը զոհվել է: Նրանց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Ամբողջապես հայաբնակ գյուղ է:

Ծովատեղ

Գտնվում է Հերհեր գյուղից մի փոքր հյուսիս, տեղադրված է թույլ թեքություն ունեցող լեռնալանջի գոգավորությունում: Պահպանվող պատմական հնությունների արձանագրությունները վկայում են, որ գյուղը հիմնադրվել է Մելիք Փաշայանների տոհմի կողմից: Ծովատեղի մոտ մինչև այժմ էլ պահպանվում են այդ տոհմի դամբարանային համալիրի մնացորդները: Պատմական այս հուշարձանների խումբը կոչվում է Կարմիր եկեղեցի: Ի դեպ, հանրահայտ երաժիշտ, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ Մեծ թատրոնի նախկին գլխավոր դիրիժոր Ալեքսանդր Մելիք-Փաշայանը սերում է այս տոհմից:

Որոշ աղբյուրներում այս գյուղը կոչվում է նաև Քոչից: Այդպես է կոչվել այժմյան Ծովատեղի մոտ եղած մի բնակավայր, որի հետքերը, գերեզմանաքարերն այժմ էլ մնում են: Կարմիր եկեղեցու և Քոչիցի հին շինությունների փլատակների պահպանվող վիմագիր արձանագրությունները ցույց են տալիս, որ Ծովատեղի պատմությունը սերտորեն կապված է Ամարասի հետ:

Գյուղի բարձրությունը ծովի մակերևույթից 1200 մ է, կլիման մեղմ է, օդը մաքուր: Հեռավորությունը շրջկենտրոնից 32 կմ է, մարզկենտրոնից՝ 92 կմ:

1890-ական թվականների սկզբներին այս գյուղն ուներ 86 տուն, 576 բնակիչ: Այժմ այստեղ կա ընդամենը 44 տուն, 140 բնակիչ: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ., իսկ 1950 թ. Հերհերի հետ կազմել է միացյալ տնտեսություն: Հիմնականում զբաղվում են հողագործությամբ և պտղաբուծությամբ: Պայմանները նպաստավոր են խնձորենու, տանձենու և այլ մրգատունների աճման համար:

Ծովատեղում ծխական դպրոց է բացվել 1873 թ., ունեցել է 21 աշակերտ: Հետագայում՝ 1908 թ. բացվել է մեկդասյան երկսեռ դպրոց, 35 աշակերտով (որից 17-ը աղջիկ): Այժմ գործում է ութամյա դպրոց: Որտեղ սո-

վորում են 30 աշակերտ, աշխատում են 11 ուսուցիչ: Կա միայն խանութ, բուժկետ, ակումբ:

Օգտվում են Հերհերի կենցաղ-սպասարկման օբյեկտներից: Էլեկտրիֆիկացվել է 1968 թ.: Տները բարեկարգ են, երկհարկանի: Գյուղն ամառանոցի տեսք ունի: Տները թաղված են պտղատու այգիների մեջ: Ճանապարհներն ու գյուղամիջյան փողոցներն անբարեկարգ են:

Գյուղում պահպանվում է 1895 թ. կառուցված եկեղեցին: Բնակիչներն աչքի են ընկնում համեստությամբ, աշխատասիրությամբ: Կյանքի միջին տևողությունը 70—75 տարի է, իսկ Ազիզգյուլ Գասպարյանը 102 տարեկան է: Խմելու ջրով հիմնականում ապահովված է: Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 126 մարդ, որից 68-ը զոհվել է: Նրանց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Ամբողջապես հայաբնակ է:

Խերխան

Անվանումն առաջացել է «խանը խեր» կապակցությունից: Գտնվում է Ծովատեղից 2—3 կմ դեպի հյուսիս-արևմուտք, տեղադրված է լեռնալանջի թեքության վրա, գյուղի հայացքը դեպի արևելք է: Հիմնադրվել է 18-րդ դարի կեսին, հիմնադիր բնակիչները եկել են Գորիսի շրջանի Խնձորեսկ գյուղից, որոշ մասն էլ՝ այժմյան Շուշիի շրջանի Ղարաղշլաղ գյուղից: Բարձրությունը ծովի մակերևույթից 1300 մ է, կլիման հիմնականում մեղմ է:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ., իսկ 1950 թ. միավորվել է Հերհերի տնտեսության հետ: Տնտեսությունը բազմաճյուղ է, զբաղվում են հացահատիկի մշակությամբ, բանջարաբուծությամբ, պտղաբուծությամբ, անասնապահությամբ, նշանավոր է թթաստաններով, որոնք տարածված են գյուղից հարավ, գետահովտում:

1890-ական թվականների սկզբներին Խերխանն ուներ 31 տուն, 270 բնակիչ: Այժմ ունի 40 տուն և ընդամենը 84 բնակիչ: Գյուղի երկհարկանի, բարեկարգ, թիթեղածածկ տների զգալի մասը դատարկ է: Գյուղի հիմնական բնակիչները մեծահասակ են, այդ պատճառով էլ դպրոցը փակվել է, եղած մի քանի երեխաները սովորում են հարևան Ծովատեղ և Հերհեր գյուղերում: Խերխանում կա ակումբ, գրադարան, խանութ: Էլեկտրիֆիկացվել է 1963 թ.: Խմելու ջրով լավ է ապահովված: Եկեղեցին կառուցվել է 1910 թ., այժմ ավերված է: Խերխանի ծնունդ են քաղաքացիական պատերազմի լեգենդար հերոս Հակոբ Մելքումյանը, Խորհրդային Միության հերոս Խսահակ Մանասյանը, տնտեսագիտ. դոկտ., պրոֆ. Հրաչիկ Փարամազյանը:

Բնակիչներն աչքի են ընկնում աշխատասիրությամբ, սրամտությամբ,

հյուրասիրությամբ: Կյանքի միջին տևողությունը այստեղ 75—80 տարի է, իսկ Խաննիկ Խալափյանը 103 տարեկան է: Գյուղի շրջակայքում կան զուլալ աղբյուրներ: Անտառները հարուստ են անուշահամ պտուղներով: Գյուղի արևմտյան բարձրադիր լեռան ընդերքով բավականին երկար ձգվում է մի քարանձավ, որին գյուղացիներն անվանում են «Ծծաքար»:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 137 խերխանցի, որոնցից 67-ը զոհվել է, նրանց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը ամբողջապես հայաբնակ է:

Թաղավարդ

Անվանումն առաջացել է գեղատեսիլ ու ծաղկառատ բնությունից («վարդերի թաղ» կապակցությունը ձևափոխվել և դարձել է «թաղավարդ»): Գյուղը գտնվում է Վարանդա գետի աջ ափին, թույլ թեքություն ունեցող վայրում, շրջապատված է պտղատու այգիներով և անտառներով: Մարտունու շրջանի առավել գեղատեսիլ բնակավայրերից է: Անտառների առատությունը, բազմազան ծաղիկների ու վարդերի ճոխությունը, զով կլիման ամռան ամիսներին դեպի Թաղավարդի ձորն են ձգում շրջանի շատ գյուղերի բնակիչների: Գյուղը բաղկացած է երկու մասից՝ Վերին և Ներքին: Վերջինս սկզբնական շրջանում եղել է որպես Վերին Թաղավարդի կալատեղեր: Հետագայում դիրքի ու տնտեսական գործունեության հարմարության պատճառով գյուղի մեծ մասը կենտրոնացել է Կալեր կոչվող հատվածում, այդ պատճառով այժմ այն առանձին բնակավայր է և կոչվում է Թաղավարդ-կալեր:

Այժմյան Թաղավարդ գյուղի պատմությունն սկսվում է 11-րդ դարից, այստեղ՝ Բրդահոնջ կոչվող տեղամասում մինչև այժմ էլ պահպանվում են համանուն եկեղեցու փլատակները, պարիսպները և ամենատարբեր շինությունների մնացորդները, ստորգետնյա ուղիները: Փաստերը ցույց են տալիս, որ Բրդահոնջը եղել է ամրակուռ ամրոց-բնակավայր:

Թուրք-սելջուկների հաճախակի հարձակումներից խուսափելու համար բնակիչների մի մասը տեղափոխվել և բնակություն է հաստատել «Գյունե բաղ» կոչվող վայրում, որտեղ կառուցվել է նաև եկեղեցի, որը մինչև այժմ պահպանվում է և կոչվում է Գյունե եկեղեցի: Սակայն թուրքերը հարձակվել են նաև այս նոր բնակատեղիի վրա, այդ պատճառով էլ բնակիչները տեղափոխվել են «Երե շենին տափ» կոչվող վայրը և նոր բնակավայր հիմնել:

Թաղավարդ և Թաղավարդ կալեր գյուղերը միասին ունեն 299 տուն, 1196 բնակիչ (1987 թ.) այդ թվում Թաղավարդում՝ 150 տուն, 594 բնակիչ, Թաղավարդ կալերում՝ 149 տուն, 602 բնակիչ:

Այժմյան Թաղավարդ կալեր գյուղը ձևավորվել է 19-րդ դարի սկզբներին,

իսկ 1840 թ. այդտեղ կառուցվել է Ս. Աստվածածին եկեղեցին (Ջումշուդ Տեր Կարապետի Շահնազարյանի նախաձեռնությամբ), որն այժմ էլ կանգուն է: Թաղավարդից մի քանի կիլոմետր հեռավորության վրա անտառածածկ, գեղատեսիլ բլրի վրա եղել է Հին Ղալա ամրակուռ ամրոցը, որտեղ այժմ էլ մնում են բազմաթիվ շինությունների, օժանդակ կառույցների մնացորդները: Իսկ այս ամրոցից որոշ հեռավորության վրա, անտառների խորքում պահպանվում են եկեղեցու և գերեզմանատան հետքերը: Գյուղի ցածրադիր, գետահովտային մասի երկարությամբ ձգվում են բազմաթիվ քարանձավներ՝ ստորերկրյա շինությունների (Ղարաբաղում դրանք կոչվում են կհոլներ) մնացորդներ:

Թաղավարդի հեռավորությունը շրջկենտրոնից 35 կմ է, մարզկենտրոնից՝ 98 կմ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1934 թ., իսկ 1962 թվականից պետական տնտեսություն է: Ընդ որում, մինչև 1988 թ. Թաղավարդը, Կարմիր Շուկան ու Սխտորաշենը մեկ տնտեսություն էին կազմում: Այժմ Թաղավարդը առանձին տնտեսություն է: Մասնագիտացված է խաղողագործության, պտղաբուծության, հացահատիկի մշակության և անասնապահության ուղղությամբ: Գյուղի ցածրադիր, գետահովտային տարածությունները զբաղեցնում են ընդարձակ թթի այգիները:

1840-ական թվականներին Թաղավարդում բացվել է մասնավոր դպրոց, աշակերտների թիվը հասնում էր 25-ի: Այդ ժամանակ գյուղն ուներ 27 տուն: Թաղավարդի միջնակարգ դպրոցը գործում է 1923 թվականից: Այժմ ունի նոր շենք բոլոր հարմարություններով, որտեղ սովորում են 145 աշակերտ, աշխատում են 19 ուսուցիչ: Գյուղն ունի նաև ութամյա դպրոց (Թաղավարդ կալերում), որտեղ սովորում են 58 աշակերտ, աշխատում են 17 ուսուցիչ:

Գործում է մշակույթի տուն, ակումբ, երկու գրադարան, բուժկետ, կար ու ձևի արհեստանոց, վարսավիրանոց: Տները երկհարկանի են: Ճանապարհները անբարեկարգ են: Բնակիչների կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Թաղավարդցիները բնութագրվում են աշխատասիրությամբ, ազնվությամբ և հյուրասիրությամբ: Գյուղում և շրջակայքում կան նշանավոր վայրեր և աղբյուրներ: Հայտնի են Ղազունց, Օհանանց, Ռուսեն, Փաշուն, Շորեն, Շեշմա, Դերին, Խուդուն աղբյուրները, Ծլլոկը, Կաթնաղբյուրը և այլն: Շրջակա անտառները հարուստ են վայրի խնձորենու, տանձենու, զկռենու, տկողնու, հոնենու, մոշենու և այլ պտղատու ծառերով ու թփուտներով:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 670 մարդ, որոնցից զոհվել է 234-ը: Նրանց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը ամբողջապես հայաբնակ է:

Զարդանաշեն

Գտնվում է Թաղավարդ գյուղից 4—5 կմ դեպի հյուսիս-արևմուտք, թավ անտառածածկ լանջի վրա: Բարձրությունը ծովի մակերևույթից 1300 մ է, հեռավորությունը շրջկենտրոնից՝ 38 կմ, մարզային կենտրոնից՝ 96 կմ: Կլիմայական պայմանները մեղմ են, տեղումների քանակը տարեկան՝ 450—500 մմ: Թաղավարդի հետ մտնում է նույն պետական տնտեսության մեջ: Տնտեսության գլխավոր ճյուղերն են այգեգործությունը, պտղաբուծությունը, անասնապահությունը, հացահատիկի մշակությունը: Այժմ գյուղում կա 26 տուն, 90 բնակիչ, հիմնականում մեծահասակներ: Դպրոցը տարրական է, ունի ընդամենը 5 աշակերտ, մեկ ուսուցիչ: Կա ակումբ, բուժկետ: Տները հիմնականում երկհարկանի են: Գյուղը թաղված է պտղատու ծառերի մեջ, շրջապատված է պտղատու այգիներով, աղբյուրներով: Հրաշալի ամառանոց է: Բնակիչներն աշխատասեր են, կյանքի միջին տևողությունը 80—90 տարի է: Այժմ էլ ապրում է 1880 թ. ծնված Բագում Դադայանը:

Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Շեխեր

Գտնվում է Վարանդա գետի աջափնյա անտառապատ, մեղմ թեքություն ունեցող լանջին, Թաղավարդից 6—7 կմ հարավ: Բնական պայմանները նպաստավոր են, կլիման մեղմ է: Պատմական հուշարձաններից նշանավորը գյուղում գտնվող Ս. Վարդանի եկեղեցին է: Շեխերի տնտեսությունը միավորված է Կարմիր Շուկայի պետական տնտեսությանը: Հեռավորությունը շրջկենտրոնից 32 կմ է, մարզկենտրոնից՝ 92 կմ: 1987 թ. տվյալներով գյուղում կա 96 տուն, 336 բնակիչ: Տնտեսության հիմնական ուղղություններն են՝ անասնապահությունը, պտղաբուծությունը, հացահատիկի մշակությունը: Կա 8-ամյա դպրոց, որը չունի տարրական հարմարություններ: 1987 թ. դպրոցն ուներ 54 աշակերտ, 10 ուսուցիչ: Գործում է մշակույթի տուն, գրադարան, բուժկետ: Բնակիչները բնութագրվում են աշխատասիրությամբ, հյուրասիրությամբ: Կյանքի միջին տևողությունը 70—80 տարի է: Էլեկտրիֆիկացվել է 1960-ական թվականներին: Տները երկհարկանի, թիթեղածածկ և հարմարավետ են: Սակայն սոցիալական զարգացման պայմաններ չեն ստեղծված, ճանապարհներն անբարեկարգ են: Գյուղի բնությունը գեղատեսիլ է, անտառաշատ, շատ են պտղատու ծառատեսակները և թփուտները:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 130 մարդ, զոհվել է՝

56-ը: Նրանց հիշատակին կանգնեցված է ռուշարձան: Շեխերը ամբողջապես հայաբնակ է:

Սխտորաշեն

Հավանաբար գյուղի անվանումն առաջացել է նրանից, որ այդ գյուղի տարածքում լավ է աճում սխտորը: Գտնվում է Վարանդա գետի հովտում, նրա ձախափնյա թփուտածածկ լանջին, Թաղավարդ գյուղի դիմաց: Գյուղը հարավահայաց է, կլիման՝ մեղմ:

1890-ական թվականներին այստեղ կար 65 տուն, 484 բնակիչ: Մինչև 1950-ական թվականները Սխտորաշենը բավականին շեն գյուղ էր: Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 243 մարդ, որից 131-ը զոհվել է: Սա ցույց է տալիս, որ, իրոք, գյուղը բավականին մեծ է եղել: Սխտորաշենը տվել է երկու գեներալ՝ Աշոտ Դադայան և Արշակ Դադայան: Հետագայում այս գեղատեսիլ գյուղի զարգացմանը կամ թեկուզ պահպանմանը ոչ մի ուշադրություն չի դարձվել, նրա տնտեսությունը միացվել է զգալի հեռավորության վրա գտնվող Կարմիր շուկայի պետական տնտեսությանը: Արդյունքը եղել է այն, որ գյուղացիներն ստիպված են եղել տեղափոխվել Կարմիր Շուկա ավան կամ առհասարակ հեռանալ Ղարաբաղից: Փակվել է դպրոցը, ակումբը և այլ օբյեկտներ: Մինչև 1984 թ. Սխտորաշենը համարյա ամբողջապես ամայացած է եղել: Միայն վերջին մի քանի տարիներին որոշ ընտանիքներ նորից վերադարձել և վերակառուցել են իրենց տները: 1987 թ. այստեղ արդեն կար 13 ընտանիք, 43 բնակիչ: Գյուղը մի քանի երիտասարդ հայրենասերների ջանքերով վերակենդանանում է: Սխտորաշենի շրջակայքում կան պատմական հետաքրքիր հնություններ: Այժմյան գյուղից մի փոքր ցածրում գտնվող սառնորակ աղբյուրի մոտ է հին Սխտորաշենի բնակատեղին: Այստեղ հիմնականում դեռ կանգուն է եկեղեցին, պարզ երևում են շինությունների փլատակներն ու հետքերը, պահպանվում են գերեզմանատան հուշարձանները, շիրմաքարերը: Այժմյան Սխտորաշենի եկեղեցին կառուցվել է 19-րդ դարի վերջերին: Գյուղի մոտ գտնվող պատմական առավել մեծ հետաքրքրություն ներկայացնող օբյեկտներից են երեքական սառնորակ ու հորդառատ աղբյուրը և դրան հովանի՝ ավելի քան 2010 տարեկան սոսի (տնջրե) ծառը:

Սխտորաշենի տնջրեն ուխտատեղի է ու սրբավայր: Շատ շատերն են գալիս այդ հրաշք ծառը տեսնելու: Նրա հովանու տակ հանգստացել են ու սառնորակ աղբյուրից ջուր խմել պատմական շատ դեմքեր:

Չորրորդ դարի սկզբին Ամարաս տանող ճանապարհին այստեղ կանգ



Սխտորաշենի 2010 տարեկան սոսին (տնջրե)

է առել Գրիգոր Լուսավորիչը, որը եկել էր Արցախ՝ քրիստոնեություն տարա-
ծելու համար: Հետո այս ծառի տակ դադար է առել Գրիգոր Լուսավորչի թոռը
Հայոց արևելյան կողմանց առաջին եպիսկոպոս Գրիգորիսը (որը թաղված է
Ամարասի վանքում): Այստեղ եղել են նաև Մեսրոպ Մաշտոցը, որը Արցախ էր
այցելել դպրոցներ հիմնելու համար, հայոց Աղվանքի Վաչագան Բարեպաշտ
թագավորը, պատմագիրներ Կաղանկատվացին, Մխիթար Գոշը, Կիրակոս Գան-
ձակեցին: Ավելի ուշ Արցախում ճանապարհորդելու ժամանակ այս ծառի
մոտ դադար է առել հայ խոշոր վիպասան Րաֆֆին, իսկ 1950-ական թվա-
կանների սկզբներին՝ Ավետիք Իսահակյանը:

Կարմիր Շուկա

Գտնվում է Վարանդա գետի ափին, համեմատաբար հարթ տարածքի
վրա: Քաղաքատիպ ավան է, ստեղծվել է Ղարաբաղում խորհրդային կարգեր
հաստատվելու առաջին տարիներին, որպես մոտակա բնակավայրերի համար
շուկայատեղի: Այստեղից էլ առաջացել է «Կարմիր Շուկա» անվանումը: Հե-
տագայում շուկայի շրջակայքում հիմնադրվել են բանվորական տներ, կա-
ռուցվել է սպիրտի գործարան, որտեղ մշակվում են Մարտունու շրջանի կոլ-
տնտեսություններում արտադրվող թթի օղին: Մոտակա գյուղերից այստեղ
են տեղափոխվել մեծ թվով բնակիչներ, կառուցելու սեփական հարմարավետ
բնակարանները: 1940-ական թվականներին այն արդեն բարեկարգ տներ ու
փողոցներ ունեցող ավան էր: Հետագայում ավանի սոցիալ-տնտեսական զար-
գացումը աչքաթող է արվել:

Տնտեսության հիմնական ուղղություններն են խաղողագործությունը, հա-
ցահատիկի մշակությունը և անասնապահությունը: Ունի ընդարձակ թթաս-
տաններ:

Գործում են մշակույթի տուն, գրադարան, երկու մանկապարտեզ: 1927
թ-ից գործում է միջնակարգ դպրոց, որն այժմ ունի բոլոր հարմարություն-
ները: Այնտեղ այժմ սովորում են 200 աշակերտ, աշխատում են 31 ուսուցիչ:
Բնակչության թիվը հասնում է 1100-ի: Էլեկտրիֆիկացված է, լավ ապահով-
ված է ջրով: Ավանով անցնում է Մարտունի-Ստեփանակերտ ավտոխճուղին:
Ավանը հայաբնակ է:

Սարգսաշեն

Անվանումն առաջացել է նրա հիմնադիր, առաջին բնակիչ՝ Սարգիս
պապի անունից: Գյուղը գտնվում է Վարանդա գետի վերին հոսանքի ու նրա

Սխտորաշենի 2010 տարեկան սոսին (տնջրե՛ք)

վտակ Շրշռան գետակի միջև գտնվող սարահարթի վրա: Հեռավորությունը շրջկենտրոնից 34 կմ է, մարզկենտրոնից՝ 94 կմ: Գեղատեսիլ բնություն ունի, հարուստ է անտառներով, պտղատու ծառատեսակներով, ունի զով կլիմա: Այժմյան գյուղի պատմությունն սկսվում է 16-րդ դարից: Շրջակայքում կան պատմական հետաքրքրություն ներկայացնող հուշարձաններ, վայրեր: Պատմական հնությունները վկայում են, որ հին գյուղատեղին եղել է այժմյան գյուղից 1—1,5 կմ հեռավորության վրա գտնվող «Վանքի խութ», «Եխծուն խութ» կամ «Շինատեղ» կոչվող վայրերում: Այստեղ պահպանվում են եկեղեցու փլատակները և բազմաթիվ գերեզմանաքարեր: «Խաչեն խութ», «Խաչեն տակ», «Կուկու» վայրերում պահպանվում են խաչքարեր: Իսկ գերեզմանատան լավ պահպանված շիրմաքարերի մեջ աչքի ընկնող մի շիրմաքար կա, որի նկատմամբ մեծ հետաքրքրություն է ցուցաբերվում: Դրա վրա այսպիսի վիմագրություն է արված. «Այստեղ հանգչում է Սյունաց քաջ զորավար Տեր-Ավետիքի թոռը՝ Պետրոս իշխանի որդի Հայրապետը, վախճանված 1814 թ., 20-ին 10 ամսի»: Ի դեպ, վերջինիս ծոռը՝ գեներալ Համիկ Ավետիքովը ապրում էր Երևանում, մահացել է 1988 թ.:

Սարգսաշենը հայտնի է եղել Վարանդա գետի ու նրա վտակ Լվաց գետակի վրա գործող իր ջրաղացներով, որոնց մի մասը դեռ պահպանվում է: Հատկապես հայտնի էին Աղանց, Բուլվանց, Ասլանանց ջրաղացները:

Այժմ Սարգսաշենում կա 66 տուն, 235 բնակիչ: Տնտեսությունը մինչև 1988 թ. միավորված էր Կարմիր Շուկայի պետական տնտեսությանը, հիմնական ուղղություններն են անասնապահությունն ու պտղաբուծությունը: Այժմ առանձին տնտեսություն է: Էլեկտրիֆիկացվել է 1960 թ.: Ունի ակումբ, գրադարան: Դպրոցը ութամյա է, չունի հարմարություններ, այժմ սովորում են 32 աշակերտ աշխատում են 9 ուսուցիչ: Ճանապարհներն անբարեկարգ են:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 214 մարդ, որոնցից 73-ը զոհվել է: Նրանց հիշատակին կառուցված է հուշարձան: Գյուղն ամբողջապես հայաբնակ է:

Կոլխոզաշեն

Նախկինում կոչվում էր Մաշադիշեն, 1928 թվականից կոլեկտիվ տնտեսության կազմակերպման հետ կապված վերանվանվել և կոչվում է Կոլխոզաշեն:

1918 թ. հոկտեմբերին այս գյուղի մոտակայքում տեղի է ունեցել ճակատամարտ թուրքերի դեմ: Մարտունու շրջանի գյուղերի բնակիչների համատեղ ջանքերով թուրքերը ջարդվել ու ետ են շպրտվել: Այժմյան գյուղից

փոքր հեռավորության վրա են Շինատեղ կոչվող հին բնակավայրի մնացորդները, գերեզմանոցը և Պերետես կոչվող եկեղեցին: Իսկ գյուղում պահպանվում է Ս. Աստվածածին եկեղեցին:

Գյուղը տեղադրված է լեռնահովտային մասում (Ամարաս գետի վերին ավազանի ձախափնյա լեռնալանջին), տեղանքը բլրապատ է՝ անտառազուրկ կամ թփուտածածկ քարաժայռերով: Բարձրությունը ծովի մակերևույթից 1100 մ է, կլիման մեղմ: Հեռավորությունը շրջկենտրոնից 34 կմ է, մարզկենտրոնից՝ 94 կմ: 1890-ական թվականների սկզբներին գյուղն ուներ 120 տուն, 943 բնակիչ, 1987-ին՝ 104 տուն, 371 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1928—29 թթ.: 1987 թ. դարձել է պետական տնտեսություն, սրան էին միավորվել Մամնա և Ղավախան գյուղերի տնտեսությունները, որոնք այժմ առանձնացել են:

Տնտեսության գլխավոր ճյուղերն են անասնապահությունը և հացահատիկի մշակությունը: Սակայն այս տնտեսության ցուցանիշները ցածր են: Մեկ կովի միջին կաթնատվությունը 1800 կգ է, իսկ հացահատիկի բերքատվությունը մեկ հա-ից՝ 12 ց: Ունի թթի ընդարձակ այգիներ:

Գյուղում դպրոց է հիմնվել դեռ նախախորհրդային ժամանակաշրջանում՝ Ավանես Մաթևոսյանի ջանքերով, որին հետագայում օծել են որպես տերտեր: Միջնակարգ դպրոցը գործում է 1925 թվականից, այժմ դպրոցն ունի նորակառույց և հարմարավետ շենք, որտեղ սովորում են 68 աշակերտ, աշխատում են 15 ուսուցիչ: Կա ակումբ, բուժկետ, կապի բաժանմունք, խնայդրամարկղ, խանութ, կոշկակարանոց:

Էլեկտրիֆիկացվել է 1964 թ.: Տները երկհարկանի, թիթեղածածկ ու բարեկարգ են: Խմելու ջրով լավ չի ապահովված, աղբյուրները սակավաջուր են: Ճանապարհները միջին կարգի են: Եկեղեցին (Ս. Աստվածածին) կառուցվել է 1850-ական թվականներին, այժմ էլ կանգուն է: Այս գյուղի ծնունդ է Խորհրդային Միության հերոս՝ գեներալ-գնդապետ Միքայել Բարսեղովը, որի տուն-թանգարանն այստեղ գործում է 1960 թվականից:

Բնակիչներն աչքի են ընկնում աշխատասիրությամբ, սրամտությամբ: Նրանց կյանքի միջին տևողությունը 80—85 տարի է: Կան մի շարք աղբյուրներ՝ Պլպլան, Աբունց, Սրաբունց, Կանունց, նշանավոր վայրեր՝ Քամու խութ, Մուստափեն յուրդ, Աթաբեկի թումբ:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 225 մարդ, զոհվել է 106-ը, նրանց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը լրիվ հայաբնակ է:

Մամնա

Գտնվում է Ամարաս գետի վերին հոսանքի ավազանում: Գյուղի պատմությունն սկսվում է 15—16-րդ դարերից: Այժմ այստեղ պահպանվում է Շոշկա եկեղեցի-մատուռը, որը կառուցվել է 16-րդ դարում:

1918 թ. Մամնա գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Մարտունու շրջանի բնակիչների համատեղ ջանքերով գլխովին ջախջախվում է թուրքական մեծաթիվ բանակն ու ետ շպրտվում: Գյուղը տեղադրված է լեռնապարի ստորոտում, ծովի մակերևույթից բարձրությունը 1200 մ է, շրջապատված է անտառներով, կլիման մեղմ է: Հեռավորությունը շրջկենտրոնից 33 կմ է, մարզկենտրոնից՝ 93 կմ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1929—30 թթ.: Հիմնական ճյուղերն են անասնապահությունն ու հացահատիկային տնտեսությունը: 19-րդ դարի 90-ական թվականների սկզբներին այստեղ կար 70 տուն, 490 բնակիչ:

1987 թ. գյուղում կար 27 տուն, 74 բնակիչ: Դպրոց եղել է մինչև խորհրդային կարգերի հաստատումը: Հետագայում ստեղծված դպրոցը գոյություն է ունեցել մինչև 1986 թվականը: Աշակերտների թվի կրճատման պատճառով դպրոցը փակվել է: Կա ակումբ, գրադարան, խանութ, էլեկտրիֆիկացվել է 1964 թ.: Տները երկհարկանի են, ջրով լավ է ապահովված: Եկեղեցին (Ս. Աստվածածին) պահպանվում է: Բնակիչներն աշխատասեր և հյուրասեր են: Ճանապարհներն անբարեկարգ են: Բնակիչների կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Այս գյուղի ծնունդ է կոմպոզիտոր Անդրեյ Բաբայանը (Բաբաև): Աղբյուրներից նշանավոր են՝ Սպիտակը, Կենունը և Մեծ աղբյուրը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 85 մարդ, որից զոհվել է 44-ը, նրանց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Ղավախան

Գյուղի անվան առաջացման մասին մի քանի ենթադրություններ կան: Սակայն հավանականը «կավախան» բառի ձևափոխման հետ կապված բացատրությունն է: Այս բնակավայրի մոտ կան բարձրորակ կավահողի պաշարներ, որոնք հնուց օգտագործվել են բրուտագործության համար: Գյուղի առաջին բնակիչներից մեկը տնօրինել է այդ հումքը, կազմակերպել կենցաղային գործածության տարբեր իրերի արտադրություն և դրա հիման վրա հարստացել, այսինքն կավի օգտագործմամբ դարձել է խան: Իսկ հետագայում «Կավախանը» ձևափոխվել ու դարձել է Ղավախան: Ի դեպ, այս գյուղը

մինչև վերջերս էլ Արցախ-Ղարաբաղ աշխարհում հայտնի է եղել բրուտագործական իրերի՝ կուժ, կուլա, գավաթ, մածնի մերման անոթներ և այլ իրերի արտադրությամբ: Ղավախանը ծովի մակերևույթից ունի 1150 մ բարձրություն: Դիրքը լեռնային է, անտառածածկ: Տեղադրված է գեղատեսիլ անտառապատ բլուրներով շրջապատված հովտում: Կլիման մեղմ է, օդը ամռանը զով է, մաքուր: Մթնոլորտային տեղումները՝ տարեկան 450 մմ: Հեռավորությունը շրջկենտրոնից 32 կմ է, մարզկենտրոնից՝ 92 կմ:

Այժմյան գյուղի պատմությունն սկսվում է 18-րդ դարի սկզբներից, իսկ ավելի վաղ շրջանում այն եղել է ներկայիս գյուղից 2—3 կմ հեռավորության վրա, որտեղ պահպանվում են գերեզմանատունը և քարաշեն մատուռը: «Սրբի դոշ» անտառածածկ բլրի վրա է գտնվում 13-րդ դարում կառուցված մատուռը: Այժմյան գյուղի եկեղեցին (Ս. Աստվածածին) կառուցվել է 1871 թ. և պահպանվում է:

19-րդ դարի 90-ական թվականների սկզբներին Ղավախանում կար 34 տուն, 280 բնակիչ, 1987 թ.՝ 43 տուն, 141 բնակիչ: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1929—30 թթ., 1954 թ. միավորվել է Կոլխոզաշենի ու Մամնայի տնտեսության հետ: Հիմնական ուղղությունը անասնապահությունն է, զբաղվում են նաև այգեգործությամբ, պտղաբուծությամբ:

Ղավախանում 1873 թ. ծխական դպրոց է հիմնվել՝ 20 աշակերտով, հետո փակվել է: 1906 թ. նորից բացվել է, որպես երկսեռ մեկդասյան դպրոց: Այժմ այստեղ գործում է ութամյա դպրոց, որը զուրկ է տարրական հարմարություններից: Սովորում են 43 աշակերտ, աշխատում են 10 ուսուցիչ: Կա ակումբ, գրադարան, բուժկետ, կապի բաժանմունք, խանութ: Էլեկտրիֆիկացվել է 1964 թ.: Տները երկհարկանի են: Խմելու ջրով լավ է ապահովված: Կան բազմաթիվ աղբյուրներ՝ Շենին, Էլուդուրա, Ըղեն, Արգումանեն և այլն: Ճանապարհները շատ անմխիթար վիճակում են, ավտոբուսային կապ չկա, որը շատ է դժվարացնում բնակչության գործը: Ունի աշխատասեր, սրամիտ, հյուրասեր բնակչություն, կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 145 մարդ, զոհվել է 89-ը, որոնց հիշատակին հուշարձան է կանգնեցված: Գյուղը լրիվ հայաբնակ է:

Խնուշինակ

Գտնվում է Ճարտարից 5—6 կմ դեպի հյուսիս-արևելք: Տեղադրված է թույլ թեքություն ունեցող անտառազուրկ Սրբախութ լեռան արևելյան լանջի գոգավորությունում:

Անվանումն առաջացել է «խան» և «շեն» բառերի միացումից՝ «Խնու-

շինակ» (այսինքն խանի շեն): Շրջկենտրոնից գտնվում է 12, իսկ մարզկենտրոնից՝ 75 կմ հեռավորության վրա: Կլիման մեղմ է, ամառը՝ շոգ: Դիրքը հարավահայաց է: Գյուղում պահպանվում է Ս. Աստվածածին եկեղեցին, որը հետաքրքիր ճարտարապետական կառույց է՝ բազմաթիվ արձանագրություններով. կառուցվել է 1855 թ.: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ., գյուղատնտեսության հիմնական ուղղություններն են անասնապահությունը, հացահատիկի մշակությունը և խաղողագործությունը: Ունի ընդարձակ թթաստաններ:

Էլեկտրիֆիկացվել է 1960 թ.: Ջրով ապահովված է:

Խնուշինակում 1873 թ. բացվել է ծխական դպրոց՝ 14 աշակերտով: 1905 թ. բացվել է երկսեռ դպրոց՝ 56 աշակերտով (այդ թվում 18 աղջիկ): Այժմյան դպրոցը 8-ամյա է, ունի 75 աշակերտ, աշխատում են 15 ուսուցիչ: Այստեղ 1890-ական թվականների սկզբներին կար 96 տուն, 810 բնակիչ, 1987 թ.՝ 151 տուն, 608 բնակիչ: Տները երկհարկանի և հարմարավետ են: Բնակիչները շատ աշխատասեր, հյուրասեր ու չափից ավելի պարզամիտ են: Բնակիչների կյանքի միջին տևողությունը 70—75 տարի է: Ճանապարհները բարեկարգ են: Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 210 մարդ, զոհվել է 116-ը, նրանց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը ամբողջապես հայաբնակ է:

Նգի

Գտնվում է Խոնաշեն գետի վերին հոսանքի անտառապատ լեռնալանջին: Դիրքը գեղատեսիլ է, գյուղը թաղված է պտղատու այգիների մեջ: Կլիման մեղմ է, ամառը՝ զով: Գյուղը շրջափակված է անտառածածկ լեռներով միայն հարավային ուղղությամբ, գետահովտով ելք ունի դեպի շրջկենտրոն, որից հեռու է 31 կմ: Գյուղի հյուսիս-արևմտյան մասը շրջափակում է Բովուրխան անտառածածկ սարը, որի լանջով անցնող ճանապարհով Նգի գյուղը կապվում է Ստեփանակերտի հետ: Հյուսիսային մասը շրջափակված է Ծառեխ սարով:

Նգի գյուղի պատմությունն սկսվում է 16-րդ դարի 2-րդ կեսից: Մինչ այդ այժմյան գյուղի հողատարածքում եղել են 12 փոքր բնակավայրեր՝ Եխծե հողը, Բյարգյուզանը, Արցաղբյուրը, Քոլատակը, Շենի առաջը, Օխն աղբյուրը, Ըլաջու ճուրը, Մկնակերը, Թանակ աղբյուրը, Գոմերի հովիտը, Թառանց տունը և Նիգ շենը: Հետագայում այս բնակավայրերը պաշտպանական նպատակով միավորվել են, և ստեղծվել է մեկ միասնական գյուղ՝ Նգի անվամբ:

Ավելի ուշ (18-րդ դարի վերջերին) Նգի գյուղի որոշ բնակիչներ տե-

ղափոխվել և մի քանի կիլոմետր դեպի հարավ գտնվող վայրում, հիմնադրել ու ստեղծել են Նգիջան կոչվող փոքր բնակավայրը: Ի դեպ, հենց այս բնակավայրի ծնունդ է ականավոր հեղափոխական Բոգդան Կնունյանցը:

Նգիում և նրա շրջակայքում կան պատմական բազմաթիվ հուշարձաններ, եկեղեցիների փլատակներ, սրբավայրեր, գերեզմաններ: Դրանցից հատկապես նշանավոր է Բովուրխան սարի վանքը, որը գտնվում է անտառներով շրջապատված փոքր հարթության վրա: Պահպանվում են վանքի փլատակները, խաչքարերը, շրջապատող պարսպի մնացորդները: Նյութական ապացույցները, տեղանքի դիրքը, ջրի առկայությունը ցույց են տալիս, որ Բովուրխանի (Մ. Բարխուդարյանցն անվանում է Բոդրխանի վանք) վանքի շրջակա տարածքը միաժամանակ բնակատեղի-ամրոց է եղել:

Գյուղի շրջակայքի պատմական կոթողներից են 8-րդ դարում կառուցված Եխծահողի վանքը, 19-րդ դարի սկզբներին կառուցված Գրիգոր Լուսավորչի վանքը, Ծառեխի մատուռը: Իսկ այժմյան Նգի գյուղում կա Ս. Աստվածածին մայր եկեղեցի, որը կառուցվել է 1858 թ.: Բացի դրանից, 1895 թ. եկեղեցի է կառուցվել Նգիջան փոքր բնակավայրում (այժմ այստեղ բնակիչ չկա):

Նգու տնտեսությունը մասնագիտացված է անասնապահության, այգեգործության, պտղաբուծության, հացահատիկի մշակության ուղղությամբ: Գյուղը հայտնի է իր անուշահամ պտուղներով, շրջակա անտառները հարուստ են հոնենու, մոշենու, տանձենու, խնձորենու և պտղատու այլ ծառատեսակներով ու թփուտներով:

19-րդ դարի 90-ական թվականների սկզբներին այստեղ եղել է 230 տուն, 1859 բնակիչ: Իսկ այժմ գյուղում կա 125 տուն, 464 բնակիչ:

Նգի գյուղում արական ծխական դպրոց է բացվել 1890 թ., իսկ 1908 թ. բացվել է երկսեռ դպրոց, որտեղ սովորում էին 38 տղա և 34 աղջիկ: Այժմ ունի 8-ամյա դպրոց, որտեղ սովորում են 70 աշակերտ, աշխատում են 13 ուսուցիչ: Գործում են ակումբ, գրադարան, ինչպես նաև Բոգդան Կնունյանցի տուն-թանգարանը: Էլեկտրիֆիկացվել է 1960 թ.: Բնակիչներն աշխատասեր և հյուրասեր են: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Գյուղի միջով անցնում է Մարտունի-Ստեփանակերտ ճանապարհը, որն անբարեկարգ է: Տները երկհարկանի ու բարեկարգ են, սակայն կան մեծ թվով տներ, որտեղ այժմ բնակվող չկա և անխնամ մնալու հետևանքով դառնում են կիսախարխուլ:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 230 մարդ, որոնցից 150-ը զոհվել է: Գյուղը ամբողջապես հայաբնակ է:

Հաղորտի

Տեղադրված է Ննգի գյուղից դեպի հարավ գտնվող թփուտածածկ լեռնապարի արևելահայաց լայնին: Ունի գեղատեսիլ դիրք, զով կլիմայական պայմաններ: Հեռավորությունը շրջկենտրոնից 22 կմ է, մարզկենտրոնից՝ 35 կմ:

Գյուղի շրջակայքում կան պատմական նշանավոր վայրեր: Հնում այս գյուղի բնակատեղին եղել է այժմյան բնակավայրից մոտ մեկ կմ դեպի հյուսիս-արևմուտք: Այժմյան Հաղորտի գյուղի մոտ եղել է ավելի քան 500 տարեկան մի չքնաղ թեղի ծառ (դժբախտաբար այն չորացել է), որի տակ եղել է մատուռ-աղոթատեղի: Բնակիչներն այստեղ հավաքվում մատաղ էին անում, աղոթում և դրանով այսպես կոչված «հաղորդվում» աստծո հետ: Այստեղից էլ առաջացել է գյուղի անվանումը («հաղորդի» բառը ձևափոխվել և դարձել է Հաղորտի): Գյուղում այժմ էլ կանգուն է Ս. Աստվածածին եկեղեցին: Նշանավոր են նաև Խաչին տակ, Նահատակ սրբավայրերը:

19-րդ դարի 90-ական թվականների սկզբներին այստեղ եղել է 136 տուն, 1132 բնակիչ: Այժմ այդ գյուղում կա 98 տուն, 313 բնակիչ: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ.: Այժմ միավորված է Մուշկապատի տնտեսության հետ: Զբաղվում են հացահատիկի մշակությամբ, խաղողագործությամբ և անասնապահությամբ:

1873 թ. այստեղ բացվել է դպրոց: 1888—89 ուս. տարում դպրոցն ունեցել է 27 աշակերտ, 1 ուսուցիչ: Այժմ Հաղորտու միջնակարգ դպրոցն ունի 47 աշակերտ, 14 ուսուցիչ: Դպրոցի շենքը հարմարություններ չունի: Գործում են ակումբ, գրադարան, բուժկետ, որոնք նույնպես զուրկ են նորմալ հարմարություններից: Էլեկտրիֆիկացվել է 1961 թ.: Տները երկհարկանի, թիթեղածածկ ու բարեկարգ են, սակայն կան շատ տներ, որոնք դատարկ են ու երկար ժամանակ անխնամ լինելու պատճառով խարխլվում են:

Գյուղն ունի խմելու ջրի մեկ աղբյուր: Ճանապարհներն անբարեկարգ են: Սոցիալական զարգացման հարցերը երկար ժամանակ անտեսվել են: Բնակիչներն աչքի են ընկնում աշխատասիրությամբ: Այս գյուղի ծնունդ է ՀԽՍՀ վաստակավոր ուսուցիչ Գ. Առուշանյանը: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Գյուղի շրջակայքում կան թթի ընդարձակ այգիներ: Անտառները հարուստ են պտուղներով և հատապտուղներով (մոշ, հոն, տանձ, խնձոր, տկողին և այլն):

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 350 մարդ, որոնցից 152-ը զոհվել է, նրանց հիշատակին կանգնեցվել է հուշարձան: Հաղորտին ամբողջապես հայաբնակ է:

Մուշկապատ

Գտնվում է Հաղորտի գյուղից 3—4 կմ դեպի հարավ-արևմուտք, բարձրադիր սարահարթի վրա: Բարձրադիր լինելու պատճառով այս գյուղը հաճախակի մառախլապատ է լինում, ծածկված մշուշով: Այսինքն մշուշապատ է լինում: Իսկ «մշուշապատ» բառն էլ ձևափոխվել և դարձել է Մուշկապատ:

Դիրքը գեղատեսիլ է, օդը զով, առողջարար: Պատմական վայրերից նշանավոր է Վարդան զորավարի մատուռ սրբավայրը: Կանգուն է գյուղի եկեղեցին, որը կառուցվել է 18-րդ դարում:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ. (այժմ միավորված է Հաղորտու հետ): Տնտեսությունը զարգանում է անասնապահության, հացահատիկային կուլտուրաների մշակության և խաղողագործության ուղղությամբ: Գյուղի ցածրադիր հողատարածություններում ընդարձակ թթաստաններ կան, այստեղի թութը քաղցր ու անուշահամ է: Գյուղը էլեկտրիֆիկացվել է 1961 թ.:

1906 թ. Մուշկապատում բացվել է երկսեռ դպրոց, որտեղ այդ թվականին սովորում էին 26 տղա և 6 աղջիկ: Այժմ այստեղ գործում է 8-ամյա դպրոց (տիպային շենքով), որտեղ սովորում են 69 աշակերտ, աշխատում են 16 ուսուցիչ:

19-րդ դարի 90-ական թվականների սկզբներին այստեղ կար 83 տուն, 827 բնակիչ: Այժմ Մուշկապատում կա 107 տուն, 378 բնակիչ: Գյուղում գործում է ակումբ, գրադարան, բուժկետ: Բնակիչներն աչքի են ընկնում աշխատասիրությամբ, հյուրասիրությամբ, ազնվությամբ: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Այս գյուղում է ծնվել գրող, պատմ. գիտ. դոկտոր Բագրատ Ուլուբաբյանը:

Շրջակայքում կան բազմաթիվ աղբյուրներ՝ Ծվեն ճուրը, Ծրվա ճուրը, Յուղուբեն աղբյուրը, Շրշռանը, Շխրին աղբյուրը: Նշանավոր են Թաքուն բաղը, Բուստանա ծմակը, Լոլունց ծմակը, Մանգունց բաղը, Մրալանց բաղը, Տժեր ծորը և այլ վայրեր:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 272 մարդ, որոնցից 127-ը զոհվել է: Գյուղն ամբողջապես հայաբնակ է:

Սպիտակաշեն

Անվանումն առաջացել է գյուղի շրջակայքում գտնվող սպիտակ գույնի քարի՝ կրաքարի համատարած շերտերի ու այդ քարով կառուցված տների գույնի պատճառով: Հեռվից էլ գյուղի ու շրջակայքի սպիտակ գույնը խիստ տպավորիչ է:

Հեռավորությունը շրջկենտրոնից 8 կմ է, մարզկենտրոնից՝ 68 կմ: Դիրքը գեղատեսիլ է, լեռնալանջի բարձրադիր մասը անտառածածկ է, գյուղը շրջապատված է պտղատու այգիներով: Գյուղատնտեսության հիմնական ուղղություններն են հացահատիկի մշակությունը, խաղողագործությունն ու անասնապահությունը: Կլիման մեղմ ու առողջարար է, ջրով լավ է ապահովված: Գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին պահպանվում է:

1890-ական թվականների սկզբներին այստեղ կար 70 տուն, 400 բնակիչ: Այժմ այստեղ կա 97 տուն, 378 բնակիչ: Դպրոցը 8-ամյա է, ոչ տիպային շենքով, սովորում է 63 աշակերտ, աշխատում է 15 ուսուցիչ: Գործում են մշակույթի տուն, գրադարան, բուժկետ, փոստ, հանդիսությունների տուն: Տները երկհարկանի են, թիթեղածածկ, հարմարավետ: Էլեկտրիֆիկացվել է 1961 թ.: Բնակիչներն աշխատասեր և հյուրասեր են: Գյուղն ամբողջապես հայաբնակ է:

Կաղարծի

Գտնվում է Մարտունուց 18 կմ դեպի արևմուտք: Ունի լեռնային դիրք: Անվան առաջացման մասին կա մի ավանդություն, որի համաձայն այդ բնակավայրի հիմնադրման ժամանակ, իբր մի կաղնու ծառի վրա երկար ժամանակ նստել է մի կաղ արծիվ: Ենթադրվում է, որ «կաղ արծիվ» կամ «կաղնու արծիվ» բառակապակցություններից էլ առաջացել է «Կաղարծի» անունը:

Պատմական նշանավոր շինությունը Թարգմանչաց եկեղեցին է: Պատմում են, որ մինչև 20-րդ դարի սկիզբը այստեղ հատուկ փայտե տուփի մեջ պահպանվում էր մի շատ հին արծաթե խաչ ու պատկերազարդ ավետարան: Այդտեղ եղած հիշատակարանում նշված էր, որ այդ ավետարանը Հովհաննես գրչի գործն է եղել, և որ Թորոս երեցը վեց հազար դահեկանով այն գնել է անօրենների ձեռքից և 1477 թ. բերել Արցախ:

Գյուղից մի փոքր դեպի հյուսիս, գեղատեսիլ բլրի վրա կա նաև մեկ այլ պատմական վայր, որը կոչվում է Մատթե ուխտատեղի:

Կաղարծու կոլտնտեսությունը միավորված է Պառավաթումբ գյուղի տնտեսության հետ և զբաղվում են հացահատիկի մշակությամբ, խաղողագործությամբ, անասնապահությամբ: Գյուղում կա 99 տուն, 301 բնակիչ (1987 թ.):

1873 թ. Կաղարծի գյուղում բացվել է դպրոց՝ 29 աշակերտով: Այժմ դպրոցը միջնակարգ է: Սովորում են 69 աշակերտ, աշխատում են 12 ուսուցիչ: Կառուցվում է դպրոցի նոր շենք: Գործում են ակումբ, գրադարան, բուժկետ: Էլեկտրիֆիկացվել է 1961 թ.:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 460 մարդ, որոնցից 123-ը զոհվել է, նրանց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Պառավաթումբ

Գտնվում է Մարտունուց 20 կմ դեպի արևմուտք, անտառածածկ լեռնաճյուղի վրա: Բարձրությունը ծովի մակերևույթից շուրջ 1000 մ է: Կլիմայական պայմանները բարեխառն են: Գյուղն ունի 300—350 տարվա պատմություն: Պահպանվում է գյուղի եկեղեցին և 1811 թ. կառուցված «Գրիգոր Լուսավորիչ» մատուռը:

Կոլտնտեսություն այստեղ կազմակերպվել է 1930 թ., իսկ 1950 թ. միավորվել է Կաղարծու տնտեսության հետ:

Պառավաթումբ գյուղում կա 51 տուն (1987 թ.), 153 բնակիչ: Գյուղի դպրոցը տարրական է, որտեղ սովորում են ընդամենը 9 աշակերտ, աշխատում են երկու ուսուցիչ: Այս գյուղից 32 աշակերտ սովորում են Կաղարծու միջնակարգ դպրոցում: Գործում է ակումբ, գրադարան, խանութ:

Տները երկհարկանի են բարեկարգ: Ապահովված է խմելու ջրով: Բնակիչներն աչքի են ընկնում աշխատասիրությամբ, հյուրասիրությամբ: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Այստեղ է ծնվել Խորհրդային Միության հերոս Իվան Շահումյանը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 108 մարդ, 46-ը՝ զոհվել է: Նրանց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Աշան

Գտնվում է Մարտունուց 26 կմ դեպի հյուսիս-արևմուտք: Հեռավորությունը Ստեփանակերտից 53 կմ է:

Բնակիչները հիմնականում տեղացիներ են, որոշ մասը տեղափոխվել է Ջրաբերդից: Գյուղի նախկին բնակատեղին եղել է լեռնալանջին: Սողանքների պատճառով 1960-ական թվականներից բնակիչներն իջել և նոր բնակավայր են հիմնել հարթավայրում: Հին բնակատեղին հայտնի է պատմական մի շարք վայրերով ու հուշարձաններով: Այստեղ կանգուն է Ս. Աստվածածին եկեղեցին, ինչպես նաև Կարմիր Ավետարան մատուռը: Գյուղից 3 կմ դեպի արևմուտք գտնվում է Ղուզե արտեր կոչվող բնակատեղին, որտեղ պահպանվել են շինությունների ավերակներն ու մեկ խաչքար: Պիծի լեռան վրա է Պիծի սրբավայրը: Նշանավոր են նաև Ավետարանը (Սվեգանց սուրբ), Ոսկե խաչը, Աշան բերդը, Ցեց քարը և այլ վայրեր: Աշանը լեռնային գյուղ է, կլիմայական պայմանները՝ նպաստավոր, օդն ու ջուրը՝ առողջարար: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ.: Զբաղվում են հացահատիկի մշակությամբ, խաղողագործությամբ և անասնապահությամբ:

1890-ական թվականների սկզբներին այստեղ կար 104 տուն, 685 բնակիչ: Այժմ Աշանն ունի 181 տուն, 576 բնակիչ:

1873 թ. բացվել է ծխական դպրոց, որն ուներ 31 աշակերտ: 1907 թ. բացվել է երկսեռ մեկդասյան դպրոց: 1915 թ. գյուղի դպրոցն ուներ 32 աշակերտ, 2 ուսուցիչ: Աշանի այժմյան միջնակարգ դպրոցն ունի 123 աշակերտ, 24 ուսուցիչ: Էլեկտրիֆիկացվել է 1960 թ.: Ճանապարհները խճապատ են: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Տները բարեկարգ են: Ջրով ապահովված է: Այս գյուղում են ծնվել կուսակցական ականավոր գործիչ Լևոն Միրզոյանը, Երևանի պետական համալսարանի անվանի պրոֆեսոր Աշոտ Մովսեսի Տեր-Մկրտչյանը (Աշոտ Մոիսևիչ):

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 480 մարդ, որոնցից 106-ը զոհվել է: Գյուղը հայաբնակ է:

Նոր-Շեն

Գտնվում է Մարտունուց 33 կմ դեպի հյուսիս-արևմուտք, Բովուրխան լեռնազանգվածից դեպի Մարտունի ձգվող լեռնաճյուղի արևելյան լեռնալանջին: Դիրքը գեղատեսիլ է, կլիմայական պայմանները, ջուրը, օդը՝ առողջարար: Շրջապատված է պտղատու այգիներով, թթաստաններով: Ստեփանակերտից հեռավորությունը 48 կմ է: Բնակիչները վերաբնակեցվել են տարբեր վայրերից, այդ թվում նաև այժմյան Ասկերանի շրջանի Նորագյուղից: Վերջինիս անունով էլ այն կոչվել է Նոր-Շեն: Կիսավեր վիճակում պահպանվում է Ս. Հովհաննես եկեղեցին:

1890-ական թվականների սկզբներին այստեղ եղել է 70 տուն, 477 բնակիչ, այժմ կա 123 տուն, 442 բնակիչ: Գյուղում ծխական դպրոց հիմնվել է 19-րդ դարի 70-ական թվականներին, որը 1881 թ. ունեցել է 45 աշակերտ, 1 ուսուցիչ: 1908 թ. գործել է երկսեռ դպրոց՝ 60 աշակերտով: Այժմյան դպրոցը 8-ամյա է: Ունի 49 աշակերտ, 14 ուսուցիչ: Դպրոցի շենքն ունի ժամանակակից հարմարություններ: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1939 թ., զբաղվում են հացահատիկի մշակությամբ, խաղողագործությամբ, անասնապահությամբ: Ունի մշակույթի տուն, հիվանդանոց, վարսավիրանոց, կար ու ձևի արհեստանոց: Տները երկհարկանի են, բարեկարգ, ապահովված են ջրով: Ճանապարհները ժամանակակից պայմաններին չեն համապատասխանում: Բնակիչների կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Կան 100-ից ավելի տարիք ունեցող երկու երկարակյաց: Այս գյուղում են ծնվել տնտեսագիտության դոկտոր Հրանտ Պողոսյանը, ՀԽՍՀ ժող. արտիստ Սողոմոն Սեյրանյանը, գրող Լեոնիդ Հուրունցը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 144 մարդ, 88-ը զոհվել է, նրանց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Հացի գյուղ

Գտնվում է Մարտունուց 34 կմ դեպի հյուսիս-արևմուտք: Հեռավորությունը Ստեփանակերտից 48 կմ է: Անվանումն առաջացել է հացահատիկի առատության շնորհիվ: Տեղադրված է Բովուրխանի լեռնազանգվածից դեպի Մարտունի ձգվող լեռնաճյուղի արևելահայաց լանջին, դիրքը գեղատեսիլ ու լեռնահովտային է, շրջապատված է այգեստաններով, թավ անտառներով. կլիման, օդը, ջուրը առողջարար են:

Պատմական նշանավոր գյուղերից է: Ղ. Աղայանի «Անահիտ» հեքիաթում նշվում է Հացիկ անունով: Այս բնակավայրի հետ է կապված Վաչագան Բարեպաշտ թագավորի (V դ.) ու նույն գյուղի աղջիկ՝ Անահիտի հանդիպման պատմությունը: Այն աղբյուրը, որտեղ տեղի է ունեցել հանդիպումը, այժմ էլ կոչվում է Անահիտի աղբյուր: Այս աղբյուրը Արցախի առավել նշանավոր պատմական հուշարձաններից է: Նրա գլխավերևում այժմ էլ պահպանվում է մի շքեղ, քանդակազարդ խաչքար: Իսկ խաչքարի մեծ խաչի թևերի տակ քանդակված են ոչ պակաս շքեղ երկու փոքր խաչքար: Խաչքարերը և պատմական աղբյուրը խնամքի խիստ կարիք ունեն:

Գյուղում և շրջակայքում կան եկեղեցական ու այլ պատմական հուշարձաններ: Գյուղի տարածքում է Ս. Աստվածածին եկեղեցին: Կան նաև այլ հին եկեղեցու փլատակներ և 13-րդ դարի խաչքար: Գյուղի եկեղեցու կառուցումը կապված է ամուսիններ Հարություն և Հուռի Մուսայելյանների հետ, որոնք երեխա ունենալու նպատակով իրենց միջոցներով կառուցել են այն և նվիրաբերել գյուղին: Առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում գյուղից ոչ մեծ հեռավորության վրա, Անահիտի աղբյուրի մոտ գտնվող եկեղեցական համալիրը: Այն հիմնականում բաղկացած է չորս եկեղեցիներից (12—13-րդ դդ.) ինչպես նաև բազմաթիվ այլ օժանդակ շինություններից: Այս եկեղեցիների համալիրը ժողովուրդն անվանում է «Բռի եղցի»: Համալիրի շրջակայքում գտնվող շինությունների փլատակներում պահպանվող շինաքարերի մշակման ձևերը, քանդակները, նախշերը, գերեզմանաքարերը ցույց են տալիս, որ այդտեղ ավելի վաղ ժամանակներում (սկսած 5-րդ դարից) եղել է ծաղկուն բնակավայր:

Հացի գյուղի պատմական նշանավոր շինություններից է նաև գյուղում մինչև այժմ էլ պահպանվող դպրոցի շենքը, որը 1911 թ. կառուցել են նույն գյուղացի ամուսիններ Ջվանշիր և Գյուլբահար Ղազյանները: Նրանց հայրենանվեր մեծագործությունը վառ է մնացել մինչև այժմ էլ: Դպրոցի շենքի պատին վիմափորված են հետևյալ սրտառուչ բառերը.



Բոի եղցու խաչքարերը (XIII դ.) Հացի գյուղում

Հայ մանուկներին.
Թող ձեր բերանում հնչեն դարեդար
Սահակ, Մեսրոպ մայրենի բարբառ
Սիրեցեք բարին, լույսը, գիտություն,
Որ տանում են մեզ դեպի փրկություն...
Նվիրեցին Հացի գյուղին Զվանշիր և Գիլբահար
Ղազիաններ 1911 թ.»:

19-րդ դարի 90-ական թվականների սկզբներին Հացի գյուղում եղել է 143 տուն, 995 բնակիչ: Այժմ այստեղ կա 88 տուն, 250 բնակիչ:

Գյուղում ծխական դպրոց հիմնվել է 19-րդ դարի 70-ական թվականների սկզբներին, որը ընդմիջումներով գործել է մինչև 1906 թ. հետո դարձել է երկսեռ դպրոց: Ղազյանների կառուցած դպրոցում 1915 թ. սովորում էին 44 աշակերտ: Այժմյան 8-ամյա դպրոցում (որը տեղավորված է 1911 թ. կառուցած շենքում) սովորում է 27 աշակերտ, աշխատում է 8 ուսուցիչ: Գյուղը հայաբնակ է:

Էմիշճան

Գտնվում է Մարտունուց 22 կմ դեպի հյուսիս-արևմուտք: Հեռավորությունը Ստեփանակերտից 53 կմ է: Գտնվում է գեղատեսիլ վայրում: Կլիման մեղմ է, շրջապատված է անտառներով: Հատկապես շատ են սզնի ծառերն ու թփուտները: Լեռնային գյուղ է, բարձրությունը ծովի մակերևույթից 1760 մ է:

Այժմյան գյուղն ունի 400—450 տարվա պատմություն:

Կլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ., իսկ 1962 թ. միավորվել է Ղզղալայի (այժմ Բերդաշենի) հետ: Տնտեսությունը մասնագիտացված է հացահատիկի մշակությամբ, խաղողագործությամբ, անասնապահությամբ: Այժմ գյուղում կա 47 տուն, 131 բնակիչ:

Դպրոցն 8-ամյա է, ունի 59 աշակերտ, 13 ուսուցիչ: Կա ակումբ, բուժկետ: Էլեկտրիֆիկացվել է 1960 թ.: Տները երկհարկանի են: Ճանապարհները խճապատ են: Բնակչությունը հայտնի է աշխատասիրությամբ, հյուրասիրությամբ: Կյանքի միջին տևողությունը 80—90 տարի է:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել են 125 մարդ, որոնցից զոհվել են 48-ը: Նրանց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Ավդուռ

Գտնվում է Մարտունուց 35 կմ դեպի հյուսիս-արևմուտք: Հեռավորությունը Ստեփանակերտից 48 կմ է: Ունի գեղատեսիլ դիրք, անտառապատ է: Կլիմայական պայմանները մեղմ են: Բարձրությունը ծովի մակերևույթից 700 մ է: Տեղումների քանակը տարեկան 600 մմ է:

Գյուղի պատմությունն սկսվում է 1740-ական թվականներից, բնակչության մի մասը եկել է Սյունիքից: Պահպանվում է Ս. Աստվածածին եկեղեցին (կառուցվել է 1814 թ., Սարգիսբեկ և Համբարձում Ղազյան եղբայրների կողմից):

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ.: Այժմ միավորված է Մյուրիշենի կոլտնտեսության հետ: Զբաղվում են անասնապահությամբ, պտղաբուծությամբ, խաղողագործությամբ:

19-րդ դարի 90-ական թվականների սկզբներին այստեղ կար 125 տուն, 847 բնակիչ, 1959 թ.՝ 98 տուն, 450 բնակիչ, 1970 թ.՝ 71 տուն, 300 բնակիչ, 1979 թ.՝ 50 տուն, 213 բնակիչ, 1987 թ.՝ 45 տուն, 122 բնակիչ: Գյուղում ծխական դպրոց է բացվել 1906 թ.: Այժմ ունի 8-ամյա դպրոց, 19 աշակերտ, 8 ուսուցիչ: Կա ակումբ, գրադարան, բուժկետ, վարսավիրանոց: Տները երկհարկանի ու հարմարավետ են: Խմելու ջրով ապահովված է: Բնակիչները հայտնի են աշխատասիրությամբ և հյուրասիրությամբ:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել են 112 մարդ, որոնցից զոհվել են 72-ը, նրանց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Մյուրիշեն

Գտնվում է Մարտունուց 42 կմ դեպի հյուսիս-արևմուտք: Հեռավորությունը Ստեփանակերտից 48 կմ է: Դիրքը լեռնային ու արևելահայաց է: Կլիմայական պայմանները մեղմ են, օդը և ջուրը՝ առողջարար:

Գյուղում պահպանվում է Ս. Աստվածածին եկեղեցին (18-րդ դ.), կան նաև 12—15-րդ դարերի գերեզմանաքարեր:

Կոլտնտեսությունը, որը միավորված է Ավդուռի տնտեսությանը, զբաղվում է հացահատիկի մշակությամբ, խաղողագործությամբ և անասնապահությամբ: 1890-ական թվականների սկզբներին այստեղ կար 31 տուն, 280 բնակիչ: Այժմ գյուղում կա 61 տուն, 187 բնակիչ: Ծխական դպրոց է բացվել 1870-ական թվականների սկզբներին (12 աշակերտով), իսկ 1906 թ. դարձել է երկսեռ դպրոց: Այժմյան դպրոցը 8-ամյա է, ունի 27 աշակերտ, 8 ուսուցիչ:



Բոի եղցու խաչքարերը (XIII դ.) Հացի գյուղում

Կա ակումբ, գրադարան, բուժկետ, կապի բաժանմունք: Էլեկտրիֆիկացվել է 1960 թ.: Ճանապարհներն անբարեկարգ են: Բնակիչների կյանքի միջին տևողությունը 68—70 տարի է:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 156 մարդ, որոնցից զոհվել է 82-ը, նրանց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

*

* *

Հայկական գյուղերից բացի Մարտունու շրջանում կա ադրբեջանական չորս գյուղ՝ *Ամիրալլար, Խոջավանդ, Ղարադաղլու և Մուղանլու:*

10. Հադրութի շրջան

Զբաղեցնում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հարավային մասը: Սահմանակից է Ադրբ. ԽՍՀ Ֆիզուլու, Ղուբաթլուի ու Զանգելանի շրջաններին:

Տարածքը 0,7 հազ. կմ² է, մակերևույթը լեռնային է: Ունի անտառածածկ գեղատեսիլ բնություն: Հանրաճանաչ դերասան Վահրամ Փափազյանը 1958 թ. եղել է Հադրութում և հմայված նրա գեղեցկությամբ ասել է. «Եթե Ղարաբաղը մի ոսկե մատանի է, ապա Հադրութը նրա ադամանդե ակն է»:

Այս շրջանի տարածքը հիմնականում համապատասխանում է պատմական Արցախի Դիզակի մելիքության տարածքին և աչքի է ընկնում հայկական պատմաճարտարապետական մեծ հետաքրքրություն ներկայացնող բազմաթիվ հուշարձաններով: Տարածքի գերակշռող մասի բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է 700—900 մ, ամենաբարձր կետը Դիզափայտ լեռան գագաթն է (2480 մ): Դիզափայտ լեռան լանջերը հայտնի են ոչ միայն անզուգական բնական գեղեցկություններով՝ բազմազան հոտավետ ծաղիկներով, բուսատեսակներով, ալպյան մարգագետիններով, անտառներով, զուլալ աղբյուրներով, այլև՝ պատմական հուշարձաններով, սրբավայրերով: Դիզափայտի «Սպիտակ տաճարը» հնագույն ուխտատեղի է: Շրջանի տարածքի զգալի մասը զբաղեցնում են թավ անտառները, որոնք հարուստ են բազմազան պտուղներով: Իսկ Քիրսի լեռնաշղթայի ու Դիզափայտ լեռան լանջերը անզուգական, ծաղկառատ, խոտառատ արոտավայրեր են:



Դիզափայտ լեռան տեսարանից

Լեռնային կտրտված մակերևույթի պատճառով դաշտավարության համար նպաստավոր հողատարածությունները քիչ են: Համեմատաբար նպաստավոր են այդ տեսակետից Իշխանագետի, Տող և Վարանդա (Քյոնդալան) գետերի հովրտները: Կլիման ընդհանուր առմամբ չոր մերձարևադարձային է: Տարեկան միջին ջերմաստիճանը ցածրադիր վայրերում + 12°C է, բարձրադիր վայրերում — 1°C: Հունվարյան միջին ջերմաստիճանը համապատասխանաբար — 6°C-ից մինչև — 10°C է, հուլիսյանը՝ + 12°C-ից մինչև 26°C: Տեղումների քանակը տարեկան 500—700 մմ է: Շրջանի բնակչության 82%-ը հայեր են (1987 թ.), մյուս մասը՝ ադրբեջանցիներ, ռուսներ և ուկրաինացիներ: Բնակչության խտությունը մեկ քառ. կմ-ի վրա 19 մարդ է: Շրջանում կա 42 բնակավայր, որոնք միավորված են 13 գյուղական և մեկ ավանային խորհուրդների մեջ:

Տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունն է: Մասնավորապես զարգանում են խոշոր եղջերավոր անասնապահությունը, խաղողագործությունը, պտղաբուծությունը և հացահատիկի մշակությունը:

Շրջանի բոլոր գյուղերը միավորված են խոշորացված 6 կոլտնտեսությունների ու 6 պետական տնտեսությունների մեջ: Այս հանգամանքը խիստ բացասաբար է անդրադառնում բնակավայրերի վրա, որոնց զգալի մասը դատարկվում է:

Հադրութի շրջանի տարածքում կան հայկական պատմաճարտարապետական 486 հուշարձան, որոնց մեծ մասը գիտաճանաչողական մեծ կարևորություն ունի: Դրանցից առավել հանրահայտ են Տողասարի լանջին գտնվող Գտիչ կամ Քթեշ վանքը (XIII դ.), Օխտը դռնի վանքը՝ Մոխրենես գյուղի մոտ (VII դ.), Տող գյուղի մոտ գտնվող Ս. Ստեփանոս, Ս. Հովհաննես եկեղեցիները, Մեծ Թաղլարի մոտ գտնվող Ճոխտ պռըվածառի վանքը, այդ գյուղի Ս. Ամենափրկիչ եկեղեցին, Դրախտիկ գյուղի մոտ գտնվող Գրիգոր Նարեկացի եկեղեցին, Ծակուռի գյուղի մոտ գտնվող Ծաղկավանքը, Հակակու գյուղի մոտ գտնվող Ս. Աստվածածին եկեղեցին, Խանձաձորի՝ Ս. Հովհաննես եկեղեցին, Թաղոտ գյուղի մոտ գտնվող Յոթ Խաչ վանքը, Դիզափայտի հուշարձանները և այլն: Եզակի հետաքրքրություն է ներկայացնում Ազոխ գյուղի մոտ գտնվող քարանձավային համալիրը, Իշխանագետի վրա կառուցված և մինչև այժմ գործող հնագույն կամուրջները, Թաղլարի մոտ գտնվող Ծծախաչ քարանձավը, Մամատաձոր գյուղից ոչ մեծ հեռավորության վրա գտնվող «Վնեսա ղալա» բերդը, Խծաբերդի մոտ գտնվող Բերդ-Քարայրը և շատ այլ հուշարձաններ:

Հադրութ

Համանուն շրջանի վարչական կենտրոնն է 1923 թվականից: Գտնվում է Ստեփանակերտից 50 կմ դեպի հարավ-արևելք: Տեղադրված է Դիզափայտի



Գտիչ վանքը (Գտչավանք, XIII դ.)

լեռնաճյուղերի գեղատեսիլ հովիտներից մեկում, այդ լեռնաճյուղերից սկիզբ առնող երկու գետակների միախառնման վայրում, որտեղից էլ առաջացել է բնակավայրի անվանումը:

«Հադրութ» բառը նշանակում է գետամեջ: Արցախի հնագույն բնակավայրերից է: Այդտեղ առկա քարե բազմաթիվ հուշարձաններ պատկանում են հեթանոսական, վաղ քրիստոնեության ու միջնադարյան շրջաններին:

Հադրութի կլիմայական պայմանները մեղմ մերձարևադարձային են, օդը՝ մաքուր, ջուրը՝ զուլալ: Ավանի կենտրոնում, Խոր աղբյուրի մոտ է Արցախի ամենատարեց սոսիներից (չինար) մեկը, որը շուրջ 800 տարեկան է: Այդ ծառը, ինչպես Սխտորաշենի 2010 տարեկան սոսին, միշտ դիտվել է որպես սուրբ ծառ:

Հադրութը հարավային, արևմտյան և հյուսիսային կողմերից շրջափակված է բարձր լեռներով, միայն արևելյան մասով ելք ունի դեպի Արցախի հարթավայր: Այդ հանգամանքը հնում շատ կարևոր դեր է խաղացել բնակավայրը թշնամիներից պաշտպանելու գործում:

Ինչպես վկայում է Մակար Բարխուդարյանցը, Հադրութի բնակիչների մի մասը բնիկ են, մյուս մասի նախնիները գաղթել են Ղազանչիից (Գողթն գավառից), Բարգուշատից, Ղարադաղից, Ցորից և Թիֆլիսից:

19-րդ դարի 90-ական թվականների սկզբներին Հադրութ ավանում եղել է 260 տուն, 1910 բնակիչ, այսինքն Արցախի ամենախոշոր բնակավայրերից մեկն է եղել, այդ պատճառով դեռ այն ժամանակ էլ անվանվել է ավան:

1987 թվականի տվյալներով Հադրութ քաղաքատիպ ավանում կար 1143 ընտանիք, 2396 բնակիչ: Բնակավայրը զգալիորեն ընդարձակվել է, կառուցվել են բազմահարկ պետական շենքեր: Այստեղ կան խաղողի նախնական վերամշակման գործարան, ծխախոտի, մորթեղենի, յուղի ընդունման կայաններ, կենցաղսպասարկման տաղավարներ: Ունի միջնակարգ երկու դպրոց, երկու գրադարան, մշակույթի տուն, կինոթատրոն, երաժշտական դպրոց, հիվանդանոց: Հադրութի պետական տնտեսությունը մասնագիտացված է հիմնականում խաղողագործության մեջ, զբաղվում է նաև հացահատիկային կուլտուրաների մշակությամբ, անասնապահությամբ: Բնակավայրը համարյա ամբողջապես հայաբնակ է:

Մեծ Թաղլար

Անվանումն առաջացել է «թաղեր» բառից: Տեղանքի խորդուբորդ, բլրածածկ լինելու պատճառով՝ տները կառուցվել են մեկը մյուսից կտրված՝ առանձին թաղերով, որոնք հետագայում միավորվել են և մեկ ընդհանուր

անունով կոչվել են Մեծ Թաղլար: Գտնվում է Հադրութ ավանից 14 կմ դեպի հյուսիս-արևմուտք, Իշխանագետի ձախափնյա անտառածածկ լեռնային գոգավորություններից մեկում: Դիրքը լեռնային է շրջապատված գեղատեսիլ անտառներով: Բարձրությունը ծովի մակերևույթից 1200 մ է: Օդը մաքուր է, ջրերը՝ զուլալ, գեղեցիկ են Քիրս և Դիզափայտ լեռները:

Այժմյան գյուղի պատմությունն սկսվում է 10-րդ դարից: Բազմիցս ենթարկվել է թաթար-մոնղոլների, թուրք-սելջուկների, իսկ ավելի վաղ՝ պարսիկների, արաբների հարձակումներին, բայց միշտ դիմադրել ու ամրակուռ է մնացել: Նրա հյուսիս-արևելյան մասում գտնվող բլրի լանջին է Մարխաթուն (Մայր Խաթուն) կամ ինչպես տեղացիներն են անվանում Մրխաթուն հնագույն մատուռը, որից ոչ հեռու համանուն պատմական աղբյուրն է: Ի դեպ, Մարխաթուն մատուռն այժմ էլ կանգուն է, սակայն մեծ հետաքրքրություն ներկայացնող այս հուշարձանը խիստ անխնամ է և անուշադրության մատնըված: Հենց այստեղ էլ տեղադրված է եղել հին պատմություն ունեցող Կաժ բնակավայրը: Այն բազմիցս ավերվել է պարսիկների կողմից, որի հետևանքով բնակիչները ստիպված հեռացել են: Հետագայում նրանք վերադարձել են ու բնակություն հաստատել հին բնակավայրից փոքր հեռավորության վրա գտնվող համեմատաբար ապահով վայրում: Սկզբում նոր բնակավայրը կոչվել է Նոր Թաղլար, հետագայում այն ընդարձակվել է, որի հետևանքով վերանվանվել և կոչվել է Մեծ Թաղլար:

Գյուղի շրջակայքում հայտնի են նաև Իշխանեցեք, Հանգած եխծեն, Մրընջող հնությունները, Օխչ կամ Օխչի բնակատեղին: Խիստ ուշադրության կարիք ունի գյուղի Ս. Ամենափրկիչ եկեղեցին, որը կառուցվել է 1846 թ.: Պահպանվել են գյուղի մոտակա գետակների վրա կառուցված հին կամուրջները:

Գյուղում 1987 թ. կար 507 տուն, 1595 բնակիչ:

Կոլտնտեսություն ստեղծվել է 1929 թ.: Մասնագիտացված է անասնապահության, հացահատիկի մշակության, խաղողագործության ուղղությամբ: Այժմ պետական տնտեսություն է: Գյուղում մեկդասյան դպրոց հիմնվել է 1875 թ., որը 1880 թ. դարձել է երկսեռ դպրոց: Այժմ միջնակարգ դպրոց է և ունի 369 աշակերտ, 33 ուսուցիչ: Ունի ակումբ, մշակույթի պալատ, հիվանդանոց, կապի բաժանմունք, վարսավիրանոց, բաղնիք, կար ու ձևի արհեստանոց, կոշկակարանոց: Տները երկհարկանի են, քարաշեն: Ջրով ապահովված է: Բնակիչներն աշխատասեր, հյուրասեր ու սրամիտ են:

Այս գյուղի ծնունդ են ավիացիայի մարշալ Արմենակ Խանփերյանցը (Խուդյակով), հեղափոխական գործիչ Կոլյա Դանիելյանը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 620 մարդ, որոնցից 297-ը զոհվել է: Նրանց հիշատակին կառուցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Հին Թաղլար

Անվան առաջացումը նույնն է ինչ-որ Մեծ Թաղլարինը: Հադրութի շրջանի հնագույն բնակավայրերից է: Քանի որ տեղանքի պատճառով տները կառուցվել են ցրված թաղամասերով, այդ պատճառով գյուղը գրավում է մեծ տարածություն: Տեղադրված է Դիզափայտ լեռան հարավ-արևմտյան լեռնաճյուղերից մեկի լանջին, բարձրությունը ծովի մակերևույթից 1500 մ է: Գտնվում է Հադրութից 25 կմ դեպի հարավ-արևմուտք: Ստեփանակերտից հեռավորությունը 125 կմ է: Շրջապատում պահպանվել են հին բնակավայրերի հետքեր, սրբավայրեր, գերեզմանաքարեր:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1931—32 թթ.: Գլխավոր ճյուղը անասնապահությունն է, զբաղվում են նաև դաշտավարությամբ: 1920 թ. ունեցել է 400 բնակիչ, 1987 թ. այստեղ կար 76 տուն, 198 բնակիչ: Դպրոց հիմնադրվել է 19-րդ դարի վերջերին, 1927 թ.-ից՝ միջնակարգ դպրոց է, 1959 թ. այստեղ սովորում էր 220 աշակերտ, իսկ այժմ ընդամենը՝ 27 աշակերտ: Ունի մշակույթի տուն, գրադարան, հիվանդանոց:

Էլեկտրիֆիկացվել է 1964 թ.: Տները երկհարկանի են: Լավ ապահովված է ջրով, ճանապարհներն անբարեկարգ են: Բնակիչներն աշխատասեր, հյուրասեր են, կյանքի միջին տևողությունը 80—85 տարի է, իսկ Նուբար Սավադյանը 106 տարեկան է: Գյուղի շրջակայքը գեղատեսիլ է, կան բազմաթիվ աղբյուրներ (Դերունց, Գլմանց, Շադունց, Ներքին թաղի), թավ անտառներ:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 220 մարդ, որոնցից 100-ը զոհվել է: Նրանց հիշատակին կառուցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Տող

Արցախ-Ղարաբաղի նշանավոր բնակավայրերից է: Անվանումն առաջացել է «դող» հասկացությունից: Ենթադրվում է, որ այդպես է կոչվել ակտիվ սեյսմիկ երևույթներից, հաճախակի կրկնվող երկրաշարժից՝ տեղանքը դող-դողալու պատճառով: Բացառված չէ, նաև որ թշնամիների դեմ ահարկու ազդեցություն, վախ ու դող առաջացնելու հետ լինի կապված այս բնակավայրի անվան առաջացումը: Առավել հին պատմություն ունեցող բնակավայրերից է և ամենաակտիվ դերն է խաղացել օտար բռնակալներից, հատկապես արաբական հարձակումներից Արցախը պաշտպանելու գործում:

Տողը անմատչելի բերդաքաղաք է եղել, որտեղ Դիզակի մելիքների նախաձեռնությամբ տեղի են ունեցել, ռազմական, հոգևորական, քաղաքական,

տնտեսական բնույթի ժողովներ, հավաքներ, միջոցառումներ: Ընդհուպ մինչև 20-րդ դարի սկիզբը Տողը բավական խոշոր բնակավայր է եղել, այդ պատճառով Մ. Բարխուդարյանցը դրան անվանել է ավան:

Կան 7-րդ դարից ու ավելի վաղ շրջանից եկող պատմական բազմաթիվ հուշարձաններ: Գյուղում այժմ էլ կանգուն է Ս. Հովհաննես եկեղեցին (1736 թ.): Գյուղից փոքր հեռավորության վրա է Ս. Ստեփանոս եկեղեցին (1747 թ.): Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Դիզակի մելիքների դամբարանը, նրանց պալատի ու պարիսպների դեռևս պահպանվող փլատակները, Անապատ կոչվող հնագույն գերեզմանոցը և այդտեղ գտնվող եկեղեցին, Բերդասարի վրա գտնվող՝ հուշարձանների պարիսպների բեկորները:

Գտնվում է Հադրութից 10 կմ դեպի հյուսիս-արևմուտք, Տող բերդասարի արևելահայաց լանջին: Բարձրությունը ծովի մակերևույթից 1200 մ է: Կլիմայական պայմանները մեղմ ու նպաստավոր են:

19-րդ դարի 90-ական թվականների սկզբներին այստեղ կար 280 տուն, 1460 բնակիչ: 1987 թ. գյուղն ուներ 396 տուն, 1421 բնակիչ: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1929 թ.: 1975 թվականից պետական տնտեսություն է: Հիմնական ճյուղերն են անասնապահությունն ու խաղողագործությունը: Էլեկտրիֆիկացվել է 1957 թ.: Ունի տեղարդկոմբինատ:

Այստեղ ծխական դպրոց է բացվել 1873 թ. (12 աշակերտով), 1906 թ. բացվել է երկսեռ դպրոց (70 աշակերտով): Այժմյան միջնակարգ դպրոցն ունի 383 աշակերտ, 56 ուսուցիչ: Գործում է մշակույթի տուն, հիվանդանոց (30 մահճակալով) կապի բաժանմունք, վարսավիրանոց, կոշկակարանոց, կար ու ձևի արհեստանոց, խանութներ: Տները երկհարկանի են, ճանապարհները՝ համեմատաբար բարեկարգ են: Բնակիչները բարի, սրամիտ ու հպարտ են: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Այստեղ են ծնվել Խորհրդային Միության հերոսներ Ա. Հայրյանն ու Վ. Տոնյանը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 530 մարդ, որոնցից 220-ը զոհվել է: Նրանց հիշատակին կառուցվել է հուշարձան: Գյուղում բացի հայերից բնակվում են նաև ադրբեջանցիներ:

Տումի

Գտնվում է Հադրութից 15 կմ դեպի հյուսիս-արևմուտք, Իշխանագետի վտակ Շնաքար գետակի ափին, Դիզափայտի ստորոտում: Բարձրությունը ծովի մակերևույթից ավելի քան 1000 մ է: Տեղանքը թեք է ու անտառապատ: Կլիման մեղմ է, օդը մաքուր, ջուրը զուլալ: Արցախի հնագույն գյուղերից է, որտեղ պահպանվել են V—XVIII դարերին պատկանող բազմաթիվ հուշարձան-

ներ: Առավել նշանավոր են Կարմիր եկեղեցին (X դար), Թագավորի պալատը (պահպանվում են այդ շինության ու պարսպի մնացորդները), Թագավորի գերեզմանը (այդպես է կոչվում նշված պալատի փլատակների մոտ գտնվող դամբարանային ավելի քան 2 մ երկարություն ունեցող տապանաքարը), Թագավորի աղբյուրը (այդպես է կոչվում գյուղի մոտ պահպանվող սառնորակ և ժամանակին սրբատաշ քարերով ձևավորված աղբյուրը):

Գյուղում կանգուն է Ս. Հովհաննես եկեղեցին (1868 թ.): Շրջակայքում պահպանվում են հին գյուղատեղին, ինչպես նաև եկեղեցիների, մատուռների, կամուրջների փլատակներ, գերեզմաններ: Հեռավորությունը Ստեփանակերտից 120 կմ է:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ., որը 1976 թ. դարձել է պետական տնտեսություն: Հիմնական ուղղություններն են անասնապահությունը, հացահատիկի մշակությունն ու այգեգործությունը (հատկապես խաղողագործությունը): Էլեկտրիֆիկացվել է 1957 թ.:

19-րդ դարի 90-ական թվականների սկզբներին գյուղն ուներ 120 տուն, 1033 բնակիչ, իսկ 1987 թ.-ին՝ 286 տուն, 847 բնակիչ: Ծխական դպրոց է բացվել 1903 թ., իսկ 1908 թ. այն դարձել է երկսեռ տարրական դպրոց, 1930 թվականից՝ ոչ լրիվ միջնակարգ դպրոց, 1938 թ.՝ միջնակարգ դպրոց, որտեղ այժմ սովորում են 150 աշակերտ, աշխատում են 23 ուսուցիչ: Դպրոցի շենքը նորակառույց է: Կա մշակույթի տուն, գրադարան, կինոտեղակայում, բուժկետ, վարսավիրանոց, կոշկակարանոց, կար ու ձևի արհեստանոց, կապի բաժանմունք: Տները երկհարկանի, բարեկարգ են: Ջրով ապահովված է: Հայտնի են Թագավորի, Սահակ, Նադար, Աքուտ աղբյուրները, «Թթու ջուր» հանքային աղբյուրը, Իքակ և Ալևորի կամուրջները, Իքակ, Շնաքար գետերը: Ճանապարհներն անբարեկարգ են: Բնակիչներն աշխատասեր, հյուրասեր և հպարտ են: Կյանքի միջին տևողությունը 70—75 տարի է, իսկ Հարություն Ավետիսյանը 102 տարեկան է, Մեսրոբ Սահյանը՝ 101 տարեկան: Այս գյուղում են ծնվել բանաստեղ Բոգդան Ջանյանը և բանասիրական գիտ. դոկտ. պրոֆ. Սերգեյ Աբրահամյանը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 400 մարդ, որոնցից զոհվել են 200-ը: Նրանց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Ազոխ

Գտնվում է Հադրութ ավանից 12 կմ դեպի հյուսիս-արևմուտք, համանուն սարի հարավ-արևելյան ստորոտում: Տեղադրված է Իշխանագետի ավազանին պատկանող ձորահովտում: Բարձրությունը ծովի մակերևույթից 700

մ է: Կլիման չորային է, ամռանը՝ նույնիսկ տոթ, սակայն օդը մաքուր է, ջուրը՝ զուլալ, բնությունը՝ գեղատեսիլ: Գյուղը շրջափակված է լեռներով: Ըստ ավանդության, Ազոխ անվանումն առաջացել է «չհասած» կամ «խակ խաղող» իմաստից:

Ազոխը մարդու հնագույն բնակատեղիներից մեկն է: Հնագիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում այդ գյուղի մոտ գտնվող քարանձավային համալիրը, որը բաղկացած է մեծ ու փոքր իրար հետ կապված բազմաթիվ սրահներից, զիգզագաձև անցուդիներից: Քարանձավի 6 դահլիճներից ամենամեծն ունի 3000 մ^2 տարածք: Նախամարդու այս մեծ հետաքրքրություն ներկայացնող քարանձավային բնակավայրը հանգամանորեն նկարագրված է Շ. Մկրտչյանի «Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները» (Երևան, 1985) գրքում: Ինչպես նշվում է, այստեղ հայտնաբերվել են երեք հարյուր հազար տարվա պատմություն ունեցող քարե գործիքներ, այդ ժամանակվա բուսական, կենդանական աշխարհի բրածո մնացորդներ, նախամարդու արվեստի հետքեր:

Մակար Բարխուդարյանցն իր «Արցախ» գրքում նշում է, որ Ազոխի արևելյան մասում կա «...մի խիստ խոր, խավարամած և միանգամայն ահարկու քարայր, որի մեջ մի կնոջ արձան, որը գրկած է մի մանուկ: Արձանը կոփված է քարից, կնոջ զգեստի տարազն ու գլխի շինության ձևը ներկայացնում են Արցախի կանանց հագուստների և փաթաթոցներով շինված գլուխների տիպը[1]»: Ազոխի քարանձավի նյութական մշակույթի մնացորդները ցույց են տալիս, որ հայերը այստեղի հնագույն և միակ բնիկ ժողովուրդն են:

Գյուղի շրջակայքում կան դամբարանների, եկեղեցական հուշարձանների, ամրոցների մնացորդներ: Գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1784 թ.: Շրջակայքում են գտնվում Ամարխաթունի վանքը, Ցից քար բերդը, Մելիք Սագամի պարիսպը:

Գյուղում կոլտնտեսություն կազմակերպվել է 1928—30 թթ.: Տնտեսությունը զբաղվում է հացահատիկային կուլտուրաների մշակությամբ, խաղողագործությամբ (ունի նաև թթենու ընդարձակ այգիներ), անասնապահությամբ: 1964 թ.-ից միավորված է Մեծ Թաղլարի տնտեսությանը:

1890-ական թվականների սկզբներին այստեղ կար 140 տուն, 807 բնակիչ, իսկ 1987 թ.՝ 240 տուն, 705 բնակիչ:

1895 թ. բացվել է երկսեռ, երկդասյան դպրոց, որը փակվել ու նորից բացվել է 1907 թ.: Այժմյան դպրոցը, 1968 թվականից միջնակարգ է, ունի 167 աշակերտ, 27 ուսուցիչ: Դպրոցի շենքը կառուցվել է 1932—33 թթ.:

---

[1] Մակար Բարխուդարյանց, «Արցախ» (Բաքու, 1895, էջ 88):

Գործում է մշակույթի տուն, գրադարան, բուժկետ, կապի բաժանմունք, խանութ, ճաշարան, վարսավիրանոց, կար ու ձևի արհեստանոց, կոշկակարանոց: Էլեկտրիֆիկացվել է 1961 թ.: Տները երկհարկանի են, հարմարավետ: Ջրով լավ չի ապահովված: Գյուղամիջյան և դրսի հետ կապող ճանապարհներն անբարեկարգ են: Բնակիչներն աշխատասեր և հյուրասեր են: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Այս գյուղում են ծնվել գեներալներ Սերգեյ Սարդարյանը, Սուրեն Աղաջանյանը, տեխն. գիտ. դոկտորներ Սերգեյ Բաղդասարյանը և Արամ Աղաջանյանը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 172 մարդ, զոհվել է 99-ը: Նրանց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Տրախտիկ (Դրախտիկ)

Ունի գեղատեսիլ դիրք, մաքուր օդ, զուլալ ջրեր՝ իսկական դրախտավայր է: Այստեղից էլ՝ անվան առաջացումը: Գտնվում է Հադրութից 12 կմ դեպի հյուսիս, Քիրսի լեռնաճյուղերից մեկի արևելահայաց լանջին: Գյուղի պատմությունն սկսվում է 16-րդ դարից: Սկզբնական շրջանում բնակավայրը բարձր լեռնալանջային մասում էր, հետագայում բնակիչներն իջել ու համեմատաբար հարթ վայրում են բնակություն հաստատել: Շրջակայքում կան պատմական հուշարձաններ, բնակատեղիների մնացորդներ: Գյուղի մոտ գըտնըվող բլրի վրա «Վերին շեն» կոչվող նախկին բնակավայրի մոտ է Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցին (կիսափլված վիճակում): Գյուղի շրջակայքի պատմական վայրերից նշանավոր են նաև Կախան և Քաշին քար ուխտատեղիները:

1890-ական թվականների սկզբներին այս գյուղում կար 47 տուն, 252 բնակիչ, իսկ 1987 թ.՝ 135 տուն, 242 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1928—30 թթ., հիմնական ճյուղը խաղողագործությունն է, այնուհետև բանջարաբուծությունը: Էլեկտրիֆիկացվել է 1958 թվականին: Դպրոցը 8-ամյա է: Ունի 80 աշակերտ, 15 ուսուցիչ: Գյուղն ունի գրադարան, մշակույթի տուն, բուժկետ, վարսավիրանոց: Տները հիմնականում երկհարկանի են, բարեկարգ: Բնակիչներն աշխատասեր, հյուրասեր են, կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 120 մարդ, որոնցից 60-ը զոհվել է: Նրանց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Խծաբերդ

Գտնվում է Հադրութի շրջանի արևմտյան մասում, շրջկենտրոնից՝ 25 կմ հեռավորության վրա: Գյուղը բոլոր կողմերից շրջափակված է լեռնաբլուրներով, որոնցից յուրաքանչյուրը հետաքրքիր պատմություն ունի: Ըստ ժողովրդական ավանդության, գյուղի անվանումն առաջացել է «Օձաբերդ» բառից, որը ձևափոխվել և դարձել է Խծաբերդ: Սակայն առավել հավանականն այն է, որ առաջացած լինի «խցաբերդ» (լեռների մեջ խցկված բերդ) իմաստից: Գյուղի շրջակայքում կան ամրոցների, բնակատեղիների, եկեղեցական շինությունների մնացորդներ: Նշանավոր են Սլկիան սարի, Սուրբ խութի բնակատեղիները, Հազարափրկիչը (Շ. Մկրտչյան, «Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները», Երևան 1985, էջ 126): Գյուղի եկեղեցին կիսավեր է, կառուցվել է 1836 թ.: 1987 թ. գյուղում կար 52 տուն, 154 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1932 թ.: Գյուղատնտեսության հիմնական ուղղությունը անասնապահությունն է, մասամբ՝ դաշտավարությունը: 1880 թ. այստեղ բացվել է ծխական երկսեռ դպրոց, որն ուներ 39 աշակերտ: Այժմյան դպրոցն ութնամյա է, ունի 19 աշակերտ, 7 ուսուցիչ: Կա ակումբ, բուժկետ, կապի բաժանմունք, վարսավիրանոց: Էլեկտրիֆիկացվել է 1969 թ.: Տները երկհարկանի են: Գյուղը ջրով ապահովված է, ունի զուլալ շատ աղբյուրներ: Բնակիչները հյուրասեր են, աշխատասեր, սրամիտ: Կյանքի միջին տևողությունը 85—90 տարի է: Այս գյուղում է ծնվել բանաստեղծ Արտաշես Պողոսյանը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 155 մարդ, զոհվել է 84-ը: Զոհվածների հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Խանձաձոր (Աղաջաբենդ)

Գտնվում է Հադրութից 15 կմ դեպի հարավ-արևմուտք: Անվանումը կապված է տեղանքի խիստ չորային, արևից խանձված լինելու հետ: Գյուղամիջին գտնվող աղբյուրի մոտ կա մի հսկա թեղի ծառ, որը շրջապատի նկատմամբ իշխող և ցայտուն արտահայտվող տպավորություն է թողնում: Դրանից ելնելով, օտարազգի բնակիչները հայկական այս գյուղն անվանել են Աղաջաբենդ, այսինքն ծառաշեն:

Բարձրությունը ծովի մակերևույթից 1400 մ է, բարձր դիրք ունենալու պատճառով այստեղ խաղող դժվար է աճում: Հին բնակավայր է, ժամանակի

արհավիրքներից խիստ տուժած, դեռ պահպանվում է Ս. Հովհաննես եկեղեցին (կառուցված 699 թ.): Շրջակա վայրերում կան հին բնակատեղիների, սրբավայրերի, կառույցների մնացորդներ: Դիզափայտ լեռան վրա, որի ստորոտում է գյուղը, պահպանվել են 9-րդ դարում արաբների կողմից ավերված ամրոցի (ղալա) մնացորդները:

1987 թ. գյուղում կար 54 տուն, 150 բնակիչ: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1931—32 թթ., հիմնական ուղղությունը անասնապահությունն է: Էլեկտրիֆիկացվել է 1964 թ.:

Այստեղ ծխական երկսեռ դպրոց է բացվել 1908 թ.: Այժմ դպրոցն ութամյա է, ունի հարսարավետ շենք: Սովորում է 25 աշակերտ, աշխատում է 8 ուսուցիչ: Գործում է ակումբ, գրադարան, բուժկետ: Տները երկոարկանի են, հարմարավետ: Ճանապարհներն անբարեկարգ են: Բնակիչներն՝ աշխատասեր, հյուրասեր են: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Իսկ Սամսոն Քոլյանն ավելի քան 100 տարեկան է: Այս գյուղում են ծնվել հեղափոխականներ Սաքո Համբարձումյանը, Միքայել Մանվելյանը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 91 մարդ, զոհվել է 48-ը: Նրանց հիշատակին հուշարձան է կանգնեցված: Գյուղը հայաբնակ է:

Առաքյուլ (Առաքյալ)

Գտնվում է Հադրութից 19 կմ դեպի հարավ: Հեռավորությունը Ստեփանակերտից 125 կմ է: Այժմյան գյուղի պատմությունն սկսվում է 18-րդ դարից: Հին Առաքյուլ գյուղը գտնվում էր նոր բնակավայրից մի փոքր արևմուտք, որտեղ պահպանվում են բնակատեղի մնացորդները՝ գերեզմանոցը, Անապատ կոչվող եկեղեցավայրը: Գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1745 թ. և կանգուն է, մեծ հետաքրքրություն ներկայացնող կոթող է: 1890-ական թվականների սկզբներին այստեղ կար 90 տուն, 672 բնակիչ, 1987 թ.՝ 70 տուն, 253 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1931 թ.: Զբաղվում են դաշտավարությամբ, խաղողագործությամբ, անասնապահությամբ:

Գյուղում 1890 թ. բացվել է ծխական դպրոց, որը հետագայում փակվել է և վերաբացվել՝ 1906 թ.: 1908 թ. դպրոցը դարձել է երկսեռ: Այժմյան դպրոցն ութամյա է, ուր սովորում է 38 աշակերտ, աշխատում է 15 ուսուցիչ: Ունի մշակույթի տուն, գրադարան, հիվանդանոց (15 մահճակալով), խանութ, վարսավիրանոց: Էլեկտրիֆիկացվել է 1928 թ.: Տները երկհարկանի, բարեկարգ են: Բնակիչներն աշխատասեր, սրամիտ և հյուրասեր են: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Օգտվում է քյահրիզ կոչվող աղբյուրներից, զուրկ է անտառներից, կլիման շոգ է:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 360 մարդ, որոնցից 96-ը զոհվել է: Նրանց հիշատակին կառուցվել է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Բանազուր

Գտնվում է Հադրութից 12 կմ դեպի հարավ: Հեռավորությունը Ստեփանակերտից 120 կմ է: Տեղադրված է լերկ լեռնալանջի վրա, կլիման չորային է, բուսականությունն աղքատ, ջուրը՝ ոչ այնքան որակով: Գյուղը կոչվել է նաև Բանաձոր, Վանազուր: Նշանավոր է գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, որը կառուցվել է 1858 թ.: Այժմ վերանորոգման խիստ կարիք ունի: 1890-ական թվականների սկզբներին այստեղ կար 150 տուն, 1005 բնակիչ, իսկ 1987 թ.՝ 105 տուն, 298 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930—32 թթ.: 1977 թ. դարձել է պետական տնտեսություն, զբաղվում են հացահատիկի մշակությամբ, խաղողագործությամբ ու անասնապահությամբ: Առավել նշանավոր է խաղողագործությունը:

Ծխական դպրոց բացվել է 1873 թ., որը հետագայում փակվել և վերաբացվել է 1895 թ.: 1906 թ. դարձել է երկսեռ դպրոց և ունեցել է 78 աշակերտ:

Այժմ ունի միջնակարգ դպրոց (1925 թվականից), սովորում է 49 աշակերտ, աշխատում է 17 ուսուցիչ: Կա մշակույթի տուն, բուժկետ, կապի բաժանմունք, խանութ: Էլեկտրիֆիկացվել է 1939 թ.: Տները երկհարկանի ու հարմարավետ են: Բնակիչներն աշխատասեր, սրամիտ և հյուրասեր են: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Այս գյուղում է ծնվել նշանավոր քանդակագործ Սարգիս (Սերգեյ) Բաղդասարյանը: Գյուղը սակավաջուր է:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 229 մարդ, որոնցից 144-ը զոհվել է: Նրանց հիշատակին կառուցվել է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Քոչբեկ

Գտնվում է Հադրութից 2—3 կմ դեպի հյուսիս: Ենթադրվում է, որ գյուղի անվանումը կապված է Խաչենի մելիքությունից այստեղ տեղափոխված (քոչած) և գյուղը հիմնադրած երեք հարուստ ընտանիքների՝ բեկերի հետ: Գյուղի պատմությունն սկսվում է 18-րդ դարի սկզբներից: Կլիմայական պայմանները բարենպաստ են: Նոր գյուղը տեղադրված է Արևասար և Խոտհատ

սարերի միջև: Պատմական հուշարձաններից նշանավոր է գյուղի Ս. Հարություն եկեղեցին, որը կառուցվել է 1741 թ. և կանգուն է: 1890-ական թվականների սկզբներին այստեղ կար 25 տուն, 135 բնակիչ, 1987 թ.՝ 89 տուն, 331 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1928—31 թթ., որը 1951 թ. միավորվել է Հադրութի կոլտնտեսությանը: Այժմ միացյալ պետական տնտեսություն է: Զարգացած է խաղողագործությունը: Գյուղի դպրոցը 8-ամյա է, ունի 42 աշակերտ, շենքը հարմարավետ է: Բացի խանութից այլ սպասարկման օբյեկտներ չկան (հավանաբար, պատճառը շրջկենտրոնին շատ մոտ լինելն է): Էլեկտրիֆիկացվել է 1950-ական թվականներին: Տները նորակառույց են, երկհարկանի, լավ ապահովված է խմելու ջրով: Բնակիչները հայտնի են աշխատասիրությամբ: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 70 մարդ, որոնցից 36-ը զոհվել է: Նրանց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Թաղասեռ (Թաղասեր)

Գտնվում է Հադրութից 1,5—2,0 կմ դեպի արևմուտք: Արցախի հին բնակավայրերից է (10-րդ դար), ունի բնական բարենպաստ պայմաններ: Շրջակայքում կան պատմական հուշարձաններ՝ Ս. Աստվածածին եկեղեցու փլատակները (17-րդ դ.), հին բնակատեղիների հետքեր, շինությունների մնացորդներ:

1890-ական թվականների սկզբներին այստեղ կար 110 տուն, 1160 բնակիչ, 1987 թ.՝ 162 տուն, 502 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ.: Զբաղվում են դաշտավարությամբ, խաղողագործությամբ, անասնապահությամբ: Դպրոցն ութամյա է, ունի 76 աշակերտ, 20 ուսուցիչ: Գործում են՝ մշակույթի տուն, խանութ, բուժկետ, գրադարան, վարսավիրանոց: Էլեկտրիֆիկացվել է 1958 թ.: Տները երկհարկանի, բարեկարգ են: Ապահովված է ջրով: Ճանապարհներն ու փողոցներն անբարեկարգ են: Բնակիչներն աշխատասեր և սրամիտ են: Կյանքի միջին տևողությունը 85—90 տարի է:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 181 մարդ, զոհվել է 94-ը: Նրանց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Էդիլլու

Գտնվում է Հադրութից 10 կմ դեպի հյուսիս-արևելք, հեռավորությունը Ստեփանակերտից 100 կմ է: Բնական պայմանները բարենպաստ են: Այժմյան գյուղի պատմությունն սկսվում է 17-րդ դարի սկզբներից: Պատմական նշանավոր հուշարձանը գյուղի եկեղեցին է, որը կառուցվել է 1671 թ. և այժմ նորոգման կարիք ունի: 1987 թ. գյուղում կար 170 տուն, 490 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1931 թ.: 1975 թվականից պետական տնտեսություն է: Զարգացած է խաղողագործությունը, զբաղվում են նաև բանջարաբուծությամբ և անասնապահությամբ:

Այստեղ ծխական դպրոց է հիմնադրվել 1913 թ.: Այժմ միջնակարգ է, ունի 220 աշակերտ: Դպրոցի շենքը նոր է և հարմարավետ: Գործում է մշակույթի տուն, հիվանդանոց՝ 25 մահճակալով, կապի բաժանմունք, գրադարան, վարսավիրանոց: Էլեկտրիֆիկացվել է 1961 թ.: Տները հիմնականում երկհարկանի են, հարմարավետ: Ջրով ապահովված է: Ճանապարհներն ու գյուղամիջյան փողոցները բարեկարգ չեն: Բնակիչները հայտնի են աշխատասիրությամբ ու սրամտությամբ: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է, իսկ Աբգար Բաղդասարյանը և Զառի Պետրոսյանը ավելի քան 100 տարեկան են:

Հայրենական մեծ պատերազմում զոհված մարտիկների հիշատակին կանգնեցված է հուշարձան:

Արփագյադուկ

Գտնվում է շրջանի արևմտյան ծայրում, Հադրութից 30 կմ դեպի արևմուտք, հեռավորությունը Ստեփանակերտից 130 կմ է: Գյուղի պատմությունն սկսվում է 18-րդ դարի սկզբներից: 1987 թ. այստեղ կար 7 տուն, 33 բնակիչ: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1934 թ.: Զարգացած է անասնապահությունը, զբաղվում են նաև դաշտավարությամբ: Դպրոց հիմնադրվել է 1921 թ.: Սկզբում եղել է տարրական, իսկ 1954 թվականից՝ ութամյա, որը 1973 թ. փակվել է աշակերտներ չլինելու պատճառով: Կա բուժկետ, գրադարան: Էլեկտրիֆիկացվել է 1964 թ.: Տները հիմնականում միհարկանի են: Ճանապարհները շատ վատ վիճակում են: Բնակիչներն աշխատասեր և հյուրասեր են: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Այստեղ է ծնվել «Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները» (1985 թ., Երևան) գրքի հեղինակ Շահեն Մկրտչյանը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 72 մարդ, զոհվել է 35-ը, հուշարձան դեռևս չի կառուցվել:

Աղբուլաղ

Գտնվում է Հադրութից 10 կմ դեպի հյուսիս-արևելք: Հեռավորությունը Ստեփանակերտից՝ 95 կմ: Այսպես է կոչվել գյուղի արևելյան մասում, անտառի մեջ գտնվող աղբյուրի անունով, որը կոչվում է «սպիտակ աղբյուր»

(աղ բուլաղ): Գյուղի առաջին բնակիչները (ութ ընտանիք) 1828 թ. եկել են Ղարադաղից (Պարսկաստանից):

Գյուղը տեղադրված է Արևասար լեռան ստորոտում: Տեղանքն անտառապատ է, կլիմայական պայմանները՝ մեղմ: 1866 թ. կառուցվել է եկեղեցի (Ս. Աստվածածին), որն այժմ քանդված է, գտնվում էր ներկայիս ակումբի տեղում:

1890-ական թվականների սկզբներին այստեղ կար 32 տուն, 232 բնակիչ, իսկ 1987 թ. կար 93 տուն, 270 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1929—30 թթ., հիմնականում զբաղվում են խաղողագործությամբ: Դպրոցն 8-ամյա է, շենքը նորակառույց՝ ունի բոլոր հարմարությունները: Դպրոցն ունի գյուղի պատմության թանգարան: Այստեղ սովորում է 41 աշակերտ, աշխատում է 10 ուսուցիչ: Գործում է ակումբ, վարսավիրանոց: Էլեկտրիֆիկացվել է 1960 թ.: Գյուղի հին թաղամասի տները միհարկանի են, նոր թաղամասինը՝ երկհարկանի: Ջրով ապահովված է: Ճանապարհներն անբարեկարգ են: Բնակիչներն աշխատասեր են: Այս գյուղում են ծնվել գրող Սոկրատ Խանյանը և բժշկական գիտ. դոկտոր Վլադիմիր Հովսեփյանը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 128 մարդ, զոհվել է 64-ը, որոնց հիշատակին կառուցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Բլութան (Պլըթան)

Գտնվում է Հադրութից 8 կմ դեպի հյուսիս-արևելք, հեռավորությունն Ստեփանակերտից 108 կմ է: Անվան առաջացումը հավանորեն կապված է թանառատության ու դրանից չորաթանաբլիթների պատրաստման հետ: Իսկ դա էլ խոսում է այն մասին, որ հնուց այս բնակավայրում տնտեսության կարևոր զբաղմունքներից մեկը կաթնատու անասնապահությունն է եղել:

Գյուղի պատմությունն սկսվում է 16-րդ դարից: 1890-ական թվականների սկզբներին այստեղ կար 20 տուն, 160 բնակիչ, 1987 թ.՝ 46 տուն, 149 բնակիչ: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ., տնտեսության հիմնական ուղղությունները հողագործությունն ու անասնապահությունն են (կաթնատու անասնապահություն, խոզաբուծություն):

Այժմյան դպրոցն ութամյա է, ունի ընդամենը 12 աշակերտ: Գործում է ակումբ, գրադարան, կապի բաժանմունք, կոշկակարանոց: Էլեկտրիֆիկացվել է 1962 թ.: Տները երկհարկանի են: Ջրով ապահովված է: Ունի եկեղեցի (Ս. Ստեփանոս), որը խարխուլ է: Բնակիչներն աշխատասեր, համեստ և հյուրասեր են: Կյանքի միջին տևողությունը 85—90 տարի է:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 90 մարդ, զոհվել է 45-ը, նրանց հիշատակին կառուցվել է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Խրմանջուղ

Գտնվում է Հադրութից 12 կմ դեպի հյուսիս-արևելք, Ստեփանակերտից 122 կմ հեռավորության վրա: Անվանումը հայերեն «կալատեղ» բառի օտար թարգմանությունն է: Դիրքը լեռնային է, կլիման՝ մեղմ: 1890-ական թվականների սկզբներին այստեղ կար 40 տուն, 310 բնակիչ, 1987 թ.՝ 17 տուն, 46 բնակիչ (1959 թ. կար 49 տուն, 200 բնակիչ): Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ., այժմ միավորվել է Բլութանի տնտեսության հետ: Զարգացած է խաղողագործությունը: Դպրոցը փակված է: Գործում է գրադարան: Էլեկտրիֆիկացվել է 1962 թ.: Տները երկհարկանի են: Ջուրը չի բավարարում: Ճանապարհներն անբարեկարգ են: Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 90 մարդ, զոհվել է 45-ը, որոնց հիշատակին կառուցվել է հուշարձան: Եկեղեցին (Ծաղկավանք) կառուցվել է 1830 թ., կարիք ունի վերանորոգման: Գյուղը հայաբնակ է:

Հախուլլու

Գտնվում է Հադրութից 13 կմ դեպի հյուսիս-արևելք, հեռավորությունը Ստեփանակերտից 120 կմ է: Տեղադրված է Արևասարի լանջին: Գյուղի պատմությունն սկսվում է 19-րդ դարի սկզբներից: 1987 թ. սկզբին այստեղ կար 178 տուն, 585 բնակիչ: Տնտեսությունը մասնագիտացված էր խաղողագործության և հացահատիկային կուլտուրաների մշակման ուղղությամբ:

1913 թվականին բացվել է ծխական դպրոց: Այժմ դպրոցը միջնակարգ է, տեղավորված է նորակառույց հարմարավետ շենքում, ունի 224 աշակերտ: Կա ակումբ, գրադարան, հիվանդանոց: Տները հիմնականում երկհարկանի են: Ճանապարհներն անբարեկարգ են: Այս գյուղում է ծնվել բժշկական գիտությունների դոկտոր Կոլյա Միրզոյանը:

Մոխրենես

Արցախի հնագույն բնակավայրերից է: Պատմությունն սկսվում է IV դարից: Գտնվում է Հադրութից 11 կմ հյուսիս-արևմուտք, արևելահայաց լեռ-

նալանջի վրա: Կլիմայական պայմանները, օդը, ջուրը պատվական են: Ըստ ավանդության բնակավայրի անվանումն առաջացել է Մուխան և Վանես հիմնադիրների անունների կրճատ միացումից, որը հետագայում որոշ ձևափոխման է ենթարկվել:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1929 թ., հետագայում՝ 1975 թվականից դարձել է պետական տնտեսություն: Զարգացած է խաղողագործությունը և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությունը:

1890-ական թվականների սկզբներին այստեղ կար 40 տուն, 350 բնակիչ, իսկ 1987 թ.՝ 72 տուն, 311 բնակիչ: Դպրոցն ութամյա է, ունի ընդամենը 26 աշակերտ, 8 ուսուցիչ: Գործում է մշակույթի տուն, բուժկետ, խանութ, գրադարան: Տները երկհարկանի են: Պահպանվել է Ս. Սարգիս եկեղեցին: Բնակիչներն աշխատասեր ու հյուրասեր են: Կյանքի միջին տևողությունը 80—85 տարի է:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 184 մարդ, զոհվել է 63-ը, նրանց հիշատակին կառուցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Մամատաձոր

Գտնվում է Հադրութից 12 կմ դեպի հյուսիս, մի գեղատեսիլ գոգավորությունում: Գոգավորության երկու լանջերին տեղադրված թաղամասերն իրար են միանում 13-րդ դարում կառուցված կամրջով, որը և հաստատում է բնակավայրի հին պատմության փաստը: Տեղադրված է Արևասար լեռան ցածր լանջին, կլիմայական պայմանները մեղմ են, բարձրությունը ծովի մակերևույթից 726 մ է: Գյուղը շրջապատված է անտառներով և պտղատու այգիներով: Գյուղում և շրջակայքում կան հնագույն պատմական նշանակություն ունեցող կառույցներ, վայրեր: Պահպանվել է 17-րդ դարի սկզբներին կառուցված Սուրբ Մինաս եկեղեցին: Նշանավոր է Մարիամ աղբյուրը, որը խնամքով պահպանվում է որպես սրբավայր:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1929 թ.: Այժմ միավորված է Տողի պետական տնտեսությանը: Հիմնականում զբաղվում են հացահատիկի մշակությամբ, այգեգործությամբ և անասնապահությամբ:

1890-ական թվականների սկզբներին այստեղ կար 33 տուն, 227 բնակիչ, 1987 թ.՝ 81 տուն, 232 բնակիչ: Դպրոցն ութամյա է, ունի 41 աշակերտ, 12 ուսուցիչ: Գործում են՝ գրադարան, կապի բաժանմունք, բուժկետ, վարսավիրանոց, խանութ: Էլեկտրիֆիկացվել է 1963 թ.: Տները երկհարկանի են: Փողոցներն ու ճանապարհները բարեկարգ են: Բնակիչներն աշխատասեր ու հպարտ են: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Ջրով լավ է ապահովված:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 109 մարդ, զոհվել է 35-ը, նրանց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Մելիքջանլու

Գտնվում է Հադրութից 12 կմ դեպի արևելք, հարավահայաց լեռնալանջի վրա, հեռավորությունը Ստեփանակերտից 92 կմ է: Անվանումն առաջացել է նրա հիմնադիր բնակիչներից մեկի՝ հսկայամարմին Մելիքի անունից: Կլիմայական պայմանները բարենպաստ են, օդը՝ մաքուր, ջուրը՝ զուլալ, բարձրությունը ծովի մակերևույթից շուրջ 1000 մ է: 1890-ական թվականների սկզբներին այստեղ կար 32 տուն, 287 բնակիչ, 1987 թ.՝ 24 տուն, 56 բնակիչ:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ.՝ այժմ միավորված է Բլութանի տնտեսությանը: Տնտեսության հիմնական ուղղությունը խաղողագործությունն է: Գյուղում այժմ դպրոց չկա, գործում է ակումբ, գրադարան: Էլեկտրիֆիկացվել է 1962 թ.: Եկեղեցին կանգուն է, կառուցվել է 19-րդ դարի 60-ական թվականներին: Տները երկհարկանի են: Ճանապարհներն անբարեկարգ են: Բնակիչներն աշխատասեր և սրամիտ են: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Գյուղը սակավաջուր է:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 105 մարդ, զոհվել է 52-ը, որոնց հիշատակին կառուցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Դոլանլար

Գտնվում է Հադրութից 20 կմ դեպի հարավ-արևմուտք: Դիրքը հիմնականում հարթավայրային է, բարձրությունը ծովի մակերևույթից 900 մ է, կլիման՝ մեղմ: Գյուղի պատմությունն սկսվում է 14-րդ դարից: Բազմիցս ենթարկվել է արտաքին թշնամիների հարձակումներին: Գյուղի եկեղեցին կառուցվել է 1798 թ.: Այժմ խարխլված է: 1987 թ. այստեղ կար 110 տուն, 308 բնակիչ: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1932 թ.: Տնտեսության հիմնական ուղղություններն են անասնապահությունը և հացահատիկի մշակությունը: Էլեկտրիֆիկացվել է 1962 թ.: Ունի ակումբ, բուժկետ, կապի բաժանմունք, վարսավիրանոց: Դպրոցը միջնակարգ է, ունի 48 աշակերտ, 13 ուսուցիչ: Տները հիմնականում երկհարկանի են: Ջրով ապահովված է, ճանապարհները բարեկարգ են: Բնակիչները հայտնի են աշխատասիրությամբ և հյուրասիրությամբ: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Գյուղի

շրջակայքում նշանավոր են Ցուրտ, Գաբրիել աղբյուրները, Հանգած եխծեն, Թովմասի բերդը, Քարահովիտը, Եռղանի տակը, Ղլեն սարը վայրերը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 101 մարդ, զոհվել է 89-ը, նրանց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Մյուլաքադար

Գտնվում է Հադրութից 13 կմ դեպի հարավ-արևմուտք: Հեռավորությունը Ստեփանակերտից 121 կմ է: Անվանումը «հարստության հովիտ» կապակցության օտար թարգմանությունն է: Տեղադրված է Դիզափայտի լեռնաճյուղերից մեկի փեշին: Բարձրությունը ծովի մակերևույթից 1800 մ է. կլիման նպաստավոր է: Գյուղի պատմությունն սկսվում է 16-րդ դարի երրորդ կեսից: Ունի եկեղեցի, կառուցվել է 1864 թ.: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1930 թ.: Տնտեսության հիմնական ուղղությունն անասնապահությունն է, զբաղվում են նաև դաշտավարությամբ: 1987 թ. այստեղ կար 31 տուն, 68 բնակիչ:

Մինչև 1978 թ. այստեղ գործում էր 7-ամյա դպրոց, հետո փակվել է աշակերտներ չլինելու պատճառով: Կա ակումբ, խանութ: Էլեկտրիֆիկացվել է 1969 թ.: Տները մեկ-երկու հարկանի են: Ճանապարհները բարեկարգ չեն: Բնակիչներն աշխատասեր և հյուրասեր են: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Լավ ապահովված է խմելու ջրով:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 101 մարդ, զոհվել է 64-ը, նրանց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Ծամձոր

Գտնվում է Հադրութից 10 կմ դեպի հարավ-արևմուտք: Տեղադրված է Դիզափայտի լեռնաճյուղերից մեկի լանջին, բարձրությունը ծովի մակերևույթից 700 մ է, կլիման՝ մեղմ ու բարենպաստ, ջուրը՝ զուլալ, օդը՝ մաքուր: Գյուղի պատմությունն սկսվում է 16-րդ դարի առաջին կեսից: Պահպանվել է 1769 թ. կառուցված Ս. Աստվածածին եկեղեցին, որը վերջերս բնակիչների կողմից վերանորոգվել է:

Կոլտնտեսություն կազմակերպվել է 1929 թ.: Գյուղատնտեսության հիմնական ուղղություններն են անասնապահությունն ու հացահատիկի մշակությունը: 1890-ական թվականների սկզբներին այստեղ կար 100 տուն, 620 բնակիչ, իսկ 1987 թ.՝ 71 տուն, 134 բնակիչ: 1970-ական թվականներին գործում

էր միջնակարգ դպրոց: Այժմ փակված է դպրոցահասակ երեխաներ չլինելու պատճառով: Ունի ակումբ, գրադարան, բուժկետ, խանութ: Էլեկտրիֆիկացվել է 1962 թ.: Տները երկհարկանի են ու բարեկարգ: Գյուղի փողոցներն ու ճանապարհներն անբարեկարգ են: Բնակիչները՝ բարի, աշխատասեր և հյուրասեր են: Կյանքի միջին տևողությունը 75 — 80 տարի է:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 148 մարդ, զոհվել է 106-ը, նրանց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Հակակու (Հըկակու)

Գտնվում է Հադրութից 10 կմ դեպի հյուսիս-արևմուտք: Հեռավորությունն Ստեփանակերտից 117 կմ է: Դիրքը լեռնային է, բարձրությունը ծովի մակերևույթից 1400 մ, կլիման, օդը, ջուրը՝ պատվական: Այժմյան գյուղի պատմությունն սկսվում է 17-րդ դարի սկզբներից: Գյուղի եկեղեցին (Ս. Աստվածածին) կառուցվել է 1621 թ., բարվոք վիճակում է:

1890-ական թվականներին այստեղ եղել է 25 տուն, 151 բնակիչ, 1987 թ՝. 40 տուն, 128 բնակիչ: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1929 թ.: Տնտեսության հիմնական ուղղություններն են պտղաբուծությունն ու խաղողագործությունը: Մինչև 1970-ական թվականներն այստեղ գործել է 7-ամյա դպրոց, այժմ տարրական է, ունի 9 աշակերտ, 1 ուսուցիչ: Կա ակումբ, գրադարան: Էլեկտրիֆիկացվել է 1957 թ.: Տները բարեկարգ են, ապահովված է ջրով: Ճանապարհներն ու փողոցները խճապատ են: Բնակիչները հայտնի են աշխատասիրությամբ: Կյանքի միջին տևողությունը 80—85 տարի է:

Թաղոտ

Գյուղի շրջակայքը հարուստ է թեղու ծառատեսակով: Անվանումն առաջացել է «թեղուտ» բառից, որը ձևափոխվել ու այժմ կոչվում է Թաղոտ: Գտնվում է Հադրութից 9 կմ դեպի հյուսիս-արևմուտք: Հեռավորությունը Ստեփանակերտից 115 կմ է:

Գյուղի պատմությունն սկսվում է 12-րդ դարի սկզբներից: Դիրքը գեղատեսիլ է, շրջապատված է այգիներով, բարձրությունը ծովի մակերևույթից 1200 մ է, կլիման, օդը, ջուրը՝ պատվական: Գյուղի եկեղեցին (Ս. Հովհաննես) կառուցվել է 1836 թ.: Այժմ փլված է: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1929 թ.: Տնտեսության հիմնական ուղղություններն են հացահատիկի մշակությունը, ինչպես նաև խաղողագործությունն ու անասնապահությունը:

1890-ական թվականների սկզբներին այստեղ կար 70 տուն, 475 բնակիչ, 1987 թ.՝ 71 տուն, 198 բնակիչ: Դպրոցն ութամյա է, ունի 48 աշակերտ, 13 ուսուցիչ: Գործում է ակումբ, գրադարան, բուժկետ, խանութ: Էլեկտրիֆիկացվել է 1951 թ.: Տները երկհարկանի են: Փողոցներն ու ճանապարհները խճապատ են: Լավ ապահովված է ջրով: Բնակիչներն աշխատասեր են: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է: Այս գյուղում է ծնվել Բաքվի 26 կոմիսարներից՝ Բաղդասար Ավագյանը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 134 մարդ, զոհվել է 51-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան: Գյուղը հայաբնակ է:

Կեմրակուճ (Կարմրագուճ)

Գտնվում է Հադրութից 3 կմ դեպի հյուսիս: Տեղադրված է լեռնալանջի վրա, կլիմայական պայմանները նպաստավոր են: Բնակիչները հիմնականում բնիկ են, մի մասի նախնիները տեղափոխվել են Ղափանից: 19-րդ դարի 90-ական թվականներին այստեղ կար 50 տուն, 468 բնակիչ, 1979 թ.՝ 65 տուն, 208 բնակիչ, իսկ 1987 թ.՝ 54 տուն, 162 բնակիչ: Միավորված է Հադրութի պետական տնտեսությանը: Ունի ութամյա դպրոց, գրադարան, կինոտեղակայում, մանկապարտեզ: Գյուղի Ամենափրկիչ եկեղեցին (XIII դ.) կանգուն է: Գյուղը հայաբնակ է:

Շաղախ (Սարի շեն)

Գտնվում է Հադրութից 6 կմ դեպի արևմուտք, տեղադրված է սարի վրա: Կլիմայական պայմանները շատ նպաստավոր են, օդը մաքուր է, ջուրը՝ զուլալ: Գյուղի ու շրջակայքի բազմաթիվ հին հուշարձաններից հիշատակության հատկապես արժանի են Ս. Աստվածածին եկեղեցին, Հանդին ձեռք մատուռը (XIII դ.) և Սարի բերդը:

1890-ական թվականների սկզբներին այստեղ կար 70 տուն, 505 բնակիչ, իսկ 1987 թ. մնացել էր ընդամենը 14 տուն, 38 բնակիչ: Միավորված է Ծամձորի կոլտնտեսության հետ: Տնտեսությունը մասնագիտացված է անասնապահության, հացահատիկի մշակության և բանջարաբուծության ուղղությամբ: Ունի տարրական դպրոց, գրադարան: Գյուղը հայաբնակ է:

Քարագլուխ

Գտնվում է Հադրութից 9 կմ դեպի հարավ-արևմուտք: Տեղադրված է Դիզափայտ լեռնաշղթայի արևելյան լանջին: Դիրքը լեռնային է, կլիմայական պայմանները նպաստավոր են, օդը՝ մաքուր, ջուրը՝ զուլալ: Բնակիչների մեծ մասը բնիկ են, փոքր մասի նախնիները գաղթել են Ղարադաղից: 1890-ական թվականների սկզբներին այստեղ կար 25 տուն, 203 բնակիչ, իսկ 1987 թ.՝ 40 տուն, 96 բնակիչ: Գյուղի տնտեսությունը միավորված է Բանազուրի պետական տնտեսության հետ: Ունի տարրական դպրոց, գրադարան, ակումբ, կինոտեղակայում: Գյուղը հայաբնակ է:

Ցոր

Գտնվում է Հադրութից 7 կմ դեպի հարավ, տեղադրված է լեռնահովտում: Կլիմայական պայմանները բարենպաստ են, սակայն հողագործության համար եղած հնարավորությունները քիչ ու դժվարին են: Արցախի հնագույն բնակավայրերից է, որտեղ պահպանվել են բազմաթիվ հուշարձաններ: Մասնավորապես պահպանվել են 10-րդ դարում կառուցված Ամենափրկիչ, ինչպես նաև 5—13-րդ դարերի՝ Լուսավորիչ Անապատի եկեղեցիները: Գյուղի շրջակայքում կան նաև ստորգետնյա կացարաններ, դամբարաններ, խաչքարեր, բերդ-ամրոցներ: Հատկապես մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ցորաբերդը, որը գտնվում է մոտակա լեռան վրա: Այժմ քիչ բան է պահպանվել երբեմնի անառիկ այս ամրոցից:

Գյուղի տնտեսությունը միավորված է Բանազուրի պետական տնտեսությանը: 1890-ական թվականների սկզբներին այստեղ կար 75 տուն, 560 բնակիչ, 1987 թ.՝ 37 տուն, 77 բնակիչ: Ունի ութամյա դպրոց, գրադարան, ակումբ: Գյուղը հայաբնակ է:

Ջիլան

Գտնվում է Հադրութից 17 կմ դեպի հարավ: Դիրքը նախալեռնային է, կլիմայական պայմանները՝ մերձարևադարձային: Այս գյուղի բնակիչների մի մասի նախնիները գաղթել են Ղարադաղից ու Ղափանից՝ 1840-ական թվականներին: 1890-ական թվականների սկզբներին այստեղ կար 28 տուն, 200 բնակիչ, 1987 թ.՝ ընդամենը 12 տուն, 20 բնակիչ: Գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 18-րդ դարում: Տնտեսությունը միավորված է Բանա-

զուրի պետական տնտեսությանը: Ունի տարրական դպրոց, գրադարան, ակումբ: Գյուղը հայաբնակ է:

Պետրոսաշեն

Գտնվում է Հադրութից 20 կմ դեպի արևմուտք, դիրքը լեռնահովտային է, կլիմայական պայմանները նպաստավոր են: Տնտեսությունը մասնագիտացված է հիմնականում անասնապահության, ինչպես նաև բանջարաբուծության ուղղությամբ: Միավորված է Խծաբերդի կոլտնտեսության հետ: 1987 թ. այստեղ կար 10 տուն, 14 բնակիչ: Գյուղում և շրջակայքում պահպանվել են պատմական հուշարձաններ: Մասնավորապես Ս. Ստեփանոս եկեղեցին (XII դ.), Ղոշարխաչ բնակատեղին, Զորքի քարայրը, Թովմասի բերդը (IX դ.): Գյուղը հայաբնակ է:

Վանք

Գտնվում է Հադրութից 2 կմ դեպի հարավ-արևմուտք: Դիրքը գեղատեսիլ է, կլիմայական պայմանները՝ մեղմ ու նպաստավոր: 1890-ական թվականների սկզբներին այստեղ կար 35 տուն, 269 բնակիչ, իսկ 1987 թ.՝ 42 տուն, 141 բնակիչ:

Տնտեսությունը միավորված է Հադրութի խաղողագործական պետական տնտեսության հետ: Ունի տարրական դպրոց, գրադարան, ակումբ: Պատմական հուշարձաններից պահպանվել են Սպիտակ Խաչ վանքը (12—13-րդ դդ.), որմնափակ խաչքար կոթողը (13-րդ դ.), Վելիջան իշխանի բերդը (13-րդ դ.): Գյուղը հայաբնակ է:

Նորաշեն

Գտնվում է Հադրութից 6 կմ դեպի հարավ-արևելք: Ընկած է լեռների հովտում: Կլիմայական պայմանները նպաստավոր ու մերձարևադարձային են: 1987 թվականի տվյալներով այստեղ կա 41 տուն, 90 բնակիչ: Գյուղը հայաբնակ է:

Ծակուռի

Գտնվում է Հադրութից 8 կմ դեպի հյուսիս-արևմուտք: Դիրքը գեղատեսիլ է: Կլիմայական պայմանները բարենպաստ են, օդը առողջարար է, ջուրը մաքուր ու զուլալ, ունի անուշահամ մրգեր, պտուղներ:

Բնակիչները հիմնականում բնիկ են, փոքր մասի նախնիները տեղափոխվել են Ղարադաղից: 1890-ական թվականների սկզբներին այստեղ կար

40 տուն, 268 բնակիչ, իսկ 1987 թ.՝ 50 տուն, 115 բնակիչ: Գյուղում և շրջակայքում կան պատմական բազմաթիվ հուշարձաններ, որոնցից հատկապես մեծ արժեք է ներկայացնում Ծաղկավանքը, որը կառուցվել է 12-րդ դարում: Գյուղը հայաբնակ է:

*
* *

Բացի նշվածներից, Հադրութի շրջանում կան մի քանի գյուղեր ևս, որոնք 1987 թվականի տվյալներով ունեն. *Դուդուկչին*՝ 93 տուն, 248 բնակիչ, *Ձիրակուսը (Զրակուս)*՝ 61 տուն, 176 բնակիչ, *Էդիշան*՝ 57 տուն, 130 բնակիչ, *Թանքը*՝ 30 տուն, 90 բնակիչ, *Սուսալըխը*՝ 69 տուն, 263 բնակիչ, *Սալաքյաթինը*՝ 67 տուն, 263 բնակիչ: Վերջին երկուսը բնակեցված են ադրբեջանցիներով:

11. Շուշիի շրջան

Զբաղեցնում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հարավ-արևմտյան փոքր հատվածը՝ Ղարաբաղի լեռնաշղթայի կենտրոնական մասը: Մարզի ամենափոքր շրջանն է, տարածքը կազմում է 0,3 հազ. կմ^2: Հյուսիսային և արևելյան մասում սահմանակից է Ասկերանի շրջանին, հարավային մասում՝ Հադրութի շրջանին, իսկ արևմտյան մասում՝ Ադրբ. ԽՍՀ-ի Լաչինի շրջանին:

Մակերևույթն ամբողջապես լեռնային է, որը գերազանցապես ծածկված է անտառներով և թփուտներով: Նրա հարավային՝ Հադրութի շրջանին սահմանակից հատվածում է *Քիրս լեռը*, որի բարձրությունը *2748 մ է*: Շրջանի տարածքով է անցնում Կարկառ գետն իր վերին հոսանքով: Գետն այստեղ ունի բազմաթիվ արագահոս վտակներ: Դրանք բոլորն էլ հոսում են գեղատեսիլ անդնդախոր կիրճերով, որոնցից հատկապես հիշարժան է Շուշիի մոտ գտնվող կիրճը:

Այս փոքր տարածք ունեցող շրջանում կա հայկական պատմաճարտարապետական 152 հուշարձան: Դրանց զգալի մասը գտնվում է Շուշի քաղաքում: Շրջանի հողային ֆոնդը կազմում է ավելի քան 30 հազ. հա, որից վարելահողեր՝ 3,7 հազ. հա, այգիներ՝ 103 հա, խոտհարքեր՝ 330 հա, արոտավայրեր՝ 16,7 հազ. հա, անտառներ՝ 8,3 հազ. հա: Գյուղատնտեսության առա-

ջատար ճյուղը անասնապահությունն է: Արդյունաբերությունը որոշ չափով զարգացած է Շուշի քաղաքում: 1987 թ. տվյալներով այս շրջանում կար 27 գյուղական և 1 քաղաքային բնակավայր:

Սա մարզի միակ շրջանն է, որտեղ բնակչության ընդհանուր թվում հայերը փոքր տեսակարար կշիռ ունեն: Այս հանգամանքը պայմանավորված է 1918—20 թթ. թուրք բարբարոսների ու մուսավաթականների կողմից Շուշիում և շրջակա հայկական գյուղերում կազմակերպած հայերի ջարդով: Այդ տարիներին թուրք դահիճները միայն Շուշի քաղաքում ու շրջանում սպանել են 30 հազ. հայ: 1987 թ. տվյալներով Շուշիի շրջանում կար շուրջ 20 հազ. մարդ, որից՝ 13,5 հազ. Շուշի քաղաքում:

Լեռնային Ղարաբաղում 1988 թվականին տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ Ադրբեջանի ղեկավար մարմինների թողտվությամբ Շուշի քաղաքում և շրջանում դարձյալ հայ բնակչության նկատմամբ կիրառվեցին վայրագություններ, որի հետևանքով՝ առանց այն էլ արդեն քիչ թվով հայերի մեծ մասը ստիպված էր տեղափոխվել ու ապաստանել Ստեփանակերտում:

Շուշիի շրջանի գյուղական բնակավայրերից խոշորը հայկական Քարին Տակ գյուղն է: Սա Արցախի հնագույն բնակավայրերից է, հարուստ պատմական անցյալով: Գտնվում է Շուշի քաղաքից 2 կմ հեռավորության վրա՝ Կարկառ գետի ձախ ափին, այդ գետի անդնդախոր կիրճի զառիթափ քարաժայռի ստորոտում: Տեղանքը շատ բարդ է, բայց յուրահատուկ գեղեցիկ, ջուրն ու օդը՝ մաքուր: Շրջակայքում կան պատմական հուշարձաններ, կամուրջներ, ջրաղացներ, քարանձավային շինություններ: Արցախի քարանձավներից մեկի վերաբերյալ, որը գտնվում է գյուղի հյուսիսային մասում, հետաքրքիր տվյալներ է բերված Մակար եպիս. Բարխուդարյանցի «Արցախ» գրքում: Նա նշում է, որ այդ քարայրի մուտքը կլոր է, դժվար անցանելի, քարայրը խոր է, սոսկալի մութ և բավականին երկար, որի ծայրը հասնում է համարյա թե մինչև Շուշվա տակը: Նա նշում է նաև, որ առանց լապտերի անհնար է մտնել և առաջ գնալ: Քարայրի խորքում կա ջուր[1]:

Գյուղի թիկունքում գտնվող բարձրաբերձ քարաժայռի տարբեր մասերում կան շատ այդպիսի քարանձավային շինություններ, որոնք հնում պաշտպանական դեր են խաղացել բնակիչների համար:

Ըստ Մակար Բարխուդարյանցի տվյալների, 1890-ական թվականների սկզբներին Քարին Տակ գյուղում կար 174 ծուխ, 1068 բնակիչ: Սա ցույց է տալիս, որ Քարին Տակը այն ժամանակի հայկական խոշոր գյուղերից է եղել: 1987 թ. այստեղ կար 186 տուն, 580 բնակիչ: Պետական տնտեսություն է,

[1] Տես Մակար եպիս. Բարխուդարյանց, «Արցախ», Բաքու, 1895 թ., էջ 134:

հիմնականում զբաղվում են անասնապահությամբ: Այստեղ գործում է Ստեփանակերտի մետաքսի կոմբինատի մասնաճյուղը: Ունի միջնակարգ դպրոց, գրադարան, մանկապարտեզ, կինոտեղակայում, բուժկետ, կապի բաժանմունք, կենցաղսպասարկման տաղավար: Շրջապատում պահպանվել են հին գյուղատեղիներ (15—17 դդ.) խաչքարեր (13 դ.), Ս. Աստվածածին եկեղեցին (19-րդ դ.), ջրաղացների փլատակներ, բազմաթիվ աղբյուրներ:

Շրջանի հայաբնակ մյուս բնակավայրերից նշանավոր է Բերդաձորը: Նա հերոսաբար պաշտպանվել է պարսկական, թաթար-մոնղոլական, թուրքական զորքերի հաճախակի հարձակումներից: Ունի գեղատեսիլ դիրք, մեղմ կլիմա: 1959 թ. այստեղ կար 500, իսկ 1989 թ.՝ 201 բնակիչ: Հեռավորությունը Ստեփանակերտից 50 կմ է, Շուշիից 45 կմ: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1929 թ.: Մասնագիտացված է անասնապահության և հացահատիկի մշակության ուղղությամբ: Մինչև 1960-ական թվականներն այդ գյուղի միջնակարգ դպրոցում սովորում էր ավելի քան 250 աշակերտ: Այժմ ունի ընդամենը 18 աշակերտ: Կա գրադարան, կապի բաժանմունք, բուժկետ, ինչպես նաև անգործության մատնված ակումբ և կենցաղի տուն: Էլեկտրիֆիկացվել է 1955 թ.: Տները երկհարկանի են: Ապահովված է խմելու ջրով: Այն բարեկարգ ճանապարհներով միացած է Ստեփանակերտ-Գորիս խճուղուն: Եկեղեցին (Ս. Աստվածածին) նորոգման և խնամքի խիստ կարիք ունի: Բնակիչներն աշխատասեր և հյուրասեր են: Կյանքի միջին տևողությունը 75—80 տարի է, իսկ Սահակ Սարգսյանը, Մանուշակ Սարգսյանը և ուրիշներ 100-ից ավելի տարիք ունեն: Գյուղի շրջակայքում նշանավոր են Սահակ աղբյուրը, Ներքին ջուրը, Ղուշի մաննը, Դգեսիան ղուզե, Դմբլկաց անտառները, Ճաքած հող, Թումա սեռ արոտավայրերը: Մոտակայքում կա պղնձահանքի երևակում և հանքային ջրի երկու աղբյուր:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 196 մարդ, զոհվել է 62-ը: Նրանց հիշատակին կանգնեցված է հուշարձան:

Նշանավոր է նաև Մեծ Շեն գյուղը, որը կոչվում է նաև Մեծ Ղարաղշլաղ: Գյուղը հիմնադրվել է 19-րդ դարում: Մինչ այդ բնակիչներն ապրում էին մոտակա ձորակի քարայրային բնակատեղում: Գտնվում է բլուրի վրա: Ձմեռը սառնաշունչ է, ամառը՝ զով: 1959 թ. ունեցել է 300, իսկ 1985 թ. 160 բնակիչ: Հեռավորությունը Շուշիից 38 կմ է, Ստեփանակերտից՝ 45 կմ: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1929 թ.: Զբաղվում են դաշտավարությամբ:

Այժմյան դպրոցն ունի ընդամենը 4 աշակերտ: Կա ակումբ, գրադարան, կապի բաժանմունք, խանութ, միջգյուղական հիվանդանոց: Էլեկտրիֆիկացվել է 1966 թ.: Տները երկհարկանի են: Ճանապարհներն անբարեկարգ են, 4 կմ ձգվող ճանապարհով կապվում է Ստեփանակերտ-Գորիս ավտոխճուղուն: Գյուղի եկեղեցին կառուցվել է 16-րդ դարում: Բնակիչները հայտնի են աշխատա-

սիրությամբ: Մոտակա վայրում կա պղնձահանքի երևակում:

Մյուս հայաբնակ գյուղը Եղցահողն է, որը Շուշիից ունի 45 կմ, իսկ Ստեփանակերտից՝ 48 կմ հեռավորություն: Այժմ գյուղն ունի մոտ 180 բնակիչ: Դպրոցում սովորում է ընդամենը 6 աշակերտ: Կոլտնտեսություն կազմակերպվել է 1929 թ.: Զբաղվում են անասնապահությամբ: Ունի ակումբ, գրադարան, բուժկետ, կոշկակարանոց: Էլեկտրիֆիկացվել է 1966 թ.: Տները երկհարկանի են, ճանապարհներն՝ անբարեկարգ, 3 կմ ձգվող ճանապարհով կապվում է Ստեփանակերտ-Գորիս խճուղուն: Բնակիչներն աշխատասեր են և հպարտ: Եղցահող, Խերխան, Կանաչ թալա, Ծաղկաձոր գյուղերից Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 190 մարդ, զոհվել է 87-ը, որոնց հիշատակին կանգնեցված է հուշարձան:

Մինչև վերջին ժամանակներս որպես հայաբնակ գյուղեր նշանավոր են եղել նաև Ծաղկաձորը, Կանաչ թալան, Խերխանը:

1920 թ. Ծաղկաձորում և Կանաչ թալայում եղել է 280, 1950 թ.՝ 300 հայ բնակիչ: 1988 թ. Ծաղկաձորում մնացել է 20 հայ, իսկ Կանաչ թալայում այժմ ապրում են Լաչինից տեղափոխված 150 ադրբեջանցիներ և քրդեր:

Խերխան հայկական գյուղն այժմ համարյա լքված ու անմարդաբնակ է: Շուշիի շրջանի մյուս գյուղերում հայերի թիվը շատ փոքր է:

12. Լեռնային Ղարաբաղի սոցիալ-տնտեսական զարգացման պրոբլեմներն ու ուղիները

Պատմական հանգամանքների բերումով հայերը ԽՍՀՄ-ում 1923 թվականից ունեն ազգային պետականության երկու ձև՝ Հայկական ԽՍՀ և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ:

Չնայած դրան, օբյեկտիվորեն գոյություն ունի հայկական ազգը, որը ընդգրկում է հայ բնակչության արեալային բոլոր խմբերը: Բնականաբար Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի (որը կանխամտածված կերպով Հայկական ԽՍՀ-ից բաժանվել է վեց կիլոմետրանոց շերտով) արհեստականորեն սահմանազատումը Խորհրդային Հայաստանի տնտեսական ու մշակութային կյանքից՝ հակասում է լենինյան ազգային քաղաքականության սկզբունքներին:

Անցած շուրջ 70 տարիների ընթացքում Ադրբեջանի որոշ ղեկավար

գործիչների իրականացրած անարդարացի քաղաքականության հետևանքով Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի տնտեսությունը զարգացել է միակողմանի: Մարզի սոցիալական զարգացման և մշակութային առաջընթացին ուշադրություն չի դարձվել: Խիստ ոտնահարվել է ազգային արժանապատվությունը, հայկական մշակույթի, պատմաճարտարապետական արժեքները զանազան մանիպուլյացիաներով հայտարարվել են ադրբեջանական, իսկ ինչը հնարավոր չի եղել սեփականացնել՝ ոչնչացվել է:

Այդ բոլորի հետևանքով այստեղ տասնամյակներ շարունակ կուտակվել են բազմաթիվ չլուծված պրոբլեմներ, որոնք մեր հաստատ համոզմամբ կարող են լուծվել միայն Հայկական ԽՍՀ-ի հետ սոցիալ-տնտեսական լայն ու խոր ինտեգրացմամբ, մարզը մայր հայրենիքին՝ Հայաստանին վերամիավորելու շնորհիվ:

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հատուկ կառավարման կոմիտեի նախագահ Ա. Ի. Վոլսկին, անդրադառնալով մարզում Ադրբեջանի նախկին ղեկավարության գործունեության հետևանքով ստեղծված անտանելի իրավիճակին, գրում է. «Հիշենք թեկուզ՝ ինչպես ծագեց ու զարգացավ ղարաբաղյան շարժումը: Ինչո՞ւ մարդիկ առաջադրեցին Հայաստանի հետ միավորման հարցը:

Որովհետև տեսնում էին, որ Ադրբեջանի նախկին ղեկավարությունը մարզն ավելի ու ավելի շատ էր փակուղի մտցնում, ձգտում էր խզել հայ բնակչության բնական կապերը Հայաստանի հետ մշակույթի, լեզվի ասպարեզում, որոշակի խոչընդոտներ էր հարուցում հայախոս մտավորականության ճանապարհին: Այս ամենն իրականություն է: Այս ամենը ճիշտ է: Երկրում շրջագայելիս ես ոչ մի տեղ այսպիսի բարձիթողի վիճակ, մարդկանց բախտի նկատմամբ քամահրանք չեմ տեսել, ինչպես Լեռնային Ղարաբաղում:

Ահա այն սոցիալ-տնտեսական հողը, որի վրա աճել էր ազգային պահանջների ծառը»[1]:

Որոնք են Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում չլուծված պրոբլեմները, և ինչ ուղիներ կան դրանց լուծման համար:

Մինչև 1980-ական թվականների վերջերը մարզի արդյունաբերությունը երկրի մյուս ռեգիոնների համեմատությամբ թույլ ու կառուցվածքային տեսակետից միակողմանի է զարգացել: Եղած արդյունաբերական ձեռնարկությունները համարյա ամբողջապես տեղադրվել են Ստեփանակերտում և Շուշիում: Այդ ձեռնարկությունների գործունեությունն այնպես էր տարվում, որ դրանց արտադրանքի հայկական բնույթն ու ծագումը չերևան: Դրա աղա-

---

[1] «Правда», 15 հունվարի 1989 թ.:

ղակող փաստերից մեկն այն է, որ ամբողջ ԽՍՀՄ-ում հայտնի Ղարմետաքսկոմբինատի արտադրական ցիկլի վերջին օղակը՝ ներկման արտադրամասը փակվել է վաղուց: Դրանով հարկադրական պայմաններ են ստեղծվել, որպեսզի այստեղ արտադրված միլիոնավոր մետր գործվածքեղենը որպես կիսաֆաբրիկատ ուղարկվի Ադրբեջանի Շաքիի մետաքսի ֆաբրիկա՝ այնտեղ ներկելու համար: Ստացվում է, որ արտադրանքը թողարկվում է Ստեփանակերտում, սակայն ներկվելով Շաքիում, նրանց անունով է հանձնվում սպառողին որպես պատրաստի արտադրանք: Հարկ չկա ապացուցելու, թե տասնամյակներ շարունակ մարզի այս միակ խոշոր ձեռնարկությունն ինչպիսի տնտեսական, սոցիալական, բարոյական խոշոր վնասներ է կրել: Նրա սարքավորումները, շենքը վաղուց բարոյապես, ֆիզիկապես մաշվել են: Այդպես է վիճակը նաև Ստեփանակերտի կահույքի ֆաբրիկայում ու մյուս ձեռնարկություններում:

Ղարաբաղի անտառները հարուստ են բարձրորակ փայտանյութ ունեցող ծառատեսակներով: Սակայն այստեղի բարձրորակ փայտի հումքը օգտագործվում էր Բաքվում, Կիրովաբադում, իսկ Ստեփանակերտի կահույքի ֆաբրիկան հումք էր ստանում երկրի հեռավոր շրջաններից: Գյուղատնտեսական արտադրությունը զարգացել է հիմնականում Ադրբեջանին հումք և կիսաֆաբրիկատ մատակարարելու անհրաժեշտությամբ: Մարզի բերրի հողատարածությունների զգալի մասը վեր է ածվել արոտավայրերի, որտեղ պահվում էր մինչև 300 հազ. գլուխ մանր եղջերավոր անասուն: Ավելի քան 86 հազ. կմ² տարածություն ունեցող հանրապետության խոշոր ու մանր եղջերավոր անասունների զգալի մասը, խոզերի գլխաքանակի ավելի քան 37 %-ը պահվում էր ընդամենը 4,4 հազ. կմ² տարածք ունեցող Լեռնային Ղարաբաղում:

Այսինքն, հայկական այս փոքր մարզը վեր էր ածվել խոշոր Ադրբեջանի համար՝ մսի, կաթի, բրդի արտադրության բազայի: Այդ փոքր մարզը տալիս էր Ադրբեջանում արտադրվող ցորենի մինչև 15%, խաղողի՝ 6%, մսի՝ 8%, կաթի՝ 10%, բրդի 6,1 %-ը: Միջին հաշվով տարեկան ունենալով 84—90 հազ. գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 78—90 հազ. գլուխ խոզ, մինչև 300 հազ. գլուխ մանր եղջերավոր անասուն՝ մարզի բնակչությունը միս, երշիկեղեն, յուղ էր հայթայթում Հայկական ԽՍՀ-ից:

Մինչև 1940-ական թվականների վերջերը Լեռնային Ղարաբաղի համարյա բոլոր շրջաններում արմատավորված էր յուղատու մի շատ արժեքավոր կուլտուրայի՝ կտավատի (գանգրավուշի) մշակությունը: Ստացված հումքը տեղի ձիթհաններում (սրանոցներում) մշակվում և արտադրվում էր բարձրարժեք ձեթ, որն այս լեռնաշխարհի բոլոր բնակավայրերի առավել կարևոր սննդամթերքներից էր: Մինչև այժմ էլ լեռնաշխարհի շատ գյուղերում կարելի է տեսնել այդ ձիթհանների (սրանոցների) փլատակները: Դարեր շարունակ Արցախում արմատավորված այդ կուլտուրան հետագայում անհասկանալի ձևով հանվել է գյուղատնտեսական ցանքաշրջանառությունից:

Հաշվի առնելով կտավատի ձեթի բարձր սննդարարությունը, բուժիչ կարևոր հատկությունները, ինչպես նաև յուղատու այդ կուլտուրայի աճեցման համար Լեռնային Ղարաբաղի նպաստավոր պայմաններն, անհրաժեշտ է նորից այն արմատավորել:

Մինչև 1950-ական թվականները մարզի նախալեռնային համարյա բոլոր գյուղերում զգալի տեղ էին զբաղեցնում կարտոֆիլի ցանքերը: Աճեցվում էր հատկապես կարմիր տեսակի բարձրորակ կարտոֆիլ և արտադրանքը հիմնականում բավարարում էր տեղի պահանջը: Հետագայում այս շատ կարևոր կուլտուրան նույնպես համարյա թե հանվել է ցանքաշրջանառությունից:

Նույնպիսի ճակատագրի են արժանացել սիսեռի, ոսպի, լոբու ցանքատարածությունները: Հետևանքը եղել է այն, որ արցախցին այժմ այդ կարևոր սննդամթերքները դժվարությամբ ձեռք է բերում հեռավոր վայրերից:

Իսկ դա արվել է նպատակային ձևով, ադրբեջանական նախկին ղեկավարությունը գյուղատնտեսական շրջանառությունից հանելով տեղի բնակչության համար կենսական նշանակություն ունեցող այդ կուլտուրաների մշակությունը հիմնականում պահանջել է մարզը մասնագիտացնել հացահատիկի, խաղողի մշակության և անասնապահության ուղղությամբ, որոնց արտադրանքը վերամշակվում էր Ղարաբաղից դուրս: Այսինքն մարզը վեր էր ածվել Ադրբեջանի համար գյուղատնտեսական հումք արտադրող կցորդի:

Հողերի մելիորացման համար միջոցներ չէին ձեռնարկվում: Մարզի խոշոր գետի՝ Թարթառի վրա կառուցված Սարսանգի ջրամբարը Ադրբեջանի նախկին ղեկավարության նպատակային քաղաքականությամբ տեղադրվեց նրա ստորին ավազանում, որպեսզի հնարավոր չլինի՝ ավելի բարձրում գտնվող մարզի հողատարածությունները ոռոգել: Ջրամբարի ջրի շուրջ 90%-ն օգտագործվում է Միր-Բաշիրի ու Ադրբեջանի մյուս շրջանների հողերի ոռոգման համար: Այսպիսով, Ղարաբաղի տարածքում, Մարտակերտից 12 կմ հեռավորության վրա կառուցված՝ 480 մլն. մ³ ծավալով Սարսանգի ջրամբարի տնօրենը ադրբեջանցիներն են ու այդ հիդրոհանգույցի աշխատանքի կարգավորումն էլ իրականացվում է Միր-Բաշիրից: Սա անկասկած ինքնավար մարզի ինքնավարության ոտնահարման խայտառակ օրինակներից մեկն է:

Արտադրվող հսկայական քանակությամբ միսը, կաթը, բուրդը, հացահատիկը, խաղողը, պտուղներն ու բանջարեղենը գերազանցապես հանձնվում էին Ադրբեջանի տարածքում գտնվող վերամշակող ձեռնարկություններին և մթերման բազաներին:

Լեռնային Ղարաբաղի տարածքում չեն կառուցվել գյուղատնտեսական հումքի վերամշակման խոշոր ձեռնարկություններ: Մարզը չունի նույնիսկ

ալրաղաց: Շատ խղճուկ վիճակում է շինարարական ինդուստրիայի բազան: Ունենալով շինանյութերի արտադրության բազմազան հումքային խոշոր ռեսուրսներ՝ մինչև վերջերս այստեղ դեռ չկային ոչ միայն երկաթբետոնե կոնստրուկցիաների արտադրություն, այլև առհասարակ շինանյութերի արտադրության ժամանակակից ձեռնարկություններ: Այդ պատճառով մարզին հատկացվող, առանց այն էլ խղճուկ, կապիտալ միջոցները հնարավոր չէր իրացնել, որոնք հետագայում վերաբաշխվում և տրվում էին Ադրբեջանի շրջաններին: Մարզի համապատասխան կազմակերպություններն ստիպված մեծ դժվարություններով տարբեր տեսակի շինանյութ էին հայթայթում Հայկական ԽՍՀ-ում: Այդպես են կառուցվել Ստեփանակերտի, Մարտունու, Ճարտարի և մյուս բնակավայրերի տուֆակերտ շենքերը, ձեռնարկությունները, հուշարձանները:

Խորհրդային իշխանության ամբողջ ժամանակաշրջանում մարզում անտեսվել է ճանապարհների շինարարությունը: Մինչև 1980-ական թվականների վերջերը ամբողջ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տարածքում կար ընդամենը 25 կմ ասֆալտապատ բարեկարգ ճանապարհ: Դա Աղդամից Ստեփանակերտ ձգվող ուղին էր: Մարզի ներքին բոլոր ճանապարհներն անբարեկարգ էին, այդ պատճառով բոլոր շրջաններից Ստեփանակերտ կարելի էր գնալ միայն Աղդամով: Իսկ դա արվում էր հեռուն գնացող նպատակներով, որն ապացուցվեց 1988 թվականի իրադարձությունների ժամանակ: Այդ տարվա փետրվար-սեպտեմբեր ամիսներին ադրբեջանցիները հայերի համար անտանելի վիճակ էին ստեղծել դեպի Ստեփանակերտ տանող այդ միակ ճանապարհի վրա: Քարերով ջարդում, փշրում էին այն ավտոմեքենաները, որոնցով հայեր էին գնում դեպի Ստեփանակերտ: Իսկ սեպտեմբերին Խոջալուի գյուղում, որտեղով անցնում է ճանապարհը, ոչ միայն ջարդ ու փշուր արեցին հայկական համարանիշերով ավտոմեքենաները, այլև բարբարոսաբար խոշտանգվեցին զգալի թվով հայեր: Եղավ նաև զոհ:

Անասելի վատթար վիճակում են գյուղական բնակավայրերի իրար միացնող ճանապարհներն ու գյուղամիջյան փողոցները:

Նույնիսկ անուշադրության է մատնված եղել հայկական լեզուն, մշակույթը, սպասարկման ոլորտը: Զևականորեն նշվում է, որ մարզի բոլոր գյուղերում կան ակումբներ, գրադարաններ, մշակույթի պալատներ, շատերում նաև սպորտային համալիրներ, մարզահրապարկներ: Սակայն ճշմարտությունն այն է, որ դրանց զգալի մասը չեն գործում, մյուսները տեղավորված են խարխուլ, նախահեղափոխական շրջանում կառուցված շենքերում: Շատ գյուղերում նույնիսկ վարսավիրանոց և կոշիկի վերանորոգման կետ չկա, իսկ կենցաղսպասարկման տաղավարի մասին խոսելն ավելորդ է: Ինքնագործ խմբերի գործունեությունը վաղուց դադարեցված է:

Հատկապես վերջին 15 տարիներին խիստ արգելված էր հայկական

թեմաներով և հայ ժողովրդի պատմությանը վերաբերող պիեսների բեմադրությունը, կինոնկարների դիտումը: Դպրոցներում, ինչպես նաև մանկավարժական ինստիտուտի նույնիսկ պատմության ֆակուլտետում, հայ ժողովրդի պատմության դասավանդումը հանված էր:

Աշխատանքի տեղ չունենալով, զրկված լինելով սոցիալական, մշակութային տարրական հնարավորություններից, կտրված լինելով մայր ժողովրդի պատմությունից ու մշակույթից, ղարաբաղցի երիտասարդությունը, բնականաբար, ստիպված թողնում հեռանում էր իր բնօրրանից: Միայն 1971—87 թվականների ընթացքում աշակերտների սակավության պատճառով, մարզում փակվել է 21 դպրոց, 8 հազարով պակասել է աշակերտների թիվը:

Առանձին շրջանների, առանձին գյուղերի մասին խոսելիս արդեն ասվել է բնակչության նվազելու, աշակերտներ չլինելու պատճառով որոշ գյուղերում դպրոցները փակվելու մասին: Ավելացնենք միայն, որ այդպիսի քաղաքականության արդյունքը եղել է այն, որ մարզի հայ բնակչության թիվը 1979 թ. շուրջ 10 հազարով ավելի քիչ է եղել, քան 1939 թվականին: Ամենահամեստ հաշվարկներով՝ այժմ մարզի բնակչությունը պետք է լիներ 550—600 հազ. մարդ, մինչդեռ ընդամենը 188 հազ. է (1989):

Եթե 1939—1979 թթ. մարզի հայ բնակչությունը 10 հազար մարդով պակասել է, ապա այդ նույն ժամանակամիջոցում Ադրբեջանի բնակչությունը 2,3 միլիոնից հասել է ավելի քան 6 միլիոնի, այսինքն ավելացել է 2,6 անգամ: Ահա ադրբեջանական ղեկավարության «ինտերնացիոնալիստական» քաղաքականության արդյունքը:

Մարզում հակահայկական ինտենսիվ քաղաքականություն է սկսվել հատկապես Բաքվից հատուկ առաջադրանքով այստեղ ուղարկված էմիսարների գործունեությամբ: Վստահորեն կարելի է ասել, որ 70-ական թվականներին հենց այդպիսի առաջադրանքով էր Ադրբ. ԽՍՀ կոմկուսակցության Կենտկոմի առաջին քարտուղար Հ. Ալիևը Ղարաբաղ ուղարկել անփառունակ Կևորկովին: Հենց այդ տարիներին էր, որ արագորեն դատարկվում էին հայկական գյուղերը, փակվում դպրոցները:

Հակառակ այդ պրոցեսների՝ մարզում առաջանում էին ադրբեջանական նոր գյուղեր, արագորեն մեծանում էր ադրբեջանցիների տեսակարար կշիռը: Ադրբեջանական գյուղերի արագորեն խոշորացման հետ մեծանում էր ադրբեջանական դպրոցների աշակերտների թիվը: Հայկական այդ մարզը կորցնում էր հայկական դեմքը՝ ժողովներում, խորհրդակցություններում համարյա լրիվ կորել էր հայկական բառն ու խոսքը, հիմնարկ-ձեռնարկություններում գործավարությունը հայերենով չէր տարվում: Նույնիսկ պետական կնիքներից դուրս մղվեցին հայերեն մակագրությունները, մանկավարժական ինստիտուտում և բժշկական տեխնիկումում բացվեցին ադրբեջանական սեկտորներ:

Հակահայկական քաղաքականությունը հասավ այն աստիճանի, որ Կևորկովի կամքով Ստեփանակերտի Ղազարոս Աղայանի անվան հայկական միջնակարգ դպրոցի շենքը տրամադրվեց ադրբեջանական դպրոցին, իսկ այդ հայկական դպրոցի աշակերտները ցրվեցին հայկական մյուս դպրոցներում: Գրախանութներում արգելված էր հայ նշանավոր գրողների գրքերի վաճառքը: Կևորկովի որոշմամբ մարզ տեղափոխվող ադրբեջանցիներն արտահերթ բնակարան էին ստանում:

Ահա հայատյաց նման արտառոց քաղաքականության հետևանքով է, որ 1988 թ. փետրվարից հայ բնակչությունը վճռական բողոք սկսեց իր նկատմամբ ցուցաբերվող անմարդկային վերաբերմունքի դեմ:

Ինչպես արդեն նշվել է, Լեռնային Ղարաբաղի տարածքում դեռևս ոչ լրիվ տվյալներով գրանցված է 2765 հայկական պատմամշակութային հուշարձան[1]: Խորհրդային իշխանության ամբողջ ժամանակաշրջանում դրանցից ոչ մեկը, թեկուզ աննշան չափով չի նորոգվել: Ավելին, 1950-ական թվականներից հետո դրանցից շատերն ինտենսիվ կերպով ավերվել են:

Հանդես է եկել ադրբեջանցի վայ-պատմաբանների մի խումբ, որն անամոթաբար կեղծելով իրականությունը, քրիստոնեական խաչազարդ, վիմափոր հայկական արձանագրություններ ունեցող եկեղեցիները համարում է աղվանական, այսինքն, ըստ իրենց՝ ադրբեջանական:

Հայկական հուշարձանների պատկանելությունը կեղծող առավել ակտիվ «գիտնականները» Զ. Բունիաթովը, Ֆ. Մամեդովան և Դ. Ախունդովն են: Նրանք պատմական պերճախոս փաստերի նենգափոխումն այն աստիճանի են հասցրել, որ նույնիսկ հայկական ճարտարապետության գլուխգործոցներից մեկը՝ Գանձասարի վանքը նույնպես անվանում են աղվանական:

Դեռևս 1965 թ. հրատարակած «Ադրբեջանը VII — IX դդ.» գրքում Զ. Բունիաթովը հարկ համարեց իր իմացած Առանի (Աղվանքի) սահմանների մեջ մտցնել նաև ամբողջ Սյունիքը՝ ներառյալ Խորհրդային Հայաստանի Սիսիանի, Վարդենիսի և մյուս շրջանները: Ըստ նրա «գիտական» տեսության, այսօրվա հայերը, որ ապրում են Սյունիքի, Արցախի, Խաչենի, Շաքիի, Գարդմանի լեռնային մարզերում ու շրջաններում, Կիրովաբադի, Իսմայիլի, Կուտկաշենի, Վարդաշենի և Ադրբեջանական ԽՍՀ մի քանի այլ շրջանների գյուղերում, ինչպես և Խորհրդային Հայաստանի Սիսիանի, Վարդենիսի և այլ շրջաններում, իսկական հայեր չեն, այլ հայացած աղվաններ, «որոնց նախնիները հարել են հայ եկեղեցու դավանանքին և ձուլվել հայերի հետ»:

---

[1] Տես «Սովետական Հայաստան» օրաթերթ, 16 սեպտեմբերի, 1988 թ.:

Գիտական տարրական հիմքից զուրկ այս բարբաջանքը կրկնում է նաև Ֆ. Մամեդովան իր Կովկասյան Ալբանիայի քաղաքական պատմության ու աշխարհագրության վերաբերյալ գրքում:

ԽՍՀՄ ԳԱ-ի Ազգագրության ինստիտուտի դիրեկտոր, ակադեմիկոս Յու. Վ. Բրոմլեյը իր «Национальные процессы в СССР» (Москва, Наука, 1988г.) գրքում խոսելով մեր երկրի տարբեր շրջանների բնիկ ժողովուրդների ծագման, պատմության ճշմարտացի լուսաբանման անհրաժեշտության մասին նշում է. «К сожалению, в исторической литературе многие факты далеко не простой этнической истории народов нашей страны либо просто игнорируются, либо трактуются упрощенно, а то и вовсе искажаются. В ряде республик стал прямо-таки болезненным вопрос о происхождении коренных народов.

Его освещение нередко сопровождается стремлением «удревнить» и «облагородить» историю своего народа...

... В Азербайджане за последние десятилетия получила развитие особая теория о якобы издревне оседлом образе жизни тюрок, которые будто бы являются исконными жителями Восточного Закавказья. Все археологические ценности при этом рассматриваются как реликты древнетюркской национальной культуры. Между тем о кочевниках Азербайджана существует значительная литература, в том числе и местных авторов (стр. 172—173).

Նման կեղծարարությունը շատ բանով պետք է բացատրել նաև Խորհրդային Հայաստանի նախկին ղեկավար մարմինների անտարբերությամբ: Տասնամյակներ շարունակ Հայաստանում թույլ չի տրվել Արցախի ու նրա հայության վերաբերյալ որևէ հոդված տպագրել, իսկ գրքի մասին խոսելն իսկ ավելորդ էր: Խորհրդային իշխանության տարիներին Արցախի պատմությանը վերաբերող միակ ճշմարտացի տեղեկությունը Հայկ. ԽՍՀ ԳԱ կողմից 1988 թ. ռուսերեն հրատարակված «Լեռնային Ղարաբաղ (պատմական տեղեկանք)» բրոշյուրն է:

Խիստ անհրաժեշտ է Արցախի հնագույն, հարուստ պատմությունը լուսաբանող ժամանակակից ու ծավալուն գիտական աշխատության հրատարակումը ռուսաց լեզվով: Դա անհրաժեշտ է նախ ռուս ընթերցողներին Արցախի հայության և նրա պատմության մասին ճիշտ պատկերացում տալու, այնուհետև պատմության կեղծարարների սնանկությունը մերկացնելու համար:

Ամբողջ աշխարհի մարդկությունը մինչև հիմա էլ սարսափով է հիշում թուրքական վանդալիզմի կողմից 1915 թ. կազմակերպված հայերի ցեղասպանությունը, որի հետևանքով զոհվել է շուրջ 2 միլիոն անմեղ հայ: Անհավատալի էր, որ 20-րդ դարի 80-ական թվականների վերջերին սոցիալիստական հասա-

րակարգի պայմաններում նույնպես հնարավոր է այդօրինակ վանդալիզմի ականատես լինել: Սումգայիթում 1988 թ. փետրվարի 27 — 29-ին ադրբեջանցի ծայրահեղականների կողմից կազմակերպված հայ բնակչության ջարդն իր մեթոդներով չէր տարբերվում 1915 թ. կատարված ոճրագործություններից:

Ի դեպ, Սումգայիթ քաղաքի մասին առաջին տեղեկությունները սկսվում են 1950-ական թվականներից: Այդ տարիներին Բաքվից 25 կմ հեռավորության վրա գտնվող՝ ամայի ու անհրապույր վայրում ծավալվել էր նոր քաղաքի՝ մետալուրգիական, քիմիական գործարանների կառուցումը, որին ակտիվորեն մասնակցեց Ղարաբաղի հայ բնակչությունը: Քանի որ առհասարակ աշխատուժի, մասնավորապես վարպետ շինարարների խիստ կարիք էր զգացվում, իսկ Ադրբեջանի կառավարող շրջանները, գիտակցելով հայերի տաղանդն ու շնորհքն այդ բնագավառում բոլոր մեթոդներով, խոստումներով՝ հսկայական թվով հայազգի աշխատողների հրավիրում են Սումգայիթը կառուցելու: Ավելի քան 10 հազ. ղարաբաղցի երիտասարդ շինարարներ, վարպետներ ու ինժեներներ քաղաքի շինարարությանը մասնակցելուց հետո էլ մնացին ու մշտական բնակություն հաստատեցին այնտեղ: Եվ ո՞վ կարող էր մտածել, որ այս քաղաքի հիմնադրման, զարգացման համար իրենց ողջ կյանքը նվիրաբերած հայ բնակչության նկատմամբ ադրբեջանցի «եղբայրները» կկազմակերպեին նման զարհուրելի սպանդ:

1988 թ. փետրվարի 27 — 29-ին նախապես մտածված ձևով այստեղ կազմակերպվել է հայ բնակչության ջարդ, կիրառելով չլսված ու չտեսնված գազանային մեթոդներ: Այդ օրերին Սումգայիթում ադրբեջանցիների վայրագություններին զոհ գնացած բազմաթիվ հայերից 28-ի մահվան (ավելի ճիշտ՝ գազանային սպանության) վկայականները մեր ձեռքի տակ են:

Բաքվից ընդամենը 25 կմ հեռավորության վրա Սումգայիթում հայերի նկատմամբ կատարած բարբարոսական ջարդերի մեխանիզմը ցույց է տալիս, որ դա նախօրոք կազմակերպված ոճիր էր: Ստեփանակերտից մի քանի հարյուր կմ հեռավորության վրա գտնվող քաղաքում կազմակերպված այս սպանդը ոչ մի առնչություն չուներ Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների հետ: Վերջինս ընդամենը առիթ էր, որ Ադրբեջանի հայաբնակ բոլոր վայրերում սկսվեն հալածանքները հայերի նկատմամբ: Կազմակերպվեցին նաև պրովոկացիաներ Հայկ. ԽՍՀ ադրբեջանական գյուղերում: Մասնավորապես Մասիսի ու Ղափանի շրջաններից զգալի թվով ադրբեջանցիներ հատուկ հրահանգով մեկնում են Բաքու և Սումգայիթ՝ սուտ լուրեր տարածում, թե իբր Հայաստանում ադրբեջանցիների հետ վատ են վերաբերվում:

Այսպիսով, մի կողմից կազմակերպվում է հայերի ջարդ, մյուս կողմից պրովոկացիաներ սարքվում հայերի դեմ: Սումգայիթի ողջ մնացած հայերը թողնելով տուն ու տեղ՝ մեծ դժվարություններով տեղափոխվում են Լեռնային

Ղարաբաղ, Հայաստան, Հյուսիսային Կովկաս և այլուր: Ծանր վիճակ է ստեղծվում Ստեփանակերտում, որտեղ կենտրոնանում են Սումգայիթից ու Բաքվից Ղարաբաղ տեղափոխված հայերի մեծ մասը: Ստեփանակերտի վիճակը ծանրանում է նաև նրանով, որ Շուշիում նույնպես ադրբեջանցիները հարձակումներ են սկսում հայերի դեմ, որոնք ստիպված լրիվ տեղափոխվում են այստեղ: 1988 թ. սեպտեմբերին միայն Ստեփանակերտում կար Սումգայիթից, Բաքվից, Կիրովաբադից, Շամխորից, Ֆիզուլուց և Ադրբեջանի հայաբնակ այլ վայրերից եկած ավելի քան 8500 հայ փախստական: Հետագա ամիսներին Ադրբեջանի հայաբնակ վայրերից Լեռնային Ղարաբաղ տեղափոխված հայերի թիվը ավելացել և դարձել է ավելի քան 20 հազար:

Խորհրդային Հայաստանի կառավարության, հասարակական կազմակերպությունների, հայ ժողովրդի ամենաակտիվ աջակցությամբ ու օժանդակությամբ շուտափույթ միջոցներ են ձեռնարկում Ստեփանակերտում բնակարանային շինարարության ծավալման, հատկապես ֆիննական տների տեղադրման համար, որպեսզի հնարավորին սահմաններում թեթևացվի այստեղ կուտակված բնակչության վիճակը: Սակայն 1989 թ. վերջերին դեռևս վիճակը մնում էր ծանր և մեծ թվով հայեր ստիպված տեղավորվել էին հյուրանոցում, հանրակացարաններում, ինչպես նաև քաղաքի բնակիչների տներում:

Քանի որ ադրբեջանցիները ֆիզիկական ու բարոյական հալածանքներ էին սկսել նաև Բաքվի, Մինգեչաուրի, Կիրովաբադի, Խանլարի, Շահումյանի շրջանի, Ֆիզուլու և մյուս բնակավայրերի հայերի նկատմամբ, ապա այս նշված վայրերից հայերը մասսայաբար տեղափոխվում էին նաև Հայկական ԽՍՀ:

Առաջացել է ծանր կացություն նաև Հայկ. ԽՍՀ-ում Ադրբեջանից տեղափոխված բազմահազար հայերին տեղավորելու գործում: Ինչպես արդեն նշվել է, Հայաստանի կոմկուսի Կենտկոմը և Հայկ. ԽՍՀ Մինիստրների խորհուրդը հատուկ կառավարական հանձնաժողով է ստեղծել, որը անմիջապես սկսել է աշխատել Ադրբեջանից Հայաստան եկած բոլոր հայերին տեղավորելու, նրանց պրոբլեմները լուծելու համար: Նրանք հիմնականում տեղավորվել են Մասիսի, Հրազդանի, Նաիրիի, Սպիտակի, Գուգարքի, Մեղրու, Սիսիանի շրջաններում: Այս շրջանների աշխատավորներն իրենց բնակարանային հերթերը զիջել են ու նոր կառուցված շենքերում տեղավորել առաջին հերթին Ադրբեջանից եկած եղբայրներին, քույրերին: Ի դեպ, այդպես են վարվել նաև Ստեփանակերտի բնակիչները:

Լեռնային Ղարաբաղում ու նրա շուրջը ստեղծված իրադարձությունների հետ կապված Ադրբեջանի հայաբնակ վայրերից Հայկական ԽՍՀ եկած հայերի զգալի մասը տեղավորվել է Մասիսի շրջանում: Այս շրջանի գյուղերում ապրող ադրբեջանցիների մեծ մասը օգտվելով Բաքվի հայերի համար ստեղծված ծանր վիճակից բնակարանների փոխանակումներ են կատարում նրանց

հետ, առաջարկելով նյութական ծանր պայմաններ: Այստեղ էլ շատ պարզորոշ դրսևորվեց նրանց խիստ անբարյացակամ վերաբերմունքը հայերի նկատմամբ:

Բաքվի, Մինգեչաուրի, Սումգայիթի ու մյուս բնակավայրերի հայերը ստիպված էին իրենց քաղաքային հարմարավետ բնակարանները փոխանակել Մասիսի շրջանի գյուղերում ապրող ադրբեջանցիների հետ, նրանց լրացուցիչ վճարելով դրամական մեծ գումար, քանի որ ադրբեջանցիներն օգտվելով այդ ողբերգական ծանր իրավիճակից այդ պայմանով էին միայն համաձայնվում:

Արդեն 1988 թ. սեպտեմբերի դրությամբ միայն Մասիսի շրջանում Բաքվից, Մինգեչաուրից, Սումգայիթից, Կիրովաբադից, Շամխորից, Խանլարից, Ֆիզուլուց եկել և Մասիսի շրջանի ադրբեջանցիների հետ բնակարանների փոխանակում էին կատարել 1700 հայ ընտանիք: Այդ թվում 769 ընտանիք եկել էր Բաքվից, 326-ը՝ Մինգեչաուրից, 157-ը՝ Սումգայիթից, 37-ը՝ Կիրովաբադից, մնացածները՝ Շամխորից, Խանլարից, Ֆիզուլուց:

Ինչպես Լեռնային Ղարաբաղ, այնպես էլ Հայկ. ԽՍՀ եկած հայերի տեղավորման, դրանց պրոբլեմների լուծմանը ակտիվորեն մասնակցում է ողջ հայ ժողովուրդը: Իսկ պրոբլեմները հիրավի շատ են: Դրանցից առավել կարևորներից մեկը մայրենի լեզվի՝ հայոց լեզվի ուսուցման արմատավորումն է նրանց մեջ:

Բանն այն է, որ Ադրբեջանի նշված վայրերից եկած հայերը համարյա մոռացել են իրենց մայրենի լեզուն, քանի որ ադրբեջանական նացիոնալիստական քաղաքականության հետևանքով նույնիսկ ավելի քան 220 հազ. հայ բնակչություն ունեցող Բաքվում ոչ մի հայկական դպրոց չկա:

Մասիսի և մյուս շրջանների բնակավայրերում Ադրբեջանից եկած ու տեղավորված հազարավոր երեխաների համար կազմակերպվել են դիֆերենցված ուսուցման ձևեր: 5 — 10-րդ դասարանների աշակերտների համար կազմակերպվել են ուսուցում ռուսաց լեզվով (քանի որ նրանց համար շատ դժվար կլիներ ամբողջ ուսումնական ծրագիրը միանգամից փոխել հայերենով), բայց միաժամանակ և մտցվել է հայոց լեզվի ուսումնասիրություն: Իսկ 1—4-րդ դասարանցիների համար ուսուցումը կազմակերպվել է հայկական դպրոցներում:

Մյուս կարևոր պրոբլեմը աշխատանքի համապատասխան պայմանների ստեղծումն է: Հարցը նրանում է, որ հատկապես Բաքվից, Սումգայիթից, Կիրովաբադից եկած հայերը արդյունաբերության մեջ աշխատողներ, ինժեներներ, ուսուցիչներ, արհեստավորներ են: Իսկ գյուղական բնակավայրերում դրանց աշխատատեղերը խիստ սահմանափակ են: Ի դեպ, այսպիսի պրոբլեմ ավելի սուր կերպով ծառացել է նաև Լեռնային Ղարաբաղ տեղափոխված սումգայիթցիների, բաքվեցիների համար:

Բնականաբար, հնարավորին սահմաններում աշխատանքի համապատաս-

խան օբյեկտների կազմակերպման ու նրանց ըստ մասնագիտությունների աշխատանքի տեղավորման հետ միասին այս դժվարին պրոբլեմի լուծումը պետք է ընթանա նաև հազարավոր աշխատողների մի մասի մասնագիտությունների վերապրոֆիլավորման ուղղությամբ:

Լեռնային Ղարաբաղի վարչական ենթակայությունը Ադրբեջանական ԽՍՀ-ին, սովորաբար, առանձին մարդիկ փորձում են հիմնավորել այդ հանրապետության հետ մարզի տնտեսական ամուր կապով: Սակայն ճշմարտությունն այն է, որ Ադրբեջանական ԽՍՀ-ի տնտեսական բոլոր շրջաններից՝ Լեռնային Ղարաբաղը այդ հանրապետության էկոնոմիկայի հետ ամենանվազ ինտեգրացվածն է: Այսպես, օրինակ, Ադրբ. ԽՍՀ-ի տեսակարար կշիռը Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ ներմուծվող և արտահանվող ամբողջ արտադրանքի ծավալում կազմում էր միայն 8 — 12%: Մարզի տնտեսության համար այդ տեսակետից վճռական դերը պատկանում է ՌԽՖՍՀ-ի տնտեսական շրջաններին:

Ինչպես ցույց են տվել մեր ուսումնասիրությունները, Հայկական ԽՍՀ-ի հետ Լեռնային Ղարաբաղի սոցիալ-տնտեսական ինտեգրացիան հնարավորություն կտա արագորեն լուծելու մարզի շատ պրոբլեմներ և բարձրացնելու նրա հասարակական արտադրության արդյունավետությունը: Դրա համար լայն հնարավորություններ են ստեղծված Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սոցիալ-տնտեսական զարգացման վերաբերյալ ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի, ինչպես նաև ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1988 թ. ընդունած հանրահայտ որոշումներով: Դրանց հիման վրա Հայաստանի կուսակցական, պետական մարմինների, արտադրական կազմակերպությունների, ձեռնարկությունների կողմից արդեն հենց 1988 թվականից գործնական քայլեր են ձեռնարկվել մարզի սոցիալ-տնտեսական զարգացման պրոբլեմներն իրականացնելու ուղղությամբ: Դրանց մի մասն արդեն վավերացվել են համապատասխան պայմանագրային փաստաթղթերով և սկսել են իրագործվել:

Մեր կարծիքով ներկա ժամանակաշրջանում խիստ անհրաժեշտ են Հայկական ԽՍՀ-ի հետ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սոցիալ-տնտեսական ինտեգրացման մի շարք ուղղություններ:

Լեռնային Ղարաբաղում հայտնաբերված են գունավոր մետաղների մի շարք հանքավայրեր (Մարտակերտի ու Հադրութի շրջաններում): Մասնավորապես, Մարտակերտի շրջանում հետազոտված է Մեհմանայի բազմամետաղների հանքավայրը: Ադրբեջանական ԽՍՀ-ում գունավոր մետաղների, հատկապես բազմամետաղների, պղնձի, ոսկու արդյունահանման, հարստացման, ձուլման արտադրական բազա չկա, չեն մշակված այդպիսի տեխնոլոգիական պրոբլեմներ: Մինչդեռ բոլորովին մոտիկ, Հայկական ԽՍՀ-ում վաղուց գոր-

ծում են հանքահարստացուցիչ հինգ խոշոր ձեռնարկություն: Նշանք, որ Զանգեզուրի լեռնամետալուրգիական կոմբինատի համար լրացուցիչ հանքային բազա կարող են հանդիսանալ Մարտակերտի շրջանի բազմամետաղների ու Հադրութի շրջանի պղնձի հանքավայրերի հումքը: Լեռնային Ղարաբաղի նշված գունավոր մետաղների հումքի օգտագործումը Հայկական ԽՍՀ-ում՝ արդեն վաղուց ձևավորված գունավոր մետալուրգիայի համալիրում նպատակահարմար է՝ կապված այնպիսի շատ կարևոր գործոնների հետ, ինչպիսիք հանքահարստացուցիչ հզոր ֆաբրիկաների, պղնձաձուլական խոշոր կոմբինատի առկայությունը, դրանց արտադրական փորձը, գիտական և նախագծային համապատասխան կազմակերպությունների, որակյալ բանվորների ու մասնագետների առկայությունն են: Սրանց զգալի մասը անհրաժեշտության դեպքում կարող են տեղափոխվել Լեռնային Ղարաբաղ համապատասխան աշխատանքներ իրականացնելու համար:

Քանի որ Հայկական ԽՍՀ-ում ձևավորված է կերամիկական և հախճապակու հզոր արդյունաբերություն, իսկ բարձրորակ հումքի զգալի մասը բերվում է երկրի հեռավոր շրջաններից, ապա նպատակահարմար է ուսումնասիրել և այս բնագավառում օգտագործել Լեռնային Ղարաբաղի տարբեր վայրերում գտնվող կավի պաշարները: Նպատակահարմար է նաև ռացիոնալ հիմքերի վրա դնել մարզի գունավոր մարմարների ու գրանիտների հանքավայրերի շահագործումը՝ օգտագործելով Հայկ. ԽՍՀ քարի ինդուստրիայի առաջավոր մեթոդները:

Մեքենաշինության և թեթև արդյունաբերության բնագավառներում Հայկ. ԽՍՀ-ի հետ Լեռնային Ղարաբաղի ինտեգրացիայի համար նպատակահարմար է հաշվի առնել հետևյալ գործոնները, որ.

Լեռնային Ղարաբաղում կան նշված ճյուղերի ձեռնարկություններ, որոնք կարող են մտնել Հայկ. ԽՍՀ համապատասխան արտադրական միավորումների մեջ:

Մարզում կարելի է արմատավորել Հայկական ԽՍՀ-ի փորձը՝ ձեռնարկություններ, միավորումների մասնաճյուղեր ստեղծելու բնագավառում:

Հայկական ԽՍՀ-ում վաղուց արմատավորված է բարձրագույն ուսումնական հաստատություններում, տեխնիկումներում, ուսումնարաններում նշված ճյուղերի համար մասնագետներ, բանվորական կադրեր պատրաստելու գործը:

Հաշվի առնելով այս գործոնները, օրինակ, Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանն արդեն ընդգրկվել է «Հայէլեկտրալույս» արտադրական միավորման մեջ, Ստեփանակերտի կոնդենսատորների գործարանը կարող է ընդգրկվել «Նեյրոն» արտադրական միավորման, Ստեփանակերտի գյուղմեքենաշինական գործարանը՝ «Հայգյուղմեքենայացում» գիտաարտադրական միավորման մեջ: Իսկ Ստեփանակերտի կոշիկի ֆաբրիկան կարող է

մտնել «Մասիս» արտադրական միավորման մեջ, կարի ֆաբրիկան՝ Երևանի Կ. Ցետկինի անվան կարի արտադրական միավորման մեջ և այլ: Նման սերտ կապեր կարող են ստեղծվել Ստեփանակերտի և Երևանի մետաքսի կոմբինատների միջև:

Լեռնային Ղարաբաղի ու Հայկ. ԽՍՀ ձեռնարկությունների ինտեգրացիան հնարավորություն կտա մարզի նշված արտադրությունները վերակառուցել, կատարելագործել արտադրանքի տեսականին, խորացնել մասնագիտացումը, կոոպերացումը:

Ինտեգրացման մյուս ուղին Լեռնային Ղարաբաղում Հայկական ԽՍՀ-ի մեքենաշինական ու թեթև արդյունաբերության առավել առաջավոր, սակավ հումքատար ու էներգատար, բայց աշխատատար պրոցեսներ ունեցող ձեռնարկությունների մասնաճյուղերի ստեղծումն է: Մասնավորապես նպատակահամար է մարզում տեղաբաշխել «Անի» և «Ավտոմատիկա» գիտաարտա-դրական միավորումների «Էլեկտրոն», «Էրեբունի», «Սապֆիր», «Մասիս», «Աստրա», «Օրբիտա», «Արաքս», «Հրազդանմաշ» արտադրական միավորումների մասնաճյուղերը:

Մեր նախնական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Լեռնային Ղարաբաղի աշխատանքային ռեսուրսների առկայության և տեղաբաշխման արդի վիճակից ելնելով մարզում հենց այժմ կարելի է ստեղծել 20 — 25 մասնաճյուղ, որտեղ հնարավոր է ընդգրկել 4500 — 6000 մարդ: Առավել նպատակահարմար է այդ մասնաճյուղերը տեղաբաշխել Մարտունի ու Մարտակերտ քաղաքներում, Ասկերան, Լենինավան և Կարմիր Շուկա ավաններում, Ճարտար, Գիշի, Թաղավարդ, Տող, Մեծ Թաղլար, Բերդաշեն (Ղզղալա), Հաթերք, Առաջաձոր, Չայլու, Թալիշ, Ներքին Հոռաթաղ, Սեյսուլան, Կուսապատ, Վանք և այլ գյուղերում: Արտադրական ձեռնարկությունների մասնաճյուղերի ստեղծումը կնպաստի այդ գյուղերի սոցիալ-տնտեսական զարգացմանը և միաժամանակ կարգելակի բնակչության արտահոսքը:

Ժամանակակից պահանջներից շատ հեռու է մարզի շինարարական ինդուստրիայի մակարդակը: Այստեղ 1951 — 1980 թթ. մեկ շնչին ընկնող կապիտալ ներդրումները 1,5 անգամ քիչ է եղել, քան ամբողջ հանրապետությունում (Ադրբ. ԽՍՀ-ում): Կապիտալ ներդրումները Ադրբ. ԽՍՀ-ում մեկ շնչի հաշվով 1985 թ. կազմել է 453 ռուբլի, 1986 թ.՝ 473 ռուբլի, իսկ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում համապատասխանաբար 226 և 178 ռուբլի: Մինչև վերջերս ամեն տարի կապիտալ ներդրումների համար հատկացված միջոցառումներից տարեկան 4 — 5 միլիոն ռուբլի մնացել է չօգտագործված: Դրանք անկասկած, հանվել և օգտագործվել են հանրապետության մյուս շրջաններում: Այդպես է ստացվել հանրապետական համապատասխան կազմակերպությունների կողմից անհրաժեշտ քանակությամբ շինանյութեր ու այլ նյութական ֆոնդեր պակաս հատկացնելու պատճառով:

Մարզում մինչև այժմ նույնիսկ չկա երկաթբետոնե հավաքովի կոնստրուկցիաների արտադրության գործարան, մինչդեռ այս լեռնաշխարհը շատ հարուստ է շինանյութերի հումքային ռեսուրսներով: Մարզի շինանյութերի արտադրության միակ ձեռնարկությունը բնական քարերից արտադրում է երեսպատման սալիկներ, արդյունահանում է մարմարի բլոկ, որոնց մեծ մասը մատակարարվում էր Բաքվին, Կիրովաբադին:

Շինարարական ինդուստրիայի բնագավառում Հայկ. ԽՍՀ-ի հետ ինտեգրացումը պետք է իրականացվի հետևյալ սկզբունքներով. առհասարակ ազգային յուրաքանչյուր ռեգիոնում շինարարությունը օբյեկտիվորեն պետք է ունենա իր ազգային յուրահատկությունը, որի հետ պետք է հաշվի նստել, այնպես, ինչպես լեզվի, սովորույթների, ավանդույթների հետ: Ազգային այդ յուրահատկության արհամարհումը շինարարության մեջ նշանակում խտրականություն տվյալ ազգի նկատմամբ:

Հայկական ԽՍՀ-ն ունի քարի մշակման, օգտագործման հազարամյա փորձ, հմտություն, դրա մշակման կատարելագործման տեխնոլոգիա, քարի կոմպլեքսային վերամշակման արտադրական, գիտական բազա: Այս հարուստ փորձը պետք է լայնորեն օգտագործել Լեռնային Ղարաբաղում:

ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի 1988 թ. հատուկ որոշմամբ միութենական բյուջեից 400 մլն ռուբլի է հատկացվել մարզին կապիտալ ներդրումների համար: Քանի որ այդ ուղղությամբ կատարվելիք սոցիալ-տնտեսական կոմպլեքս միջոցառումներն իրականացվելու են նաև ազգային հատկանիշները հաշվի առնելով, հետևապես նպատակահարմար է.

1. Մարզի բնակելի ու արդյունաբերական շինարարության նախագծերը կազմել Հայկ. ԽՍՀ նախագծային կազմակերպություններում:

2. Անհրաժեշտ քանակությամբ ճարտարապետների, նախագծողների ու շինարարական ինդուստրիայի մյուս մասնագետների պատրաստումն իրականացնել հիմնականում Հայկ. ԽՍՀ բուհերում, տեխնիկումներում, ուսումնարաններում:

3. Ստեփանակերտի շինանյութերի կոմբինատի աշխատանքները կոորդինացնել Հայկ. ԽՍՀ քարամշակման ձեռնարկությունների հետ:

4. Մինչև տեղում համապատասխան քանակությամբ շինանյութերի արտադրության կազմակերպումը, Հայկ. ԽՍՀ-ից մեծ քանակությամբ տուֆաքար, երկաթբետոնե կոնստրուկցիաներ և այլ շինանյութեր առաքել Լեռնային Ղարաբաղ:

5. Կազմակերպել տուֆի, բազալտի, կրաքարի, գրանիտի ու այլ բնական շինանյութերի հզոր արդյունահանում մարզում, որոնց հումքային ռեսուրսները տեղում մեծ են:

Ագրոարդյունաբերական համալիրի գծով Հայկական ԽՍՀ-ի հետ Լեռնային Ղարաբաղի ինտեգրացումը կարելի է իրականացնել խաղողագործության-գինեգործության, պանրագործության, պտղաբուծության, բանջարեղենի պահածոների, հյութերի արտադրության բնագավառներում:

Ներկայումս Հայկական ԽՍՀ-ի գինեգործության, կոնյակի արտադրության և դրանց հումքային բազայի միջև խզում է առաջացել: Զգալի քանակությամբ կիսաֆաբրիկատ, հատկապես կոնյակի սպիրտ բերվում է Մոլդավիայից, Բուլղարիայից: Իսկ հանրապետության սակավահողության պատճառով խաղողի արտադրությունը կարող է ավելացվել հիմնականում բանջարեղենի արտադրության, պտղաբուծության, կերակուլտուրաների համար հատկացված տարածությունները կրճատելով, որը նպատակահարմար չէ: Դրա հետ միասին նշենք, որ գինեգործության զարգացումն ու կատարելագործումը Հայկ. ԽՍՀ-ում ունի հեռանկարային մեծ նշանակություն: Արտասահմանյան շատ երկրներ մեծ հայտեր են ներկայացնում հայկական բարձրորակ կոնյակների, գինիների համար: Մասնագետների գնահատմամբ, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզն այժմ արդեն տարեկան կարող է 35 — 40 հազ. տոննա խաղող մատակարարել Հայկ. ԽՍՀ-ի գինեգործությանը: Բացի դրանից, մարզն ունի բավարար հնարավորություններ կոնյակի սպիրտ մատակարարելու համար: Միաժամանակ Հայկ. ԽՍՀ-ի մասնագետները կարող են մեծ օգնություն ցույց տալ մարզում կոնյակի արտադրության զարգացման համար: Նշենք նաև, որ Լեռնային Ղարաբաղի այժմյան կոմպլեքսային զոնալ փորձակայանի բազայի փոխարեն (որը զբաղվում է խաղողագործության և պտղաբուծության պրոբլեմներով) նպատակահարմար է ստեղծել Հայկ. ԽՍՀ Ագրոարդի խաղողագործության և պտղաբուծության գիտահետազոտական ինստիտուտի մասնաճյուղ: Իսկ հեռանկարում առավել նպատակահարմարը Հայկ. ԽՍՀ ԳԱ-ի մասնաճյուղի ստեղծումն է գյուղատնտեսության, հասարակագիտության, բնական գիտությունների բաժանմունքներով:

Հայկ. ԽՍՀ-ի պանրագործության կատարելագործված մեթոդները կարելի է արմատավորել Լեռնային Ղարաբաղում, որտեղ պանրի արտադրության նախապայմաններն անհամեմատ բարենպաստ են: Մարզի կաթի արտադրության այժմյան չափը հնարավորություն է տալիս կազմակերպել պանրի այնպիսի հզոր արտադրություն, որից հետագայում շուրջ 4 հազ. տոննա կարելի կլինի արտահանել: Նպատակահարմար է այստեղ կազմակերպել պանրագործական «Արցախ» համալիր Հայկ. ԽՍՀ Ագրոարդի հետ սերտորեն կոոպերացման ձևով:

Հայտնի է, որ Հայկ. ԽՍՀ կլիման ցամաքային է, իսկ Լեռնային Ղարաբաղինը՝ մեղմ ու նպաստավոր: Դա հնարավորություն է ստեղծում մեծ չափերի հասցնել վաղահաս բանջարեղենի ու պտուղների արտադրությունը, այն հաշվով, որպեսզի Հայկ. ԽՍՀ-ի և ՌԽՖՍՀ-ի շատ բնակավայրերի մատակարարվի այդպիսի արտադրանք:

Բացի դրանից, Հայկ. ԽՍՀ Ագրոարդը կարող է մարզում կազմակերպել մթերման կայաններ, ինչպես նաև պահածոների գործարաններ տարեկան մինչև 5 մլն. պայմանական բանկա մոշի, հոնի, թզի ու այլ տեսակի պտուղների պահածոներ, հյութեր, թթի դոշաբ արտադրելու համար: Լեռնային Ղարաբաղի տարածքում այժմ, ինչպես նշվել է, մնացել է 960 հա շահ թթի այգի (նախկինում այն շատ ավելի է եղել): Թթի այգուց ստացվող բարիքները սննդարար և բուժիչ լինելուց բացի, շատ բարձր արդյունավետ են: Հարցը նրանում է, որ թթի ծառը շատ քիչ խնամք է պահանջում, բայց ապրում է 300 տարի: 20 — 25 տարին մեկ ճյուղերը կտրելուց հետո նորից փարթամ աճում առատ բերք է տալիս:

1940-ական թվականների սկզբներին Ղարաբաղի կոլտնտեսություններում գործում էր թթի օղու թորման 323 «գործարան», որոնցից ստացված եկամուտը տարեկան կազմում էր 550 հազ. ռուբլի: Սակայն ոչ մի առումով չհիմնավորված ձևով, վերջին տարիներին արգելվել է հսկայական քանակությամբ թթի բերքը արդյունաբերական վերամշակման ենթարկել և սպիրտ ու օղի պատրաստել: Նշվել է նաև, որ թթից արտադրված օղին ու սպիրտը բուժիչ մեծ նշանակություն ունեն դարեր շարունակ այն արմատավորված է եղել Արցախում: Անհրաժեշտ է կարգավորել այս պրոբլեմը և մարզում կենտրոնացված կարգով կազմակերպել թթի օղու և սպիրտի արդյունաբերական արտադրություն, որի համար ամեն տարի ապահովվում է հսկայական քանակությամբ բարձրորակ հումք: Թթի օղու, սպիրտի, դոշաբի արտադրությունը պետք է դարձնել այդ լեռնաշխարհի բնակչի եկամտի հիմնական աղբյուրներից մեկը, ինչպիսին եղել է դարեր շարունակ:

Այժմ առկա թթի պլանտացիաների խնամքի կարգավորման և նոր պլանտացիաների ստեղծման շնորհիվ Լեռնային Ղարաբաղը կարող է դառնալ ԽՍՀՄ բուժիչ նշանակություն ունեցող բարձրորակ թթի օղու, սպիրտի, դոշաբի, չրի եզակի արտադրող: Թթի օղին, սպիրտը և դոշաբը կարող են դառնալ մարզից արտահանվող և մեծ պահանջարկ ներկայացնող արտադրատեսակներ:

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը չունի նյութատեխնիկական մատակարարման սեփական բազա, այդպիսին նպատակային ձևով չի ստեղծվել: Իսկ դա մշտապես խիստ բացասաբար է անդրադարձել մարզի էկոնոմիկայի վրա:

Հայկական ԽՍՀ-ի ու Լեռնային Ղարաբաղի միջև տնտեսական կապերի զարգացումը պահանջում է Ստեփանակերտում ստեղծել Հայկ. ԽՍՀ Պետմատի խոշոր բազա: Բացի դրանից նպատակահարմար է մարզի շրջանային կենտրոններում բացել Պետմատի մեծածախ խանութներ, որտեղ կարող են վաճառվել արդյունաբերական բազմատեսակ արտադրանք, շինանյութեր, լաքեր ու ներկեր:

Խիստ անհրաժեշտ ենք համարում նշել, որ արտադրության ինտեգրացման այդ միջոցառումների և առհասարակ Լեռնային Ղարաբաղում արդյունաբերական այս կամ այն ձեռնարկության կառուցումը պետք է իրականացնել հաշվի առնելով մարզի անզուգական ու չքնաղ բնության անաղարտության պահպանության պրոբլեմը: Ոչ մի դեպքում թույլ չպետք է տրվի այստեղ թունավոր արտանետումներ տվող ձեռնարկությունների կառուցում: Ինչ խոսք, հասկանալի է, որ Հայկական ԽՍՀ-ի հետ Լեռնային Ղարաբաղի տնտեսական լայն կապերը կարող են իրականացվել տրանսպորտի հուսալի ու մշտական կապերի դեպքում:

Հայկական ԽՍՀ-ի ու Ադրբեջանական ԽՍՀ-ի սահմանը կտրում անցնում են միութենական, հանրապետական, շրջանային նշանակության 15 ավտոճանապարհներ: Եվ այնուամենայնիվ Հայկ ԽՍՀ-ի ու Լեռնային Ղարաբաղի միջև դեռևս չկա շատ թե քիչ հուսալի տրանսպորտային ուղի:

Այդ տեսակետից խիստ կենսական նշանակություն ունի Գորիս-Ստեփանակերտ ավտոճանապարհի արմատական վերակառուցումը և մշտապես այն գործողության մեջ պահելը:

Այժմ Հայկ. ԽՍՀ մայրաքաղաքից Ստեփանակերտ ու առհասարակ դեպի ԼՂԻՄ տանող (Ղազախով, Կիրովաբադով, Եվլախով) ավտոճանապարհը շուրջ 500 կմ է, որը շատ երկար, տաղտկալի ու անհուսալի է: Մինչդեռ Ստեփանակերտից մինչև Գորիս եղած տարածությունը 93 կմ է: Ստեփանակերտից Գորիսով մինչև Երևան ձգվող ճանապարհը գործողության մեջ դնելու դեպքում վերը նշվածի համեմատությամբ ընդհանուր առմամբ Ստեփանակերտ — Երևան ճանապարհը կկրճատվի 150 կմ-ով: Իսկ դա նշանակում է, որ, չհաշված մյուս բոլոր առավելությունները, միայն ուղևորների տեղափոխման բնագավառում տարեկան կտնտեսվի 100 — 110 հազ. լիտր վառելիք: Հայկ. ԽՍՀ-ի ու Լեռնային Ղարաբաղի միջև ավտոտրանսպորտային կապի զարգացման մյուս կարևոր հանգույցը Ջերմուկ-Իստիսու-Մարտակերտ ճանապարհի կառուցումն է: Փաստորեն Իստիսուից-Մարտակերտ գործում է բարեկարգ ավտոճանապարհ, մնում է Ջերմուկ-Իստիսու հատվածի կառուցումը: Այն հնարավորություն կտա կարճ ճանապարհով Հայկ. ԽՍՀ-ն կապել ոչ միայն ավելի քան 45 հազ. բնակիչ ունեցող Մարտակերտի շրջանի, այլև ավելի քան 40 հազ. հայ բնակիչ ունեցող Շահումյանի և Խանլարի շրջանների հետ:

Հայկական ԽՍՀ-ի ու Լեռնային Ղարաբաղի միջև երկաթուղային կապի ստեղծման առավել հնարավոր և մոտակա ժամանակաշրջանի տարբերակը Վարդենիսից Քյալբաջարի շրջանով մինչև Մարտակերտ ու Ստեփանակերտ երկաթուղու կառուցումն է:

Իսկ առայժմ անհրաժեշտ է շուտափույթ կազմակերպել երկաթուղային կապ Լեռնային Ղարաբաղի ու Հայկ. ԽՍՀ-ի միջև վաղուց գործող Երևան-Հրազ-

դան-Աղստաֆա-Եվլախ-Ստեփանակերտ երկաթուղով:

Այս ուղերթից կարող են լայնորեն օգտվել Երևան, Աբովյան, Չարենցավան, Հրազդան, Իջևան, Դիլիջան քաղաքներում ապրող արցախահայերը (ինչպես նաև ողջ բնակչությունը), ինչպես նաև Կիրովաբադ քաղաքի, Շամխորի, Դաշքեսանի, Խանլարի, Շահումյանի շրջանների հայությունը: Բացի դրանից, որ շատ կարևոր տնտեսական պայման է, այս երթուղով կարելի է իրականացնել մեծ քանակությամբ մասսայաբար կիրառվող արտադրանքների փոխադրություն: Առաջին հերթին նկատի ունենալով շինանյութերի, սարքավորումների, տարբեր հումքատեսակների, սննդամթերքների տեղափոխությունը:

Առանձնահատուկ դեր կխաղա օդային տրանսպորտի հետագա զարգացումը Հայկ. ԽՍՀ-ի ու Լեռնային Ղարաբաղի միջև: Մասնավորապես, անհրաժեշտ է արագորեն վերակառուցել Ստեփանակերտի օդանավակայանը, այն հագեցնել ժամանակակից սարքավորումներով, որպեսզի հնարավոր լինի ժամանակակից խոշոր ինքնաթիռների վայրէջքը: Նպատակահարմար կլինի նաև այժմ ինտենսիվ գործող Երևան-Ստեփանակերտ օդային գծից բացի ստեղծել և գործողության մեջ դնել Լենինական-Ստեփանակերտ, Կիրովական-Ստեփանակերտ, Ղափան-Ստեփանակերտ, Գորիս-Ստեփանակերտ գծերը: Այժմ 240 հազ. բնակիչ ունեցող Զանգեզուրի տնտեսական շրջանին (Արփայի ավազանի հետ միասին) սպասարկում են 5 օդանավակայաններ: Իսկ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի 188 հազ. բնակչությունը օգտվում է միայն մեկ՝ Ստեփանակերտի օդանավակայանից: Նպատակահարմար է մարզի հյուսիսային մասում՝ Մարտակերտի շրջանում նույնպես կառուցել օդանավակայան, ստեղծել Երևան-Մարտակերտ օդային գիծը, որից կօգտվեն ոչ միայն այդ շրջանի, այլև հարակից Շահումյանի ու Խանլարի շրջանների հայությունը:

Ինչպես նշվել է, խիստ անբարեկարգ է մարզի ներքին ավտոճանապարհների և գյուղերի փողոցների վիճակը: Մարզի սոցիալ-տնտեսական զարգացման գլխավոր պրոբլեմներից մեկը նրա ներքին ավտոճանապարհների բարեկարգ համակարգի, շրջկենտրոնները՝ գյուղերի հետ կապող բարեկարգ ուղիների ստեղծումն է: Խիստ անհրաժեշտ է մարզի հարավային մասից՝ Հադրութից ուղիղ գծով (առանց Ֆիզուլի-Աղդամ անհուսալի ճանապարհով անցնելու) դեպի Կարմիր Շուկա-Ստեփանակերտ ավտոմայրուղու կառուցումը:

Ներկա ժամանակաշրջանում անհրաժեշտ է նաև մտածել գյուղական բնակավայրերը պլանավորելու, դրանց հատակագծերը կազմելու, դրանցից յուրաքանչյուրում համապատասխան սոցիալ-տնտեսական, մշակութային, կենցաղսպասարկման օբյեկտների կառուցումը պլանավորելու մասին: Այս հարցերը Լեռնային Ղարաբաղի սոցիալ-տնտեսական զարգացման կոմպլեքս միջոցառումների մեջ շատ կարևոր նշանակություն կունենան:

Խիստ կարևոր է ուսումնական հաստատությունների, ազգային կադրերի

պատրաստման բնագավառում իրականացվելիք ինտեգրացիան: Մարզի համապատասխան բնագավառների համար անհրաժեշտ կադրեր պատրաստելու նպատակով կարելի է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի փոխարեն այնտեղ կազմակերպել համալսարանական տիպի մի այնպիսի բարձրագույն ուսումնական հաստատություն, որն ունենա ֆիզիկա-մաթեմատիկական, պատմա-բանասիրական, մեխանիկա-մեքենաշինական, շինարարական, տնտեսագիտական, գյուղատնտեսական, մանկավարժական ֆակուլտետներ: Այդպիսի ԲՈՒՀ-ը կունենա շուրջ 2000 — 2500 ուսանող՝ նկատի ունենալով, որ այդտեղ կարող են սովորել նաև մարզին հարակից հայկական շրջանների երիտասարդները:

Ստեփանակերտում այսպիսի ուսումնական հաստատության կազմակերպելուն բազմակողմանի աջակցություն, գիտա-մանկավարժական, մեթոդական օգնություն կարող են ցույց տալ Երևանի և առհասարակ Հայաստանի բոլոր բուհերի մասնագետները, Հայկ. ԽՍՀ ժողովրդական կրթության մինիստրությունը:

Ինտեգրացման նման միջոցառում կարելի է իրականացնել միջնակարգ մասնագիտական կրթության բնագավառում: Այս բոլորը անկասկած չի բացառում այն հանգամանքը, որ ամեն տարի Հայկ. ԽՍՀ-ի ուսումնական հաստատություններում լիմիտային ձևով տեղեր պետք է հատկացվեն Լեռնային Ղարաբաղի երիտասարդության համար:

Արցախի հայության ազգային շահերը պահանջում են, որպեսզի կրթության բնագավառի բոլոր հարցերում մարզի ուսումնական ամեն կարգի հաստատություն կողմնորոշվի Հայկական ԽՍՀ ժողովրդական կրթության համակարգում գործող կազմակերպա-մեթոդական հրահանգներով, ցուցումներով, կանոնադրությամբ:

Այդպես պետք է վարվեն նաև թատրոնի, կինոյի, երաժշտության բնագավառի կազմակերպությունները:

Հայկական երկու վարչական միավորների մշակութային կապերի զարգացման համալիրում պետք է առանձնահատուկ տեղ հատկացնել պատմական հուշարձանների պահպանության հարցին: Հազարամյակների ընթացքում Արցախի հայության ստեղծած պատմաճարտարապետական կոթողներից, ինչպես նշվել է, 2765-ը գտնվում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տարածքում: Դրանցից շատերը՝ հայ ճարտարապետության XIII դարի հանրագիտարան հանդիսացող Գանձասարի վանքը, Էջմիածնի հասակակից Ամարասի վանքը, Դադիվանքը, Գտչավանքը, Ղազանչեցոց եկեղեցին ու շատ ուրիշներ, բազմաթիվ խաչքարեր, կամուրջներ հանդիսանում են հայ մշակույթի անզուգական կոթողներ: Սակայն հազարավոր այդ հուշարձաններից ոչ մեկը ինչպես դարձյալ նշվել է, խորհրդային իշխանության 70 տարիների ընթաց-

քում թեկուզ մասնակիորեն չի վերանորոգվել:

Անհրաժեշտ է, որպեսզի դրանց ուսումնասիրման, հանգամանորեն հաշվառման և վերականգնման հարցերը մարզային համապատասխան կազմակերպության հետ միասին տնօրինի ՀԽՍՀ պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանման և օգտագործման վարչությունը:

Լեռնային Ղարաբաղի ավելի քան 150 հազ. հայ բնակչությունը չուներ գործող ոչ մի եկեղեցի: Մեր կարծիքով նպատակահարմար է համապատասխան կազմակերպությունների միջոցով Լեռնային Ղարաբաղի տարածքում գտնվող նշված հուշարձաններից առաջին հերթին վերակառուցել, վերանորոգել և գործող դարձնել Գանձասարի, Ամարասի վանքերը, Գտչավանքը և Ղազանչեցոց եկեղեցին: Արցախի հնագույն այս և մյուս հայկական շատ ճարտարապետական կոթողների վերակառուցումը, դեպի դրանք տանող ճանապարհների բարեկարգումն ու կառուցումը, ինչպես նաև Ազոխի՝ մարդու այդ վաղնջական քարանձավային հրաշք բնակավայրի համալիրը, Թարթառի, Խաչենի, Կարկառի հովիտների բնական հրաշքները ռեալ հիմք կարող են ծառայել այս երկրամասը մտցնել Հայաստանի միջազգային տուրիզմի երթուղիների կազմի մեջ:

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սոցիալ-տնտեսական պրոբլեմների պլանավորումն ու լուծումը պետք է իրականացնել բազմակողմանիորեն մտածված մեծ հեռանկարով: Մեր կարծիքով յուրաքանչյուր պրոբլեմ նախքան իրականացնելը, անհրաժեշտ է համաժողովրդական լայն քննարկման դնել, ընդգրկել այդ գործի մեջ ամենատարբեր բնույթի մասնագետների:

Բոլոր դեպքերում պետք է խուսափել այն սխալներից, որոնք թույլ են տրվել Խորհրդային Հայաստանի արտադրողական ուժերի տեղաբաշխման հարցերը լուծելիս և որոնց հետևանքով հանրապետության շատ վայրերում ստեղծվել է էկոլոգիական ծանր վիճակ:

Անհրաժեշտ է Լեռնային Ղարաբաղում ոչ մի դեպքում թույլ չտալ քիմիական արդյունաբերության, ցեմենտի արտադրության ձեռնարկությունների կառուցում: Պետք է արտադրությունն այնպես կազմակերպել, որպեսզի թե տեղում հայթայթվող և թե ներմուծվող բոլոր հումքատեսակները օգտագործվեն կոմպլեքսային կերպով ու անմնացորդ: Այսօր օրակարգի հարց է դարձել նաև Ստեփանակերտ քաղաքի ու մյուս խոշոր բնակավայրերի կենցաղային թափոնների վերամշակման և օգտագործման պրոբլեմը, որոնք արդեն բացասաբար են անդրադառնում շրջակա միջավայրի վրա: Հատկապես զգալի է Ստեփանակերտի կենցաղային թափոնների բացասական ազդեցությունը, որոնք թափվում են Ստեփանակերտի ու Ասկերանի միջև գտնվող գեղատեսիլ, թփուտածածկ հովիտը, այրվում և աղտոտում շրջակա միջավայրը: Մեր

նախնական հաշվարկներով միայն Ստեփանակերտում տարեկան առաջանում է 35 — 40 հազ. տոննա կենցաղային պինդ թափոն, որը ամբողջապես թափվում է շրջակա միջավայր: Իսկ մարզի քաղաքային բոլոր բնակավայրերում (այդ թվում նաև քաղաքատիպ ավաններում) առաջացող թափոնների ծավալը հասնում է շուրջ 60 հազ. տոննայի, որոնց վերամշակումն ու օգտագործումը տնտեսական կարևորագույն պրոբլեմներից մեկն է:

Թերևս նպատակահարմար կլինի կազմել մարզի էկոլոգիայի հավասարակշռության պահպանության կոմպլեքս պլան: Ամենուրեք պետք է պահպանել Արցախի չքնաղ բնության անաղարտությունը: Մեր կարծիքով նպատակահարմար է մարզի բնական ու պատմական հուշարձանների հարստությամբ առավել հանրահայտ՝ Մարտակերտի շրջանի զգալի մասը՝ Թարթառ և Խաչեն գետերի հովիտները դարձնել արգելավայր: Դա կարևոր դեր կխաղա պահպանելու ոչ միայն Գանձասարի, Դադիվանքի, Խոխանաբերդի, Անապատի, Եղիշե Առաքյալի, Վանքասարի ու շատ այլ եկեղեցական համալիրները, բազմաթիվ բերդ-ամրոցները, բնակատեղիները, խաչքարերը, քարանձավները, կամուրջները, այլև բնության հրաշալիքները, անտառների պտղատու ծառատեսակները, սառնորակ աղբյուրները, գետերի անաղարտությունը, կենդանական աշխարհը:

Սոցիալ-տնտեսական ինտեգրացման այս միջոցառումների իրականացումը անկասկած բխում է Լեռնային Ղարաբաղում լենինյան ազգային քաղաքականության իրականացման և հայկական այդ մարզը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու անհրաժեշտությունից:

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սոցիալ-տնտեսական զարգացման վերաբերյալ ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Մինիստրների Խորհրդի 1988 թ. մարտի 24-ին ընդունած որոշման համաձայն, մարզի հատուկ կառավարման Կոմիտեի ձեռնարկած կոնկրետ միջոցառումների շնորհիվ ղարաբաղյան հարցի արդարացի լուծման առաջին քայլերն արված են:

Արցախ-ղարաբաղյան ստեղծագործական կազմակերպությունների, կրթության համակարգի, տնտեսական կազմակերպությունների պատվիրակությունները պաշտոնական ձևով կապեր են ստեղծել Հայկ. ԽՍՀ համապատասխան կազմակերպությունների հետ:

Այժմ ամեն օր 5 — 6 անգամ մարդատար ինքնաթիռը թռիչք է կատարում Ստեփանակերտից Երևան: Համարյա ամեն օր Հայաստանից Ղարաբաղ են այցելում գրողներ, լրագրողներ, գիտնականներ, գործնական մարդիկ, այսինքն կատարվում է մի երևույթ, որի մասին երկու տարի առաջ պատկերացնելն անգամ անհնար էր:

Այժմ Լեռնային Ղարաբաղում հաճախակի կարելի է տեսնել նաև ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Անգլիայի, Իտալիայի, ԳՖՀ-ի և այլ երկրների գործարար շրջանների ներկայացուցիչների: Համագործակցության ռեալ քայլեր են կատարվել

արդյունաբերական ձեռնարկություններում: 1989 թ. սկզբներից մարզի արդյունաբերական ձեռնարկությունների զգալի մասը մտել է Հայկ. ԽՍՀ-ի ու երկրի այլ շրջանների արտադրական միավորումների մեջ:

Հայաստանի մասնագետների աջակցությամբ վերակառուցվում են Ստեփանակերտի հացի, պանրի ու սննդի այլ արդյունաբերության գործարաններ: Կարգավորվում է Ստեփանակերտի ջրամատակարարումը, միջոցառումներ են ձեռնարկվում մարզում ճարտարապետության, քաղաքաշինության, շինմոնտաժային աշխատանքների կարգավորման, մարզի քաղաքների բարեկարգման, կանաչապատման, նյութատեխնիկական մատակարարման, նյութական ֆոնդերի հատկացման, ագրոարդի պահանջների բավարարման ուղղությամբ:

Ստեղծված է Լեռնային Ղարաբաղի խմբագրաարտադրական միավորում, որի նպատակը մարզում ժամանակակից պոլիգրաֆիական արտադրության կազմակերպումն է, կատարելագործված սարքավորումներով նոր խոշոր տպարանի կառուցումը, հասարակական-քաղաքական, գրական-գեղարվեստական ալմանախի ու հանդեսի հրատարակման հիմնադրումը, մարզում գրքի տպագրության կազմակերպումը և առհասարակ կենտրոնացված կարգով հրատարակչական գործի ստեղծումն է:

Աշխատանքներ են տարվում մարզի միջշրջանային և միջազգային կապերի ընդլայնման, ինքնաֆինանսավորման և լրիվ տնտեսահաշվարկի անցնելու ուղղությամբ: Լեռնային Ղարաբաղի սոցիալ-տնտեսական զարգացման ուղղությունների, տեղի բնական ռեսուրսների կոմպլեքսային, խնայողաբար, նպատակային օգտագործման վերաբերյալ գիտականորեն հիմնավորված առաջարկությունների մշակմանը ակտիվորեն մասնակցում են Հայաստանի մասնագետները:

Մայր Հայաստանի հետ Լեռնային Ղարաբաղի սոցիալ-տնտեսական և մշակութային կապերը հեռանկարում լայն ու բազմակողմանի կլինեն: Այդ կապերի առաջին քայլերը հուսադրող են...

... Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի լուծումը շարունակվում էր ձգձգվել, միևնույն ժամանակ Ադրբեջանը շարունակում էր մարզի արդեն երկու տարի տևող շրջափակումը՝ ֆաշիստական ռեժիմին յուրահատուկ բոլոր մեթոդներով:

ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդը 1988—1989 թթ. ստեղծել է մեկը մյուսին հաջորդող մի քանի հանձնաժողովներ, որոնք ուսումնասիրել, մարզում տեսել են ստեղծված ծանր վիճակը, և որոնց եզրակացությունները պետք է քննարկվեին, ընդունվեր ինքնավար մարզի ճակատագրի լուծման օբյեկտիվ որոշում: Սակայն այդ հանձնաժողովների ուսումնասիրությունների արդյունքները ոչ հրապարակվում էին և ոչ էլ քննարկման դրվում: Ողջ հայ ժողովուրդը սպասում էր, որ վերջապես այդ հարցը քննարկման կդրվի Գերագույն Խորհրդի 1989 թ. աշնանային նստաշրջանում: Ի զարմանք բոլորի, առանց քննարկման, 1989 թ. նոյեմբերի 28-ին միության պալատի նախագահ Ե. Պրիմակովը դեպուտատներին հապճեպորեն կարդում է փակ դռների հետևում կազմված որոշման մի նախագիծ, ըստ որի Լեռնային Ղարաբաղը նորից դրվում էր Ադրբեջանի տիրապետության տակ: Այսպիսով, Արցախը, որն արտահայտելով իր ժողովրդի կամքը, ինքնորոշվել էր, նորից բռնակցվեց տասնամյակներ շարունակ մարզը բզկտած հարևանին:

Այդ անարդարությունից վրդովված Լեռնային Ղարաբաղի ու Հայկ. ԽՍՀ դեպուտատները հեռանում են ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նիստերի դահլիճից:

Ելնելով ստեղծված ծանր կացությունից, հայ ժողովրդի պահանջով՝ 1989 թ. դեկտեմբերի 1-ին Հայկ. ԽՍՀ Գերագույն Խորհրդի ու Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի միացյալ նիստում մերժվում է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ԼՂԻՄ-ում իրադրությունը նորմալացնելու միջոցառումների մասին որոշումը և միաձայն որոշվում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզը վերամիավորել Հայկական ԽՍՀ-ին: Մասնավորապես, միացյալ նիստում ընդունվել է հայ ժողովրդի համար պատմական մեծ իրադարձություն ներկայացնող որոշում՝ հետևյալ կետերով.

1. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը ճանաչում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի ինքնորոշման փաստը՝ հաստատված ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի 1988 թ. փետրվարի 20-ի և հուլիսի 12-ի նստաշրջանների, ինչպես նաև մարզի բնակչության լիազոր-ներկայացուցիչների 1989 թ. օգոստոսի 16-ի համագումարի և Ազգային խորհրդի հոկտեմբերի 19-ի նիստի որոշումներում:

2. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը ճանաչում է Լեռնային Ղարաբաղի լիազոր ներկայացուցիչների համագումարը և նրա ընտրած Ազգային խորհուրդը որպես մարզի ներկայումս գործող միակ օրինական իշխանություն:

3. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը *հռչակում են Հայկական ԽՍՀ և Լեռնային Ղարաբաղի վերամիավորումը:* Լեռնային Ղարաբաղի բնակչության վրա տարածվում են Հայկական ԽՍՀ-ի քաղաքացիության իրավունքները:

4. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը ստեղծում են համատեղ հանձնաժողով (իր աշխատանքային ապարատով)՝ Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորումն իրագործելու ուղղությամբ գործնական քայլեր մշակելու համար:

5. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազ-

գային խորհուրդը պարտավորվում են ներկայացնել Հյուսիսային Արցախի Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի հայ բնակչության ազգային շահերը:

6. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությանը, Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդին և ԼՂԻՄ-ի Ազգային խորհրդի նախագահությանը հանձնարարվում է գործադրել սույն որոշումից բխող բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ իրականացնելու համար Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի քաղաքական, տնտեսական և մշակութային կառուցվածքների իրական միաձուլումը միասնական պետական-քաղաքական համակարգում[1]:

Արցախ-Ղարաբաղ աշխարհի վերամիավորումը մայր Հայաստանին հիրավի նոր դարաշրջան է բացում հազարամյակների պատմություն ունեցող հայ ժողովրդի հետագա ճակատագրի համար:

[1] Տես՝ «Խորհրդային Հայաստան» լրագիր, 3 դեկտեմբերի, 1989 թ.:



Ստեփանակերտի կանաչ զբոսայգը



Մենք ենք, մեր սարերը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 3
1. Լեռնային Ղարաբաղ Ինքնավար Մարզի բնական պայմանների ու ռեսուրսների ընդհանուր բնութագիրը 7
2. Պատմա-աշխարհագրական համառոտ ակնարկ 21
3. Լեռնային Ղարբաղի Ինքնավար Մարզի վարչական կառուցվածքը և քաղաքները 45
4. Բնակչությունը, նշանավոր գործիչները, սովորույթները 61
5. Տնտեսության բնութագիրը 85
ա) Արդյունաբերությունը 86
բ) Գյուղատնտեսությունը 93
գ) Տրանսպորտը 105
6. Կուլտուր-լուսավորական, մշակութային և առողջապահական գործը 107
7. Ասկերանի շրջան 114
8. Մարտակերտի շրջան 147
9. Մարտունու շրջան 196
10. Հադրութի շրջան 248
11. Շուշիի շրջան 273
12. Լեռնային Ղարաբաղի սոցիալ-տնտեսական զարգացման պրոբլեմներն ու ուղիները 276

Սերգեյ Ավանեսի Մելքումյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ

Պատմա-տնտեսաաշխարհագրական ուսումնասիրություն

Խմբագիր՝ *Ա. Թ. Ավետիսյան*
Նկարիչ՝ *Վ. Ա. Զրաղացպանյան*
Գեղ. խմբագիր՝ *Ս. Վ. Պողոսյան*
Տեխն. խմբագիր՝ *Ռ. Ե. Ախիրյան*
Վերստուգող սրբագրիչ՝ *Վ. Ա. Թովմասյան*

ИБ № 3032

Հանձնված է շարվածքի 14.08.89 թ.: Ստորագրված է տպագրության 19.01.90 թ.: ՎՖ № 05007: Չափսը՝ 60×84 1/16: Թուղթ՝ օֆսեթ: Տառատեսակը՝ «Արարատ»: Տպագրությունը՝ օֆսեթ: Պայմ. 17,67 մամ. + 0,23 մամ. ֆորզ., տպ. 72,06 գուն. թ. օտ., հրատ. 18,58 մամ. + 0,54 մամ. ֆորզ.: Տպաքանակը՝ 15000: Պատվեր՝ 2001: Գինը՝ 3 ռ. 80 կոպ.:

«Լույս» հրատարակչություն, Երևան-9, Կիրովի 19 ա:
Издательство «Луйс», Ереван-9, ул. Кирова 19а.

ՀԽՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և
գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի
ԳՈՒՆԱՎՈՐ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՏՊԱՐԱՆ
Երևան — 82, Ծովակալ Իսակովի պող. 48:

ТИПОГРАФИЯ ЦВЕТНОЙ ПЕЧАТИ
Госкомитета по делам издательств,
полиграфии и книжной торговли АрмССР.
Ереван — 82, пр. Адмирала Исакова, 48.

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՑԱԽ ԵՎ ՈՒՏԻՔ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ